ISSN 1829-2992

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(15)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(15)

ԵՐԵՎԱՆ 2017
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ
Իջևանի մասնաճյուղի գիտխորհուրդը

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ - պատմական. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Առաքելյան Ս. Ա. - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ասատրյան Ա. Գ. - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Գասպարյան Ս. Ք. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Դերձյան Հ. Մ. - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Զաքարյան Ս. Ա. - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ղարիբյան Գ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից, անդամ,
Մանուչարյան Հ. Գ. - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Մարզպանյան Հ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Մինասյան Է. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Միքայելյան Վ. Հ. - հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մուրադյան Ս. Պ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Նահապետյան Ռ. Ա. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ս. Ա. Առաքելյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա. Ա. Ներսիսյան: -Եր: ԵՊՀ հրատ., 2017, 308 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2017
© Հեղ. խումբ, 2017

YEREVAN STATE UNIVERSITY
IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 1(15)

YEREVAN 2017
YSU PUBLISHING_HOUSE

Certified for publication by academic council
of Ijevan Branch of YSU

EDITOR-IN-CHIEF

ASHOT NERSISYAN - *doctor of historical science, professor*

EDITORIAL COUNCIL

Arakelyan S. A. - candidate of historical science assistant, professor
Asatryan A. G. - doctor of art, professor
Derdzyan H. M. - doctor of low, professor
Gasparyan S. K. - doctor of philological science, professor
Gharibyan G. A.- doctor of economic science, professor associate member of NAS, RA
Manucharyan H. G. - doctor of political science, professor
Marzpanyan H. A. - doctor of economic science, professor
Minasyan E. G. - doctor of historical science, professor
Mikaelyan V. H. - doctor of psychological science, associate professor
Muradyan S. P. - doctor of philological science, professor
Nahapetyan R. A. - doctor of historical science, professor
Zakaryan S. A. - doctor of philosophy science, professor

Akunq. Collection of scientific articles/Edit.council S. A. Arakelyan and others; Editor-in-chief A.A. Nersisyan. – Yer. YSU publishing-house, 2017 – 308 p.

© YSU publishing-house 2017
© Author group, 2017

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Մենք մեր հոդվածներից մեկում[1] մանրամասնորեն վերլուծության ենք ենթարկել ՀՀ Բյուրո–կառավարության Խորհրդային Ռուսաստանի հետ վարած բանակցությունների առաջին փուլը, որը փաստորեն անպտուղ է վերջանում: Նման ավարտի առումով իր կարևորագույն պատճառն է ունենում այն հանգամանքը, որ Շանթի գլխավորած պատվիրակությունը, կամ ավելի ճիշտ Շանթը կտրուկ կերպով դեմ է դուրս գալիս թուրքերի հետ առանձին բանակցությունների գնալուն, որի դեպքում հնարավոր էր խուսափել այնպիսի աղետալի իրողությունից, ինչպիսին էր 1920թ. հայ–թուրքական պատերազմը և որով, կարծում ենք, հնարավոր կլիներ պահել 1914թ. ռուս–թուրքական սահմանները: Փորձենք առավել հիմնավոր ապացուցել այս տեսակետների ճշտությունը: Այլ խոսքով՝ որոնենք այն հարցերի պատասխանները, թե արդյոք ճիշտ վարվեց Շանթը, երբ արգելեց պատվիրակության մյուս անդամներին՝ առանձին բանակցությունների մեջ մտնելու նույն օրերին Մոսկվայում գտնվող Բեքիր Սամի բեյի պատվիրակության հետ, ինչ հետևանքներ կարող էին տալ այդ բանակցությունները՝ կայանալու դեպքում և արդյոք չէին նպաստի բոլշևիկների հետ ՀՀ կնքելիք պայմանագրի նախագծի վավերացնելուն, որի շուրջը բանակցում էին Չիչերինի և Կարախանի հետ: Այս հարցին մենք նախկինում դարձյալ անդրադարձել ենք, բայց ոչ խորությամբ, որի կարիքն այսօր զգացվում է՝ Հայաստանի առաջին Հանրապետության շրջանի հայ քաղաքական մտքի որոշ սայթաքումների լիարժեք մատնանշման տեսանկյունից: Նախ, դիմենք պատվիրակության թերևս դիվանագիտական հատկանիշներով օժտված միակ անձնավորության՝ Ա. Տերտերյանի վկայություններին: Վերջինս գրում է, որ ինքն ու Լ. Զարաֆյանը կողմ էին թուրքերի հետ բանակցություններ վարելուն, բայց Շանթը կտրուկ դեմ էր դրան: Ահա նրա վկայությունն ամբողջությամբ. «Մոսկուայում էր գտնւում Թուրք Ազգային Մեծ Ժողովի պատուիրակութիւնը Բէքիր-Սամի բէյի գլխաւորութեամբ, որ առաքելութիւն ունէր խորհրդային կառավարութեան հետ բանակցութիւններ վարելու:

Ես եւ Լեւոն Զարաֆեանը առաջարկեցինք ընկ. Լ. Շանթին մասնաւոր տեսակցութիւններ ունենալու թուրք պատուիրակութեան հետ եւ աշխատելու իրար հասկացողութեան գալ տաճիկների հետ, իսկ եթէ այդ չյաջողուէր, գոնէ շօշափած կը լինէինք իրենց տրամադրութիւնները: Առաջարկ բերողներս այն կարծիքին էինք, որ տաճիկները գոհ պիտի մնային, եթէ մենք կարողանայինք երկուստեք գոյութիւն ունեցող վէճերը կարգադրել առանց Սովետական Ռուսաստանի միջամտութեան: Տաճիկները աւելի պատճառներ ունէին կասկածանքով մօտե-

[1] **Աշոտ Ներսիսյան**, ՀՀ Բյուրո-կառավարության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունների առաջին փուլը, տես «Ակունք», ԵՊՀ ԻՄ գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(10), Երևան, 2014, էջ 3-15:

նալու սովետական կառավարութեան բարեկամական անկեղծ զգացմունքներին, քան թէ մենք՝ հայերս:

Չնայած, որ մեր առաջարկը որեւէ վնաս չէր կարող բերել մեր Դատին, բայց եւ այնպէս ընկ. Շանթը բուռն կերպով ընդդիմացաւ թուրքերի հետ տեսակցութեան գաղափարին: Առարկեց, որ նախ՝ լիազօրուած չենք տաճիկների հետ բանակցելու եւ երկրորդ՝ որ ինքը կողք-կողքի չի՛ նստի մեր ազգի ջարդարարների հետ:

Աշխատում էինք համոզել, որ այստեղ լիազօրութեան խնդիր չկայ, այլ տրամադրութիւններ շօշափելու հարց եւ եթէ պէտք լինի, Հայաստանի կառավարութիւնից հետագային կը ստանանք անհրաժեշտ լիազօրութիւնները: Ինչ վերաբերում է երկրորդ առարկութեան՝ գտնում էինք, որ դիւանագիտական յարաբերութիւնների մարզում զգացմունքը անելիք չունի, այլ միայն սառը դատողութիւնը եւ մեր ժողովրդի շահը:

Դժբախտաբար, այդ խնդրում մեզ չյաջողուեց համոզել ընկ. Շանթին, եւ մենք էլ նպատակայարմար չգտանք, առանց նրա համաձայնութեան, շփման մէջ մտնելու տաճիկ պատուիրակութեան հետ եւ ցաւով յետ կանգնեցինք մեր մտադրութիւնից»[2]:

Այս մեջբերումից, այսպիսով, պարզ է, որ թուրքերի և բոլշևիկների հարաբերություններն անկեղծ չէին: Վերջիններս իրար այնքան էլ չէին վստահում, մի հանգամանք, որ կարող էր առիթ հանդիսանալ հայ–թուրքական բանակցությունների համար: Ա. Տերտերյանը, որը հակված էր բանակցությունների գնալուն, ցավով է մատնանշում, որ Շանթը կտրականապես արգելում է դրանք՝ տուրք տալով զգացմունքներին, որոնք անհարիր են դիվանագիտական արվեստին: Հարկավ, կասկածից զերծ է, որ եթե բանակցությունները տեղի ունենային, թուրքերը նույնպես, ինչպես և բոլշևիկները պահանջելու էին, որ հայերը հրաժարվեին Դաշնակիցներից, ինչն ամենևին հեշտ չէր: Ակնհայտ էր նաև, որ նրանք հայերին առաջարկելու էին հրաժարվել տարածքային առումով մաքսիմալիզմից և ավելի չափավոր լինել իրենց պահանջների մեջ: Այս ամենով հանդերձ, կարծում ենք, որ ստեղծված իրավիճակում դա կլիներ ամենաճիշտ քայլը, որի արդյունքում հայերը կխուսափեին նոր արհավիրքներից և զրկանքներից: Եվ սա մենք շեշտում ենք ոչ թե գրեթե մեկդարյա հեռավորությունից փաստաբանի կեցվածք որդեգրելով, այլ՝ այն եզրակացությունների հիմքով, որոնք կատարել են այս դեպքերի ականատեսներն ու գլխավոր վկաները: ՀՀ և ՀՅԴ բազում գործիչներ հետագայում խոստովանել են, որ ճակատագրական սխալ են թույլ տվել՝ չգնալով թուրքերի հետ առանձին բանակցությունների: 1920թ. ամռանն ու աշնանը ստեղծված բարդ իավիճակում իրենց իրատեսորեն դրսևորած գործիչներից Ալ. Խատիսյանը հետևյալն է գրել. «Իսկ համաձայնութիւնը քէմալականներու հետ: Մենք շատ ենք խօսած անոնց մտայնութեան մասին. անոնք կ'ընդունէին Հայաստանը թոյլ, նիհար, 20-30 000 քառակուսի քիլոմետր սահմաններով, առանց նաւահանգիստի, չորս կողմեն սեղմուած: Բայց այնուամենայնիւ, հէնց ժամանակ շահելու համար եւ հնարաւոր դասավորութիւններու տեսակետէն՝ թուրք գործիչներու հետ խօսակցութիւնները իր ժամանակին կրնային օգտակար ըլլալ, եւ

[2] «Հայրենիք» ամսագիր, թիւ 2, Փետրուար, 1954, էջ 12-13:

այդպիսի խօսակցութիւններու համար ոչ բոլոր հնարաւորութիւնները օգտագործուեցան»[3]:

Նույն Ալ. Խատիսյանի հետ ունեցած հետագա հանդիպումներում թուրքերը, սակայն, առաջարկել են ավելի լայն սահմաններով Հայաստան և ոչ մեկը չի կարող վստահորեն պնդել, որ նրանք անկեղծ չէին: Մեկ այլ առիթով մենք հետևյալն ենք գրել. «Քեմալի հետ հաշտությունը կարող էր հնարավոր դառնալ 1920թ. Հունիս-հուլիսին, երբ նրա դրությունն աղետալի էր, քանզի պարտություն էր կրում հունական բանակից և դաշնակիցներից: Հետաքրքիր է, որ նման խորհուրդ Ալ. Խատիսյանին տվել են և Հարբորդը և ամերիկյան գերծովակալ Բրիստոլը»[4]:

Այսպիսով ստացվում է, որ Քեմալի համար հայերի հետ հաշտություն ցանկալի էր հենց այն օրերին, երբ Մոսկվայում բոլշևիկների հետ բանակցություններ էր վարում Շանթի պատվիրակությունը, երբ քեմալականների դրությունն այնքան էլ բարվոք չէր և Չիչերինը վարում էր խուսանավողական քաղքականություն: Միանըշանակորեն պարզ է, որ հայերի բանակցությունները բոլշևիկների, ինչպես նաև քեմալականների հետ դուր չէր գալու Դաշնակիցներին: Բայց հղված հոդվածում մենք ապացուցել ենք, որ Սևրի պայմանագրի կնքելուց առաջ արդեն պարզ էր, որ այն չէր իրականանալու և Դաշնակիցներն էլ՝ ի հակակշիռ բոլշևիկների արդեն օգոստոս ամսին փորձում էին սերտ հարաբերություններ ձևավորել քեմալականների հետ, որը նշանակում է, որ հայերն ավելի շուտ պետք է գնային դրան: Մեր կարծիքով ամենևին պատահական չէր, որ իրենք՝ Դաշնակիցներն էլ և մասնավորապես ամերիկացիները, նույն խորհուրդն էին տալիս հայերին: 1920թ. հուլիսին Կ. Պոլսում գտնվող Ալ. Խատիսյանը հանդիպում է Ամերիկայի դերծովակալ Բրիստոլին և հույս հայտնում, որ կիրականանա Վիլսոնի խոստումը հայերին քաղաքական օգնություն ցույց տալու առումով: Բրիստոլն անմիջապես հետևյալն է ասում. «Ուիլսոնը բոլորովին չ'արտահայտեր իր ժողովուրդի կարծիքը, ան կ'ըսէ այն, ինչ որ բոլորովին չի համապատասխաներ ամերիկացիներու շահերուն ու տեսակէտներուն: Դուք այդ մասին պատրանքներ պէտք չէ ունենաք»[5]: Բրիստոլն այնուհետև շեշտում է, «թե առհասարակ ինք իր պարտքը կը համարէ նախազգուշցնել հայ քաղաքական գործիչները, որ իրենք թուրքերու հետ փնտռեն մերձեցում՝ իրենց պահանջները հասցնելով նվազագոյնի, հակառակ պարագային նրանց կը սպասէ ծանր ապագայ: Արդարութիւնը կը պահանջէ անգամ մըն ալ ըսել,-շարունակում է Խատիսեանը,-որ գրեթէ նոյնանման խորհուրդ տուաւ ինձ նաեւ Հարբորտը, բայց ավելի մեղմ ձեւով»[6]:

Այսպիսով, Դաշնակիցներն իրենք էլ հասկացնում էին, որ իրենց վրա հույս պետք չէ դնել և լավ կլինի, որ հայերը փորձեն լեզու գտնել թուրքերի հետ: Կարևոր է այն հարցի պատասխանի որոնումը, որ հայերը եթե բանակցեին թուրքերի հետ, վերջիններս տարածքային զիջումների կգնային, թե ոչ: Մենք համոզված ենք, որ կգնային երկու դեպքում. ա. եթե հայերը հրաժարվեին Դաշնակիցներից, բ. չխզելով կապը նրանց հետ՝ միաժամանակ բանակցեին թուրքերի հետ: Թեև ընդհանուր առմամբ այն համոզմունքն էր տիրում, որ թուրքերի հետ

---

[3] **Խատիսեան Ալ.**, Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 204:

[4] **Աշոտ Ներսիսյան,** Սևրի պայմանագրի ձախողման պատճառները, տե՛ս «Հյուսիսափայլ», Հյուսիսային համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010, էջ 20:

[5] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 230:

[6] Նույն տեղում, էջ 230-231:

խոսելիք չկա, բայց, չնայած դրան, 1920թ. ամռանը Ալ. Խատիսյանն անհրաժեշտ է գտնում հանդիպել ներքին գործոց նախարար Ռեշատ փաշայի հետ: Նա վերջինիս բացատրում է, որ «ցանկալի է փոխադարձ համաձայնութեան միջոցով որոշել Միացեալ Հայաստանի սահմանները՝ մտցնելով հայկական հողամասերու մէջ վեց վիլայէթներու կարեւոր մասը, նավահանգիստ մը եւ այսպէսով լուծել մեր դարավոր վէճը:

Մեր առաջին տեսկցութեան միջոցին,-գրում է Ա. Խատիսեանը,-Ռեշատը աւելի կը լսէր: Երկրորդ անգամ ան, աւելի գործօն էր կարծիքները արտայայտելու մէջ, թէեւ ընդհանրապես սաստիկ վերապահ էր: Ան թուղթի վրայ գծեց Հայաստանի հնարաւոր սահմանները՝ մտցնելով Հայաստանի հողերու մէջ ամբողջ ռուսական Հայաստանը, Ալաշկերտի եւ Բասէնի հովիտները եւ իբրեւ նավահանգիստ Րիզեն: Այսպէսով՝Վանը, Մուշը, Էրզրումը եւ Տրապիզոնը կ'անցնեին Թուրքիային»[7]:

Այն հարցի մասին, որ թուրքերը հայերին կարող էին խաբել, մենք հետևյալն ենք գրել, որին հեշտ չի հակադարձելը կամ չհամաձայնվելը. «Բոլոր նրանց, ովքեր գտնում են, որ քեմալականների հետ բանակցութիւնները ոչինչ չէին կարող տալ, կարելի է հարց տալ, թէ 1920թ. Ամրանը (Յունիս-Յուլիս), երբ Քեմալը նեղ դրութեան մէջ էր, հայոց հետ դաշինքը գոնէ չէր փրկի Արեւմտեան Հայաստանի մի մասը եւ չէր կասեցնի պատերազմը Հայաստանի Հանրապետութեան հետ: Այս հարցին ոչ մէկը չի կարող վերջնական ժխտողական պատասխան տալ: Հակառակը յանգեցրեց նրան, որ Թուրքիան Հայաստանը համարեց Անտանտի դաշնակից եւ Ռուսաստանի օգնութեամբ ուժեղանալով՝ ստիպեց Դաշնակիցներին թեքուել իր կողմը՝ի վնաս Ռուսաստանի, իսկ Հայաստանը, մեկուսանալով ու մնալով դաշնակիցներ-Ռուսաստան-Թուրքիա օղակի մէջ, ահաւոր պարտութիւն կրեց եւ մասնատուեց: Եւ Սեւրի պայմանագիրը մնաց թղթի վրայ…»[8]:

Հիրավի, մենք համոզված ենք, որ եթե Լ. Շանթը առաջնորվեր ոչ թե հույզերով, այլ սառը բանականությամբ, ապա՝ հնարավոր է, որ Մոսկվայում ստորագրվեր հայ-ռուսական համաձայնագրի նախագիծը և ավելի ամրապնդվեր Խորհրդային Ռուսաստանի տեղը ՀՀ արտաքին քաղաքականության կողմնորոշումներում: Հնարավոր է, որ Զանգեզուրի և Նախիջևանի հարցում բողոքեր Ադրբեջանը, բայց գոնե դրանով կկասեցվեր շատ չանցած ռուս-ադրբեջանական համատեղ հարձակումը հիշյալ տարածքների և Զանգեզուրի վրա: Ոչ մեկը չի կարող վերջնականապես հերքել, որ քեմալականներից ավելի նեղ տարածքներ պահանջելու դեպքում՝վերջիններս կհարձակվեին Հայաստանի վրա և Դաշնակիցների դեմ նրանց և բոլշևիկների դաշինքը ուղղված կլիներ նաև Հայաստանի Հանրապետության դեմ: Կասկածից զերծ է, որ Հայաստանը վերջը կխորհրդայնացվեր, բայց ամենայն հավանականությամբ ավելի լայն սահմաններով: Չէ՞ որ Վրաստանը, որը Ռուսաստանի հետ 1920թ. հունիսի 7-ին կնքել էր իր անվտանգությունն ու անկախությունն երաշխավորող պայմանագիր, նույնպես բռնությամբ խորհրդայնացվեց: Բայց այստեղ խնդիրը վերաբերվում է նրան, որ ՀՀ քաղաքական ղեկավարության միջև ընդհանրության չէր հասել այն համոզմունքը, որ պետք էր ամեն կերպ լեզու գտնել թուրքերի հետ, որն ինչ որ տեղ նշանակում էր ռուսների հետ և այդ դեպքում աննախադեպ բաժանման չէր ենթարկվի Հայաստանը 1920-21թթ.-

[7] Նույն տեղում, էջ 231:

[8] **Աշոտ Ներսիսեան,** Ռուբէն, Երեւան, 2007, էջ 343:

ին: Ելնելով ասվածից, մենք չենք կարող մեր համաձայնությունը չհայտնել սփյուռքահայ պատմաբան Ռուբինա Փիրումյանին, որն այս կարևոր հարցերին անդրադառնալով, հետևյալ ընդհանրացմանն է հանգել. «Եթէ հայ եւ թուրք պատուիրակները, առանց ռուսների միջնորդութեան, փորձէին իրենց հարցերը լուծել, մանավանդ այն ժամանակ, երբ հայ-թրքական հակադրութիւնները դեռ սաղմնային էին, գուցէ կարելի կլինէր հետագայ արյիւնահեղութեան առաջն առնել»[9]:

Հայ-թուրքական փոխզիջումային հիմքով բանակցությունները դրականորեն կարող էին ազդել նաև հայ-բոլշևիկյան և հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա: Չգնալով դրան, հայ քաղաքական ղեկավարները նպաստեցին Հայաստանի մեկուսացմանը, որովհետև Դաշնակիցները նրան օգնելու մտադրություն ամենևին չունեին, ռուսները չէին կարող թուրքերին պարտադրել ավելի լայն սահմաններով Հայաստան, քանի որ վերջինս այն տպավորությունն էր թողնում, որ ոչ մի գնով չի հրաժարվելու Սևրի արդեն ձախողման դատապարտված պայմանագրից և կառչած է Դաշնակիցներից: Այդ պայմաններում նրան չէր կարող ավելի ձեռնտու լինել Քեմալին դեմ գնալը, նույնիսկ 1914թ. սահմանները պահելու առումով, քանի որ ինչպես ցարական, այնպես էլ բոլշևիկյան Ռուսաստանի գերխնդիրը եղել և մնում էր անգլիացիներին նեղուցների վրա երբեք չտեսնելը, թեկուզ և դրա համար պահանջվեր ստեղծելու նոր Թուրքիա: Կարծում ենք, որ սա տվյալ իրավիճակում նոր Ռուսաստանի համար չարիքների փոքրագույնն էր: Ցավոք, այս ամենը ուշացումով ըմբռնեց հայ քաղաքական միտքը:

Բանալի բառեր-Շանթի պատվիրակություն, Բեքիր Սամի բեյի պատվիրակություն, բանակցություններ, բոլշևիկյան Ռուսաստան, Քեմալական Թուրքիա, Դաշնակիցներ, Սևրի պայմանագիր, Քաղաքական միտք, տարածքներ, սահմաններ, բաժանում:

Աշոտ Ներսիսյան, Մոսկվայում Լևոն Շանթի և թուրքական պատվիրակության բանակցությունների անհրաժեշտության հարցի շուրջ-Հոդվածում այն տեսակետն է հիմնավորվում, որ 1920թ. Հունիս-հուլիս ամիսներին Մոսկվայում բոլշևիկների հետ բանակցող Շանթի պատվիրակությունը պետք է քաղաքական քաջություն ունենար առանձին բանակցելու նաև նույն օրերին այնտեղ գտնվող Քեմալի ուղարկած Բեքիր Սամի բեյի պատվիրակության հետ՝ առավել նեղ սահմանների պահանջով: Այդ բանակցությունները կարող էին բացառել 1920թ. Հայ-թուրքական պատերազմը, ինչպես նաև փրկել 1914թ. սահմանները: Սակայն, այդ բանակցությունները տեղի չեն ունենում, որի հետևանքով Հայաստանը դիտվում է Դաշնակիցների ջերմեռանդ կողմնակից, որը հետագայում նպաստում է նրա մեկուսացմանը և բաժանմանը:

Աշոտ Нерсисян, Надобность перегаворов вокруг вопроса Левона Шанта и турецкой делегации в Москве-В статье основывается та точка зрения, что в Москве, в июнь-июле месяцах 1920 г., делигация Шанта, ведя перегаворы с большевиками, должна была иметь политическую смелость отдельно вести перегаворы одновре-

[9] **Ռուբինա Փիրումեան,** Հայաստանը Հ.Յ.Դ.-Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երեւան, 1997, էջ 214-215:

менно и с делигацией Бекира Сами бея, отправленная Кемалем, которая находилась там в эти дни с тпебованием более узких границ. Эти перегаворы могли бы исключить армяно- тупецкую войну 1920 года, а так же спасти границы 1914года. Однако эти перегаворы не состоялись, в следствии чего Армения смотрелась, как ярый сторонник коалиции, что и вдальнейшем способствует ее уединению и разделу.

Ashot Nersisyan, On the issue of the necessity of negotioations between Levon Shant and the Turkish delegation in Moscow-This article is grounded on the view that Shant's delegation, negotiating with the Bolsheviks in Moscow in the June-July of the year 1920, should have had the courage to conduct negotiations within the same days with Bekir Sami bey's delegation sent by Kemal on the demand for narrower borders. Those negotiations might have excluded the Armenian-Turkish war of 1920, as well as saved the borders in 1914. Anyhow, those negotiations didn't take place, in the result of which Armenia was perceived as a fervent supporter of the Confederates, which later brought to its isolation and separation.

ԹԱՒՐԻԶԻ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՃԻՒՂԸ ՏԵՍՉՈՒՀԻ ՄԻՍ ՄԱՐԳԱՐԻՏ ՎԻԼՍՈՆ

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՖԹՃԵԱՆ
Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ

Հայոց Ցեղասպանութեան որբ բեկորները ցիրուցան եղած Միջին Արեւելեան երկրներում, աստւածային նախախնամութեամբ վայելեցին մի շարք Արեւմտեան երկրների եւ եկեղեցիների, ինչպէս նաեւ մարդասիրական կազմակերպութիւնների հոգատարութիւնը, կազմելով այսօրւայ պահանջատէր հայութիւնը:

Հայ ժողովուրդը որտեղ որ ապրում է, Հայրենիքում եւ Սփիւռքում, երախտագիտութեան զգացումներով պէտք է յիշի այն բոլոր կազմակերպութիւններին ու միութիւններին, հիմնարկութիւններին եւ մարդասիրական ընկերակցութիւններին, որոնք մեր ժամանակակից պատմութեան դառնագոյն օրերին Հայոց Ցեղասպանութեան ընթացքում եւ դրանից յետոյ, օժանդակեցին մեր ազգի կոտորակւած բեկորներին»:

Եթէ մի ազգի ապագան կախւած է նրա նոր սերնդից, ուրեմն մեր ազգի վերյառնումի եւ վերընձիւղման գործընթացում հրաշքի համազօր աշխատանք կատարեցին այդ կազմակերպութիւնները իրենց մարդասիրական գործով, առանց որի այսօր գոյութիւն չէր ունենալու պահանջատէր հայութիւն: Փաստօրէն այդ որբերը ո՛չ միայն իրենց ծնողներից զրկւած, այլեւ իրենց հայրենի հողից պոկւած, մինչեւ իրենց վերջին շունչը, երազեցին իրենց կորւած հայրենիքի, պապենական տան եւ կորսնցուցած հարազատների մասին, վրէժի զգացումը բորբ պահելով իրենց սրտում եւ այն փոխանցելով իրենց զաւակներին ու թոռներին:

Արեւմտեան մեծագոյն կազմակերպութիւնը, որը Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ բազմաթիւ որբանոցներ բացելով խնամք տարաւ հայի մնացորդացին, եղաւ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Հիմնարկութիւնը (Near East Relief), որի կենտրոնը գտնւում էր Նիւ Եորքում:

Այսօր, յատկապէս Միացեալ Նահանգներում, Հայ Դատի եւ հայկական տարբեր կազմակերպութիւնների կողմից մասնաւոր նախաձեռնութիւններով երախտագիտութիւն է յայտնւում յիշեալ մարդասիրական կազմակերպութիւններին: Դրանց շարքում նաեւ երախտագիտութիւն է յայտնւում մանաւանդ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Հիմնարկութեանը, «Շնորհակալութի՛ւն Ամերիկա» վերնագրով: Այս առիթով ուզեցինք սոյն Հիմնարկութեան Թաւրիզեան գործունէութիւնը ուսումնասիրել, որը սակայն այնքան էլ փայլուն դուրս չեկաւ, Ամերիկացի մի անգութ տեսչուհու Միս Մարգարիտ Վիլսոնի անբարեացակամ վարմունքի պատճառով: Դժբախտաբար երբեմն մի հիմնարկութիւնում պաշտօնավարող մէկ անձ, կարող է վարկաբեկել ամբողջ հաստատութեան անունը եւ վաստակը:

Թաւրիզի Որբանոցը-Ամերիկեան Միսիոնարական Ընկերութիւնը Թաւրիզում 1918 թւին որբանոց է բացել, եւ որտեղ պատսպարել է շուրջ 900 հայ որբեր, որոնց թւում նաեւ սակաւաթիւ ասորիներ: Նոյն որբանոցում պատսպարւել են նաեւ մի քանի քուրդ, երեք թաթար եւ երկու ռուս որբ երեխաներ: Սոյն որբանոցը 1921-ին անցել է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Հիմնարկութեան տնօրինութեանը, որը իր առաքելութիւնը շարունակել է մինչեւ 1927 թւականը:

Թաւրիզում, սոյն որբանոցի վայրում, յետագայում Ամերիկեան հիւանդանոց է կառուցւել, որը իր հերթին, Թաւրիզահայ համայնքի կեանքում կարեւոր դեր է խաղացել, մինչեւ անգամ իր սեւեռակներից մէկը Հայ Օգնութեան Միութեան տրամադրութեան ներքեւ դնելով: Ներկայիս նոյն վայրում է գտնւում «Փարասթարի Համալսարանը» (Հիւանդապահների Համալսարան): Որբանոցի շէնքից ոչ մի

մասնիկ չի մնացել բնականաբար, սակայն գէթ տարածքը լուսանկարեցինք, այսօրւայ իր պատկերով, որը կարող է օգնել սոյն գրութեան այժմէականութեանը:

Որբանոցի տարածքը իր այսօրւայ տեսքով

Որբերը շարւելով տառեր են կազմել շնորհակալութիւն յայտնելու

Սկզբնական տարիներին 900-ի հասնող թիւը որբերին, 1924-ից յետոյ զգալի նւազել է հասնելով 420-ի: Քանակային սոյն նւազումի պատճառները միայն տընտեսական չեն եղել, համաձայն Չափահաս Որբերի Միութեան, այդ օրերին հրապարակած տեղեկագրերին:

Տեղին է աւելացնել, թէ Ամերիկեան սոյն մարդասիրական կազմակերպութիւնը տարեկան 60-70 հազար դոլար ծախսելով, ո՞չ միայն որբախնամ առաքելութիւն է իրականացրել Թաւրիզում, այլ Ատրպատականի գիւղերում ապրող չքաւոր ընտանիքներին սերմնացու է բաժանել, լծկաններ տրամադրել եւ նիւթապէս օժանդակել: Նոյնիսկ նրանց հայթայթած գումարներով քաղաքում խճուղիներ են նորոգւել եւ փողոցներ յարդարւել: Յետագայում ընթացիկ ծախսերի համար կենտրոնից տրամադրւող գումարը կրճատւելով, նւազել է ամսական երկու հազար դոլարի:

Թաւրիզի որբանոցում սկզբից ընդգրկւել են 3-4 տարեկան երեխաներից մինչեւ 18 տարեկան պարման-պարմանուհիներ, որոնք որբանոցի յարկի տակ հայերէն դասեր էին ստանում մասնաւոր դասարաններում, Ամերիկացի ընդհ. Տեսուչի հսկողութեան ներքոյ: Նրանք դասապահերից դուրս, իրենց տարածքում գտնւող արհեստանոցներում հետեւում էին արհեստների: Տղաք աւելի հետեւել են կօշկակարութեան եւ ատաղձագործութեան, իսկ աղջիկներ՝ գորգագործութեան եւ ձեւագիտութեան դասընթացքների: Միայն նախավերջի տեսուչը՝ պրն. Փորնը Ամերիկացի չի՛ եղել, այլ՝ Հունգարացի, որի օրով աւելի լաւ ընթացք է ունեցել որբանոցը:

Չափահաս Որբերի Միութեան ընդվզումը-Հայոց Ցեղասպանութիւնից շուրջ 15 տարիներ յետոյ կազմւել է Չափահաս Որբերի Միութիւնը, որը իր երրորդ համագումարը անցկացրել է Մարսիլիայում, Օգոստոս 1932 թւին: Համագումարը զբաղւում է հայ որբերի իրավիճակով, իր 21 մասնաճիւղերից եկած զեկոյցները ունկնդրելով:

Հայ որբեր Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց

Հիմնարկութեան տարբեր քաղաքների որբանոցներում

Նրա դիւանի նախագահ Շաւարշ Նարդունին, իբրեւ խմբագիր Միութեան «Երկունք» պաշտօնաթերթի, նոյն ամսագրում «Սար» ծածկանունով երկու տեղեկագրական յօդուածներ է ստորագրել, շատ վրդովված ներկայացնելով իրավիճակը Թաւրիզում հաստատուած Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի որբանոցին: (Տե՛ս «Երկունք», Գ. Տարի, Յունիս, Թիւ 30, 1932, Փարիզ, էջ 99-101, եւ Գ. Տարի, Հոկտ.-Դեկտեմբեր, Թիւ 34-36, 1932, էջ 137-138):

1925-ին, Հունգարացի տեսուչին փոխարինում է Ամերիկացի Միս Մարգարիտ Վիլսոնը, եւ որբանոցի խաղաղ կեանքը շրջւում է դէպի անդունդ, իսկ երեխաների ճակատագիրը մնում է անգութ տեսչուհու քմահաճոյքին:

Յաջորդող տարի Հիմնարկութեան կենտրոնից՝ Նիւ Եորքից հրահանգ է գալիս Թաւրիզի մասնաճիւղին, կամաց-կամաց դատարկել հաստատութիւնը, ցրւելով որբերին: Հրահանգը տառացիօրէն գործադրող տեսչուհին գործի լծւելով, Թաւրիզում կը յայտարարի թէ նրանք ովքեր ծառայի կամ աղախինի կարիք ունեն, կարող են դիմել որբանոց:

«Սար» իր յօդուածում նկարագրում է, թէ ինչպիսի անբաղձալի իրավիճակներում էին յայտնւում որբերը, երբ պարտադրւում էր նրանց աղախին կամ ծառայ գնալ անծանօթ մի տուն, ամսական մէկ երկու թուման վճարումով, որը պէտք է յանձնւէր տեսչուհիին, ի պահ: Չեւական մի պայմանագիր էլ ստորագրում էր աղախին կամ ծառայ վերցնողը, որով ստիպւած էր լինում նւազագոյն երկու տարի պահել նրան իր տնում:

Միս Մարգարիտ Վիլսոնի անմարդկային վերաբերմունքը-Անկարելի է չյուզւել, կարդալով Թաւրիզի որբանոցում տեղի ունեցած սոյն «առուծախի» մասին: Թաւրիզեցի հայ եւ օտար տարբեր խաւի մարդիկ մտնում են որբանոց, շրջափակում ման գալով հաւանում են մէկին, անուն-ազգանուն են հարցնում, եւ ապա մտնում տեսչուհիի մօտ իրենց ընտրութեան մասին տեղեկացնելով նրան: Տեսչուհին կանչում է ենթակային, որը լացելով խնդրում է աղախնութեան չտալ իրեն, չզրկել դպրոցից եւ ընկերներից: Սակայն, տեսչուհու խիստ սպառնալիքը՝ առանց հագուստեղէնի փողոցում թողնելու իրեն, ստիպում էր աղջկան ենթարկուել հրահանգին: Այս «առուծախը» այնքան շուտ ու արագ տեղի էր ունենում, որ շատեր իրենց հետ վերմակ ու դոշակ տանելու առիթ չէին ունենում, ո՛չ էլ մի վերարկու վերցնելու հնարաւորութիւն էր տրւում իրենց:



Տարբեր տարիքի Հայ որբեր, իրենց տարիքի յատուկ արհեստներ սովորելու պահին

Քիչ չէին լինում այն դէպքերը, երբ տանտիրուհու հետ վէճի բռնւելու կամ օտար պատճառներով, հայ որբը կամ որբուհին վտարւում էր հայ թէ օտար Թաւրիզեցիների տնից: Նման պարագաներում դէպի որբանոց յետ վերադարձողը հանդիպում էր տեսչուհու խիստ մերժողական պատասխանին, եւ մնում էր փողոցներում, անպաշտպան ու լքւած վիճակում: Թաւրիզ քաղաքի այդ օրերի միջավայրը մի փոքր ուսումնասիրելով, ինչպէս ասւում է «Սար»ի յօդւածում, յատկապէս որբուհիները բնական ընթացքով անբարոյականութեան ճանապարհն էին բռնելու, որբանոցից դուրս մնալով…:

Միս Վիլսոնը տեսնելով թէ երեխաները գերադասում են դպրոցական կեանքը, քան՝ տներում հաստատւելով աղախին ու ծառայ լինելը, 25 Սեպտեմբեր 1926-ին փակում է որբանոցի դպրոցը եւ արձակում ուսուցիչներին, հակառակ այն իրողութեան, որ նրանք մինչեւ 1927 թիւ պայմանագիր էին ստորագրել պաշտօնավարութեան: Ուսուցիչները դիմում են օրւայ Առաջնորդ՝ Տ. Ներսէս Արք. Մելիք-Թանգեանին, եւ նրա միջամտութեամբ յետագային ստանում իրենց 5-6 ամսականները:

Հայ որբերին երկրորդ ցեղասպանութեան ենթարկող այս ճիւաղը՝ Միս Վիլսոնը, երբ բաւական նւազեցնում է պատսպարւածների քանակը, մնացածների համար մի ուրիշ ելք է գտնում: Յայտարարում է, թէ նրանց պիտի փոխադրի Գիւմրիի մասնաճիւղը, ուստի այն անձերը, որոնք հարազատ որբեր ունեն, պէտք է շուտով տէր կանգնեն նրանց, այլապէս այնուհետեւ նրանց տեսնելու առիթ պիտի չունենան: Այսպիսով էլ մէկ որոշ մասը կարողանում է ցրւել նա:

Միս Վիլսոնի անգութ մօտեցումի արդիւնք է, որ նրա ցրւած որբերից որեւէ մէկի յետնորդ սերունդին կամ հարազատին չենք հանդիպում այսօր Թաւրիզում: Որովհետեւ նրանք այդ անկանոն ցրւումի հետեւանքով անհետացել են, ձուլւելով տեղացիների մէջ, կամ կորցնելով իրենց հայի ինքնութիւնը:

5-10 տարեկան երեխաների ցրւումը-Նոյնքան վատ է լինում աւելի փոքրերի ճակատագիրը, ինչքան մեծերինը: Դարձեալ, Միս Վիլսոնի յայտարարութիւնը կարդալով, որբանոց են դիմում այս անգամ Թաւրիզեցի աւելի չքաւոր ընտանիքներ, փոքր երեխաներ որդեգրելու համար: Ընտանիքները պարտաւոր էին նւազագոյն 6 ամսով պայմանագիր ստորագրել տեսչուհու հետ եւ վերցնել երեխան, նրա փոխարէն ամսական չորս թուման վճարելով որբանոցին: Այսպիսով, Միս Վիլսոնը յաջողում է «սպառել» 70-80 որբերի եւ վերջապէս դատարկել որբանոցը:

Նարդունի գրում է, թէ յաջորդող ամիսներին Թաւրիզի փողոցներում որբանոցի նախկին փոքրիկ աշակերտների թիւը գնալով շատանում էր, որոնք անպաշտ-

պան մնալով, ողորմութիւն էին խնդրում անցորդներից, կազմելով փողոցի մուրացիկների խումբը:



Որբերը գորգերը լւանալու պահին

Որբանոցի շրջափակում

Միւս կողմից, Հիմնարկութեան փակման համար կարգադրութիւններ կատարող տեսչուհին, որի համար որբերի այլասերումը ո՞չ մի նշանակութիւն չի՛ ունեցել, իր տրամադրութեան տակ գտնւող հին ձիակառքը փոխում է եւ նորը վերցնում, ինչպէս նաեւ զոյգ ճերմակ ձիերը փոխարինում է թանկարժէք կարմիր ձիերով: Իսկ որբերի վիճակով հետաքրքրւելու եւ հաստատութեան կեանքը ուսումնասիրելու համար Ամերիկայից եկած քննիչներից շատերի գլխաւոր հետաքրքրութիւնը լինում է Թաւրիզի յայտնի բազար այցելութիւնը եւ հնագիտական արժէք ներկայացնող իրերի գնումը...: Նրանց «դրական» գործերից են եղել նաեւ, կրճատել ոչ ամերիկացի պաշտօնեաների ամսականները, կամ աւելի կըրճատել որբերի սնունդին տրամադրւող գումարը:

Որբանոցի ծախսերի մասին-Մանրամասն յիշւում են Թաւրիզի որբանոցի ամսական ծախքերը, որոնք տեսչուհու շռայլութեան մասին են պատմում բացայայտ:

Գրեթէ դատարկւած որբանոցում դեռեւս գործող տեսչուհին, ամսական 200 դոլար է ստանում: Իր բնակարանի համար իրեն տրամադրում էր 35 դոլար, կառքի ձիերի համար՝ 24, կառապանին՝ 15, դռնապանին՝ 10, վառելիքի՝ 30, ընդամէնը՝ 314 դոլար:

Հաստատութեան մէջ վերոյիշեալ կառապանից եւ դռնապանից բացի, ծառայում էին 18 ոչ Ամերիկացի պաշտօնեաներ, որոնց ամսավճարի պատկերը հետեւեալն է եղել.-Տնտեսական բաժնի վարիչը ստանում էր ամսական 50 դոլար, մատակարարը՝ 15, մառանապետը՝ 15, հաշւապահը՝ 27, կօշկակարանոցի վարպետը՝ 15, որբանոցի երկու բաժինների պատասխանատուները՝ 15=30, ութ ուսուցիչներ՝ 15=120, երկու լիաժամ աւագ ուսուցիչներ՝ 20=40, հանդերձատան երկու լւացարարներ՝ 5=10 դոլար: Ընդհանուր գումար՝ ամսական 322 դոլար:

Արդէն պարզ երեւում է, որ ամբողջ պաշտօնէութեան համար յատկացւած գումարին չափ պիտի ստանար տեսչուհին, եթէ Նիւ Եորքի պատասխանատուներ «բարի լինէին» դրա վրայ աւելացնել միայն 8 դոլար եւս:

Որբերի ձեռագործները Միս Վիլսոնի վրայ- Ամերիկայի Ֆլորիտա նահանգի Սէնթ Փիթըրսպըրկ քաղաքի «Սէնթ Փիթըրս-պըրկ Թայմզ» օրաթերթում, Շաբաթ 5 Յունւար 1929 թիւի համարում հանդիպեցինք մի լրատուութեան, որտեղ

շքանշան է տրւում Միս Վիլսոնի հետ մի առժամանակ որբանոցում նւիրւած ծառայութիւն ունեցած մի աղջկայ՝ Միս Հանթինկին: Նոյն հանդիսութեան ներկայ է գտնւել Միս Վիլսոնը, որը արդէն Միացեալ Նահանգներ վերադարձել էր, իր «առաքելութիւնը» աւարտած:

Վերոյիշեալ թերթի թղթակիցը նկարագրելուց յետոյ որբանոցի կեանքը, անդրադառնում է դրական մի շարք երեւոյթների, ասելով թէ պատսպարեալները նաեւ արհեստներ էին սովորում: Ապա նա գրում է. «Միս Վիլսոնը մի պայուսակ ունէր, որը շատ մանր ասեղնագործութեամբ էր բանած, որբանոցի երեխաներից մէկի ձեռքով: Ինչպէս նաեւ մի հագուստ էր հագնւել, ամբողջութեամբ ծածկւած ձեռագործներով, թանկարժէք մի աշխատանք, որը իրականացւել էր որբանոցում: Նա ասում էր, թէ աղջիկները շատ վարպետ էին ասեղնագործութեան մէջ, եւ թէ՝ նրանք գորգեր էին հիւսում, եւ գրեթէ ամէն ինչ կարողանում էին իրականացնել կտաւեղէնի վրայ» («Սէնթ Փիթըրսպըրկ Թայմզ», Շաբաթ 5 Յունւար 1929, էջ 2– Անգլերէն բնագրից թրգմնը.՝ (Գ.Ե.-ի):

Որբուհիներ գորգագործութեան պահին

St. Petersburg Time

ST. PETERSBURG, FLORIDA, SATURDAY, JANUARY 5, 1929

N MARK CONTINUE

BOOTH FACES OUSTER WHEN RIVALS MEET

UNDERWOOD ILL

LAWYERS PLAN FINAL APPEAL TO SAVE PAIR

FIVE PI TO WO IN FL

BRITISH POOR WITHOUT WORK IN DIRE WANT

Entire Community Caught in Economic Squeeze as Coal Market Fails

«Սէնթ Փիթըրսպըրկ Թայմզ»ի յիշեալ համարի բաժինը

Չափահաս Որբերի Միութեան նամակը ՄԱԿի քարտուղարին-Վերոյիշեալ բոլոր մտահոգութիւնները լսող եւ որբանոցի իրավիճակը քննող Մարսիլիոյ համագումարը Չափահաս Որբերի Միութեան, չար զուգադիպութեամբ գումարւում է ճիշտ այն օրերին, երբ Թուրքիան անդամակցում էր Միացեալ Ազգերի Կազմակերպութեանը:

Ուստի, Միութեան նախագահ՝ Շաւարշ Նարդունիի եւ քարտուղարներ՝ Պօղոս Արզումանեանի, Խաչատուր Սողիկեանի եւ Արամ Պետիկեանի ստորագրութեամբ մի նամակ է խմբագրւում եւ յղւում ՄԱԿ-ի քարտուղարին, որտեղ ի միջի այլոց ասւում է.

«Կարելի չէ՛ չարձանագրել թէ հայ որբերը ինչպէս ընդունեցին Թուրքիայի մասնակցութիւնը Միացեալ Ազգերի Կազմակերպութեանը:

Անգլիական մի վիճակագրութիւն 120.000 էր հաշւել հայ որբերի թիւը զինադադարին: Այս հսկայ բազմութիւնը պէտք էր կազմակերպել, յաւերժացնելու հա-

մար մի դատ, հետապնդելու համար արդարութեան պահանջը, որի համար ընկան նրանց ծնողները: Եւ կազմւեց Պատերազմի Որբերի Միութիւնը: Այսօր 21 մասնաճիւղ ունի այս կազմակերպութիւնը, ցրւած Յունաստանում, Սիրիայում, Եգիպտոսում, Ֆրանսայիում, Միացեալ Նահանգներում, Արգենդինայում եւ Ուրուկւայում:

Հիմա, որ երրորդ համագումարն է, որը տեղի է ունենում Մարսիլիայում, տարօրինակ եւ տհաճ զուգադիպութեամբ թերթերը հաղորդում են Թուրքիայի մուտքը Միացեալ Ազգերի Կազմակերպութիւն: Կարող էք հասկանալ ընդվզումը այս վառւած սրտով երիտասարդներին, որոնց հոգին դողում է բողոքի անզօր արտայայտութիւնով:

Պարոն քարտուղար, Պատերազմի Հայ Որբերի Մարսիլիոյ երրորդ համագումարը, որը ներկայացնում է նոր սերունդը՝ արժէքները եւ երեւոյթները վերագնահատողի իր հոգեբանութեամբ, արդարութեան ու քաղաքակրթութեան հրամցւած գաղափարները վերաքննողի իր ոգով, վերջապէս նոր օրերի բարոյականով վերանորոգւած սերունդը, համալսարաններում եւ ճարտարարւեստում մարզւած իր ներկայացուցիչներով, ընդունելով որ մի անգամ էլ անիրաււում է հայ ժողովուրդը, օտար միջոց չունի՝ բայց միայն խնդրել որ արձանագրէք պատմութեան դիւանաթղթերում բողոքը յանուն քաղաքակրթութեան կորոտւած մի ժողովրդի վերջին մնացորդներին:

Պատերազմի Հայ Որբերի երրորդ համագումարը հաւատում է, թէ պատմութիւնը անհասկանալի խաղեր ունի, խաղեր որ պիտի ազատագրեն մեր թափառական ժողովուրդը եւ նրան պիտի տան իր հայրենի օջախը: Այդ հաւատքն է, որ վառ պահել աշխատում է այս Միութիւնը:

Ընդունեցէ՛ք, պարոն քարտուղար, հաւաստիքը մեր յարգանքին:

Մարսէյլ, 15 Օգոստոս 1932»:

Բանալի բառեր–Թավրիզ, որբանոց, որբեր, Ատրպատական, Հայոց ցեղասպանություն, Հայ Դատ, հայոց թեմ, եկեղեցի, Մարգարիտ Վիլսոն, Մերձավոր Արևելքի Նպաստամատույց հիմնարկություն, Չափահաս որբերի Միություն, Թռչնոց բույն:

Գրիգոր Եպիսկոպոս Չիֆթճյան-Թաւրիզի որբանոցում ապաստանած հայ որբերի ճիւաղը տեսչուհի Միս Մարգարիտ Վիլսոն-Սոյն ուսումնասիրութեան նպատակը բնաւ երբեք թերագնահատել չէ՛ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Հիմնարկութեան կատարած մարդասիրական գործը: Այլ՝ ցոյց տալ թէ մի անձ ինչպէս կարող է ո՞չ միայն փչացնել դրական աշխատանքը, այլ նաեւ վարկաբեկել իր հաստատութեան անունը: Սոյն յօդւածի գրառման պահին, յուզումով վերյիշում ենք Լիբանանի Բիբլոս քաղաքում գտնւող «Թռչնոց Բոյն»ի հիմնադիր եւ իր ամբողջ կեանքը նրան նւիրաբերած Դանիացի միսիոնարուհի Մարիա Ճագոպսընին, որը մարմնաւոր մի հրեշտակ էր երկրի վրայ: Նրան «Մամա» էին ճանաչում բոլոր որբերը, նոյնիսկ չափահաս դառնալուց յետոյ: Բաղդատութեան եզրեր չենք գտնում, նրա եւ Միս Վիլսոնի միջեւ, ո՛չ էլ Թաւրիզի որբանոցի եւ «Թռչնոց Բոյն»ի միջեւ, որտեղ հոգեւոր տեսուչի պաշտօնը վարելու պատիւն ենք ունեցել երեք տարիներ»:

Епископ Григор Чивтчян, Ветвъ армянских сирот, приютившихся в сиротском доме Тавриз, надзирательница мисс Маргарит Вильсон-Целью данного исследования является отнюдь не недооценивание гуманной работы ‹‹Комитета Помощи›› Ближнего Востока. Наша цель-показать, как один человек может не только испортить положительный труд, но и дискредитировать имя своего учреждения. Данная статья о датской миссионерше Марии Якобсоне, основоположнице ‹‹Трчноц Буйн››, находяшегося в городе Библос в Ливии, которая всю свою жизнь посвятила этому заведению. Все признавали ее ‹‹мамой›› даже после своего совершеннолетия.

Bishop Krikor Chiftjian, The Fiend of the Armenian Orphans Sheltered in the Orphanage of Tabriz-Inspectress Miss Margaret Wilson-The aim of the following research is not at all to underestimate the humanistic work done by the Foundation «Npastamatuyts» established in the Near East, but to demonstrate how one person can not only deteriorate positive work, but also discredit the name of their institution. While writing this article we're remembering with excitement the Danish missioner Maria Jacobson, the founder of «TrchnotsBuyn» («Birds' nest») set up in Biblos, Lebanon, to which she dedicated her whole life, and who is the embodiment of an angel on earth. She was perceived as «Mummy» by all the orphans even after they became adults. No comparisons could be drawn between her andMiss Wilson, nor between the Orphanage of Tabriz and «Trchnots Buyn», where we had the honor of holding the post of the inspector for three years.

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԻ «ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԸ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Դիոն Կասսիոս Կոկկեյանոսը (շուրջ 155-235 թթ.) ուշ անտիկ շրջանի հռոմեական խոշորագույն պատմիչներից է, որի «Հռոմեական պատմություն» մեծածավալ երկասիրության 80 գրքից պատմագիտությանն է հասել միայն 24-ը (36-60)՝ նրա ամբողջական պատմության միայն Ք.ա. 68 թվականից մինչև Ք.հ. 47 թվականը ընկած ժամանակահատվածի, այսինքն՝ զորավար Լուկուլլոսի Հայաստան կատարած արշավանքից մինչև Կլավդիոս (41-54թթ.) կայսեր իշխանության տարիների պատմության նկարագրությունը: Մնացած գրքերից անվնաս են հասել միայն առանձին հատվածներ՝ բյուզանդական տարեգիրների միջոցով: Սույն երկասիրությունը կարևոր սկզբնաղբյուր է Հին աշխարհի, այդ թվում նաև Ք.ա.I դ.- Ք.հ.III դ. Հայաստանի ռազմաքաղաքական պատմության ուսումնասիրության համար[1]: Դիոն Կասսիոսի պատմությունը անհամեմատ արժանահավատ է, քանզի, լինելով զինվորական և քաղաքացիական բարձր պաշտոնյա, կարողացել է իր աշխատության մեջ օգտագործել պետական պաշտոնական վավերագրեր և արխիվային նյութեր: Սակայն չի կարելի աչքաթող անել այն կարևոր հանգամանքը, որ հռոմեական պատմագրի ազնվականական ծագումը (ծնվել է Բյութանիայի Նիկիա քաղաքում, բարձրաշխարհիկ ընտանիքում) և զբաղեցրած պետական բարձր պաշտոնները, անկասկած, պայմանավորել են նրա պատմության միտումնավորությունը հօգուտ Հռոմի և ի վնաս հատկապես Արևելքի ժողովուրդների:

Հայաստանի սահմանների, տարածքային ընդգրկումների, քաղաքների և քաղաքական վիճակի մասին

Ըստ պատմիչի՝ Ք.ա.69թ. հոկտեմբերին հռոմեական զորքերի կողմից հայոց երկրի մայրաքաղաք Տիգրանակերտի պաշարման ժամանակ «բարբարոսները (Տիգրանակերտի պաշտպանները-Ռ.Ն.) նետաձգությամբ և պաշարողական մեքենաների վրա թափած նավթով մեծապես վնասեցին նրանց (հռոմեացիներին): Այդ դեղանյութը կուպրաշատ էր և բոցավառվող, այնպես որ հրկիզում էր այն ամենը, ինչի կպչում էր, և ոչ մի հեղուկով հեշտ չէր այն հանգցնելը» (Դիոն, գ.36, գլ.2): Հայաստանում նավթի օգտագործման մասին Դիոնի սույն վկայությունը հաստատվեց Արտաշատի միջնաբերդի հնագիտական պեղումների ժամանակ: Արտաշատի պարիսպների մոտ՝ ներսից, մի քանի տեղով N 1 բլրի վրա հայտնաբերվել է մեծ քանակությամբ նավթ, որն արդեն ստացել էր սև, չորացած կուպրի՝

[1] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 9, Հին հունական աղբյուրներ, հ. Ա. Հովսեպոս Ֆլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթություններ Ս. Մ. Կրկյաշարյանի, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976: Ս. Կրկյաշարյանը թարգմանել է գրքի այն հատվածները միայն, որոնք վերաբերում են պատմական Հայաստանին և հարևան երկրներին, որոնց հետ հայերը հնագույն ժամանակներից ունեցել են քաղաքական, տնտեսական և մշակութային առնչություններ: Տեքստում հղումները այս հատորից տրվում են նշելով հեղինակին, գիրքը և գլուխը:

մազութի տեսք, իսկ սենյակներից մեկում զետեղված կարասների մեջ լցված է եղել նավթ[2]:

Հռոմեացի պատմագիրը հիշատակում է Վաղարշապատ քաղաքը՝ «Նոր քաղաք» անվամբ (այն հիմնադրվել է Վաղարշ Ա թագավորի (117-140թթ.) կողմից): Ըստ նույն աղբյուրի՝ հռոմեացիները Վաղարշապատը հայտարարում են Հայաստանի մայրաքաղաք, հավանաբար հին մայրաքաղաք Արտաշատի ապստամբած բնակչությանը պատժելու նպատակով[3]:

Դիոն Կասսիոսը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում անտիկ դարաշրջանի Հայաստանի տարածքային ընդգրկումների, սահմանակից երկրների մասին: Ըստ նրա՝ հյուսիսից Հայաստանի և Վրաստանի միջև սահմանը Կյուռնոս (Կուր գետի անվան հունական ձևերից մեկը) գետն է. «Կյուռնոսի երկու ափին, մի կողմից ալբանացիների (աղվանների), մյուս կողմից հայերի հարևանությամբ բնակվում էին իբերներ (վրացիներ)», որոնց երկիրը նույնպես իրեն էր ենթարկել Պոմպեոսը (Դիոն, գ.37, գլ.1, 1-5, գլ.2, 1-6): Դիոնը թվարկելով հռոմեական գերիշխանության ներքո անցած երկրների շարքը, նշում է նաև ասիական Իբերիան (պատմական Վիրքը), Ալբանիան (Աղվանքը) և երկու Արմենիաները: Արմենիաներ անվան տակ նա նկատի է ունեցել Եփրատ գետից այն կողմ գտնվող Փոքր Հայքի և Եփրատից այս կողմ գտնվող Մեծ Հայքի տարածքները (Դիոն, գ.38, գլ.38, 4): Իսկ Հայաստանի հարավային սահմանին էին հարում Օսրոյենեն՝ Եդեսիա (Ուռհա) մայրաքաղաքով և Միգդոնյան՝ Մծբին (բնագրում՝ Նիսիբին) կենտրոնով, որոնք Հյուսիսային Միջագետքի երկրներ էին և նշանակալից դեր էին խաղում հայ ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքում: Այս երկրների և Հայաստանի միջև հատկապես Տիգրան Բ-ի (Ք.ա.95-55թթ.) օրոք հաստատված տնտեսամշակութային կապերը հետզհետե ամրապնդվում էին: Տիգրան Մեծի կառավարման շրջանում Միջագետքի երկրների վրա վերակացու էր կարգված թագավորի Գուրաս եղբայրը, որը նստում էր Մծբինում: Հռոմեացի պատմագրի հավաստմամբ՝ «Տիգրանը պարթևներից վերցնելով Հյուսիսային Միջագետքը՝ քանզի այսպես էր կոչվում Տիգրիսի և Եփրատի միջև գտնվող ամբողջ երկիրը... (Տիգրան Արմենը) իր գանձերը և այլ հարստությունների մեծ մասը այնտեղ էր կենտրոնացրել և իր եղբայրը (Դիոնը չի հիշատակում Տիգրան Մեծի եղբոր անունը, սակայն Պլուտարքոսը[4] նրան անվանում է Գուրաս) այնտեղ (խոսքը լավ ամրացված Մծբինի, հռոմեական պատմագրի հիշատակմամբ՝ Նիսիբիսիի մասին է-Ռ.Ն.) բերդապահ էր կարգել» (Դիոն, գ.36, գլ. 6, 1-2): Մծբինը, ըստ պատմագրի, ոչ միայն բազմամարդ ու հարուստ քաղաք է եղել, այլև ամրակուռ ամրոց՝ շրջապատված երկու շարք հաստ ու բարձրաբերձ պարիսպներով և շուրջը փորված լայն խրամով (Դիոն, գ.36, գլ.6, 1-2): «Լուկուլլոսը (հռոմեական արևելյան արշավանքների հրամանատարը), ամռանը հասնելով այս քաղաքը, թեպետ հարձակվում էր ոչ իմիջիայլոց, բայց ոչինչ չկարողացավ վճռել, քանզի (քաղաքի) պարիսպները և՛ կրկնակի, և՛ աղյուսաշեն լինելով, մեծ հաստություն ունեին և բաժանված էին խորը խրամատով. այնպես որ ոչ մի տեղում չկարողացավ (պա-

[2] Տե՛ս **Բ. Առաքելյան,** Հին Արտաշատ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 22:

[3] Տե՛ս **К. В. Тревер,** Очерки истории культуры древней Армении, М.-Л., 1953, էջ 228-230: Հմմտ. **Ս. Մ. Կրկյաշարյան,** Հին հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, 1970, էջ 120-121:

[4] **Պլուտարքոս,** «Կենսագրություններ», Լուկուլլոս, Հին հունարեն բնագրի հայերեն թարգմանությունը և ծանոթագրությունները Ս.Մ. Կրկյաշարյանի, Երևան, 2011, գ. 22:

րիսպը) ո՛չ քանդել, ո՛չ իսկ խախտել. ուստի և Տիգրանը նույնիսկ օգնության չեկավ յուրայիններին» (Դիոն, գ.36, գլ.6, 1-2)։ Բայցևայնպես, Լուկուլլոսին ի վերջո հաջողվում է խորամանկությամբ գրավել այն և ձեռք բերել մեծ հարստություն ու ձմեռել այնտեղ (Դիոն, գ.36, գլ.7, 3-4)։

Պատմագիրը գրում է նաև հռոմեական զորքերի կողմից (խոսքը Պոմպեոսի (Ք.ա.106-48 թթ.) Հայաստան կատարած արշավանքի մասին է) «Անահտական երկրի» գրավման մասին և նշում նաև, որ Հայաստանին գավառի այդ անվանումը նվիրված է եղել համանուն մի աստվածուհու (Դիոն, գ.36, գլ.48, 1-3)։ «Անահտական երկիր» անվամբ հիշատակության հանդիպում ենք նաև Պլուտարքոսի[5] և Ստրաբոնի[6] գործերում։ Վերջինս նշում է, որ գավառը հայտնի էր Երիզա ավանում Անահիտ դիցուհու պատվին կառուցված տաճարով և այնտեղ կատարվող տոնախմբություններով։ Դիոն Կասսիոսը Հայաստանի բուն սահմանների մեջ մտնող երկիր (երկրամաս) է թվարկել նաև Ծոփքը, որտեղ էլ պահվում էին հայոց երկրի գանձերը։ Ահա թե ինչ է գրում նա. «Տիգրան Մեծին վերադարձրեց (խոսքը Արտաշատի Ք.ա.66թ. պայմանագրի մասին է) նրա ամբողջ հայրենի իշխանությունը, բայց նրա կողմից նվաճված երկրները... Կապադովկիայի Ասորիքի մասը (բնագրում՝ Սյուրիա), ինչպես նաև Փյունիկիան և ոչ փոքր երկիր Ծոփքը (բնագրում՝ Սոփանեն) վերցրեց նրանից, ինչպես նաև գանձեր պահանջեց նրանից. Իսկ Կրտսեր Տիգրանին պարգևեց միայն Ծոփքը։ Եվ քանի որ Ծոփքում էին գտնվում (հայոց արքայի) գանձերը, ուստի և երիտասարդը սրանց պատճառով վիճեց և հաջողություն չունեցավ, քանի որ Պոմպեոսը ոչ մի այլ տեղից չէր կարող ստանալ պայմանավորված գումարը, դժգոհեց և մտադրվեց փախչել։ Սակայն Պոմպեոսը[7], տեղեկանալով այդ մասին, նրան հսկողության տակ վերցրեց առանց կալանքի, և սուրհանդակներ ուղարկելով գանձերի պահապանների մոտ, հրամայեց նրանց, որ այդ բոլորը հանձնեն նրա հորը» (Դիոն, գ.36, գլ.53, 1-4)։ Դիոնը (գ.68, գլ.19, 1) հիշատակում է Արսամոսատա քաղաքը (Արշամաշատ), որը նախկինում Ծոփքի հայկական թագավորության մայրաքաղաքն է եղել։ Այն գտնվել է Եփրատի և Տիգրիսի միջև, Արածանի գետի ափին, այսպես կոչված՝ «Գեղեցիկ դաշտում»։

Պատմագրի մյուս հաղորդումը վերաբերում է Կորճայք նահանգին. «Կորդուքը (բնագրում՝ Կորդուենե) (որը պատմական Հայաստանի նահանգներից մեկն էր՝ Կորճայք անվամբ, իսկ հայկական աղբյուրներում «Կորդվաց աշխարհ») հայ-հռոմեական պատերազմի շրջանում ժամանակավորապես Ք.ա. 65թ. գրավվել էր պարթևների կողմից, սակայն Պոմպեոսը ետ գրավեց այն և հանձնեց Տիգրան Մեծին» (գ.37, գլ.5, 1-5)։ Ք.ա. 64թ. պարթև արքա Հրահատը (Ք.ա.70-57թթ.) նորից շարժվեց դեպի Հայաստան։ Ըստ Դիոն Կասսիոսի՝ Տիգրանը (Տիգրան Մեծը) բողոքի պատվիրակություն ուղարկեց Պոմպեոսի մոտ։ Հայոց պատվիրակները Պոմպեոսի դռան մոտ հանդիպեցին պարթևական պատվիրակներին. Վերջիննե-

[5] Տե՛ս նույն տեղը գ. 24, գլ. 28։

[6] Տե՛ս **Ստրաբոն**, Օտար աղբյուրներ հայերի մասին, հունական աղբյուրներ, N 1, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, XI, 14, 16 և XII, 3, 37։

[7] **Պոմպեոս Գնեոս Մագնուս** (Ք.ա. 106-48)՝ Հռոմեական զինվորական և քաղաքական գործիչ։ Աչքի ընկնող դեր է կատարել նաև Իսպանիայում Սերտորիուսի դեմ մղված պատերազմներում (Ք.ա. 77-72 թթ.), Սպարտակի ապստամբությունը ճնշելիս (Ք.ա. 71թ.) և Միջերկրական ծովում ծովահենների դեմ պայքարելիս (Ք.ա.67-66 թթ.)։ Ք.ա. 66 թ. նշանակվել է Միհրդատ Եվպատորի և Տիգրան Մեծի դեմ գործող հռոմեական բանակների հրամանատար։

րիս նպատակն էր հիմնավորել Հրահատի՝ Հայաստանի հողերի նկատմամբ ունեցած ակնկալությունները: Պոմպեոսը այս անգամ զենք չշարժեց, այլ ուղարկեց երեք միջնորդ դատավորների՝ հանձնարարելով տեղում ծանոթանալ գործի հանգամանքներին և համապատասխան վճիռ ընդունել (Դիոն, գ.37, գլ.7, 3-6): Սրանց եզրակացությունը Հայաստանի օգտին էր: Հայաստանը ոչ միայն պահպանեց Կորդուքը, որը պարթևներից մաքրել էր Պոմպեոս զորավարը, այլև ձեռք բերեց Հյուսիսային Միջագետքի որոշ հողեր ևս՝ Մծբին քաղաքով: Հայաստանին էր միացվել նաև Ակիլիսինե գավառը, որն այդ ժամանակ բուն Եկեղիք գավառից բացի, ընդգրկում էր նաև Դարանաղին, Մանանաղին, Աղյունն ու Մզուրը: Տիգրանը պահպանել էր նաև Արքայից արքա տիտղոսը: Հայագիտության համար սրանք հավաստի, եզակի և շատ արժեքավոր հաղորդումներ են:

Ուշագրավ է այն, որ Դիոն Կասսիոսը Փոքր Հայքը անվանել է «Մյուս Հայաստան»: Փոքր Հայքի՝ երբեմնի ինքնուրույն հայկական պետության մասին ավելի հանգամանալի հաղորդում է թողել Ստրաբոնը. «Փոքր Հայքը բավական պտղաբեր երկիր է: Այստեղ ևս, ինչպես և Ծոփքում, միշտ կառավարում էին երկիրը սեփական իշխանները, որոնք կամ բարեկամ ու դաշնակից էին մյուս արմենիներին, և կամ իրենց գործերը վարում էին առանձին ու անկախ: Փոքր Հայքն իրեն հպատակեցրել էր խալդայներին և տիբարեներին, այնպես որ նրա իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն ու Փառնակիա»[8]: Իսկ Դիոնը գրում է. «Այդ միջոցին Տիգրանի դաշնակից Միհրդատ Պոնտացին հռոմեացիներից մաքրել էր մյուս Հայաստանը (Փոքր Հայքը) և նրա մերձակա շրջանները» (Դիոն, գ.36, գլ.9, 1-2): Այդ հաջողությունները պատմագիրը պայմանավորում էր տեղի բնակչության համազգի լինելով և հայրենի թագավորական իշխանություն ունենալու հանգամանքով: Փաստորեն, Փոքր Հայքը, որն այդպես էլ երբեք չմիացվեց Մեծ Հայքի թագավորությանը, քանի որ դեռ մինչև Տիգրան Մեծը՝ Ք.ա. 115 թ., Միհրդատ Եվպատորը այն միացրել էր իր թագավորությանը: Տիգրանը, անշուշտ իր դաշնակից Միհրդատի հետ հարաբերությունները չսրելու համար, ստիպված էր հանդուրժել Փոքր Հայքի միացումը Պոնտական թագավորությանը: Միհրդատի պարտությունից հետո այդ երկիրն անցավ Հռոմի տիրապետության տակ[9]: Պատմագիրը Փոքր Հայքում հիշատակում է Սատալա քաղաքը, որը նույն Սատաղն է, որն ունեցել է ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն, ուր տեղակայված են եղել հռոմեական լեգեոնները: I դարի քաղաքական կացության նկարագրություններում զգալի տեղ են գրավում նաև Հայաստանի երկու մայրաքաղաքների՝ Արտաշատի և Տիգրանակերտի շուրջը կատարվող անցքերը:

Հայաստանը հռոմեացիների ու պարթևների նվաճողական ծրագրերի կիզակետում, ռազմաքաղաքական իրավիճակն ու իրադարձությունները

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Դիոն Կասսիոսը անհամեմատ անաչառ պատմագիր է, քան նույն ժամանակի պատմագիր Պլուտարքոսը և այլք: Տիգրանակերտի անկման մասին որքան էլ տարբեր են իրարից, նրանց բերած պատճառները սակայն մի խնդրում համերաշխ են՝ քաղաքը դավադրաբար

[8] **Ստրաբոն,** XII, 3, 28:

[9] Տե՛ս **Հակոբ Մանանեյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66թ. մ.թ.), Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 141:

հռոմեացիներին են հանձնել Տիգրանակերտում գտնվող օտարերկրացիները[10]: Դիոնը Տիգրանակերտ մայրաքաղաքի հանձնումը համարում է բացարձակապես քաղաքի օտար բնակչության ապստամբության, նրանց դավաճանության հետեվանք, «քանզի նրանց մեծ մասը կիլիկեցիներ էին, որոնք մի ժամանակ տեղահանվել էին իրենց երկրից և բնակեցվել էին հայոց երկրի մայրաքաղաքում, և սրանք այժմ գիշերով հռոմեացիներին ներս թողեցին: Այնուհետև մնացած ամեն ինչը հափշտակվեց, բացի կիլիկեցիների ունեցվածքից» (Դիոն, գ. 36, գլ. 2, 1-4): Ասվածից ակներև է, որ Լուկուլլոսը Տիգրանակերտը գրավել է ոչ թե ռազմական գործողությունների արդյունքում, այլ քաղաքի օտարերկրյա բնակչության դավաճանության պատճառով: Այս հաղորդումից երևում է նաև, որ Տիգրանակերտը ևս Մերձավոր Արևելքի հելլենիստական մի շարք քաղաքների նման, հիմնվել և բնակեցվել է սինոյկիսմոսի միջոցով[11]: Ի դեպ, ըստ Դիոն Կասսիոսի, նշված կիլիկեցիները Կիլիկիայի ծովափնյա Տիգրան Մեծի ավերած Սոլի (հետագայում այն վերանվանվել էր Պոմպեոպոլիս՝ Պոմպեոսի քաղաք) հելլենական 12 քաղաքներից մեկից Տիգրան Մեծի տեղափոխած հույն բնակչությունն է եղել (Դիոն, գ.36, գլ.37, 6):

Հռոմեացի պատմագիրը առավել հանգամանորեն է ներկայացնում Տիգրան Կրտսերի՝ հոր դեմ ապստամբելու, իր աներոջ՝ Փրատեսի (պարթևների արքա Հրահատ Գ) հետ համատեղ Արտաշատի վրա արշավելու, ապա (Տիգրան Մեծից) պարտություն կրելու և իր պապի՝ Միհրդատ Եվպատորի անհաջողություններից դրդված՝ հռոմեացիների մոտ գնալու և Պոմպեոսի զորքերի ուղեցկողի դերում Հայաստան՝ հոր դեմ արշավելու մասին (Դիոն, գ.36, գլ.51, 1, 2, 3, և այլն):

Դիոն Կասսիոսի գրքում հիշատակվում են Միհրդատ Պոնտացու՝ իր դաշնակից Տիգրան Մեծից հիասթափվելու և նրա՝ իրեն օգնության հասնելու խնդրանքը մերժելու իրական պատճառները. «Միհրդատը շտապեց դեպի Տիգրանը, բայց երբ նրա մոտ նախ բանագնացներ ուղարկեց, ոչ մի սիրալիրության չհանդիպեց, քանի որ (Տիգրանի) որդին՝ Տիգրանը (Կրտսերը) ապստամբել էր (հոր) դեմ, իսկ սա կասկածում էր, որ Միհրդատը, լինելով նրա պապը, հրահրել էր այդ թշնամությունը հոր դեմ: Ուստի և Տիգրանը (արքան), ոչ միայն չընդունեց նրան, այլև նրա կողմից եկած բանագնացներին կալանավորեց ու բանտարկեց: (Ահա այս բոլորից հետո) Միհրդատը հուսախաբ լինելով, շուռ եկավ դեպի Կոլխիս (Վրաստան) և այնտեղից հետիոտն հասավ Մայոտիս (Ազովի ծովը և նրա շրջակա երկիրը) և Բոսպորոս (այժմ՝ Կերչի նեղուց)» (Դիոն, գ.36, գլ.50, 1):

Պատմագիրը հակառակ տեսակետն է հայտնում նաև Ք.ա. 68 թ. սեպտեմբերին կայացած Արածանիի ճակատամարտի վերաբերյալ: Ըստ Պլուտարքոսի՝ Արածանիի ճակատամարտում Տիգրան Մեծի հեծելազորը իբր չէր դիմացել հռոմեական հետևազորի հարձակմանը և մատնվել էր փախուստի: Հետապնդումը

---

[10] Ըստ **Ապպիանոսի**՝ Մանկայոսի մոտ ծառայող հույն վարձկան զինվորներն էին, որ ապստամբելով, ներս թողեցին հռոմեացիներին: Ապպիանոսից քաղված հատվածները մեջբերելիս օգտվել ենք Ս. Մ. Կրկյաշարյանի «Appiani Alexandrini, Historia Rommana, Bibl. Teubner., I-II, Lipsiae, 1879» գրքից կատարած հայերեն թարգմանությունից (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թ., Երևան, 2007, էջ 348-349): Պլուտարքոսը խոսում է ընդհանրապես «հելլենների ապստամբության» մասին՝ «բարբարոսների դեմ» (**Պլուտարքոս**, Լուկուլլ. 29):

[11] Տե՛ս **Ս.Մ. Կրկյաշարյան,** Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, ՊԲՀ, 1964, N 1, էջ 107-118, **նույնի**՝ Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագները, Երևան, 1970, էջ 169-192:

իբր շարունակվել էր երկար ժամանակ, հռոմեացիները ամբողջ գիշեր հալածել, կոտորել ու գերեվարել էին թշնամուն (Պլուտարքոս, Լուկուլլոս, 31, 7-14)։ Իսկ Դիոն Կասսիոսը գրում է. «Հարձակման ժամանակ թշնամու (հայկական) այրուձին խիստ նեղը գցեց հռոմեական հեծելազորին, բայց հետևակի դեմ ոչ ոք նրանցից դուրս չելավ ձեռնամարտի, այլ նրանք իսկույն ետ էին քաշվում, երբ Լուկուլլոսը հեծելազորին օգնության էր տանում վահանակիրներին։ Չնայած դրան, թշնամիները որևէ վնաս չկրեցին, այլ նրանք, ետ դառնալով՝ նետեր էին արձակում հետապնդողների վրա և շատերին իսկույն սպանեցին և շատերին էլ վիրավորեցին» (Դիոն, գ.36, գլ.3, 4)։ Արածանիի ճակատամարտում հռոմեացիների տարած «հաղթանակի» դժվարին լինելը Պլուտարքոսը և Ապպիանոսը (Ապպիանոս, Միհրդատ, 87) բացատրում էին հանկարծակի վրա հասած ցրտերով, ձյան տեղումներով, գետերի սառցապատմամբ և այլն, որն իհարկե, անհնար էր վաղ աշնանը, սեպտեմբերի կեսերին, մինչդեռ Դիոն Կասսիոսը, ընդհակառակը, պնդում էր, որ հռոմեացիներն են պարտություն կրել և պարտության պատճառները համարում էր հռոմեական զորքի կրած մեծ կորուստներն ու սննդամթերքի պակասությունը (Դիոն, գ.36, գլ.6, 1)։ Դիոնը նշում է նաև, որ հռոմեացի զինվորներին հասցված վերքերը ծանր էին և դժվար բուժելի, «քանզի նրանք (հայերը) գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշվելու դեպքում, արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ։ Այնժամ Լուկուլլոսը, քանի որ շատերը վիրավորվում էին և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց այդտեղից և շաժվեց Նիսիբիսի (Մծբին) վրա» (Դիոն, գ.36, գլ.4, 1-2, գլ.5, 1-2, գլ.6, 1-2)։ Դժվար է գերագնահատել Դիոն Կասսիոսի այս հաղորդման նշանակությունը Արածանիի ճակատամարտի ընթացքը պարզաբանելու համար, քանի որ այս ճակատամարտի մասին չկա այլ վկայություն, բացի Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի հիշատակություններից[12]։ Փաստորեն, Դիոնը, ի տարբերություն Պլուտարքոսի, ճիշտ է համարում չմեղանչել պատմական ճշմարտության դեմ, հավաստելով, որ Արածանիի ճակատամարտում Տիգրան Մեծը ոչ միայն պարտություն չի կրել, այլև ընդհակառակը, ինքն է ծանր հարված հասցրել հակառակորդին։

Դիոն Կասսիոսի աշխատությունը ուշագրավ սկզբնաղբյուր է նաև հռոմեական մեկ այլ զորավար Կրասսոսի արշավանքի, նրա դեմ պարթև Սուրեն զորավարի գործողությունների, պարթև արքա Օրոդեսի՝ Հայաստան ներխուժելու և հետագա անցքերի վերաբերյալ։ Ահա թե ինչ է գրում պատմագիրը. «Իսկ Կրասսոսը[13], երբ ներխուժեց Միջագետք, Օրոդեսը (պարթևների արքա Օրոդես Բ՝ Ք.ա.57-38թթ.) նրա մոտ՝ Սիրիա դեսպաններ ուղարկեց, մեղադրելով նրան ներխուժման համար և պահանջեց հայտնել պատերազմի պատճառները. միաժամանակ նաև Սուրենին (պարթև տաղանդավոր զորավար) զորքով ուղարկեց նվաճված և ապստամբած շրջանները, քանզի ինքը մտադիր էր արշավել Հայաստան, որը մի

[12] **Պլուտարքոս,** «Կենսագրություններ», Լուկուլլոս, գլ. 31։

[13] **Մարկոս Լիկինիոս Կրասսոս** (Ք.ա.115–Ք.հ.53 թթ.)՝ Հռոմի աչքի ընկնող քաղաքական ու ռազմական գործիչ, Առաջին եռապետության (Ք.ա. 60 թ.) կազմակերպիչներից մեկը, Ք.ա. 55 թ.՝ կոնսուլ։ Նույն թվականի վերջերին նշանակվել է Սիրիա պրովինցիայի պրոկոնսուլ և արևելքում հռոմեական զորքերի գլխավոր հրամանատար։ Ք.ա. 54 թ. գարնանը Կրասսոսը նախնական որոշ ռազմական գործողություններ է սկսում պարթևների դեմ։ Հենց այս ժամանակ Կրասսոսի մոտ՝ Ասորիք է ժամանում Հայոց Արտավազդ II թագավորը։

ժամանակ Տիգրանի (Տիգրան Մեծի) երկիրն էր, որպեսզի Արտավազդը (Արտավազդ Երկրորդ հայոց արքա՝ Ք.ա.55-34), Տիգրանի որդին, որն այդ ժամանակ թագավորում էր (այստեղ), իր սեփական երկրի վիճակով մտահոգված, որևէ օգնություն չուղարկի հռոմեացիներին: Բայց Կրասոսը պատասխանեց նրան, թե պատերազմի պատճառը կհայտնի Սելևկիայում (պարթև արքաների ձմեռային նստավայրը, Տիգրիսի աջ ափին, Տիզբոնի դիմաց, հանդիսանում էր Սելևկյան թագավորների հիմնադրած համանուն Սելևկիա քաղաքներից և հելլենիստական աշխարհի քաղաքային կենտրոններից մեկը): Եվ պարթևներից մեկը իր ձախ ափին մյուս ձեռքի մատներով խփեց ու նրան պատասխանեց, թե՝ «Ավելի հեշտ այստեղ (ափի մեջ) մազեր կբուսնեն, քան դու կլինես Սելևկիայում» (Դիոն, գ.39, գլ.16, 1-3)»: Իսկ Կրասոսի վախճանը այսպես է գրել. «Ասում են նրա բերանը հալած ոսկի լցրին՝ իբրև ծանակ (ծաղր ու ծանակ)» (Դիոն, գ.39, գլ.27, 3-4):

Օգոստոս Օկտավիանոսի (Ք.ա.27թ.-Ք.հ.14թ.) օրոք հպատակ երկրները կառավարվում էին հռոմեական սովորույթի համաձայն, մինչդեռ դաշնակից երկրներին թույլ էր տրվում կառավարել իրենց հայրենի ավանդույթներով: Դիոնի վկայությամբ՝ Հայաստանում «Մյուս հայերը (նկատի ունի հռոմեասեր հոսանքի հայ մեծամեծերին) մեղադրում էին Արտաշեսին (Հայաստանի թագավոր Արտաշես II՝ Ք.ա.30-20թթ., Արտավազդ II-ի ավագ որդին): Պատճառը պարզ է, քանզի նա իր հոր նենգադավ ձերբակալությունից հետո գլխավորեց հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ հռոմեացիների: Սա Արտավազդ II-ի եղերական սպանության վրեժը լուծում է սրի քաշելով Հայաստանում մնացած բոլոր հռոմեացիներին» (գ.54, գլ.9, 1): Այս և հետագա անցքերը հանգամանորեն տրված են պատմագրի աշխատության մեջ: Հռոմեասեր ուժերը դեսպանություն են ուղարկում Հռոմ՝խնդրելով Հռոմում գտնվող Տիգրանին թագադրել Հայաստանում: Սա Արտաշես II-ի կրտսեր եղբայրն էր, որին Անտոնիոսը գերեվարել և տարել էր Եգիպտոս, որտեղից Օկտավիանոսը փոխադրեց Հռոմ, ուր տասը տարի պահելուց հետո ուղարկեց Հայաստան՝ Արտաշես II-ի գահը զբաղեցնելու: Օկտավիանոսը Հայաստան է ուղարկում Տիբերիոսին (կայսրի արևելյան հարցերում ամենամերձավոր խորհրդականը, ապա նաև՝ 14-37 թթ.՝ Հռոմի կայսրը), որպեսզի Արտաշեսին հեռացնի թագավորությունից և Տիգրանին հաստատի հայոց գահին: Դիոն Կասսիոսը նշում է, որ Տիբերիոսն այս պատրաստություններին համապատասխան ոչինչ չկատարեց, քանզի հայերն (հռոմեասերները) իրենք արդեն սպանել էին Արտաշեսին (Դիոն, գ.54, գլ.9, 1-5): Բնական է, որ Արտաշեսը պետք է սպանված լիներ Հռոմի Օգոստոս կայսեր դրդմամբ: Ըստ հռոմեական մեկ այլ պատմագրի՝ Հովսեպիոս Ֆլավիոսի (Ք.հ.37-II դարի առաջին տասնամյակ) «Հրեական հնախոսություն» գրքի՝ Կլավդիոսը (Տիբերիոս Կլավդիոս Ներոնը) Օգոստոս կայսեր կողմից Ք.ա.20 թ. ուղարկվել էր Հայաստան՝ լռեցնելու հակահռոմեական ապստամբությունը և Արտավազդ II-ի Հռոմում դաստիարակված կրտսեր որդուն՝ Տիգրան III-ին Արտաշեսի փոխարեն Հայոց գահին բազմեցնելու համար (Դիոն, գ.15, գլ.105): Եվ այսպես, Տիբերիոս Կլավդիոսի հանդիսավոր թագադրությամբ Տիգրան III-ը Հայաստանում գահակալեց Ք.ա.20-8թթ.: Այնքան կարևորություն է տրվել Հայաստանի հնազանդեցմանը, որ Օգոստոս կայսեր կտրած ոսկե և արծաթե դրամների մի կողմում դրոշմված է մեծ մասամբ Օգոստոսի գլուխը, իսկ մյուս կողմում գրված է «Հայաստանն առնված» (Armenia capita) կամ քանդակված Հայաստանի խորհրդանիշներ՝ Հայոց թագավորի խույրը և կողքին կապարճ ու աղեղ կամ հայ զինվոր, որ աջ ձեռքում բռնած ունի նիզակ, իսկ

ձախում՝ աղեղ[14]: Տիգրան III-ի կարճատև գահակալման մասին հռոմեացի պատմագիր Տակիտոսը ասում է. «Երբ Արտաշեսը սպանվեց իր ազգականների դավադրությամբ՝ Օգոստոսի կողմից Հայաստանին տրվեց իբրև թագավոր Տիգրանը, որին առաջնորդեց դեպի իր թագավորությունը Տիբերիոս Ներոնը: Սակայն երկար չտևեց ո՛չ Տիգրանի և ոչ էլ նրա զավակների իշխանությունը, որոնք ըստ օտար սովորության իրար հետ ամուսնացած էին և միասին թագավորում էին»[15]:

Դիոն Կասսիոսի աշխատությունից ենք տեղեկանում նաև, որ Տիգրան IV-ի (Ք.ա.8-5թթ., Ք.ա.2-Ք. հ.1)՝ բարբարոսների (կովկասյան լեռնականների) դեմ մղված պատերազմի ժամանակ սպանվելու, թագուհի Էրատոյի (Մեծ Հայքի թագուհին՝ 8-5, 2-1 և 6-11թթ.) հայոց գահից հրաժարվելու, Հայաստանի գահը ոմն մեդացի Արիոբարզանեսին, ապա նրա որդուն՝ Արտավազդին անցնելու և վերջինիս իշխանությունը հայերի կողմից չճանաչվելու ու ապստամբների կողմից սպանվելու մանրամասների մասին (Դիոն, գ.55, գլ.10a. 4-6):

Շատ արժեքավոր են I դարի երկրորդ կեսի հռոմեական արքունիքի, պարթևա-հռոմեական հակամարտության և Հայաստանի քաղաքական անցքերի վերաբերյալ աղբյուրագիտական հավաստումները: Դիոնի երկում հաղորդվում է 58թ. ամռանը Հռոմեական զորավար Կորբուլոնի կողմից Արտաշատը գրավելու և հիմնահատակ կործանելու, ապա Տիգրանակերտը 59թ. վերջերին առանց դիմադրության (Դիոն, գ.62, գլ.20, 1) գրավելու և այնտեղ ոմն Տիգրան VI-ին հայոց արքա կարգելու, 61թ. հռոմեա-պարթևական զինադադարի (պարթևական երկրի արքա Վաղարշ I-ի հետ, 51-75թթ.) կնքման, Տիգրանակերտի պաշարումը դադարեցնելու և իր զորքերը Հայաստանից դուրս բերելու, նույն կերպ Կորբուլոնի՝ հռոմեական լեգեոնները դուրս բերելու և Տիգրան VI-ին գահընկեց անելու մասին (Դիոն, գ.62, գլ.20, 4):

Ուշագրավ են հայ-պարթևական ուժերի և Կորբուլոնի գլխավորած հռոմեական զորքերի միջև Հայաստանին տիրելու համար ռազմական գործողությունների նկարագրությունները, որոնք վերաբերում են 61թ. Հայաստանում մղվող պատերազմի ժամանակ հռոմեական նորանշանակ զորավար Պետոսի, 63թ. Խարբերդի դաշտում Հռանդեա կոչված վայրում հռոմեական զորքերի ծանր պարտությանը և կապիտուլյացիային, նրան «լծի տակով անցկացնելուն»[16], Պետոսի բանակի ամոթալի՝ մեկ օրվա ընթացքում 40 հռոմեական մղոն (մոտ 60 կմ արագությամբ) փախուստին, «ամոթալի» հաշտությանը, այդ նույն վայրում երկու կողմերի միջև կնքված դաշնագրով Տրդատ Արշակունուն Մեծ Հայքի թագավոր ճանաչելուն (Դիոն, գ.62, գլ.22, 1-4), նաև Տրդատին հայոց գահին բարձրացնելուն նվիրված արարողակարգերին:

---

[14] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ. Էջ 287-288:

[15] Տե՛ս «Օտար աղբյուրները հայերի մասին», հ. 3, Կ. Տակիտոս, քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյանը, Երևան, 1941, գ. II, գլ. 3:

[16] Գետնի մեջ խրված երկու նիզակների վրա դրվում էր երրորդը, և հաղթվածները կռանալով անցնում էին նրա միջով՝ դեն գցելով իրենց զենքերն ու վերնազգեստը: Այս մասին տեղեկություն է հաղորդում Տակիտոսը, ըստ որի՝ «Լուր էր պտտվում, որ լեգեոններն անց են կացել լծի տակով, պատմում էին և այլ դժբախտ պատահարների մասին, նաև այն, որ նման արարքներ հայերն էին գործել: Որովհետև սրանք, նախքան հռոմեական զորքերի հեռանալը՝ մտել էին ամրացրած ճամբարը, շրջապատել էին ճանապարհները և, նկատելով երբևիցե իրենցից խլված ծառաներին ու գրաստներին՝ վերցնում ու տանում էին: Նրանք զոռով վերցնում էին հագուստեղենն ու պահած զենքերը, իսկ վախեցած զինվորները զիջում էին, որպեսզի կռվի ո՛չ մի առիթ չծագեր» (Տակիտոս, XV, 15-16):

Թագադրման նախնական արարողության վայր է ընտրվում Հռանդեան. «Այս վայրը հաճելի էր երկու կողմերին էլ. մեկին՝ հայ-պարթևներին, որովհետև այստեղ պաշարելով հռոմեացիներին, կապիտուլյացիայի ենթարկեցին ու բաց թողեցին իբրև ապացույց ողորմած վերաբերմունքի, իսկ մյուսին՝ հռոմեացիներին, այդ վայրը նախկինում յուրայինների կրած անպատվությունը ջնջելու հնարավորություն է տալիս» (Դիոն, գ.62, գլ.23, 1-2): Այսինքն՝ կազմակերպվող փառահեղ հանդեսները ոչ այլ ինչ էին, քան Հռոմի ռազմական վարկը և քաղաքական հեղինակությունը փրկելու պատվավոր մի միջոց: «Այստեղ (Հռանդեայում) բարձր բեմ պատրաստվեց, և դրա վրա կանգնեցվեցին Ներոնի պատկերքը (կիսանդրին), և Տիրիդատեսը (հռոմեական աղբյուրներում այդպես էին կոչում Տրդատին) հայերի, պարթևների ու հռոմեացիների բազմության առաջ մոտեցավ դրանց ու խոնարհվեց, այնուհետև զոհ մատուցելով դրանց և հանդիսավոր կոչելով, իր գլխից դիադեման (խույրը) վերցրեց ու դրեց կիսանդրու առջև» (Դիոն, գ.62, գլ. 3, 3-4), ու հանդիսավոր կերպով խոստացավ, որ թագը ետ կստանա Ներոնի ձեռքից Հռոմում:

Տրդատի ճանապարհորդությունը Հռոմ մանրամասն նկարագրվել է Դիոն Կասսիոսի 63-րդ գրքում (գլ.1-7): Հայաստանը Հռոմի ենթակա և «դաշնակից» երկիր ու Տրդատին հայոց թագավոր ճանաչելը Հռոմի կողմից Ներոնը համարեց հաղթանակ, որով պատիվների արժանացավ, «մի շարք անգամ իմպերատոր հռչակվեց և հաղթահանդես կատարեց»՝ Հռոմի ձիարշավարանում անգամ Ներոնի մասնակցությամբ կիթառահարների մրցություն կազմակերպվեց (գ.63, գլ.1, 1-2): Հռոմի դիվանագիտության հաղթանակին և միջազգային հեղինակությանը առավել փայլ տալու համար շքեղ հանդիսություններ անցկացվեցին Հռոմում՝ ի պատիվ Տրդատի թագադրման: Ըստ Դիոնի՝ քաղաքներն ու ժողովուրդները, որոնց միջով Տրդատը և իր շքախումբն անցնում էին՝ նրանց ընդունում էին հանդիսավոր կերպով և մեծ պատվով ու ցնծությամբ: Ուղևորության ամբողջ ծախսը, որը կազմում էր օրական մոտ 200.000 դինար-դրաքմե կամ 800.000 սեստերց (մոտ 200.000 ֆրանսիական ոսկի ֆրանկ) հոգում էր կայսերական գանձարանը (գ.63, գլ.2, 1-2): Ուղևորությունը տևեց 9 ամիս, մինչև Իտալիա հասնելը Տրդատն ու նրա կինը գնում էին ձիով, ապա՝ մինչև Հռոմ՝ կայսեր կողմից ուղարկված երկձի կառքերով: Հանդիպումը կայացավ նախ Նեապոլում: «Նա (Տրդատ Արշակունին) Ներոնին մոտենալիս հրաժարվեց մինչև իսկ ակինակեն (դաշույն) մի կողմ դնել, թեպետև իրեն զգուշացրել էին, այլ գամերով այն ամրացրեց պատյանին, հետո ծնկի եկավ ու ձեռները խաչաձևեց և նրան կոչելով իր վեհապետը, երկրպագեց» (Դիոն, գ.63, գլ.2, 4): Հ. Մանանդյանի կարծիքով, Տրդատի այս խոնարհումը Ներոնի առջև պարթևների և, հավանորեն, նաև հայերի մեջ ընդունված հպատակության ու հավատարմության հավաստիացում էր և որոշ ծիսավորություն էր, որ համապատասխանում էր միջնադարյան Եվրոպայի hommagium-ին (hommage) և Ռուսաստանի челобитье-ին[17]: Այնուհետև ճոխ հյուրասիրությունից ու պատիվներից զատ, Պուտեոլում կազմակերպեցին գլադիատորական մենամարտեր (կրկեսային խաղեր, սուսերամարտեր): Սովորույթի համաձայն՝ արարողությունը կազմակերպում, ֆինանսավորում և ղեկավարում էր հատուկ պաշտոնյա անձ, որին անվանում էին Ագոնոթետես: Ըստ պատմագրի՝ հանդիսության ժամանակ «Տիրիդատեսը, իր բարձրադիր աթոռից նետահարեց գազաններին և միանգամից մեկ նետով երկու ցուլ վարսեց (գետին) և սպանեց» (գ.63, գլ.3, 1-2): Նեապոլյան

[17] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշված աշխ., էջ 342:

այս հանդիսություններից հետո Ներոնը Տրդատին տարավ Հռոմ, ուր կատարվեց թագադրության ծեսը Ֆորումում՝ Հռոմ քաղաքի վարչական, քաղաքական, կրոնական ու առևտրական կյանքի գլխավոր հրապարակի կենտրոնում: Ի դեպ, այն կառուցվել է Ք.ա VI դ. սկզբներին՝ Պալատինյան և Կապիտոլյան բլուրների ստորոտում: Այստեղ էին գտնվում դատարանը, դրամահատարանը, պետության արխիվը, գլխավոր տաճարները, այստեղ էր իր նստաշրջաններն անցկացնում սենատը (ծերակույտ): «Ամբողջ քաղաքը զարդարված էր տոնականորեն՝ հրավառության ճրագներով և պսակներով, մարդկանց հոծ բազմություններով: Առանձնապես բազմամարդ էր Ֆորումը: Կենտրոնում, իրենց աստիճանների համեմատ՝ կանգնած էին քաղաքացիները, սպիտակազգեստ և դափնեզարդ. իսկ մնացած բոլոր տեղերում՝ պայծառորեն հանդերձավորված զինվորները, որոնց զենքերն ու դրոշները փայլատակում էին… Լուսաբացին հրապարակ մտավ Ներոնը՝ հաղթահանդեսի զգեստ հագած, սենատի և պրետորականների հետ ու բարձրանալով բեմ, նստեց կայսերական գահավորակի վրա. Տիրիդատեսը և նրա ուղեկիցներն անցան երկուստեք կանգնած հոպլիտների շարքերի միջով ու մոտենալով բեմին՝ երկրպագեցին նրան, ինչպես նախկինում»: Նա (Տրդատը) խոսեց այսպես. «Ես ո՛վ վեհապետ, Արսակեսի (խոսքը պարթև Արշակունիների նախահոր՝ սկյութական պարն կամ ապարն ցեղի առաջնորդ Արշակի մասին է. պարթևական բոլոր թագավորները կրում էին «Արշակ» տիտղոսը) հետևորդն եմ, Վոլոգեսոս (Վաղարշ Ա՝ Պարթևստանի թագավոր) և Պակորոս (Բակուրի՝ Ատրպատականի թագավոր) թագավորների եղբայրը, իսկ քո՝ ծառան: Ու եկել եմ ես դեպի քեզ, իմ աստծուն, երկրպագելու քեզ, ինչպես Միթրային (իրանա-հնդկական դիցարանի գլխավոր աստվածներից մեկն էր, կյանք պարգևող և ցերեկային լույսի աստվածությունը), և թող ինձ համար կատարվի այն, ինչ դու ինքդ կամենաս, քանզի դու ես իմ վիճակը և իմ բախտը»: Ներոնը նրան տալիս է հետևյալ պատասխանը.»… Ես քեզ դարձնում եմ Հայաստանի թագավոր, որպեսզի թե՛ դու և թե՛ նրանք հասկանան, թե ես կարող եմ թագավորություններ և՛ վերցնել և՛ պարգևել» (գ. 63, գլ. 5, 1, 3): Տրդատին նստեցնում է գահի վրա՝ մի աստիճան ցածր, և գլխին դնում հայկական թագը: Ներկաները ցնծագին աղաղակներով ողջունեցին Հայոց թագավորին: Այնուհետև սենատի հատուկ որոշմամբ թատերական շքեղ հանդիսություն կայացավ Պոմպեոսի ոսկեզօծ մեծ թատրոնում, որի համար էլ այդ օրը կոչվեց «ոսկե»: Արևից պաշտպանվելու համար գլխավերևում պարզված կերպասե վարագույրները ծիրանագույն էին, դրանց մեջտեղում ասեղնագործված էր Ներոնի պատկերը՝ ռազմակառքը վարելիս, իսկ նրա շուրջը փայլփլում էին ոսկե աստղերը: Ապա տեղի ունեցավ շքեղ խրախճանք (Դիոն, գ. 63, գլ. 6, 1-4): Պատմագրի հաղորդմամբ այս հանդիսություններից զատ, «մի անգամ Տիրիդատեսը պանկրատիոն (մրցություն ըմբշամարտի և բռնցքամարտի տարրերից կազմված մենամարտի մի տարատեսակ), դիտելիս, տեսնելով, որ մենամարտողներից մեկը վայր ընկնելուց հետո ծեծվում էր հակառակորդի կողմից, բացականչեց. «Մարտն անարդար է, քանզի արդարացի չէ ընկնողին ծեծելը» (գ. 63, գլ. 7, 1):

Թագադրության տոնակատարությունները վերջացնելուց հետո՝ Հայոց թագավորը Դիոն Կասսիոսի հավաստմամբ՝ Ներոնից ստացավ «հինգ հազար բյուր դրաքմե», այսինքն՝ 50 միլիոն դրաքմե, որը հավասար է 200 միլիոն հռոմեական սեստերցի կամ 50 միլիոն ոսկի ֆրանկի, ինչպես նաև վարպետներ, մի մասին էլ համոզելով փողի միջոցով՝ 59թ. Կորբուլոնի կողմից կործանված Արտաշատի

վերաշինության համար: Վերաշինված Արտաշատին տրվեց Ներոնեա անվանումը (գ.63, գլ.7, 1-2): Սակայն հայերը չընդունեցին իրենց համար խորթ անվանումը, և Հայաստանի վերականգնված մայրաքաղաքը շարունակում էր նախկինի պես կոչվել Արտաշատ:

Հռոմի կայսրերի ձեռքով հայոց թագավորների ընտրության և նշանակման հաղթահանդեսի մի տեսարան է քանդակվել Հռոմի կայսր Տրայանոսի (98-117թթ.) կոթողի վրա (գ.68, գլ.19, 1-5), հետագայում այն զետեղել են Կոստանդիանոս Մեծի հաղթակամարի վրա, երբ Հայոց արքա Պարթամասիրիսը (113-114թթ.) թագը դնում է Տրայանոսի ոտքերի առջև՝ նրա ձեռքով թագադրվելու համար: Սա խորհրդանշում էր առանց կռվի երկիր նվաճելը, «քանզի նրանք առանց կարոսի (հյուսված պսակ, որով հին Հունաստանում զարդարում էին Իսթմական և Պյութիական խաղերում հաղթողներին) անարյուն հաղթանակ էին համարում այն, որի համար էլ կայսրերը մեծարվում էին շնորհանդեսներով՝ իմպերատոր անվանվելով:

Այսպիսով, հռոմեա-պարթևական փոխզիջման շնորհիվ, որ հետևանք էր, անշուշտ, Հռանդեայի մոտ հռոմեացիների ամոթալի պարտության ու դաշինքի, Հայաստանում վերջնականապես հաստատվեց պարթև Արշակունիների իշխանությունը, և Հայաստանն այնուհետև դարձավ Արշակունիների երկրորդ թագավորությունը, որը շատ շուտով հայացավ՝ շուրջ չորս դար (66-428թթ.) լինելով հայոց պետականության փառավոր շրջաններից մեկը:

Ազգագրական տեղեկություններ, այդ թվում՝ հայ-պարթևական կենցաղային եւ ռազմական սովորությունների վերաբերյալ

Թեև Կասսիոսը հունական և հռոմեական այլ պատմիչների համեմատ ժլատ է տվյալ ժամանակաշրջանի ժողովուրդների ազգագրական պատկերը ներկայացնելու առումով, բայցևայնպես որոշ տեղեկություններ հաղորդել է: Մասնավորապես, պահպանվել են ուշագրավ տեղեկություններ հայկական արքայական զգեստների, հագուկապի վերաբերյալ: Այսպես, Արտաշատը Պոմպեոսին հանձնվելու իրադարձությունը նկարագրելիս պատմիչը նշում է, որ «Տիգրանը (Տիգրան Մեծը) զգեստավորվել էր այնպես, որ դրսևորվեր և՛ իր նախկին շքեղությունը, և՛ այժմյան խոնարհ վիճակը, որպեսզի նրան արժանի երևա թե՛ հարգանքի և թե՛ կարեկցանքի: Քանզի նա (քաղաքավարության համար) իր վրայից հանել էր սպիտակաշերտ (մեջընդմեջ սպիտակ) խիտոնը (պատմուճան, որ սև գոտիով մեջքին կապվող հագուստն էր) և համակ ծիրանի կանդիսը (թևերով վերնազգեստ), բայց գլխին շարունակեց կրել տիարան (խույրը) և անադեման (ապարոշը)» (Դիոն, գ.36, գլ.52, 1-4): Արքայի թագավորական այս հագուստները լավագույնս պատկերված են Տիգրան Մեծից մեզ հասած դրամների վրա դրոշմված, որոնք արքայի թագավորական իշխանության տարբերանշաններ էին:

Մեկ այլ առիթով էլ նկարագրելով Հայ Արշակունի արքայատոհմի հիմնադիր Տրդատ Ա-ի՝ ընտանյոք և 3 հազար հոգուց բաղկացած շքախմբով դեպի Հռոմ կատարած ուղևորությունը, գրում է, որ «Տրդատի կինը ընկերակցում էր ամուսնուն, համաձայն իր զարմի սովորության՝ գլխին դրած ուներ ոսկե խույր (սաղավարտ) փոխանակ գլխի քողի, որպեսզի ոտնահարած չլինի (մարդկանց) չերևալու իր հայրենի սովորույթը» (Դիոն, գ. 63, գլ. 2, 2-3):

Դիոնը համառոտ անդրադառնում է Անահիտ աստվածուհու պաշտամունքին՝ նշելով, որ պոնտական Ամասիա քաղաքի հարևանությամբ՝ Զելա ոչ մեծ քաղաքում Անահիտ դիցուհու տաճարում հայերը արարողություններ և ծեսեր էին կատարում (Դիոն, գ.36, գլ.48, 1-3)։

Հետաքրքիր են նաև հռոմեական Սատուռնալիա տոնի նակարագրությունները (գ.36, գլ.54, 2)։ Սատուռնալիայի տոնախմբությունները Հռոմում կատարվում էին ամեն տարի բերքահավաքից հետո՝ դեկտեմբերի 17-ին, որը տևում էր 7 օր։ Սա Կրոնոս աստծուն (հույների Զևսի հայրը, որը աստվածների միջև գերիշխանության համար մղված պայքարում պարտվեց իր որդուն) նվիրված տոն էր։ Հունական Կրոնոսը, որը նույնականացվել էր լատինական Սատուռն աստվածության հետ, սկզբնապես եղել է հողագործությանը հովանավորող աստվածություն։ Սա համապատասխանում էր հայոց մեջ այգեգործության, պտղաբուծության և հացաբույսերի ու բերքի տոների հովանավոր աստվածություններին՝ Վանատուր-Ամանորին, որի մեհյանը գտնվում էր Բագրևանդ գավառի Բագավան դիցավանում։ Նրանց տոնը կատարվելիս է եղել գարնանը (մարտ) կամ ամռանը (օգոստոս)՝ Նավասարդի 1-6-ը տևողությամբ։ Նրանց մասին առաջին ու թերևս վերջին ուղղակի տեղեկություն հաղորդողը Ագաթանգեղոսն է[18]։

Դիոնի աչքից չեն վրիպում հայ-պարթևական կենցաղի, սովորույթների որոշ նմանություններ։ Նա գրում է. «Հայերի երկիրն էլ, դժգոհ էր հռոմեացիների գերիշխանությունից և պատրաստ էր հարելու պարթևներին, որոնք թե՛ հարևաններ էին և թե՛ սովորույթներով մոտիկ» (Դիոն, գ.39, գլ. 28, 4)։ Ապա խոսում է պարթևների և հայերի ձիավարժ ժողովուրդներ լինելու մասին (Դիոն, գ.63, գլ.1-7)։ Ըստ պատմագրի՝հայտնի էին հայ-պարթևական սովորույթի ուժով մերձավորների ամուսնությունների օրինակներ։ Այսպես՝ Տիգրան III-ին հաջորդած նրա որդին՝ Տիգրան IV-ը, ամուսնացած էր իր խորթ (մորից տարբեր) քրոջ Էրատոյի հետ, ում հետ համատեղ կառավարում էին երկիրը։ Ուշագրավ է, որ Արտաշեսյան տոհմի այս թագավորները, դրամների վրա իրենք իրենց Տիգրան Մեծի նման անվանում էին «Արքայից արքա», «Թագավոր թագավորների»։ Փարիզի ազգային գրադարանում պահվում է Տիգրան IV-ի դրամներից մեկը, որի մի կողմում դրոշմված է Տիգրան IV-ի պատկերը, որի շուրջը գրված է «Թագավոր թագավորների Տիգրան», իսկ դրա մյուս կողմում դրոշմված է Էրատո թագուհու պատկերը՝ «Էրատո Տիգրան թագավորի քույր» մակագրությամբ[19]։ Տիգրան IV-ը զոհվում է «պատերազմի մեջ բարբարոսների դեմ»՝ ըստ երևույթին, Կովկասյան լեռնականների դեմ, իսկ նրա քույրը ու միաժամանակ կինը՝ Էրատոն, հրաժարվում է իշխանությունից (Դիոն, գ.55, գլ.10a, 5)։

Պատմիչը պարթևների զինվածության և ռազմավարության մասին ևս կարևոր տեղեկություններ է հաղորդում. «Վահաններ նրանք բոլորովին չեն օգտագործում. նրանց բանակը կազմված էր հեծյալ աղեղնավորներից և (հեծյալ) նիզակակիրներից, որոնք մեծ մասամբ զրահապատված են։ Նրանց հետևակը փոքրաթիվ է, բաղկացած ամենաչքավորներից. բայց սրանք ևս նետաձիգներ են. և նրանք մանկությունից մարզվում են և երկինքն ու երկիրը նպաստում են այս բոլորին։ Քանզի երկիրը, մեծ մասամբ հարթավայրային լինելով, լավագույնս սնում է ձիերին և շատ կարևոր է ձիավարության համար։ Ուստի և նրանք նույնիսկ պատերազմներին ամբողջ երամակներ են քշում։ Նրանք անհաղթահարելի են թե՛ իրենց

[18] Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն, Թիֆլիս, 1882, էջ 482։
[19] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 293։

երկրում և թե՛ դրան նմանվող այլ երկրներում: Քանզի նրանք արդեն սովորած լինելով, կարողանում են տանել արևը, որը առավել կիզիչ է, և հակամիջոցներ են հայտնագործում ջրի սակավության և դրա հայթայթման հետ կապված դժվարությունների դեմ. ուստի և այս պատճառով էլ իրենց երկիրը ներխուժողի դեմ նրանք հեշտությամբ կարողանում են կռվել» (Դիոն, գ.39, գլ.15, 1-6):

Ընդհանրացնելով պատմագիտական տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ հին հայերի համակրությունը միշտ եղել է պարթևների կողմը, որովհետև նրանք իրենց բարքերի, նիստուկացի, կրոնի և քաղաքական ու զինվորական կազմակերպության նմանությամբ մոտ են եղել պարթևներին ու նաև սրանց հետ կապված են եղել խնամիական կապերով:

Հայերի պայքարը այլ ցեղերի դեմ

Ուշագրավ ակնարկների ենք հանդիպում նաև Հայաստան երկիր ներխուժած օտար, ռազմատենչ որոշ ցեղերի մասին: Օրինակ, գ.69, գլ.15, 1 հատվածում հիշատակվում է, թե «ալանները–մասագետներ են», որ հարձակումներ են գործում Աղվանքի, Մեդիայի և մասամբ էլ Հայաստանի վրա: Գ.72, գլ.14,2-ում էլ խոսվում է մաքելոնների և հենիոքների մասին, որոնք ապրում էին Սև ծովի հյուսիս-արևելյան ափին՝ Պարխարյան լեռների ծովահայաց փեշերին, ըստ հին հայկական աղբյուրների՝ Խաղտիքում, ասիական Սարմաթիայում, և, սկսած Ք.հ.I դարից, որպես Հռոմին «դաշնակից» ցեղեր, գործիք էին դարձել հռոմեական դիվանագիտության ձեռքին և վերջինիս դրդմամբ հաճախ ավերիչ արշավանքներ էին գործում Հայաստանի և Պարսկաստանի վրա[20]: Պատմիչը հիշատակում է Միջագետքի ոչ մեծ երկիր արաբական Հատրենե փոքրիկ թագավորությունը՝ Հատրա մայրաքաղաքով: Այս անվանումը կապված է Հելիոս (Արև) աստվածության անվան հետ (Դիոն, գ.68, գլ.31, 1-2): Այդ թագավորությունը գտնվում էր Աղիաբենե և Օսրոյենե թագավորությունների միջև, որ Տիգրան Մեծի օրոք մտնում էր հայկական թագավորության կազմի մեջ: «Սրանց՝ արաբ «բարբարոսների» հեծելազորը ամենուրեք ուժգին և մեծ արագությամբ էր հարձակումներ գործում: Հատրացիներն էլ իրենց նետահարումներով շատ հեռու էին հասնում- քանզի նրանք իրենց նետերի մի մասն արձակում էին մեքենաների միջոցով, երկու նետ միանգամից էին արձակում և բազում ձեռքեր և բազում աղեղներ միանգամից էին նետում և նաև իրենց քաղաքը պաշարողների վրա կուպրալից նավթ (լցնում)» (գ.75, գլ.11, 3-4):

Հայ արքաների և իրենց ընտանիքների արժանապատիվ կեցվածքը հզորների հետ շփումներում

Հռոմեական արևելյան արշավանքների հրամանատար Անտոնիոսը Ք.ա.34 թ. աշնանը Հայաստանը նվաճելու առիթով որոշեց շքեղագույն հաղթահանդես կազմակերպել Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Անտոնիոսը «քաղաք մտավ մարտակառքով,-գրում է պատմագիրը,-բացի այն ամենից, առատ ավարից, որ շնորհեց Կլեոպատրային՝ (Եգիպտոսի թագուհին և Անտոնիոսի կինը) նրան բերեց նաև Արմենին (Հայոց արքա Արտավազդ II-ին՝ (Ք.ա.55-34 թթ.), իր ընտանյոք հանդերձ

[20] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 785:

(Հայոց թագուհուն և երկու որդիներին՝ արքայազներ Տիգրանին ու Արտավազդին): Հայոց արքային Անտոնիոսը խաբեությամբ՝ իրենց զավակներին, իբր թե ամուսնացնելու նպատակով բանակցությունների փոխարեն, ձերբակալում և ի պատիվ նրա թագավորական կոչման՝ շղթայում են ոսկե կապանքներով»: Դիոնի հավաստմամբ՝ «դրանք բնավ չէին մեղմացնում Անտոնիոսի ուխտադրուժ վարմունքը (Դիոն, գ.49, գլ.39, 2-6, գ.49, գլ.40, 1-3): Իսկ «…Կլեոպատրան բազմության մեջտեղ նստած էր արծաթապատ բեմում, ոսկեզօծ գահավորակի վրա: Սակայն բարբարոսները (հայոց արքա Արտավազդը և նրա ընտանիքը) թեպետև նրանց շատ էին ստիպում և շատ էին հորդորում ու հուսադրում, տալով ազատության խոստում՝ այդուհանդերձ, ոչ աղերսեցին Կլեոպատրային, և ոչ էլ երկըրպագեցին, գլուխ չխոնարհեցին: Եվ անգամ հրաժարվեցին Կլեոպատրային անվանել թագուհիների թագուհի, նույնիսկ թագուհի չանվանեցին, պարզապես իր անունով կոչեցին, դրանով նրանք վեհամիտ մարդկանց համբավ շահեցին, բայց և նույն այդ պատճառով անգութ վերաբերմունքի, խիստ չարչարանքների ենթարկվեցին» (Դիոն, գ.49, գլ.40, 1-3): Կլեոպատրան այնքան փառասեր ու դաժան գտնվեց, որ չհանդուրժեց այդօրինակ վերաբերմունքը, նրանց զնդան նետեց: «Այդ նենգ քայլով, ըստ Դիոնի՝ Անտոնիոսը մեծապես վարկաբեկել էր հռոմեական ժողովրդի հեղինակությունը» (Դիոն, գ.50, 1-4):

Մենք, հայոց արքայի վեհության մասին հաղորդման հանդիպում ենք նաև Տիգրան Մեծի՝ հռոմեական զորավար Պոմպեոսի զորակայանը մտնելու արարողակարգում: Տիգրան Մեծը «գլխին կրում էր ոսկեհուռ խույրը (թանկագին քարերով զարդարված պսակաձև գլխանոցը՝ իր բարձր աստիճանի) և ապարոշը (գլուխը կապելու փաթթոցը) և առանց ձիուց իջնելու էր ցանկանում մտնել զորակայան, որի իրավունքը չուներ՝ հռոմեական ռազմական սովորույթի համաձայն: Արդ՝ Պոմպեոսը իր մականակիրներից մեկին ուղարկելով Հայոց արքային ընդառաջ, ձիուց վար իջեցնել տվեց, որովհետև նա, իրենց սովորության համաձայն, հեծյալ վիճակում էր մտել ամրություն… (Պոմպեոսը) նստեցրեց Հայոց արքային իր կողքի բազմոցին և մխիթարելով ասաց նաև, թե նա ոչ միայն չի կորցրել Հայոց թագավորությունը, այլև ձեռք է բերել հռոմեացիների բարեկամությունը» (Դիոն, գ.36, գլ.52, 1-4): Խույրը (բնագրում՝ տիարա) և ապարոշը (բնագրում՝ անադեմա) հայոց արքայի թագավորական իշխանության տարբերանշաններն էին, որ հայոց արքան չհանեց գլխից: Տիգրան Մեծը ո՛չ միայն պահպանեց իր պետության բուն սահմանները, այլ նաև Հյուսիսային Միջագետքը, Կորդուքը և նաև «Արքայից արքա» տիտղոսը: Այդ տիտղոսը, ըստ մեր աղբյուրի, Պոմպեոսը փառասիրությունից մղված, «հակառակ ընդունված կարգի, շնորհեց գերեվարած Տիգրանին (Կրտսերին), երբ ինքը Հռոմում հաղթահանդեսը տոնեց» (Դիոն, գ.37, գլ.6, 1-3): Վերջինս իրավունք չուներ կրելու այն, որովհետև, երբեք էլ գահ չէր բարձրացել: Հետևաբար այդ տիտղոսի օրինավոր կրողը պետք է շարունակեր մնալ Տիգրան Մեծը, որին այնքան մեծարանքով էր վերաբերվել զորավար Պոմպեոսը[21]:

[21] «Արքայից արքա» տիտղոսը մինչև Տիգրան Մեծը կրում էին պարթև Արշակունի թագավորները՝ սկսած Միհրդատ I-ից (Ք.ա.171-138 թթ.): Սակայն, երբ Ք.ա.87-86 թթ. Տիգրան Մեծը ջախջախեց պարթևներին և գրավեց «Յոթանասուն հովիտները», Մարաստանն ու Միջագետքը՝ պարթևական թագավոր Գոտարզ I-ը (Գոդերձ՝ Ք.ա.87-80 թթ.) ոչ միայն ընդունեց Հայաստանի գերիշխանությունը, այլև հրաժարվեց «Արքայից արքա» տիտղոսից՝ հօգուտ Տիգրան Երկրորդի: Այս տիտղոսը շարունակում էին կրել նաև Հայոց Արտավազդ Երկրորդ, Արտաշես II (30-20թթ.) և Տիգրան IV (Ք.ա.8-5, 2-1թթ.) արքաները (տե՛ս Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1972, էջ 49):

Ժամանակի մի քանի պետական պաշտոնների և ռազմական զորաշարքերի մասին

Ուշագրավ են նաև Դիոնի տեղեկությունները որոշ տիտղոսների, պաշտոնների և զորքերի դասավորությունների վերաբերյալ: Հռոմի Տրայանոս կայսերը (98-117թթ.) տրված **Պարթիկոս** տիտղոսը բառացի նշանակում է պարթևական: Այս հաղորդումը արժեքավոր էր այն տեսակետից, որ Արտաշատում հայտնաբերված լատիներեն արձանագրության մեջ ևս Տրայանոսի բազում տիտղոսների շարքում նշված է նաև այս տիտղոսը, որով ճշտվում է այդ արձանագրության թվականը՝ 116թ.[22]:

Դիոն Կասսիոսի գրքի տարբեր հատվածներում հանդիպում են մի քանի պաշտոնների անվանումներ, որոնց բացատրությունը կարող է օգտակար լինել ուսումնասիրողների, ընդհանուր առմամբ ընթերցողների համար:

Իմպերատոր-սկզբնապես այն չի ունեցել հետագայի կայսր իմաստը, այլ եղել է պատվո տիտղոս, որ զորքը շնորհում էր իր հրամանատարին ռազմադաշտում մեծ հաղթանակներից հետո: Օգտագործվել է նաև առավել լայն առումով և տրվել ռազմական ու դատական լիիրավ իշխանությամբ օժտված զորահրամանատարներին:

Պրետոր-սա վարում էր քաղաքացիական դատական գործերը: Սկզբնապես համարվում էր կոնսուլների և դիկտատորների տիտղոս՝ անձ, որին պատկանում էր դատական գերագույն իշխանությունը, իսկ պրովինցիաների կազմակերպումից հետո՝ նաև դրանց կառավարումը:

Լեգատ-ուղարկված դեսպան, նաև զորավարների, կուսակալների օգնական:

Մականակիրներ-այսպես էին կոչվում Հռոմում բարձրաստիճան պաշտոնյայի առջևից գնացող հատուկ ծառայող անձինք, որոնք, իբրև իշխանության տարբերանշան, տանում էին ձողիկների մի կապոց՝ ծայրին կացին ամրացված:

Փաղանգ (ֆալանգ)-հին հունական, մակեդոնական և մասամբ՝ հռոմեական բանակների մարտական շարվածքը՝ քառանկյուն, զինվորների 8-24 շարքերով: Փաղանգի ճակատամասը հասնում էր մինչև 500-1000 մետրի՝ յուրաքանչյուր շարքում 1000-ական հոպլիտ:

Հոպլիտ-անտիկ դարաշրջանում հռոմեական ծանրազեն հետևակային, որ կազմում էր զորքի հարվածային ուժը:

Կրիա-այսպես էր կոչվում հռոմեական բանակի ռազմական դասավորությունը:

Բանալի բառեր-Դիոն Կասսիոս, Արտաշատ, Հյուսիսային Միջագետք, Լուկուլլոս, Տիգրան Մեծ, Միհիրդատ Պոնտացի, Անտոնիոս, Պոմպեոս, Ներոն, Ստրաբոն, Արտավազդ Երկրորդ, Տրդատ Առաջին:

Ռաֆիկ Նահապետյան, Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմություն» երկը անտիկ դարաշրջանի Հայաստանի և հայերի մասին-Անտիկ դարաշրջանի ինչպես հունական, այնպես էլ հռոմեական աղբյուրները եզակի գրավոր տեղեկություններ են հաղորդել նաև հայոց պատմության բազմաթիվ երևույթների վերաբերյալ: Դրանցից մեկն էլ Դիոն Կասսիոսն է (155-235թթ.): Պատմագիրը «Հռո-

[22] Տե՛ս **Բ. Առաքելյան,** Լատիներեն արձանագրություններ՝ Արտաշատ մայրաքաղաքից, ՊԲՀ, 1967, N 4, էջ 302-311:

մեական պատմություն» երկում արժեքավոր տեղեկություններ է հաղորդել Ք.ա.I դարից մինչև Ք.հ.III դարն ընկած ժամանակաշրջանում հայոց երկրի սահմանների, տարածքային ընդգրկումների, Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակի, ռազմական մարտավարության, հայ- պարթևական դաշինքի և Հռոմի միջև ծավալված հակամարտության, հայ-պարթևական ռազմարվեստային և կենցաղային առնչությունների, ռազմատենչ ցեղերի Հայաստան ներխուժման մասին:

Տեղեկություններ են հաղորդվում նաև ժամանակին տարածում ստացած տիտղոսների, պետական պաշտոնների, ռազմական զորաշարքերի անվանումների մասին, ներկայացվում է հայ արքաների և իրենց ընտանիքների (Տիգրան Մեծ, Արտավազդ Երկրորդ, Տրդատ Առաջին) արժանապատիվ կեցվածքը օտարների հետ շփումներում: Պատմիչը թեպետ սակավ, բայց որոշ ազգագրական տվյալներ է ներկայացնում, մասնավորապես արքայական զգեստի, փոխադրամիջոցների, չափ ու կշիռների, դրամական միջոցների, հնագույն հավատալիքների, ծիսակարգերի վերաբերյալ:

Рафик Наапетян, Труд Диона Кассия «Римская история» об Армении античного периода и об армянах-Как греческие, так и римские источники античного периода содержат уникальные факты о многочисленных явлениях армянской истории. Одним из них является Дион Кассий (155-235гг.). В труде «Римская история» историограф сообщает ценные сведения о границах, территории, военно-политической ситуации, военной стратегии армянской страны, армяно-парфийском союзе и конфликте с Римом, связях армянского и парфийского военного искусства и быта, вторжение воинственных племен в Армению в периоде с 1-го века д.н.э. до 3-го века н.э…

Также в труде содержатся сведения о распространенных в то время титулах, государственных позициях, наименованиях военных отрядов, описываются достойные манеры армянских царей и их семей (Тигран Мец, Артавазд II, Трдат I) в отношениях с иностранцами. Историограф предоставляет также немногочисленные определенные этнографические сведения, в частности о королевском одеянии, средства передвижения, мерилах, денежных средств, старинных верованиях, ритуалах.

Rafik Nahapetyan, Rafik Nahapetyan, Dio Cassius' work "Roman history" about Armenia and Armenians of the ancient period-Both Greek and Roman sources of the ancient period contain unique facts about numerous phenomena of Armenian history. One of them is Dio Cassius (155-235). In his work "Roman History", the historian reports valuable information about the borders, territory, military-political situation, military strategy of the Armenian state, the Armenian-Parthian alliance and the conflict with Rome, the ties between Armenian and Parthian military art and life, the invasion of warlike tribes into Armenia in the period from the 1st century BC. to the 3rd century AD.

Also, the work contains information on titles, state positions, names of military detachments, widespread at that time, decent manners of Armenian kings and their families (Tigran Mets, Artavazd II, Trdat I) in their relations with foreigners. The historiographer also provides a few specific ethnographic information, particularly on the royal attire, vehicles, measures, money, ancient beliefs, rituals.

“ИСТОРИЧЕСКИЙ СУМБУР” В АРМЯНСКОМ ВОПРОСЕ

ВАЛЕРИЙ ТУНЯН

Есть историки и есть руководители исторической науки. Первые дорожат исторической истиной, проводят исследования, исследуют архивные материалы и изучают историографию проблем. Руководители мифотворческой истории стремятся оказать поддержку правительственным установкам, показать свою всезнаемость и представить законченные оценки историческим явлениям. В русле их установок направляются исследовательская деятельность, учебный процесс в школах и вузах, определяется подготовка специалистов и сознание народных масс. Творчество таких функционеров кристаллизирует исто-рические достижения и ценности правящего режима[1].

В этом контексте интерес представляют воззрения директора института истории АН Азербайджана д.и.н., профессора, заслуженного деятеля науки, член.- кор. НАН Азербайджана и депутат Милли меджлиса Ягуб Махмудова. Основные исследования посвящены отношениям “государства Аггоюнлу” с Венецианской республикой во второй половине XV в. и “государства Аггоюнлу и Сефевидов” с европейскими странами во второй половине XV-начало XVII в.”

Его достижения в науке получило достойное внимание со стороны азербайджанских властей: лауреат премий “Юсиф Мемедалиев”, “Расул Рза”, “Гызыл Гылындж” (Золотой Меч), “Гызыл Гелем” (Золотое Перо), “Самир Аскерханов”, награжден орденом “Славы”. Ведет активный образ жизни научного подвижника. Свои воззрения он представил более чем в 17 странах и в большем количестве городов - Владимир - Суздаль - Манила, Анкара, Стамбул, Вашингтон и иные[2].

Не обделено вниманием и история Армении. В марта 2014г. Махмудов изложил интерпритацию мифа “Возникновение армянского государства”, состоящего из ряда утверждений.

Территориальные претензии к соседним этносам и народам это всего лишь материал для написания новой альтернативной истории региона. “Мы перепишем,-находит Махмудов,-историю Азербайджана советского периода”. Цель обосновать историческое лидерство в регионе.

Утверждается, что в 1813 и 1828гг. произошел раздел якобы “независимых государств” Азербайджана - ханств, статус которых не был зафиксирован в международных отношениях. По Гюлистанскому и Туркманчайскому трактату Персия уступила России свои владения с ханской системой управления, где бродили кочевые тюркские племена. Имелся проект главнокомандующего Кавказского отдельного корпуса И. Ф. Паскевича о провозглашение ханств персидской провинции Азербайджан (Атрпатакан) с г. Тавризом буферными государствами,-“Приобретение Азербайджана представляет большие выгоды”,-но царь Николай I

[1] **Псевдо историки Азербайджана во главе с Ягубом Махмудовым готовят передел.-** *http://mujchin.net/showthread.php?t=4352*; **ЕгиазарянА.** Вначале был… Азербайджан” или история по Азербайджански.-*http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENTID=5948*

[2] Якуб Милаил оглу Махмудов.-*http://history.bsu.edu.az/ru/content/aqubmikailoqluMaxmu dov 454*

не согласился[3]. Закавказский Азербайджан, являлся царско-советским проектом по захвату Иранского Азербайджана[4], и был создан лишь в 1918г.

Таблица № 1

Утверждения	Обоснование
1. История Азербайджана после Гюлистанского и Туркманчайского договоров сфальсифицирована. 2. Раздел "независимых государств" Азербайджана в 1828 г. 3. Николай I создал Армянскую область 21 марта 1828 г. 4. Армянская область "вымышленная структура". 5. Армянская область - "христианская межа" России. 6. 1836 г. - упразднение "независи мой" Албанской церкви. 7. Резня мусульман в Азербайджане и Анатолии. 8. "Подарок" Еревана. 9. Армянские Республики - I,II,III, - Агрессивные виды к Азербайджану.	1. Потеря "азербайджанских земель"- Нахичеван, Карабах, Ереван и Дагестан[5]. 2. "Подарок" армянам - Армянская область. 3. День празднования Новруза азербайджанского народа. 4. 76,24% населения Армянской области азербайджанцы. 5. Основа будущей армянской государственности. 6. Причина – подстрекательство армянской церкви. 7. Покровительство и зашита армян со стороны царской России. 8. Армянское государство на Кавказе. 9. Защита армян большевистским-советским режимом.

Армянская область не являлась "подарком" армянам 21 марта 1828 г., когда была создана царским указом[6], что случайно совпало с мусульманским праздником "Новруз байрама"-Нового года. Хотя Махмудов иного мнения: "Ликвидация азербайджанских ханств именно в день праздника Новруз и создание на этих землях специальной области для переселенных сюда армян было моральным оскорблением для азербайджанского народа"[7].

Прежде всего Армянская область находилась в Араратской долине, являющейся историческим центром армянской государственности, как и Ванская область. В силу чего царь провозгласил себя "Государем Армянской области", подчеркивая историческую преемственность новоприсоединенной территории. В армянской историографии отмечается, что Туркманчайский мир создал основы воссоздания армянских образований-Армянская область, Ереванская губерния, Республики Армения[8]. Возникли они в колыбели армянской государственности Араратской стране, а не на неведомых "исторических территориях Азербайджана"[9]. Здесь находились армянские столицы как Армавир, Ервандашат, Арташат, Тигранакерт, Вагаршапат, Двин, Ширакаван (Еразгаворс), Карс и Ани.

Царь Николай I не мог предвидеть последствий исторической оценки Махмудова, но на всякий случай подстраховался от всякой предвзятости.16 марта мо-

[3] **Тунян В. Г.** Историческое пристрастие Азербайджана к истории Армении:мифы и реалии. Ереван, 2013, с.225.

[4] **Тарасов С.** Где искать "досье на Сталина.-*http://kavkaz.ge/2010/06/*

[5]Академия наук Азербайджана собралась переписывать историю, предъявив территориальные претензии Армении, Грузии и России.-*http://www. yerkra mas.org/article/ 87199*

[6] Высочайший манифест.-Русский инвалид. 1828, 29 марта.

[7] **Махмудов Я.** Возникновение армянского государства-*http://1905.az/ru*

[8] **Тунян В. Г.** А. С. Грибоедов. Ереван, 1995, с.59.

[9] **Махмудов Я.** Возникновение армянского государства.-*http://1905.az/ru*

нарх подписал указ на имя военного губернатора С.-Петербурга П. В. Голенищева о заключение трактата "вечного мира", обеспечившего присоединение Ереванского и Нахичеванского ханств, "кой впредь именовать будут областью Армянскою"[10].

17 марта 1828 г. газета "Русский инвалид"[11] представила общественности высочайший указ от 15 марта о присвоении ген.-ад. Паскевичу титула графа Российской империи, имевший связь с военными достижениями: занятие крепости Еревана, "счастливое прекращение войны с Персией", распространение пределов империи за Аракс (Арарат частично вошел в состава России) и присоединение Армянской области[12].

Главным в решениях царя был учет армянского фактора на Южной окраине, отсутствия "Азербайджана" на этих территориях и незнание существования Новруза у тюркских племен. Более того 18 марта 1828 г. монарх сообщил Паскевичу, что ему предоставлялось централизованное управление Кавказа, состоящего из трех военных линий: Кавказская во главе с ген. Эммануэлем, Грузия и закавказские владение поручались ген. Н. М. Сипягину, а Персидская предоставлялась А.И. Красовскому. Указ Правительствующего Сената о создании Армянской области мог состояться 19 марта, но сработала бюрократическая процедура и пришлось царю подписывать 21 марта[13].

Между тем дата создания Армянской области непосредственно связана с официальным подведением итогов Персидской кампании. 21 марта 1828 г. царь Николай I подписал манифест об окончании войны с Персией и заключении Туркманчайского договора[14]. Титул же "Государь Армянской области" был присвоен 25 марта 1828 г., как производный от Господа, и использовался лишь императором России. Официальный титул монарха России состоял из триады: государь, царь и император, отражая путь, пройденный Московским государством до Российской империи[15].

Азербайджанские историки любят исторические факты, позволяющие осуществлять исторические манипуляции. Так и с этими 76,24% "азербайджанцами" Армянской области. Массовый читатель Азербайджана может поверить, а рачительный обратится к работе И.И. Шопена "Исторический памятник Армянской области", где в описание не обнаружит азербайджанцев, а найдет, помимо армян, кочевые племена саатли, сеидлю, ахсахлю, карапапах и т. д[16]. За качественное изучение состояние Армянской области работа Шопена была удостоена второй демидовской премии Академии наук России.

Отметим, что в следствие некачественного управление Ма-мад хана из Еревана в 1804 г. Грузию переселилось 11 тыс. армянских семейств, т. е. 55 тыс., что заставило хана жаловаться до Государственного Совета России об утрате хозяйственных

---

[10] Национальный архов Армении (НАА), ф. 400, оп. 1, д. 13, л. 12.

[11] Высочайший указ, данный Правительствующему Сенату. - Русский инвалид. 1828, 17 марта.

[12] **Тунян В.Г**. Восточная Армения в составе России. Ереван, 1988,с.16; Политика самодержавия России в Заквказье XX-нач. XX вв.ч.2, Ереван, 2006, с. 39.

[13] ПСЗРИ. 2-е изд, т. 3, N1888.

[14] Высочайший манифест.-Русский инвалид. 1829, 29 марта.

[15] **Тунян В. Г** Поражение в научной истине относительно сушествования. Русская политика в Армении: мифы и реалии. Ереван, 1998, с.18,19.

[16] **Шопен И.И**. Исторический памятник состояния Армянской области. СПб., 1852, с. 445, 446.- Shopen I. Istoricheskij pamyatnik sost Armyan skoj Oblasti 1852 pdf

армянских подданных[17]. Наконец, помимо армян из Персии переселялись из Персидского Азербайджана ханы с мусульман- скими подданными во главе с муштеидом Тавриза Ага-Мир.

Фетте, составивших знать закавказских татар[18]. Махмудов представляет геополитическую задумку царя Николая I относительно Армянской области как дискурс тактического плана и далеко идущего стратегического замысла: "Вместе с тем, созданием "Армянской области" царская Россия провела своего рода "христианскую межу" между новозавоеванными азербайджанскими землями и Османской империей"[19]. Этим Махмудов представляет геополитические перспективы роста армянской государственности, как говорится, с далеко идущими последствиями.

Грусть ниспадает на азербайджанских историков, когда они начинают говорить об упразднение Агванской церкви. Особенно четко она представлена у Махмудова, который упразднение "независимой" Агванской церкви связывает с активизацией экспансионизма армян: "В 1836 году при подстрекательстве армяно-григорианской церкви была упразднена независимая Албанская церковь. Начиная с этого времени, находящиеся под покровительством и защитой царской России армяне начали проводить акты массовой резни тюрко-мусульманского населения в Азербайджане и Анатолии".

Агванская церковь возникла благодаря принятию христианства от армянских апостолов и Григория Просветителя. С 705 г. агванские католикосы стали возводиться лишь при согласии католикосов всех армян. Размежевание правобережного армянского и левобережного кавказского населения Агвана обусловило сохранение титула католикоса Агвана как исторического главенства в прикуринской территории за католикосами Гандзасара. Суть проблемы отмечает глава Арцахской епархии архиепископ Паргев Мартиросян: "Мы ведем отсчет государственности Арцаха с первой половины V века, после того как ниспала Армянская царственность, а в восточной Армении-в Арцахе, Утике, Пайтакаране и на левобережье Куры-была создана Армянская царственность со своим царем и католикосом. То, что называли когда-то Кавказским Албанским царством и Албанским католикосатом"[20].

Упразднению Агванского католикоса содействовали Карабахские ханы. В 1788 г. Ибрагим хан убил католикос Асан Джаляляна за контакты с Российской империей. Преследования хана заставили его брата католикоса Саркиса Джалаляна в 1798г. вместе с карабахскими меликами переселиться в Грузию и стать митрополитом Ахпатского монастыря, находящегося в зависимости от Тифлисского армянского архиепископа Иоаннеса Гехардакира и католикоса всех армян. Титул Агванского патриарха стал разменной монетой для Ширванского и Карабахского ханов, которые носили до 1815 г. иерархи Исраель и Сименон, что и стало причиной упразднения Гандзасарского патриархата. При этом его существование зави-

---

[17] АКАК, т.8, N 541, с.276; Тунян В.Г. Административно-экономическая политика самодержавия России в Заквказье I п.XIX в. Ереван, 2003, с.128,129.

[18] **Тунян В.Г.** Историческое пристрастие…, с. 215 – 216.

[19] **Махмудов Я**. Возникновение армянского государства.- *http://1905.az/ru/*

[20] Архиепископ Паргев: "Да благословит Господь друзей Нагорного Карабаха!"- *https://regnum.ru/news/polit/2178821.html*

село от санкции католикоса всех армян. Положение 1836 г. об управление армянской церковью в Российской империи готовила не армянская церковь, а представители правительственной власти-Тифлисский и С.-Петербургский комитеты, разработавшие соответствующие проекты[21].

В апреля 2014 г. муаллимом Махмудовым озвучен концеп-туальный подход "Кровавая летопись к Армянскому вопросу", изложенный в духе информационной войны, но не научной полемики. Основные положения имеют следующий вид.

Таблица № 2

Положения армян	Аргументы оспаривания
1. Реальность Геноцида армян. 2. Армяне стали жертвой политики Турции. 3. Стремление армян к самоопределению. 4. Весна 1918 г. - гражданская война в Баку между мусават и советами. 5. Армянская депортация 1915 г.- начало геноцида. 6. Поднятия темы Геноцида армян пропагандистская акция.	1. Это" ложное" мнение. 2. Армяне попрали попечительство османов. 3. Не самоопределение, а "вооруженный мятеж". 4. Комиссар Ст.Шаумян коммивояжер проекта армянской государственности. 5. Депортация азербайджанцев из Арм. ССР. 6. Наличие миллиона азербайджанских беженцев[22].

Геноцид армян представляется Махмудовым пропагандистским продуктом: "Армения и армянское лобби лживо утверждают, что предшественник Турции – Османская империя совершила в 1915 году геноцид в отношении проживающих в Анатолии". При этом он не утруждает себя вопросом: куда делись армянские подданные Османской империи и каким обра-зом возникли после Первой мировой войны армянские общины в разных странах. Значимость признания Геноцида армян осуществил Папа Рима Франциск I[23]. Так что попечительство османов дорого стоило армянскому народу.

Махмудов обвиняет армян в подрыве Османской империи путём вооруженного её разложения: "Однако армяне во время Первой мировой войны совершили большое предательство в отношении турок. В ответ на их заботу армяне по наущению великих держав, которые лелеяли мечту ослабить, уничтожить Османскую империю, подняли вооруженный мятеж против страны, гражданами которой были. Недруги хотели раздробить обширную территорию Османского султаната. И самым грязным приемом для достижения этой цели стало использование армянского населения империи".

Отметим, что политический лидер армянского общества партия "Дашнакцутюн" в середине и конце августа 1914 г. приняла решение проявить лояльность в ходе мировой войны к властям Османской Турции и выполнять свой гражданс-

[21] **Тунян В.Г.** Историческое пристрастие…,с.89-95; "Положение" Армянской церкви. Ереван, 2001, с. 3-33.

[22] Кровавая летопись.-*http://www.kaspiy.az/news.php?id=10786#.VupsGk8r Uc*

[23] Папа Римский Франциск: В отношении резни армян я не знал иного слова, кроме как геноцид. - *http://www.panorama.am/ru/news/2016/06/27*

кий долг. Только в рядах Османской армян оказалось 100 тыс. армянских солдат[24], которых стали разоружать и истреблять с конца февраля 1915 г. Номинальной причиной являлось так называемое "предательство" армян в Сарыкамышском сражение. Хотя главнокомандующий армии Энвер признал публично, опубликовав письмо в газете, храбрость армянских солдат в сражении. Причем один из них Овик спас Энвера, выведя его на лошади с места сражения. До этого константинопольский патриарх Завену Егяну призвал армян Османской Турции принять участие в победе турецкого оружия[25].

Представлена цель мнимого армянского восстания при содействии России: "Царизму удалось поднять армян на мятеж, и в этом деле свою роль сыграла "религиозная солидарность". Ставилась цель создания на востоке Османской империи христианского государства для дальнейших аннексий исламских земель - территорий Турции"[26].

Здесь подтасовываются ряд фактов неизвестных обычному читателя, но обыгрываемых мифотворцами. Армяне в русской армии, преимущественно, сражались на западном фронте. На Кавказе армянских отрядов не было, а были добровольческие дружины, насчитывающих около 10 тыс. чел. на стороне русского войска. Инициатором создания армянских добровольческих отрядов были младотурки, которые неоднократно поднимали этот вопрос перед представителями западных армян в августе 1914 г. - Ване, Муше и Эрзеруме, а затем в ноябре. С помощью этих отрядов намечалось поднять восстание против России, к которым присоединились бы грузины и "татары", а взамен была бы создана автономная Армения. Однако местные армяне встали на позицию лояльности к турецкому режиму, а не самостоятельного выступления[27].

Не выдерживает критике и тезис Махмудова об армянском восстании и вооружении их Россией для удара в тыл турецкой армии, подразумевая разрозненные акты самообороны армян Вана, Муша, Сасуна и других мест, Наиболее крупным явилось Ванское восстание, начавшееся 8 апреля 1915 г., когда были практически уничтожены местные лидеры армян, из-за предстоящей депортации в пустыни Месопотамии. Восстание не было согласовано с русским командованием. Лишь в конце апреля высшее руководство Российской империи дало согласие на проведение Ванской операции. Русские части вступили в Ван 8 мая 1915 г[28].

О знание событий этого времени глава исторической науки Азербайджана свидетельствует и тот факт, что руководитель Первой армянской дружины западноармянский фидаин Андраник Озанян провозглашается "генералом османской армии". Это сделано для объяснения успешных действий Озаняна против турок с восстание в монастыре Аракелоц 1902 г., а с другой, очевидно, отдается дань его военному таланту.

---

[24] **Восканян А.,**Армяне в османской армии:мобилизация, разоружение, уничтожение. - Журнал исследования геноциа. 2014, N 1, с.58 (на арм. яз.).

[25] **Тунян В.Г.,** Младотурки и Армянский вопрос. ч.2, Ереван, 2005, с.509, 510; ч,3, 2010, с15.

[26] **Махмудов Я.,** Возникновение армянского государства.-*http:///1905.az/ru/*

[27] **Тунян В.Г.,** Младотурки и Армянский вопрос. ч. 2,с.482 - 488; ч. 3, с.8.

[28] **Тунян В.Г.,** Депортация армян Османской Турции:мифы турецкой историографии. – Журнал исследований геноцида. 2014, N 2, с.39-52.

Несостоятельно и положение о создание “христианского государства на востоке Османской империи”. Исследование политики царизма этого времени показывает отсутствие этого плана. Царь Николай II, в ходе тифлисской встречи с католикосом Геворгом V Суренянцом, дал лишь обтекаемую формулу о послевоенном устройстве: “Армян ожидает блестящее будущее”[29]. Каково её содержание выяснилось в 1916г. соглашением Сайк-Пико-Сазонов, согласно которому территория Великой Армении переходила к Российской империи, а Киликия и часть Малой Армении Франции[30].

Весь этот подход Махмудова к событиям Геноцида армян является перепевом мифов младотурецкой пропаганды[31].

Сумбурные обвинения выдвигаются в адрес представителя Красного Кремля на Кавказе и комиссара Советской коммуны в Баку Степана Шаумяна: “После прихода к власти Ленина Шаумян, член Бакинского комитета, один из руководителей партии “Дашнакцутюн”, снова сменил шинель и, став большевиком, захватил власть в городе. Москва вручила Шаумяну и судьбу Кавказа, и создание армянского государства на востоке Анатолии. Армянами воспользовались в большой игре. Я проводил исследования и потому заявляю: ни Россия, ни Англия, ни Франция никогда не ставили перед собой цель создания для армян “Великой Армении”, ими просто воспользовались для нанесения поражения османцам. Таким образом, на востоке Османского государства сложилась очень тяжелая, безвыходная ситуация”.

Степан Шаумян никогда не был дашнаком, а тем более руководителем партии “Дашнакцутюн”. В 1899 г. он создал первый марксистский кружок, а в 1902 г. организовал марксистскую организацию “Союз армянских социал-демократов”[32]. Под его руководством большевики сумели взять власть в Баку в конце 1917 года, а в апреле 1918 г. мусават попытался её перехватить. Мусават потерпел поражение, а мифотворцы вину возложили на Шаумяна. Что касается установок Красного Кремля Шаумяну, то в компетенцию входило сохранение Баку как советского нефтяного центра, согласно Брест-Литовскому договору и советизация Кавказа[33].

Относительно утверждения о реализации Шаумяном проекта создания армянского государства на “востоке Анатолии”, то, Махмудов темнит суть дела. Речь идет о декрете Советской власти от 29 декабря 1917 г. о самоопределение Турецкой Армении[34], принятый для воздействия на позицию Германии и Турции в ходе Брест-Литовских переговоров. Декрет имело определенное значение, что заставило Германию, в свете истребительной политики армянского населения, вначале не передавать Карсскую область Турции. Позиция Берлина изменилась после прибытия великого везиря Талаата в январе 1918 г. на Брест-Литовские переговоры. Турки оценили значение декрета о Турецкой Армении как сдачу Совет-

---

[29] **Тунян В.Г.,** Россия и Армянский вопрос. Ереван, 1998, с.223.

[30] Там же, с.228.

[31] **Тунян В**., Мифы младотуркизма о Геноциде армян (1915-1918 гг.).Историко-филологический журнал. 2015,N 2, с.–*http://hpj.asj-oaam./6114/1/7.pdf* с.7-19; 100-летие Геноцида армян:истоки, мифы и последствия.-Акунк. 2015, с.5,6.-*http://ijevan.ysu.am/wp-content /uploads/2011/08/collection-of-scientific articles-Akunq-2-12-2015.pdf*

[32] Степан Шаумян.-*http://www.peoples.ru/state/statesmen/shaumyan/*

[33] **Волонскиий М.,Муханов В**., По следам Азербайджанской демократической республики.М., 2007, с.78.

[34] Декрет о Турецкой Армении.-*http://www.hist.msu.ru/ER/Etext/DEKRET/17-12-29.ht*

ской Россией значительной территорий на востоке Анатолии в обмен на нейтралитет относительно сохранения Кавказа. Заняв Карсскую область турки ринулись на захват Закавказья. Лишь под давлением Германии в конце мая 1918 г. началось оформление национальных республик Грузии, Азербайджана и Армении[35].

Уделено внимание этническим процессам в регионе. Отрицается депортация армян 1915 г. как форма геноцида в Турции: "Османцы также создали всяческие условия при переселении армян, позаботились и том, чтобы в пути не погибли собаки и прочая живность переселенцев. Тем не менее, в процессе переселения определенная часть населения может погибнуть, и это естественно. Но чтобы специально убивать переселяемых армян-в истории Османского государства такого не было. Мы исследовали и привезли в Азербайджан документы из Дели, Парижа, Москвы, Стамбула, Анкары, Санкт-Петербурга, Берлина, Лондона, повествующие о событиях 1915 года. Однако в них нет никаких подтверждений о так называемом "геноциде армян".

Депортация как форма упразднения Армянского вопроса была обоснована еще в 1910 г. секретными постановлениями Салоникского конгресса партий "Иттихиад", которые были подтверждены осенью 1914 г. и в середине февраля 1915 г. В оригинале постановления Совета министров Османской Турции от 30 мая от 1915 г. говорится о цели депортации армянского населения - "уничтожить и окончательно решить это дело"[36]. К местам высылки в пустыни Месопотамии добирались преимушественно женщины, малолетние дети и старики, поскольку мужчин, как правило, в начале депортации убивали[37].

Что касается архивных данных в мусульманских и отдаленных странах, то следует учитывать их периферийность от армянской трагедии в Османской Турции, подверженность их младотурецкой пропаганде о мнимых армянских мятежах и восстаниях. Архивы современной Турции об Армянском вопросе и Геноциде армян подчищены и основной костяк данных хранятся в военном ведомстве. За мнением архивов западноевропейских стран стоило не ехать, поскольку сообщения их дипломатических служб в Константинополе, в том числе и Ватикана, опубликованы на разных языках[38].

Проведена параллель с переселением части азербайджанского населения из Советской Армении в Советский Азербайджан. Парадоксально, но проявляется незнание собственной истории. Речь о том, что Первый секретарь ЦК КП Азербайджана Мир Джафар Багиров, чтобы не допустить размещение представителей западных армян на территории автономного Нагорного Карабаха, в 1946-1947 гг. предложил руководителю СССР И. В. Сталину переселить азербайджанцев из Армении, а на их место жительство поселить армянских репатриантов. В результате из Арм. ССР было выселено около 38 тыс. азербайджанцев, которым были

---

[35] **Тарасов С.**, Загадка сталинского декрета о «Турецкой Армении": кто готовил план "Ширван".-*http://blognews.am/rus/news/345339*

[36] Սաֆրաստյան Ռ.,Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին (1915 թ. մայիսի), Հայագիտության հարցեր, 2115, N 1, Հավելված N 1,էջ 14,15.

[37] **Тунян В.Г.,** Младотурки: причины Геноцида армян и способ осуществления (1908-1915).-*http://genhist.asj-oa.am/179/1/29-40.pdf*

[38] **Тунян В.Г.,** Геноцида армян:истоки, мифы и последствия.-Акунк.2015,N 2 с.5,6.-*http://ijevan.ysu. am/wp-content/uploads/2011/08/collection-of-scientific articles.pdf*

предоставлены транспорт, льготы и привилегии. При этом часть из них затем вернулась в Советскую Армению[39].

Поднята тема значения Геноцида армян и наличие миллиона азербайджанских беженцев после Карабахской войны 1990-1994 гг. Первый подход характеризуется пропагандистской акцией: "Поднимая шум-гам вокруг вымышленного "геноцида", армяне хотят получить от Турции компенсацию. Если не будет поставлен заслон такой несправедливости, то в мире никогда не будет спокойствия, всегда будут конфликты".

Убийство более 1,5 млн армян в 1915-1923 гг. это, по словам Махмудова "шум-гам", а потеря 90% исторической родины армян просто безделица. В то время как судьба азербайджанских переселенцев в ходе карабахских событий представляется гран-диозным событиям: "Миллион наших беженцев, окупированные территории -вот что нас возмущает"[40].

Миллион беженцев это дезинформация агитпропа для европейских сирен. По переписи 1989 г. в Советской Армении проживало 84860 азербайджанцев.[41] В этом же году население НКАО составляло 189 тыс.: из них армян 145,5 тыс. (76,9%), а азербайджанцы 40,6 тыс.(21,5%). Понятие "оккупированные территории" очередное лукавство ученого мужа, так как имеет место не оккупация, а освобождение армянских территорий. До 1936 г. в Автономной области Нагорного Карабаха численность армян равнялась 95%, а азербайджанцев-3%[42]. В Арцахе представлено более 3 тыс. армянских памятников культуры, из которых-свыше 500 христианских церквей. Некоторые из них относятся к принятию христианства в IV в. Число исламских памятников составляет 2-3 десятка, а самый древний возведен в XVIII в[43].

Вместе с тем Ягубов позиционирует себя как борец против исторического понятия "Великая Армения". "Армяне, впавшие в смятение и обеспокоенные огромными успехами Азербайджана на международной арене, усилением нашего государства и возрождением тюркского мира в целом, еще более расширили пропаганду вымышленной "Великой Армении"[44].

Считая понятие "Великая Армения" "вымыслом", он в течение времени лишь занимался шлифовкой собственных воззрений, где ослушникам грозят карой. В 2005 г. вышла книга теоретика албанского происхождения азербайджанцев Ф. Мамедовой "Кавказская Албания" с картой "Албания и сопредельные страны во II-I вв. до.н.э.", содержащей изображение "Великой Армении" на территории современной Восточной Анатолии (Западная Армения).

Этим она опровергла постулат агитпропа об отсутствии "Великой Армении" I в. до н. э. (в частности при Арташесе I и Тигране II), что было воспринято болезненно в среде дворцо-вых историков[45]. Хотя существуют изображения карты "Ве-

---

[39] Сговор против азербайджанского народа (Москва-Иреван).-*http://max-park.com/community/2817/content/1316313*

[40] **Махмудов Я.**, Возникновение армянского государства.-*http://1905.az/ru/*

[41] Сколько азербайджанцев в Армении.-*http://www.armtoday.info/default.asp?Lang=Ru&NewsID=37209*

[42] **Мелик-Шахназарян А.**, Нагорный Карабах:факты против лжи.-*http://sumgait.info/caucasus-conflicts/.htm*

[43] Конфликт в Нагорном Карабахе.-*http://www.panarmenian.net/rus/details/209664/*

[44] **Махмудов Я.Г.** Самый опасный вымесел в истории.-*http://azertag.az/store/News/yaqub%20mahmudov-rus.htm*

[45] **Тунян В**. Г. Историческое пристрастие…, с.47-49, 53-55.

ликая Армения" (Armenia Maior) и "Малая Армения" (Armenia Minor), согласно "Третьей карты Азии" Клавдия Птолмея (83–161гг.)[46]. В адрес ослушницу агитпропа, мифотворчество которой оказалось попрано научной подготовкой, посыпались обвинения Махмудова в шпионской деятельности разных стран[47].

Агрессивность Махмудова определялась изданием в 2005 г. работы "Азербайджан: краткая история государственности", где он представляется носителем древних государственных начал: "Азербайджанцы в то же время являются одним из народов, обладающих (изображение Гемигая) древнейшими традициями государственности в мире"[48]. Критерием государствен-ности указываются наскальные изображения на горе Гемигая в Ордубадском районе Нахичеванского края. На них видны изображения из "людей, коз, оленей, быков, фантастических животных, леопардов, барсов, птиц", а также ритуалы.

Такой связистый подход к государственному управлению лишь свидетельствует лишь о деятельности скотоводческого населения, в то время как тюркские племена пребывали в Алтае. В то же время наскальные изображения горы Гемигая в Азербайджане используются для обоснования этнической связи происхождения с пророком Ноем". С названием горы у местных жителей связана легенда. Точнее миф о Ное. По преданию, Ной во время всемирного потопа, столкнулся с ней и дал ей название "Кемчи"[49].

Сказанное является лишь переложением известной легенды о Ное, который после всемирного потопа остановился в Нахичеване. Между тем лишь в армянском языке Нахичеван означает место остановки Ноя-"первое сошествие". Отец армянской истории Мовсес Хоренаци говорит о крепости Нахичевана еще в VI до н. э., входящей в царство Тиграна I Ервандуни. Нахичеванских край, находился на стыке армянских ашхаров Васпуракана, Айрарата и Сюника, входил в состав местных армянских царств[50].

Поражение в научной истине относительно сушествования "Великой Армении" не остудило пыл заслуженного деятеля адербайджанизма. Он стал прослеживать картографические издания и выяснил, что понятие "Великая Армения" представляет собой угрозу для тюркского мира. Об этом он сам поведал миру: "Горько признавать, что армянским националистам иногда удается достичь своих замыслов, как, например, в случае с недавно изданным атласом "Туран", совместно подготовленным учеными Казахстана и Москвы (Алматы - Москва, 2008). Этот атлас с родным для всех тюрок мира названием-Туран нанес крайне тяжелый и внезапный удар по истории Азербайджана-составной части тюркского мира. Другими словами, атлас "Туран"-не что иное, как немыслимый антинаучный, преднамеренный выпад против Азербайджана, да и всего Турана".

Сердечные струны ученого мужа оказались затронуты игнорированием сказительной истории Азербайджана: "В этом атласе наши казахские братья не "наш-

---

[46] **Даниелян Э. Л**. Историческая справедливость.-"21-й ВЕК", 2011, N 3, с. 92, 93.-*www.academia.edu/3778040*

[47] **Тунян В. Г.** Историческое пристрастие…, с.51, 52.

[48] **Махмудов Я**.Азербайджан:краткая история государственности. Баку,2005, с.5.-*http://elibrary.bsu.az/yenii%5Cebookspdf%5Ckratkaya istoriya.pdf*

[49] Наскальные рисунки Гемигая, Ордубад.-*http://www.advantour.com/rus/azerbaijan/ordubad/gemigaia.htm*

[50] Нахичеван.-*http://rupor.org/falsifikatsii/nahichevan.htm*

ли" места могущественным государствам Азербайджана, имеющего 5000-летнюю историю государственности и являющегося составной частью Турана". Хотя сам Маухмудов является специалистом государственности предков азербайджанцев-туркменских племена ак коюнлу и кара коюнлу[51].

Показ наличия "Великой Армении" в атласе сочтен ударом по пропагандируемой мифотворческой концепции древне-древней истории Закавказского Азербайджана, а с ним и Иранского Атрпатакана: "Тогда как карту вымышленной "Великой Армении", в большинстве случаев не имеющей никакого отношения к сути дела, многократно, к тому же самым грубым образом искажая историческую хронологию, с невероятной "щедростью" включили в атлас "Туран" и тем самым "подарили" армянам исторические азербайджанские земли".

Вследствие чего возник проект составление турецко-азербайджанской истории, подразумевающей совместное творчество как тюркских историков, так и ангажированных. Об этом сказано: "Для написания общей истории тюркоязычных народов в ближайшее время в Азербайджан будут приглашены ученые Казахстана, Туркменистана и Узбекистана, планируется пригласить ученых из Молдовы, Грузии, Дагестана".

Понятие "Великая Армения" представляется препятствием в на пути глобализации мира и решения Карабахской проблемы. Мотивацией аспекта указывается вымышленный армянский этнонационализм: "Армянские националисты, одержимые идеей создания "Великой Армении" и пытающиеся доказать вымысел об "армянском геноциде", стали серьезным препятствием на пути сближения различных народов и государств в современном мире глобализации". Обоснованием подхода указывается потребность следовать указаниям президента Азербайджана И. Алиева в вопросе Нагорного Карабаха и Г. Алиева о закрытие для армян тотального "пути террора и геноцида"[52].

Лейтмотивом своей деятельности Махмудов представляет служение азербайджанской истории: "Будущее поколение должно знать свою историю. Мы должны довести до сведения нашего общества всю нашу историю. Народ, который не знает свою историю, обречен на уничтожение"[53]. С этим нельзя не согласиться, но только на научной основе и не в сказительной форме. Нельзя историю кочевых племен представлять верхом цивилизационного совершенства, а историю армян воплощением их пути[54]. Молодой азербайджанский этнос в процессе становления.

Ключевые слова-Я.Махмудов, Армянское государство, история Армении, мифы, Армянский вопрос, сумбур, антиисторизм, психотропная война, сказительство, правящий режим.

[51] Азербайджан-большая фальсификация.-*http://panarmenian.net/news/rus/?nid=35223*

[52] Ягуб Махмудов.Самый опасный вымесел в истории.-*http://www.ksm.org.index.php?mtupe=news1&mid=876*

[53] Ягуб Махмудов: "Народ, который не знает свою историю, обречен на уничтожение".-*http://1news.az/society/20100108093404589. html*

[54] Ягуб Махмудов: "В Азербайджане армяне считаются пришлым этносом". *http://minval.az/news/37161*

Валери Тунян, “Исторический Сумбур” в армянском вопросе- Обращение Я. Махмудова к армянской проблематике не имеет ни научного обоснования, ни компетентности в поднимаемых вопросов, а представляет собой лишь выражение вульгарного мифотворчества. Отсюда выступления, заявления, статьи, публикации и труды носят сказительный и пропагандистский характер, направленные на обслуживание установок правящего режима в Азербайджане.

Վալերի Թունյան, “Պատմական խառնաշփոթ” Հայկական հարցում - Ադրբեջանի պատմության ինստիտուտի տնօրեն Յա. Մաղմուդովի, ղեկավարող հակահայկական պատմական տեղեկատվական քարոզը, անդրադարձը Հայկական հարցին չունի գիտական հիմնավորում: Մասնագիտական պատրաստակամության բացակայությունը առաջացնում է “պատմական խառնաշըփոթ” Հայկական հարցում, որը սնուցում է պաշտոնական և ոչ պաշտոնական գեղծարարությունը: Պատմատեղեկատվական պատերազմի նպատակն է խեղաթյուրել հայոց պատմությունը, իրականացնել պետական ռեժիմի պատվերը, բորբոքել ազգամիջյան հարաբերությունները:

V. G. Tunyan, «Historical disorder» on the Armenian Issue-The historical-informational campaign and the reverberation to the Armenian Issue held by the director of Azerbaijan State Institute Y. Maghmudov are deprived of any scientific corroboration. The absence of the scientific readiness causes «historical disorder» on the Armenian Issue which feeds official and non-official defalcations. The aim of the historical-informational war is to distort Armenian history, to perform the order of the ruling regime, to rouse the innernational relations

«ԴՐՕՇԱԿ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

1985-1990թթ. ժամանակաշրջանին բնորոշ հիմնական առանցքային միտումը հայ ազգային-ազատագրական շարժման վերելքն էր, որն անխուսափելի էր դարձնում ազգային կուսակցությունների ձևավորումը:

ՀՅԴ ձևավորման գործընթացը 1890թ. Հայկական կյանքում արձանագրված սկզբունքորեն նոր երևույթի՝արևմտահայերի ազատագրության համար սկիզբ առած համեմատաբար լայն քաղաքական շարժման ամենավառ արտահայտությունն էր և միաժամանակ նրա հիմնական հետևանքը: Այն իր բնույթով և էությամբ ազգային շարժում էր՝ իր կոնկրետ դրսևորմամբ՝ ազգի երիտասարդ, գիտակից և կրթված մասի համախմբում, որպես անմիջական նպատակ առաջադրում էր ազատագրական պայքարին ազգային ընդգրկում հաղորդելու խնդիր իր սոցիալական բովանդակությամբ՝աշխատավորական բնույթ ուներ, իսկ որպես վերջնանպատակ առաջ էր քաշում հայոց պետականության վերականգնման առաջադրանքը[1]:

1891թ. մայիսին Դաշնակցությունը թռուցիկ թերթերով հայտարարություն է տարածում՝ ըստ որի կուսակցությունը պետք է ունենա իր սեփական օրգանը «Դրօշակ» անունով: Գոյություն ունեցող մյուս օրգանները, որոնք նույնպես նվիրված են հայկական խնդրի լուծմանը, ըստ դաշնակցության, ամբողջապես չեն իրականացնում կանոնավոր պայքարի համալիր պայմանները:

Ըստ այդմ «Դրօշակը» հանդես է գալիս իբրև օրգան մի կազմակերպության, որն ունի որոշ միջոցներ իր նպատակին հասնելու համար: ՀՅԴ-ն իրեն չի համարում բացառապես դիվանագիտական ճանապարհով խնդիրների լուծման կողմնակից և ոչ էլ կողմնակից է Արևմտյան Եվրոպայում ընդունված հասարակության սոցիալական կազմակերպմանը, քանզի Տաճկա-Հայաստանը չունի խոշոր արդյունաբերություն և այստեղ գերակշռում են երկրագործությունը և նահապետական կուլտուրան: Այն առաջնային խնդիրն է համարում ամեն գնով նպաստել ժողովրդի բարօրության կայացմանը, վերածնել, քաղաքակրթել նրան և անխնա պայքար մղել թուրքի դեմ, քանզի նա երբևէ չի խնայել այս հինավուրց ժողովրդին:

Ահա սրանք էին այն առաջնահերթությունները, որ նպաստեցին «Դրօշակի» ասպարեզ իջնելուն:

Օսմանյան կայսրությունը գտնվում էր իր կառավարման մայրամուտի ճանապարհին, նրա անխուսափելի վախճանը պետք է լավ առիթ դառնար փոքր ազգերի համար թոթափելու թուրքական այդ տանջալի և օր-օրի ավելի ծանրացող լուծը:

Կ. Պոլսի պատրիարքի և եվրոպացի գիտնական միսսիոներների գրառումները տալիս են այդ պայմաններում ապրող հայ ժողովրդի վիճակի մասին իրական պատկերը:

Բեռլինի վեհաժողովին (1878թ.) ներկայացած հայկական պատվիրակությանը հաջողվեց հասնել նրան, որ Բեռլինի դաշնագրում հոդված մտցվեց, որը վերա-

[1] **Հրաչիկ Սիմոնյան** «Ազատագրական պայքարի ուղիներում» գիրք 2, Երևան 2003 թ. էջ 56:

բերվում էր հայ ազգին եվ նրա ծանր դրությանը. Դա դաշնագրի 61-րդ հոդվածն էր: Սրա շնորհիվ էր, որ Թուրքիան այսուհետ պարտավորվում էր քրիստոնյաբնակ նահանգներում մտցնել այն բոլոր բարենորոգումները, որոնք անհրաժեշտ էին քրիստոնյաբնակ ազգերի կյանքը և գույքը ապահովելու համար: Սակայն տարիներ շարունակ սուլթանական կառավարությունը մոռացության էր տալիս 61-րդ հոդվածը և չնայած Կ.Պոլսի հաջորդ պատրիարքների և Եվրոպական երկրների պահանջների, շարունակում էր պնդել, թե հայերը գոհ են իրենց վիճակից: Եվ ամեն ինչ արվում էր հայերի կյանքը դժոխքի վերածելու համար՝ ամենուր տեղի էին ունենում անհիմն խուզարկություններ, բանտարկություններ, գաղթ, աքսոր, շատ շրջաններում դժվարացնում էին հայերի հող գնելու իրավունքը, և հայը, որ դարերով ապրել էր այդ հողի վրա, ստիպված դիմում էր պանդխտության, և հետզհետե դատարկվում էր Հայաստանը, և այս պայմաններում հույսը դնել Բարձրագույն դռան՝ բարենորոգումներն ինքնակամ իրականացնելու, կամ եվրոպական դիվանագիտության վրա, ոչ թե սովորական այլ կործանիչ միամտություն էր, և հայ ժողովուրդը աչքի առաջ ունենալով մյուս փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը և նրանց արյան գնով ձեռք բերած ազատությունը, պետք է զենք բարձրացնի և պայքարի իր իրավունքների, հայրենիքի, ազատության համար: Եվ մեջբերվում էր Բիսմարկի խոսքերը Բուլղարիայի անկախացման կապակցությամբ, թե Եվրոպան պատրաստ չէ անգամ երկու զինվորի արյուն թափել:

«Դրոշակն» իր առաջին համարում բավականին ծավալուն անդրադարձ է կատարում Բեռլինի վեհաժողովին պատվիրակություն ուղարկած Ներսես պատրիարքի քաղաքական գործունեությանը, համարելով նրան հեռատես քաղաքական քայլ կատարած գործիչ, ով եվրոպական քաղաքական շրջանակներում ներկայացրեց Թուրքա-Հայաստանում ապրող հայ մարդու իրական դրությունը, որն ամեն կերպ փորձում էր կոծկել Բարձրագույն դուռը: Եվ ինչպես գրում է «Դրոշակը» այդ օրվանից հայոց խնդիրը դառնում է եվրոպական դիվանագիտության և միջազգային իրավունքի խնդիր[2]: Ներսես պատրիարքը իր պատգամավորների միջոցով Բեռլինի վեհաժողովին ներկայացնում է մի տեղեկագիր, որտեղ առավել մանրամասն բացատրում է այն բարևենորոգումները, որոնք անհրաժեշտ են հայաբնակ նահանգներում:

Եվ «Դրոշակն» իր առաջին իսկ համարում մեջբերում է Ներսես պատրիարքի սույն տեղեկագիրն ամբողջությամբ՝ «Տաճկա-Հայաստանի ինքնավարության Ներսես պատրիարքի նախագիծը» վերնագրով: Տեղեկագում ասվում է, որ Ա. Տաճկա-Հայաստանն իր մեջ պարունակում է Էրզրումի և Վանի վիլայեթները, որոնց մեջ մտնում են Մուշի և Բաղեշի սանջակները, Դիարբեքիրի վիլայեթը այսինքն Խարբերդի սանջակի արևելյան մասը, որոնք կազմում են Մեծ Հայաստանի Տաճկական մասը, և բացի դրանից առևտրական հարաբերությունները թեթևացնելու համար Ռիզե նավահանգիտը, որը Տրապիզոնի և Բաթումի մեջտեղում էր: Հայաստանը պետք է կառավարվեր գեներալ-նահանգապետի կողմից, որը պիտի նշանակվեր Բարձրագույն դռնից մեծ տերությունների համաձայնությամբ: Նա իր նստավայրը կունենար Էրզրումում: Ընդհանուր նահանգապետն ունենալու էր գործադիր իշխանության բոլոր իրավունքները և նա հսկողություն պիտի սահմաներ ամբողջ երկրի կարգի և հասարակական ապահո-

[2] Դրօշակ, N1 1891, մայիս էջ 2:

վության պահպանման վրա, ստանար հարկերը և իր պատասխանատվությամբ պիտի նշանակվեին վարչական պաշտոնյաները: Նա էր նշանակելու դատավորներին, պիտի հրավիրի իր նախագահության տակ Ընդհանուր խորհուրդ, և պիտի հսկողություն սահմանի երկրի բոլոր վարչական գործերի վրա: Նշանակվելով իր պաշտոնում 5 տարով ընդհանուր նահանգապետը կարող է պաշտոնանկ լինել Բարձր դռնից և միայն մեծ պետությունների համաձայնությամբ: Լինելու է կենտրոնական վարչության խորհուրդ ընդհանուր նահանգապետի նախագահությամբ, որի անդամները լինելու էին 1. Ֆինանսների կառավարիչը, 2. Հասարակական շինությունների կառավարիչը, 3. Իրավագետ խորհրդականը, 4. Հասարակական զորքի հրամանատարը, 5. Հայոց դպրոցների տեսուչը, 6. Մահմեդական դպրոցների տեսուչը: Երկիրը պետք է բաժանվի սանջակների, իսկ վերջիններս ղեզեների, որոնց կառավարիչը կնշանակվի ընդհանուր նահանգապետի կողմից: Նրանց օգնելու համար նա նշանակում է 2 խորհրդական: Բ. Քանի որ կարգի և հասարակական ապահովության պահպանությունը հանձնված է երկրի տեղական կառավարությանը, ուստի երկրի ընդհանուր մուտքի միայն 20 տոկոսը կուղարկվի ֆինանսների նախարարություն, որոշելով նախապես ինչ ծախսեր են հարկավոր ոստիկանության և միլիցիայի պահանջների համար: գումարը բաշխվելու էր հետևյալ կերպ՝ ա) 80 տոկոսը հատկացվում է ճանապարհների, հաղորդակցության, բ) 20 տոկոսը ուսումնարաններ հիմնելուն և պահելուն , մնացածը կբաժանվի մահմեդական և քրիստոնյա դպրոցներին, ըստ նրանց թվի: Գ) լինելու է մահմեդական դատարանների մի գլխավոր պետ, որը նշանակվելու է սուլթանի կողմից և հսկողություն է սահմանելու երկրում գործող բոլոր Շերի դատարանների նկատմամբ: Շերի դատարանները քննելու են միայն մահմեդականների միջև վեճերը, իսկ մնացած քաղաքացիական, քրեական, առևտրային վեճերը քրիստոնյաների, քրիստոնյաների և մահմեդականների միջև կքննվեն սովորական դատարաններում, որոնք կազմված կլինեն ամեն մեկը 3 դատավորներից: Առանձին կանոնադրություններով որոշվելու են Շերի դատարանների, սովորական դատարանների և հաշտարար դատարանների թիվը և իրավունքների սահմանը: Դ) լինելու է դավանանքի կատարյալ ազատություն: Յուրաքանչյուր համայնքի պարտականության մեջ է մտնում հոգևորականներին և կրոնական հիմնարկություններին պահելը: Ե) երկրի ապահովությունը պահպանվում է 1) ժանդարմերիայով (ոստիկանություն) և 2) տեղական միլիցիայով (զորք): միլիցիայի կազմից բացառվում են քրդերը, չերքեզները և այլ վայրենի ցեղերը, այն կազմված է լինելու 1. Հայերից և ոչ հայ տարրից, որն ավելի քան 5 տարի բնակություն է հաստատել այդ երկրում: Ժանդարմերիան պահպանում է կարգն ու ապահովությունը երկրի ամբողջ տարածության վրա: Ժանդարմերիայի պետին նշանակում է ընդհանուր նահանգապետը, որին էլ նա հպատակվում է: Միլիցիան գտնվում է զորքերի ընդհանուր հրամանատարի իշխանության տակ և անհրաժեշտության դեպքում պարտավոր է օգնել ժանդարմերիային: Զ) Յուրաքանչյուր զիզե կողարկի 2 պատգամավոր՝ մեկը հայ, մյուսը՝ մահմեդական, որոնք պիտի ընտրվեն հայ և մահմեդական ազգաբնակչությունից: Այս պատգամորները հավաքվելով սանջակի գլխավոր քաղաքում, միասին պիտի ընտրեն 2 խորհրդական սանջակի կողմից մեկը՝ քրիստոնյա, մյուսը՝մահմեդական: Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն երկրի բոլոր բնակիչները սկսած 25 տարեկանից, ովքեր ունեն սեփականություն կամ վճարում են որևէ ուղղակի հարկ, 2 տարբեր դավանանքի հոգևորականներն ու

պաշտոնյաները, ուսումնարանների ուսուցիչներն ու դաստիարակները: Ընդհանուր ժողովը տարին մեկ անգամ երկրի գլխավոր քաղաքում հրավիրում է ժողով, որպեսզի քննի և վերահսկի երկրի ելքերն ու մուտքերը և հարկերի բաժանումը: Ընդհանուր նահանգապետը պարտավոր է այս խորհրդին ներկայացնել տարեկան ելքերի և մուտքերի հաշիվը: Ընդհանուր նահանգապետը և ընդհանուր խորհուրդը փոխադարձ համաձայնությամբ պիտի որոշեն 5 տարին մեկ անգամ Բարձրագույն դռանը հատկացվող գումարի չափը՝ վերը նշված կետերի համաձայն: Է) Մեծ պետությունները 1 տարով պիտի նշանակեն միջազգային մասնաժողով այս ծրագրի իրագործումը վերահսկելու համար, որ պիտի գործադրվի 3 ամսվա ընթացքում, սկսած այս արձանագրության ստորագումից[3]: Սրանք Ներսես պատրիարքի տեղեկագրի անկյունաքարային դրույթներն էին:

«Դրօշակ»-ում առանձնացված էին արտաքին և ներքին տեսության բաժիններ: Առաջինի նպատակն էր ընթերցողին պարբերաբար ծանոթացնել եվրոպական հասարակական կարծիքին և դիվանագիտական տրամաբանությանը տաճկահայերի դրության վերաբերյալ, այդ նպատակի համար օգտագործելով թե պաշտոնական հրատարակությունները, ինչպիսիք են Անգլիական Կապույտ գիրքը, եվրոպական լրագրերն ու նոր լույս տեսած գրքերը, և թե մասնավոր տեղեկությունները: Ընդհանրապես խոսելով եվրոպական հասարակական կարծիքի մասին հայկական հարցի վերաբերյալ, «Դրօշակը» մեծագույն համոզմունք է հայտնում, որ Եվրոպան գնալով ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձնում այս հարցին[4]: Նշվում է թե անգամ պահպանողական լրագրերի թուրքամոլ թղթակիցները սկսում են խոստովանել թուրքա-հայերի դրության թշվառ կողմերը և այս գիծը, պարլամենտում արած իր հայտարարությամբ, շարունակեց Անգլիայի Արտաքին գործերի նախարար Ֆերգյուսոնը: Անգլիական պահպանողական գլխավոր օրգաններից մեկի թղթակիցը գտնվելով Էրզրումում ներկայացնում է այնտեղ տեղի ունեցող անիրավությունները, գալիս է այն եզրակացության, որ սուլթանի հպատակների կրած բոլոր անարդարությունները պետք է վերագրել ներկա վարչական սիստեմին: Պաշտոնական աղբյուրներից մատնանշվում է Անգլիական Կապույտ գիրքը, որտեղ անգլիական կառավարության պաշտոնակատար գործակալներն իրենց բոլոր հեռագրերի և տեղեկությունների մեջ կրկնում են այն ամենը, ինչը որ այդքան եռանդով միշտ աշխատել են հերքել նույն կառավարության ԱԳՆ Ֆերգյուսոնը: Այս գրքույկի մեջ Վանի փոխհյուպատոս Դեվին մանրամասն պատմում է Վարդենիսի կոտորածի և ուրիշ շատ նման դեպքերի մասին: Էրզրումի նախկին հյուպատոս Կլիֆֆորդ Լլոյդը ՈՒայթին է ուղարկում իր մանրամասն զեկույցը, որը մեծ ուշադրության է արժանանում թե անգլիական բանակում, և թե եվրոպական լրագրերի էջերում: Այստեղ նա հայտնում է, որ թուրքա-հայերի դրության վերաբերյալ կան 3 անվիճելի կետեր, որոնց անհրաժեշտ է անհապաղ լուծում տալ: Դրանք են՝ 1) քրդերի մշտական հարձակումների հետևանքով կյանքի և սեփականության նկատմամբ անապահովությունը: 2) Անձնական անապահովությունը և խոսքի, գործի ազատության լիակատար բացակայությունը և 3) Կառավարության աչքում քրիստոնյաների անհավասարությունը մահմեդականների հետ համեմատած: Նա խոստովանում է, որ հայ գյուղացին հիմա անկարող է հարկեր վճարել և ստիպված

[3] Ներսես պատրիարք «Տաճկա-Հայաստանի ազատագրման ծրագիր». 1878թ.

[4] «Դրօշակ» N1 1891 մայիս էջ 3

երբեմն թողնում է իր տունը և գաղթում, մինչև անգամ մտածում է կրոնափոխության մասին[5]: Սա պահպանողականների կառավարության ներկայացուցիչների վերաբերմունքն էր Անգլիայում, իսկ թե ինչպիսի համակրանքով են հայկական հարցին վերաբերվում ազատամիտ կուսակցությունները՝ դա բոլորին է հայտնի, գրում է «Դրօշակը»: Ինչ վերաբերվում է այլ պետությունների, այստեղ ևս դեռևս շատ դանդաղ քայլերով, սակայն որոշակի առաջընթաց նկատվում է: Մեջբերվում է նաև Լոզանում լույս տեսած Ռոզենբուրգի «Ընդհանուր զինաթափություն և Թուրքիայի բաժանում» վերնագրով մի բրոշյուր, որտեղ հեղինակը խոսելով Եվրոպայում տիրող համընդհանուր միլիտարիզմի և նրա կործանաբար հետևանքների մասին, գալիս է այն եզրակացության, որ այդ բոլոր պատերազմական պատրաստությունների և եվրոպական սպառնալիքի գլխավոր պատճառը Արևելյան հարցն է, նրան ստորադասելով անգամ Էլզաս-Լոթարինգիայի հարցը: Որևէ կերպ Արևելյան հարցին լուծում տալով, Եվրոպան միևնույն ժամանակ կլուծի ընդհանուր զինաթափության հարցը և կազատի ինքն իրեն մշտական պատերազմի սպառնալիքից: Հեղինակն աշխատում է ապացուցել, որ Արևելյան հարցի լուծման միակ ճանապարհը Թուրքիայի բաժանումն է, քանզի այն ապացուցել է իր անկարողությունը առաջադիմելու և նույնիսկ իր գոյությունը պահպանելու: Ըստ հեղինակի Թուրքիան վաղուց արդեն գոյություն չէր ունենա, եթե միայն եվրոպական մի քանի պետությունների մեջ տարածված չլիներ այն թյուր կարծիքը, որ դեռ 1767թ. արտասանեց ՈՒիլյամ Պիտը, այն է, թե «Թուրքական պետության գոյությունը անհրաժեշտ է եվրոպական հավասարակշռության համար»: Նա փորձում է ապացուցել այս կարծիքի սխալ լինելը և ցույց է տալիս այն օգուտները, որ Եվրոպան կունենա եթե Թուրքիան բոլորովին հեռացվի թե իրենից, թե Թուրքա-Հայաստանից և բաժանի այս երկիրը իր հպատակ այն քրիստոնյա ազգերի միջև, որոնց էլ մի ժամանակ պատկանել են այդ հողերը: «Ժամանակն է, որ լուսավոր աշխարհը ջնջի Եվրոպայի երեսից այս ամոթը և մեկընդմիշտ կտրի այդ գորդիան հանգույցը: Ժամանակն է հանել Եվրոպայի սրտից այս «յաթաղանը», որ մուտք է գործել այնտեղ բարբարոսության դարերում»,-մեջբերվում է Գլադստոնի խոսքերը:

Այսպիսով Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը իր գաղափարաքաղաքական զինանոցի մեջ խտացնելով ու ամփոփելով ազգային ազատագրական շարժման հավաքական նպատակները և համախմբելով նրանց իրականացման համար պայքարող երիտասարդությանը, դարձավ վերելք ապրող հայ ազատամարտի ուժերի և հնարավորությունների կենտրոնացման առանցք[6]: Այդ պատճառով, թեև 1890-ական թթ. սկզբին ազգային կուսակցություններն իրենք չկարողացան միավորել սեփական ջանքերն ու հնարավորությունները, բայց վերելք ապրող հայ ազատամարտն ինքը գտավ օբյեկտիվորեն հասունացած այդ պահանջմունքի իրականացման եղանակը: Կենսունակության քննությանը չդիմացած ուժերի՝ Հնչակյան կուսակցության պառակտումը, և արմենականների ուժականության կտրուկ անկումը նույն՝ 1896թ. օբյեկտիվորեն, առանձին կուսակցությունների ու նրանց ղեկավարների սուբյեկտիվ ցանկությունից անկախ լուծեց ՀՅԴ-ի շուրջ հայ ազատամարտի ուժերի և հնարավորությունների կենտ-

[5] Կլիֆորդ Լլոիդի զեկուցագիր ուղղված ՈՒայթին 1885թ,

[6] **Հրաչ Տասնապետեան** Հ.Յ.Դաշնակցութիիւնը իր կազմութենէն մինչև ժ, ընդհ. ժողով (1890-1924), 1988թ, էջ 47

րոնացման խնդիրը՝ դրանով իսկ ավարտելով հայ ազգային ազատագրական շարժումը ղեկավարող քաղաքական առանցքի ձևավորումը:

Բանալի բառեր-Հայ Հեղափոխական Դաշնակցություն, ազգային-ազատագրական պայքար, Բարձրագույն Դուռ, Տաճկա-Հայաստան, «Դրոշակ» պարբերական, Եվրոպական Մեծ պետություններ:

Կարինե Հովսեփյան, «Դրոշակ» պարբերականի առաջին տեսական ընդհանրացումներն Արևմտյան Հայաստանի կացության և ազատագրության ուղիների մասին-Հոդվածում ուսումնասիրված է 19-րդ դարավերջին, 20-րդ դարասկզբին օսմանյան ծանր լուծի դեմ մղվող արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարական կենտրոնի ձևավորումը և հավաքական նպատակների արտացոլումը Հայ Հեղափոխական Դաշնակցության օրգան «Դրոշակ» պարբերականում: Մատնանշվում են այն միջոցներն ու ուղիները, որոնց գործադրմամբ իրականություն պիտի դառնար հայ ազատագրական պայքարի վերջնանպատակը. Այն է Արևմտյան Հայաստանը ազատագրված տեսնելու տեսլականը:

Карине Овсепян, Первые теоретические обобщения журнала “дрошак”, касающихся положения Западной Армении и путей ее осжобождения-В данной статье изучена заподно-армянская народно-освободительная борьба против османского ига в конце 19-ого в начале 20-ого века, сформирование его идеологичецкого центра и отражение всеобщих целей в “Дрошаке” являюшимся главным органом партии Дашнакцутюн. Отмечаються те пути и способи с приложением которых конечная цель заподно-армянской освободительной борьби стаоо бы реалностю.

Karine Hovsepyan, Droshak Press - first theoretical periodic generalization about Western Armenian residency emancipation-This article explores the 19s and 20s centuries Osmans hard oxbow against Western-Armenian revolution coalition Dashnakcutyun parts in Droshak press! Mentioned those resources and ways, from which exertionmust be created the end of a Armenian liberating struggle! That is to see liberalization of Western Armenia!

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՄԿԶԲԻՆ

ԳԵՎՈՐԳ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Օսմանյան կայսրության և Կայսերական Գերմանիայի միջև քաղաքական, տնտեսական և ռազմական համագործակցությունը սկսեց ակտիվանալ 19-րդ դարի երկրորդ կեսերից և հատկապես ընդգծվեց 20-րդ դարի սկզբին: Գերմանաթուրքական ռազմավարական հարաբերությունների վկայությունն էր 1913 թվականի մայիսի 22-ին երիտթուրքական կառավարության պաշտոնական հրավերով Կ.Պոլիս ժամանած գերմանական նոր զինվորական առաքելությունը Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ[1]:

Կայսերական Գերմանիան Արևելքում Թուրքիային դիտարկում էր որպես դաշնակից պետություն և դրանով էին պայմանավորված այն մեծ ներդրումները, որ իրականացրեց գերմանական կառավարությունը թուրքական տնտեսությունում: Այդ տեսակետից Գերմանիայի համար մեծ տնտեսական և քաղաքական հետաքրքրություն էր ներկայացնում Բեռլին-Բաղդադ երկաթուղու շինարարությունը, որը հնարավորություն կտար մեծացնել գերմանական ազդեցությունը ողջ Մերձավոր Արևելքում: Բաղդադի երկաթուղագծի կառուցման հավաստագիրը Գերմանիան ստացավ 1899 թվականին, իսկ կառուցումը սկսվեց 1903 թվականից[2]: Սակայն գերմանացիները ցանկանում էին Բաղդադի երկաթուղու հիման վրա երկաթուղագծեր կառուցել նաև Արևմտյան Հայաստանում ինչը, բնականաբար, հանդիպելու էր Ցարական Ռուսաստանի դիմադրությանը: Վերջինս Թուրքիայի հետ ուներ համաձայնագիր, ըստ որի՝ առանց իր համաձայնության չէր կարող որևէ երկաթուղագիծ կառուցվել Արևմտյան Հայաստանում[3]: Արևմտյան Հայաստանում երկաթգծի կառուցումը հնարավորություն կտար գերմանական տնտեսության համար ձեռք բերել էժան աշխատուժի վրա հիմնված բնական մեծ պաշարներ, որոնք մեծապես կնպաստեին գերմանական հանքարդյունաբերության զարգացմանը: Հետևաբար նման երկաթուղիների կառուցմամբ Գերմանիան ոչ միայն ձգտում էր լուծել տնտեսական, այլ նաև քաղաքական և ռազմական կարևոր խնդիրներ, քանի որ այն կնպաստեր տնտեսական կապերի ամրապնդմանը Թուրքիայի կենտրոնական և արևելյան հեռավոր շրջանների միջև՝ թուլացնելով Ռուսաստանի ազդեցությունը արևմտահայության նկատմամբ:

Մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը գերմանական իշանությունների վերաբերմունքը արևմտահայության նկատմամբ բավականին մեղմ էր, իսկ առանձին դեպքերում անգամ բարեկամական, քանի որ վերջիններս երիտթուրքերի իշխանության գալու սկզբնական շրջանում լիովին համոզված չէին նրանց գերմանամետ լինելու մեջ: Հետևաբար գերմանական կողմը երբեմն արևմտահայությանը փորձում էր դիտարկել որպես հնարավոր գործընկեր Օսմանյան կայսրության փլուզման պարագայում: Այդ մասին է վկայում դեռևս 1913 թվա-

[1] Տե՛ս **Фирбюхер Генрих**, Армения 1915, Уничтожение Турцией культурного народа, (ответственный редактор и автор передисловия Вардгес Микаелян), Ереван, 1991,с. 62 :

[2] Տե՛ս **Ջ. Կիրակոսյան**, նշվ. աշխ., Երևան, էջ 127:

[3] Տե՛ս **Իշխանյան Բ.,** Գերմանիայի և Թուրքիայի տնտեսական-քաղաքական փոխհարաբերությունները, Թիֆլիս, 1915, էջ 26:

կանի սկզբին Կ.Պոլսում գերմանական դեսպան Մանդելշտամի զեկուցագիրը, որում ասվում էր. «Եթե հետագայում պարզվի, որ Թուրքիայի փլուզման գործընթացը այլևս հնարավոր չի լինի դադարեցնել, մեզ համար մեծ արժեք կունենա Փոքր Ասիայում մեր իրավունքների իրականացման պարագայում մեր մեջքին ունենալ հայկական տարրը»[4]: Սա նշանակում է, որ մինչև Առաջին աշխարհամարտը Կայսերական Գերմանիան մեծապես կարևորում էր հայկական գործոնը և այն դիտարկում էր ոչ թե խոչընդոտ գերմանական շահերի ընդլայնման ճանապարհին, այլ, ընդհակառակը:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում գերմանացի դիվանագետները հայկական տարրի պահպանումը չէին համարում գերմանական շահերին խոչընդոտող գործոն, մինչդեռ շատ հեղինակներ փորձել են հաստատել ճիշտ հակառակը՝հիմք ընդունելով գերմանացի հայտնի քաղաքագետ Ռորբախի հետևյալ արտահայտությունը. «…Եթե Թուրքիային հաջողվեր իր մահմեդական բնակչությանը տեղաշարժել դեպի հյուսիս և սահմանակից դարձնել Ռուսաստանի հետ, ապա կձևավորվեր 14-15 միլիոնանոց բնակավայր, որը դիմադրող ահռելի ուժ կդառնար: Եվ քանի որ հայերը խոչընդոտում էին այդ ծրագրի իրագործմանը, ապա պետք էր վտարել այդ երկրամասի բնիկ, տեղացի բնակիչներին՝հայերին»[5]: Անշուշտ, այստեղից չի հետևում, թե նրանք ինչպիսի դիրքորոշում կդրսևորեին Հայկական հարցում՝Թուրքիայի ամբողջականության պահպանմանը միտված իրենց քաղաքականության դեպքում:

Բանն այն է, որ գերմանական դիվանագետներին առաջին հերթին հետաքրքրում էր Հայկական հարցում ռուսական նախաձեռնությունների տապալումը, որը դրսևորվեց նաև 1913թ. հունիսի 8-ին, երբ Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսը դեսպանների կոնֆերանսին ներկայացրեց Հայկական բարեփոխումների իրականացման ռուսական առաջարկը, որը հեղինակի՝ դեսպանատան ռուսական թարգմանչի անունով կոչվեց Մանդելշտամի նախագիծ[6], որով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի, միավորումը մեկ հայկական նահանգի կազմում: Այն պետք է ղեկավարեր քրիստոնյա գեներալ-նահանգապետը: Թե՛ թուրքերը և թե՛ նրանց սատարող գերմանացիներն, զգալով, որ այդ ծրագրով ռուս-թուրքական սահմանագծի վրա ստեղծվող և գրեթե ինքնավար կարգավիճակ ունեցող Հայկական նահանգը կարող է տապանաքար դառնալ պանթուրքական ծրագրերի համար, անմիջապես ձեռնամուխ եղան դրա տապալման գործին: Ընդ որում գերմանացի դիվանագետներն այս նախագծի տապալումը կարևորում էին ոչ թե այն պատճառով, որ նրանք կտրականապես դեմ էին հայկական վիլայեթներում բարենորոգումների անցկացմանը, այլ, որ նման առաջարկով հանդես էր գալիս հենց Ռուսաստանը:

Հատկանշական է, որ կտրականապես դեմ լինելով բարենորոգումների ռուսական ծրագրին, այնուամենայնիվ գերմանացիները նույնպես շահագրգռված էին հայկական նահանգներում ոչ նշանակալի փոփոխություններ իրականացնելուն: Ուստի նրանք փորձում էին համոզել թուրքերին, որ վերջիններս իրակա-

[4] **Նորբերտ Զաուպ,** Գերմանական կայսրությունը և Հյակական հարցը (1878-1914), Երևան, 2008, էջ 201:

[5] Պ. Ռորբախի այդ հայտարարությունը հրապարակվել է ֆրանսիական «Temps» ազդեցիկ թերթում, որտեղից այն 1916թ. ապրիլի 15-ին արտատպվել է «Կովկասի խոսք թերթը (№ 84, էջ 3):

[6] Տե ս **Նորբերտ Զաուպ,** նշվ. աշխ էջ 203:

նացնեն որոշ բարեփոխումներ՝ քաջ գիտակցելով, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու ռուսական կողմի պահանջի լիակատար տապալումը ավելի կխորացնի հայության շրջանում հակագերմանական տրամադրությունները, կարագացնի Թուրքիայի մասնատումը և իրենց կզրկի դեպքերի զարգացման վրա ազդելու հնարավորությունից: Այդ է պատճառը, ինչպես իրավացիորեն նշել է Ա. Մանդելշտամը, որ հայկական հարցի առթիվ Գերմանիան սկսեց բանակցել ռուսների հետ. «երկու նպատակով. նախ, որպեսզի հարմար ժամանակին հիշեցնի Դռանը, որ շնորհիվ իր միջամտության նա զսպեց Ռուսաստանին պահանջելու լայն բարենորոգումներ: Երկրորդ, որ իր կողմը գրավի հայերի ուշադրությունը…»[7]: Նման քաղաքականությամբ գերմանացիները, փաստորեն, մի կողմից փորձում էին պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, բայց և ոչ էական բարեփոխումներով իրենց կողմը գրավել հայությանը, իսկ մյուս կողմից՝ մեծ տերություններին հասկացնել, որ Արևմտյան Հայաստանը ևս գտնվում է Կայսերական Գերմանիայի շահերի ոլորտում և Հայկական հարցի լուծման գործում պետք է հաշվի առնվեն նաև նրա շահերը, հակառակ պարագայում հարցի կարգավորմանն ուղղված գործընթացը կտապալվի: Այդ միտումը ակնհայտորեն դրսևորվեց թե՛ 1913թ. հուլիսի Յենիկքոյի կոնֆերանսում և թե՛ հուլիսի 23-ին, երբ Եռյակ դաշինքի տերությունները հանդես եկան բարենորոգումների թուրքական ծրագրի պաշտպանությամբ արդյունքը եղավ այն, որ բանակցությունները մտան փակուղի: Ի վերջո, 1913թ. Սեպտեմբերին Վանգենհայմը, Գիրսը և եվրոպական տերությունների մյուս ներկայացուցիչները կայացրին փոխզիջումային որոշում, որը ամրագրվեց 1914թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) կնքված ռուս-թուրքական համաձայնագրով: Այն ստորագրեցին Թուրքիայում ռուսական գործերի հավատարմատար Գուլկևիչը և Թուրքիայի մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան: Այդ համաձայնագրով Արևմտյան Հայաստանը բաժանվել էր երկու նահանգի, որոնցից առաջինի մեջ ընդգրկվելու էին Էրզրումի, Տրապիզոնի, Սվազի, իսկ երկրորդի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգները: Գերմանացիները հայության շրջանում իրենց ազդեցությունը մեծացնելու նպատակով այս համաձայնագրի կնքումը փորձում էին ներկայացնել որպես Գերմանիայի բարյացակամ դիրքորոշման արդյունք: Այդ է վկայում 1914թ. փետրվարի 16-ին Էրզրումի գերմանական հյուպատոս Անդերսի գրած նամակը ՝ Կ.Պոլսի գերմանական դեսպանության խորհրդական պարոն ֆոն Մութիասին, որում ասվում է. «Այսօր ինձ այցելեց այստեղի հայ եպիսկոպոս Բեաղեթյանը, իր համայնքի անունից շնորհակալություն հայտնեց բարենորոգումների ծրագրի ընդունման կապակցությամբ, կայսերական կառավարության կողմից բարենորոգման նախագծի համառ պաշտպանության համար, որի շնորհիվ հիմնականում իրագործվեց այդքան երկար սպասված բարենորոգման գործը»[8]: Այսպիսով, գերմանական դիվանագիտական շրջանակների համաձայնության շնորհիվ ի վերջո հաջողվեց ստիպել թուրքական կառավարությանը բարենորոգումների հարցում գնալ որոշ

[7] Մանդելշտամ Ա., Երիտասարդ թուրքերի պետությունը. Պատմա-քաղաքական ակնարկ, Ս. Էջմիածին, 1916, էջ 63:

[8] Լեփսիուս Յ., Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր I, Եր., 2006, էջ 100:

զիջումների, որոնք, սակայն, համաշխարհային պատերազմի պատճառով մնացին չիրականացված:

Հայկական բարենորոգումների շուրջ բանակցություններն ընթանում էին միջազգային լարված իրադրության պայմաններում, քանի որ 1913 թ. հունիսի 30-ին սկսվել էր Բալկանյան երկրորդ պատերազմը՝ Բուլղարիայի, նրա նախկին դաշնակիցներ Սերբիայի, Հունաստանի և Չեռնոգորիայի միջև[9]: Սա թուրքերի համար հարմար առիթ էր, որպեսզի փորձեն վերադարձնել Բալկանյան առաջին պատերազմի տարիներին կորցրած ավելի քան 185 հազար քառ. կիլոմետր տարածքը[10]: Իսկ դա նշանակում էր, որ հայկական բարենորոգումների հարցը նորից մղվելու էր հետին պլան և մեծ տերությունների ուշադրությունը կրկին սևեռվելու էր Բալկանյան խնդրի վրա: Դեռևս 1912թ. հոկտեմբերի 1-ին սկսված Բալկանյան առաջին պատերազմի հետևանքով օսմանյան Թուրքիան Եվրոպայում կորցրել էր իր նվաճած բոլոր տարածքները, բացի Արևելյան Թրակիայից[11]: Բալկանյան երկրորդ պատերազմում նույնպես Օսմանյան կայսրությունը ծանր պարտություն կրեց՝ կորցնելով իր տարածքի մեկ երրորդը[12]: Փաստորեն դա պարտություն էր նաև Կայսերական Գերմանիայի բալկանյան քաղաքականության համար: Եվ բնավ պատահական չէ, որ Օտտո Բաուերը, որն ավստրիական սոցիալ-դեմոկրատների հայտնի տեսաբաններից է, այդ կապակցությամբ պարզ ու որոշակի գրել է, որ. «…Մակեդոնիայի և Թրակիայի ճակատամարտերում Թուրքիայի հետ միասին պարտվել է նաև գերմանական իմպերիալիզմը»[13]: Այնուհանդերձ Բալկանյան պատերազմում թուրքական բանակի կրած ծանր պարտությունը արևմտահայության համար ունցավ բացասական հետևանքներ, քանի որ իր քաղաքական օրակարգից հանելով բալկանյան խնդիրը՝Թուրքիան սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել կայսրության արևելյան շրջաններին՝բացառելու բալկանյան երկրների օրինակով այդ տարածքների անջատումը կայսրությունից:

Բալկանյան պատերազմներում Թուրքիան ոչ միայն կորցրեց Եվրոպայում նվաճած իր տարածքները, այլև կանգնեց ամբողջ կայսրության մասնատման վտանգի առջև, ինչը չէր համապատասխանում նաև Գերմանիայի շահերին: Այդ է պատճառը, որ Բալկանյան պատերազմներից հետո զգալիորեն մեծացավ Գերմանիայի ռազմական աջակցությունը Թուրքիային: Օսմանյան կայսրությունում գտնվող գերմանացի զինվորականները ձգտում էին թուրքական բանակի մարտունակությունը բարձրացնել այն աստիճանի, որ պատերազմի դեպքում ևս կարողանա լուրջ խնդիրներ առաջացնել ռուսական կովկասյան զորքերի համար: Ուշագրավ է, որ եթե Կ.Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը, որ քաջատեղյակ էր Թուրքիայի ներքին խնդիրներին և բանակի մարտունակությանը, 1914 հուլիսի 18-ին Բեռլին ուղարկած զեկուցագրում ասում էր, թե. «Թուրքիան այսօր դեռ, անկասկած, լրիվ անընդունակ է դաշինքի: Նա իր դաշնակիցների համար

[9] Տե՛ս **Ադամյան Ռ.,** Ռուսաստանի և Գերմանիայի քաղաքականությունը Արևմտահայաստանի բարենորոգումների հարցում (1912-1914թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, №10, էջ 22 :

[10] Տե՛ս **Ջ. Կիրակոսյան,** նշվ. աշխ., էջ 99:

[11] Տե՛ս Վիլհելմ Բաում, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Եր., 2010, էջ 70:

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 70:

[13] **Իշխանյան Բ.,** նշվ. աշխ., էջ 53:

միայն բեռ է դառնալու՝ առանց նվազագույն առավելություններ տալու», ապա թուրքերն, ընդհակառակը, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչների մոտ փորձում էին ստեղծել տպավորություն, որ թուրքական բանակը ի վիճակի է լուրջ հարված հասցնելու ռուսական կովկասյան բանակին: 1914 հուլիսի 20-ին Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին իր զեկուցագրում նշում էր Էնվերի այն միտքը, որ Թուրքիան 20 օրում կարող է 200 հազարանոց լավ զինված զորք տրամադրել, իսկ ավելի ուշ՝100 հազար, որ Թուրքիան ի վիճակի է Ռուսաստանի դեմ հրահրելու Ադրբեջանի մահմեդական ազգաբնակչությանը[14]: Ճշմարտությունն այն է, որ այդ ժամանակ թուրքական բանակը բավականին թույլ էր, և եթե չլիներ Գերմանիայի ցուցաբերած ռազմական աջակցությունը, այն հազիվ կարողանար երկարտև պատերազմ վարել:

Գերմանիայի կառավարական շրջաններում Թուրքիայի նկատմամբ վերաբերմունքը կտրուկ փոխվեց 1914թ. հունիսի 28-ին Սարաևո քաղաքում սերբական ահաբեկչական կազմակերպության կողմից ավստրիական թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունից հետո, որը առիթ դարձավ, որ 1914 հուլիսի 19-ին (օգոստոսի 1) Գերմանիան պատերազմ հայտարարի Ռուսաստանին, երկու օր հետո Ֆրանսիային, իսկ հաջորդ օրը՝ Անգլիան Գերմանիային[15]: Այսպիսով, սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, որը մղվում էր Քառյակ միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) և Անտանտի (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, որոնց պատերազմի ընթացքում միացան ԱՄՆ-ը, Ճապոնիան, Իտալիան) միջև:

Այս պայմաններում ընթացող թուրք-գերմանական գաղտնի բանակցությունները ի վերջո հանգեցրին նրան, որ 1914 հուլիսի 27-ին կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին կնքելու ռազմական գաղտնի դաշինք, իսկ 1914 օգոստոսի 2-ին Վանգենհայմը և ավագ վեզիր Սայիդ Հալիմը՝ Էնվեր և Թալեաթ փաշաների ներկայությամբ կնքեցին այն, որով Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանի հարձակման դեպքում աջակցել կայսերական Գերմանիային, իսկ վերջինս իր հերթին պարտավորվում էր չկնքել այնպիսի պայմանագիր, որի հետևանքով Օսմանյան կայսրությունը կարող է ունենալ տարածքային կորուստներ[16]: Ընդամենը մի քանի օր անց՝ օգոստոսի 6-ին, Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմը Թուրքիայի մեծ վեզիր Մեհմեդ Սայիդ Հալիմ փաշային ուղարկած նամակում հավաստիացնում էր, որ Կայսերական Գերմանյան պատերազմի հաղթանակի դեպքում կաջակցի երիտթուրքերի նվաճողական ծրագրերի իրականացմանը[17]: Նույն օրը օգոստոսի 6-ին Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքվեց լրացուցիչ համաձայնագիր, որը ըստ էության արդյունք էր թուրքական կողմի պահանջի, քանզի նպատակ ուներ պատերազմին գերմանական կողմից մասնակցելու դեպքում ամրապնդել թուրքերի շահերը, ինչպես նաև ապահովելու Արևելքում նոր տարածքների նավաճումը: Համաձայնագրի հինգերորդ կետում նշվում էր. «Գերմանիան կստիպի ուղղել Օսմանյան կայսրության արևելյան սահմաններն այնպես, որ ապահովի Թուրքիայի անմիջական շփումը

[14] Տե՛ս **Օհանջանյան Ա.,** 1915 թվական.Անհերքելի վկայություններ, Եր., էջ 76:

[15] Տե՛ս **Սիմոնյան Հ.,** Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 237:

[16] Տե՛ս **Գուստ Վ.,** Հայերի ցեղասպանությունը, Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Եր., 2002, էջ 142:

[17] Տե՛ս **Лудшувейт Е. Ф.,** Турция в годи первой мировой войЛудшувейт Е. Ф., Турция в годи первой мировой войны 1914-1918 гг., Военно-политический очерк, М., 1966, с. 47:

Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»[18]: Պայմանագրում հստակ նշված չէին այն տարածքները, որոնք հաղթանակի դեպքում գերմանացիները կհամաձայնեին, որ անցնեն Թուրքիային: Իսկ դա նշանակում է, որ ելնելով Արևելքում իրենց ունեցած շահերից՝ գերմանացիները խուսափում էին որոշակի ձևակերպումներից և մտադիր չէին հաղթելու պարագայում ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տարածքները զիջել թուրքերին: Դա ակնհայտորեն դրսևորվեց 1918թ. Բաթումի բանակցությունների ընթացքում: Ի դեպ՝ ասենք, որ օգոստոսի 2-ին Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքված համաձայնագրին օգոստոսի 3-ին միացել էր նաև Ավստրո-Հունգարիան, ուստի նույն օրը Թուրքիան հանդես էր եկել իր չեզոքության մասին հայտարարությամբ[19]:

Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու նպատակով Գերմանիան գործի դրեց նաև իր տնտեսական կարողությունները: Այդ է վկայում 1914 հոկտեմբերի 10-ին Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինի զեկուցագիրը[20]: Բայց անգամ դրամական օգնություն ստանալու դիմաց թուրքական ղեկավարությունը չէր շտապում մտնել պատերազմի մեջ, ինչն էլ ստիպեց, որ Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը սպառնա, թե գերմանական «Գյոբեն» և «Բրեսլաու» ռազմանավերը, որոնք իբր պատկանում էին Թուրքիային, առանց թուրքական կառավարության համաձայնության Սև ծովում ռազմական գործողություններ կնախաձեռնեն ընդդեմ Ռուսաստանի: Գերմանացիների գործողություններն այնքան ակնհայտ էին, որ դեռևս հոկտեմբերի 17-ին «Հորիզոն» օրաթերթը գրում էր. «…Եթե Թուրքիան չցանկանա էլ, նրա սկսողները՝ թուրք դրոշակի տակ՝ լինելու են գերմանացիները»[21]: Այս փաստը ևս մեկ անգամ հաստատում է այն իրողությունը, որ Թուրքիան գտնվում էր Գերմանիայի լիակատար հսկողության ներքո, հետևաբար պատերազմի ընթացքում երիտթուրքերի կողմից արևմտահայության նկատմամբ նախապատրաստվող կոտորածներին քաջատեղյակ էին գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաները:

Թուրքական կառավարությունը ձգտում էր ստեղծել այնպիսի իրավիճակ, որ առաջինը պատերազմ հայտարարի Ռուսաստանը, որը երիտթուրքերին հնարավորություն կտար հանդես գալու պաշտպանվողի դիրքերից և մահմեդական տարրին ուղորդելու դեպի «սրբազան պատերազմի»: Սակայն այս հաշվարկները չարդարացան, քանի որ եվրոպական ճակատներում գերմանական բանակների կրած անհաջողությունները գերմանացիներին ստիպեցին ուժեղացնելու ճնշումները երիտթուրքերի վրա, որպեսզի վերջիններս արագացնեն Թուրքիային պատերազմի մեջ ներգրավելու գործընթացը: Այդ ճնշումը դրսևորվում էր ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ ռազմական ոլորտներում: Ուստի դեռևս սեպտեմբերի սկզբներին ակնհայտ էր, որ թուրքերը պատրաստվում են պատերազմի, ինչի մասին են վկայում ռուս-թուրքական սահմանին տեղի ունեցած միջադեպերը: Սեպտեմբերի 2-ին Ուրմիայից ստացված հեռագրում ասվում էր, որ պարսկական սահմանագլխի կանոնավոր զորքերը Թուրքիան փոխադրում է Էրզրում: Կաղզվանից մեկ այլ հեռագիր հաղորդում էր ռուսական սահմանագլխում թուրքական զորքերի կենտրոնացման ու պատրաստությունների մասին[22]: Դա նշանակում էր, որ թուրքական կառավարության գերմանամետ ազդեցիկ

[18] Տե՛ս **Կիրակոսյան Ջ.,** նշվ. աշխ., էջ 202:
[19] Նույն տեղում, էջ 202:
[20] Տե՛ս **Օհանջանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 79:
[21] Տե՛ս «Հորիզոն», № 230, 17 հոկտեմբերի 1914թ., էջ 1:
[22] Տե՛ս «Հորիզոն», № 194, 4 սեպտեմբեր 1914թ., էջ 1:

խմբավորումը պատրաստվում էր երկիրը ներքաշել պատերազմի մեջ, որը ակնհայտ դարձավ արդեն հոկտեմբերի 22-ին, երբ Էնվեր փաշայի հրամանով պաշտոնապես ամրագրվեց գերմանաթուրքական նավատորմի միավորումը: Իսկ ընդամենը մի քանի օր անց՝ 1914թ. հոկտեմբերի 27-ին և 29-ին, թուրքական նավատորմը գերմանացի հրամանատար Սուշոնի ղեկավարությամբ Սև ծովում հարձակվեց ռուսական նավերի վրա և ռմբակոծեց Օդեսա, Սևաստոպոլ, Թեոդոսիա, Նովոռոսիյսկ նավահանգիստները[23]: Նոյեմբերի 2-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային, իսկ նույն ամսի 11-ին սուլթան Մեհմեդ Ֆաթիհը թուրքերին պաշտոնապես պատերազմի կոչ արեց ընդդեմ Ռուսաստանի[24]: Դրանով էլ Կովկասյան ճակատում սկսվեցին ռազմական գործողությունները, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան արևմտահայության համար:

Այն փաստը, որ Կայսերական Գերմանիան դրական մոտեցում ցուցաբերեց հայաբնակ նահանգներում բարեփոխումների իրականացման նկատմամբ, ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նման դիրքորոշումը նախապատերազմյան ժամանակաշրջանում պայմանավորված էր մի քանի գործոններով, որոնցից առաջնայինը արևմտահայության շրջանում ռուսական ավանդական ազդեցության թուլացումն ու գերմանական կողմնորոշման ընդլայնումն էր, հայաբնակ տարածքներում թուրքական տիրապետության ամրապնդումը և Արևմտյան Հայաստանում գերմանական տնտեսական ու քաղաքական ազդեցության մեծացումը: Սակայն պատերազմի նախօրյակին ակնհայտ էր, որ արևմտահայության քաղաքական դիրքորոշումը շարունակում է մնալ ռուսամետ, իսկ Հայկական հարցը շահարկվում էր մեծ տերությունների կողմից: Այդ իսկ պատճառով համաշխարհային պատերազմի նախօրեին գերմանացիների վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ առավել բացասական դրսևորում ստացավ, որի մասին է վկայում Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմի՝ դեռևս պատերազմից առաջ հայտնած այն տեսակետը, որ հայերը պետք է ընդունեն իսլամ, միայն այդ դեպքում նրանց հանգիստ կթողնեն[25]: Գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաների այս և նամանատիպ հայտարարությունները վկայում են, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին երիտթուրքերի մշակել-պատրաստել էին արևմտահության տեղահանման հրեշավոր ծրագիրը, որին քաջատեղյակ էին գերմանացիները, որոնք հետագայում ոչ միայն չփորձեցին խոչընդոտել, այլև մասամբ գործուն մասնակցություն ունեցան այդ ոճրագործության կազմակերպմանն ու իրականացմանը:

Բանալի բառեր–Կայսերական Գերմանիա, Թուրքիա, Ռուսաստան, Արևմտյան Հայաստան, բարեփոխումներ, Առաջին աշխարհամարտ, երիտթուրքեր, Հայկական հարց, արևմտահայություն, ցեղասպանություն:

Գևորգ Մելքոնյան, Գերմանիան և Արևմտյան Հայաստանը Առաջին աշխարհամարտի սկզբին–Տվյալ հոդվածում քննարկվում է Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը արևմտահայերի նկատմամբ Առաջին աշխարհամարտի նախօրյակին: Փաստերի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

[23] Տե՛ս **Սիմոնյան Հ.,** նշվ. աշխ., էջ 215:
[24] Նույն տեղում, էջ 215:
[25] Տե՛ս **Степанян Ст.,** Германские источники о геноциде армян, Ереван, 1991 г., с. 63:

Գերմանիայի համար գլխավոր հարց է հանդիսանում Թուրքիայի ստատուս քվոյի պահպանումը, ինչպես նաև իր ազդեցության ընդլայնումը արևմտահեյրրի շրջանում: Սակայն Առաջին աշխարհամարտի նախօրյակին Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյաներին հայտնի էր Երիտթուրքերի կողմից արևմտահայերին արտաքսելու ծրագիրը: Իսկ նրանք ոչ միայն չխոչընդոտեցին, այլև առանձին դեպքերում ակտիվորեմ մասնակցեցին ծրագրի կազմակերպմանն ու իրականացմանը:

Геворг Мелконян, Западная Армения и Германия накануне и в начале Первой Мировой Войне-В данной статье обсуждается позиция Кайзеровской Германии в отношении к западных армян накануне и в начале Первой мировой войны. Всесторонное исследование фактов показывает,что для Германии главным вопросом являлся вопрос сохранении статус кво Турции, а также увеличения своего влиянии среди западных армян. Но накануне Первой мировой войны высокопоставленным лицам Германии было известно план изгнание западных армян со стороны Молодых турков, и они не только не препятствовали, но в отдельных случаях активным образом участвовали в организации и осуществлении плана.

Gevorg Melqonyan, Western Armenia and Germany on the evean in the first period of the I World War-The problem, which is being discussed in this article, concerns the Germany's attitude to the western Armenians on the eve and during the first period of the I World War. The detailed analysis of the facts shows that one of the main problems for Germany was not only the maintaining status quo of Turkey, but also the increasing of its influence among Armenians. But the German high officials knew about the Young Turks plan of western Armenians' deportation and didn't only try to prevent from that plan, but also in some cases actively took part in organization and realization of it.

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ. ՏԻԳՐԱՆ ՕՔՈՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ ժողովրդի աննկուն ոգու արտահայտություն ֆիդայական պայքարի պատմությունը հարուստ է հերոսական կերպարներով՝ Աղբյուր Սերոբ, Անդրանիկ Օզանյան, Հրայր, Մարգար վարժապետ, Միհրան Տամատյան, Սեբաստացի Մուրադ, Արմենակ Եկարյան, Նիկոլ Դուման, Քեռի (Արշակ Գաֆավյան)…: Նրանցից շատերի մասին գրվել են հուշեր, ուսումնասիրություններ, հոդվածներ, նույնիսկ ժամանակն են անվանել նրանցից ոմանց անունով[1]: Կան նաև անուններ, որոնք հանիրավի մոռացվել են կամ մնացել ստվերում: Դրանցից մեկը բնավորությամբ տաքարյուն ու անհամբեր, հայրենիքը շատ արագ ազատ տեսնելու անհագ ցանկությամբ տոգորված և դրամատիկ վախճանով կյանքն ավարտած Տիգրան Օքոնյանն էր (1868-1894թթ.): Գործիչ-ֆիդայի, ով ապրեց ընդամենը 26 տարի, բայց բուռն հանրային գործունեություն ունեցավ, սակայն ում անունն այսօր քչերին է հայտնի[2]:

Տիգրան Օքոնյանը ծնվել է 1868թ. Ախալցխայում: Տեղական քաղաքային պետական միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո հաշվապահություն սովորելով մեկնում է Կարս և մի հայ վաճառատան մեջ հաշվապահի պաշտոն ստանձնում: Մարտիրոս Մարգարյան-Սաֆոն, որ մոտիկից ճանաչել է Օքոնյանին, նշում է. «Բոլորովին ջահել, 17-18 տարեկան: Քնքոյշ, նուրբ կազմուածքով, գեղեցկադէմ, բայց շիկահեր. սիրեցին նրա բոլոր ընկերները, իբրեւ մի բարի, քնքոյշ երիտասարդի, որը սիրում էր կարդալ, վիճել եւ ամենայն հաւատարմութեամբ վաճառատան հաշիւները պահել: Երկար չմնաց նա Կարսում, ընդամէնը երկու տարի, բայց Կարսեցին լաւ է յիշում շիկահեր Տիգրանին: Նա տեղափոխուեց Թիֆլիզ մի ուրիշ վաճառատուն եւ այդպիսով մեր աչքից մի առժամանակ հեռացաւ»[3]:

Տարբեր աղբյուրների հայտնած տվյալները համեմատելիս կարելի է ենթադրել, որ Օքոնյանը Թիֆլիսում է գտնվել 1880-90 թթ., այսինքն՝ այն տարիներին, երբ այնտեղ սկսվել էր խմորվել Արևմտյան Հայաստանի ազատության համար ազատագրական շարժումը և նախապատրաստվում էր առանձին գործող խըմբակների համախմբումը: Ճիշտ այդ նախօրեին Տ. Օքոնեանն ուրիշ շատերի նման Օլթիի գծով մտել էր Երկիր և հարձակումներ սկսել թուրք պաշտոնյաների և քուրդ ավազակների վրա: Նրա խմբում էին մեկը մյուսից հանդուգն ու քաջ մարտիկներ կտրիճ Վարդանը, որ հետո սպանվեց Արաբոյի խմբում, օլթեցի հայտնի և հանդուգն գործիչ «Հայ» մականունով Մեխանը և ուրիշներ: Օքոնյանը անողոք էր թե՛ թշնամու և թե՛ խմբի անդամների հանդեպ: Խմբի յուրաքանչյուր անդամ ակնածում էր նրանից, չէր համարձակվում նրան ծուռ նայել: Նրան հնազանդ-

[1] **Միմոնյան Հ.,** Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա, Ե., 1996 և գիրք Բ, Երևան, 1996:

[2] Օքոնյանի մասին պատմագիտական գրականության մեջ որոշ հպանցիկ անդրադարձներ կան: Դրանց մեջ առանձնանում են Վ. Վալադյանի Տիգրան Օքոնեան, (Հայրենիք, ամսագիր, Բոստոն, թիվ (412), 1960, 1-14 էջեր), Ռ. Հովհաննիսյանի Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի Պաշտպան հայրենյաց կազմակերպությունը, Երևան, 1965, Ա. Մելքոնյանի Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003 և մի քանի այլ ուսումնասիրություններում:

[3] **Վալադեան Վ.,** նշվ., հոդվածը, էջ 4:

վում էին նույնիսկ այնպիսիները, որոնք տասնյակ տարիներ ինքնագլուխ գործելով քաջի անուն էին վաստակել. «Երիտասարդ Շամիլը… շատ երիտասարդ, բայց նա երկաթեայ կամքով, առնական բազուկներով ղեկավարում է իւր հրոսակային խումբը մէկ արկածից միւսը: Եւ ո՞վ կարող էր կարսեցիներից կարծել, թէ այն շիկահեր քնքոյշ մանուկը, Տիգրան Օքոնեանն էր՝ ինքը Շամիլը»[4]:

Հետաքրքիր է, որ թե' հուշագիրները, թե' ուսումնասիրողները միաբերան պնդում են, որ Օքոնյանի գործունեությունն էլ իր անձի նման շատերի համար անհայտ մնաց, «մինչև իսկ առեղծվածային», սակայն միևնույն ժամանակ հետաքրքրական: «Ահա մէկը, որ իրաւամբ օժտուած էր ժողովրդական մեծ հերոս լինելու բոլոր յատկութիւններով»,-նրա մասին գրում է Ռ. Սեւեանը,-սակայն, նրա կեանքը, դժբախտաբար, չափազանց կարճատեւ եղաւ յեղափոխական ասպարէզում»[5]:

Կազմակերպվելուց անմիջապես հետո Օքոնյանը անդամագրվելով ՀՅԴ-ին ինքնատիպ ու ասպետական կեցվածքով պաշտպանում էր ֆիդայական պայքարը: Նա գտնում էր, որ «Հայ յեղափոխութիւնը ոչ թե պետք է նպատակ դնի կազմակերպելու ընդհանուր ապստամբութիւն, այլ պէտք է բաւականանայ պարտիզանական կռիւներով, երբ քիչ ուժերով հնարաւր է մեծ վնասներ հասցնել եւ անդադար անհանգստութեան մէջ պահել տաճիկ կառավարութիւնը»[6]:

Արամայիս Ազնավուրյանը հուշագրում է, որ Օքոնյանը ձգտում էր 1883 թվականին կազմակերպված Հայրենասերների միությունից անկախ մի կազմակերպություն ստեղծել, որի «մէջն էին Խաչատուր Կէրէկցեանը, Յովհաննէս Աստուրեանը, Կարապետ Նշկեանը եւ Յակոբ Եաշխալացեանը»[7]: Ա. Ազնավուրյանի ասելով Կերեկցյանը դժգոհում է, որ տեղական պայմաններին բոլորովին անծանոթ օտարական մի երիտասարդ, առանց հաշվի առնելու ժողովրդի համակըրանքը վայելող հայրենասերներին, եկել է և գաղտնի կազմակերպություն ստեղծելու ձախող փորձեր է անում: «Յարաբերութիւնները,-իր հուշերում գրում է Ա. Ազնավուրյանը, Օքոնեանի եւ Կէրէկցեանի միջեւ լարւում են, եւ անզիջում տեսք ստանում»[8]:

ՀՅԴ հիմնադիրներից Մ. Շաթիրյանն էլ է անդրադարձել Օքոնյանին: Նա հուշագրում է, որ առաջին շրջանում բացի վիճող, բանախոսող ու ծրագրող մարդկանցից, կային մեկ այլ տեսակի խումբ երիտասարդներ, որոնք Դաշնակցական հիմնադիր սերնդի իսկական «տիպարն էին եւ չէին վիճում, քիչ էին խօսում եւ շատ էին գործում» և ավելացնում է, որ դրանց թվում էր նաև Օքոնյանը[9]: Շաթիրյանը նաև վկայում է, որ վերջիններս զենքեր էին կուտակում, հայդուկային խմբեր

---

[4] Ա. Ազնաւուրեանի յուշերը, գրի առաւ՝ Ե. Հայրապետեան, Հայրենիք, Բոստոն, թիւ 9, հուլիս, 1937: /3/

[5] Ռ. Սեւեանը Աբրահամ Գիւլխանդանեանն է: Տարիներ շարունակ նա կարգի է բերել ՀՅԴ արխիվը: Նա կազմել ու հրատարակել է բազմաթիվ դաշնակցական գործիչների կենսագրականները և օգտվելով հիմնականում Մարտիրոս Մարգարյան-Սաֆոյի թողած չորս էջանոց ձեռագրից տեղեկություններ է թողել նաև Օքոնյանի մասին: Դրանից բացի մեզ են հասել միմյանց կրկնող սուղ հիշատակություններ, որոնց մեջ առանձնանում է Արամայիս Ազնավուրյանի հաղորդած տվյալները, որոնց վերաբերվում ենք վերապահությամբ, քանի որ Ազնավուրյանը պարզապես գրի է առել շահագրգիռ կողմ հանդիսացող Խաչատուր Կերեկցյանի եղբոր՝ Տիգրանի պատմածները:

[6] Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադիրները,-Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1937 Յունիս:

[7] **Վ. Վալադեան** , Տիգրան Օքոնեան, Հայրենիք ամսագիր, Բոստոն, թիւ 6, 1960, էջ 3:

[8] Նույն տեղում:

[9] Յիշողութիւններ մօտիկ եւ հեռաւոր անցեալից, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1932 Յունուար: /2/

կազմում, վարժեցնում էին նորեկներին և առհասարակ անում էին այն ամենը, որը հետագայում դարձավ Հ.Յ. Դաշնակցության անելիքը[10]: Նրանք էին, որ ապրում էին հայ ցեղի տառապանքով և հավատում էին հաղթանակին: Նրանք, ովքեր հեղափոխական ջիղ ու պայքարելու կորով ունեցող անհատներ էին, համեստ իրենց պահանջների և հանդուգն՝ «իրենց զոհաբերութեան, յամառութեան ու հաւատքի մէջ»[11]:

1890 թ. վերջերին Կովկասից Բասեն անցնող դաշնակցական առաջին քարոզիչներից էր ախալցխացի Տ. Օքոնյանը, իսկ նրա խումբը՝ Բարձր Հայքի հայդուկային պայքարի սկզբնական փուլի կարևոր դերակատարներից: Նրա խումբը 1888-1889 թթ. գործում էր Օլթիի շրջակայքում և սարսափ էր տարածել բոլոր հարստահարողների շրջանում: 1892 թ. Տ. Օքոնյանի խմբի կազմում էին ալեքսանդրապոլցիներ Ուսուլ Գրիգորը, Քոռ Եղոն, Ալեքսանդրապոլից քիչ հեռու գտնվող Ղոնաղոան գյուղից Մարտիկը, հայտնի Կոլլիկի Տղան և էլի շատ ուրիշներ: Տիգրանը բռնազավթում էր վաշխառուների ու հարուստների ունեցվածքը և ավարը բաժանում էր չքավորներին:

Դրոշակում տպագրված մի հոդվածում այդ մասին ասվում է, որ սեպտեմբերի 24-ին, Կարինից 4-5 ժամ հեռավորության վրա ասպատակների մի խումբ Շամիլի առաջնորդությամբ կտրում է Լիսկավ եւ Նիխազ գյուղերի ճանապարհը, կողոպտում 25-ի չափ թուրք առևտրականների և բռնազավթում նրանց սայլերի վրա բարձած մանուֆակտուրայի, շաքարի, թեյի, բրնձի և ընդեղենի ողջ բեռը[12]: Շուտով վրա են հասնում 150-ից ավելի թուրք զինվորներ և պաշարում խմբին: 15 հոգուց բաղկացած խումբը 6 ժամ շարունակ ոչ միայն կարողանում է դիմադրել 200 հոգուց բաղկացած նրանց խմբին, այլև իրենց հնարամիտ և ճարպիկ գործողությունների շնորհիվ բոլորովին անվնաս մնալով՝ կարողանում է մի քանիսին վիրավորել, շփոթեցնել և նույնիսկ փախուստի մատնել[13]: Նույն հրապարակման մեջ նշվում է նաև, որ Շամիլի խումբը կտրում է Սիվրիից Կարին տանող ճանապարհը: Երկու օր էլ այդտեղ կողոպտելով անցուդարձ անող քուրդ ու թուրք ունևորներին, խումբը հեռանում է: Նույն օրը Շամիլի խումբը կողոպտում է նաև քարավաններից մի քանիսը, դրանցից վերցնում եղած սնունդը, դրամ և ընտիր ձիեր[14]: Միևնույն ժամանակ, նրանք ամեն անգամ ժողովրդին բացատրում էին, որ նրանց վնասելու միտք չունեն և «իրենց որսը կառավարութեան բարբարոս պաշտօնեաներն են, եւ այլն»[15]: Այստեղ մեզ համար կարևորն այն է, որ այդ խմբի առաջնորդը Շամիլն էր, այսինքն՝ Տ. Օքոնյանը: Նա առաջինն էր, որ թուրքերից ու քրդերից վրեժ լուծելու համար զինված խումբ մտցրեց Արևմտյան Հայաստան: Տիգրան-Շամիլի խումբը սարսափ էր ազդում թալանչիների ու կեղեքողների վրա և պաշտպանության տակ վերցնում հայ գյուղացիներին: Իմանալով խմբի կատարած գործերի մասին, օսմանյան իշխանություններն սկսում են ակնդետ հետևել նրանց տեղաշարժերին: Հետապնդումներից ազատվելու համար Տիգրանը փորձում է անցնել սահմանը, սակայն դա նրան չի հաջողվում: Դրանից հետո նա խումբը ցրում է, զենքերը պահ տալիս գյուղերից մեկում և ինքն անցնում է Կարին: Կարինում Տ. Օքոնյանն աշխատանքներ է ձեռնարկում

[10] Նույն տեղում:
[11] Յիշողութիւններ մօտիկ եւ հեռաւոր անցեալից, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1932, Յունուար:
[12] Նամակ Կարինից, Դրօշակ, թիվ 3, Փետրուար, 1892: /4/
[13] Նույն տեղում:
[14] Նույն տեղում:
[15] Նույն տեղում:

ՀՅԴ տեղական մարմին կազմակերպելու համար և դրանցում ներգրավում է տեղացի խելոք ու բանիմաց մարդկանց, որոնց մեջ իր պատրաստակամությամբ և եռանդուն գործունեությամբ առանձնանում է Արամ Արամյանը: Հայտնի է, որ 1881թ. Խ. Կերեքցյանի հիմնադրած «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը մեկ տարի հետո բացահայտվում է, իսկ նրա անդամներից շատերը ձերբակալվում են: Սակայն շուտով աստիճանաբար ազատվում են, այդ թվում 1886 թ. Խ. Կերեքցյանը: Աստիճանաբար ստացվում է մի իրավիճակ, երբ նախկին՝ «յեղափոխական որոշ ստաժ ունեցողների» և տարիներ անց Կարինում հեղափոխական գործունեություն ծավալած նոր սերնդի գործիչների միջև առաջանում են տարակարծություններ, որոնք, «ի վերջոյ, յանգում են խորը հակադրութեան»[16]: Արդեն հիշատակված հուշագրողների և պատմագիտական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ այդ հակասությունների արդյունքում Արամ Արամյանի միջոցով Օքոնյանը սպանել է տալիս Կերեկցյանին[17]: Այդ առիթով ՀՅԴ-ն հանդես է գալիս հայտարարությամբ, որում ասվում էր. «Օգոստոսի վերջերին սպանուեց 80-ական թթ. սկզբներում տեղի ունեցած Էրզրումի շարժման ամենաեռանդոտ ստեղծողներից Խ. Կէրէկցեանը… Հ.Յ.Դ.-ը իր պարտքն է համարում հրապարակապէս յայտնել իր կարծիքը եւ այսուհէտ դատապարտել նման արարքները»: Եթե որևէ մկն այստեղ շահում է, ասված է այդ նույն հայտարարության մեջ, դա ընդհանուր թշնամին է, որն իր անմիջական նախաձեռնությամբ ազատվում է իրեն համար մի վտանգավոր անձնավորություններից: Թուրքական իշխանությունները չեն հասկանում, որ այդ միջոցով չեն հարթվում խոչընդոտները: Որ այդպիսի քայլերն ավելի են սրում և դժվարացնում կուսակցականների միջև եղած հարաբերություններ և «մի անջնջելի վիհ են բաց անում նրանց մէջ»[18]:

Երկու կողմերի միջև եղած հակադրությունները շարունակվում են մինչև 1898թ., այսինքն՝ մինչեւ ՀՅԴ Երկրորդ ընդհանուր ժողովը, որը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ և գտնելով սխալ՝ չեղյալ է համարում «դատապարտութիւնը Տիգրան Օքոնեանի մասին» և հետմահու վերահաստատում է նրա կուսակցական վարկը: Նաև նկատի առնելով այն կարևոր հանգամանքը, որ Տիգրան Օքոնյանն արդեն իր արյունով հատուցել էր այն հանցանքի համար, որը ՀՅ Դաշնակցության կենտրոնի կարծիքով մեղավոր էր համարվել, ինչպես նաև այն, որ «այժմեան ապակեդրոնական Դաշնակցութիւնը իր պատժական եւ կազմակերպական կանոններով շատ տարբեր է հին կեդրոնական Դաշնակցութենէն», Ընդհանուր Ժողովը որոշում է բավական համարել տասներեք տարի Տիգրան Օքոնյանի մոռացության մատնված լինելը, և համարելով նրան ՀՅԴ-ի նահատակ ընկերներից, պարտավորեցնում է Արևմտյան Բյուրոյին՝ առաջին իսկ առիթը

---

[16] **Վ. Վալադեան** , Տիգրան Օքոնեան, Հայրենիք ամսագիր, Բոստոն, թիւ 6, 1960, էջ՝ 3:

[17] Պատմագիտական գրականության մեջ կա նաև այն ենթադրությունը, որ Խաչատուր Կերեքցյանի սպանությունը թուրքական իշխանությունների ձեռքի գործն է եղել: Ձեռնպահ մնալով վերջնական տեսակետ հայտնելու հավակնությունից, միայն նշենք, որ գոյություն ունեցող քիչ թե շատ հավաստի համարվող հուշագրությունները, ժամանակի մամուլում եղած հրապարակումները հակված են այն տեսակետին, որ Օքոնյանն է սպանել տվել Կերեքցյանին: Որքան էլ փնտրեցինք, հակառակն ապացուցող լուրջ կռվաններ չհաջողվեց գտնել: Սակայն, հաշվի առնելով Օսմանյան կայսրությունում այդ ժամանակ գործող ժանդարմալրտեսագործակալական համակարգը, հակված ենք ենթադրելու, որ այնուամենայնիվ դա տեղի է ունեցել իշխանությունների ամենաակտիվ միջամտության շնորհիվ:

[18] Նույն տեղում էջ՝ 4:

ներկայանալու դեպքում, «Դրօշակ»-ում հրապարակել նրա կենսագրությունն ու լուսանկարը[19]:

Հուշագիրների հավաստմամբ երկու ընկերներ Տիգրանն ու Արամը, հավասարապես խիզախ էին, պատրաստ նետվելու ցանկացած վտանգի մէջ: Բայց առաջինը համառ էր, ավելի ճարպիկ, նախաձեռնող ու հակված էր ինքնիշխանության: Օքոնյանը ուժեղ անհատականություն էր՝ «երկաթէ կամք ունէր՝ ու գիտէր ուրիշներին պարտադրել իր կամքը»[20]: Նա համարձակ էր, միշտ ուներ իր տեսակետները տարբեր հարցերի շուրջ և պատահական չէ, որ առաջիններից էր, որ դժգոհություններ հայտնեց կուսակցության կենտրոնից: Հովնան Դավթյանի հետ գրած «Հրաւէր առաջին ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին»-նամակում նշելով հեղափոխական գործերի թոյլ ընթացքը, ժողովրդի «գործից սառչիլը», նրանք պարզաբանում էին, որ դա հետևանք է «գործողների մէջ մի ընդհանուր ընկերական կապ, գործունէութեան որոշ ուղղութիւն-տաքտիկը չլինելուն եւ բոլորիս դիմած կէտ-նպատակի անորոշութեան»[21], առաջարկում էին քննարկել և հստակեցներ հետևեալ կարևոր հարցերը.

1. հեղափոխության նպատակը,
2. կազմակերպական խնդիրներ,
3. գործելակերպի միջոցներն ու մարտավարությունը:

Այնուհետև ներկայացնելով իրենց տեսակետներն այդ հարցերի վերաբերյալ նշում էին, որ իրենց նպատակն է հեղափոխության միջոցով «ձեռք բերել թուրքա-Հայաստանում ժողովրդավարական-ռամկավարական կազմակերպութիւն»[22]: Իսկ հեղափոխական կազմակերպությունը պետք է բաղկացած լիներ մի քանի շրջաններից, որոնք պետք է ունենային իրենց գործադիր մարմինները: Ինչ վերաբերում էր կուսակցության մարտավարությանը, ապա, նամակի հեղինակները՝ կարևորելով քարոզչությունն ու տեռորը, մնացյալ միջոցները որոշելու իրավասությունը վերապահում էին ընդհանուր ժողովին:

Հայտնի է, որ հայ հեղափոխական շարժման արշալույսին ունեցել ենք գործիչներ, որոնց մէջ շաղկապվել ու որոշ ժամանակ գոյակցել են ասպատակն ու հեղափոխականը, սակայն, ի վերջո «մէջտեղում մնացել միայն յեղափոխական ոգին»: Այդպիսի օրինակները շատ են՝ Շատախցի Չաթոն ու Շերոն, Դերսիմի Քեռին (Երզնկացի Ռուբէն Շիշմանեան), Արաբոն, Հունոն, Աղբյուր Սերոբը, որոնցից շատերն սկզբում փախստական էին դարձել խուսափելով իշխանությունների հետապնդումներից: Իսկ երբ հեղափոխական կազմակերպությունները հրապարակ իջան, հայ «ղաչաղները» շտապեցին միանալ նրանց և հանուն ժողովրդի ազատության կռվի դուրս եկան: Նրանց թվում էր նաև Տիգրան Օքոնյան-Շամիլը, միայն այն տարբերությամբ, որ նա մյուսների նման նախապես փախստական չէր դարձել թուրք կամ քուրդ սպանած լինելու պատճառով:

Մինչ օրս անհայտ է մնում Օքոնյանի սպանության ո՛չ միայն ամսաթիվը, այլև տարին, քանի որ իրար չեն համապատասխանում եղած տեղեկությունները, որոնք հայտնի են: Եղած փաստերի համադրությունը և հատկապես այդ հարցերի խորագիտակ Ա. Գյուլխանդանյանի ճշգրտումները հուշում են, որ ամենայն հա-

---

[19] Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, Բ հատոր, Բ. տպագրութիւն, Պեյրութ, 1985, էջ 133:

[20] **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 246:

[21] Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, Բ հատոր, Բ. տպագրութիւն, Պեյրութ, 1985, էջ 156:

[22] Նույն տեղում:

վանականությամբ նա սպանվել է 1896թ. վերջին կամ 1897թ. սկզբին: Սակայն դա էլ դեռևս վերջնական ճշգրտման կարիք ունի:

Առհասարակ շատ բաներ նրա մասին անորոշ են ու հանելուկային, ինչպիսին ինքն էր՝ Տիգրան Օքոնյանը, ով զորավոր կամքի տեր ու խիզախ լինելով հանդերձ՝ որոշակիորեն իր իսկ ձեռնարկած ու սիրած գործի մէջ հարատևելու խառնվածք չի ունեցել: Նա ավելի հակված էր հաճախ փոխելու գործն ու դրա վայրը: Ինչևիցէ, կարծում ենք, որ Օքոնյան-Շամիլը շատ հետաքրքրական անձնավորություն է եղել, իսկ նրա գործունեությունը միանգամայն արժանի ուսումնասիրության, քանի որ դա մեր օրերում անհերքելիորեն կարևոր արդիական-քաղաքական նշանակություն ունի: Միևնույն ժամանակ ակներև է, որ հիմնահարցի հստակ թեմատիկ ու ժամանակագրական շրջանակներն ու բովանդակությունը ինքնին պայմանավորում են սույն հոդվածի գիտաճանաչողական և դաստիարակչական արժեքը: Ենթադրում ենք նաև, որ Օքոնյանի վերաբերյալ ապագայում նոր փաստեր կգտնվեն: Ինչպես նաև համոզված, որ նոր ուսումնասիրություններ կգրվեն քաջ և համարձակ, երբեմն նաև անկանխատեսելի ու գործի նվիրյալ Օքոնյան-Շամիլի հերոսական անցյալի մասին, իսկ այդ ուսումնասիրություններով սերունդներ կդաստիարակվեն:

Բանալի բառեր-Ազատագրական պայքար, ֆիդայիներ, հայրենասիրություն, Կարին, կուսակցություն, Օսմանյան կայսրություն, հեղափոխություն, Տիգրան Օքոնյան, հերոսապատում:

Արման Սարգսյան, Ազատագրական պայքարի ակունքներրում. Տիգրան Օքոնյան-XIX դարի երկրորդ կեսի հայոց վերազարթոնքը շուտով վերաճեց ազգային-ազատագրական հզոր շարժման, որի ռազմական դրսևորումը եղավ ֆիդայական պայքարը: Այլևս չհանդուրժելով օսմանյան իշխանությունների և նրանց հովանավորությունն ամբողջովին վայելող քրդական հերոսակների անմարդկային բռնարարքները՝ հայ մարդը ոտքի ելավ և զենքը ձեռքին սկսեց պայքարել համատարած այդ անարդարությունների դեմ:

Սկսված այդ անհավասար, սակայն հերոսական ու անջնջելի էջերով հարուստ ֆիդայական պայքարում կատարած սխրանքներով պատմության փառքի հավերժագրքում իրենց անփոխարինելի տեղը գտան շատ անուններ: Դրանցից էր նշանավոր հասարակական և ռազմական գործիչ Տիգրան Օքոնյանը՝ Շամիլ (1868-1894): Գործիչ-ֆիդայի, ով ապրեց ընդամենը 26 տարի, բայց բուռն հանրային գործունեություն ունեցավ, սակայն ում անունն այսօր քչերին է հայտնի: Ինքնատիպ, ասպետական կեցվածքով Օքոնյանը պաշտպանում էր ֆիդայական պայքարում առկա երկու՝ հրայրյան և անդրանիկյան ուղղություններից վերջինը: Բնավորությամբ հախուռն Օքոնյան-Շամիլի մեջ շաղկապված էին ասպատականն ու հեղափոխականը: Բոլորովին էլ պատահական չէր, որ զորավոր կամքի տեր ու խիզախ այդ գործիչն իր կարճատև կյանքի ընթացքում շատ հերոսական արարքներ կատարեց:

Арман Саргсян, У истоков освободительной борьбы. Тигран Оконян- Армянское возрождение во второй половине XIX века вскоре переросло в мощное национально-освободительное движение в виде борьбы фидаинов. Не выдержав античеловеческую жестокость османских властей и курдских разбойников под

покровительством турок, армяне восстали и с оружием в руках стали бороться против несправедливости.

В книге славной истории со страницами героических поступков, сделанных в ходе неравной борьбы фидаинов, с золотыми буквами написаны многие имена, в том числе и имя Тиграна Оконяна, Шамила (1968-1894), знаменитого общественного и военного деятеля. Фидаи-общественный деятель жил всего 26 года, был активно вовлечен в общественную деятельность, но сегодня мало кто знает его имя. Оконян из двух партий, участвующих в борьбе фидаинов, поддерживал Андраникскую партию. В смелом характере Оконяна сочетаны рыцарские и революционные черты. Волевой и храбрый Оконян в течение своей короткой жизни сделал много героических поступок.

Arman Sargsyan, At the sources of the liberation struggle. Tigran Oqonyan-The Armenian revival in the second half of the XIX century soon grew into a powerful national liberation movement with a fedayi struggle as its military manifestation. Unable to withstand the inhuman violence acts by the Ottoman authorities and Kurdish bandits under the Turkish patronage, Armenians rebelled and began to fight against the widespread injustice with weapons in their hands.

Many names were written in golden letters in the book of glorious history full of heroic pages of deeds made during the unequal fedayi struggle. Tigran Okonyan, Shamil (1968-1894), a prominent public and military figure was among them. He was a public figure-fedayi, who lived only for 26 years, had a very intensive public activity and only few people know his name. Okonyan, who had unique and chivalrous image, gave his support to the Andranikian branch of the fidayi struggle, but not to that of Hrarian. Chivalrous and revolutionary features were combined in Okonyan-Shamil's courageous character. It's not accidental, that during his short life this strong-willed and brave figure made heroic deeds which can be used for educating generations.

ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐՔԱՉԱՓ (BOOK-LENGTH) ՁԵՌԱԳՐԻ «ՍՊԱՆԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ո՞Վ Է ՄԵՂԱՎՈՐ» ԵՆԹԱԲԱԺՆՈՒՄ

ՆԱՐԵԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Ռաֆայել Լեմկինի թողած հսկայական գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում Հայոց ցեղասպանության թեմայով նրա ուսումնասիրությունները: Հայոց ցեղասպանության վերաբերյալ Լեմկինի գրած նյութերից ամենածավալունը «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագիր» (Այսուհետ՝ Գրքաչափ ձեռագիր) անվանումը ստացած ձեռագիրն է: Այն բաժանված է հետևյալ 7 ենթաբաժինների, 1. Հայերը, ընդհանուր պատկեր, 2. Հարկում 3. 1890-ականների կոտորածները, 4. 1909թ. Ադանայի կոտորածները, 5. 1915-1916թթ. կոտորածները և տեղահանությունները, 6. Սպանելու մտադրությունը, ո՞վ է մեղավոր, 7. Արձագանքներն արտասահմանում: Այս ձեռագրում Լեմկինը օգտվելով հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստերից և մեջբերելով ականատեսների վկայությունները, ուշագրավ դիտարկումներ է անում դրա իրագործման դրդապատճառների շուրջ: Այս խնդրին Լեմկինը մասնավորապես անդրադառնում է Գրքաչափ ձեռագրի «Սպանելու մտադրությունը, ո՞վ է մեղավոր» ենթաբաժնում:

Հոդվածում քննության է առնվում Ռաֆայել Լեմկինի Գրքաչափ ձեռագրի այն ենթաբաժինը, որը նա վերնագրել է «Սպանելու մտադրությունը, ո՞վ է մեղավոր»: Այս ձեռագրում Լեմկինը կարևոր դիտարկումներ է անում ինչպես Հայոց ցեղասպանության իրագործման դրդապատճառների, այնպես էլ, օգտագործելով փաստական տվյալներ, ներկայացնում է, թե ով է կրում Հայոց ցեղասպանության իրագործման պատասխանատվությունը: Հատկանշական է, որ ինչպես արտացոլված է նաև վերնագրում, Լեմկինը փորձել է ապացուցել Օսմանյան կայսրությունում հայերին ոչնչացնելու մտադրության առկայությունը: Ցեղասպանության հանցագործության իրագործման համար մտադրության առկայության հանգամանքը անհրաժեշտ պայման է հանդիսանում, որի մասին նշված է նաև 1948թ-ի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի[1] երկրորդ հոդվածում, որում նշված է, թե ցեղասպանություն նշանակում է հոդվածի ներքո առանձնացված 5 գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ:

Ռաֆայել Լեմկինը Գրքաչափ ձեռագրի այս ենթաբաժնում օգտվել է Հայոց ցեղասպանության և դրա իրագործման հետ կապված բազմաթիվ փաստական նյութերից՝ օգտագործելով տարբեր աղբյուրներ: Առաջին աղբյուրը, որից օգտվել է Լեմկինը, Հենրի Հարիս Ջեսափի «Մահմեդական միսիոներական խնդիրը»[2] (The Mohammedan missionary Problem) գիրքն է: Հենրի Հարիս Ջեսափը պրեսբիտերական միսիոներ էր Սիրիայում, աստվածաբանության դոկտոր և Բեյրութում

[1] «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիա, 1948թ դեկտեմբերի 9, (*http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf*)

[2] **H.H. Jessup** The Mohammedan Missionary Problem, Presbyterian Board of Publication, Philadelphia, (1879).

Ամերիկյան համալսարանի հիմնադիրը[3]: Նրա այս գիրքը մահմեդականության և մահմեդական միսիոներական խնդիրների մասին է: Ղուրանի դրույթների վերաբերյալ Լեմկինը տեղեկություններ է քաղել Ջորջ Սեյլի «Ղուրանի նախնական դիսկուրսը» (The preliminary discourse to the Koran)[4] գրքից, ապա վերլուծել, թե ինչ ազդեցություն են դրանք ունեցել թուրքական քաղաքականության վրա: Անգլիացի արևելագետ և թարգմանիչ Ջորջ Սեյլը 1724թ-ին կատարել է Ղուրանի անգլերեն թարգմանությունը և գրել բազմաթիվ նոթեր: Նրա հեղինակած «Նախնական դիսկուրս»-ը պարունակում է խորացված գիտելիքներ արևելյան սովորությունների, բարքերի, ավանդույթների և օրենքների մասին: Հետաքրքրական է, որ Սեյլը իսլամը չի դնում քրիստոնեության հետ հավասար մակարդակի վրա: Լեմկինը Սասունի կոտորածների վերաբերյալ փաստեր է ներկայացնում Ֆրեդերիկ Դևիս Գրինի «Հայկական ճգնաժամը Թուրքիայում» (The Armenian Crisis in Turkey)[5] գրքից: Այս գրքի բովանդակությունը վերաբերում է Օսմանյան Կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված դաժանություններին և կոտորածներին ու միջազգային դիվանագիտության ասպարեզում հայկական հարցի արծարծմանը: Որպես հարուստ փաստական աղբյուր՝ Լեմկինը օգտագործել է բրիտանացի հայտնի պատմաբաններ Ջեյմս Բրայսի և Առնոլդ Թոյնբիի «Հայերի վիճակը Օսմանյան կայսրության մեջ 1915-1916թթ.» (Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916) փաստաթղթերի («Կապույտ գիրք») ժողովածուն[6], որտեղ զետեղված են բազմաթիվ հաղորդագրություններ և վկայություններ հայկական կոտորածների և տեղահանությունների վերաբերյալ, և մեջբերել Ջ. Բրայսի կատարած վերլուծություններից: «Գերմանիան, Թուրքիան և Հայաստանը» (Germany Turkey and Armenia) անունը կրող և Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված դաժանություններին վերաբերող գերմանական և այլ աղբյուրների ապացույցների ընտրանին[7] ևս իր ուրույն տեղն է գտել օգտագործված աղբյուրների շարքում: Լեմկինը արժեքավոր տեղեկություններ է քաղել Հերբերտ Ադամս Գիբբոնսի «Ժամանակակից պատմության սև էջը» (The Blackest Page of Modern History) գրքից[8]: Գիբբոնսը աշխատել է «Նյու Յորք Թայմս» թերթի արտասահմանյան թղթակից և իր վաղ կարիերան անցկացրել է Թուրքիայում: Իր այս գրքում նա իրական փաստերի հիման վրա նկարագրել է հայերի բռնազաղթը և ցեղասպանությունը: Լեմկինը օգտվել է նաև Մկրտիչ Գաբրիելյանի «Հայաստանը՝մի նահատակ ազգ» (Armenia: A Martyr Nation) գրքից[9], որում հեղինակը համառոտ կերպով շարադրում է Հայոց պատմությունը վաղ շրջանից և հասցնում մինչև համիդյան ջարդեր ու երիտթուրքերի

[3] "Rev. H.H. Jessup Dead," NewYorkTimes. 1910-04-29.(*http://query.nytimes.com/mem/ archive-free/pdf?res=9F07E1DE1530E233A2575AC2A9629C946196D6CF).*

[4] **George Sale**, The preliminary discourse to the Koran , F. Warne (1921).

[5] **Frederick Davis Greene,** The Armenian Crisis in Turkey, G. P. Putnams Sons, The Knickerbocker Press, London, 1895.

[6] **Viscont Bryce,** Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, G. P. Putnams Sons, The Knickerbocker Press, London 1916.

[7] Germany, Turkey and Armenia, J.J Keliher and Co., London 1917.

[8] **Herbert Adams Gibbons,** The Blackest Page of Modern History, G. P. Putman's Sons, New York and London 1916.

[9] **M. C. Gabrielyan,** Armenia: A Martyr Nation, London, 1918.

կողմից Հայոց ցեղասպանության իրականացում: Ձեռագրի այս ենթաբաժնում օգտագործվել են նաև մամուլի հրապարակումներ[10] և այլ աղբյուրներ:

Ալաբամայի համալսարանի պրոֆեսոր Ստիվեն Ջեկոբսը իր *«Ռաֆայել Լեմկինը և Հայոց ցեղասպանությունը»* հոդվածում ուսումնասիրելով Գրքաչափ ձեռագիրը ներկայացրել է իր բնորոշումը ենթաբաժնում տեղ գտած որոշ դիտարկումների մասին: Ջեկոբսը մասնավորապես նշել է. «Լեմկինը ձեռագրի «Սպանելու մտադրություն. ո՞վ է մեղավոր» վերնագրով հատվածում անողոք և զայրալից քննադատության է ենթարկում թուրքերին ու գերմանացիներին: Նա խիստ պախարակում է նաև Ղուրանը»[11]:

Լեմկինը հետևյալ խոսքով է սկսում ձեռագրի այս ենթաբաժինը. «Հայերի հետապնդումը՝որպես ուժեղ քրիստոնեա տարր՝մահմեդական տարածաշրջանի սրտում, անխուսափելի էր, քանի որ Ղուրանի հիմնարար սկզբունքները ուղղակի հակառակ էին Քրիստոսի ուսմունքին»[12]:

Ապա Լեմկինը անդրադառնում է Ղուրանի սկզբունքին, թե մահմեդականությունից բացի մյուս կրոնները պետք է ոչնչացվեն, և ներկայացնում մի աղոթք, որը օգտագործվում էր Թուրքիայում և Կահիրեի Ազհար համալսարանում տասը հազար մահմեդական ուսանողների կողմից. «Օ՛, Ալլահ, ոչնչացրա անհավատներին ու բազաստվածներին, քո թշնամիներին և կրոնի թշնամիներին: Օ՛, Ալլահ, դարձրա նրանց երեխաներին որբեր, պղծիր նրանց բնակավայրերը, և կարող ես սայթաքեցնել նրանց ոտքերը, ու նրանց հարստությանը որպես ավար տուր մահմեդականներին»[13]:

Ղուրանի որոշ ուսմունքներ, ըստ Լեմկինի, ազդեցությունն են թողել թուրքերի արարքների վրա: Ձեռագրում հատվածներ են բերվում Ղուրանից, որոնցում առկա են անհավատների դեմ պատերազմելու և նրանց սպանելու դրույթներ. «Օ՛, իրական հավատացյալներ պատերազմ եք սկսել այնպիսի անհավատների դեմ, որոնք որ մոտիկ են ձեզ, և թույլ տվեք նրանց խստություն գտնել ձեր մեջ» (գլուխ 5): «Օ՛, մարգարե, պատերազմ սկսիր անհավատների դեմ և անողոք եղիր նրանց նկատմամբ և նրանց բնակարաններում կլինի դժոխք» (գլուխ 9): «Տեր ոչնչացրու հրեաներին և քրիստոնյաներին»,-Մուհամեդի վերջին աղոթքը նախքան իր մեռնելը»[14]:

Ձեռագրի ենթաբաժնում Ղուրանից արված այս մեջբերումներից պարզ է դառնում, որ Լեմկինը այն կարծիքին էր, թե Օսմանյան կայսրության կողմից հայերի կոտորածների և Հայոց ցեղասպանության իրագործման հիմքում ընկած են առավելապես կրոնական դրդապատճառներ և հետևաբար պատահական չէ նրա հետևյալ միտքը. «Մահմեդականության պատմությունը անընդհատ պատերազմ է քրիստոնեության դեմ. հայերը կոտորվում և հետապնդվում էին քրիս-

[10] **Gochnag**, New York, september 4, 1915, Frankfurter Zeitung, October 9, 1915, New York Herald, October 6, 1915, և այլն:

[11] **Steven L.** Jakobs, Raphael Lemkin and the Armenian Genocide, Richard Hovhannisyan, Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide, p.130.

[12] **Raphael Lemkin** Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 85, (*http://digifindingaids.cjh.org/?pID=10920*).

[13] **Jesup**,"The Mohammedan Missionary. Problem," Presbyterian Board of Publication, Philadelphia, p. 31.

[14] **Raphael Lemkin** Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 86, (*http://digifindingaids.cjh.org/?pID=10920*).

տոնեություն ընդունելու պահից: 1890-ական թվականների կոտորածները կրոնական էին իրենց բնույթով, չնայած սուլթանը բավականին խելացի էր իր քրիստոնյա հպատակների դեմ բացահայտ պատերազմ մղելու հարցում՝ իր մարտավարության համար առանց արտաքին աշխարհում արդարացում փնտրելու: Եվրոպական և բրիտանական կառավարությունների համար հարմար էր ընդունել սուլթանների՝ հայերի դեմ ուղղված մեղադրանքները և ձևացնել, թե հավատում են նրանց ապստամբությանը, քան ընդունել, որ նրանք հալածվում են միայն կրոնական պատճառներով»[15]:

1890-ական թթ. հայերի կոտորածները Լեմկինը պայմանավորում է նաև այն հանգամանքով, որ Աբդուլ Համիդ II-ը կարողացավ օգտվել ստեղծված բարենպաստ միջազգային իրավիճակից՝ այն ծառայեցնելով հայերի կոտորածներ կազմակերպելու իր մտադրության իրականացմանը. «Սուլթան Աբդուլ Համիդ II-ը համոզված էր, որ չկա համաձայնություն տերությունների միջև: Եռյակ միությունը, որը կազմում էին Իտալիան, Ավստրոհունգարիան և Գերմանիան, չեն ընդդիմանա իր քաղաքականությանը: Գերմանական մամուլը այնպիսի տպավորություն էր ստեղծել, որ թուրքական կառավարությունը հայերի կողմից գահընկեց լինելու եզրին է և սուլթանը պարզապես փորձում է փրկել կայսրությունը»[16]: Գերմանական մամուլում հայերի կոտորածների մասին իրականությունը թաքցնելու խնդրի վերաբերյալ Լեմկինը ներկայացնում է Յոհաննես Լեփսիուսի այն միտքը, թե գերմանական մամուլը կողմնակալ տեղեկություններով էր լցված և Օսմանյան կայսրության կողմից ցեղասպանական գործողությունները անհայտ էր Գերմանիայում[17]: Որպես լրացուցիչ փաստարկ՝ նա դիտարկում է 1895թ-ի հունվարի 7-ին Թուրքիայից ուղարկված մի նամակ[18], որում նշվում է, թե մեկ տասնամյակ է՝ թուրքական վայրագությունները շարունակվում են և Թուրքական ղեկավարությունը նպատակ ունի ոչնչացնել կայսրության քրիստոնյա բնակչությանը:

Մեկ այլ տեսանկյունից հայերի կոտորածները Լեմկինը համարում էր օսմանյան կրոնաքաղաքական համակարգին բնորոշ տարր, որտեղ քրիստոնյաները զրկված էին իրենց անհրաժեշտ իրավունքներից. «Անհերքելի է, որ Օսմանյան կառավարությունը կրոնա-քաղաքական համակարգ էր: Թուրքական բանակը բացառապես մամեդական բանակ էր, ազգային տոները մահմեդական տոներ էին, օրենքները հիմնվում էին Ղուրանի և մահմեդական ավանդույթի վրա, դատավորները մահմեդականներ էին, և երբեմն վկայություն տալու գործընթացը կրոնական գործողություն էր: Քրիստոնյաներին թույլատրվում էր ցուցմունք տալ, սակայն դա չէր նշանակում, որ նրանց վկայությունը համարվում էր վավերական»[19]:

Լեմկինի համոզմամբ սուլթանի քաղաքականությունը հայերի նկատմամբ նպատակ էր հետապնդում ազատվել կայսրությունում ապրող ոչ մահմեդական տարրից, որը վնասում էր կայսրության միատարրությունը, և միշտ ճնշումների դիմել չէր կարելի: Սուլթանի «թևավոր» խոսքերը՝ «Հայկական հարցից ազատվե-

[15] Նույն տեղում:

[16] Նույն տեղում, էջ 87:

[17] Նույն տեղում, էջ 88:

[18] The Armenian Crisis in Turkey, Frederick Devis Greene, New York, London. p. 33-35.

[19] Նույն տեղում, էջ 89:

լու ճանապարհը հայերից ազատվելն է» կատարյալ կիրառման մեջ դրվեցին, ինչի արդյունքները աղետալի էին հայերի համար[20]:

Շարունակելով իր միտքը՝ Լեմկինը այն խնդրի շուրջ, թե ինչո՞վ էր պայմանավորված, որ սուլթանը սկսեց քրդերին օգտագործել հայերի զանգվածային կոտորածները կազմակերպելիս, հետևյալ դիտարկումն է անում. «Աբդուլ Համիդը այն տեսությունն է առաջ քաշում, որ իր կայսրության բռի մեջ տարբեր ազգերի պահելու համար ամենալավ մեթոդը պետք է լինի այն, որ նրանք մեկը մյուսին կոտորեն: Վախենալով, որ խելացի և ակտիվ հայերը կարող են ձգտել անկախության, ինչպես բուլղարացիները՝ նա մշակեց նոր եղանակներ նրանց ճնշելու համար քրդերի զինվորագրման միջոցով, ում մշտապես զայրացնում էին հայերի լավ մշակված արտերը, ովքեր ներխուժում էին իրենց արոտավայրեր իրենց ոչխարներով և այծերով»[21]:

Հաջորդ դրվագում Լեմկինը տեղեկություններ է ներկայացնում 1890-ական թթ-ներին Աբդուլ Համիդի կատարած հայերի ջարդերի մասին, ապա անդրադառնում է երիտթուրքերի իշխանության գալու հանգամանքին և ներկայացնում նրանց քաղաքականությունը հայերի նկատմամբ. «Երիտթուրքերը ցանկանում էին ունենալ հայ բնակչության ոչնչացման փառքը: Նրանք ընտրեցին հարմար պահ, քանի որ ընդունակ էին պատասխանատվությունը թողնել տապալված սուլթանի վրա»[22]:

Ըստ Լեմկինի՝ պատահական չէ, որ Թուրքական կառավարությունը պատերազմ հայտարարելուց անմիջապես հետո և նախքան հայերի կոտորածները սկսելը, սրբազան պատերազմ (ջիհադ) հայտարարեց՝նպատակ ունենալով գրգռել մահմեդականների կրքերը ամբողջ աշխարհով ընդդեմ այն տերությունների, որոնք կռվում էին թուրք-գերմանական դաշինքի դեմ[23]:

Թուրքական իշխանությունների ինքնավստահ կեցվածքը Լեմկինը պայմանավորում է Գերմանիայի՝ որպես հուսալի և հզոր դաշնակցի առկայությամբ. «Թուրքական կառավարությունը զգում էր, որ Գերմանիայի հետ՝որպես իր դաշնակցի, առանց ապագայի նկատմամբ վախ ունենալու կարող է իրականացնել ամբողջական ոչնչացման պլանը, և համոզված էր, որ (Գերմանիան) հաղթելու է պատերազմում ու պաշտպանելու է Թուրքիային Արևմտյան տերությունների և Ռուսաստանի վրեժխնդրությունից»[24]:

Լեմկինը հավաստում է, որ թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրականացված հանցագործությունը մշակված էր, համակարգված, և ապացույցներ կան դրանց իրականացման 50 վայրում նույնական ընթակարգի վերաբերյալ: «Միայն երկու դեպք է հայտնի, երբ պաշտոնյաները հրաժարվեցին իրականացնել կառավարության հրահանգները, և այդ երկու պաշտոնյաները փոխարինվեցին կառավարության քաղաքականության փութաջան աջակիցներով»[25]:

Հայերին ոչնչացնելու վերաբերյալ թուրքական իշխանությունների ծրագրի վերաբերյալ Լեմկինը փաստում է, որ երիտթուրքերը նախապես մտածել էին, թե

[20] Նույն տեղում, էջ 90:
[21] Նույն տեղում:
[22] Նույն տեղում էջ 90-91:
[23] Նույն տեղում էջ 91:
[24] Նույն տեղում էջ 92:
[25] **Arnold Toynbee**, American Committees Report, Armenian Atrocities: The Murder of a Nation, with a speech delivered by Lord Bryce in the House of Lords, Hoddehr & Stouqhton, New York, London, Toronto,1915, p. 29.

ինչպես կարելի է մեղադրել հայերին ապստամբություն բարձրացնելու մեջ. «Երիտթուրքերը խրախուսում էին հայերին ընկերակցություններ կազմակերպելու և հրազեն ունենալու խնդրում, որը նախապես մտածված ծրագիր էր, ինչը և իրականացվեց 1915թ-ին, երբ հայերին սկսեցին մեղադրել ապստամբություն բարձրացնելու հարցում, իսկ հայերի կողմից հրազենի տիրապետումը դրա ապացույցը համարվեց»[26]: Լեմկինը այս ամենի շուրջ ներկայացնում է նաև Նյու Յորքում Թուրքիայի գլխավոր հյուպատոսի արած հայտարարությունը. «Որքան էլ որ ցավալի լինեն այս տանջալից իրադարձությունները, վերջին հաշվով մենք կարող ենք ասել, որ հայերը պետք է միայն իրենց մեղադրեն»: Գլխավոր հյուպատոսը իր հայտարարության մեջ բացատրում է, որ հայերը հեղափոխություն են ծրագրել, և սպանվել են թուրքական զինվորների կողմից այն բանից հետո, երբ բռնվել են «անձնական զենքերը ձեռքներին օրինական իշխանություններին դիմադրելիս»[27]:

Լեմկինը տեղեկացված էր Օսմանյան կայսրությունում հայերի ունեցած դերակատարությունից և բնորոշ հատկանիշներից, ուստի նա գրում է. «Հայերը ստիպված էին հիմնվել իրենց մտավոր ունակությունների և ունեցած հմտությունների վրա գոյատևելու համար մի երկրում, որը նրանց տրամադրում է այնքան քիչ իրավունքներ, և նրանք, թուրքերի մեջ լինելով, գրեթե մենաշնորհ էին ձեռք բերել առևտրում, ինչի արդյունքում վաստակում էին Թուրքիայի հարստության մեծ մասնաբաժինը»[28]: Ապա նա մեջբերում է կատարում գերմանական «Frankfurter Zeitung»-ի 1915թ-ի հոկտեմբերի 9-ի համարից, որում նշվում է, թե հայերը, ունենալով բարձր ինտելեկտ և գերազանց առևտրային ունակություններ, փող էին կուտակում իրենց գրպաններում, մինչդեռ թուրքերի աղքատությունը աճում էր: Դա է պատճառը, որ հայերը ամենաատելի մարդիկ էին Արևելքում, շատ դեպքերում ոչ արդարացիորեն, և անարդար ընդհանրացման միջոցով[29]:

Հետաքրքրական է, որ Լեմկինը զուգահեռներ է տանում Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի միջև՝ հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում համեմատելով Գերմանիայում հրեաների դրության հետ. «Հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում շատ նման էր հրեաների դրությանը Գերմանիայում: Հայերը կայսրության աշխատասեր քաղաքացիներն էին, արհեստի և մտավոր ունակությունների տաղանդով: Նրանք առևտրի մեջ ունեին նույն ձիրքը, ինչ հրեաները, և ասիական Թուրքիայում հայերն էին, ովքեր հմուտ աշխատասեր և բիզնեսի մարդիկ էին: Անատոլիայի յուրաքանչյուր քաղաք ուներ իր բարեկեցիկ հայկական թաղամասը, տեղական վարպետության, մտավոր կյանքի և առևտրի, ինչպես նաև Կոստանդնուպոլսի և Եվրոպայի հետ քաղաքի առևտրական հարաբերությունների կենտրոնը»[30]:

Անդրադառնալով Հայերի ցեղասպանության իրագործման հարցում Գերմանիայի մեղսակցության խնդրին՝ Ռաֆայել Լեմկինը նշում է, թե ապացույցներ կան այն մասին, որ հայերի հալածանքները աջակցություն էին գտնում Գերմանիայում: Այս հարցում գերմանական քաղաքականությունը տպավորիչ ձևով

[26] Նույն տեղում էջ 93:
[27] **Herbert Adams Gibbons**, The Blackest Page of Modern history , Ney York, 1916, p. 30-31.
[28] Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 94. (*http://digifindingaids.cjh.org/?pID=10920*).
[29] **Arnold Toynbee**, նշվ. աշխ. էջ 115:
[30] Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 93. (*http://digifindingaids.cjh.org/?pID=10920*).

բնորոշելու համար նա մեջբերում է Հերբերտ Ադամս Գիբբոնսի հետևյալ մտքերը. «Հայերը էական գործոն էին Փոքր Ասիայում... Նրանք, կարծես թե, խոչնդոտ էին գերմանական գերիշխանության հաստատման համար: Որպես Փոքր Ասիայի առևտրական և գյուղատնտեսական ներքին տարր՝ հայերը ընդունակ էին կանգնել եվրոպացի գաղութարարների ներթափանցման դեմ, և կանգնած էին Անատոլիայի գերմանացման ծրագրերի ճանապարհին»[31]:

Հայոց ցեղասպանության իրագործման հարցում Գերմանիայի մասնակցության վերաբերյալ փաստերի ուսումնասիրության արդյունքում Լեմկինը եզրակացնում է, որ Գերմանիան հնարավորություն ուներ կանխելու թուրքական իշխանությունների կողմից իրականացված վայրագությունները, սակայն դրա փոխարեն ոչ միայն չկանխեց, այլ ավելի էր խրախուսում Հայերի կոտորածները. «1915թ-ի վայրագությունները սկսելուց 4 ամիս հետո Գերմանիայի կանցլերը դիմել է Ռայխստագին շնորհավորելու իր հայրենակիցների՝ «Թուրքիայի չքնաղ վերածնման» առիթը: Երբ Թուրքիան պատերազմի մեջ մտավ, իրեն Գերմանիայի իշխանության տակ դրեց, և կախված էր իր դաշնակցի զինամթերքից և ռազմական ղեկավարությունից: Եթե Գերմանիան ցանկանար, կարող էր կանգնեցնել վայրագությունները՝ պարզապես Թուրքիային զրկելով աջակցությունից»[32]:

Ապա անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության իրականացման հարցում Գերմանիայի ծրագրերին և ներկայացվում է «Կոչնակի» (Gotchnag) սեպտեմբերի 4-ի համարում տեղ գտած մի հոդված. «Օտարերկրյա թղթակիցը հաղորդում է, որ տեղական նահանգապետերը, ովքեր քաջություն չունեին կատարելու հայերի արտաքսման հրամանը, խնդիրը իրենց վրա էին վերցնում գերմանացի պաշտոնյաները: Վերջիններս մասնակցում էին արտաքսման ծրագրին և կրկնապատկում դրա դաժանությունը: Թղթակիցը այդպիսի փաստերի հիման վրա հայտարարում է, որ հայերի ոչնչացման պլանը մտածվել էր գերմանացիների կողմից և իրագործվել նրանց խորհուրդներով»[33]: Նույնիսկ նմանատիպ մտադրությունների պարագայում Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Կոմս Բերնսդորֆը ընդհանրապես հերքում էր վայրագությունների իրականացումը. «Ենթադրյալ վայրագությունները Օսմանյան կայսրությունում թվում են որպես պարզ հորինվածքներ»[34]:

Զեռագրի այս ենթաբաժնի վերջնամասում Ռաֆայել Լեմկինը նշում է , որ թուրքական կառավարությունը նունիսկ հրաժարվում էր հայերին օգնություն տրամադրելու առաջարկներից. «Համաձայն Նյու Յորք Թայմսի 1915թ-ի հոկտեմբերի 19-ի համարի՝ թուրքական կառավարությունը տեղեկացրել է Պետքարտուղարությանը Վաշինգտոնում, որ ամերիկյան Կարմիր խաչին չի թույլատրվում ուղարկել վիրաբույժներ և բուժքույրեր ուղարկել Օսմանյան կայսրությունում հայերին օգնելու համար: Թուրքերը ոչ միայն արգելեցին Ամերիկյան Կարմիր Խաչի վիրաբույժներին, բուժույրերին և օգնության գործակալներին, այլև բոլոր չեզոք օտարերկրացիներին»[35]:

---

[31] **Herbert Adams Gibbons**, նշվ աշխ. 62-63:

[32] Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p.95. (*http://digifindingaids.cjh.org/?pID=10920*).

[33] Նույն տեղում, էջ 96:

[34] **Arnold Toynbee**, նշվ. աշխ. էջ 115, (Հայտարարությունը տպագրվել է «New York Herald»-ում)

[35] Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p.98. (*http://digifindingaids.cjh.org/?pID=10920*).

Վերը նշված փաստերից ելնելով քիչ կասկած կարող է լինել, որ ոչնչացման ծրագիրը լավ մտածված էր և իրագործվեց թուրքական կառավարության կողմից Գերմանիայի կողմից ամբողջովին ճանաչման և աջակցության պայմաններում[36]:

Ամփոփելով նշենք հետևյալ եզրակացությունները.

• Ռաֆայել Լեմկինը Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կիրառվող հալածանքները պայմանավորում է գլխավորապես կրոնական պատճառներով, քանի որ ըստ նրա՝ Ղուրանի հիմնարար սկզբունքները հակասում են քրիստոնեության ուսմունքին:

• Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ վարվող քաղաքականությունը Լեմկինի պատկերացմամբ նպատակ էր հետապնդում բնաջնջել կայսրությունում ապրող ոչ մահմեդական ժողովրդին, որոնք վնասում էին կայսրության միատարրությունը: Օսմանյան իշխանությունները իրենց նպատակին հասնելու համար մահմեդականներին գրգռում էին հայերի դեմ և նախապես պլանավորել էին իրենց գործողությունները:

• Հայերի կոտորածների անպատիժ կազմակերպումը Լեմկինը պայմանավորում է արտաքին նախադրյալների առկայությամբ, որը հմուտ ձևով օգտագործվեց օսմանյան իշխանությունների կողմից:

• Լեմկինի դիտարկմամբ Օսմանյան կայսրության կողմից Հայոց ցեղասպանության իրագործումը տեղի է ունեցել հիմնականում Գերմանիայի մեղսակցության և աջակցության պայմաններում:

• Լեմկինը գտնում է, որ Օսմանյան կայսրությունում հայերի՝ որպես առևտրում և այլ ոլորտներում ձեռք բերած հաջողությունները կայսրությունում հայերի նկատմամբ թշնամության առաջացման հիմքեր ստեղծեցին: Իսկ Գերմանիան հայերին դիտարկում էր որպես խոչնդոտ Օսմանյան կայսրությունը գաղութացնելու հարցում:

• Ըստ Լեմկինի՝ Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջումը մշակված և համակարգված գործընթաց էր, այսինքն՝ առկա էր հայերին ոչնչացնելու մտադրությունը, իսկ 1948թ-ի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի համաձայն՝ մտադրության առկայությունը անհրաժեշտ բաղադրիչ է ցեղասպանության հանցագործությունը բնորոշելու համար:

Բանալի բառեր-Ռաֆայել Լեմիկին, Գրքաչափ ձեռագիր, Ղուրան, Աբդուլ Համիդ II, հայերի կոտորածներ, Գերմանիա, երիտթուրքեր, ցեղասպանական գործողություններ:

Նարեկ Պողոսյան, Ռաֆայել Լեմկինի դիտարկումները հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ (Book-Length) Ձեռագրի «Սպանելու մտադրություն: Ո՞վ է մեղավոր» ենթաբաժնում-Հոդվածում վերլուծվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ Լեմկինի գրած «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագրի» «Սպանելու մտադրությունը, ո՞վ Է մեղավոր» ենթաբաժինը, որում հեղինակը ուշագրավ դիտարկումներ է անում Հայոց ցեղասպանության իրագործման դրդապատճառների մասին և նշում, թե ովքեր են այդ հանցագործության իրագործման պատասխանատուները: Լեմկինը Հայոց ցեղասպանու-

[36] Նույն տեղում, էջ 98:

թյան իրագործումը պայմանավորում է Օսմանյան կայսրության իշխանությունների՝ կայսրությունում ապրող ոչ մահմեդական հայերին բնաջնջելու մտադրությամբ և արտաքին նախադրյալների առկայությունը հմուտ ձևով օգտագործելու հանգամանքով: Էմկինը մատնանշում է, որ Հայոց ցեղասպանության իրագործումը տեղի է ունեցել Գերմանիայի մեղսակցության և աջակցության պայմաններում:

Нарек Погосян, Наблюдения Рафаэля Лэмкина в "Намерение убийства, кто виноват?" подразделе рукописи "Рукопись по размеру книги про армянской резни"-В статье анализируется подраздел "Намерение убийства, кто виноват?" рукописи Рафаэля Лэмкина "Рукопись по размеру книги про армянской резни", посвященный теме Геноцида армян, в котором автор делает интересные наблюдения о мотивах Геноцида армян и указывает на тех, кто несет ответственность за осуществление преступления. Осуществление Геноцида армян Лемкин связывает с намерением уничтожить не мусульманских армян живущих в Османской империи. Виною того было и умение использования внешнеполитической ситуации. Лемкин указывает на то, что в Геноциде армян произошел при поддержке Германии.

Narek Poghosyan, Raphael Lemkin observations on the subsection "Intent to kill- Who is guilty?" of "Turkish Massacre of Armenians - Book-Length Manuscript"-The article considers the subsection "Intent to kill- Who is guilty?" of Raphael Lemkin's "Turkish Massacre of Armenians - Book-Length Manuscript", dedicated to the topic of the Armenian Genocide, in which the author reveals interesting remarks on the causes of the Armenian genocide, and indicates those, who are responsible for this crime. The reasons for committing genocide Lemkin determines the objectives of the authorities of the Ottoman Empire, which included the extermination of the non-Muslim Armenians of the Ottoman Empire as well as flexible usage of the foreign political circumstances. Lemkin indicates that the Armenian genocide occurred in circumstances of the complicity and support of Germany.

ՎՐԱՍՏԱՆԻ ԷԿԶԱՐԽ ՆԻԿՈՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՅԱՆ

Անտեսելով վրաց բարձրաստիճան հոգևորականության պահանջները՝ (վերականգնելու վրացական եկեղեցու դեռևս 1811թ. կորցրած ինքնավարությունը), ռուսական ուղղափառ եկեղեցու Սուրբ Սինոդը 1906թ. հունիսին Վրաստանի նոր էկզարխ նշանակեց արքեպիսկոպոս Նիկոնին: Նորանշանակ էկզարխը լավ էր հասկանում վրացական տրամադրությունները, ինչպես նաև պատկերացնում էր այն փորձությունները, որոնց միջով ստիպված էր անցնելու, մանավանդ, որ նրա նշանակումից հետո, երբ դեռ չէր էլ ժամանել Վրաստան, վրաց հոգևորականության համագումարը հեռագիր ուղարկեց Պետերբուրգ, որով բողոքարկում էր Նիկոնի նշանակումը[1]: Ե'վ Նիկոնը, և' Սուրբ Սինոդը նախազգուշացվեցին նաև վրացական հեգևորականության կողմից, որպեսզի էկզարխը Կովկաս չժամանի: Նիկոնին ուղղված նամակում ակներև էր վրաց հոգևորականության վճռական տրամադրվածությունը. «Ձերդ վեհափառություն, Ձեզ, որպես ուղղափառ եկղեցու հովվապետի, ծանոթ են սրբազան կանոները, որոնք եպիսկոպոսին արգելում են խառնվելու օտար, իրեն չպատկանող թեմի գործերին…: Ռուսական Սինոդը արդյոք իրավունք ունի իր հայրապետներին ուղարկել շրջաններ, որոնք իրեն չեն ենթարկվում, որի լեզուն նա չգիտի: Եթե Դուք հանգում եք դրան, որ 1811թ. վրացական եկեղեցին ընդունել է ռուսական Սինոդի իշխանությունը, ապա դա հիմք չի ծառայում, որ Դուք լինեք վրացական եկեղեցու գլուխը, Դո'ւք, որին չե'ն ընտրել և չե'ն ընդունել: Նկատի ունենալով այս ամենը՝ խնդրում ենք Ձեզ, Ձեր վրա չվերցնել եկեղեցու ղեկավարումը, չխախտել սուրբ կանոները, որոնք մենք, ինչպես և Դուք պարտավոր եք պահպանել և պաշտպանել, և Ձեր դեմ չտրամադրել դեռևս ուղղափառությանը հավատարիմ վրաց ժողովրդին»[2]: Այնուհետև վրաց հոգևորականությունը զգուշացնում է Նիկոնին տխուր իրադարձությունների առաջացման դեպքում չմեղադրել վրաց ժողովրդին:

Չնայած այս բացահայտ սպառնալիքներին, այնուամենայնիվ, Նիկոնը՝ պաշտոնը ստանձնելու լուրջ մտադրությամբ, 1906թ. օգոստոսի 26-ին ժամանեց Թիֆլիս: Թիֆլիս ժամանելու նախօրեին ոստիկանությունը ձերբակալել էր ահաբեկչական խմբի, որը պատրաստվում էր պայթեցնել գնացքը: Անհաջողության դեպքում ահաբեկիչները պատրաստվում էին ռումբ նետել ամբոխի մեջ, եթե եպիսկոպոսին դիմավորեին աղ ու հացով: Երկաթուղային կայարանում նրան դիմավորեց ռուս հոգևորականության պատվիրակությունը՝ վրաց հագևորականության բացակայությամբ: Փաստորեն սկսվեց բացահայտ բոյկոտ Նիկոնի կառավարման դեմ:

Սուրբ Սինոդի նոր օբեր-դատախազ Պյոտր Պետրովիչ Իզվոլսկին (1906-1909թթ.) վրաց հոգևորականության բոյկոտը բացատրում էր նրանով, որ Նիկոնը «ծագումով ռուս էր և ոչ թե վրացի»: Նա հանգել էր այն համոզմանը, որ շարժման

[1] РГИА, ф. 1579, оп. 1, д. 157, л. 22 об.

[2] Всеподданнейший отчёт Обер-прокурора Святейшего Синода по ведомству православного исповедания за 1905-1907гг, Синодальная типография», СПБ, 1910, с. 167-168.

իրական ոգեշնչողները նրանք էին, ովքեր ոչ մի ընդհանրություն չունեին եկեղեցու հետ, ուստի և ողջ շարժումը ուներ անցողիկ նշանակություն, որը քայլ կամ միջոց էր քաղաքացիա-վարչական ինքնավարության հասնելու համար[3]:

Սիոնսկի տաճարում, պաշտոնական ընդունելության ժամանակ, էկզարխ Նիկոնին դիմավորեցին միայն ռուս քահանաները և մեկ վրացի՝ Գորիի եպիսկոպոս Պետրոսը (Կոնչոշվիլի), որն իր պաշտոնական ողջույնի խոսքում բացահայտորեն սպառնաց էկզարխին՝ կոչ անելով նրան «խաղախությամբ» ապրել վրացիների հետ, քանի որ Թբիլիսում կա նաև Կուր գետը, ուր նետել են անգամ միտրոպոլիտներին: Իր պատասխան ելույթում Նիկոնը հանգիստ և հավասարակշռված շարադրեց Վրաստանում իր գործունեության ծրագիրը: Նա ասաց, որ վրացական եկեղեցու ինքնավարության հարցի լուծումը կախված չէ իրենից, պատկանում է Ժողովի որոշմանը և որ անհրաժեշտ է բազմակողմանի ուսումնասիրել հարցը՝նրա ճիշտ հանգուցալուծմանը նպաստելու համար[4]: Նիկոնը ընդգծեց նաև, որ ինքնավարությունը դոգմա «և Աստծո պատվիրան չէ», իսկ նրա հաստատումը չի տանում «հավերժ երջանկության»: Իր ելույթը նորանշանակ էկզարխը ավարտեց հետևյալ խոսքերով. «Փրկության գործում ամեն ինչ կախված է Աստծո պատվիրանների պահպանումից, այլ ոչ թե այս կամ այն քրիստոնեական ազգի եկեղեցական անկախությունից»[5]: Նրա իսկ խոսքերով ցանկացած միջոցով ձգտելով հասնել ինքնավարության՝նրա կողմնակիցները, հանուն անհնարի, զոհաբերվում էին նրանով, ինչը կարևոր էր փրկության համար:

Բնական է, որ նման հայտարարությունները, որքան էլ զուտ կանոնական տեսանկյունից ճիշտ լինեին, դժվար թե դուր գային վրաց եկեղեցական ծառայողներին: Բոյկոտ հայտարարելով նրան՝ վերջիններս փորձում էին անտեսել էկզարխին և վրացական թերթերում չեղած փաստեր հրատարակելով՝ նրա դեմ դուրս հանել վրաց ժողովրդին: Չնայած դրան, մամուլում գտնվեցին անկախ թերթեր, որոնք գնահատեցին Նիկոնի առաջին իսկ քայլից ցուցաբերած հեռատեսությունը, իմաստությունը և մեծ համբերությունը: «Գոլոս Կավկազա» թերթը խիստ քննադատեց վրացական հոգևորականությանը բոյկոտի համար հայտարարելով, «որ իրենց անտակտ պահվածքով, իրենց զուտ ցուցադրական որոշումներով հոգևորականությունը միայն ամրացնում է այն համոզմունքը, որ նրանց ղեկավարում է ոչ թե բարության ցանկությունը իրենց հոտին, այլ քաղաքական ձգտումները»[6]:

Շարունակելով բացահայտ պայքարը վրացական եկեղեցու ինքնավարության վերականգման համար՝ 1906թ. հոկտեմբերի 12-14-ը Թիֆլիսում գումարվեց մասնավոր խորհրդակցություն՝վրաց եպիսկոպոսներ Լեոնիդի (Իմերեթիա), Կիրիոնի (Սուխում), Գեորգիի (Գուրիա-Մեգրելիա) և Պետրոսի (Ալավերդի) մասնակցությամբ, որոնք լիազորված էին իրենց թեմերի հոգևորականության կողմից: Խորհրդակցությունը որոշում կայացրեց, մինչև ինքնավարության մասին հարցին վերադառնալը, էկզարխի հետ ունենալ միայն վարչական հարաբերություններ:

---

[3] Նույն տեղում, էջ 167, 169:

[4] **Софийский Л.И.,** Высокопреосвященный Никон, архиепископ Карталинский и Кахетинский, екзарх Грузии (1861-1908), ‘Синодальная типография’, СПБ, 1909, с. 115-116.

[5] **Верт Пол,** Православие, инославие, иноверие: очерки по истории религиозного разнообразия Российской империи, «НЛО», Москва, 2012, с. 87.

[6] Նույն տեղում:

Չնայած իր նկատմամբ ցուցաբերած վրաց հոգևորականության արհամարական վերաբերմունքին՝ Նիկոնը գործերը վարում էր այնպես, ասես չէր էլ նկատում, որ իրեն բոյկոտել են: Երբ Վրաստանում Ռուսաստանի դեմ բոլորը ատելությամբ էին լցված, նա վրացական եկեղեցու նկատմամբ բարի նպատակներ որդեգրեց: Նիկոնը դրսևորեց մեծ հետաքրքրություն վրաց ժողովրդի և եկեղեցու նկատմամբ: Նա Թիֆլիսի գրադարանից դուրս բերեց բոլոր այն գրքերը, որոնք վերաբերում էին Վրաստանի քաղաքացիական և եկեղեցական պատմությանը, ինչպես նաև ձեռք բերեց վրացերեն լեզվով դասագրքեր, որպեսզի տիրապետեր նրան: Էկզարխը ցանկանում էր, որ Վրաստանում խաղաղության ձգտումները զատվեին կրոնական նկրտումներից և ինքնավարության հարցը դադարեր քաղաքական կրքերի գործիք լինելուց: Պառակտումների դեմ պայքարի հիմնական միջոցը, ըստ Նիկոնի, կշռադատված եկեղեցական քաղաքականությունն էր: Նա իր ուշադրությունը սևռեց էկզարխության իրական խնդիրների վրա, որոնք շատ էին: «Ինքնավարները» Ռուսաստանին մեղադրում էին վրացական մոռացված սրբավայրերի ավերման մեջ: Ուստի ռուս եպիսկոպոսի նախաձեռնությամբ սկսվեց վրացական հնագույն եկեղեցական հուշարձանի՝ Մծխեթիի վերանորոգումը, որի համար Նիկոնը զգալի միջոցներ խնդրեց Սուրբ Սինոդից: Ինչպես նաև նախաձեռնեց պատարագային գրքերի վերանայումը և ճշգրտումը վրացերեն լեզվով, որի համար ձևավորվեց հատուկ հանձնաժողով: Շնորհիվ նրա ջանքերի Սուրբ Սինոդը որոշեց վրացական հոգևոր դպրոցներում աստվածաբանական առարկաները դասավանդել մայրենի լեզվով: Զգալի միջոցներ հատկացվեցին եկեղեցա-ծխական դպրոցների բարելավման համար[7]: Նիկոնը ստեղծեց հանձնաժողով՝ Աստվածաշունչը վրացերենով և աբխազերենով հրատարակելու համար: Ավելին, ընդառաջ գնալով վրաց հոգևորականությանը և վրացական էկզարխության ծխերի պահանջներին՝ էկզարխը հոգևորականությանը ընտրելու իրավունք շնորհելու մասին միջնորդագիր ուղարկեց Սուրբ Սինոդին: Արդյունքում Սուրբ Սինոդը 1907թ. փետրվարի 10-ի հրամանով որոշեց, որ քահանաների պաշտոններում ընտրված թեկնածուները հաստատվեն թեմական առաջնորդների կողմից: Վերջիններս կարող էին չհաստատել նրանց և առաջարկեին ներկայացնելու այլ թեկնածություններ: Հարմար մեկին չգտնելու դեպքում եպիսկոպոսը կարող էր նշանակում կատարել իր հայացողությամբ: Ընտրության իրավունքը տարածվում էր միայն ազատ պաշտոնների վրա, ծխականները չէին կարող հեռացնել գործող հոգևորականությանը[8]: Սրանով, փաստորեն ստեղծվեց ընտրական հիմքը, ինչը աննախադեպ երևույթ էր վրացական էկզարխության պատմության մեջ: Վրացական եկեղեցու ինքնավարության հարցում էկզարխ Նիկոնի հայացքները իմաստավորված էին, քաղաքականացված չէին և ուղղակի բխում էին եկեղեցու գոյության գաղափարից: Նոր էկզարխը նպատակահարմար էր գտնում գոյություն ունեցող վրացական էկզարխության տարածքից առանձնացնել ռուսական ու հունական տարածքները և կցել դրանք ռուսական թեմերին, իսկ էկզարխության վրացական թեմերին տրամադրել ինքնավարության որոշակի մասնաբաժին: Նիկոնը այս տարբերակը փորձում էր կյանքի կոչել զգուշավորությամբ և սպասել մինչև ինքնավարության հարցը կդադարի անառողջ քաղաքական կրքերի գործիք լինելուց:

[7] **Дякин В.С.,** Национальный вопрос во внутренней политике царизма (XIX-начало XX вв.), «ЛИСС», СПБ, с. 673.

[8] Նույն տեղում, էջ 688:

Զգալով էկզարխ Նիկոնի բարի տրամադրությունը՝ վրաց հոգևորականությունը որոշեց հանել բոյկոտը և, նրան չճանաչելով որպես Վրաստանի օրինական էկզարխ, նրա հետ սկսեց մտնել եկեղեցական-վարչական հարաբերությունների մեջ: Նիկոնը կարողացավ ծանր փորձություններից և աշխատանքներից հետո իր կողմը գրավել՝ իր հանդեպ թշնամաբար տրամադրված վրաց հոգևորականությանը[9]: Փորձելով կոտրել «ինքնավարության» շարժումը՝ Նիկոնը Սուխումի եպիսկոպոս Կիրիոնին, որը ինքնավարության համար պայքարի գլխավոր շարժիչ ուժն էր, հեռացրեց Կովկասից: Ընդ որում, նա սպասեց հարմար պահի, երբ այդ մասին պահանջեցին նաև քաղաքական իշխանությունները՝ ի դեմս Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի, որը խնդրեց Կիրիոնին հեռացնել Սուխումից: Այդ ժամանակ Նիկոնը դիմեց Սուրբ Սինոդին՝ խնդրելով Կիրիոնին ընդհանրապես հեռացնել Կովկասից, բայց ոչ թե «ինքնավարության» ձգտումների համար (որպեսզի անցանկալի ռեակցիա չառաջացնեն), այլ աբխազական հասարակության շրջանում վրացական ցանկությունների արմատականացման: 1907թ. հունվարին Կիրիոնը նշանակվեց Լիտովսկի փոխանորդ, իսկ 1908թ. սկզբին հանգստի ուղղարկվեց Կուրյաժսկի վանք: Ինքնավարության շարժման մյուս առաջնորդ Իմերեթիայի եպիսկոպոս Լեոնիդին Նիկոնը տեղափոխեց Գուրիա-Մենգրելիայի թեմ[10]:

Վրացական եկեղեցու ինքնավարության լիկվիդացման Նիկոնի ջանքերը վրաց հոգևորականության ազգայնական շրջաններում բացասական ռեակցիա առաջացրեցին: Այդ ակտը դիտարկվեց որպես ազգային կարևոր ինստիտուտի կորուստ, վրաց թագավորության վերջին բաղադրամասի մահ[11]: Թերևս դա էր պատճառը, որ Թիֆլիսում շրջանառվող շշուկների համաձայն, 1908թ. Փետրվարին ինքնավարների Թիֆլիսյան բյուրոն եպիսկոպոս Կիրիոնի մասնակցությամբ, որոշեց ցանկացած միջոցով վերացնել էկզարխ Նիկոնին: 1908թ. ապրիլի 17-18-ը կրկին կայացավ ինքնավարների խորհրդակցությունը եպիսկոպոսներ Կիրիոնի, Պետրոսի, Դավիթի և այլոց մասնակցությամբ, որտեղ քննարկվեց էկզարխի սպանության հարցը:

Նախապես ստանալով ներքին գործերի նախարար Պ. Ա. Ստոլիպինի համաձայնությունը՝ 1908թ. ապրիլին, Նիկոնը Սանկտ-Պետերբուրգ ուղարկեց վրացական թեմերի վերակազմավորման մասին գաղտնի նախագիծը, որով նախատեսում էր վրացական էկզարխության կազմից առանձնացնել Բաքվի և Սուխումի թեմերը: Կապված այդ նախագծի հետ, 1908թ. ապրիլի 23-ին Նիկոնը կարգադրեց տեղեկություններ տրամադրել այդ տարածքների սահմանների, էթնոաշխարհագրական, նրա հասարակության դավանաբանական կազմի և ուղղափառ հոտի կրոնա-բարոյական վիճակի, ինչպես նաև եկեղեցիների, ժամերի և դպրոցների քանակի մասին: Այս գործողությունները պետք է սահմաններ դնեին ինքնավարների պահանջներին, որոնք հավակնում էին վրացական եկեղեցուն երբեք չպատկանող տարածքների: Փաստորեն, Նիկոնը ստիպված էր շտկելու ռուսական իշխանությունների սխալները, որոնք կուտակվել էին դեռևս անցյալ՝ XIX դարում: Այս աշխատանքները հանգեցրին նրան, որ 1908թ. գոյություն ունեցող վրացական չորս թեմերին ավելացան Ստավրոպոլի և Վլադիկավկազի թեմերը[12]:

[9] **Воронцов-Дашков И.И,** Всеподданньйшаа записка по управлению Кавказскимь краем, Тифлис, 1907, с. 23.

[10] **Дякин В.С.,**Национальный вопрос во внутренней политике царизма…., с. 673.

[11] К положению дел в грузинской церкви.-Закавказье, 1908г., 8 марта.

[12] **Пагираев Д.Д.,** Кавказский календарь на 1908 годь, Тифлись, 1907, с. 295, 296.

1908թ. մայիսի 7-ին, Սուրբ Սինոդի հանձնարարությամբ, Վրաց-Իմերեթական սինոդական գրասենյակի հիման վրա հիմնվեց գրաքննության հանձնաժողովը, որը սահմանափակելու էր Վրաստանի եկեղեցական կյանքին նվիրված հոդվածների հրատարակման հնարավորությունները: Վրացական թեմերի վերակազմավորման նախագծի ուղարկումը և այն լուրերը, թե իբր Սուրբ Սինոդը որոշել է Թիֆլիսից հեռացնել ինքնավարությանը կողմնակից բոլոր քահանաներին՝ արագացրին Նիկոնի նկատմամբ մահափորձի իրականացումը: Հատկանշական է, որ Նիկոնը գրեթե միշտ զգացել է իր կյանքին սպառնացող վտանգը և անգամ չի բացառել իր մոտալուտ մահվան հնարավորությունը: Այդ պատճառով համարյա միշտ նա կրում էր վահանակ, իսկ, երբ ընդունում էր այցելուների, դռների մոտ կանգնում էին զինված թիկնապահները[13]: Կարելի է ասել՝ էկզարխը կանխազգում էր իր ողբերգական մահը, քանի որ նրան օգնողներ չկային և բոլորը միայն սպասում էին նրա սխալներին ու ձախողումներին: Սանկտ-Պետերբուրգ իր վերջին այցելության ժամանակ (1907թ.) մտերիմներին նա ասել էր. «Կարող է պատահի, որ սպանեն ինձ, բայց մահից չեմ վախենում: Չէ որ մահանալ պետք է և' խաղաղ թեմերում, և' խաղաղ ժամանակներում: Ուրեմն ավելի լավ է մահանալ ճիշտ գործի համար պայքարում, սրբազան ճշմարտության համար, կատաղած թշնամիների կողմից: Դա պատվավոր մահ է…Բայց ինչու, սակայն, վրացիները պետք է սպանեն ինձ»[14]:

1908թ. մայիսի 28-ին, Սուրբ Սինոդի նիստին մասնակցելու համար Պետերբուրգ մեկնելուց առաջ, Նիկոնը մտնում է Վրաց-Իմերեթական սինոդական գրասենյակ, որը, ինչպես միշտ, մարդաշատ էր: Նրանց թվում էր նաև մարդասպանը: Այդ օրը էկզարխը առաջին անգամ չէր կրել հատուկ պատրաստված զրահը, որը կարող էր պաշտպանել նրան փամփուշտից: Երբ նա բարձրանում է աստիճաններով, երկու անծանոթներ թիկունքից երկու կրակոց են արձակում: Հրազենից ստացած վերքերն այնքան խորն էին, որ էկզարխը, արյունաքամ լինելով, մահանում է հինգ րոպե անց՝ իր կյանքի 47-րդ տարում[15]: Մարդասպաններին հաջողվում է փախչել դեպքի վայրից: Միջադեպի մասին անմիջապես հեռագիր է ուղարկվում Պ. Ա. Ստոլիպինին[16]: Էկզարխ Նիկոնի սպանությունը միանգամից վրդովմունքի ալիք բարձրացրեց: Մամուլն անմիջապես հեղեղվեց սպանության հնարավոր վարկածներով: Նիկոնի սպանության ետևում սկսեցին փնտրել վրացական եկեղեցու բացարձակ ինքնավարության կողմնակիցներին: Մեղադրանքներ հնչեցին վրաց անջատողականության ձգտումների հասցեին: Մամուլը երկփեղկվեց երկու հակադիր բևեռների: Մեկը մյուսի ետևից սկսեցին հրատարակվել հոդվածներ, որոնք պահանջում էին վրաց հոգևորականությունից՝ մեղադրելու փոխարեն փնտրել իրական մեղավորներին. «…Եթե դուք իրո՛ք ձգտում եք բացահայտել իրականությունը, եթե դուք իրո՛ք հետաքրքրված եք նրանով, որ Վրաստանի էկզարխի սպանությունը անպատիժ չմնա՝ անկեղծորեն փնտրե՛ք մարդասպաններին: Եղե՛ք ճշմարտացի: Մի' ստեք այն մասին, իբր թե էկզարխը

[13] РГИА, ф. 1579, оп. 1, д. 157, л. 28 об.

[14] **Софийский Л.И.,** Высокопреосвященый Никон…с. 129.

[15] Убийство Экзарха.-Закавказе, 1908г., 29 мая.

[16] Исторический Вестникь Терроризм в России в начале XX в, Том II, под. ред. С.В. Девятова, М., 2012г., с. 211.

զոհվեց, որովհետև «ինքնավարության հակառակորդն էր», մի՛ ստեք, իբր գոյություն ունի «ոչնչացնել Կովկասում ողջ ռուսականը» գաղափարը…»[17]:

Քննադատական խոսքեր հնչեցին նաև «Գոլոս Կավկազա» թերթում տպագրված հոդվածների դեմ, որի էջերում Վրաստանի էկզարխի սպանության մեջ մեղադրվում էր ողջ վրաց ժողովուրդը: «Թերթը սկսել է քար նետել «ինքնավարների» և ընդհանրապես ցանկացած խմբի ուղղությամբ, որոնք երբևէ իրենց կարծիքն էին արտահայտել՝եկեղեցում այս կամ այն անհետաձգելի բարեփոխումների մասին: Այն, որ բարեփոխումներ իսկապես անհրաժեշտ են, որ շատ կարիքներ անհապաղ բավարարում են պահանջում, որ առանց դրա անհնար է հասարակական կյանքի և երկրամասի մշակութային զարգացման նորմալ ընթացքն արդեն բոլորի կողմից գիտակցված է և ապացուցված բոլորի համար, ովքեր միայն բարին են ցանկանում և իրոք անկեղծորեն են ծառայում պետական գաղափարին…Երկրամասի մտավորականությունը չի՛ կարող իրավունք չունենալ չմասնակցելու և չքննարկելու անցյալի սխալները և անարդարության տխուր ժառանգությունը: Բայց մի՞թե դա բավական է այդ խմբերի գործունեության վրա ստվեր նետելու համար»[18]: Իրականում դժվար է ասել, թե որքանով է այս սպանությունը արտահայտել վրաց հոգևորականության լայն շրջանների ցանկությունները:

Նիկոնի սպանությունից հետո ոստիկանությունը հետաքննություն անցկացրեց: Իրականացվեցին բազմաթիվ ձերբակալություններ: Գործի վարումը վերահսկում էր անձամբ փոխարքան: Սպանության բացահայտման համար կային մի քանի վարկածներ: Ենթադրվում էր, որ սպանությունը կարող էր իրականացված լինել կա՛մ հեռացված սեմինարիստների կողմից, կա՛մ կապված էր յուրացումների գործի հետ, որը բացահայտել էր մահացած էկզարխը[19]: Գաղտնի գործակալների տեղեկությունները, սակայն, այլ հիմնավորում ունեին: Նրանք սպանությունը կապում էին «ինքնավարների» գործունեության հետ: Ըստ գործակալների տեղեկությունների՝ Կիրիոնը, 1908թ. ապրիլի 30-ին, ժամանել էր Թիֆլիս և 30 օր անց էր կացրել «Վրացական եկեղեցու անկախության վերականգման» միաբանության անդամ քահանայի մոտ[20]: Նիկոնին (Սոֆինսկի) վերացնելու պատճառ կարող էր լինել նաև Կիրիոնի անձնական թշնամական վերաբերմունքը: Լիտովսկի եպիսկոպոս նշանակվելուց հետո 1908թ. փետրվարի 15-ին նա ուղարկվել էր հանգստի և ապրում էր Կուրյաժսկի վանքում (Խարկովի թեմ): Խարկովի նահանգապետի հաղորդած տեղեկությունների համաձայն, եպիսկոպոս Կիրիոնը Խարկովի վանքից ոչ մի տեղ չէր գնացել, իսկ Թիֆլիսի նահանգապետի տվյալներով՝եպիսկոպոսը այդ ժամանակ եղել էր այնտեղ: 1908թ. մայիսի 18-21-ը Կիրիոնը նորից եղել էր իր թիֆլիսյան բնակարանում, ուր նա եկել էր քրմուհու հագուստով: Թիֆլիսից հեռացել էր էկզարխ Նիկոնի սպանությունից հետո[21]: Սակայն ոստիկանությունը այդպես էլ չկարողացավ ապացուցել սպանության մեջ նրա ներգրավված լինելը: Ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ դատական գործընթաց այդպես էլ

[17] Ишите убийць.- Закавказе,1908г., 1 июня.

[18] Интеллектуальное подстрекательство.-Закавказе, 1908г., 5 июня.

[19] На Кавказе.-Русское Слово, 1908г.,12 июня.

[20] **Кумпан Е.Н**., Проблема религиозного самоопределения на Кавказе в начале XX в «Парадигмы и оценки кавказской политики России в прошлом и настоящем», «КубГУ», Краснодар, 2013, с. 153.

[21] **Дякин В.С.,** Национальный вопрос во внутренней политике царизма…., с. 660.

չսկսվեց: Ինքնավարների առաջնորդ Կիրիոնը փակվեց Սանակսարսկի վանքում: Ինքը՝ Կիրիոնը (Սաձագլիշվիլի) կարծում էր, որ էկզարխի սպանությամբ Վրաստանում սպանվեց ինքնավարության հարցը: Սրանով, փաստորեն, փակվեց Վրաստանում եկեղեցական կյանքի բարեփոխման հարցը, քանզի էկզարխի ողբերգական մահն էլ ավելի հակադրեց վրաց և ռուս հոգևորականությանը:

Էկզարխ Նիկոնի գործունեությունը հակասական է լուսաբանվել ռուսական և վրացական աղբյուրներում, ինչպես նաև ժամանակակից գրականության մեջ: Վրաց հետազոտողները հակված են կարծելու, որ նրա գործունեության ընթացքում վրաց հոգևորականները ենթարկվել են դաժան հալածանքների, իսկ վրացերենը եկեղեցական ծեսերի ժամանակ արգելված է եղել: Ռուսական աղբյուրներում նա հիշատակվում է որպես շատ քիչ էկզարխներից մեկը, ով անկեղծ հետաքրքրություն է ցուցաբերել վրաց ժողովրդի և վրացական եկեղեցու հանդեպ:

Բանալի բառեր-էկզարխ, եպիսկոպոս, վրաց հոգևորականություն, եկեղեցական ինքնավարություն, բարեփոխում, խորհրդակցություն, վրացական եկեղեցի:

Սաթենիկ Ավոյան, Վրաստանի էկզարխ Նիկոնի եկեղեցական քաղաքականությունը-Արքեպիսկոպոս Նիկոնը (Սոֆինսկի) Վրաստանի էկզարխ նշանակվեց այն ժամանակ (1906թ. հունիսի 9), երբ վրացական ուղղափառ եկեղեցու ինքնավարության վերականգնման համար մղվող պայքարը հասել էր իր գագաթնակետին: Չնայած վրաց հոգևորականության հնչեցրած բացահայտ սպառնալիքներին՝ Նիկոնը, վճռականությամբ ընդունելով պաշտոնը, մեկնեց Վրաստան: Ի պատասխան դրա վրաց հոգևորականությունը բոյկոտ հայտարարեց Նիկոնի կառավարմանը: Սակայն այս հանգամանքը չխանգարեց նոր էկզարխին մեծ եռանդով լծվելու վրացական էկզարխության կառավարման համակարգում բարենորոգումներ անցկացնելու խնդրի իրականացմանը:

Сатеник Авоян, Церковная политика Экзарха Грузии Никона-Архиепископ Никон (Софийский) был назначен экзархом Грузии в то время (9 июня 1906 года), когда борьба за восстановления афтокефали грузинской православной церкви достигла своего пика. Несмотря на открытые угрозы от грузинских духовенсв, Никон решительно принял должность и отправился в Грузию. В ответ на это грузинское духовенство обьявило бойкот на управление Никона. Но эти обстоятельства не помешало новому экзарху с большим энтузиазмом в реализации реформ в грузинском экзарьате.

Satenik Avoyan, The Georgian Ekzarkh Nikon's Church policy-Archbishop Nikone (Sofinski) was appointed as the Georgian ekzarkh at that time (on the 9th of June, 1906) when the struggle for the restoration of autonomy of the Georgian Orthodox Church had reached its peak. Although the Georgian clergy made explicit threats, Nikone determined the position and went to Georgia. In response, the Georgian clergy boycotted against Nikone's governance. But this fact did not prevent to the new ekzarkh filling with enthusiasm and making reforms in the system of Georgian governance.

ՔԵԹՐԻՆ ՄԱՔԱՈՒԼԵՅԻ «ԱՆԳԼԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿՈԲ 1–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՆՈՎԵՐՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱԿՈԲ 1–Ի ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ԷԼՅԱ ՂԻԱՍՅԱՆ

1763 և 1783 թթ-ի միջակայքում Մաքաուլեյը գրել է իր ութ հատորից բաղկացած հայտնի «Անգլիայի պատմությունը Հակոբ Ա-ի գահակալումից մինչև Հանովերյան դինաստիա» աշխատությունը: Այս աշխատությունը իրենից ներկայացնում է 17-րդ դարի Անգլիայի քաղաքական պատմությունը[1]: Այնուամենայնիվ, վերջին երեք հատորների ամբողջացման ժամանակահատվածում հեղինակը գիտակցել է, որ իր աշխատությունը ժամանակագրական առումով չի կարող հասցնել մինչև 1714թ. և այսպիսով փոխել է վերնագիրը այն դարձնելով՝ «Անգլիայի պատմությունը Հակոբ Ա-ի գահակալումից մինչև հեղափոխություն»[2]: Սակայն այն հետագայում կրկին վերանվանել է: Ճանաչված չլինելով մինչև իր աշխատության առաջին հատորի հրատարակումը ընդամենը մեկ գիշերվա ընթացքում ի շնորհիվ այս աշխատության նա դարձավ «նշանավոր տիկին Մաքաուլեյ»[3]:

Ըստ իս պատահական չէ, որ հեղինակը ընտրել է հենց այս ժամանակահատվածը: Մաքաուլեյը նշում է, որ նա ընտրել է հենց այս ժամանակահատվածը, քանի որ ցանկանում է «ներկայացնել արդարությունը ի պատիվ իր հռչակավոր նախնիների հիշատակի: Նա գանգատվում է, որ իր ժամանակակիցները մոռացել են, որ այն արտոնությունները, որոնք նրանք վայելում են ձեռք են բերվել այն մարդկանց կողմից, ովքեր իրենց կյանքը վտանգելու կամ նույնիսկ կորցնելու գնով պայքարել են Ստյուարտների արքայատոհմի ահարկու հավակնությունների դեմ և կերտել են բռնակալության դեմ կռվաններ ավելի քան հարյուր հիսուն տարիների ընթացքում»[4]:

Շարունակելով աշխատության առաջաբանում գրքի շարադրման դրդրապատճառներին անդրադառնալ, նա մեջբերում է նաև հետևյալ կարևորագույն պատճառը. «Ես հավատում եմ, որ անգլո-սաքսոնները հաստատել են ազատություն և հավասարություն ներկայացուցչական ինստիտուտների միջոցով, որոնք խախտվել են Մեծ Բրիտանիայի նորմանդական նվաճման հետևանքով: Եվ հետևաբար Անգլիայի պատմությունը մայր հայրենիքի պայքարի պատմությունն է ետ նվաճելու համար այն իրավունքները, որոնք մենք կորցրել ենք նորմանդական լծի արդյունքում»: Այսպիսով նա ևս մեկ անգամ ցանկանում է շեշտել, որ

[1] Առաջին և երկրորդ հատորները ընդգրկում են 1603-1641թթ., երրորդ և չորրորդ հատորները ներառում են 1642-1647թթ. իրադարձությունները, հատոր հինգերորդը ներկայացնում է 1648-1660թթ. կարևորագույն դեպքերը:

[2] **Hays, Mary,** 1803, Female biography; or Memoirs of Illustrious and celebrated women, of all ages and countries. Alphabetically arranged, 6 volumes, London: Richard Phillips, p. 45.

[3] **Boos, Florence, and William Boos,** 1980, "Catharine Macaulay: Historian and political reformer,"International Journal of Women's Studies, 3 (6), pp. 49–65.

[4] **Hill,** Bridget (1992), The Republican Virago, The Life and Times of Catharine Macaulay, Historian, Oxford, pp. 26–27.

ընտրել է իր ժողովրդի պատմության հենց այս ժամանակահատվածը, քանի որ կարևոր է համարում ընդգծել, որ հենց այժմ է, որ անգլիացիները փառահեղ պայքար են մղել օտարի լուծը թոթոփելու համար: Շարունակելով նա անգլիական հանրապետությունը բնութագրել է որպես «ամենալուսավոր դարաշրջանը, որը երբևէ զարդարել է անգլիական պատմությունը»: Հանրապետական առավելություններին անդրադառնալով նա գրում է՝ «Մարդկության պատմության վերաբերյալ գրված աննալները երբեք չեն ներկայացրել այսպիսի նորովի հաստատված կառավարության օրինակ, որն այսքան ահարկու լիներ օտարերկրյա պետությունների համար, ինչպիսին էր այս ժամանակաշրջանի անգլիական հանրապետությունը[5]: Երկարատև պառլամենտը ամենահայրենասեր կառավարությունն էր, որը երբևէ օրինել էր քաջ մարդկանց հույսերը և ռազմական գործողությունները: Պառլամենտական բանակի պայքարը արյան առևտուր չէր, այլ սկզբունքի գործադրում և հնազանդություն խղճի նկատմամբ: Նրանց վարքը ոչ միայն զուրկ էր հանդգնությունից, այլ հակառակը՝ մարդասիրական և բարեգործական էր»[6]: Իմ կարծիքով այս ամենը գալիս են հիմնավորելու, որ հեղինակն ընտրել է այս շրջանը՝ հաշվի առնելով վերջինիս կարևորությունը:

Միաժամանակ մյուս կարևորագույն խնդիրներից մեկը, որը ընդգծել է հեղինակը, վերաբերվում է գահակալների բարոյական նկարագրին: Նա միշտ քննադատել է այն թագավորներին կամ քաղաքական գործիչներին «ովքեր իրենց ակնհայտ նվիրվածությունը քաղաքականությանը ցուցաբերել են անձնական շահի այլ ոչ թե ազատության ամրապնդման և ձեռքբերման համար»[7]: Նրա մոտեցումը ևս մեկ անգամ արտացոլում է նրա՝ ազատական հայացքներին կողմնակից լինելու փաստը, քանի որ նա ներկայացնում է այն դրույթը, որը բնորոշ էր վերջիններիս գաղափարախոսների համար: Հեղինակը հատկապես շեշտում է, որ միայն «առաքինի, ողջախոհ քաղաքական գործիչները կարող են ստեղծել կառավարման ամենալավ ձևը, այն է հանրապետությունը»[8]:

Իր ժամանակակիցները և ներկայիս ուսումնասիրողները բարձր են գնահատում Մաքաուլեյի պատմությունը: Թոմաս Հոլլիսը իր օրագրում (1763թ-ի նոյեմբերի 30) նշում է, որ Մաքաուլեյի «Պատմությունը գրված է արդարությամբ, նշանակալի պատմաբանին հարիր ունակությամբ և հոգով, ինչպես նաև լի է ազատության նոր տրամադրությամբ»[9]: Հորացիո Վալպոլը գրում է Վիլյամ Մասոնին՝ նշելով Թոմաս Գրայի հաստատումը, որ «Դա Անգլիայի ամենախելամիտ և լավագույն պատմությունն է, որը մենք ունեցել ենք մինչև այժմ»[10]: Վիլյամ Փիթը իր ելույթներից մեկի ժամանակ գովաբանել է Անգլիայի պատմությանը նվիրված

[5] **Donnelly, Lucy Martin,** 1949, «The Celebrated Mrs Macaulay», *William and Mary Quarterly*, 6 (2), pp. 172–207.

[6] **Hill,** Bridget (1992). The Republican Virago. The Life and Times of Catharine Macaulay, Historian. Oxford, p. 31, 35, p. 79.

[7] **Sheridan, Patricia,** 2007, "Reflection, Nature, and Moral Law: The Extent of Catharine Cockburn's Lockeanism in her *Defence of Mr. Locke's Essay*," *Hypatia*, 22(3), pp. 133–51.

[8] **Hill, Bridget** (1992), The Republican Virago. The Life and Times of Catharine Macaulay, Historian, Oxford, p. 39.

[9] **Israel, Jonathan,** 2010, *A Revolution of the Mind: Radical Enlightenment and the Intellectual Origins of Modern Democracy*, Princeton: Princeton University Press; (Hill, Bridget (1992), The Republican Virago. The Life and Times of Catharine Macaulay, Historian, Oxford, p. 39-40.

[10] (Hill, Bridget (1992), The Republican Virago. The Life and Times of Catharine Macaulay, Historian, Oxford, p. 40.

այս աշխատությունը Համայնքների պալատում, որպես մի աշխատություն, որի միջոցով կարելի է առաջնորդվել ներկայիս քաղաքական խնդիրներին լուծում տալու համար: 1774թ-ին Ջեյմս Բուրգը գրել է՝ «Մաքաուլեյը իր պատմությունը գրել է բրիտանական ժողովրդի մեջ ազատություն և իրենց երկրի նկատմամբ սեր արմատավորելու նպատակով»[11]:

Առաջաբանի վերջնամասում հեղինակը նշում է, որ ցանկանում է ոչ միայն արդարացիորեն ներկայացնել Անգլիայի պատմությունը, գահակալների ձեռնարկած միջոցառումները, այլ հատկապես նպատակ ունի գովաբանել անգլիացի «հայրենասերներին», ովքեր աննկուն են մնում իրենց հիմնարար իրավունքների նկատմամբ Ստյուարտների, հատկապես Հակոբ I-ի անսահմանափակ տիրապետության ժամանակաշրջանում[12]: Հենց առաջաբանում Մաքաուլեյը Հակոբ I-ի կառավարման տարիներից մինչև քաղաքացիական պատերազմը ընկած ժամանակահատվածը մատնանշում է որպես ընդունված անօրինական հարկման, իշխանության չարաշահման, կամայական ձերբակալությունների և անմարդկային պատիժների հաջորդականություն: Սակայն հեղինակի գաղափարներից չի կարելի միայն ենթադրել, որ նա նպատակ ունի անարդարացիորեն պախարակել Ստյուրարտների արքայատոհմի ներկայացուցիչներին: Եթե այսպես լիներ ըստ իս նա արդարացիորեն չէր նկարագրի եղելությունը և չէր ապացուցի, որ հավատում է բարոյական առաջընթացի հնարավորությանը: Իմ կարծիքի ճշմարտացիությունը հիմնավորվում է նրանով, որ Մաքաուլեյը սահմանադրության որոշակի կարևորագույն դրույթների պահպանումը և անհատական արժանիքների զարգացումը փոխագուցված է տեսնում:

Իր մեծածավալ աշխատանքը Քեթրին Մաքաուլեյը սկսում է Հակոբ I-ի կառավարման տարիների մանրամասն մեկնաբանմամբ: Հեղինակը կատարել է բազմաբովանդակ հետազոտություն՝ անդրադառնալով Հակոբ I-ի կառավարման բազմաթիվ բնագավառներին, ինչպիսիք են՝ արտաքին քաղաքականությունը և ներքին քաղաքականության առանձնահատկությունները, հատկապես շեշտելով Պառլամենտի և տիրակալի փոխհարաբերությունները, հարկային քաղաքականությունը, կրոնական հանդուրժողականությունը և դրանց պատճառները:

Այս հոդվածում ես ցանկանում եմ անդրադառնալ երկու կարևորագույն հիմնահարցի: Առաջինը վերաբերում է Հակոբ I-ի արտաքին քաղաքականությանը, իսկ երկրորդ հիմնահարցը կապված է ներքին քաղաքականության հետ:

Հակոբ Ա (հունիսի 9, 1566-մարտի 27, 1625), Անգլիայի թագավոր է հռչակվել 1603 թվականին Եղիսաբեթ թագուհու մահից անմիջապես հետո (1603թ-ի մարտի 24, 1567 թվականից հանդիսացել է Շոտլանդիայի թագավորը՝ Հակոբ VI անվամբ): Այս տիրակալը հանդիսանում է Ստյուարտների[13] դինաստիայի ներկայացուցիչ: Նրա բացարձակապետական քաղաքականությունը արտացոլվում է իր ժամանումից անմիջապես հետո ձեռնարկված քայլերով: Իր նկրտումները ամրապնդելու նպատակով նա պատժում է դեռևս Եղիսաբեթի օրոք աչքի ընկած

[11] **Hill, Bridget** (1992), The Republican Virago. The Life and Times of Catharine Macaulay, Historian, Oxford, p. 27.

[12] **Pocock, J. G. A.,** 1998, «Catherine Macaulay: patriot historian», in Women writers and the early modern British political tradition, H. Smith (ed.), Cambridge: Cambridge University Press, p. 43.

[13] **Mackenzie, A. M., MA, D.Litt.,** The Rise of the Stewarts, London, 1935, pp.8 -9; «J.H. Round: The Origin of the Stewarts: Part 1», *Medieval Genealogy.org.uk.* Retrieved on 13 November 2008; Bartlett, England Under the Norman and Angevin Kings, 1075–1225, pp. 144-193.

Վալենտին Թոմասին, ով միապետի գահ բարձրանալու ժամանակ գտնվում էր բանտում և դատապարտվում է թագուհու և նրա ավագանու դեմ ձեռնարկված դավադրության համար: Հեղինակը իր աշխատանքի անմիջապես սկզբում անդրադառնում է այս հանգմանքին՝ նրբորեն ցույց տալով, որ համապարփակ իշխանության ձգտող թագավորը իր ներպետական և արտաքին քաղաքական ձեռնարկումներով, փորձելով հնարավորինս ամրապնդել իր բացարձակապետական ձգտումները, խարսխում է Անգլիական բուրժուական հեղափոխության հիմքերը:

Մանրաքննին ուսումնասիրելով այս գահակալի կողմից ձեռնարկած միջոցառումները՝ հեղինակը հենց սկզբից իր ուշադրությունը բևեռում է զարգացող բուրժուազիայի և բացարձակապետության միջև հակասությունների ներկայացմանը: Հետազոտելով Մաքաուլեյի կողմից ներկայացված այս գահակալի կառավարման ժամանակահատվածի յուրահատկությունները ես եկել եմ այն եզրակացության, որ Հակոբ Ա-ի գահակալմամբ սկիզբ է դրվել 17-րդ դարի Անգլիական բուրժուական հեղափոխությունը[14], որի զարգացումը և արդյունքները կդրսևորվեն հետագա թագավորների օրոք:

Ցանկանալով հնարավորինս ճշմարտանման ներկայացնել այս տիրակալի քաղաքական հայացքները Մաքաուլեյը օգտվել է «Ազատ միապետությունների ճշմարիտ օրենքը»[15] տրակտատից, որում ներկայացվում են գահակալի նախաձեռնությունները և իհարկե մեկնաբանված են տիրակալի քաղաքական, հայացքները և կատարված բոլոր գործողությունները:

Առաջին հիմնահարցը աղերսվում է Հակոբ I-ը արտաքին քաղաքականությանը: Վերջինս աչքի է ընկել եվրոպական հզոր տիրակալների հետ խաղաղ դաշնագրերի կնքմամբ: Սա իհարկե ունի իր պատճառները: Առաջին արտաքին քաղաքական գործարքը, որի մեջ նա մտավ, Ֆրանսիայի հետ պայմանագիրն էր: Ֆրանսիան և Անգլիան պարտավորվում էին պաշտպանել միմյանց հնարավոր հարձակումների դեպքում: Այս տիրակալի կառավարման տարիներին Անգլիան մերձեցել է նաև ծովային և գաղութային առևտրի իր գլխավոր մրցակից կաթոլիկ Իսպանիայի հետ: Հակոբ I-ը Նոթինհեմի կոմսին որպես դեսպան ուղարկում է Իսպանիա վավերացնելու համար պայմանագիրը: Այս համաձայնությունը կաթոլիկների հետ մեծ դժգոհություն է առաջացնում ժողովրդի շրջանում: Պարոն Չարլզ Կորնվալլիսը՝ թագավորի ուղարկած դեսպանության ղեկավարը, 1605թ-ի հունիսի 2-ին գրում է Սեսիլին՝ թագավորի քարտուղարին, Եվրոպայում Անգլիայի և Իսպանիայի միջև կնքված համաձայնության արձագանքների մասին՝ «Ես այստեղ ականատեսն եմ եղել, որ ամբողջ Եվրոպան հիանում է այս համաձայնագրով, բացառությամբ հենց Անգլիայի: Նրանք այստեղ խոսում են այն մասին, որ այս պայմանագիրը, այսպիսի առավելություններով Իսպանիայի համար, չի համապատասխանում Անգլիայի իրական շահերին: Աներայի դուքսը լսելով, որ այսպիսի պայմաններով կնքվել է խաղաղության պայմանագիր, ար-

[14] Անգլիական բուրժուական հեղափոխություն 1640-1660 թվականներին, որը հանգեցրեց ֆեոդալիզմի տապալմանը և կապիտալիստական կարգերի հաստատմանն Անգլիայում: 17-րդ դարի կեսին Անգլիայի տնտ. առաջադիմության հիմքը կազմում էր կապիտալիստական մանուֆակտուրայի զարգացումը:

[15] **King James I,** The True Law of Free Monarchies or The Reciprocal and Mutual Duty Betwixt a Free King and His Natural Subjects (1598; 1603; 1616). Edited by Daniel Fischlin and Mark Fortier, pp. 16-18.

տահայտում է այն տեսակետը, ըստ որի թագավորը և խորհրդի անդամները կորցրել են իրենց խելամտությունը՝ համաձայնելով կնքել այս բնույթի խաղաղության դաշնագիր: Որոշ իսպանացիներ կարծում են, որ իրենց տիրակալը գնել է այս պայմանագիրը, այլապես այսպիսի լավ պայմաններով համաձայնագիր երբեք չէր կնքվի»[16]: Ավելին, Կորնվալլիսը ավելացնում է՝ «Թագավորը և Անգլիան պետք է ունենային ծանրակշիռ հանգամանքներ հրաժարվելու համար Իսպանիայի հետ այսպիսի պատվավոր և արդյունավետ պատերազմից: Եվրոպական տիրակալները կարծում են, որ թագավորը և իր ենթակաները այնքան են ունեզրկվել, որ չեն կարող պայքարել հակառակորդի դեմ: Թագավորի անձնական ունեցվածքը սպառվել է, գանձարանը դատարկվել, ազնվականությունը էականորեն աղքատացել է, ազգաբնակչության մեծամասնությունը ծայրահեղ կարիքավոր է: Հիմք ունենալով այս ամենը՝ տիրակալը որոշում է կնքել այս խայտառակ պայմանագիրը»[17]:

Այս դաշնագիրը ներկայացնելով հեղինակը ըստ իս նպատակ ունի ոչ միայն նկարագրել զուտ պատմական իրողությունը, այլ շեշտել այն հանգամանքը, որ արտաքին քաղաքական ձեռնարկումները արտացոլում են ներպետական լարված իրավիճակը:

Շարունակելով Մաքաուլեյը ներկայացնում է ևս մեկ այսպիսի օրինակ ամրապնդելու համար իր նախորդ դրույթը: Նա գրում է՝ «Հետագայում Հակոբ I-ի միջամտությամբ ավարտվում է պատերազմը Իսպանիայի և Նիդերլանդների միջև: Թագավորի ավագ դստեր՝ Եղիսաբեթի և Ֆրիդրիխ V–ի՝ Պֆալցի կյուրֆյուրստի և գերմանական իշխանների Բողոքական ունիայի առաջնորդի ամուսնությամբ 1613թ-ին տիրակալը ամուր հիմքեր է ստեղծում Անգլիայի և բողոքական գերմանական պետությունների երկարատև միության համար»:

Ուսումնասիրելով Մաքաուլեյի գրքում Հակոբ I-ի արտաքին քաղաքականությունը ես կարծում եմ, որ հեղինակը փորձում է ներկայացնել, որ Եվրոպայում այս գահակալը փորձում է իրականացնել չեզոք քաղաքականություն՝ ելնելով իր ներքաղաքական իրավիճակից: Սրա ապացույցն է Երեսնամյա պատերազմում այս տիրակալի քաղաքականությունը: Այս պատերազմի[18] ընթացքում Հակոբ I-ը հրաժարվում է միջամտել Գերմանիայում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին՝ չցանկանալով վատթարացնել փոխհարաբերությունները Իսպանիայի հետ, որի հետ նախապես կնքել էր այդքան սպասված հաշտության պայմանագիրը: Քեթրին Մաքաուլեյը այս քաղաքականությունից անմիջապես հետո շեշտում է այս ժամանակահատվածում Անգլիայի ֆինանսական վիճակը, տնտեսական ցուցանիշի սրընթաց անկումը և տիրակալի կայացրած որոշման անհրաժեշտությունը: Այս միությունը պետք է ամրապնդվեր ամուսնական կապերով: Սակայն Պառլամենտի ճնշման ներքո, որը պնդում էր, որ Անգլիան պետք է բողոքական Գերմանիայի հետ կնքված պայմանագիրը անքակտելի պահի՝

[16] **Macaulay**, Catharine, 1763-83, The history of England from the accession of James 1. to that of the Brunswick line, volume 1, London, p. 21-23.

[17] Winwood's Memorials, vol II, p. 75.

[18] Երեսնամյա պատերազմ (23 մայիս 1618-24 հոկտեմբեր 1648)՝ ռազմական կոնֆլիկտ Հռոմեական սրբազան կայսրության և Եվրոպայում հեգեմոն դերակատարություն ունենալու համար:

օժանդակելով վերջինիս իբրև իրական դաշնակից, Հակոբ I-ը պատերազմ է հայտարարում Իսպանիային[19]:

Իմ կարծիքով պատահական չէ, որ հեղինակը այստեղ մեծ շեշտադրում է կատարում Պառլամենտի դերակատարության վրա՝ ցանկանալով շեշտել վերջինիս կարևորությունը և քաղաքական համակարգում նշմարվող փոփոխությունների միտումը:

Արտաքին քաղաքական միջոցառումները ավելի լավ հասկանալու համար հեղինակը ավելի մեծ ուշադրություն է դարձնում Հակոբ I-ի ներքաղաքական ձեռնարկումներին:

Առաջինը նա ներկայացնում է Հակոբ I-ի կրոնական քաղաքականությունը և՛ Շոտլանդիայում և՛ Անգլիայում կառավարման տարիներին՝ բաղդատելով երկու երկրներում այս գահակալի կրոնական ուրույն քաղաքականության առաձնահատկությունները և դրդապատճառները: Հակոբ I-ը փորձում է կյանքի կոչել պետության մեջ եկեղեցու դերի մասին իր գաղափարները՝ կասեցնելով կաթոլիկներից և ուլտրա-բողոքականներից եկող վտանգները և վարելով համեմատաբար չեզոք, հանդուրժող քաղաքականություն: Նա դեռևս Շոտլանդիայում իր գահակալման տարիներին առաջ է քաշում եկեղեցական իշխանությունը թագավորական իշխանությանը ենթարկելու գաղափարը: Նրա իրականացրած բարեփոխման արդյունքում եպիսկոպոսները ամբողջությամբ զրկվում են իշխանությունից, հոգևորականությունը դադարում է մասնակցել Պառլամենտի գործունեությանը: Եկեղեցական հարցերում Հակոբ I-ը աստիճանաբար սկսում է ամրապնդել իր իշխանությունը: 1604թ-ին տիրակալը հրաժարվում է հրավիրել եկեղեցական գլխավոր ասամբլեա: Թագավորի հաջորդ քայլը եպիսկոպոսական համակարգի դերի փոփոխությունն էր: Շոտլանդիայում իր կառավարման վերջին տարիներին ձեռնարկած եկեղեցական ռեֆորմներից գահակալը հրաժարվում է՝ գիտակցելով, որ վերջիններս կարող են անկայուն իրավիճակ ստեղծել ողջ թագավորության համար՝ միաժամանակ խթանելով արտաքին թշնամիների ակտիվացումը: Հեղինակը շեշտում է, որ տիրակալը իր կառավարման ընթացքում կրոնական հանդուրժողականություն է ցուցաբերել Պուրիտանության նկատմամբ, որը ապացուցվում է նրա կողմից հօգուտ նրանց ընդունված տարազան պետիցիաներով (խնդրագիր):

Իր կառավարման սկզբնական շրջանում իր իշխանության ամրապնդման և եկեղեցու լիազորությունների սահմանափակման համար լավ հնարավորություն էր Հեմպտոն-դատարանում հրավիրված եկեղեցականների և աշխարհիկ գործիչների համատեղ համաժողովը: Հեղինակը պատահական չէ, որ ներկայացնում է հենց այս ժողովը, որը կարծես անկյունաքարային է դառնում: Համաժողովի ընթացքում մի շարք գործիչներ հաստատում են տիրակալի հետևյալ միտքը՝ «Հոգեվոր հայրերը համաձայնեցին տիրակալի հետ այնպես, ինչպես Աստված սատանայի հետ»[20]: Այս ժողովը մեծ գովասանք է առաջացնում հոգևորականների և աշխարհիկ գործիչների շրջանում: Կանցլեր Էգերտոնը արձագանքում է տիրակալի այս կարծիքին հետևյալ ձևով՝ «Ես հաճախ եմ լսել, որ աշխարհիկ այրերը և

[19] **Gutmann, Myron P.** (1988), «The Origins of the Thirty Years' War». Journal of Interdisciplinary History, 18 (4), 749–770; The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000. New York: Harper Collins, pp. 29-58.

[20] **Macaulay,** Catharine, 1763–83, The history of England from the accession of James 1. to that of the Brunswick line, volume 1, London, p. 5-7.

հոգևորականները միավորված են, բայց, մինչ այսօր, երբեք չեմ տեսել իրականում համախմբված»: Ավելին, արքեպիսկոպոս Վիտգիֆտը նշում է՝ «Ես իսկապես հավատում եմ, որ թագավորը խոսում է Աստծու անունից»[21]: Կրոնական հարցին վերաբերող այս պետիցիան ստորագրել էին 750 հոգևորականներ:

Սակայն հետաքրքրական է, որ բողոքականները չընդունեցին կաթոլիկներին վերաբերող իր հայտարարագրերը կամ օրենքները և ամբողջ ազգը իր դժգոհությունը արտահայտեց վերջինիս նկատմամբ: Գահակալը ընդունում էր այս հայտարարագրերը հաշվի առնելով այն փաստը, որ Շոտլանդիան ուներ որոշակի թվաքանակով կաթոլիկ բնակչություն և լինելով երկու թագավորությունների միավորիչ Հակոբ I-ը ցանկանում էր երկրի խաղաղ գոյակցությունը ապահովել կրոնական հանդուրժողականության դրսևորմամբ, որը երբեմն հակասում էր կրոնական տարբեր խմբերի շահերին:

Հաջորդ ներպետական իրողությունը, որը նկարագրում է հեղինակը վերաբերում է Հակոբ I-ի և պառլամենտի փոխհարաբերություններին: Վերջինիս կառավարման հենց սկզբից դրսևորվում են բազմաթիվ հակասություններ Պառլամենտի և թագավորի միջև: Արդեն 1604թ-ին Հակոբ I-ը ինքնակամ հրաժարվում է իր արտոնություններից մոնոպոլիաների հաստատման ասպարեզում: Չնայած այս հանգամանքին, պառլամենտը չի հաստատում թագավորի ներկայացրած սուբսիդիաները: 1605թ-ին պառլամենտը վավերացնում է թագավորի առաջադրած լրացուցիչ հարկի մասին օրենքը: Սակայն միաժամանակ հարկման են ենթարկվում նաև ներկրվող ապրանքները, որի մասին օրենքը համաձայնեցված չէր Պառլամենտի հետ: Սա մեծ դժգոհություն է առաջացնում, սակայն Սեսիլի իրականացրած հարկային ռեֆորմի արդյունքում թագավորին հաջողվում է առժամանակ կարգավորել թագավորական ֆինանսները: Տարբեր թվականներին հրավիրված պառլամենտները մերժում են գահակալի ներկայացրած տարբեր հարկային օրինագծերը: Ըստ Քեթրին Մաքաուլեյի այս իրավիճակը հանգեցնում է նաև նրան, որ թագավորը սկսում է մեծատոհմիկներին վաճառել տիտղոսներ՝ նպատակ ունենալով այսպես լցնել դատարկված գանձարանը[22]: Հակոբ I-ը սկսում է կիրառել նաև իր ֆեոդալական իրավունքների պրակտիկան՝ իրականացնելով հարկադիր փոխառություններ: Սա ըստ իս գալիս է ապացուցելու, որ տիրակալը հասկանում էր ներքաղաքական անկայուն վիճակը, որը պարարտ հող էր ստեղծում օտարերկրյա տիրակալների ռազմական գործողությունների համար:

Թագավորի և պառլամենտի փոխհարաբերությունները ներկայացնելուց հետո նա ամփոփում է թագավորի քաղաքականությունը Պառլամենտի նկատմամբ ընդգծելով, որ վերջինս կարողացավ ամրապնդել իր դիրքերը և ձախողել Հակոբ I-ի բացարձակապետական նկրտումները: Վերջինիս անքակտելի ապացույցն է թագավորի թույլտվությունը գանձարանի տնօրինման և երկրի բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ իմպիչմենտի սահմանման Պառլամենտի իրա-

[21] **Macaulay,** Catharine, 1763–83, The history of England from the accession of James 1. to that of the Brunswick line, volume 1, London, page 6. Gunther-Canada, Wendy, 1998, "The Politics of Sense and Sensibility: Mary Wollstonecraft and Catherine Macaulay Graham on Edmund Burke's Reflections on the Revolution in France," inWomen Writers and the Early Modern Political Tradition, H. Smith (ed.), Cambridge: Cambridge University Press, pp. 37-58.

[22] **Macaulay,** Catharine, 1763–83, The history of England from the accession of James 1. to that of the Brunswick line, volume 1, Londonm p. 46.

վունքը: Քեթրին Մաքաուլեյը մի հետաքրքիր փաստ է արձանագրում, ըստ որի առաջին իմպիչմենտն իրականացվում է հենց ֆինանսական փոփոխությունների համար պատասխանատու պաշտոնյայի նկատմամբ: Հարկ է նշել, որ Մաքաուլեյի աշխատությունում մենք գտնում ենք մի փաստ, ըստ որի Անգլիայի պետական պարտքը Հակոբ I-ի կառավարման ժամանակահատվածում հասնում է մեկ միլիոն ֆունտ ստերլինգի[23]: Սա իրարկե վառ ապացույց է գահակալի ձախողված ներքին քաղաքականության:

Տիրակալի և պառլամենտի ձախողված փոխհարաբերությունների ևս մեկ ապացույց ըստ իս այն է, որ նա հաճախակի հրավիրում էր պառլամենտի նիստեր: Պառլամենտի նիստերից մեկի ժամանակ Հակոբ I-ը առաջարկեց միավորել երկու թագավորությունները: Նա այնքան անհամբեր էր առաջադրում այս հարցը քննարկման, որ արդեն վաղօրոք ընդունել էր Մեծ Բրիտանիայի թագավորի տիտղոսը, որը ենթադրում էր երկու թագավորությունների միավորում: Նա նաև ցանկանում էր թողարկել մի օրենք, ըստ որի Շոտլանդիայի մետաղադրամը ընդունվելու է նաև Անգլիայում և երկու երկրներում առևտրային գործարքները իրականացվելու են միասնական դրամով: Այս քայլով նա խթանում էր երկու թագավորությունների միասնականացման գործընթացին:

Իր իշխանության ամրապնդման նպատակով Հակոբ I-ը պառլամենտի նիստերից մեկի ժամանակ ներկայացնում է մի օրինագիծ, ըստ որի նա գահին տիրացել է ժառանգական իրավունքով[24]: Սա իհարկե մերժվեց: Սա ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու թագավորի և պառլամենտի փոխհարաբերությունների վատթարացմանը և վերջինիս լիազորությունների ընդարձակմանը:

Ներքաղաքական լարված իրավիճակը պարարտ հող էր ստողծում թագավորից դժգոհ խմբավորումների համար: Ձախողված բոլոր միջոցառումները նպաստեցին իրենից դժգոհ ներքաղաքական և արտաքին քաղաքական խմբավորումների միավորմանը և վերջիններիս կողմից համապատասխան միջոցառումների իրականացմանը:

Հակոբ I-ի գահակալման ժամանակաշրջանում օտար տիրակալները պարբերաբար օգտվում էին երկրի ներքաղաքական լարված իրավիճակից՝ միաժամանակ ձեռնարկելով համապատասխան քայլեր Անգլիան թուլացնելու նպատակով: Ժամանակ առ ժամանակ նրանք օժանդակում էին հակոտնյա ուժերին կազմակերպելու հակապետական դավադրություններ թագավորի և կառավարության դեմ: Այսպիսի ձեռնարկումներից մեկի համար առիթ հանդիսացավ այն փաստը, որ կաթոլիկները, ովքեր վտարվել էին Անգլիայից աջակցություն ստացան Նիդերլանդներից կազմակերպելու համար հերթական դավադրությունը կառավարության և թագավորի դեմ[25]:

Այսպիսով, ուսումնասիրելով այս հեղինակի գրքում Հակոբ I-ի արտաքին և ներքին քաղաքականության վերաբերյալ ներկայացված փաստերը ես եկել եմ հետևյալ եզրակացությունների: Նախ և առաջ այս տիրակալի կառավարման

[23] **Macaulay,** Catharine, 1763–83, The history of England from the accession of James 1. to that of the Brunswick line, volume 1, London, p. 95

[24] **Macaulay**, Catharine, 1763–83, The history of England from the accession of James 1. to that of the Brunswick line, volume 1, London, p. 176

[25] **Hicks, Philip,** 2002, "Catharine Macaulay's Civil War: Gender, history, and Republicanism in Georgian Britain," Journal of British Studies, 41(2): 170–99.

Hill, Bridget, and Christopher Hill, 1967, "Catharine Macaulay and the Seventeenth Century," The Welsh History Review, 3: 381–402.

ժամանակահատվածում ակներև է դառնում, որ սահմանափակվում է թագավորական իշխանությունը: Միաժամանակ լարված փոխհարաբերություններ են հաստատվում պառլամենտի և թագավորի միջև, որն ավարտվում է պառլամենտի դերակատարության բարձրացմամբ: Ներքաղաքական և արտաքին քաղաքական իրողությունները այս տիրակալի կառավարման ժամանակաշրջանում հենք են ստեղծում հետագայում տեղի ունենալիք հեղափոխության համար: Ամփոփելով կարելի է ասել, որ հենց այս ժամանակահատվածում է, որ Անգլիայի պատմության մեջ արմատական փոփոխություններ են արձանագրվում՝ խարսխելով քաղաքական ինստիտուտների գործառույթների ձևափոխմանը և երկրում վերջիններիս դերակատարության փոփոխմանը:

Բանալի բառեր-Պառլամենտ, արտաքին քաղաքականություն, ներքին քաղաքականություն, կրոնական հանդուրժողականություն, թագավորություն:

Էլյա Ղիասյան, Քեթրին Մաքաուլեյի «Անգլիայի պատմությունը Հակոբ I-ի գահակալումից մինչև Հաննովերյան դինաստիա» աշխատության շրջանակներում Հակոբ 1-ի ներքին և արտաքին քաղաքականության ներկայացումը- Քեթրին Մաքաուլեյի «Անգլիայի պատմությունը Հակոբ I-ի գահակալումից մինչև Հաննովերյան դինաստիա» աշխատությունը իրենից ներկայացնում է 17-րդ դարի քաղաքական պատմությունը: Հեղինակը կատարել է մանրակրկիտ ուսումնասիրություն, ներկայացնելով Հակոբ I-ի կառավարման տարբեր կողմերը: Նա ներկայացնում է թագավորի արտաքին և ներքին քաղաքականության յուրահատկությունները, հատկապես շեշտելով վերջինիս և պառլամենտի միջև փոխհարաբերությունները: Մաքաուլեյը նաև հետազոտում է այս տիրակալի կառավարման ժամանակաշրջանում դրսևորված հարկային քաղաքականությունը և կրոնական հանդուրժողականությունը: Մանրաքննին ուսումնասիրելով Հակոբ I-ի կառավարման ժամանակ տեղի ունեցած փոփոխությունները հեղինակը ներկայացնում է բուրժուազիայի, նոր ազնվականության և թագավորի միջև հակասությունները:

Эля Гиасян, Катарина Макаулей "История Англии от вступления Яков I до Ганноверской династии"-Работа Катарины Макаулей "История Англии от вступления Яков I до Ганноверской династии" представляет политическую историю 17-го века. Автор сделал подробное исследование, представляя разные стороны правления Якова I-го. Она представляет особенности внешней и внутренней политики короля, особенно подчеркивая отношения между парламентом и королем. А также Катариа Макаулей изучает налоговую политику и религиозная терпимость в период правления этого короля. Детально исследуя изменения, которые произошли в период правления Якова I-го, исследователь представляет противоречия между буржуазией, новой аристократией и королем.

Elya Ghiasyan, Catharine Macaulay «The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line»- Catharine Macaulay's "The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line" book represents the political history of the 17th century. The author has implemented comprehensive investigation regarding the various aspects of the role of James I. Specifically; she puts

her attention on foreign policy, peculiarities of inner policy, mainly, emphasizing the relationships between Parliament and the king. At the same time he represents the tax policy, religion tolerance and their causes. Researching the changes taken place during the reign of this king Catharine Macaulay focuses her attention on the representation of contradictions between the developing bourgeoisie, new aristocracy and the king.

КОНТРОЛЬ И ЦЕНЗУРА: ТУРЕЦКАЯ ПРЕССА В ПЕРИОД “НАЦИОНАЛЬНОГО ШЕФА”

ВАРУЖАН ГЕГАМЯН

В доиндустриальную эпоху, а точнее до второй половины 19-го века одной из самых главных проблем для распространения власти было территориальное расстояние. В местах, где власть не была представлена физически, создавались и применялись разные механизмы, дабы обеспечить образное или, выражаясь современным языком, “виртуальное присутствие” власти. Власть использовала разные символические средства для “борьбы с расстоянием”: начиная от монет и купюр заканчивая памятниками, статуями, дворцами и храмами.

С появлением четкой системы современной бюрократии и средств массовой информации эта проблема решалась для центральной власти намного легче. Коммуникации (почта, телеграф), транспортные и железнодорожные пути, государственные органы (местная бюрократия, армия, полиция) и социальные институции (больницы, школы, библиотеки) способствуют повсеместному присутствию власти по всей стране.

Перед похожей проблемой распространения и репрезентации своей власти стояло руководство новообразованной Турецкой Республики, основанной в 1923 году на центральной части территории бывшей Османской империи. Для систематической и скоординированной пропаганды республиканской власти и идей кемалистской революции, в котором важное место занимал пункт распространения образов личности главы государства и руководящей элиты страны, в 1920-1940 гг. были созданы и задействованы разные организации и структуры. Под руководством кемалистов государственной (партийной) агитацией/пропагандой в первую очередь занимались следующие организации: Турецкие очаги (Türk Ocakları), Народные школы (Millet Mektepleri), Организация Народных Агитаторов (Halk Hatipleri Teşkilatı), Институт истории Турецкой революции (Türk İnkılâp Tarihi Enstitüsü), Уроки турецкой революции (Türk İnkılâp Dersleri) в университетах, Уроки по Истории и гражданству в школах (Tarih ve Yurttaşlık Bilgisi Dersleri), Турецкое историческое общество (Türk Tarihin Tetkik Cemiyeti), Турецкое лингвистическое общество (Türk Dilini Tetkik Cemiyeti), Народные дома (Halkevleri) и Народные комнаты (Halk Odaları), Сельские Институты (Köy Enstitüleri), Турецкое спортивное общество (Türk Spor Kurumu), “Народные трибуны” (Halk Kürsüleri).

Кроме периодической прессы, которая находилась под строгим контролем власти (об этом подробно см. ниже), агитацией власти занимались также созданные специально для распространения идей кемализма журналы “Кадро” (Kadro), “Юлькю” (Ülkü), “Фикир Харекетлери” (Fikir Hareketleri), “Варлык” (Varlık), а также другие печатные периодические и непериодические издания и материалы (книги “Справочник десятилетия” (“Onuncu Yıl Rehberi”), “Книга-ежегодник 15-летия НРП” (“Cümhuriyet Halk Partisi On Beşinci Yıl Kitabı”), локальные печатные издания Народных домов (“Kaynak”, “Halkevi”, “Doğuş”, “Taşpınar” и т.д.) и другие.

Главенствующая роль в деле распространения государственной идеологии и образов власти в раннереспубликанский период Турции принадлежала печатной

прессе. Печать страны являлась наиболее разветвленным средством пропаганды[1]. Новая власть Турции хорошо понимала значимость СМИ. Еще в дни кемалистского движения, стамбульская и международная пресса (кроме советской), поддерживающая стамбульское правительство во главе с султаном, действовала против анкарской власти кемалистов. Последние предприняли издание собственных органов печати, которые должны были стать рупорами их власти как на родине, так и за рубежом. Именно с такой целью было основано Анатолийское Агентство (Anadolu Ajansı) в 1920 году[2].

В период относительной демократии в стране (1920-1925 гг.) выпускалось много газет и журналов, которые придерживались разных политических взглядов. Однако в 1925 году вместе с политической оппозицией закрылись также почти все либеральные, социалистические оппозиционные периодические издания. С постепенным ужесточением политического (однопартийного) режима и усилением авторитарных, тоталитарных тенденций в системе управления, ужесточился также контроль над прессой.

В 1931 году был принят новый закон о СМИ, который наделил власть возможностью закрыть любую газету, которая опубликовала что-нибудь, что идет в противоречие с "генеральной линией государства"[3].

Присущая тоталитарным режимам цензура и контроль над прессой полностью проявили себя в период "Национального шефа" (1938-1945 гг.), когда средства массовой информации находились под еще более жестким контролем правительства, чем раньше[4]. При Инёню возможности для деятельности свободной прессы еще более сократились, что было обусловлено в том числе началом Второй мировой войны и введением военного положения. 1-го сентября 1939 г. началась Вторая мировая война, в котором Турция придерживалась активного нейтралитета[5].

На момент 12 марта 1941 года количество закрытых цензурой газет достигло 10-и, что было абсолютным рекордом для того времени[6]. В 1943 году выходило в свет 131 газет и 172 журналов (еженедельников, ежемесячных журналов и т.д.)[7]. В указанный период, несмотря на всю важность СМИ в деле государственного строительства, тиражи газет не были очень большими, что было связано в первую очередь с малым количеством грамотного населения[8]. В период с 1943-1945 гг. Тиражи самых больших газет, издававшихся в двух центрах страны-в Анкаре и в Стамбуле-были следующими[9]:

---

[1] **Гусейнов А.,** Средства массовой информации в общественно-политической жизни Турции, М. Наука, 1981, с. 4.

[2] Там же, с. 139.

[3] TBMM ZC, C:3, D:4, 25 Temmuz 1931 (Meclis Tutanakları). *https://www.tbmm.gov.tr/tutanaklar/KANUNLAR_KARARLAR/kanuntbmmc010/kanuntbmmc010/kanuntbmmc01001881.pdf.* Последний вход 10.01.2017.

[4] **Kabacalı A.,** "Milli Şef Döneminin Örtülü Sansürü", Tarih ve Toplum, N 38, 1987, ss. 19-21.

[5] **Deringil S.,** Turkish foreign policy during the Second World War: An "Active" Neutrality, Cambridge University Press, 1989, pp. 56–57.

[6] **Kabacalı A.,** Başlangıcından Günümüze Türkiye'de Basın Sansürü, İstanbul, 1990, s. 140.

[7] **Weisband E.,** İkinci Dünya Savaşında İnönü'nün Dış Politikası, İstanbul, 2002, ss. 71.

[8] В 1927 г. грамотных насчитывались 8% от общего населения, в 1935 % - 15%. А к 1960 г. Только 39.5% населения Турции было грамотным. См. Еремеев Д., На стыке Европы и Азии, Москва, 1978, с. 145

[9] **Weisband E.,** a.g.e., ss. 71-73.

Издание	Тираж
Cumhuriyet	16.000
Ulus	12.000
Tan	12.000
Yeni Sabah	10.000
Akşam	10.000
Son Posta	10.000
Vatan	7.000
Tasviri Efkâr	6.000
Son Telgraf	4.000
İkdam	4.000
Vakit	4.000

В стране наиболее широко были представлены газеты “Джумхуриет” (Cumhuriyet) и “Улус” (Ulus). Популярность этих изданий обусловливалась в том числе их политической ориентацией. Газета “Улус” (до 1934 года носила название “Хакимиет-и Миллие” (Hakimiyet-i Milliye)) была задумана и являлась, по сути, полуофициальным органом печати правительства и партии[10]. Она служила, в некотором смысле, зеркалом турецкой политической и социокультурной системы. Газета “Джумхуриет”, старейшая газета Турции, на протяжении долгого времени (до Второй мировой войны) симпатизировала кемалистам и Народно-республиканской партии и поддерживала их политику. Однако в середине 1940-ых примкнула к оппозиции. Эта газета, благодаря своему руководству и значительному тиражу, имела сильное влияние на политическую жизнь страны[11].

Государство открыто заявляло, что СМИ должны придерживаться той точки зрения, которую продвигает власть. Выступая на совете Союза журналистов 11-го июля 1939 года, министр внутренних дел Турции Фаик Озтырак объявил о том, что пресса должна соответствовать приказам Национального шефа: “*Мы все знаем, какие прекрасные уроки о прессе и о ее свободах нам преподнес свет очей нашего народа, наш национальный шеф и наш президент Исмет Иненю. Я обязан напомнить, что следование этим директивам, которые являются основными принципами хорошей прессы,-для всех нас дело национального и отечественного долга*”[12]. Это заявление, по сути, означало, что пресса должна писать то, что хочет услышать правящая элита и его лидер Иненю.

[10] **Ибрагимов А.,** Печать Турции. М., 1965. с. 15-16.

[11] **İnuğur M.,** Türk Basın Tarihi (1919-1989), İstanbul, 1992, s. 188.

[12] **Yetkin Ç.,** Türkiyede Tek Parti Yönetimi 1930-1945, İstanbul, 1983, s. 216.

Контроль и цензура в первую очередь касались вопросов внутренней политики. Все вопросы-от политики до культуры - освещались строго в рамках официальной линии[13]. Для полного описания царящей цензуры к месту привести отрывок из воспоминаний известного турецкого журналиста-кемалиста Надира Нади: *"Можно резюмировать ситуацию с нашей прессой на 1939 год следующим образом: было запрещено злословить о Национальном шефе, правительстве и Народно-республиканской партии. Нельзя было критиковать общую политику правительства. По-этому газеты предпочитали отдавать важность мировой политике... Наши газеты свою общую редакторскую политику регулировали согласно директивам правительства."*[14]. Продолжая говорить о контроле над СМИ со стороны Иненю, Нади отмечает: "Стало модно быстро закрыть газету одним звонком и месяцами оставлять закрытыми"[15].

Интересным кажется также воспоминания журналиста, зятя Иненю Метина Токера о цензуре в период "Национального шефа". Так, Токер рассказывает: "В 1943г. я начал работать в газете "Джумхуриет". Помощником редактора был Ахмед Ихсан (Ихсан Агабей). Сзади него стоял шкаф, в котором лежала закрытая папка. Эта папка предназначалась для решений о запретах. Не было и дня, чтобы из Первого отдела (по контролю за СМИ - В.Г.) не приходил чиновник и не передавал бы новый запрет. Каждый день папка увеличивалась. Спустя некоторое время у меня появилась возможность посмотреть содержимое папки. Чего только в нем не было… Начиная от того, на какой странице, в каком объеме и с каким размером шрифтов должна выходить новость до запрета о написании прогноза погоды…"[16].

Власть при помощи Дирекции по делам печати и СМИ полностью регулировала работу изданий и журналистов. Известный дипломат Селим Сарпер, который в 1940-ых занимал пост главы этого ведомства, рассказывал, что их учреждение внимательно следило за газетами на предмет политически агрессивных выпадов против правительства[17].

Надир Нади вспоминает: "*Общая позиция газет по основным вопросам, которые были важны для власти, устанавливалась согласно указаниям Дирекции по делам печати и СМИ. Иногда сам премьер-министр организовывал пресс-конференции и предупреждал представителей или владельцев газет. Однажды, на одном из таких собраний, [премьер-министр] Рефик Сайдам долго рассказав о том, что мы должны на следующий день написать о какой-то теме внешней политики, приметил меня и с насмешкой спросил:-Ты понял?-Пока я вполголоса говорил "Понял!", он, как будто на экзамене, допрашивал меня:-Хорошо, если понял, то расскажи-ка что ты напишешь завтра?*"[18].

Цензура и контроль над СМИ касались в том числе и вопросов изображения и представления президента Иненю.[19] Конструкция харизмы лидера государства и партии занимала важное место в государственной агитационной политике. Это

[13] **Koçak C.,** Geçmişimiz İtinayla Temizlenir, Istanbul 2015, s. 355.
[14] **Nadir Nadi,** Perde Aralığından, İstanbul 1979, s. 24.
[15] Там же, стр. 54.
[16] **Toker M.,** Tek Partiden Çok Partiye, Ankara, 1990, ss. 24-26.
[17] **Weisband E.,** a.g.e., s. 70.
[18] **Nadir Nadi,** a.g.e, s. 50.
[19] **Kocabaş S.,** T.C. Devleti Tarihi 4, İnönü dönemi. Milli Şef Yönetimi - Demokrasiye Geçiş 1938-1950, Istanbul, 2009, ss. 253-270.

было обусловлено как тоталитарными тенденциями в стране[20], так и необходимостью солидаризации турецкого традиционного общества через сильного и харизматичного лидера[21]. Конструкция харизмы доходила до создания культа личности вокруг Иненю.

Тот же Нади вспоминает такой случай. В первый раз в качестве президента Иненю посетил Стамбул 6-го марта 1939 года и выступил с речью с балкона Стамбульского университета. По описанию свидетелей, "[по сравнению с речами Ататюрка] выступление не было встречено с прежней теплотой", собравшееся толпа только в конце речи воодушевленно встретила слова Иненю, когда тот заговорил об Ататюрке. Как утверждает Нади, на следующий день, однако, все газеты написали, что речь президента часто прерывалась страстными аплодисментами и закончилась невероятными восхвалениями толпы[22]. Вернемся к продолжению воспоминаний М. Токера: "*В других приказах сообщалось, что новости, касающихся Национального шефа и даже его семьи, должны быть большого объема. Это было свидетельством мощи единоличного правителя Иненю как для друзей, таки для врагов. Именно по этой причине в течении всей войны фотографии, показывающие президента на концертах, на спектаклях, на скачках, "по принуждению государства" широченно публиковались в газетах. … Достаточно хорошо помню еще один случай… Однажды в газету "Дхумхуриет" позвонили из Управления по делам печати и упрекали за то, что новость о визите многоуважаемой госпожи Иненю в Стамбул появилась не на первой полосе, а на внутренней странице*"[23].

Государство заботилось о том, чтобы информация об Иненю и его семье всегда выходила на первой полосе изданий[24]. Кроме того, был чуткий контроль за соответствие поданной информации официальной линии. Здесь следует привести отрывок из воспоминаний работника государственного радио Хайри Эсена, который рассказывает о такой практике в годы Второй мировой войны: "*19-го мая мы играли одну из спектаклей Кемаля Теземи. В одном из сцен, где я играл отца, я говорю своим детям: "Включите радио. Сейчас будет речь Национального шефа". Включаем радио, звука нет. Оказывается, госпожа инженер погрузилась в чтение и не видела сигнала. Вместо речи поставили переходную пластинку. Потом нас допрашивали, почему мы не поставили речь…*"[25].

Воспоминания людей, которые в этот период работали в СМИ, полны подобных историей, ярко показывающие реальную политику государства по отношению к масс-медиа[26].

После присуждения Иненю звания "Национального Шефа" в декабре 1938 года, началось обобществление образа президента посредством СМИ, которым принадлежало первенство в деле конструкции харизмы президента. Так, в журнале

---

[20] **Ter-Matevosyan V.,** Turkish Experience With Totalitarianism and Fascism: Tracing the İntellectual Origins, İran and the Caucasus, 19 (2005), pp. 201-215.

[21] **Бочаров В.В.** Традиционализм Востока как «принудительная солидарность» (антропологический подход) // Власть и насилие в незападных обществах. Проблемы теоретического осмысления и опыт практического изучения. М.: Издательство ГБПОУ МГОК, 2016. С. 738-749.

[22] **Nadir Nadi**, a.g.e., s. 19-20.

[23] **Toker M.,** a.g.e., ss. 24-26.

[24] **Kocabaş S.,** a.g.e., ss. 253-254.

[25] **İnanç G.,** "Yarım Asırlık Bir İmaj; Millî Şef", Toplumsal Tarih, Ağustos 1994, ss. 39–41, s. 41.

[26] **Koçak C.,** Geçmişimiz İtinayla Temizlenir, Istanbul 2015, s. 362; Hıfzı Topuz, Türk Basın Tarihi, Istanbul, 2016, ss. 160-166.

«Юлькю» (Ülkü), в главном органе “Народных домов”, периодически публиковались статьи и колонки, в которых читателям «объяснялась» необходимость титула «национальный шеф». Например, в разных статьях говорилось, что «Национальный Шеф-отец народа», «Он-воспитатель» и «все Его усилия направлены на образование и воспитание народа», «народ отдал свое будущее в надежные руки Национального Шефа», «Он представляет национальные чаяния», «подчиняться Национальному Шефу-значит исполнять желания народа»[27].

На первых полосах, в редакторских колонках, в статьях и в новостных рубриках встречались разного рода тексты, возвышающие личность Иненю. В те дни, как день “Первой битвы при Иненю”, “Второй битвы при Иненю”, День подписания Лозаннского мирного договора “героические” и “великие” действия Иненю помещались на первую полосу газет и занимали почти всю страницу. Приведем еще несколько примеров из передовых турецких газет конца 1930-ых годов: “Исмет Иненю был избран президентом единодушно и с аплодисментами”[28]; “Видеть нашего нового государственного шефа во главе нас - есть самая большая гарантия [сохранения] режима”[29]; “...ты сейчас во второй раз обновляешь неудачную судьбу, которая перевернулась со смертью Ататюрка...”[30]; “Победоносный командир, честный и верный политический деятель - Исмет Иненю”[31]; “Мы на его пути и всегда будем идти вперед, к лучшему за нашим новым шефом…”[32].

Хвалебные и возвышающие личность президента Иненю высказывания встречались не только в основных газетах и журналах, но и появлялись в периодике более локального значения, как например газеты национальных меньшинств. В армянском культурно-литературном журнале “Ай Хоснак” («Հայ խոսնակ») можно встретить такую реакцию на избрание Иненю президентом: “Две гениальные фигуры: Ататюрк и Исмет Иненю”; “...мы с глубоким почтением преклоняемся перед новым и мудрым лидером”[33].

Иногда подобные материалы появлялись в форме стихотворений. Так, например на следующий же день после избрания Иненю президентом газета “Джумхуриет” (Cumhuriyet) опубликовала стихотворение известного турецкого писателя Юсуфа Зия Ортача, посвященное Иненю. В стихотворении, носящее название “Иненю”, автор сравнивает президента с вулканом, называет “автором победного мира”[34]:

---

[27] **Unal O.,** Türkiye’de Demokrasinin Doğuşu. Tek Parti Yönetiminden Çok Partili Rejime Geçiş Süreci, Istanbul, 1994, s. 167.

[28] Ulus, 11.11.1938.

[29] Tan, 12.11.1938.

[30] Tan, 14.11.1938.

[31] Ulus, 14.11.1938.

[32] Tan, 15.11.1938.

[33] Hay Hosnak - Հայ Խօսնակ, ԺԴ տարի, թիւ 3, 12.1938, էջ 51-53:

[34] Одним из главных символических основ для авторитета Иненю со дня основания республики являлось Лозанское мирное соглашение. Еще в статусе министра иностранных дел, Иненю возглавил Анкарскую делегацию на переговорах в Лозанне, в итоге которого был подписан мирный договор. Этот договор стал одним из важнейших символов Турецкой кемалистской республики. Официальная трактовка истории представляла Иненю как главного героя и автора “этой политической победы”. Особую важность политический символ Лозаннского договора приобрел в период президентства Иненю как один из главных механизмов построения харизмы “героя-президента”, “принесшего блестящий победный мир”. В этом контексте применялись разные эпитеты, которые характеризовали Иненю: “Герой, разорвавший цепи рабства”, “Лозан-это Иненю!” и т.д. Праздник дня Лозанны отмечался по всей стране и служил важным каналом тиражирования образа Иненю.

... Ты вулкан, пылающий с решительностью,
Ты море надежды, ты след молнии на века,
Эй, попутчик славной победы. Ты наш Исмет!
Дух нашего отца с небес поздравляет тебя![35]

***

Несмотря на большие усилия власти, прилагаемые для поднятия уровня грамотности простых жителей страны, до второй половины 20-го века большая часть населения Турции являлась безграмотным. Именно этим было обусловлено то обстоятельство, что власти также уделяли большое внимание визуальным и непечатным репрезентациям пропагандируемых идей, которые были понятны абсолютному большинству турок, умственный мир которых пока еще был образован на основе изображений в противоположность печатной речи. Отсюда можно понять важность национальных праздников, локальных и республиканских празднований, которые обеспечивают бессознательное и эмоциональное усвоение информации. Особо важным для донесения идей кемализма и создания "Нового турецкого человека" являлись массовые спортивные мероприятия. Своеобразной декорацией к государственным "пропагандистским спектаклям" служили архитектура, памятники и политические символы (флаг, гимн и т.д.). Кемалистское руководство стремилось запечатлеть свою мощь в стиле монументального неоклассицизма. Визуальному присутствию власти в метафизическом пространстве общества способствовали портреты и памятники лидеров государства, которые находились во всех уголках страны. Весьма эффективным средством массовой информации стало радио, который появился в Турции в 1927 году: в столице Анкаре и Стамбуле начали вещать две длинноволновых передатчика. Радио постепенно становилось незаменимой вещью в качестве источника информации и культурного обогащения для сельского населения, которое еще долгое время продолжало оставаться неграмотной.

Сильный контроль и цензура распространялись и над всеми вышеперечисленными областями. Конструкция образов власти и культа Иненю в СМИ и через другие механизмы в разных масштабах продолжалась до 1950 года, когда к власти пришла Демократическая партия. Цензура продолжалась значительно меньше (до 1945 года). Основными причинами цензуры были однопартийный режим правления[36], тоталитарные характеристики тогдашней власти, военное положение и особенности ускоренной модернизации турецкого традиционного общества.

Ключевые слова-политическая антропология, культ личности, образы власти, Исмет Иненю, кемализм, СМИ, Турецкая Республика, конструкция харизмы, модернизация

Варужан Гегамян, Контроль и цензура: Турецкая пресса в период "Национального шефа"-Турецкие СМИ и, в частности, пресса, являлись основным инструментом государственной пропаганды в новообразованной Турецкой Республике. В

[35] **Ortaç Y.Z.,** İnönü. - http://www.halilibrahimtunali.net/index.php/1945-8-ocak-13-ocak. Последний вход 10.01.2017г.

[36] **Akandere O.,** Milli Şef Dönemi. Çok-partili hayata geçişte rol oynayan iç ve dış tesirler 1938-1945, İstanbul, 1998, ss. 59-67.

период президентства Исмета Иненю (1938-1950) через СМИ конструировалось его харизматическое лидерство и культ личности. Этот процесс был важен как для сохранения и развития авторитарной (тоталитарной) системы власти, так и для мобилизации и социальной консолидации турецкого традиционного общества в условиях принудительной модернизации. В статье автор показывает положение и роль турецкой прессы в кемалистской пропаганде в годы правления президента Иненю, описывает основные методы контроля и цензуры над СМИ, а также разбирает механизмы конструкции культа личности Иненю через прессу.

Վարուժան Գեղամյան, Վերահսկողություն և գրաքննություն. «Ազգային շեֆի» կառավարման տարիների թուրքական մամուլը-ՋԼՄ-ները (և մասնավորապես՝ մամուլը) Թուրքիայի նորաստեղծ հանրապետությունում պետական քարոզչության հիմնական գործիքներից էին: «Ազգային շեֆի»՝ նախագահ Իսմեթ Ինենյուի իշխանության տարիներին(1938 - 1950) ՋԼՄ-ները օգտագործվում էին նրա խարիզմայի և անձի պաշտամունքի ձևավորման համար: Այս գործընթացը կարևոր էր թե՛ ավտորիտար (ամբողջատիրական) միակուսակցական վարչակարգի պահպանման և զարգացման, և թե՛ թուրքական ավանդական հասարակության՝ շարունակվող արդիականացման պայմաններում առաջնորդի անձի շուրջ հասարակության համախմբան համար: Հոդվածում հեղինակը ցույց է տալիս «Ազգային շեֆի» նախագահության շրջանում թուրքական մամուլի տեղն ու դերը քեմալիստական պետական քարոզչական համակարգում, ներկայացնում է թուրքական մամուլի վերահսկողության և գրաքննության հիմնական դրսևորումները, ապա դիտարկում է Ինենյուի անձի պաշտամունքի ձևավորման մի քանի մեխանիզմները:

Varuzhan Geghamyan, Control and censorship: Turkish press during "National Chef" period-Mass media (press in particular) was the main tool for state propaganda in Early Turkish Republic. During "National Chef" period (Milli Şef Dönemi) it was used also for the construction of the charisma and cult of the president Ismet Inonu (1938-1950). Creation of his image was crucial both for strengthening of one-party totalitarian regime and integration and unification of Turkish traditional society in the process of modernization from above. In this paper author gives an overview of the press and censorship, than looks at the leader's cult construction through the lenses of contemporary Turkish journalists. This helps us to understand the mechanisms of image construction in traditional society.

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1921-1926 ԹԹ.

ԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովրդի որոշ հատվածներ տարբեր պատճառներով շարունակաբար արտագաղթել են մայր հայրենիքից: Չնայած այս ոչ ցանկալի իրողությանը՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին հայ ժողովրդի հիմնական հատվածը բնակվում էր հայրենի տարածքներում: Մինչև 1915թ. Եղեռնական իրադարձությունները հայրենիքից դուրս ապրող հայության թիվը (առանց բուն ռուսական և օսմանյան կայսրությունների լայնածավալ տարածքներում բնակվողների) հասնումէրմոտ 200 հազարի, որից կեսը բնակվում էին Իրանում, իսկ մյուս 100 հազարը աշխարհի տարբեր երկրներում[1]: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո զանգվածային կոտորածներից փրկված և բռնագաղթի միջոցով Թուրքիայից արտաքսված հայության բեկորները անհամեմատ ստվարացրին ու բազմապատկեցին հայկական գաղթօջախներն աշխարհի տարբեր անկյուններում՝ ստեղծելով ընդարձակածավալ հայկական սփյուռքը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Առաջին հանրապետությունն իր տեղը զիջեց Խորհրդային Հայաստանին, որը այդ ժամանակ գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում: Խորհրդային Հայաստանը ժառանգություն ստացավ ոչ միայն սովի մատնված ու համաճարակային հիվանդությունների ճիրաններում գտնվող բնակչությամբ ավերված գյուղեր ու քաղաքներ, այլ նաև ներգաղթ կազմակերպելու փորձ[2]: Հայաստանում չկար մի անկյուն, որը ենթարկված չլիներ համատարած ավերածությունների, իսկ բնակչությունն էլ ապրած չլիներ զանգվածային ներգաղթի կամ արտագաղթի հետ կապված դժվարություններ: Երկիրը լի էր Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից եկած գաղթականներով:

Գաղթականության, ինչպես նաև արդեն սկիզբ առնող ներգաղթի հարցերը կենտրոնացնելու և ավելի կազմակերպված ձևով իրականացնելու նպատակով 1921թ. հուլիսի կեսերին ՀԽՍՀ Ժողկոմխորհի դեկրետով վերացվեց ներքին գործերի ժողկոմատի կազմում եղած կենտրոնական վերաբնակեցման բաժինը, և ստեղծվեց ժողկոմխորհին առընթեր գաղթականական գործերի գլխավոր վարչություն (գաղթվար): Գաղթվարը կարևոր դեր խաղաց գաղթականության տնտեսական դրության բարելավման, նրա տեղավորման, ինչպես նաև ներգաղթի կազմակերպման ուղղությամբ: 1921թ. վերջերին, երբ արդեն որոշ չափով կանոնակարգվեց գաղթականության հարցի լուծումը, գաղթվարը՝ որպես իր խնդիրները կատարած մի արտակարգ օրգան, լուծարվեց: Նրա ֆունկցիաների մի մասը հանձնվեց ներքգործժողկոմատում կազմակերպված գաղթականական բաժնին, մի մասն էլ՝ սոցապժողկոմատին[3]:

Գաղթականության հարցիլուծմանը զուգընթաց խորհրդային կառավարությունը լուրջ ջանքեր էր գործադրում նաև նրա առօրյա հոգսերի թեթևացման ուղղությամբ՝ բացելով սննդակայաններ, որբանոցներ, հիվանդանոցներ և այլն:

[1] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 48:

[2] Տե՛ս **Ա. Մտեփանյան,** xxդարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010, էջ 35:

[3] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** նշվ. աշխ., էջ 65:

Առանց այդպիսի ամենօրյա օգնության ու հոգատարության անհնարին կլիներ բազմահազար գաղթականներին ու որբերին կարճ ժամանակամիջոցում դուրս բերել սովահար վիճակից և նրանց փոխադրել տնտեսության վերականգնման ու զարգացման ուղին: Այս գործում խորհրդային կառավարությունը օգտագործում էր նաև օտարերկրյա մի շարք բարեգործական հաստատությունների՝ Մերձավոր Արևելքի օգնության Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (կրճատ՝ Ամերկոմ), Անգլիական կոմիտեի, ինչպես նաև Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ու սփյուռքահայ այլ բարեգործական կազմակերպությունների ուժերն ու միջոցները[4]:

Քայքայված երկիրը վերաշինելու, հանրապետությունում կուտակված գաղթականությանն օգնելու, հայրենիքի և սփյուռքի միջև կապերը զարգացնելու, ինչպես նաև հայրենադարձությունն իրականացնելու գործում բավականին դրական դերակատարում է ունեցել Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ): Այն կազմակերպվել է 1921 թ. սեպտեմբերին, Երևանում, մի խումբ հասարակական գործիչների ու մտավորականների նախաձեռնությամբ, որոնք խորապես մտահոգված լինելով մեր ժողովրդի ճակատագրով, ցանկանում էին միավորել ազգի բոլոր կենսունակ ուժերը՝ շուտափույտ կերպով երկիրը ոտքի կանգնեցնելու նպատակով[5]:

ՀՕԿ-ի հիմնադիրների նպատակն էր շինարար աշխատանքի ներգրավել այն բոլոր խավերին, որոնք զանազան պատճառներով հեռու էին կանգնել երկրում կատարվող վերափոխություններից և քարոզչական աշխատանքներ տանել սփյուռքահայերի շրջանում՝ կողմնորոշելով նրանց դեպի Խորհրդային Հայաստան: Խորհրդային վարչակարգի պայմաններում նման մի անկուսակցական հասարակական կազմակերպության համար խիստ կարևոր նշանակություն ուներ հատկապես սփյուռքահայության կենսունակ ուժերը միավորելու, նրան հայրենիքի շուրջը համախմբելու խնդիրը:

ՀՕԿ-ի հիմնադիր համագումարից անմիջապես հետո 1921-1924 թթ. ստեղծվեցին նրա տեղական մասնաճյուղերը խորհրդային հանրապետությունների տարբեր քաղաքներում և արտասահմանում (ԱՄՆ, Ֆրանսիա, Բալկանյան երկրներ, Մերձավոր Արևելքի երկրներ և այլն)[6]:

Խորհրդային Հայաստանում ապաստան գտած արևմտահայ գաղթականության նկատմամբ ցուցաբերած ջերմ վերաբերմունքը և ստեղծված համեմատաբար տանելի պայմանները օտարության մեջ դեգերող շատ հայորդիների թելադրում էին լրջորեն խորհել իրենց հետագա ճակատագրի մասին: Նրանցից շատերը ուշադիր հետևելով Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին ձգտում էին ներգաղթել հայրենիք և ազատվել օտարության մեջ իրենց բաժին հասած տառապանքներից: Խորհրդային կառավարությունը հայրենիք ներգաղթելու ցանկությամբ մեծ թվով խմբակային և անհատական խնդրագրեր, նամակներ ու դիմումներ էր ստանում սփյուռքի տարբեր անկյուններից:

Խորհրդային կարգերի հաստատմանժամանակահատվածում Արևելյան Հայաստանի բնակչությունը (1920թ. տվյալներով մոտ 720 հազար)[7] նկատելիորեն

---

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 70:

[5] Տե՛ս «Հրավիրակ» պարբերաթերթ Հայաստանի օգնության կոմիտեի կենտրոնական վարչության, 1925, N 1, էջ 1:

[6] Տե՛ս **Ա. Ստեփանյան,** նշվ. աշխ., էջ 54:

[7] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** նշվ. աշխ., էջ48:

զիջում էր դրսում ապրող հայությանը, որի մեծ մասը թուրքական յաթաղանից փրկված հայորդիներն էին: Այս հանգամանքը չէր կարող վրիպել Խորհրդային ղեկավարության ուշադրությունից: Չնայած առկա դժվարություններին և ընդառաջելով տարագիր հայության հայրենադարձ ցանկություններին՝ արդեն 1921թ. վերջերից Խորհրդային կառավարությունը ձեռնամուխ եղավ սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման դժվարին գործին[8]:

Սկզբնական շրջանում հատկապես շատ դիմումներ էին ստացվում Միջագետքում (Իրաք) ապաստանած հայ տարագիրներից, որոնք գտնվում էին անընկարագրելի ծանր պայմաններում: Տարագիրների մեծ մասը տեղավորված էր Բաղդատից ոչ հեռու գտնվող Բաքուբա ավանում[9]: Ճամբարականներին անգլիացիները տալիս էին աննշան քանակությամբ անորակ մթերքներ, որով մի կերպ իրենց գոյությունն էին քարշ տալիս գաղթականները: Այս ծանր իրավիճակից դուրս գալու համար Միջագետքում կուտակված հայությունը անընդհատ փորձում էր Բաղդատի, Կ. Պոլսի ու Երևանի բարեգործական ու պետական կառույցների հետ հարաբերությունների մեջ մտնել:

Դեռևս 1919թ. ամռանը հայ տարագիրներին հաջողվում է կապվել Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսի հետ և նրան տեղեկացնել իրենց աննախանձելի կացության մասին, բայց երկրում առկա անմխիթար վիճակը թույլ չի տալիս կազմակերպելու ծանր վիճակում գտնվող հայության ներգաղթը: Ավելի ուշ նրանք կապ հաստատեցին Խորհրդային Հայաստանի հետ[10]:

Խնդիրն այն է, որ անգլիացիները 1921 թ. գարնանից այլևս չէին ցանկանում նյութապես օգնել հայերին և հետզհետե ձգտում էին ցրել հայ գաղթականների ճամբարները: 1921թ. հուլիսի 20-ից նրանք դադարեցրին հայ գաղթականությանը տրվող սնունդը՝ ժողովրդին մատնելով աննախադեպ տնտեսական ճգնաժամի: Ստեղծված իրավիճակում Միջագետքի գաղթականության ներկայացուցիչները բանակցությունների մեջ մտան Խորհրդային Հայաստանի կառավարության Թավրիզում գտնվող գաղթականական գործերի լիազոր Գր. Վարդանյանի, ինչպես նաև Երևան մեկնած իրենց պատվիրակների միջոցով ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի հետ և խնդրեցին շուտափույտ կերպով գաղթականությանը փոխադրել Հայաստան[11]:

Խորհրդային կառավարությունը տեղեկանալով Միջագետքում առկա իրավիճակին 1921 թ. հոկտեմբերի 7-ին հատուկ նոտայով դիմում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությանը և առաջարկում միջոցներ ձեռնարկել 14 հազար հայ գաղթականներին Հայաստան փոխադրելու համար[12]: Վերջիվերջո ձեռք առած միջոցառումների արդյունքում անգլիական իշխանությունները համաձայնվեցին գաղթականներին իրենց նավերով տեղափոխել Բաթում:

1921թ. դեկտեմբերի 20-ին Բաթում էր հասել հայ գաղթականներով առաջին շոգենավը Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի ուղեկցությամբ[13]: Սա փաստորեն հայրենադարձների առաջին խումբն էր, որով սկիզբ դրվեց ազգահավաքման այն

---

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 74:

[9] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 267, թ. 119-121:

[10] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** նշվ. աշխ., էջ 77-78:

[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 267, թ. 122:

[12] Տե՛ս նույն տեղում, գ. 97, թ. 7:

[13] Տե՛ս **Ա. Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 61:

մեծ գործին, որը շարունակվեց գրեթե ողջ խորհրդային շրջանում: Ներգաղթածների մեծ մասը տեղավորվեց Ալեքսանդրապոլի, Վարդենիսի և Ղամարլուի (Արտաշատ) շրջաններում: Հակառակ նախապես ձեռք բերված համաձայնությանը՝ անգլիական իշխանությունները որոշում են Միջագետքում մնացած հայ գաղթականությանը Հայաստան փոխադրել հենց ձմեռվա ամիսներին, երբ այստեղ ավելի դժվար կլիներ հոգալ նրանց բազմատեսակ կարիքները:

Խորհրդային իշխանությունների նոր առաջարկը բրիտանական կառավարությանը գաղթականների տեղափոխումը մինչև գարուն հետաձգելու հետ կապված որևէ արդյունք չտվեց, և 1922թ. հունվարի 10-ին Բաթում ժամանեց մոտ 3000 մարդուց բաղկացած միջագետքահայերի երկրորդ քարավանը, որոնց ընդունելու համար ձեռք առնվեցին արտակարգ միջոցառումներ[14]: Չնայած բազմատեսակ կարիքներին և հոգսերին՝ բոլոր ներգաղթածներն էլ գոհ և ուրախ էին, որ երկարատև դեգերումներից ու զրկանքներից հետո բախտ ունեցան հաստատվելու հայրենի հողի վրա: Գաղթականները, հաստատվելով հայրենիքում, սկզբնական շրջանում ստանում էին շատ արտոնություններ՝ անվճար բժշկություն, բնակարաններ, վարկեր, հող, սերմացու, գործիքներ, շինանյութեր և այլն:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վասպուրականից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից և այլ վայրերից Միջագետքում կուտակված հայ գաղթականության մեծ մասը՝ ավելի քան 9000 մարդ, Բաթումով ու Ջուլֆայով Խորհրդային Հայաստան ներգաղթեց 1921թ. վերջին և 1922թ. սկզբներին[15]: Միջագետքի հայ տարագիրների Հայաստան հասնելու լուրից հետո հայկական մյուս գաղթօջախներում հաստատված սփյուռքահայերը էլ ավելի բուռն կերպով սկսեցին դիմումներ ու խնդրագրեր գրել՝ Հայաստան ներգաղթելու վճռական ցանկությամբ:

Չնայած նման բովանդակությամբ ստացվող բազմաթիվ խնդրանքներին, խորհրդային կառավարությունը 1923թ. կարողացավ իրականացնել միայն մոտ 1000 հոգու ներգաղթը Վանից, Իրանից և այլ վայրերից[16]: Այս ամենի հիմնական պատճառը Խորհրդային Հայաստանում առկա ծանր տնտեսական իրադրությունն էր, որը թույլ չէր տալիս ընդառաջել բոլորին և ավելի մեծ թվով ներգաղթողների ընդունել:

Սփյուռքահայերի դիմումներն ու խնդրագրերը ցույց էին տալիս, որ 1923-1924թթ. նրանց մեծամասնությունը օտար երկրներում գտնվում էր տագնապալի վիճակում: Նման իրավիճակում խորհրդային կառավարությունը նպատակահարմար գտավ շարունակել սփյուռքահայերի հայրենադարձությունը:

1924թ. ընթացքում Հունաստանից, Կ.Պոլիսից, Սիրիայից, Միջագետքից և Ֆրանսիայից հայրենիք եկան 4167 տարագիրներ: Նրանց մեծ մասը (3051հոգի) հայրենիք ժամանեց Բաթումով 1924թ. մարտի 29-ից մինչև 1925թ. հունվարի 19-ն ընկած ժամանակահատվածում[17]: 1924թ. վերջերից հայրենադարձությունն ավելի զանգվածային բնույթ ստացավ, և հանրապետությունում եղած գաղթականության շրջանում տարվող աշխատանքի ծավալը նույնպես մեծացավ: Նկատի ունենալով այդ հանգամանքները՝ 1925թ. հունվարի 28-ին ՀՍԽՀ ժողկոմխորհը որոշում ընդունեց ստեղծել ժողկոմխորհին առընթեր գաղթականական հանձնա-

[14] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 5, թ. 78:

[15] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** նշվ. աշխ., էջ 86:

[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ.116, ց. 1, գ. 2352, թ. 23:

[17] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 418, թ. 20:

ժողով: Այդ հանձնաժողովի գործունեության շնորհիվ հայրենադարձության և ընդհանրապես գաղթականության հետ տարվող աշխատանքները ընթանում էին ավելի կազմակերպված ձևով: 1925թ. սեպտեմբերին գաղթականական հանձնաժողովը վերակառուցվեց և կոչվեց ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով, որը ստացավ ավելի լայն լիազորություններ[18]:

1925թ. ապրիլի 21-ին ժողկոմխորհին առընթեր գաղթականական հանձնաժողովը քննարկեց Միջագետքից և Հունաստանից նոր հայրենադարձություն կազմակերպելու հարցը և որոշեց 1925թ. ընթացքում վերոհիշյալ երկրներից ընդունել 10 հազար տարագիրներ, այդ թվում 8000-ը՝ Հունաստանից: Նախօրոք մշակված ծրագրի համաձայն 1925թ. ընթացքում Բաթումով և Ջուլֆայով հայրենիք ներգաղթեցին 5016 մարդ, որոնցից 3656 մարդ Հունաստանից, 780 մարդ Պոլսից, 385 մարդ Միջագետքից[19]:

Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1925թ. տեղի ունեցավ ավելի հաջող և կազմակերպված, որը խոսում էր արդեն որոշակի փորձի ձեռք բերման մասին: Բացի այդ գործընթացին զգալիորեն նպաստեց այն հանգամանքը, որ այդ ուղղությամբ արտասահմանում որոշակի աշխատանք կատարեցին խորհրդային դեսպանություններն ու Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղերը:

Ներգաղթյալների մեծ մասը տեղավորվեց Երևան և Լենինական քաղաքներում, իսկ մոտ 1500 հոգի՝ Արազդայանում: Պետությունը հայրենադարձներին զգալի աջակցություն էր ցույց տալիս, որպեսզի նրանք կարճ ժամանակամիջոցում կարողանային ստեղծել իրենց սեփական տնտեսությունները: Պետք է նաև նշել, որ հայրենադարձների շնորհիվ հանրապետության ժողովրդական տնտեսությունը ձեռք էր բերում առաջնակարգ մասնագետներ, որովհետև նրանցից շատերը որակյալ արհեստավորներ, բանվորներ և հմուտ երկրագործներ էին:

1921-1925թթ. տեղի ունեցող հայրենադարձությունը իրականանում էր բավականին մեծ դժվարությամբ, քանի որ այդ գործի կատարումը պահանջում էր բավականին մեծ նյութական միջոցներ, իսկ Խորհրդային երկիրը այդ ժամանակահատվածում գտնվում էր ոչ բարվոք տնտեսական վիճակում: Հ. Մելիքսեթյանի կազմած աղյուսակի համաձայն 1921-1925թթ. արտասահմանից Խորհրդային Հայաստան ներգաղթածների թիվը կազմում է 19 688 մարդ[20]: Սակայն վերջինս իրավամբ նշում է, որ աղյուսակի մեջ չեն մտել բազմաթիվ հայրենադարձներ, որոնք ներգաղթել են անհատական վիզաներով, առանձին ընտանիքներով կամ փոքր խմբերով: Այլ կերպ ասած նշված ժամանակահատվածում հայրենադարձների թիվը եղել է շատ ավելի քան ներկայացված է աղյուսակում: Ա. Ստեփանյանը անհատական թույլատվությամբ ներգաղթածների թիվը հաշվում է չորսհինգ հազար մարդ և ըստ այդմ համարում, որ 1921-1925թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթածների ընդհանուր թիվը կազմում է մոտավորապես 25 հազար մարդ[21]: Սակայն կարծում ենք, որ իրականում հայրենադարձների թիվը եղել է շատ ավելի, քանզի որոշ քանակությամբ հայեր այս ժամանակահատվածում Հայաստան տեղափոխվեցին նաև խորհրդային մյուս հանրապետություններից, որոնց թիվը այդքան էլ ստույգ չէ: Բացի այդ, անհատական վիզաներով ժամանածներից շատերը չեն հաշվառվել ընդհանրապես: Այս ամենը անշուշտ հապ-

[18] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** նշվ. աշխ. էջ 97:
[19] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 377, թ. 3 և գ. 486, թ. 19:
[20] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան**, նշվ. աշխ., էջ 105:
[21] Տե՛ս **Ա. Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 65-66:

ճեպ կազմակերպված ներգաղթի արդյունք է: Պետք է նշել, որ իր գոյության սկզբնական շրջանում նորաստեղծ խորհրդային իշխանությունն ի վիճակի չէր անհրաժեշտ չափով բավարար աշխատանք տանել գաղթականության հետ, քանի որ չկային հարկ եղած միջոցները, պակասում էին համապատասխան կադրերը, չկար աշխատանքի կազմակերպման համապատասխան փորձ և այլն: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ստեղծված պայմաններում իրականացված հայրենադարձությունը մեզ թույլ չի տալիս խոսել հստակ թվերի մասին, և մենք կարող ենք նշել միայն մոտավոր տվյալներ:

Խորհրդային կառավարությունը ժողովրդական տնտեսության վերականգընմանը զուգընթաց մեծ ուշադրություն էր ցուցաբերում ինչպես հանրապետությունում գտնվող արևմտահայ գաղթականության, այնպես էլ սփյուռքահայ տարագիրների բախտի նկատմամբ: Չնայած ցուցաբերված մեծ հոգատարությանը՝ պետք է նշել, որ սկզբնական շրջանում Խորհրդային Հայաստան ժամանած ոչ բոլոր գաղթականներն էին ապահովված հողով, հարմարավետ բնակարաններով և այլ միջոցներով: Դա էր պատճառը, որ 1926թ. հունվարի 21-ին հատուկ քննարկման ենթարկվեց հանրապետությունում ստեղծված իրավիճակը՝ կապված գաղթականության հետ: Հաշվի առնելով գաղթականների տեղավորման հետ կապված դժվարությունները, նյութական խոշոր միջոցների անհրաժեշտությունը, հանրապետությունում գոյություն ունեցող խիստ սակավահողությունը՝ ժողկոմխորհը որոշում կայացրեց սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին[22]:

Թեպետ սփյուռքահայերի ներգաղթը պաշտոնապեսժամանակավոր դադարեցված էր, այնուամենայնիվ, ինչպես 1926թ., այնպես էլ հետագա տարիներին անհատական դիմումներով հայրենադարձությունը դարձյալ շարունակվեց, բայց առավել փոքր չափերով: Ներգաղթի թուլացումը պայմանավորված էր նաև 1926թ. Լենինականում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժով, որի հետևանքների վերացման համար հատկացվեցին բավականաչափ նյութական միջոցներ: Բացի այդ՝ 1927թ-ի սեպտեմբերի 22-ին Ազգերի լիգայի խորհուրդը հրաժարվեց 50 հազար հայ գաղթականներ Հայաստան տեղափոխելու իր խոստումից[23], իսկ 1929թ. սեպտեմբերի 21-ին ապարդյուն կերպով արծարծված այդ հարցը ընդհանրապես հանվեց օրակարգից[24]:

Այսպիսով՝ կարելի արձանագրել, որ 1921-1926թթ. հազարավոր հայորդիներ կարողացան վերադառնալ հայրենիք և իրենց ավանդն ունենալ երկրի վերաշինման գործին: Անցումային փուլում գտնվող Խորհրդային Հայաստանի համար, որը սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր իրավիճակում էր, ներգաղթ կազմակերպելը մեծ պատասխանատվություն էր: Չնայած առկա մեծ դժվարություններին, ներգաղթի ժամանակ և դրանից հետո գոյություն ունեցող թերություններին՝ այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ նշված ժամանակահատվածում իրականացված հայրենադարձությունը ունեցավ դրական մեծ նշանակություն: Կազմակերպված հայրենադարձության արդյունքում հազարավոր հայեր, որոնք արտերկրում հայտնվել էին ծայրահեղ ծանր վիճակում կարողացան վերադառնալ հայրենիք և նոր կյանք սկսել: Բացի այդ՝ ներգաղթյալների միջոցով մասամբ լուծվում էին նաև երկրի ժողովրդագրական խնդիրները և աշխատող ձեռքեր

[22] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** նշվ. աշխ., էջ 108:
[23] Տե՛ս **Հ. Թոփուզյան,** Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1978, էջ 248:
[24] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան,** նշվ. աշխ., էջ 150:

բերում տնտեսություն: Գաղտնիք չէ, որ ներգաղթյալների մեջ կային տարբեր ոլորտների բազմաթիվ բարձրորակ մասնագետներ, որոնք իրենց աշխատանքով նպաստեցին Խորհրդային Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Բանալի բառեր-ներգաղթ, հայրենադարձություն, խորհրդային, գաղթականներ, սփյուռք, օտարություն, տարագիրներ, կազմակերպություններ, օգնություն, բնակեցում, տնտեսական, հայրենիք:

Արա Հովհաննիսյան, Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1921-1926թթ.- Հայոց ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ սփռված հայությունը հայտնվել էր շատ ծանր վիճակում: Օտարության մեջ գտնվող հայերը բազմաթիվ նամակներով և խնդրագրերով դիմում էին խորհրդային կառավարությանը՝ Հայաստան ներգաղթելու ակնկալիքով: Չնայած երկրում տիրող քաղաքական և սոցիալ-տնտեսական բարդ իրադրությանը՝ խորհըրդային իշխանությունները արդեն 1921 թ.վերջերից ձեռնամուխ եղան ներգաղթի կազմակերպման դժվարին գործին: Չեռք առնված միջոցառումների արդյունքում 1921-1926թթ. արտերկրից Խորհրդային Հայաստան ներգաղթեցին հազարավոր հայեր:

Ара Оганесян, Репатриация армян диаспоры в 1921-1926 гг.-После Геноцида армян разбросаные по всему миру армяне оказались в крайне тяжелом состаянии. Многие армяне, которые находились зарубежом, многочисленными просьбами и письмами обращались к советскому правительству с надеждой иммигрировать в Армению. Несмотря на сложную политическую и социально-экономическую ситуацию советская власть уже с конца 1921 года приступила к реализации сложного процесса иммиграции. В результате придпринятых мер в 1921-1926 гг. в Советскую Армению переехали тысячи армян.

Ara Hovhannisyan,The Repatriation of the Diaspora Armenians in the period of 1921-1926-After the Armenian Genocide, the Armenians, widely spread all over the world, were in bad situation. The Armenians abroad were applying to the Soviet government with many requests and letters of applications with the expectation of immigrating to Motherland. Despite the social and political situation in the country, the Soviet Government had already initiated the difficult work of organiazing the Armenians' immigration. As a result, during 1921-1926 many Armenians from abroad immigrated to Soviet Armenia.

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ՍԱՍՆԱ ԾՌԵՐ ԷՊՈՍԻ. ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՄԵԾ ՄՀԵՐ ԵՎ ՓՈՔՐ ՄՀԵՐ

ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ

Որքան էլ ներհակ են կյանքն ու մահը, այնուամենայնիվ, մարդու մտածողության ու հոգեբանության մեջ թաքնված դրանց ընկալումները փոխպայմանավորված են և առաջին հերթին արտացոլվում են կոլեկտիվ ստեղծագործություններում: Համընդհանրականությունը, անխուսափելիությունն ու ճակատագրականությունը կյանքի և մահվան ընկալումների մեկնաբանությունները առաջնահերթություն են դարձնում քաղաքակրթական լինելության ողջ «գունապնակում»: Եվ տրամաբանական է, որ այդ ընկալումներն առաջին հերթին խաչվում են հատկապես էպիկական տեքստերում, որոնք մշտապես գտնվում են հանրային խստագույն հսկողության տիրույթում, քանի որ, կարելի է ասել, տվյալ ժողովրդի լինելության խորհուրդները այդ երկու ընկալումների ածանցյալներն են:

Կյանքի և մահվան ընկալումների քննությունն օգնում է հնարավորինս ճիշտ պատկերացնելու և հասկանալու տվյալ ժողովրդի արժեքային համակարգը, քանի որ վերջինիս խարիսխը նախ կոնկրետ լեզուն ու դրանով ստեղծված այն տեքստերն են, որոնք առնչվում են հավաքական հիշողությանը:

Հայերենի լեզվամտածողական համակարգում կյանքի և մահվան ընկալումներից անբաժանելի են ժառանգականության ու հարատևության խորհուրդները:

Այն, որ «Սասնա ծռեր» էպոսում այդ խորհուրդները մեկտեղված են **երկու**՝ Մեծ և Փոքր Մհերների տեքստային դրսևորման կերպերում, հուշում է, որ հայ ժողովրդի լեզվամտածողության մեջ կյանքի ու մահվան փոխհարաբերության հարց գոյություն ունի առնվազն **երկու** մակարդակներում: Էպոսի տեքստը երկու Մհերների (Դավիթը նրանց շաղկապում է) միջոցով է բացահայտում և ամբողջացնում մահվան ու կյանքի փոխհարաբերության հիմնախնդիրը: Մեր այս տեսակետի հաստատումն է նաև այն իրողությունը, որ երկու Մհերները, որպես տեքստային երևույթներ, ունենալով բառանվանային ընդհանրություն, միանգամայն տարբեր են կերպարաստեղծման, խորհրդանշայնացման առումներով: Ուրեմն՝ նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչու է հայկական էպոսը կյանքի և մահվան հիմնախնդիրների արծարծմանն ու լուծմանը ծառայեցնում երկու տարբեր գեղարվեստական դրսևորումներ, և թե այդ ընթացքում ինչ տեքստային-գեղարվեստական «բեռը» ունի դրանցից յուրաքանչյուրը:

Մեծ և Փոքր Մհերները նույն անունն են կրում, քանի որ էպոսի տեքստը նրանց անքակտելիորեն շաղկապում է նույն լեզվամտածողական արժեհամակարգային հիմնախնդիրների հանգույցում: Թեև ***Մհեր*** նշանակում է արեգակ, որով Երկրի վրա պայմանավորվում են կյանքը և մահը, սակայն այս դեպքում անվան բովանդակային կողմից առավել հետաքրքրական է դրա կրկնությունը երկուսի դեպքում, ինչը հուշում է, որ էպոսի տեքստը վերջիններիս այդ կերպ շաղկապում է նույն լեզվամտածողական արժեհամակարգային խնդիրներ սպասարկելու համար:

Մեծ Մհերն ապրում է իր երկրի, իր աշխարհի խնդիրներով: Միակ բանը, որով նա առնչվում է ***դրսի*** աշխարհին, Մսըր գնալն ու այնտեղ ապրելը, որդի ունենալն է: Այս իրադարձությունը, սակայն, էպոսում շրջվում է Մեծ Մհերի դեմ. նա կորցնում է կարևոր՝ ժամանակի զգացողությունը և ստիպված է լինում սեփական կյանքի գնով վերադառնալ լինելության բնական շրջածիր: Մեծ Մհերի՝ ***դրսի*** աշխարհի հետ շփումը ձախողված է:

Էպոսի տեքստը, սակայն, Մեծ Մհերի ***դրսի*** «ոդիսականը» կազմակերպում է ավելի կարևոր մի խորհուրդ արծարծելու նպատակադրումով. դա ժառանգականության խորհուրդն է, որը շաղկապվում է ընդհանրապես տեսակի հարատեվությանը: Թեև Մեծ Մհերը, Մեծ Մելիքի հետ ունեցած պայմանի համաձայն, գնում է Մսըր և Մսրա տիրուհուց տղա (Փոքր Մելիք) ունենում, այնուամենայնիվ, էպոսում «տարօրինակորեն» անժառանգ է մնում, քանի դեռ չի վերադառնում Սասուն և ունենում Դավթին:

Իսկ ինչո՞ւ ***դրսում*** Մսըրում՝ օտարության մեջ ծնված Մեծ Մհերի տղան (փոքր Մելիք) այդպես էլ չի համարվում նրա ժառանգը:

Եվ ինչո՞ւ երբ Մեծ Մհերը վերադառնում է Սասուն, գերխնդիր է դառնում ամեն գնով, նույնիսկ սեփական կյանքի գնով ժառանգ ունենալը:

Հայերենի գլխավոր տեքստի՝ էպոսի, արժեհամակարգային կարևոր հիմնադրույթներից մեկն այն է, որ **ժառանգ պետք է ունենալ հայրենի հողում. միայն այդ դեպքում է զավակը համարվում ժառանգ**:

Դրսում սեփական հող ու տարածքից հեռու, կյանք փնտրելը ոչ միայն պարզապես սպառնում է արժեհամակարգային փլուզումներով, այլև հավասարազոր է ինքնասպանության. մասնավորապես Մեծ Մհերի դեպքում հայրենիքից դուրս ծնված և «դրսի կյանքի» արդյունք նրա Մելիք որդին սպառնում է հենց Մեծ Մհերի հայրենիքին՝ Սասունին, ու Սասնա ծռերի տոհմին:

Թեև փոքր Մսրա Մելիքն արդեն կար, Մինչև Դավթի ծնվելը Մեծ Մհերն իրավացիորեն համարվում է անժառանգ: Դավթի ծնվելուց հետո սպառվում է Մեծ Մհերի պատմական ընթացքը, հետևաբար՝ էպոսի տեքստը հասնում է հարաբերական ավարտի. վերջանում է երկրորդ ճյուղը: Մեծ Մհերն ավարտվում է որպես գեղարվեստական նյութ՝ կերպար, իսկ, ահա, Փոքր Մհերի դեպքում տեղի է ունենում տեքստագեղարվեստական նյութի վերաձևում՝ **կերպարից վերաճում խորհրդանիշի**:

Փոքր Մհերը գլխավոր խորհրդանիշի՝ Ագռավաքարի, բնակիչն է, այսինքն՝ կյանքի պատմական ընթացքից տեղափոխվել է վերպատմական ընթացքի մեջ, և, բնականաբար, Փոքր Մհերի խորհրդում կյանք արժեհամակարգային իրողությունը նոր հարթություն է տեղափոխվում: Նա ժառանգ չի ունենում, որովհետև այդ դեպքում կվերածվի հաջորդականության շղթայի օղակներից մեկի: Եթե Մեծ Մհերի պարագայում ապրելը մինչևիսկ մեռնելու գնով շարունակվելն, ապա Փոքր Մհերի պարագայում գերխնդիրն այլ է:

Մի էական տարբերություն ևս ընդգծվում է երկու Մհերների միջև. Մեծ Մհերը մասնավորապես իր կյանքի սկզբում է անժառանգ, իսկ Փոքր Մհերը՝ վերջում և ընդհանրապես:

Բնականաբար, սրանք անժառանգության կամ ժառանգականության ընկալման տարբեր հարթություններ են:

Մեծ Մհերի և Փոքր Մհերի միջև կա ևս մի էական տարբերություն:

Եթե Մեծ Մհերը փորձում է հաղթահարել անժառանգությունը, ապա Փոքր Մհերի առջև նման գերխնդիր դրված չէ, որովհետև Մեծ Մհերի դեպքում կյանքը և մահը տարբեր իրողություններ են, իսկ Փոքր Մհերի դեպքում կյանքը և մահը գոյության երկու «երեսներն են»: Փոքր Մհերի դեպքում մահ պարզապես չկա:

Նկատենք, որ Մեծ Մհերը Իսմիլ Խաթունի մոտ՝ հայրենի երկրից դուրս է գնում՝ լսելով ոչ թե Ձենով Հովանին, որն ասում է.

Մ՝էրթա,
Քեզի տղա չկա - դու կաց քո տուն,
Աստված բալքի քեզի տղա մի տա[1],
այլ իշխաններին և վարդապետներին.
-Մհեր, որ դու կէրթա՛ս,
Մենք չե՛նք ասի՝ մի էրթա:
Մենք չե՞նք ուզի, թո՛ղ զՄըսըր,
Ուրիշ թագավորաց տեղ է՛լ հալա կ՝ուզենք զավթես:
Իսմիլ խաթուն որ կըկանչե՝ ինչի՞ չ՝էրթաս:
Էտա հազըր տեղ է՝ շուտ գնա…Մըսըր տիրապետի[2]:

Ձենով Հովանը՝ ձայնը, արյան կանչը կրողը, մտահոգ է Մեծ Մհերի՝ շարունակվելու, ժառանգ ունենալու խնդրով: Նրա խոսքում իսկական ժառանգ ունենալը հանգում է ճիշտ «աշխարհագրության» գաղափարին, և այդ «աշխարհագրությամբ» է պայմանավորվում ժառանգի խնդիրը. «դու կաց քո տուն, Աստված բալքի քեզի տղա մի տա»:[3]

Մսըր գնալու օգտին իշխանների ու վարդապետների վկայակոչած կռվաննեըր ոչ միայն անհամեմատ անկարևոր են, այլև ոչ բարոյական՝ զավթել:

Մեծ Մհերի գերխնդիրը ժառանգ ունենալն է, Փոքր Մհերինը՝ ոչ:

Հիշենք. Դավիթն ու Փոքր Մհերը, սկզբում իրար չճանաչելով, կռվում են, և այդ կռվից հետո հայրը որդուն՝ Փոքր Մհերին, ասում է.

-…Անմահ ըլնիս, անժառանգ… [4]:

Եթե Փոքր Մհերը նույնպես էպոսում ժառանգ ունենար, կպարտադրվեր էպոսի հինգերորդ ճյուղի ստեղծումը, այսինքն՝ կշարունակվեր պատումը, մինչդեռ որևէ էպոս ոչ թե պատմությունը արձանագրելու նպատակն ունի, այլ պետք է առաջադրի այդ պատմությունը (ասել է թե նաև ժամանակը) հաղթահարելու խնդիրը և այդ նպատակի համար ձևավորի խորհուրդներ՝ ամփոփելով դրանք լեզվամտածողական արժեհամակարգի կառույցում:

Պետք է որոշակիորեն սահմանազատել **հերոսավեպ** և **էպոս** հասկացությունները: Հերոսավեպը ժողովրդի պատմության հերոսական դրվագներից մեկի կամ մի շարք դրվագների հաջորդական շարադրումն է, այդ պատմության ընթացքի գեղարվեստական վերապատմումը, իսկ էպոսի տեքստը կարողանում է պատմական կոնկրետ հերոսական դրվագը բարձրացնել և տեղափոխել վերժամանակային ոլորտ, այսինքն՝ պատմության ընթացքի ուղիղ գիծը դարձնել պարույր-շրջագիծ, պարբերաշրջան, պատմական ընթացքի փուլային կանոններն ամփոփող յուրօրինակ մանրակերտ:

---

[1] «Սասունցի Դավիթ», «Լույս» հրատարակչություն, Երևան, 1981թ., էջ 116:

[2] Նույն տեղում, էջ 117:

[3] Նույն տեղում, էջ 288:

[4] Նույն տեղում, էջ 285:

Իհա՛րկե, մինչև ժողովրդի պատմության որևէ հերոսական դրվագի գեղարվեստական արտաժամանակայնացումը էպոս դառնալու հավակնող գեղարվեստական տեքստն անցնում է հերոսավեպի տեքստային փուլը՝ այդ փուլում հնարավորին չափ ընդլայնելով ժամանակային տարածքը (սերունդներ), դրա ընդգրկումը, որպեսզի թևակոխի վերժամանակային ոլորտ (խորհրդանշայնացման փուլ), երբ ստեղծվում և իշխում են խորհրդանիշները, և ամբողջանում է լինելության խորհուրդների լեզվամտածողական արժեհամակարգը:

Լինելության այդ խորհուրդներին հետևելով ու խորհրդանիշները պահպանելով՝ տվյալ ժողովուրդը կարողանում է ապահովել իր քաղաքակրթական ընթացքը, տեսակի հարատևությունը, մնալ հենց այնպիսին, ինչպիսին իր էությունն է: Էպոսը անպայմանորեն պետք է հիմնված լինի հերոսների մի քանի սերնդի շղթայի վրա, և սովորաբար վերջին սերունդը ներկայացնող հերոսին կերպարի տիրույթից տեղափոխի խորհրդանիշի տիրույթ, որպեսզի ապահովվի էպոսի ամենակարևոր առանձնահատկություններից վերը նշվածը՝ արտաժամանակայնությունը (կամ վերժամանակայնությունը), այսինքն՝ հաստատվի այն գաղափարը, որ ժողովրդի քաղաքակրթական գոյության (լինելության) խորհուրդների արժեհամակարգը նրա բոլոր սերունդների համար են: Նման անցում կատարել կարող է միայն կոլեկտիվ ստեղծագործությունը՝ շնորհիվ բազմաթիվ սերունդների իրականացրած տեքստային մշակման և տվյալ լեզվամտածողության վրա բարձրացող արժեհամակարգի անընդհատական հսկողության:

Ուրեմն՝ «Սասնա ծռերի»՝ էպոս լինելու իրողությունը նաև Փոքր Մհերի գեղարվեստական կերպի շնորհիվ է:

Ինչպիսի՞ գեղարվեստական իրողություն է Փոքր Մհերը:

Փոքր Մհերի դեպքում «անմահ ըլնիս, անժառանգ» զուգակցումը կարծես հակասում է ժառանգ ունենալու ճանապարհով անմահ լինելու մեծմհերյան սկզբունքին: Արդյո՞ք կա այդ հակասությունը, թե՞ Փոքր Մհերի միջոցով այլ խորհուրդ է առաջադրվում: Նման հարցադրման մեզ մղում է Մեծ Մհերին և Փոքր Մհերին շաղկապող Դավիթը:

Մեծ Մհերի բարոյականությունը թույլ է տալիս ***դրսի*** հետ հարաբերվել զավթելու, տիրապետելու («Մըսըր տիրապետի») մղումներով:

Դավթի բարոյականությունը ճաքեր է տալիս իր խոստումին հավուր պատշաճի չվերաբերվելու պատճառով: Դավթի բարոյականությունը, սակայն, մեկ աստիճան բարձր է Մեծ Մհերի բարոյականությունից: Փոքր Մհերը բարոյականության երրորդ՝ գերադրական աստիճանն է. նա թույլ չի տալիս ոչ միայն իր հայրենիք Սասունի, այլև ***դրսի*** հետ «զավթելու», «տիրապետելու» հավակնոտություն և հավանականություն: Այլ կերպ՝ Փոքր Մհերը բարոյականություն ու արդարություն է փնտրում և՛ իր երկրի, և՛ աշխարհի ու տիեզերքի համար: Իր համար (իր Սասունի՝ ***ներսի***) Փոքր Մհերը հաղթում է Արևմտից թագավորին: Մարդկության համար (ուրիշ երկրի՝ ***դրսի***) հաղթում է «քառասուն փահլևաների» մարդակեր քրոջը և նրանց օգնում վերադառնալ դեպի սեփական «աշխարհագրություն»՝ իրենց ***ներսը***.

-Ձեր մարդակեր քուր սպանեցի,
Դարձե՛ք ձեր քաղաք[5]:

[5] Նույն տեղում, էջ 310:

Փահլևանները Փոքր Մհերին ուզում են փոխհատուցել՝ նրան ծառա դառնալով: Բայց Փոքր Մհերը «տիրապետելու», ծառայեցնելու (մեղք գործելու) համար չէ իր երկրից՝ իր տարածքից, իր Սասունից («իր աշխարհագրությունից») դուրս եկել: Ընդհակառակը՝ նա ջանում է, որ ***դրսում*** հաղթի արդարությունը:

Փրկում է նաև Ջզիրու քաղաքը՝ շեղելով գետի ուղղությունը:

Եվ երբ հողն արդեն «հալևորցեր», չէր դիմանում ո՛չ նրա ձիու և ո՛չ նրա ոտքերի տակ, նա հասնում է Վանա քարին: Հավատարիմ իր կոչմանը՝ նա ի՛ր խոսքն է ասում, ի՛ր պայմանն է կապում աշխարհի հետ՝ ստուգելով իր անմեղությունն ու արդարությունը.

Ասաց. «Կանգնի իմ թուր զարկեմ էդ քարին,
Թե կտրեց, ես չեմ մեղավորցեր,
Թե չը կտրեց մեղավորցեր եմ»:
Թուր որ էզար քարին,
Քար երկու կողմեն փեղկվավ,
Ինք, իր ձին գնացին մեջ,
Քար էկավ, իրար կպավ[6]:

Այլաբանորեն՝ Փոքր Մհերն իր անմեղության մեջ է փակվում:

Փաստորեն Ագռավաքարը կամ Վանա քարը արդարության և անմեղության փորձաքարն է:

Ըստ Փոքր Մհերի՝ անմահությունը անմեղությամբ է պայմանավորվում (որովհետև Փոքր Մհերը Ագռավաքարում ապրում է և ոչ թե մահացած է), մինչդեռ Մեծ Մհերի ու Դավթի կերպարներում անմահությունը կապվում է տեսակի շարունակության ապահովման ու ժառանգ ունենալու հետ:

Իր արարքներով Փոքր Մհերը, իրոք, էականորեն տարբերվում է Մեծ Մհերից և իրենց կամրջող Դավթից. նա ապրելու, լինելու խնդիրը, երկրի ու հողի, կյանքի և մահվան, ժառանգականության ու հավերժության արժեհամակարգային խորհուրդները խարսխում է անմեղության վրա, դրանց հասնում է ֆիզիկական-մարմնականից դուրս՝ բարոյականության տիրույթում: Նրա գերխնդիրն է իմանալ՝ արդյոք մեղք գործե՞լ է, թե՞ ոչ: Քարի վրա թուրը փորձելու միջոցով հավաստիանում է, որ ինքն անմեղ է: Բայց

Քանի աշխարք չար է,
Հողն էլ ղալբացեր է,
Մեջ աշխրքին ես չեմ մնա[7]:

Մեծ Մհերի, Դավթի արարքները Սասունի սեփական «աշխարհագրության» համար են, Փոքր Մհերի արարքները՝ նաև Սասունի սահմաններից դուրս գտնվող երկրների ու մարդկանց համար: Այսինքն՝ սեփական երկրում ժառանգ ունենալու արժեհամակարգային խորհրդի կողքին Փոքր Մհերն ավելացնում է լինելության իր խորհուրդը՝ սեփական անձի և աշխարհի նկատմամբ արդար լինելու, արդարության արժեհամակարգային իրողությունը:

Մեծ Մհերի և Դավթի՝ ***դրսի*** աշխարհի հետ հարաբերությունները մեղսական են, այդ պատճառով նրանք միայն սեփական ֆիզիկական աշխարհագրության՝ Սասունի տարածքում են շարունակվում ու ժառանգ ունենում:

Փոքր Մհերի ու ***դրսի*** աշխարհի հարաբերությունները հանուն բարու, արդարության, հանուն աշխարհի են, հանուն մարդկության և չեն մթագնվում

[6] Նույն տեղում, էջ 314:
[7] Նույն տեղում, էջ 315:

մեղքերով: Փոքր Մհերի ժառանգն իր նման անմեղ պետք է լինի, մինչդեռ աշխարհը դեռ «չար» է և «ղալբ», աշխարհը այդ ժառանգի համար անհամապատասխան վայր, անհամապատասխան «աշխարհագրություն» է. նաև այդ պատճառով է Փոքր Մհերն անժառանգ:

Փոքր Մհերի անմահությունն ու անժառանգ լինելը փոխպայմանավորված են և շաղկապված են բարոյականության արժեհամակարգային հիմնախնդրին. Փոքր Մհերը և Ագռավաքարը բարոյական-քաղաքակրթական հիմնախնդիր են առաջադրում և լուծում:

Ժառանգ ունենալը նաև ֆիզիկական ու ֆիզիոլոգիական երևույթ է: Այդ պատճառով էլ դրան ուղեկցում է ֆիզիկական մահը: Մահանում են և՛ Մեծ Մհերը, և՛ Դավիթը:

Փոքր Մհերը ֆիզիկապես անմահ է, որովհետև մեղք չի գործում: Իսկ եթե Փոքր Մհերն անմահ է (քանի որ անմեղ է և արդար), ապա ժառանգի անհրաժեշտություն չկա. նպատակը նվաճված է:

Մեծ Մհերն ուզում է, որ շարունակվի իր կյանքի ուղին, որը սերունդների հերթափոխության ուղին է, մինչդեռ Փոքր Մհերի կյանքի ընթացքը պարբերականությունն է՝ Ագռավաքարի դռների անընդհատ բացվելն ու փակվելը: Դա իսկի ընթացք էլ չէ, այլ, ավելի շուտ, վիճակ:

Եթե Փոքր Մհերը չի մտածում ժառանգ ունենալու մասին, ուրեմն դուրս է պատմական դեպքերի հաջորդական ընթացքից, այսինքն՝ դուրս է ժամանակից, ասել է թե նա վերժամանակային, վերպատմական երևույթ է, ինչի հետևանքով նրա **գեղարվեստական կերտվածքը ոչ թե կերպարային, այլ խորհրդանշային է: Ստեղծագործության գեղարվեստական կերպարը տեքստի սյուժետայնության ուժանյութն է, իսկ Փոքր Մհերը հաղթահարում է կերպարի մակարդակը, Ագռավաքարի հետ վեր է ածվում խորհրդանիշի, և այդ է պատճառը, որ էպոսի տեքստը հենց նրանով է ավարտվում, այս դեպքում ավելի ճիշտ կլիներ ասել՝ ամբողջանում:**

Մեծ Մհերի և Դավթի կերպարները Փոքր Մհերի խորհրդանշայնացման ճանապարհն են: Իսկ քանի որ Փոքր Մհերը խոսք է, այն խոսք-պայմանը, որ Ագռավաքարից առաջադրել է աշխարհին, ուրեմն **«Սասնա ծռեր» էպոսը աշխարհի ճակատագիրը խոսքի և իրականության փոխհարաբերությամբ է պայմանավորում**: Փոքր Մհերի միջոցով հայկական էպոսը խորհրդանշայնացնում է տեքստը (խոսքը). էպոսի ավարտից հետո մնում է ցորենի և գարու մասին անընդհատ կրկնվող տեքստը:

Տեքստի (խոսքի) խորհրդանշայնացումը, որ էպոսում դրսևորվում է Փոքր Մհերի միջոցով, հայերենի համատեքստային իրողություններից է և կարիք ունի համակողմանի, խորը քննության:

Բանալի բառեր-կյանք, մահ, ընկալում, լինելություն, խորհուրդ, արժեքային համակարգ, ժառանգ, ժառանգական, էպոս, դրսի աշխարհ, Փոքր Մհեր, Մեծ Մհեր, Ագռավաքար, կերպար, բարոյական:

Թադևոս Տոնոյան, Կյանքի և մահվան ընկալումները ըստ Սասնա Ծռեր էպոսի. Ժառանգականություն. Մեծ Մհեր և Փոքր Մհեր-Կյանքի և մահվան ընկալումներն առաջին հերթին խաչվում են հատկապես էպիկական տեքստերում, որոնք մշտապես գտնվում են հանրային խստագույն հսկողության տիրույթում:

Էպիկական տեքստերի քննությունն օգնում է հնարավորինս ճիշտ պատկերացնելու և հասկանալու տվյալ ժողովրդի արժեքային համակարգը: Բանն այն է, որ ժողովրդի արժեքային համակարգի խարիսխը նախ կոնկրետ ազգային լեզուն է: Դրանով ստեղծված այն տեքստերը, որոնք առնչվում են հավաքական հիշողությանը, իրենց խորքում պահում են ժողովրդի լինելության խորհուրդները:

Հայերենի լեզվամտածողական համակարգում կյանքի և մահվան ընկալումներից անբաժանելի են ժառանգականության ու հարատևության խորհուրդները: Դրանք զարգանում են հայկական էպոսի ողջ ընթացքում՝ առաջին ճյուղի սկզբից մինչև չորրորդ ճյուղի ավարտը, և հանգում բարոյականության քաղաքակրթական հիմնախնդրին:

Тадевос Тоноян, Восприятия жизни и смерти в эпосе «Давид Сасунский»: наследственность: Большой Мгер и Маленький Мгер-Восприятия жизни и смерти прежде всего пересекаются в эпических текстах, которые всегда находятся под строгим коллективным и общественным контролем.

Исследование таких текстов позволяет правильно представлять и понять истинную систему ценностей нации, поскольку основа для этого – конкретный национальный язык и созданные на этом языке те тексты, которые связаны с коллективной памятью.

Армянский язык представляет собой такую систему мышления, в которой от восприятий жизни и смерти неразделимы советы и таинства бытия о наследственности и долголетнего существования. Проблема наследственности развивается по всей эпопее армянского эпоса «Сасна црер», сначала первой ветви до конца последней четвертой ветви и постепенно склоняется к проблеме моральности бытия.

Tadevos Tonoyan, Perceptions of life and death in the epic "David of Sasun": heredity: Great Mher and Little Mher-Perceptions of life and death first of all intersect especially in the epic texts, which are always under strict public control.

The examination of epic texts helps to visualize and understand the system of values of the nation as correctly as it possible (more correctly): It is so, because the anchor of nation's system of values is first of all its' national language.

Those texts written by national language, that are connected to collective memory, deep inside contain mysteries of the nation being. In lingual thinking system of Armenian language the mysteries of life and death are tightly connected to the mysteries of heredity and eternity. They evolve during the Armenian epos from the first until the end of fourth part and come to the civilizational problem of morality.

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՎԱՀԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Հրանտ Թամրազյանի գրական պատկառելի ժառանգության մեջ մի կարևոր և ուշագրավ տեղ է զբաղեցնում 1986 թ. վերջերին հրատարակված «Բանաստեղծության հազարամյա խորհուրդը» վերնագրով գիրքը, որտեղ ընդգրկված են հեղինակի գրականագիտական ընտիր էտյուդները, ուսումնասիրությունները և դիմանկարները՝նվիրված հայ բանաստեղծության դարավոր ուղուն, մեծ բանաստեղծներին և նրանց գլուխգործոցներին՝ Գրիգոր Նարեկացուց մինչև նոր ու նորագույն գրողներ՝ թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ՝ Պետրոս Դուրյան, Հովհաննես Թումանյան, Միսաք Մեծարենց, Սիամանթո, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան ու Եղիշե Չարենց: Ըստ էության ստացվել է մեր միջնադարյան ու նոր և նորագույն գրականության մի լայն ու ընդգրկուն համայնապատկեր, որտեղ շեշտվել է մեր հիշյալ մեծերի գեղագիտությունը, մարմնավորվել հոգեկան կերտվածքն ու բանաստեղծական խառնվածքը, բացահայտվել նրանց հոգեբանական և գեղարվեստական հատկությունները: Ընդգրկելով մեր գրականության անցած դարավոր ճանապարհի տարբեր շրջաններն ու հեղինակների ստեղծագործությունը՝Հ. Թամրազյանը դրանք միահյուսել է գրականագիտական որոշակի հայացքի, մոտեցման, քննության տեսանկյունից: Այդ իմաստով գլխավորը, որ բնորոշ է գրքում ամփոփված ուսումնասիրություններին, գեղարվեստական ստեղծագործության, մասնավորապես քնարերգության «հազարմյա խորհըրդի», գրական գեղեցկության, բանաստեղծական հրաշք երկունքի ներքին գաղտնիքների բացահայտումն է[1]: Այդ բացահայտման բացառիկ մի դրսևորումն է Գ. Նարեկացուն նվիրված ուսումնասիրությունը՝ վերնագրված «Մտածումներ Նարեկացու բանաստեղծության մասին», որը մեկ տարի առաջ՝1985 թ., տպագրվել էր գրականագետի «Հայ քննադատություն» եռահատորյակի 2-րդ գրքում՝[2] բանաստեղծի գրական-քննադատական հայացքների քննությանը նվիրված հոդվածների հետ համատեղ մեկ ընդհանուր խորագրի տակ՝«Գրիգոր Նարեկացի»՝ունենալով «Նարեկացու բանաստեղծության խորհուրդը» վերտառությունը:

Ուսումնասիրության հենց սկզբնամասում Հ. Թամրազյանը բացահայտում է Նարեկացու քերթության ծննդյան առեղծվածը ու գտնում, որ բանաստեղծի ստեղծագործության ակունքներում պետք է տեսնել ազգային պատմության ապրած կորուստների ու տագնապների տառապանքը, նաև ազգային ինքնատիպ խառնվածքի առանձնահատկություններն ու հայկական ներշնչումները: Ու թեև գրականագետը ուղղակիորեն չի պարզում մեր ազգային խառնվածքի յուրահատկությունները, սակայն, կարծում ենք, որ նա այստեղ ամենից առաջ նկատի է ունեցել մեր ցեղային բնորոշ հատկանիշը, ազգային ոգու մասնահատկությունը՝կենսասիրությունը, որը, ինչպես Արշակ Չոպանյանը կասեր, «այդ քրիստոնեական վանականության տրտմությամբը մթնցած հոգիի մեջ՝ հեռավոր առհավության ձայներուն զարթնումովը, զանի կմխե նորեն իր ցեղին պայծառ ներշնչումին մեջ, զանի կտանի նորեն ծովուն ու երկնքին մեծ արևոտ բանաս-

[1] Տե՛ս **Դեմիրճյան Պ.**, Եվ դարձյալ՝ բանաստեղծության գաղտնիքը, «Գրական թերթ», Եր., 19 հունիսի, 1987:

[2] Տե՛ս **Թամրազյան Հ.**, Հայ քննադատություն, Գիրք Բ. 6-15-րդ դդ., Եր., 1985, էջ 87-120:

տեղծության»[3]: Ու եթե Նարեկացու՝ ազգային տառապանքից ծնված այդ տանջող խոհը հետագայում Հր. Թամրազյանը հայտնաբերում է Հովհաննես Իմաստասերի Ղևոնդյանց նվիրված շարականներում ու աղոթքներում, Ֆրիկի «Գանգատի» տողերում և ապա այդ ավանդույթի շարունակությունը տեսնում 19-րդ դարավերջին Հովհ. Թումանյանի գրած «Տրտմության սաղմոսներից»-ում, «ուր նարեկացիական շնչով ու նույն այս ծանր թախիծով Թումանյանը խոսում է աստծո անտարբերության, հայոց ազգի տագնապների, աղաղակների, կականի մասին»[4], ապա «Մատյանի» վերջին նվագներում բանաստեղծի «անվերջ ճիգը՝ բարձրանալու դեպի լույսի ճառագայթները, կապույտ բարությունը, արևային արդարությունը», պայմանավորում է կենսասիրության հատկանիշով և այդ հատկանիշի դրսևորումը նկատում նաև պատանի Մեծարենցի մոտ (տե՛ս 46): Ու թեև, ճիշտ է, գրականագետը կենսասիրությունը, «անդուլ ձգտումը դեպի կատարյալը, լուսավոր երազները» գնահատում է որպես մարդկային հոգեբանության հավերժական գծերից մեկը, սակայն, կարծում ենք, այստեղ նա ամենից առաջ նկատի է ունեցել այդ հատկանիշի հարազատությունը մեր ազգային խառնվածքին: Ինքն է գրում. «…Նա (Գ. Նարեկացին- *Վ.Ա.*) ամենից առաջ հայկական երևույթ էր: Ինչպես առանց անհատականության չի կարող մեծ բանաստեղծ ծնվել, այնպես էլ առանց ազգային յուրահատուկ խառնվածքի չի կարող ծնվել մեծ բանաստեղծություն: Մենք հաճախ ենք խոսում Նարեկացու միստիկայի մասին, բայց այդ միստիկան անգամ չէր կարող բանաստեղծական ակունք լինել, եթե ներքնապես չառնչվեր ազգային խառնվածքի և հայկական ուրույն ներշնչումների հետ: Հանճարեղ բանաստեղծն ստեղծել է ազգային խառնվածքի ավելի բարդ, առեղծվածային մի երևույթ» (12):

Այն, որ Հրանտ Թամրազյանը Նարեկացու բանաստեղծության ծնունդը պայմանավորում է ազգային հատկանիշի, ազգային ոգու յուրահատկությունների ընդգծուն առանձնահատկություններով, կարծում ենք, երևան է բերում նրա գրականագիտական հայացքների կապը Իպոլիտ-Տենի գիտական մեթոդի հետ, ըստ որի, ինչպես գիտենք, արվեստի երկերը ծնող բոլոր կարգի պայմանների մեջ առանձնացվում էր երեք գլխավոր գործոն՝ ցեղ, կլիմա, ժամանակ[5]:Հր. Թամրազյանի հարազատությունը կուլտուր-պատմական դպրոցի մեթոդաբանությանը երևում է նրանում, որ գրականագետը Նարեկացու ստեղծագործության ծնունդը կապում է նաև այն պատմական միջավայրի ու ժամանակաշրջանի հետ, որում ապրել է բանաստեղծը: Գիտնականի գործադրած հետազոտական մեթոդի առավելությունն այստեղ այն է, որ պահելով հարցի գլխավոր տեսանկյունը՝Նարեկացու ստեղծագործության ծննդյան առեղծվածը, նա համակողմանի քննության է առնում Հայաստանի ներկա քաղաքական վիճակը, պատմական տեղաշարժերը, սոցիալական ու կրոնական խմորումները, ներկայացնում դրանք փոխկապակցության մեջ՝ցույց տալու, որ մեծ բանաստեղծի ստեղծագործությունը իր հղացման ազդակները առել է նաև ազգային կյանքի տեղաշարժերից: «10-րդ դարը անցման շրջան էր ազգային կյանքում,-գրում է Հ. Թամրազյանը.-ցավագին որոնումների և վերածնության շունչը տարածվում էր ամեն ինչի, նաև հոգիների ու

[3] **Չոպանյան Ա.**, Երկեր, Եր., 1988, էջ 320:

[4] Տե՛ս **Թամրազյան Հ.**, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Եր., 1986, էջ 14-15: Այսուհետև այս հրատարակությունից կատարած մեջբերումների համապատասխան էջը կնշվի տեքստում՝ փակագծերի մեջ:

[5] Տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Հայ գրականագիտության պատմություն, Եր., 1986, էջ 334:

մտքերի վրա, նորն ասպարեզ էր գալիս բարդ որոնումներով, ծանր երկունքով, քրիստոնեական դոգմատիկան տեղի էր տալիս մեծ դիմադրությամբ: …Երկրում ծայր էր առել աղանդավորական շարժումը… Անցումը ուներ խիստ դրամատիկ բնույթ, ինչ-որ չափով ստիպում էր վերագնահատել անցյալը և մտածել նաև գալիքի մասին, քանի որ աղանդավորությունը, որպես ահռելի մի սպառնալիք, կախված էր նրա գլխին, մյուս կողմից՝նոր կյանքի կարիքները և հոգևոր-կենսական վերածնունդը մարդկանց օրավուր հեռացնում էր եկեղեցուց…»: Իսկ եթե եկեղեցական նվիրապետությունները դարձել էին ֆեոդալական և քաղաքական վիթխարի ուժ և խանգարում էին կյանքի վերելքին՝ ունենալով նաև նյութական շահագրգռություններ, ապա «հոգևոր նոր գործիչները, մասնավորապես վանական եղբայրությունները, ձգտում էին մոտենալ կյանքին, նվաճել ժողովրդին, մարդկանց, անել ինչ-որ բարեփոխումներ, վերացնել կրոնական բարձր պաշտոնները, հետևել հավասարության մասին աստծո պատվիրաններին: Այստեղից էլ սկիզբ է առնում նաև միստիկան, որը մարդուն անմիջական կապի մեջ էր մտցնում աստծո հետ՝առանց եկեղեցու միջամտության» (15-16):

«Նարեկացին ապրել է այս բարդ շրջանում»,-շարունակում է Հ. Թամրազյանը՝ համոզված, որ մեծ բանաստեղծը «հազար գրգիռներ է ստացել այս ոգորումներից ու հալածանքներից» (17):

Նախորդ նարեկացիագետներից շատերը ևս, որոնցից նշանավորների անունները տալիս է Հր. Թամրազյանը՝ Արշակ Չոպանյան, Մանուկ Աբեղյան, Մկրտիչ Մկրյան, ավելի կամ պակաս չափով անդրադարձել են հասարակական-քաղաքական այն միջավայրի նկարագրությանը, որում ձևավորվել ու թափ է առել Նարեկացու ստեղծագործությունը, նրանք էլ են ձգտել ցույց տալ, որ մեծ բանաստեղծի քնարերգությունը մեկուսի, չեզոք մի արժեք չէ, այն անմիջական կապ ունի ժամանակաշրջանի պատմական-հոգեբանական, հոգևոր-գեղեցկագիտական, դավանաբանական տիրապետող տրամադրությունների ու շահագրգռությունների հետ: Որքան էլ, սակայն, հեղինակավոր ու ընդունելի, այնուամենայնիվ այլոց եզրահանգումներն ու ընդհանրացումները չեն, որ դարձել են փաստարկներ Հր. Թամրազյանի համար: Իր հարցադրումներում գրականագետը ելել է բուն նյութի խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունից, ըստ էության անառարկելի, գիտական դիպուկ, բնորոշ բացահայտումներից:

Պարզելով Նարեկացու ստեղծագործության հղացման պատմական-հոգեբանական ազդակները, ժամանակաշրջանի ու միջավայրի տրամադրությունների արձագանքն ու բաբախը նրա մեջ՝Հ. Թամրազյանը ամենևին, սակայն, չի շրջանցում կամ աչքաթող անում բանաստեղծի անհատականության ու ինքնատիպ խառնըվածքի կարևոր գործոնը, որը նրա ողջ ստեղծագործության, մասնավորապես «Մատյանի» կենսական տարերքի կարևոր ազդակներից մեկն է, եթե չասենք՝ ամենակարևորը: Ու թեև, ճիշտ է, գրականագետը առանձին չի անդրադառնում Նարեկացու կենսագրությանը, բնավորության, ապրումների ու խառնըվածքի մանրամասներին, սակայն ուսումնասիրության ընթացքը ցույց է տալիս, որ գրեթե յուրաքանչյուր հարցի կապակցությամբ, արտաքին ընդհանուր ազդակներից բացի, նա ավելի հաճախ հանգամանորեն կանգ է առնում նաև բանաստեղծի կյանքի արտաքին ու ներքին շերտերի վրա, բանաստեղծության գաղտնիքների բացահայտման համար առաջնային դարձնում գրող-անհատի խոսքը, տառապանքը, խոստովանությունները:

Հր. Թամրազյանը չի ընդունում Ա. Չոպանյանի և Մ. Աբեղյանի այն կարծիքը, թե Նարեկացու կյանքը անցել է արտաքին աշխարհից կտրված, թե «իբր խնկահոտի մեջ մեծացած բանաստեղծի մեջ լեռնացել է միայն աստծո գաղափարը», և որպես թե միայն մանկության օրերի հույզերն են նրան ներշնչել ապրելու տենչանք: Եթե Չոպանյանը գտնում է, թե Նարեկացին այնքան է հեռացել աշխարհից, որ քարանձավում միայնության մեջ բորբոքված երևակայությամբ հաղորդակից է դարձել Հիսուսի մոր՝Աստվածածնի հետ, ապա Թամրազյանը համոզմունքով պնդում է, որ Նարեկացին «ունի աշխարհիմացության գրեթե անհուն պաշարներ». «Մատյանը, տաղերը, «Երգ երգոցի» մեկնությունը,-գրում է նա,-ցույց են տալիս, որ նա (Գ. Նարեկացին-*Վ. Ա.*) շատ լավ գիտեր աշխարհն ու ժամանակը, երկրագործին ու սայլվորին, իշխանին ու կրոնավորին, տեսել է և՛ դաշտ, և՛ այգի, և՛ կին, անցել է լքված տաղավարների ու ավերակների միջով, հասու է տառապանքի և մեղքերի բոլոր ձևերին: Աշխարհից կտրված մի աբեղա չէր կարող ունենալ այդքան ճանաչողական պաշարներ և այդքան խոր անհանգստություն՝ դեպի աններդաշնակ աշխարհը, մարդը, կյանքը: Նարեկացին չէր կարող ապրել սոսկ գրքային էքստազով» (17-18): Իսկ հետագա շարադրանքում, օգտվելով Չոպանյանի հայտնի գեղեցիկ խոսքից՝ թե «Նարեկացին *աստված տեսած է*»[6], Թամրազյանը վերաձևակերպում է այդ միտքը՝ ասելով. «**Նարեկացին կին տեսած է**»: Այս համոզմունքը, սակայն, չպիտի գիտակցվի որպես գրականագետի հուզական տարերքի կամ, ասենք, վերլուծողի կրքոտ տրամաբանությունից բխած մի արտահայտություն: Թամրազյանը Մատյանի նորովի ընթերցմամբ ընդհանրապես բացում է Նարեկացու նրբահյուս քնարական աշխարհի դեռ չտեսնված ծալքեր, բնագրի հմուտ քննությամբ խորանում բանաստեղծի հոգեբանության մեջ, հեղինակի խոստովանություններից անում հետևություններ, ակնառու փաստարկումներով հիմնավորում իր խոսքն ու տեսակետները. «…Կինը այցելել է նրան (Գ. Նարեկացուն-*Վ. Ա.*) խուցի մեջ, այրի մեջ, կյանքի արահետներում,-գրում է անվանի գրականագետը:-Եվ դա մնացել է որպես հավերժական թախիծ, տանջող կարոտ, **հավիտենական ձգող մեղք** (ընդգծումը մերն է-*Վ. Ա.*). և դա խոր հետք է թողել նաև բանաստեղծության տողերի վրա: Հիսնամյա բանաստեղծի հրդեհված հոգու մեջ չէր կարող անցնել սոսկ վաղ մանկության և կուսակրոնության թողած զգացումների հոսանքը: Բայց նա չի բացել իր մեծ գաղտնիքը. նա կարող էր խոսել միայն այլաբանորեն, փոխաբերաբար, անուղղակի, սիմվոլներով, քանի որ վարդապետ-բանաստեղծի գլխին կախված էր թոնդրակյան հերձվածի մեղադրանքը կամ հենց կրոնական սովորական դոգման: Այնուհանդերձ, շատ թափանցիկ է այդ գաղտնիքը, քանի որ հենց Աստվածածնի կերպարի համար, ինչպես Վերածնության նշանավոր պատկերներում, նա բնորդ է ընտրել կնոջը, մարմնական գեղեցկությունը և տողերի մեջ դրել երկրային մոր հուզու ջերմությունը» (28-29):

Մ. Աբեղյանը մանավանդ «Տաղ ծննդյանի» կապակցությամբ արդեն նկատել էր, որ Սուրբ Կույսի պատկերը նկարագրված է այնպես, «որ անպայման իրական կյանքի մեջ տեսածից ու զգացածից է առնված»: Սակայն եթե Աբեղյանը մի կողմից գտնում է, որ «Տաղ ծննդյանը» «իսկապես ջերմ սրտից բխած մի օրհներգություն է միայն, ուղղված առ Ս. Կույսը, որ ոչինչ այլաբանական չունի իր մեջ, իբր սեփական սիրո առարկան ի դեմս Սրբուհու երգված», ապա մյուս կողմից էլ, մի

[6] **Չոպանյան Ա.**, Երկեր, Եր., 1988, էջ 300:

տեսակ կարծեք զգուշանալով, գտնում է, որ «այն սերը, որ գովում է բանաստեղծը, մի աննյութական սեր է, որովհետև երգված կույսն ինքն աննյութ է»[7]: Այս հարցում Մ. Մկրյանը թերևս ավելի զգուշավոր է. նա ընդամենը գտնում է, որ Նարեկացու երգած կինը իր գեղեցկությամբ «վերացական չէ, այլ կոնկրետացված է տեղական կենցաղական երանգներով»[8]: Եվ վերջ:

Գուցե Հ. Թամրազյանը մասամբ երկրորդում է Մ. Աբեղյանի դիտարկումը, բայց, ինչպես նկատում ենք, նա իր տեսակետի մեջ ավելի համարձակ է. Կրկնենք՝ «**Նարեկացին կին տեսած է**»: Թերևս հարց առաջանա՝ իսկ ո՞ւր մնաց Նարեկացու առնչակցությունը կրոնական աշխարհընկալմանը: Թամրազյանը չի մերժում այդ աղերսը, դեռ հակառակը՝նա համոզված է, որ Նարեկացին՝որպես իր դարի զավակ, կապված է կրոնական աշխարհայեցողության հետ, իր Մատյանում «բազում ձևերով մշակում է Հոր, միածին Որդու, Աստվածածնի թեմաները», «հավատում է և՛ երկրային թագավորությանը, և՛ վերնականների զարմանալի դրախտային կյանքին, ուր մի օր պիտի աստծու որդու հետ համբառնան այս աշխարհի մարդիկ»(22): Սակայն, միևնույն է, բացատրում է գրականագետը, Նարեկացին իր ողջ տարերքով մնում է իբրև երկրային երևույթ, նրա բուն խոսքն էլ վերաբերում է երկրային գործերին. նա պատմում է իր մեղավոր կյանքի մասին, որից նաև մնացել է հավիտենական ձգող մի մեղք, «տանջող կարոտ»՝ կինը (տե՛ս 28): Ուրեմն՝ հերոսի ողջ դրաման կապված է երկրային ակունքների հետ, որի ճանաչողությունից էլ ծնվել է խոր անհանգստությունը՝ աշխարհի, մարդու, կյանքի համար, որի իմացությունից էլ նաև առաջ է եկել աշխարհային մեղքերի ու արատների մերժումը և ձգտումը դեպի լույս եզերքները, կատարյալը: Հոգեկան տառապանքը՝ ծնված մեղավոր անցյալից, հետ է մղել երկրայինը, մարմնավորը և բանաստեղծի հայացքը ուղղել առ «մարդասեր, մարդակերպ աստված»:

Իր ուսումնասիրության մեջ Հ. Թամրազյանը թերևս առաջինը նարեկացիագիտության մեջ առաջադրում է կերպավորման արվեստի հարցը Մատյանում և բացահայտում դրան առնչվող առանձնահատկությունները: «Նարեկում» ամեն ինչ, ինչպես գիտենք, առաջ է գնում սոսկ, այսպես ասենք, կենտրոնական քնարական հերոսի խոհերի և զգացմունքների ուրույն զարգացման շնորհիվ: «Երկի («Նարեկի»- *Կ.Ա.*) մանրամասնությունների մեջ,-գրում է Մ. Աբեղյանը,-մենք տեսնում ենք ընդհանրապես հին քրիստոնյայի և մասնավորապես մենակյացի եղերերգական վիճակն իր ամբողջ պատկերով և աշխարհայեցողությամբ»[9]: Սակայն գլխավոր հերոսի խոսքը, ապրումները, հոգեբանական առնչություններն ու հարաբերությունները մյուս քնարական հերոսների՝ Հայր Աստծո, Քրիստոսի, Աստվածամոր, Սատանայի հետ հնարավորություն են տալիս ոչ միայն կերպավորվելու իրեն՝կենտրոնական հերոսին, այլև հոգեբանական որոշակի, իսկ երբեմն էլ առարկայականին մոտեցող պատկերացումներ ստեղծել նրանց մասին: Կերպավորման արվեստի հետ կապված կառուցվածքային այս յուրահատկությունը «Նարեկում» իսկապես էլ բացառիկ մի գյուտ էր մեր նոր սկզբնավորվող միջնադարյան բանաստեղծության մեջ, որ նկատել է տալիս Հ. Թամրազյանը և դնում գիտական շրջանառության մեջ: Հոդվածում նորություն է նաև այն, որ առաջին անգամ Քրիստոսի կերպարը խորությամբ քննության է առնվում գեղար-

[7] **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. Գ, Եր., 1968, էջ 623:

[8] **Մկրյան Մ.**, Երկեր, հատ. 1, Եր., 1987, էջ 462:

[9] **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. Գ, Եր., 1968, էջ 588:

վեստական-բարոյական տեսանկյունից: Նարեկացուն անդրադարձած գրականագետների հերթափոխում՝ մինչև Թամրազյան, իսկապես էլ ոչ ոք հանգամանորեն չի անդրադարձել Քրիստոսի կերպարին Մատյանում: Ավելի հաճախ Աստվածորդին հիշատակվել ու կարևորվել է սոսկ որպես «ամենազոր բարեխոս» (Ա. Չոպանյանի խոսքն է) բանաստեղծի համար, միջնորդ Հայր Աստծու մոտ: Մինչդեռ, ինչպես նկատում է Թամրազյանը, «Նարեկացին երկարատև նախապատրաստել է այդ կերպարը, մասնավորապես մարդկային տեսք ու խորք տալով աստծո որդու այն տառապանքին, որ նա կրել է մարդկանց մեջ, մարդկանց համար» (26): Իր հետագա խոսքում գրականագետը համոզիչ եղանակով, մեջբերված բնագրային հատվածների փաստարկմամբ ցույց է տալիս, թե ինչպես Նարեկացին, Մատյանում ստեղծելով Քրիստոսի կենսագրությունը, նրան ներկայացնում է որպես կյանքի համար ընկած նահատակի, տառապյալի ու հալածյալի, «մարդկության համար փշե պսակ ընդունած մարդու կերպար»՝ կրոնական սխեմաների մեջ նրան հաղորդելով գեղարվեստական կերպարային գունավորում. «Քրիստոսի կերպարը դառնում է դրամատիկ և հողեղեն, ստանում երկրային բնույթ» (23),-գրում է Հ. Թամրազյանը: Եվ գրականագետը ոչ միայն Քրիստոսին, այլև Աստվածամորն է ներկայացնում սրբությունների վերացական ընկալումներից դուրս՝ որպես երկրային կնոջ կերպար, որ դարձյալ ստեղծել է Նարեկացին:

Չոր, անհույզ սխեմաներից հեռու է նաև Սատանայի կերպարը: Եվ եթե նախորդներից միայն Ա. Չոպանյանն էր անդրադարձել այս կերպարին՝ բավարարվելով սակայն միայն նրա բնութագրմամբ, ապա Թամրազյանը շեշտը ավելի դնում է այդ հերոսի կերպավորման առանձնահատկությունների վրա. «Բանաստեղծը սատանայի կերպարին մոտենում է ուրույն ձևով, այսինքն՝անուղղակի, աղետների ու չարիքների մթնոլորտի պատկերը ստեղծելու միջոցով: Նա ստեղծում է մանր ու մեծ չարիքների այն պատկերները, որոնք գալիս են սատանայից…» (34):

Գալով Մատյանի գեղարվեստական պատկերավորությանը՝ Թամրազյանը նախ այն նույնքան բարդ է համարում, որքան նրա գաղափարները, իսկ նարեկացիական պատկերային համակարգի վիթխարի ազդեցությունը հետագա հայ քնարերգության ու նաև նոր ու նորագույն բանաստեղծների մտածողության վրա բացատրում է նրանով, որ Նարեկացին իր զարմանալի սուր տեսողությամբ ընկալել է աշխարհի ամենատարբեր երևույթների այնպիսի նրբություններ ու նրանց միջև հայտնաբերել համեմատության այնպիսի եզրեր, որոնք հետագայում հաջորդների կողմից ստացել են նոր իմաստավորումներ: Կարճ ասած, ինչպես իրավացիորեն գտնում է Հ. Թամրազյանը, Նարեկացին անսահմանորեն մեծացրել է մեր բանաստեղծական խոսքի գալիք հնարավորությունները: Գրականագետի համար այստեղ սակայն գլխավորը այն է, որ բանաստեղծի ստեղծած փոխաբերական հարուստ պատկերները, հատկապես կարճ ու խտացված համեմատությունները, հաճախ էլ իրական աշխարհից առած օրինակները կուտակում են իմացական-հոգեբանական վիթխարի պաշար, օգնում վերականգնելու և ավելի խորությամբ ճանաչելու ժամանակաշրջանի բազմաշերտ պատկերը, նաև բնորոշելու տառապող բանաստեղծի հոգու նկարագիրը: Ասել է թե՝ բանաստեղծությունը Նարեկացու շնորհիվ դարձել է աշխարհի ու իրականության ճանաչողություն ու իմացություն:

Ահա այսպես խոր է զգացել Հրանտ Թամրազյանը Նարեկացու բանաստեղծական խոսքի գաղտնիքները, բացահայտել նրա քնարերգության գրեթե բոլոր օրինաչափությունները, մեկնաբանել Մատյանին առնչվող ստեղծագործական բազմաբնույթ երևույթների միջև գոյություն ունեցող փոխադարձ պայմանավորվածությունը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ունենալ ոչ միայն բնական շնորհք, այլև ստեղծագործական մեծ փորձ, ոչ միայն բնածին տաղանդ, այլև աշխատանքային եռանդ: Ահա հատկանիշների այս համաձուլվածքի շնորհիվ է ստեղծվել այս, Վահագն Դավթյանի բնութագրմամբ՝ ինչ ասես արժեցող ուսումնասիրությունը (տե՛ս 11), որտեղ գիտությունը մոտեցել է գեղարվեստին, իսկ գեղարվեստը՝գիտությանը:

Բանալի բառեր-Հրանտ Թամրազյան, Գրիգոր Նարեկացի, Մանուկ Աբեղյան, բանաստեղծություն, գրականագիտություն, Իպոլիտ-Տեն, մեթոդ, կուլտուր-պատմական դպրոց, ազգային խառնվածք, քրիստոնեություն, կենսասիրություն, միստիցիզմ, միջնադար, կերպարավորում, գեղարվեստական պատկերավորություն:

Վաչագան Ավագյան, Գրիգոր Նարեկացին Հրանտ Թամրազյանի գնահատմամբ-Հոդվածում ցույց է տրվում, թե ինչպես անվանի գրականագետ Հրանտ Թամրազյանը Գրիգոր Նարեկացու ստեղծագործության, մասնավորապես «Մատյան ողբերգության» երկի նորաբան մի ընթերցմամբ, բնագրի հմուտ քննությամբ բացահայտել է մեծ բանաստեղծի քնարերգության ստեղծման բազմաթիվ օրինաչափություններ, մեկնաբանել Մատյանին առնչվող ստեղծագործական բազմաբնույթ երևույթների միջև գոյություն ունեցող փոխադարձ պայմանավորվածությունը: Ակնառու փաստարկումներով հիմնավորվում է, որ Հ. Թամրազյանը առաջինն է նարեկացիագիտության մեջ առաջադրել կերպավորման արվեստի հարցը Մատյանում և պարզել վերջինիս առնչվող առանձնահատկությունները:

Вачаган Авагян, Григор Нарекаци в оценке Гранта Тамразяна-В статье показано, как известный литературовед Грант Тамразян искусным исследованием произведений Григора Нарекаци, в частности, его сочинения «Книга скорбных песнопений» выявил многочисленные закономерности создания лирики великого поэта, а также истолковал взаимозависимость разных творческих явлений, связанных с «Книгой скорбных песнопений». Значительными аргументами обосновывается, что Тамразян был первым из нарекациведов, кто выдвинул вопрос об искусстве воплощения образов в “Книге скорбных песнопений” и определил особенности вышеупомянутого произведения.

Vachagan Avagyan, The evaluation of Grigor Narekatsi by Hrant Tamrazyan-The article shows how by a skilled examination of Grigor Narekatsi’s works, the «Book of Lamentations» in particular, the well-known literary critic Hrant Tamrazyan revealed a number of patterns of the creation of his poetry and explained the connection between diverse creative phenomena, related to the book. It is justified with a use of outstanding arguments, that H. Tamrazyan was the first among Narekatsi scholars to discuss the role of impersonation in the the «Book of Lamentations» and reveal the specifications related to it.

ԾԵՐԵՆՑԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀԱՄՄԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Ծերենցը (Հովսեփ Շիշմանյան) «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» երեք պատմավեպերի հեղինակ է, որոնք գրել և հրատարակել է 1877-1881 թվականների ընթացքում: Վեպերից գրության հաջորդականությամբ առաջինը «Թորոս Լևոնին» է, որը նկարագրում է Կիլիկիայի պետական անկախության վերականգնման համար 12-րդ դարի կեսերին ծավալված պայքարը:

1860թ. մայիսի 24-ին Կ. Պոլսի Ազգային ժողովը ընդունում է Արևմտահայության ներքին կյանքը կարգավորելու կոչված Ազգային սահմանադրությունը (սուլթանական կառավարությունն այն վավերացրեց 1863թ. մարտի 17-ին): Չնայած դրանով նախատեսված խիստ սահմանափակ իրավունքներին, այն որոշակի աշխուժացում է մտցնում ազգային կյանքում:

1866թ. սեպտեմբերի 1-ին Մ. Պեշիկթաշլյանի, Ծերենցի, Ս. Թագվորյանի և այլոց գործուն մասնակցությամբ Կ.Պոլսում հիմնադրվում է «Բարեգործական ընկերություն հայոց»-ը: Մինչ այդ կազմակերպված բոլոր ընկերությունների համեմատությամբ Բարեգործականը, անկասկած ամենաարմատականն էր:

Արևմտահայությանը հայ հողում պահելու ու զարգացնելու նպատակով ընկերության կանոնադրությունը նախատեսում էր հասարակական - տնտեսական լուրջ միջոցառումներ:

Բայց դա երևույթի սոսկ երևացող կողմն էր, կային նաև քաղաքական բնույթի հեռուն գնացող նպատակադրումներ՝ մասնավորապես կապված Կիլիկիայի հետ: Դեռևս 1860թ. փետրվարին արևմտահայ հասարակական առաջադեմ գործիչ Գալուստ Կոստանդյանը իր «Միություն, միաբանություն» հոդվածում նշելով, որ Ռուբինյան թագավորության անկումից հետո ցրվելով աշխարհով մեկ, հայության մի մասը իսպառ կորել է, գրում էր. «Հայաստանը մերկ է և կործանված, յուր զավակները օտարացած և ցրված՝ միշտ կորսվելու ենթակա: Եվ մեր պարտքը ի՞նչ է հիմա, չկորսվելու համար ճար մը գտնելու ջանալ»: Անհրաժեշտ է նոր կենտրոնացում, բայց ու՞ր, իհարկե, Հայաստանի մեջ: Նրա կարծիքով, սակայն, նոր ժամանակներում տնտեսությունն և մշակույթը առավելապես զարգանում են ոչ թե մայրցամաքների ներքին տարածություններում, այլ ծովեզերքներում:«Այսու պատճառավ,-եզրակացնում է նա,-պետք եմք ընտրել այնպիսի երկիր մը, ուր թե՝ հայրենիք եղած ըլլա և՝ թե ընդարձակ ծովեզր մը ունենա: Այսպիսի երկիր մը կրնամք կա ըսէլ, ցուցընելով Կիլիկիան»:[1]

Արևմտահայ առաջադեմ գործիչների հետաքրքրությունը Կիլիկիայի նկատմամբ առավել սրվեց ու հստակվեց դեռևս 1860թ. ամռանը զեյթունցիների կողմից Մարաշի կառավարիչ Խուրշիդ փաշայի զորքերը փախուստի մատնելու, 1860 և 1861 թվականների ընթացքում Մ. Նալբանդյանի Կ. Պոլիս գտնվելու և հատկապես 1862թ. կեսերին Զեյթունի հերոսական ապստամբության ընթացքում: Բարեգործական ընկերության հանձնարարությամբ Զեյթունի ապստամբության նախօրյակին Ծերենցը մեկնում է Կիլիկիա, բայց Անտոն Հասունյանի բանսարկու-

[1] «Միություն», հանդես Հաշտենից, Զմյուռնիա, 1860, № 4, էջ 27:

թյունների հետևանքով ապստամբության սկզբում, կառավարության հրամանի համաձայն, ստիպված է լինում վերադառնալ Կ. Պոլիս: Զեյթունի ապստամբությունը առաջ բերեց ազգային ինքնագիտակցության հզոր վերելք: Նահապետ Ռուսինյանն ու Արմենակ Հայկունին հանդես եկան Կիլիկիային և զեյթունցիներին նվիրված բանաստեղծություններով, Մկրտիչ Պեշիկթաշլյանը՝ իր ոգեշունչ զեյթունյան երգաշարով: Հենց այդ թվականներից Ծերենցի մոտ ևս տևական հետաքրքրություն է առաջանում Կիլիկիայի նկատմամբ, որի արտահայտությունը ոչ միայն հետագայում գրված նրա առաջին՝ «Թորոս Լևոնի» պատմավեպն է, այլև՝ «Կիլիկիա» հանգամանալից ռաումնասիրությունը:

Ծերենցի ռոմանտիկական պատմափիլիսոփայությունը հենվում է «հասարակական դաշինքի» լուսավորական տեսակետի վրա: Նրա համոզմամբ, հասարակության դասային ստորաբաժանումը բնական օրենքով հաստատված իրավունք է, որը ենթակա չէ խախտման և յուրաքանչյուր ազգ ուժեղ ու անպարտելի է այդ դասերը միացնող դաշինքով: Հայոց պատմության դժբախտությունն ըստ Ծերենցի, հենց այն է, որ եսասեր ազնվականությունը արհամարհել է ժողովրդին և քանդել ազգի բարոյական միասնությունը:

«Իր «Երկունք Թ դարու» վեպում նա կերտում է «ժողովրդի մարդու» կերպարը, օժտում նրան մտքի, ուժի, հոգու գեղեցկության արտակարգ հատկանիշներով, ցույց տալու համար, որ ժողովուրդը մեծ ուժ է և որ ազգը ներկայացնող բոլոր դասերի հասարակական դաշինքի մեջ է հայ ժողովրդի ազատագրության երաշխիքը»[2]:

Հայրենիքի ու ժողովրդի շահերը պահանջում են համախմբել ժողովրդի բոլոր խավերին: Այս գաղափարը առկա է նաև Ծերենցի մյուս պատմավեպերում: Այսպես, օրինակ՝«Երկունք Թ դարու» պատմավեպում գլխավոր հերոսը՝ Խութեցի Հովնանը, երկրի հզորության գործում խիստ կարևորում է տարբեր դասերի միասնության խնդրի լուծումը, իսկ երբ տարբեր դասերի ներկայացուցիչները չեն համախմբվում երկրի շահերը պաշտպանելու գործում, դրա մեջ նա հատկապես մեղադրում է ազնվականների դասակարգին: Եվ ահա, չվստահելով ազնվականներին՝ նա, հասարակ ծագումով այս կերպարը, իր շուրջն է համախմբում Սասունի բնակչությանը և հզոր դիմադրություն է ցույց տալիս արաբ նվաճողներին: Ազնվականների անհամերաշխության, եսասիրության շահամոլության թեման գրողը յուրովի է արծարծում նաև «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպում, որտեղ երկրի պաշտպանունակությունը հզորացնելու Ռշտունու ջանքերը թեև ժամանակավորապես հաջողությամբ են պսակվում, բայց կրկին ու կրկին կենտրոնախույս մի շարք իշխանների մեղքով երկիրը թուլանում է և դառնում օտար նվաճողների հարձակումների թիրախ, որի հետևանքով հատկապես տուժում է հասարակ ժողովուրդը: Ծերենցի ստեղծած գրական ավանդույթը և, մասնավորապես, պատմավեպի ժանրում բերած նորույթը բարձր գնահատեցին ժամանակի հայ մտավորականները և գրողները: Նրա պատմավեպերը համարվեցին ժամանակին ստեղծված գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ:

1877թ. հրատարակված «Թորոս Լևոնի»-ն միանգամից իր վրա գրավեց ընթերցող և մտավորական հասարակայնության լայն ուշադրությունը: «Թորոսը այն

[2] **Ս. Սարինյան,** Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան 1979, էջ 249 :

աստիճան ազդեցություն ըրած է այստեղ,-գրում էր ժամանակակիցներից մեկը,- որ գիմնազ գացող աշակերտեն սկսյալ մինչև հայ խմբագիրը և շաքար ծախողեն մինչև քաղքիս նշանավոր տիկնայք կարդցած են»: Ստեղծագործության նյութ դարձնելով Կիլիկիայի հայոց պատմական անցյալը՝ հայ-բյուզանդական պատերազմները, Ծերենցը այդ հենքի վրա պատկերել է դյուցազուն հայորդի Թորոսի սխրանքները իր ստրկացված հայրենիքը փրկելու համար: Այդ անելու համար Թորոսը ստիպված է լինում ոչ միայն գործ ունենալ «խարդախ ու նենգավոր» Բյուզանդիոնի, այլև Իկոնիայի, Զինգի, Եգիպտական սուլթանի և մի քանի այլ պետությունների ներկայացուցիչների հետ: Հեղինակը, շեշտելով հանդերձ իր հերոսի մարտավարական, ռազմագիտական մեծ ունակությունները, մեծ հաջողությամբ բացահայտում է Թորոսին, որպես բանիմաց և մտացի դիվանագետի: Նա կարողանում է վարպետորեն լուծել Հայաստանի հարևան պետությունների, ներքին կենտրոնախույս իշխանների հետ առնչվող դիվանագիտական բազմաթիվ կնճռոտ ու խճճված հարցերը, մի անգամ ևս դրսևորելով իր հարուստ տվյալները այդ ասպարեզում: Ի հակադրություն իր եղբոր՝ ծանծաղամիտ Մլեհի, Թորոսի մոտ շեշտված են կազմակերպչական մեծ կարողությունները, ղեկավարի խորաթափանցությունը, ջերմ հայրենասերի կրքոտ ոգին: Այս ամենի հետևանքով, վեպի վերջում հառնում է Թորոսի այնպիսի ամբողջացված ու լիարյուն կերպարը, որի կերտումը կարելի է համարել հեղինակի ստեղծագործական նվաճումներից մեկը:

«Թորոս Լևոնի» վեպում ևս նրա ուշադրությունը հայկական ընդհատված պետականության վերականգնման փոթորկալի ժամանակին է բևեռված: Հեղինակի գեղարվեստական հետաքրքրությունից դուրս է մնում Թորոսի մահից որոշ ժամանակ անց Լևոն II-ի կողմից Կիլիկիայում հայկական թագավորության հաստատումը և համեմատաբար բարեկեցիկ կյանքի պատկերումը: Ծերենցի գեղարվեստական ժառանգության համար վերոհիշյալ ելակետի շեշտումը կարևոր է, քանի որ միանգամայն գիտակցորեն նա ընտրում է պատմության այն շրջանները, երբ օտարերկրյա զավթիչների դեմ ոտքի կանգնելով ժողովուրդը բացահայտում է իր ազգային բնավորության՝ անհուն ազատասիրության ու հայրենասիրության ամենավսեմ առանձնահատկությունները:

Վեպի գլխավոր հերոսի՝ Լևոն թագավորի ավագ որդու՝ Թորոսի գործունեության միջոցով ընդգծվել է երկրում կենտրոնացված հզոր պետություն ստեղծելու նրա վարած քաղաքականությունը: Թորոսը երկրի կենտրոնախույս ուժերի ներկայացուցիչներին՝ Լամբրոնի իշխանին, Մլեհին, փորձելով համախմբել իր շուրջը, նրանց նկատմամբ գործադրում է ռազմական ուժեր: Նա համոզված է, որ երկիրը հնարավոր է հզորացնել ռազմական ուժի շնորհիվ, ընդդիմադիր ուժերին հարկավոր է ոչ թե համոզել,այլ զենքի միջոցով հնազանդեցնել, քանի որ հայրենիքի ու ժողովրդի շահերը պահանջում են համախմբել ժողովրդի բոլոր խավերին:

Ժողովրդի և նրա գրականության պատմության մեջ, առհասարակ, լինում են շրջափուլեր, երբ ազգային հրատապ խնդիրների թելադրանքով պատմական հիշողությունը, տիրապես ներխուժելով արդիականություն, դառնում է սերունդների ինքնագիտակցության կարևորագույն լծակներից մեկը: Մեր գրականության համար այդպիսի շրջափուլ էին XIX դարի 70–80-ական թվականները: Հայ ժողովրդի գոյապայքարի առաջադրած պահանջների թելադրանքով և այդ պահանջների կենսագործմանն իր կյանքն ու ստեղծագործությունը նվիրեց Հ.

Շիշմանյան-Ծերենցը: Րաֆֆու պատկերավոր արտահայտությամբ՝ եթե մեր նոր շրջանի գրականության մեջ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» հրաբխային զորության առաջին ժայթքումն էր, ռուս-պարսկական 1826–1828 թթ. պատերազմի ընթացքում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կախարդական արտացոլումը, ապա կես դար անց, 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմով հայ ժողովրդին համակած հայրենասիրական պոռթկումը կյանքի կոչեցին Ծերենցի պատմավիպասանությունը և հրապարակախոսությունը: Ծերենցի երիտասարդությունը համընկավ արևմտահայ իրականության մեջ ծավալվող ազգային արժեքների գնահատման և զարթոնքի իրադարձություններին, հասարակական կյանքում ձևավորվող առաջադիմական և հետադիմական դիրքորոշումների և խմբակցությունների պայքարի ժամանակաշրջանին: Նա ներգրավվում է առաջադեմ երիտասարդության ծավալած հասարակական գործունեության մեջ, անդամակցվում և գործուն մասնակցություն է ունենում 1846 թ. Մ. Պեշիկթաշլյանի գլխավորությամբ հիմնադրված համազգյաց ընկերության աշխատանքներին: 1840-ական թվականների վերջերին, Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկական բաժնում սովորելու տարիներին, Ծերենցն ականատես է լինում ծայրահեղ հետադիմական ուժերի և Վատիկանի անսքող դաշնությանը: Ուսումնառությունից հետո վերադառնալով Կ. Պոլիս՝ նա բախվում է կաթոլիկ հայերի հովվապետ Անտոն Հասունյանի հետ: Ծերենցը դավանափոխության դեմ պայքարում էր ազգային ուծացման վտանգի գիտակցումով՝ աչքի առաջ ունենալով նաև Լեհաստանի հայության կորուստը: 50-60-ական թվականներին նա ազատագրական պայքարի հետևողական կողմնակից էր, անմիջական կապեր է ունեցել Զեյթունի 1862թ. ապստամբների հետ: Հետագայում նա նահանջ է կատարում պայքարի զինված ձևերից: Այս իրողությունն է հաստատում 1876 թ. հոկտեմբերին Գր. Արծրունու և Րաֆֆու հետ ունեցած նրա սուր բանավեճը, ուր նա այն համոզմունքն էր հայտնում, թե ինքը «վերեն» հեղափոխության կողմնակից է, որովհետև «վարեն» եկող հեղափոխությունները մեծ արյունահեղություն են պահանջում: «Մենք կուզենք,-ասում էր Ծերենցը,-որ ամեն մի հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն: Վարեն եկած հեղափոխությունը (եթե որ հաջողին ալ) անչափ աղետք՝ անչափ թշվառություն ունին և այնչափ արյուններու առիթ կը լինին, և հայ ազգն այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որ իր կարողութենեն վեր է այդ մասին շռայլ լինել. և ընդհակառակ, վերեն եկած հեղափոխությունք միշտ հաստատ են և երբեք այն արյանց գիներով չեն լիներ… Ռուսիո ինքնակալությունն երեսուն միլիոն մարդու ազատության տվավ գրեթե առանց արյուն թափելու, հրովարտակով մը միայն, հրովարտակ՝ որու բոլոր անցյալ և ապագա Ալեքսանդր անունը կրողներուն էն մեծը պիտի լինի նորա ստորագրողը հանդերձյալ ողջամիտ դարերու մեջ»[3]: Այստեղ Ծերենցի հարցադրումները բխում էին հասարակության աստիճանական առաջընթացի մասին նրա հիմնական դավանանքից: 1878թ., ստեղծված կացությունը հաշվի առնելով, հայ գործիչներից շատերը պահանջում էին իրենց տալ «Հայաստան ոչ թագապսակ, ոչ անկախ, ոչ ինքնուրույն, այլ Հայաստան մասն օսմանյան տերության՝ հարկատու ճիշտ ուրիշ գավառաց պես… ազատ ի հարստահարությանց, ավազակաց, մանավանդ ի կուսակալաց և բարի օրինակ լավ կառավարության նույն տերության դրացի

[3] «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1876, հոկտեմբեր, էջ 349–350:

գավառաց»:[4] Չափավոր, ազգային-պահպանողական Ծերենցն այդ պահին այն թյուր կարծիքն ուներ, թե «այս պետք է փափագեր նույն այն ինքը Բ. Դուռը, բայց դժբախտություն մըն է, որ կենտրոնացման հիվանդությունը, պաշտոնյա տիրաց ապականությունը… և կրոնամոլություն օրենք դարձած են ի Տաճկաստան»:[5] 1878թ. դեկտեմբերին գրած «Ժամանակիս ոգին և հայ ապագան» հոդվածում Ծերենցը թեկուզ շարունակում է հույսը դնել հասարակության և մարդու բնական առաջադիմության և բարեհաջողության վրա, որի համաձայն իբր թե ժամանակի տիրապետող ոգին «արդարությունն» է, այնուամենայնիվ, սուր քննադատության է ենթարկում Բեռլինի կոնգրեսում Անգլիայի դիրքորոշումը: «Անգլիա բարոյապես և նյութապես պատասխանատու և գործակից է,-գրել է Ծերենցը,-ամեն անիրավությանց, որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղի ունին 1878 հունիսի 4-են վերջը: Այո՛, այն օրվանե, որ Անգլիա Կիպրոսը օսմանյան տերութենեն առնելով յուր սեփականության ընելով, փոխարեն նրա Ասիական ստացվածքը կերաշխավորե, աշխարհիք զինքը պատասխանատու կճանաչե թե լավ, թե վատ գործունեությանց»[6]: Ավելորդ է ասել, որ Ծերենցը նկատի ուներ 1878 թ. Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը, որի համաձայն Օսմանյան կայսրությունից զավթելով Կիպրոսը, ծովերի «թագուհին» պարտավորվում էր ապահովել նրա ասիական տարածքների անձեռնմխելիությունը, Թուրքիայի ամբողջականությունը: Հիրավի, Բեռլինի կոնգրեսն ընթացավ այնպիսի թատերախաղով, որ Ծերենցին իրավունք վերապահեցին առավել խիստ արտահայտվելու՝ «Անգլիա Օսմանյան պետության կամ յուր անձնական շահերուն միայն բարեկամն է»:[7] Ծերենցը խորությամբ գիտակցում էր, որ Արևմուտքից Արևմտյան Հայաստանի ազատություն ստանալն առնըվազն պատրանք է: Բեռլինի կոնգրեսից մեկ տարի էլ չէր անցել, երբ նա տագնապով զգաց ազգային բնաջնջման մոտալուտ և ահավոր այն վտանգը, որ օսմանյան կերպարանք ստացած դամոկլյան սրի նման կախվում էր արևմտահայության գլխին: Ծերենցը գիտեր, որ ձգտելով ամեն կերպ կանխել թուրքական պետության հետագա քայքայումը՝ կայսրության վերնախավը սկսել էր ծրագրեր մշակել արևմտահայության բնաջնջման համար: «Օսմանյան ինքնակալություն. Տաճկահայք և Ռուսահայք» պատմաքննական հոդվածում Ծերենցը մեջբերումներ էր կատարում սուլթան Աբդուլ Համիդի մեծ վեզիր Քյամիլ փաշայի հեղինակած ծրագրից[8], ուր պանթուրքիզմի գաղափարներով ու կարգախոսներով ղեկավարվող «նոր օսմանները» սխալ և անօգուտ էին համարում կայսրության եվրոպական մասում ապրող քրիստոնյա ժողովուրդներին ժամանակին տրված արտոնությունները և կանխագծում ասիական քրիստոնյաների (հայերի) ոչնչացումը: «Եթե Եվրոպիո մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէր, որ նույն հիմարությունն ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ,-մտորել էր Քյամիլ փաշան: … Խելոքությունը ջնջել վերացնելն է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխության առիթ ու գործիք լինել: Ուրեմն,-եզրակացնում էր Քյամիլ փաշան,-այդ հայ ազգը վերացնելու, անհետ և անճետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ

[4] «Փորձ», Թիֆլիս, 1878,-1, էջ 207:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, էջ 208:

[7] Նույն տեղում:

[8] Քյամիլ փաշայի հայակործան այս ծրագիրը արևելահայ մամուլում առաջին անգամ հրապարակել է Ծերենցը («Փորձ», 1879,-7-8):

հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք-քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կըհրատարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան»[9]: Թուրքական մարտնչող ազգայնականության նոր զարգացումները և արևմտահայ հատվածի համար նախապատրաստվող ողբերգության մոտեցող տագնապները շատ անմիջական ներգործություն ունեցան Ծերենցի գաղափարական շրջադարձային, արմատական վերակառուցման վրա: Արևմուտքի դիվանագիտական խաբկանքներից ու խարդավանքներից հոգնած և հիասթափված Ծերենցը հանգեց այն համոզման, որ ազատությունն անհնարին է առանց ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման, ընդդեմ թշնամու՝ նրա ներքին ուժերի ու ջանքերի համախմբման: Եթե առաջ, մասնավորապես իր հրապարակախոսության մեջ, նա ինչ-որ հույսեր էր կապում «վերեն» շնորհվող ազատության հնարավորությունների նկատմամբ, ապա ուշ շրջանի գեղարվեստական ստեղծագործություններում ցույց տվեց, որ ազատությունը երբեք չի շնորհվում, որ ժողովուրդն այն նվաճում է միայն զինված պայքարով: Անսպասելի չէր, որ իր վեպերի համար («Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու», «Թեոդորոս Ռշտունի») որպես հենք Ծերենցը վերցրեց պատմության այն շրջանները, երբ օտար զավթիչների դեմ ոտքի կանգնած հայ ժողովուրդը հանուն ազգային անկախության դրսևորում է իր ամենավսեմ հատկությունները՝ ազատասիրությունն ու հայրենասիրությունը: Ծերենցի առաջադիր նպատակն էր ժամանակակիցներին հասկացնել, որ անելանելի իրավիճակներ չկան, որ ազգը, անցյալի սերունդների փորձից ելնելով, չպետք է հաշտվի բռնակալության հետ: Վերոհիշյալ բանաձևման առումով խորհրդանշական է, որ, ելնելով Կիլիկյան Հայաստանի պատմության և արդիականության նկատմամբ տևական հետաքրքրքրությունից, Ծերենցը որպես դրոշակ պարզեց «Թորոս Լևոնի» վեպը: Միանգամայն իրավացի էր պատմաբան և հրապարակախոս Ստ. Պալասանյանը, երբ Ծերենցի վեպին նվիրած իր գրախոսականում գրում էր, թե՝«Քիչ գիրք կպատահի, որ «Թորոս Լևոնի» նման յուր ժամանակին գրված և հրապարակված լինի»:[10] Չմոռանանք, որ 1878-1881թթ. հրապարակվեցին նաև մյուս վեպերը:

Ազատագրական ոգու պատմական հոգեբանության հայտնաբերումը Ծերենցի պատմավեպերի գեղարվեստական խոշոր նվաճումն էր, նրա պատմափիլիսոփայական գաղափարական առանցքը:

Բանալի բառեր-Ծերենց, պատմավեպ, գրականություն, մամուլ, հրապարակախոսություն, արևմտահայություն, հեղափոխություն, ազատագրում, ազգային, ժողովուրդ:

Հասմիկ Բաբայան, Ծերենցի պատմավեպերի գաղափարական նպատակները-Ծերենցը հայ գրականության այն ներկայացուցիչներից էր, որը մոտ հիսուն տարվա գրական-հասարակական իր ջանադիր գործունեությամբ անմար հետք թողեց մեր ժողովրդի հոգևոր մշակույթի ասպարեզում՝ դառնալով հայ գրականության, որոշ իմաստով, անփոխարինելի դեմքերից մեկը:

[9] Նույն տեղում, էջ 204-205:

[10] Նույն տեղում, էջ 195-196:

Ծերենցի քաղաքական երազանքը, հասարակական իդեալները խարսխվում են 18-րդ դարի եվրոպական լուսավորիչների գաղափարների վրա: Նա երազել է պետական այնպիսի համակարգի մասին, որտեղ գործի հասարակության բոլոր դասերի «բարոյական միասնության» դաշինքը: 19-րդ դարի 70-ական թվականների վերջերից սկսված գրական-գեղարվեստական գործունեության արգասիքը հանդիսացան նրա երեք պատմավեպերը՝ «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» խորագրերով, որոնք գրողին դասեցին հայ նշանավոր հեղինակների շարքը:

Ծերենցի վեպերը ազգային ազատագրության ոգեշունչ գաղափարներով տասնամյակներ շարունակ խանդավառել են ժողովրդի միտքն ու զգացմունքները:

Асмик Бабаян, Идейные цели исторических романов Церенца- Церенц был одним из представителем армянской литературы, который оставил вечный отпечаток на духовную культуру нашего народа в свои пятьдесят лет длилась литературные и общественные усилия, он стал одним из незаменимых фигур в некотором смысле.

Политическая мечта и социальные идеалы Церенца, были основаны на идеях европейских осветителей 18-го века. Он мечтал о государственной системе, в которой действовало "моральное единство" всех классов общества.

В конце 70-х годов 19-го века результаты художественных и литературных деятельности стали его три романа: "Левон Торос", "В муках рождения" и "Теодорос Рштуни". Эти романы писателя среди классических авторов навсегда.

Романы Церенц "вдохновил ум и чувства людей, с их вдохновляет идеи национального освобождения в течение многих десятилетий.

Hasmik Babayan, The ideological perspectives of the historical novels by Tserents- Tserents was one of the representative of the armenian literature, who left the eternal stamp on the spiritual culture of our people in his fifty years lasted literary and public efforts, he became one of the irreplaceable figures in some sence.

Tserents' political dream and social ideals are based on the ideas of 18th century European enlighteners. He had dreamed such a state system in which would be moral unity coalition of all classes of society.

At the end of the 70s of 19th century the results of the artistic and literary activities became his three novels: «Levon Toros», «In the Pains of Birth» and «Theodoros Rshtuni»: This novels set the writer among the classic authors forever.

Tererents' novels inspired the mind and feelings of the people with their inspiring ideas of national liberation for decades.

О ЖАНРОВОЙ СПЕЦИФИКЕ ПОВЕСТИ А. КРОНА “КАПИТАН ДАЛЬНЕГО ПЛАВАНИЯ”

ЮЛИЯ ХОДЖОЯН

Повесть А. Крона «Капитан дальнего плавания»-яркий образец межжанрового синтеза, в котором органично сочетаются публицистические и художественные элементы (в произведении находят отражение признаки художественной, социально-психологической, ораторской прозы и журналистики). Исследуя события Великой Отечественной войны, автор одновременно дает возможность с предельной глубиной постичь неповторимую индивидуальность «подводника N1», Героя Советского Союза (1990) А.Маринеско. Художественно-документальная повесть А. Крона, в центре которой подробное описание морских «атак века», вовлекает в себя множество судеб, дает возможность воссоздать картину общенародного подвига и массового героизма. Подобный подход становится возможным благодаря совмещению различных «ракурсов видения», точек зрения, сопряжению фактического, документального материала с его художественной и психологической интерпретацией. Активное обращение автора к приемам ораторского искусства (использование большого количества риторических фигур, восклицаний, вопросов и т.д.) придает повествованию особую экспрессивность и позволяет вовлечь читателя в живой, интереснейший диалог с целью восстановить историческую правду, определив ту роль, которую сыграла подводная лодка «С-13» под командованием капитана III ранга А. И. Маринеско «для ускорения морального и физического разгрома гитлеризма».[1]

Согласно первоначальному замыслу, в произведении должно было органично соединиться два повествовательных пласта: «аналитический обзор» (анализ документов о боевой деятельности командира «С-13»), выполненный прославленным флотоводцем, ученым историком, адмиралом И.Исаковым, и «психологический портрет», созданный самим мемуаристом А. Кроном, дающий исчерпывающее представление о неповторимо-индивидуальных чертах характера отважного командира. Повесть, написанная уже после смерти И. Исакова, ярко отражает тяготение автора к использованию обширного арсенала средств, приемов документально-публицистических и художественных жанров. Примечательны размышления автора о поиске единственно-верной жанровой формы для передачи достаточно обширного и разнородного в стилевом отношении материала. Так, «документальность»,-по замечанию А.Крона,-еще не дает патента на бесспорность… Документы можно отбирать и монтировать. Иногда в результате такого отбора и рождается искусство”,-заключает автор.[1] Однако сугубо достоверный материал не позволял в полной мере ортазить «сложный и привлекательных образ» командира «С-13». На смену «информационному подходу» приходит «жизнеописание». Но и биографический очерк в его традиционной форме (с тяготением к спокойному, объективному изложению событий) в свою очередь не устраивал автора. («Откуда взяться эпическому спокойствию?»-размышлял А. Крон.-Ведь образ героя “еще не созрел для бронзы, споры вокруг личности и подвига Маринеско не умолкают до сих пор”)[1]. Элементы обезличенного беллетризованного очерка, по словам

Крона, совершенно справедливо могли породить у читателей массу вопросов: «откуда автор почерпнул свои сведения, что видел сам, о чем знает с чужих слов» и т.д. Наконец, А. Крон обращается к форме воспоминаний-хроникальному и фактографическому повествованию, соединяя важные события жизни страны и ее героя с описанием мелких подробностей повседневной жизни. Подобная форма повествования дала автору возможность подвергнуть факты собственному осмыслению, поделиться личными впечатлениями, выразить свое отношение к герою.

Отметим, что в критической литературе мемуаристика относится к наименее исследованным литературным пластам. В сфере жанровых определений мемуаристики существуетвует множество обозначений; при этом нет единой теоретической концепции представления мемуаристики как метажанра. Мемуарист А. Крон, стремясь к всестороннему исследованию интересующих его проблем, в то же самое время пытается осмыслить исторический контекст собственной жизни. Именно память является тем необходимым «инструментом», благодаря которому по крупицам воссоздается правда о минувшем времени. За счет избирательности памяти в большей степени и создается неповторимое своеобразие мемуарного произведения. Автор обращается как к индивидуальным воспоминаниям, так и коллективным. А. Крон не просто констатирует факты, повествует о событиях прошлого, он разъясняет, убеждает, полемизирует, обличает, призывает к переосмыслению событий, уже получивших определенный резонанс в общественном сознании. Несомненно, подобная форма отношений «автор-повествователь-герой» способствует максимальному духовному и эмоциональному сближению коммуникантов.

Относясь к особой модификации мемуаристики, литературный портрет синтетически обобщает сведения об описываемом человеке, отношение к нему современников и самого автора. Рисуя портрет А. Маринеско, А. Крон сплетает в единый комплекс биографические сведения, моральные, мировоззренческие качества командира «С-13». Рассматривая портрет персонажа как важный жанровый элемент в мемуарно-художественной и биографической прозе, исследователями и сегодня создаются разнообразные, многоаспектные классификации литературного портрета (И. Быкова, М. Альбрузи и др.). У А. Крона портрет предстает как составляющая биографии героя; как способ воплощения визуального впечатления о человеке, передающий особенности созданного в произведении характера; как одна из форм психологического анализа; как особая функция повествования и, наконец, как тип особого конструирования отношений «автор-повествователь-герой» и т.д. Портрет в повести А.Крона уточняет параметры характера героя, расширяет поле его значения, направляя в нужное русло процесс «чтения» образа персонажа.

М.Уртминцева отмечает: «Важная роль в создании образа в мемуарно-биографической литературе играет обобщение эмоциональной реакции от увиденного, поэтому портретной характеристике и визуальному впечатлению принадлежит значительная роль в обнаружении доминанты личности героя воспоминаний».[2] Примечательно описание внешности героя: «Круглое лицо. Нос картошкой, ни глубокомысленной складки между бровями, ни изобличающего железную волю квадратного подбородка. А в итоге-ощущение силы. Силы, которая себя прячет, а не демонстрирует. Прячет до поры…»[1] Автор пытается с точностью восстано-

вить и зафиксировать реакции героя (его мимику, жесты, интонации) как в драматичные пероиды жизни, так и в мирные послевоенные дни. «…Изучение портрета как функции повествования в мемуарно-биографическом жанре,-пишет М. Уртминцева,-дает основание рассматривать его не только как элемент характеристики персонажа, как способ выражения авторской оценки изображаемого, но и как мотив, из которого вырастает сюжетная ситуация воспоминания».[2] Отметим, что и в произведении А. Крона функция визуального впечатления, с одной стороны, являясь способом воплощения образа, характера, с другой, является мотивом для развертывания повествования.

В повести находит отражение комплексная психологическая характеристика А. Маринеско, включающая как описание его внутреннего склада, так и анализ совершенных им поступков. А. Кроном выявляются индивидуальные привычки А. Маринеско, специфика его мышления и восприятия окружающего мира. Автор с максимальной скрупулезностью раскрывает базовые личностные качества героя, выявляет его эмоциональный настрой в целом. Повествование построено таким образом, что с первых же страниц повести А. Крон знакомит читателя с актуальными для А. Маринеско ценностями, показывает его «рабочие эмоциональные состояния», реакции в экстримальных условиях, способы самомотивации; говорит о наиболее повторяющихся переживаниях и мыслях героя. Так что к моменту описания «героических атак века» читателем уже со всей точностью может прогнозироваться поведение командира «С-13»в один из наиболее драматичных периодов его жизни.

А. Кроном выбрана такая форма повествования, которая позволяет верно и живо отобразить наиболее тонкие душевные движения героя. В повести часты и эпизоды, в которых внутреннее состояние персонажа раскрывается благодаря выразительным жестам, мимике, разнообразным проявлениям психики. С самого начала произведения внешняя сюжетная занимательность уступает место изображению сложных и интересных душевных состояний героя. «Живой» образ А. Маринеско показан сквозь призму его биографии (одесское детство, школьные пристрастия, одесский яхт-клуб, школа юнг, одесское мореходное училище, служба в торговом флоте, подводная служба, боевой путь, жизнь вне флота, драматичный конец). На каждом этапе жизни героя автор пытается выявить отношение меняющейся личности к действительности и самому себе. Описывая детство и юношеские годы А. Маринеско, А. Крон чутко фиксирует то, что сформировано в его герое социальной средой, семейной, культурной традицией. Все это, по убеждению автора, позволит глубже постичь яркую индивидуальность будущего «подводника N1», понять все его человеческие порывы, от героических до необяснимых, эмоциональных, взрывных. В повествовании создается полнокровный психологический портрет человека, «с детства заряженного на подвиг». А. Крон убежден: «…Героем не делаются в пять минут. Самый подвиг может длиться секунды, но он всгда подготовлен всей предшествующей жизнью…»[1]

А. Крон скрупулезно исследует психологический и эмоциональный склад А. Маринеско, его темперамент, стиль мышления; пытается понять заключенные в его характере противоречия, присущие «многим незаурядным людям». В анализе личности «подводника N1» для автора важно проследить «путь от поступка к побуждению, от побуждения к характеру». Описание переломных моментов

жизни А. Маринеско с наибольшей красноречивостью свидетельствуют о его непоколебимой воле и силе духа. На самых крутых виражах биографии цельность характера, понимание высшего долга перед Родиной заставлвли героя «перешагнуть через себя, через свои желания и мечты, но не сломиться». Особое внимание автор уделяет первому-переломному этапу в жизни Маринеско, когда «из мира детских мечтаний о дальних неизведанных материках и океанских просторах», он «погружается в холодные глубины Балтики». А. Крон показывает непреклонную решимость молодого подвоника-«вложить всего себя в новую профессию, сделать ее призванием". Боевые атаки Маринеско 1944 года, описанные А.Кроном, ярко демонстрируют, какого высочайшего напряжения воли и ума они трбовали от героя. Дисциплинарные же нарушения автором неизменно связываются с вынужденным бездействием Маринеско (1943г), некоторой долей усталости, частыми непомерными психологическими и физическими перегрузками. Однако «в Маринеско всегда угадывалась неостывшая лава, но под прочной корой»,-так емко сформулировал свое понимание натуры героя А. Крон.[1] Эта характеристика с наибольшей наглядностью проявилась в период ссылки Маринеско, когда в 1949 году, несправедливо осужденный на 3 года «за разбазаривание социалистической собственности», бывший «подводник N1» был отправлен на Калыму. Все свидетельства, собранные Кроном о пребывании Маринеско в ссылке, говорили об одном: «больной, надломленный человек не рухнул ни физически, ни нравственно». И здесь, в нечеловеческих условиях (отбывать наказание приходилось с «разоблаченными карателями и профессиональными бандитами) Маринеско, проявив «выдающиеся качества вожака и организатора», вновь доказал, «какие неисчерпаемые возможности таятся в человеке волевого склада».[1] Это была еще одна победа над самим собой: герой добился полной гражданской и партийной реабилитации. По мере своего многостороннего анализа автор все более утверждался во мнении: «Январский рейд А. Маринеско 1945 года не был яркой вспышкой, на короткое время осветившей фигуру человека незаурядного, а предопределен всей его предшествующей жизнью». «Я увидел в Маринеско один из тех характеров,-писал Крон,-которые привлекали меня всегда. И в жизни, и в искусстве».[1]

Речь героя также является важным средством отображения его психологического склада и душевного состояния. При создании речевой характеристики А. Маринеско, в основном используется несобственно-прямая речь, благодаря чему голос автора органически соединяется с голосом персонажа. Риторические восклицания, риторические обращения, входящие в структуру несобственно-прямой речи, часто получают ироническое звучание, непосредственно отражая специфику внутреннего мира героя, его умение не поддаваться драматизму событий, трезво, без излишней пафосности оценивать свои поступки, реалии жизни. Иногда в рамках одной фразы автор прибегает как к несобственно-прямой, так и прямой речи, передавая богатую гамму эмоций и переживаний своего героя.

В произведении А.Крон обращается к своеобразному эксперименту: свое устойчивое представление о характере героя автор пытается соотнести с профессиональным мнением Г.Н.Крыжановского-руководителя лаборатории общей паталогии нервной системы, члена-корреспондента АМН СССР. В беседах с ученым-биологом затрагивались вопросы, связанные с особенностями саморегуляции, самооценки, эмоциональных проявлений и коммуникативных способностей А.Маринеско.

Отмечая высокий уровень волевой саморегуляции, ученый обнаружил в характере Маринеско соединение двух психологических типов. Г. Крыжановский определял это так: «Он был экстравертом (открытым, общительным) для тех, с кем был близок по духу и кому полностью доверял. Поэтому его так любили сверстники и команды кораблей. Для всех остальных он был интровертом. Вспомним его упрямое молчание о своих боевых заслугах на заводе в течение ряда лет. Соединение этих качеств в одном лице-свидетельство незаурядности их обладателя, нелегкое прежде всего для него самого…»[1] Интервью с Крыжановским полностью приводится Кроном в повести.

Как уже отмечалось, для А. Крона-мемуариста характерен прием проверки собственного впечатления оценками, откликами, свидетельствами широкого круга людей. Благодаря этому в произведении, можно сказать, вырисовывается и «общественный портрет» Маринеско. «Реальность воспоминаний» членов экипажа «С-13» о январском рейде 1945 года позволяют автору зримо увидеть человека «с несгибаемой волей», уверенного в себе, своем знании корабля, в команде, «умеющего сохранять спокойствие в часы наивысшего напряжения сил». Многие соратники Маринеско говорили о привычке командира доверять людям. «И доверие это было взаимно,-утверждали моряки.-Когда командир говорит «надо!», делается то, что час назад казалось немыслимым, делается потому, что сказал это слово он, командир, батя».[1]

Используя многообразные возможности публицистических жанров и их разновидностей, А. Крон выдвигает предположения о причинах тех или иных поступков героя, сопоставляет факты; автор стремится направить внимание читателей на причинно-следственные связи событий. Автор задается целью создать развернутый публицистический комментарий к известным событиям военных лет. Воссоздавая реальные картины минувшвго, А. Кроном используются возможности как информацоинных жанров публицистики, (заметка, интервью, отчет, репортаж), оперирующих первичной информацией, собранной автором что называется «по горячим следам», так и аналитических (статья, журналистское расследование, обзор печати, обозрение и т.д.). При этом повествованию свойственна яркая образность, эмоциональная выразительность и насыщенность литературно-художественными изобразительными средствами.

В поисках истины, связанной с жизнью, судьбой и подвигами А. Маринеско, автор, по сути, прибегает к своеобразному журналистскому расследованию (в годы ВОВ офицер на Балтийском флоте, участник обороны Ленинграда, Крон работал военным корреспондентом). За всесторонним рассмотрением вопроса стоит долговременное исследование предмета публикации. Автор пытается вскрыть истинные причины сложившихся спорных, неясных ситуаций, обнаружить внутренние, тайные пружины расследуемых явлений. Нравственное воспитание аудитории, ценные моральные обобщения являются не менее важной целью подобного обширного «расследования». К своему «расследованию» Крон привлекает целый ряд документов: постановления, распоряжения властных органов; конфиденциальные документы, документы служебного характера; заявления официальных лиц и т.д. В произведении с точностью фиксируется весь ход работы автора; от составления плана, сбора и обработки первичной информации, работы с источниками-до сис-

тематизации собранной информации, формирования доказательной базы с целью утверждения непредвзятых, справедливых взглядов на важные факты войны.

В своих сжатых обзорах западноевропейских публикаций о Маринеско (романов, очерков, исторических исследований К. Беккера и Г. Шена, Ю. Ровера, И. Брока, Д. Миллера и Р. Пейна), А. Крон предельно жесток и однозначен: он исключает всякую двусмысленность в трактовке морских атак Маринеско 1945 года. Небрежностью в исследовании вопроса, грубой подтасовкой фактов, в некоторых случаях- «необузданной, дурно пахнущей фантазией», объясняет А. Крон тяготение западноевропейских авторов к дискредитации образа советского подводника и подвига «С-13». Вопиющим искажением биографии А.Маринеско автор считает сведения английских журналистов из книги «Ужасная ночь». В описании Миллера и др. юный Саша Маринеско предстает «мелким воришкой, малограмотным и циничным удальцом, связанным с блатным миром, усвоившим правила жизни на одесских базарах»; в зрелые же годы-«пьяницей и бунтарем». Книга «Ужасная ночь» была опубликована крупнейшим издательством «Хэддер и Стоунтон" и, по существу, была рассчитана на все англоязычные страны.

Прямой вражеский выпад, элементы «информационной войны» со страной-победительницей находит А. Крон в подобного рода сфабрикованных и фальшивых статьях. Данные обзоры художественных и публицистических произведений, с одной стороны, информировали читающую публику об оценках и трактовках зарубежными авторами важных эпизодов ВОВ, с другой, несомненно, высвечивали сложные общественно-политические перепитии времени. В этой связи «авторское слово»-размышления А.Крона над прочитанным, услышанным, увиденным по поводу героя приобретали особую значимость, живо воздействовали на общественное сознание. «Полную, не оставляющую почвы для лукавых домыслов правду» о январском рейде Маринеско 1945 года, автор черпает из живых рассказов, записей и писем самого Александра Ивановича, многочисленных свидетельств соратников капитана «С-13», материалов, опубликованных в советской печати (Н.Кузнецов, В.Полещук). Автором также используются фрагменты из разных интервью с адмиралом И.С.Исаковым, его записи, наброски, материалы, исследования, посвященные атакам подводной лодки «С-13». Так, шаг за шагом в произведении вырисовывается историческая правда об атаках Маринеско-как блестящих военных операциях, благодаря которым инициатива господства в морской войне на Балтике была прочно перехвачена советскими моряками. Примечательно, что потопленный А.Маринеско лайнер «Густлов»-был самой большой плавучей базой школы подводного плавания, готовившей тысячи подводников для новых лодок. Половину пассажиров лайнера составляли высококвалифицированные специалисты-цвет фашистского подводного флота. И.Исаков с уверенностью утверждал: «Подвиг «С-13» сам по себе настолько значителен, что не нуждается в преувеличениях и украшательстве… На исходе войны фашистскую Германию постигла катастрофа, перед которой бледнеют все сохранившиеся в памяти человечества морские катастрофы…»[1]

Образ Маринеско подается на фоне окружающей героя действительности. Автор воспоминаний постоянно переключает повествование с военных лет на мирные годы жизни страны, рисуя широкую панораму подлинной истории советского флота. Разные временные ракурсы дают возможность А. Крону

одновременно подчеркнуть и неизменность нравственных принципов А. Маринеско. В произведении упоминаются известные деятели военно-морского флота СССР (С. Богорад, Н. Лунин, А. Матиясевич, Г. Щедрин и др.), приводятся фрагменты из их воспоминаний о Маринеско.Автором емко намечены действия Балтийского флота в годы ВОВ; приводится краткий анализ действий советских подводных лодок, уточняются боевые задачи, раскрывается суть военных действий подводных сил и морской авиации, называются потери.

Ярко чувствуется стремление автора «идти внутрь фактов", к подчеркнутой точности описаний за счет чего и возрастает полнота фактической и психологической правды о войне. В частности, А.Крон обращается к деталям, связанным с устройством и характеристиками подводных лодок 40-х годов (внимание уделяется «Малюткам» и «Эскам»-подлодкам, на которых служил Маринеско). Автор нередко обращается к специальной терминологии («узлы», «обороты двигателя», «боеспособность», «торпедные установки», «топливные системы», «цистерны главного балласта», «автономность» и т.д.) В произведении приводятся точные сведения (в цифрах) о возможностях субмарин. Так, вырастая из «факта», повествование разрабатывается в сторону его детализации.

Очерковая традиция сказывается в активизации образа автора, внутренний мир которого также является обúектом изображения. Образ Маринеско помещен в контекст судьбы мемуариста и соотнесен с фактами его собственной биографии. В повести А.Крона «Капитан дальнего плавания» мы встречаемся с открытым авторским словом, почти автокомментарием к описываемым событиям, к рассматриваемым жизненным явлениям. В произведении складывается и образ автора-повествователя, мемуариста, рассказчика, героя, склонного к широким публицистическим обобщениям. Рассуждения, раздумья автора публицистического характера касаются политико-идеологических, общественных, культурных отношений. Очевидно: автор повествования четко прогнозирует картину, которая должна возникнуть в общественном сознании. Эти авторские отступления, обращения предназначены, конечно, не для узкого круга специалистов, а для широких слоев общества: при этом автор стремится воздействовать не только на разум, но и на чувства адресата. Лирические отступления в повести А. Крона также часто носят публицистический характер. Эти размышления, отступления характеризуются строгой логичностью, эмоциональностью, оценочностью, призывностью. Автор неизменен в своем убеждении: личность и судьба человека формируются в соответствии с его волей и состоянием духа. Литературные отступления вводят в мир авторского идеала, что позволяет лучше узнать личность самого автора. Образную, яркую трактовку получают понятия ««интуиция», «храбрость», «дерзость», «талант и героизм», непосредственно связанные с личностью, сущностью героя.

Письма И. Исакова к А. Маринеско, также включенные А. Кроном в повесть, несут на себе черты интимной, задушевной беседы. «Не устаю восхищаться,-пишет Крон,-связавшей их заочной, недолгой, но истинной дружбой. Истинной-значит равной. В дружбе у моряков есть свой особый счет, не всегда совпадающий со служебной иерархией».[1] Включение подобного рода писем в произведение, несомненно, создает определенный лирический подтекст и шире-лирический план, в котором главным является вечное: общезначимое, нравственное содержание.

Литература

1. Крон А. Капитан дальнего плавания. См.*http://militera.lib.ru/bio/Kron/index.html* Здесь и далее текст повести А.Крона цитируется по полной интернет-версии.

2. Уртминцева М. Жанр литературного портрета в русской литературе втор. пол.XIX в.: генезис, поэтика, типология.М., 2005. См. *http://www.dissercat.com /contenliteratutnogo-portreta-v-russ-lit-re.*(Автореферат диссертации на соискание уч. ст. доктора фил.наук.)

Ключевые слова-публицистические и художественные элементы, психологическая характеристика, расследование, документы, флот.

Юлия Ходжоян, О жанровой специфике повести А. Крона «Капитан дальнего плавания»-Художественно-документальная повесть А.Крона «Капитан дальнего плавания», в центре которой подробное описание героических морских «атак века» под командованием капитана III ранга, Героя Советского Союза А.Маринеско, вовлекает в себя множество судеб, дает возможность воссоздать картину общенародного подвига, массового героизма. В статье показано, что повесть представляет собой яркий образец межжанрового синтеза, в котором органично сочетаются публицистические и художественные элементы.

Յուլիա Խոջոյան, Ա. Կրոնի «Հեռավոր նավագնացության նավապետը» վեպի ժանրային առանձնահատկության մասին-Ա. Կրոնի «Հեռավոր նավագնացության նավապետը» գեղարվեստա-վավերագրական վեպը, որի կենտրոնում ընկած են հերոսական ծովային «դարի հարձակումների» մանրամասն նկարագրությունները III աստիճանի նավապետ, Խորհրդային միության հերոս Ա. Մարինեսկոյի հրամանատարության ներքո, իր մեջ ներգրավում է բազմաթիվ ճակատագրեր, հնարավորություն է տալիս վերստեղծել համաժողովրդական սխրագործության, զանգվածային հերոսության պատկերը: Հոդվածում ցուցադրված է, որ վեպը հանդիսանում է միջժանրային սինթեզի վառ օրինակ, որտեղ օրգանական կերպով համադրված են հրապարակախոսական և գեղարվեստական տարրերը:

Yulia Khojoyan, On Genre Specificity of the Story of A. Kron «Captain of Far Seagoing»-The fiction-documentary story of A. Kron «Captain of Far Seagoing», in the centre of which is the detail description of the heroic sea « attacks of the century» under the command of the captain of III rang, Hero of Soviet Union A. Marinesko, includes in itself many fates, gives opportunity to restore the pattern of the all-national deeds, mass heroism. In the article it is shown that the story is a bright model of intra-genre synthesis, where organically are combined publicist and artistic elements.

ՀՈԴԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Պ. ՋԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

ԱՒԴԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

Լեզվական յուրաքանչյուր միավոր, սկսած նվազագույնից մինչև նախադասություն, խոսքում կարող է ունենալ ոճական երանգավորում: Այդպիսի մասնիկներ են հայերենի հոդերը:

Հարուստ ու բազմազան են հոդերի արտահայտած ոճական երանգավորումները, արտահայտած իմաստները, կիրառության ոլորտները, դերն ու նշանակությունը խոսքում: Նրանց առկայությամբ բառը մերթ դեմք կարող է ստանալ, մերթ դառնալ հայտնի-որոշյալ կամ անորոշ-անհայտ, մերթ ցույց տալ կոնկրետ առարկա՝ շարահյուսորեն կապակցելով նախադասության անդամներ, նպաստելով խոսքի հստակությանն ու լիիմաստությանը: Տառի տեսք ու հնչյունի հնչեղություն ունեցող այս փոքրագույն մասնիկները, ավելանալով բառին, թեքում են նրան՝ փոխում նրա ձևն այնպես, ինչպես հոլովական վերջավորությունները, հոգնակերտ մասնիկները, դերբայական կամ դիմորոշ վերջավորությունները: Ինչպես չի կարելի խոսք կառուցել առանց շարադասության կամ առանց հոլովական թեքույթների ու հերթագայության, այնպես էլ կապակցված խոսքը կիմաստազրկվի առանց հոդերի կիրառության:

Հոդերը նաև ոճական արժեք ունեն և շարահյուսական կապակցման մյուս միջոցների հետ նույնպես ոճավորում են խոսքը, նպաստում գրողի հաղորդման նպատակադրմանը, ունեն արտահայտչական հնարավորություններ:

Մեր նպատակն է այս հոդվածի շրջանակներում քննության առնել հոդերի ոճական կիրառությունները արձակագիր, դրամատուրգ և հրապարակախոս Պ. Ջեյթունցյանի «Վերջին արևագալ» և «Արշակ Երկրորդ» վեպերում, որոնք ընդգրկում են մեր ժողովրդի պատմության ամենադրամատիկ ու ամենաողբերգական իրադարձություններով լի ժամանակահատվածները /4-րդ դար և 1915 թվական/: Երկու վեպում էլ հոդերը գերազանցապես գործածված են հայերենի գրական նորմերին համապատասխան: Սակայն մի դեպքում պատմական միջավայր ստեղծելու, մյուս դեպքում Արևմտահայաստանում ծավալվող իրադարձությունները արևմտահայ մտավորականների արևմտահայերեն լեզվամտածողությամբ արտահայտելու պահանջը գրողին պիտի մղեին հոդերը գործածելու հայերենի երկու ճյուղերին բնորոշ լեզվական նորմերով, որոնց ինքնատիպ կիրառությունները ոճական արժևորում են ստացել իր արձակում:

Հայտնի է, որ ժամանակակից հայերենում հոդերը բաժանվում են իմաստային չորս խմբի՝ ստացական (ս,դ,ն,(ը)), դիմորոշ (ս,դ), որոշյալ (ն,ը), ցուցական (ս):

Գրաբարում **Ս,Դ,Ն** հոդերը, առաջանալով **այս, այդ, այն** ցուցական դերանուններից, միաժամանակ ցույց էին տալիս, թե ինչ հարաբերություն ունեն նրանք առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի հետ: Հայերենի հետագա պատմական զարգացման ընթացքում հոդերի դերը փոխվում է, և նրանք ձեռք են բերում հիմնականում ստացական իմաստ, իսկ ցուցական գործառույթով գործածվում է միայն **Ս**-ն:

Ս,Դ,Ն /Ը/ հոդերը ստանում են ստացականի նշանակություն, երբ, դրվելով գոյականների վրա, ցույց են տալիս, թե ում է պատկանում առարկան՝ արտահայտելով **իմ, քո, նրա, /իր/, մեր ձեր, նրանց /իրենց/** անձնական դերանունների

իմաստը: Արևելահայերենի համար խորթ ու անհարազատ և ավելորդ են ստացական հոդի և դերանուն հատկացուցչի, կողմնակի ենթակայի և հոդով դերբայի միասին գործածությունները.

• -Դու հանդգնեցիր առաջ անցնել ժամանակից, արքա՛,- բացատրեց Դրաստամատը: Ոչ ոք չէր կարող քեզ հասկանալ: Անգամ **ժողովուրդդ**: Դու մենակ մնացիր: /ԱԵ-530/

Կամ՝

• -Ես քեզ կնվիրեմ **իմ շղթաները**…Գիշերները **քնելիս գլխիդ** տակ կդնես… Որպեսզի հիշես ինձ…Չմոռանաս **արքայիդ**…/ԱԵ-531/

Զեյթունցյանը, շարունակ հետամուտ իր խոսքի սեղմությանը, անգամ հոդերն է ծառայեցրել այդ նպատակին. դերանուն հատկացուցիչները երկարաշունչ են դարձնում ասելիքը, իսկ հոդերով կարճվում է այն: **ժողովուրդդ, գլխիդ, արքայիդ** բառերի ստացականությունը դրսևորվել է **Դ** հոդով: Այս բառերի հետ երեք անգամ **քո** դերանվան կրկնությունը ավելորդ կլիներ ու կծանրացներ ոճը: Սա էլ միանշանակ չէ. գրողը առարկայի պատկանելություն է ցույց է տալիս և՛ հոդով, և՛ դերանուն - հատկացուցիչներով՝ խոսքը դարձնելով միօրինակությունից զերծ, բազմազան ու հետաքրքիր:

Ժողովրդական լեզվամտածողության արտահայտություն է **ս** և **դ** հոդերով գոյականների հետ 1-ին և 2-րդ դեմքի դերանունների եզակի սեռականների գործածությունը, որը գրական արևելահայերենը չի ընդունում:

Եթե արևելահայ գրական լեզվում հոդերի և դերանունների միաժամանակյա գործածությունը անընդունելի է, ապա արևմտահայերենի համար դա լեզվական սովորական երևույթ է, իսկ ծագումով արևմտահայ Պ. Զեյթունցյանը շատ լավ է տիրապետում արևմտահայերենին և «Վերջին արևագալը» վեպում իր հերոսների լեզուն ոճավորելու նպատակով նրանց խոսքում **ս, դ** ստացական հոդերի հետ գործածում է նաև **իմ, քո** անձնական դերանունները: «Արևմտահայ գրական լեզվում ևս ստացական առումը որոշակի քերականական դրսևորում ունի: Այն արտահայտվում է ս, դ, ն/ը/ հոդերի ուրույն կիրառություններով: Ս-ն ստացական առումը հաստատում է առաջին դեմքի հարաբերությամբ, դ-ն՝երկրորդ: Հոդը կարող է զուգորդվել բոլոր հոլովաձևերի /թե՛ եզակի և թե՛ հոգնակի /հետ»[1]:

Ահա արևմտահայ մեծ բանաստեղծի՝ ասացվածքի արժեք ստացած զայրալից պոռթկումը, որն արդեն քանի՞ տասնամյակ հնչում է հայի շուրթերից.

• Եվ այսպես, մոտավորապես 300 հազար հայի արյուն…Մոտավորապե՞ս… **Ո՞վ մարդկային արդարություն՛ն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ… /ՎԱ-173/:**

Եվս մի օրինակ թուրքական խորհրդարանի մեբուս Վարդգեսի՝աքսորից կնոջն ու զավակներին ուղղված նամակից.

• «…**Իմ** անուշիկ ու խելոք **կինս,** դուն, որ **իմ հոգիս** ու **կյանքս** ես, դուն որ **իմ կյանքիս** կենսատու արևն ես, գիտես, որչափ կտանջվիմ քեզի համար, գիտես, **իմ** ամբողջ **հոգն ու վիշտը** միայն դուն ես, **քու վիճակիդ** անորոշությունն…Դե՛հ, մնաք բարով, **իմ հոգյակնե՛րս**, եկեք անգամ մըն ալ սեղմեմ ձեզ **իմ** լայն **կրծքիս** վրա, որուն տակ բաբախուն սիրտը միայն ձեր և մարդկության սիրով է տոգորված…» /ՎԱ-590/:

[1] **Հ. Զ. Պետրոսյան,** Ակնարկներ հայոց լեզվի ձևաբանության,Ե., 1976, էջ100:

Դ ստացական հոդը գործածական է հատկապես պաշտոնական ոճում կիրառվող որոշ գործնական գրություններում, նամակների վերջին հղումներում.

• «Կարոտագին կհամբուրեմ **իմ** խելացի և քաջ կնիկս ու մինի-մինի ձագուկներս, ու վերջ կուտամ վերջին նամակիս:

Ձեզ միշտ սիրող ու պաշտող **ամուսինդ՝Վարդգես**: /ՎԱ-540/

Արևմտահայերենում հոդառու բառի՝ համապատասխան ստացական դերանուն վերադիր ունենալը մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանը այսպես է մեկնաբանում. «Ոմանք գտնում են, որ արևմտահայոց այս կրկնակ ձևը ավելորդաբանություն է. Երբ **u** դիմորոշը կա, պետք չէ դնել **իմ**, իսկ եթե կա **իմ**, պետք չէ դնել **u** դիմորոշը: Հավելադրությունը լեզվի ընդունած ձևերից մեկն է»[2]: Այլ խոսքի մասերի գոյականական կիրառություններում և առհասարակ փոխանունություններում տացական հոդը հանդես է գալիս ձևաբանական որոշակի արժեքով և ունեն նաև փոխանունության գործառույթ, որը հնարավորություն է տալիս այլ խոսքի մասի պատկանող բառերը գոյականաբար գործածելով՝խոսքին ոճաարտահայտչական երանգավորում տալ:

• Եթե քերթվածներուն մեջ փոքրիկ կայծ մըն ալ ըլլա, առանց **քու պոռալուդ** ալ մեր ճիչը կլսեն…/ՎԱ-543/

• «Եթե ուշանամ, **պստիկիս** անունը Վարդգես դիր, ամեն օր համբուրե զիրենք պապային կողմեն, որը քեզ ջերմապես կսեղմե իր կուրծքին»: /ՎԱ-541/

Ստացական հոդերը հաճախակի գործածություն ունեն կապերի հետ: Այս դեպքում կապերը ստանում են մակբայական-պարագայական կիրառություն.

• «Ֆիզիկական ուժ չէ մնացեր **վրաս** այս ամենը տանելու համար, շատ լավ չեմ զգար **ինքզինքս,** հուզումն ու հոգնությունը, հիվանդությունս միշտ երևան կհանեն…»: /ՎԱ-540/

Այս օրինակում **ինքզինքս** դիմաստացական հոդով բառը զուտ ոճաարտահայտչական գործածության դեպքերից է:

• -Ափսո՞ս, ինձանից լավ խոսեց ,- ինչպես միշտ՝ ծիծաղելիս Թալեաթը ձեռքը բնազդաբար տարավ փորին: -Իմանայի՝**հետս** չէի բերի: /ՎԱ -551/

• Ոճական երանգավորում ունի **ես** դերանվան հոգնակի թվի /**ձեր**/ գործածությունը **դ** հոդով, որ հնաբանություն է:

• -Այսօր կոտորածի սպառնալիքը ավելի իրական է դարձել, և Նորին Ամենապատվությունը դիմում է **Ձերդ Վսեմությանը**՝ որպես հայ ժողովրդի ու նրա դատի բարեկամի, ու խնդրում է դարման լինել նրա ցավերին:/ՎԱ-573/

Ն /Ը/ հոդերը նաև ստացական նշանակությամբ հանդիպում են միայն ուղղական-հայցական և տրական հոլովներում: Սակայն սրանք՝իբրև ստացական հոդեր, սահմանափակ կիրառություն ունեն, քանի որ առանց դիմայնության իմաստի ստացական առում հնարավոր չէ: Բերված օրինակում **Նորին Ամենապատվությունը** բառակապակցության մեջ **Ն** և **Ը** հոդերն ունեն ստացական նշանակություն՝երրորդ դեմքի իմաստով, որը, սակայն, թույլ է արտահայտված:

Ս, Դ հոդերը ժամանակակից հայերենում ունեն նաև դիմորոշ գործառույթ և բառերին տալիս են առաջին կամ երկրորդ դեմքի իմաստ՝արտահայտելով **ես, դու,** հոգնակի թվում՝**մենք, դուք** անձնական դերանունների իմաստը: «Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ Ս և Դ հոդերի մեջ դիմորոշ իմաստը ցայտուն

[2] ՀԱ, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ե., 1954, հ 2-րդ, էջ 296:

չի դրսևորված, և նրանք ես, դու, մենք, դուք անձնական դերանունների իմաստ են արտահայտում սովորաբար դրանց հետ միասին: Կապակցությունից դուրս Ս Դ հոդերն ըմբռնվում են ստացական իմաստով: Միայն որոշ դերանունների և թվականների հետ է դիմորոշ իմաստը բացարձակ, ինչպես՝ինքս, ինքդ, ամենքս, երկուսս, երկուսդ և այլն»[3]: Դիմորոշ հոդերը նույնպես նպատակադիր գործածություն ունեն Զեյթունցյանի խոսքում: Մի դեպքում հեղինակը դրանք գործածում է առանց համապատասխան դեմքի անձնական դերանունների.

- -Էլ ի՞նչ բարենորոգում հայերի համար: Բարենորոգումը, ինչպես պարզվում է, **թուրքերիս** է պետք և ոչ թե հայերին: /ՎԱ-494/

Մեկ այլ դեպքում անձերը ավելի շեշտելու նպատակով գործածում է թե՛ անձնական դերանունը և թե՛դիմորոշ հոդը: Ըստ որում, հոդակիր բառերը իրենց հնչերանգով դառնում են նաև խոսակիցների փոխադարձ վերաբերմունքի արտահայտիչներ.

Օրինակ՝

- -**Դուք ինքնե՛րդ** եք բարենորոգումները անհիրականանալի դարձնում,-մեղադրեց առաջին թարգմանը: /ն.տ.-568/

Տրամաբանական շեշտի պահանջով հեղինակը անձնական դերանուն բացահայտյալի հետ գործածում է գոյական բացահայտիչ՝համապատասխան դիմորոշ հոդով, որը լեզվական համատեքստում երանգավորում է խոսակիցների տրամադրությունը.

- -Ես ուրախ եմ, որ **դուք՝ հայե՛րդ**, դեմ եք անջատողական ձգտումներին, որովհետև դա չի բխում ձեր ազգային շահերից,-հետզհետե բարակող ձայնով ասաց դեսպանը: /նտ-574/

Ինքնե՛րդ և հայե՛րդ բառերի՝ընթերցողին լսելի սառնաշունչ հնչերանգները ընդգծում են թուրքամետ դեսպանի անբարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ:

Բերված օրինակներում **ս, դ** հոդերը ստացականության ու դիմորոշության հետ միաժամանակ արտահայտում են նաև որոշյալության իմաստ՝ ցույց տալով, թե կոնկրետ որ անձի կամ առարկայի մասին է խոսքը: Այս փաստն է հաստատում նաև Մ.Ասատրյանը[4]:

Դիմորոշ հոդերը ոճույթ են դառնում, երբ տարբեր խոսքի մասերի վրա դրվելով՝դրանք դարձնում են **փոխանուններ**:

- -Ես աղեկ եմ,-կտրական ասաց Վարդգեսը: - Զոհրապն ալ աղեկ է: Կերթաս, կըսես Կլարային: **Երկուքս** ալ շատ աղեկ ենք:/ՎԱ-477/
- -**Ամենքս** ալ աղեկ ենք,-զայրույթից էլ բան չգտավ ասելու Վարդգեսը:/ն.տ. 477/

Երկուքս, ամենքս ենթակաները ներառում են մենք-ը, որի զեղչումը սահուն ու սեղմ է դարձրել խոսքը:

Գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցների շարքում որոշակի դեր ունեն արտասանական դադարները՝**ընդհատումը, դադարը, վանկատումը** և այլն:

Ընդհատումը ասելիքի հանկարծակի դադարեցումն է, միտքը կիսատ թողնելը: Այն գործածվում է նաև **հոդառու բառը ընդգծելու, արժևորելու համար** և բնորոշ է լարված հոգեվիճակներին, զգացումների հախուռն դրսևորումներին:

---

[3] **Մ. Ե. Ասատրյան,** Ժամանակակից հայոց լեզու,Ե., 1989, էջ 91:

[4] Նույն տեղում:

Դրաստամատն ահա Արշակ թագավորի մոտ է՝ մի վերջին անգամ նրան արքայավայել սպասարկելու համար: Եվ մինչ Դրաստամատը տեսավ, որ արքան մի խնձոր վերցրեց ու սկսեց ինչ-որ բան փնտրել, հասկացավ… փնտրեց, գտավ դանակը, բայց չտվեց արքային.

- Ե՛ս,-շշուկով խնդրեց նա:-Ե՛ս կմաքրեմ…**Ի՛նքս**…

Որոշյալ և անորոշ հոդերի գործածությունը: Գոյականները, ստանալով որոշյալ **Ն** և **Ը** հոդերը, ցույց են տալիս խոսողին և խոսակցին ծանոթ, հայտնի կամ խոսքում արդեն գործածված առարկա: Անորոշ առման գոյականները հոդ չեն ստանում և ցույց են տալիս խոսողին ու խոսակցին անհայտ, անծանոթ,անորոշ առարկա:

Որոշյալ առման **Ն** և **Ը** հոդերը ժամանակակից հայոց լեզվում կատարում են մի քանի դեր՝ մասնավորող-առանձնացնող, ընդհանրացնող, ծավալային ամբողջություն արտահայտող և գոյականացնող: Գոյականի որոշյալ առումը կազմվում է ուղիղ ձևին՝անորոշին, ավելացնելով **ը** կամ **ն** վերջնամասնիկը: Որոշյալ հոդ են առնում միայն ուղղական, տրական և հայցական հոլովները: Այս հոդերը չունեն իմաստային տարբերություն: Նրանց տարբերությունը պայմանավորված է դիրքով. ձայնավորով վերջացող բառերը **ն** հոդն են ստանում, իսկ բաղաձայնով վերջացողները՝ **ը** հոդը.

- Եվրոպան չպետք է թույլ տա, որ **Հայաստանը** խեղդամահ լինի թուրքական ռեժիմի ծանր ճիրանների մեջ, մի ռեժիմ, **որն** իր սարսափներով գերազանցում է այն **բոլորին**, ինչ կարող է թելադրել ամենահամարձակ **երևակայությունն** անգամ: /ՎԱ-576/

«Նշված հոդերը, գտնվելով լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, կարող են փոխել իրենց կիրառության ոլորտները. այսպես՝խոսքի մեջ բարեհնչունության համար բաղաձայնով բառերից հետո դրվում է ն հոդը, երբ հաջորդ բառը սկսվում է ձայնավորով: Որոշ դեպքերում հնարավոր է հոդի նման կիրառության խախտում, որը կատարվում է երկու նպատակով՝ նախադասության կազմի մեջ գտնվող բառը /որը հոդ է ընդունել/ շեշտելու համար և ասելիքը դանդաղ, առանց շտապելու հաղորդելու համար, որը ոճը դարձնում է ծանր և զրկում սահունությունից Այս դեպքում համապատասխան բառերի միջև առաջանում է արտասանական դադար, և խոսքը զրկվում է սրընթացությունից»[5]: Պ. Զեյթունցյանը «հոդի նման կիրառության խախտում» /ընդգծումը մերն է Ա.Ս./ թույլ է տալիս տրամաբանական շեշտի պահանջով, ասելիքը ընդգծելու, կարևորելու համար, և դրանից ամենևին էլ չի ծանրանում նրա խոսքը.

- Վեճի մեջ, ինչ հարցի շուրջ էլ լիներ, ոչ ոք չի դիմացել նրա նրա /Ներսես Մեծի/ երկաթե **տրամաբանությանը** ու անհերքելի **փաստարկներին**: /ԱԵ-397/
- Իսկ **կրա՛կը** ազգություն չունի: Իսկ **արեգա՛կը** ազգություն չունի: /ԱԵ-378/:

«Լեզվաբանական գրականության մեջ ճիշտ կերպով նշված է, որ բառերի անհոդ գործածությունը համապատասխանում է խոսքի արագ ընթացքին, իսկ հոդով գործածությունը՝ավելի դանդաղ ընթացքին, որովհետև հոդով գործածված գոյականները առանձնանում են որպես խոսքի ելակետ, և միտքը նրանց վրա կանգ է առնում»:[6]

[5] **Ռ. Խ. Մկրտչյան,** Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Եր., ԳԱ հրատ., 1992, էջ112:

[6] **Մ. Ե. Ասատրյան,** Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989, էջ 242:

Հոդերը, այսպիսով, որպես շարահյուսական կապակցման միջոցներ, մյուս միջոցներին լրացնելով ու նրանց համահունչ, ոճավորում են գրողի լեզուն, շնչավորում այն: Որոշյալի կարգը խոսքին որոշակի ոճաիմաստային երանգավորում է տալիս, երբ ընդհանրացնող իմաստ է արտահայտում.

• - Ո՞վ է կրակը սիրում կամ ատում: Կրակը պետք է սառած մարմինը տաքացնելու համար: Ո՞վ է ատում կամ սիրում ջուրը: Ջուրը պետք է խեղդող ծարավը հագեցնելու համար: /ԱԵ-297/

Գեղարվեստական արձակում արտահայտչական հետաքրքիր միջոց է դառնում **կցուրդը**: Այս դեպքում բուն նախադասության որևէ անդամ կամ հարցի պատասխան հեղինակը հանում-առանձնացնում է և գործածում առանձին՝ որպես խոսքի ինքնուրույն միավոր՝ **անդեմ նախադասություն**, որի գերադաս անդամը կարող է լինել անորոշ կամ որոշյալ առման: Զեյթունցյանի խոսքում նման օրինակները հաճախադեպ են և ոճականորեն արժևորվում են նաև լեզվական այլ միջոցներով՝ ճարտասանական հարցում, կառուցվածքային բազմազանություն և այլն.

• - Ո՞րն է իմ մեղքը, արքա՛: **Իմ անքուն գիշերնե՞րը: Իմ անանձնական կյա՞նքը: Ծերանոցներում հանգիստ մեռնող զառամյալնե՞րը: Աղքատանոցներում մի պատառ հաց ուտող թշվառնե՞րը: Թե՞ օթևաններում հանգստացող ճամփորդները:** Ասա՛, ո՞րն է իմ մեղքը: /ԱԵ-393/

Անդեմ նախադասությունները, որոնց բնորոշ է լեզվական փոքր միավորներով իրերը, երևույթները, իրադարձությունները բնութագրելը, նաև անորոշ առմամբ գերադաս անդամներ ունեն:

Օրինակ՝

• - Հիմա ի՞նչ կուզեիր, Դանիե՛լ, - դարձյալ իրենց անկյունում ծվարել էին Վարուժանն ու Սևակը: - Ի՞նչ հրաշք ըլլար…

• - Կկարծես մեծ բանե՞ր պիտի երազեմ,-ժպտալու փորձ արեց Վարուժանը:-Լոգարան տանեին… **Մաքուր սպիտակեղեն, նոր շապիկ, փափուկ անկողին…մեկ հատ ալ թաշկինակ.**.Աս է ինձի համար հրաշքը…/ՎԱ-405/

Կամ՝

• **Անտարբեր հայացքներ, շարժումի բացակայություն, հյուծված ծերունիներ ու կանայք, անտանելի շոգ ու գարշահոտություն**: Ջուր չկար, ուտելիք չկար, Աստված չկար: /ՎԱ-612/

Հայ աքսորյալների ծայրահեղ անմարդկային պայմանները գրողն արտահայտել է լեզվական տպավորիչ ու սեղմ միջոցներով:

Հոդերի՝ խոսքին հաղորդած արագ և դանդաղ ընթացքը նույնպես որոշակիորեն ոճավորում է խոսքը և սերտորեն կապված է ինչերանգի հետ: Հաճախ խոսքում տրամաբանական շեշտի պահանջով շրջուն է դառնում անդամների շարադասությունը, գործածվում են սաստկական բառեր /**էլ** և այլն /, և գոյականների վերջին գաղտնավանկը սղվում ու ձուլվում է **էլ**-ին կամ **եմ**-ին, կազմում **արտասանվածքի մի վանկ,** և խոսքն ավելի սեղմ, ավելի հատու է դառնում:

Օրինակ՝

• Ո՞վ էր ինքը … Բայց չէ՞ որ առաջ այդպիսին չէր, ամբողջական մարդ էր ժամանակին, արատներն էլ էին լիարժեք, առաքինություններն էլ: Ի՞նչ պատահեց: Օրերից մի օր արթնացավ, ու պարզվեց, որ գահ**ն էլ** էր կիսատ, իշխանությու**ն էլ**, երկիր**ն էլ**, ժամանակ**ն էլ**: /ԱԵ-353/

• Գրական հայերենի լեզվական օրենքների քաջահմուտ գիտակ գրողի խոսքում գրեթե չկան որոշյալ հոդերի ոչ ճիշտ գործածություններ: Որոշ բացառությունները նպատակադիր են: Ահա մի օրինակ.

• Բոլորը, ովքեր քիչ թե շատ բարձր դիրք են գրավում արքունիքում, պետք է իր **մարդիկը** լինեին: /ԱԵ-19/: **Մարդիկը** ստորոգելին **ը** հոդով է գործածված՝ խոսքին ժորովրդախոսակցական լեզվին բնորոշ անմիջական ու բնական երանգավորում հաղորդելու համար:

Պ. Զեյթունցյանը որոշյալ հոդերով դիմում է ոճական մի արտահայտչամիջոցի՝ **բանաշրջման**, որը խոսքը դարձնում է անսովոր ու հետաքրքրական, ոճը՝ բազմազան ու պատկերավոր: Այսպես՝ գրողի համար **Երվանդ Օտյանն** ու հայ բժիշկ, հասարակական գործիչ **Սերվինե Վիչենյանը** (կեղծանունը՝ **Սերվիչեն**) դառնում են հայրենասիրության ու ազգասիրության խորհրդանիշներ.

• Առանց ատելության արվեստին տիրապետելու անհնար էր խորությամբ գթալ: Մանավանդ այնքան ատելու բան ունի իր սերունդը՝ ամիրաներին փոխարինած էֆենդիներին, որոնց մեջ քիչ էին **օտյաններն ու սերվիչենները**, իրենք իրենց մեծահոգաբար ազնվաշուք կնքած մենծ աղաներին, էլ չենք ասում համիդյան մռայլ իրականությունը, գերիրականությունը, գերված ու շղթայված հայրենիքը, միշտ անհայտության մեջ մշուշված վաղվա օրը, թեկուզ ամենամոտիկը, թեկուզ բառացին՝ հենց հաջորդը: /ՎԱ-75/

Գոյականի առկայացման քերականական կարգը զուտ ձևաբանական իրողություն է, որ ձևավորվում է ինչպես համապատասխան հոդերով, այնպես էլ առանց նրանց: Ժամանակակից հայերենում, ինչպես և Զեյթունցյանի արձակում, անորոշ առումն արտահայտվում է ոչ միայն զրոյական վերջավորությամբ, այլև **մի** անորոշ հոդով:

Անորոշությունը դրսևորվում է **ը, ն** հոդերի բացակայությամբ և **մի** հոդի առկայությամբ, որը որոշյալ առմանը հակադրվում է ոչ միայն **զրո** ձևույթով: **Մի-**ն, ծագելով **մեկ** թվականից, ստացել է անորոշ հոդի իմաստ և քերականական համանուն է **մի** թվականի, **մի** անորոշ դերանվան և **մի** անորոշ հոդի:

Պ. Զեյթունցյանը անորոշության կարգը ոճականորեն արժևորել է՝ մի դեպքում նրան միայն անորոշություն, մի այլ դեպքում խորհրդավորություն հաղորդելով, կամ էլ կոնկրետացրել, մասնավորեցրել է որպես եզակի, անհատ առարկա՝ թվականի իմաստով:

• Դեռևս ոչ ոքի չի հաջողվել բնաջնջել **մի ամբողջ ժողովրդի**,-պատվելիին արժանի հավատով ասաց Մորգենթաուն: Ես հրահանգ եմ տվել մեր հյուպատոսներին՝ ամեն ինչ անել հայերի փրկության համար: /ՎԱ-385/

Ամեն մի անհոդություն դեռևս անորոշ առում չէ: Անհոդությունը պայմանավորվում է նախադասության անդամի բնույթով /կոչական, գոյական որոշիչ և այլն/: Անհոդությունը այն ժամանակ է անորոշ, երբ վերցվում է հոդավոր ձևի հակադրությամբ:

Ի տարբերություն գրական արևելահայերենի՝ արևմտահայերենում անձնանուն ենթակաները գործածվում են անորոշ առումով.

• Մենք կմարտնչինք լոկ մտայնության մը դեմ, որ կըսե՝ իրավունքը հզորագույնին: **Դարվին** կենդանական աշխարհի համար սահմանած է այս օրենքը: **Սպենսեր** կջանա մարդկային ընկերության պատշաճեցնել զայն: Ո՞վ է մարդոց և ազգերուն մեջ ամենեն ընդունակն ապրելու. այս հարցը գործնականապես

ճշտելու համար հռչակվեցավ պատերազմը՝ ճշտելու համար, թե ո՞վ է հզորագույնը: /ՎԱ-16/

Պ. Զեյթունցյանը խոսքին սեղմություն և արագություն հաղորդելու և ոճը բազմազան դարձնելու նպատակով դիմում է նաև **փոխանունության**, երբ գոյականի լրացումները փոխարինում են լրացյալներին՝ հանդես գալով գոյականին բնորոշ հատկանիշներով՝ հոլովվելով, հոդեր և հոգնակերտ մասնիկներ ստանալով, այսինքն՝ գործածվելով առարկայական նշանակությամբ:

Որոշյալ հոդերը գործածվում են նաև ստացականության իմաստով և ոճը դարձնում հետաքրքիր, սեղմ ու արագասահ՝ զերծ ավելորդ լրացումներից.

• Երկուսն էլ ամբողջ ճանապարհին անցել էին ձիերով, **Փառանձեմինը**՝ սպիտակ, **Գնելինը**՝ մոխրագույն: /ԱԵ-109/

Հայերենում հոդեր են առնում ոչ միայն գոյականները, այլև փոխանունաբար գործածվող թվականները, ածականները, դերբայները և մյուս չթեքվող խոսքի մասերը՝ չփոխելով իրենց խոսքիմասային պատկանելությունը:

• Կողքից **դիտողը** կմտածեր, թե ինչ հասարակ, դյուրահաղորդ և բարի մարդիկ են այս երկու փաշաները: /ՎԱ-487/

• Եվ էլի մի փոքրիկ Հայաստան գոյացավ սեղանի շուրջը, անգամ այստեղ՝ Մոնմարտրում, ուր տխրությունը երբևէ տեղ չուներ: Բայց հայի տխրությունը հաղթեց, վառ ու արբեցնող գույները վերացան, և մնացին **միայն սևն ու սպիտակը**:/ՎԱ-255/

Որոշյալ առումով գործածված **սևն ու սպիտակը** ածականները ոչ միայն քերականական միջոցներ են, այլև հայ ազգի ճակատագրի փոխաբերական բառաերանգավորումները... Եվս երկու օրինակ բերենք «Արշակ Երկրորդ» պատմավեպից.

• Վերջին օրերն էին, վերջին ժամերը: Կամ հրաշքով կփրկվի երկիրը, կամ ոտքի տակ կընկնի**: Երկուսից** մեկը, երրորդ ճանապարհ չկար: Երրորդ ճանապարհը **ուրիշների** համար էր, **հայինը երկուսն** էին միայն: /ԱԵ-433/

Օրինակում փոխանվանաբար գործածվել է կրկնվող **երկու** թվականը՝ մի դեպքում բացառականի **ից** վերջավորությամբ, մյուս դեպքում՝ **ն** որոշյալ հոդով, **ուրիշ** դերանունը՝ **ներ** հոգնակերտ մասնիկով սեռականի **ի** վերջավորությամբ, հայ ածականը՝ հոլովական **ին** վերջավորությամբ և **ը** հոդով:

Հոդ ստանալով՝ դերանունները ևս գործածվում են գոյականաբար.

• Սա այն հազվադեպ օրերից մեկն էր, երբ **իմն ու քոնը** չկար, կար ամեն ինչից վեր կանգնած մարդկային մի համերաշխություն, մտքերի ու հույզերի զարմանալի ընդհանրություն:/նտ-371/

Պ. Զեյթունցյանի արձակում փոխանունաբար հանդես են գալիս հանդես են գալիս նաև թվականները՝ որպես անձնանիշ գոյականներ.

• **Հիսուն հազար** սպանեց, կարող էր ևս այդքան սպանել, բայց ի՞նչ օգուտ: Ոչ թե **հազարներ** էին պետք, այլ ընդամենը՝ **մեկը**, միայն **մեկը**: /ՎԱ-257/

Յուցական գործառույթով ժամանակակից հայերենում գործածվում է միայն **ս**ն, այն էլ որոշակի բառերի հետ և որոշակի կապակցություններում: Այն կարող է փոխարինվել **այս** ցուցական դերանվամբ, ուստի հոմանիշ ձևերից կատարված ընտրությունը որոշակի ոճական նպատակ ունի, հատկապես երբ այն ժողովրդական իմաստախոսություն է.

• **Աշխարհիս** երեսին որքան կին կա, այնքան էլ տարբեր վճիռ, և որքան տղամարդ՝ ընդամենը մի, մի ճանապարհ միայն: /ԱԵ-349/

Գրողը ժողովրդական լեզվամտածողության երանգներով է ոճավորել է իր խոսքը՝ **u** ցուցական հոդով գոյականի հետ գործածելով **այս** ցուցական դերանունը՝ իբրև որոշիչ.

• Զոհրապը գոհ էր, ոչ թե գոհ, այլ պարզապես երջանիկ էր, որ իր խոսքի շնորհիվ ջնջվեց, վերացավ այն ստորացնող ու մինչ այդ անծանոթ վախը, որ **այս մի քանի օրս** ամուր գրկել ու խեղդում էր իրեն:/ՎԱ-410/:

Այսպիսով՝ հոդերի՝ որպես շարահյուսական կապակցության կարևոր միջոցներից մեկի դրսևորած քերականական բազմազան գործածությունները ոճավորում են գրողի խոսքը, այն դարձնում ինքնատիպ ու բազմազան:

Բանալի բառեր-շարահյուսական կապակցության միջոցներ, դիմորոշ, ստացական, որոշյալ և ցուցական հոդեր, խոսքի սեղմություն, արագասահ ոճ, արևելահայերեն, արևմտահայերեն, լեզվաոճական արժեք:

Աիդա Սարհատյան, Հոդերի ոճական կիրառությունները Պ. Զեյթունցյանի արձակում-Հոդվածում քննության են առնվում հայերենի ստացական, դիմորոշ, ցուցական և անորոշ հոդերի ոճական կիրառությունները անվանի արձակագիր Պ.Զեյթունցյանի արձակում: Ելնելով թեմայի ընտրությունից, հերոսների լեզվամտածողության ու նրանց միջավայրի առանձնահատկություններից՝ հեղինակը հոդերը կիրառել է ամենայն բծախնդրությամբ՝կարևորելով նրանց լեզվաոճական արժեքը: Հավատարիմ հոդերի գործածության՝արևելահայերենում ու արևմտահայերենում ընդունված լեզվական նորմերին՝գրողը նրանց կիրառության հոմանշային տարբերակներից ընտրել է քերականական այն ձևերը, որոնք նպաստել են խոսքի սեղմությանն ու հակիրճությանը, ոճը դարձրել բազմազան ու արագասահ, հստակ ու անպաճույճ:

Аида Саргатян, Стилистическое применение артиклей в прозе П. Зейтунцяна-В статье рассматривается стилистическое применение притяжительных, возвратных, указательных и неопределенных артиклей армянского языка в прозе известного прозаика П. Зейтунцяна. Исходя из выбранной темы, особенностей языкового мышления и окружающей среды героев, автор применил артикли с особой точностью, выделяя их лингвостилистическую ценность. Оставался верным применению артиклей, принятым языковым нормам в восточно-армянском и западноармянском языкам, писатель из всех синонимичных вариантов выбрал те грамматические формы, которые способствовали краткости и сжатости речи, делали стиль многообразной, быстротечной,четкой и неприкрашенной.

Aida Sarhatyan, The Stylistic Use of the Articles in P. Zeytuntsyan's Prose-The current article examines the stylistic use of the possessive, reflexive, demonstrative and indefinite articles in the prominent prose-writer Perch Zeytuntsyan's prose. Due to the choice of the theme, the peculiarities of the mentality and the environment of the characters, the author makes use of articles with a minute scrupulousness attending to their linguo-stylistic value. Faithful to the accepted norms of the use of articles in Eastern and Western Armenian variants, the author chose among the synonymic variants those grammatical forms that contribute to the conciseness and briefness of discourse, made the style variable and fluent, accurate and unvarnished.

ՈՉ ԲԱՑԱՀԱՅՏ ԺԽՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ՆԱՀՐԱ ՇԱՀԻԼ ՎՅԱՆ

Գերմաներենի տիպաբանական առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից առանձին հետաքրքրություն են ներկայացնում ոչ բացահայտ (ներակա) ժխտման արտահայտման միջոցները, որոնք առկա են լեզվական բոլոր մակարդակներում և որոնց բացահայտումը հնարավոր է դառնում մասնավորապես իմաստագործառական վերլուծության շնորհիվ: Նման կառույցները ժխտումն արտահայտում են անուղղակի կերպով՝ հիմքում ունենալով լեզվական միավորի ոչ հիմնական՝ երկրորդական իմաստը: Ժխտումը, որն արտահայտված է ոչ բացահայտ միջոցներով, արտահայտության և բովանդակության պլանների անհամամասնության արդյունք է և դրանց ժխտական բնույթը տեսանելի է դառնում փոխակերպման մեթոդի միջոցով:

Լեզվի շարահյուսական մակարդակում ոչ բացահայտ ժխտում է արտահայտվում հռետորական (ճարտասանական) հարցերի, շարահյուսական որոշ կաղապարների և բացականչական նախադասությունների միջոցով, ընդ որում թե՝ գերմաներենում, և թե՝ հայերենում գործառական հաճախականությամբ հատկապես աչքի են ընկնում հռետորական հարցերը (կեղծ հարցական նախադասությունները), որոնք հարցադրում չեն կատարում և հետևաբար տեղեկատվություն չեն պահանջում: Դրանք արտահայտում են ոչ թե հարցում, այլ՝ ժխտում և համարվում կեղծ հարցական նախադասություններ [8, էջ 145-153]: Նման կառույցների հարցական բնույթը պայմանավորված է տվյալ գործողության տեղի չունենալու, երևույթի, իրողության բացակայության գաղափարն ավելի շեշտելու, ասույթի միջուկն առավել ընդգծելու նպատակով, այսինքն՝ տվյալ դեպքում հարցադրումը հիմնականում ոճական արժեք ունի: Հռետորական հարցերին բնորոշ է անհամամասնության դրսևորման երեք հիմնական առանձնահատկությունների փոխհարաբերություն.

1. կառուցվածքով դրանք համընկնում են հարցական նախադասությունների հետ
2. հնչերանգային ձևավորմամբ՝ բացականչական նախադասությունների հետ
3. բովանդակության պլանում՝ իմաստաբանորեն՝ պատմողական նախադասությունների հետ. հռետորական հարցերը կոչված են տեղեկույթ հաղորդելու և ո՛չ հարցում արտահայտելու նպատակով [9, էջ 76]:

Ժխտումը կարող է արտահայտվել ոչ միայն հռետորական, այլ նաև այլ հարցական կառույցներով: Ընդ որում, երկու դեպքում էլ ժխտական նշանակությանը հաճախ միահյուսված են զարմանքի, ափսոսանքի, կասկածի, դժգոհության, հեգնանքի իմաստային նրբերանգներ, որոնք ընկալվում են համատեքստի, հնչերանգի, կանխենթադրույթի և մի շարք այլ արտալեզվական գործոնների շնորհիվ: Հարցման միջոցով ժխտում արտահայտող կառույցներում հատկապես մեծ է հնչերագի դերը. վերաիմաստավորման արդյունքում, հատուկ հնչերանգային ձևավորմամբ հարցական կառույցները գործածվում են որպես ժխտման արտահայտման ոչ բացահայտ միջոցներ, իսկ համապատասխան հնչերանգի բացակա-

յության դեպքում դրանք այլևս չեն կարող կիրառվել ժխտման գործառույթով: Հռետորական հարցերի հիմնական գործառական նշանակությունը ընդհանրական ժխտական տեղեկույթի հաղորդումն է, որը սովորաբար ընկալելի է նաև առանց համատեքստային տվյալների: Այս կառույցներին բնորոշ է հաստատման և ժխտման հակադարձ հարաբերակցություն. այսինքն տեղի են ունենում և՛ «թուլացող» և՛«ուժեղացող» փոխակերպումներ: «Թուլացող» փոխակերպման արդյունքում ձևով ժխտական կառույցները վերաիմաստավորվում են՝ արտահայտելով ներակա հաստատում, օրինակ՝

Würde die Welt dann *nicht* völlig anders sein? [4, էջ 175]→ Die Welt würde dann völlig anders sein.	Աշխարհն այդ դեպքում ամբողջովին ուրիշ չէ՞ր լինի: → Աշխարհն այդ դեպքում ամբողջովին ուրիշ կլիներ:

«Ուժեղացող» փոխակերպման արդյունքում ձևով հաստատական կառույցներն արտահայտում են ներակա ժխտում, օրինակ՝

Was ist das alles gegen den Zauber der Phantasie? [4, էջ 65] → Das alles ist *nichts* gegen den Zauber der Phantasie.	Ի՞նչ է այդ ամենը երևակայության կախարդանքի դիմաց: → Այդ ամենը *ոչինչ* է երևակայության կախարդանքի դիմաց:

Նման կառույցների հիմքում ընկած է կանխենթադրույթը, որը խոսողի նախնական գիտելիքների, պատկերացումների, զգացմունքների և հույզերի ամբողջությունն է:

Շարահյուսական մակարդակում ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցներից իրենց կայունությամբ առանձնանում են «շարահյուսական կաղապարները»: Արտահայտության պլանում այդ կառույցների բաղադրիչ տարրերից որևէ մեկի փոփոխությունը հանգեցնում է բովանդակության պլանում ընդհանուր նշանակության արմատական փոփոխությանը: Այս կառույցների կայունությունը ապահովվում է նաև համապատասխան հնչերանգով, ինչը նպաստում է նաև դրանց կողմնակի իմաստների, հարանշանակային կանխենթադրույթների դրսևորմանը: «Շարահյուսական կաղապարների» հարանշանակային կանխենթադրույթները մի կողմից պայմանավորված են տվյալ կառույցի բովանդակային պլանում ունեցած նշանակությամբ, մյուս կողմից մեծ դեր է խաղում նաև համատեքստը, որում առկա տվյալների շնորհիվ շարահյուսական կաղապարին ամրագրվում են լրացուցիչ եղանակավորող-հուզաարտահայտչական նրբիմաստներ: Խորհրդային լեզվաբան Պ. Խ. Վդովիչենկոն գերմաներենում առանձնացնում է հետևյալ շարահյուսական կաղապարը՝ **Ns(p)+(und)+Gf/, Ns/, Adj**, որտեղ Ns(p)-ն ուղղական հոլովով դրված գոյական է կամ դերանուն, Gf-ն՝ բայի հիմնական ձև, Adj-ը ածական [6, էջ 99-121]: Այս կառույցում բացակայում է ստորոգյալը: Ժխտական նշանակությունը բացահայտվում է բովանդակության պլանում երկու անհամատեղելի հասկացությունների հակադրման միջոցով: Նման կառույցների գործառական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում արտահայտում են ընդհանրական ժխտում. ժխտական նշանակությունը տարածվում է ամբողջ ասույթի վրա՝արտահայտելով չիրականացված գործողություն: Այս կառույցները կարելի է համադրել ընդհանրական ժխտում արտահայտող «S-

ը P չէ» տրամաբանական նմուշի հետ: Ընդհանրական ժխտման բնույթը պարզ է դառնում փոխակերպման արդյունքում. փոխակերպված տարբերակները ներակայում են բացահայտ ժխտական տարրեր, որոնք վերաբերում են ստորոգյալին: Օրինակ՝

Du mich erwischen? [4, էջ 71] → Du kannst mich *nicht* erwischen.	Դու ինձ բռնեցնե՞ս: → Դու չես կարող ինձ բռնեցնել:
"Ich und eifersüchtig?" → Ich bin *gar nicht* eifersüchtig.	Ես խանդո՞տ: → Ես *ամենևին* խանդոտ չեմ:

Նշված շարահյուսական կաղապարի միջոցով մասնակի ժխտում է արտահայտվում միայն այն դեպքում, երբ վերջինս ընդլայնվում է այլ որոշիչ կամ պարագայական անդամներով: Օրինակ՝

Er und abends arbeiten? → Abends arbeitet er *nicht*, sonst immer.	Նա երեկոյան աշխատի՞: → Երեկոյան նա չի աշխատում:
Sie und lange Briefe schreiben? → Sie schreibt *nicht* lange, *sondern* immer nur kurze Briefe.	Նա երկար նամակներ գրի՞: → Նա գրում է *ոչ թե* երկար, *այլ* կարճ նամակներ:

Առաջին օրինակում abends /երեկոյան/ ժամանակի պարագայի, իսկ երկրորդ օրինակում lange /երկար/ որոշչի միջոցով տեղի է ունենում ժխտական նշանակության նեղացում, ինչն ակնհայտ է փոխակերպված տարբերակներում:

Ոչ բացահայտ ժխտում է արտահայտում նաև **N_{n1}+V_{sein}+alles andere als+N_{n2}/Adj** շարահյուսական կաղապարը, որտեղ ուղղական հոլովով դրված գոյականը կամ դերանունը (Nn) sein օժանդակ բայի դիմավոր ձևի (Vsein) հետ, alles andere als կապակցությամբ զուգորդվում է որևէ գոյականի կամ ածականի հետ և արտահայտում ժխտական նշանակություն: Նշված շարահյուսական կաղապարով նույնպես արտահայտվում է հասկացությունների անհամատեղելիություն, ընդ որում՝ արտահայտված ժխտումը առանձնանում է կտրուկ երանգավորմամբ: Գառույցի փոխակերպված տարբերակներում առկա են այնպիսի բառային միավորներ, ինչպիսիք են՝ *keineswegs, gar nicht /ոչ մի դեպքում, ամենևին/*, որոնք արտահայտում են ընդհանրական ժխտում: Օրինակ՝

Er ist alles andere als Arzt. → Er ist *keineswegs* einen Arzt.	Բժշկից բացի նա ամեն ինչ է: → Նա *ամենևին* բժիշկ չէ:
Sie ist alles andere als dumm. → Sie ist *gar nicht* dumm.	Հիմար լինելուց բացի նա ամեն ինչ է: → Նա *ամենևին* հիմար չէ:

Շարահյուսական այլ անդամով այս կառույցի ընդլայնման արդյունքում արտահայտվում է մասնակի ժխտում: Օրինակ՝

Sie ist alles andere als eine *alte* Frau. → Sie ist eine Frau, aber *keineswegs* eine alte.	*Ծեր* կին լինելուց բացի նա ամեն ինչ է: → Նա *ամենևին* ծեր կին չէ:

Շարահյուսական մակարդակում ոչ բացահայտ ժխտման գործառույթ է իրականացնում նաև՝ **N_n+V_{sein}+zu+Adj,um…+zu+V_{inf}** կաղապարը: Նշված կաղապարի երկու եզրերի համեմատության և հակադրման արդյունքում բացահայտվում է ժխտական նշանակությունը: Կառույցի առաջին մասում տեղակայված հատկանիշը *zu* մասնիկի միջոցով ձեռք է բերում ավելորդ, անհամապատասխան սաստկացնող նշանակություն, այդպիսով կարծես հիմք հանդիսանալով կառույցի երկրորդ մասում տեղակայված պահանջվող կամ ցանկալի գործողության չիրականացման, ձախողման համար: Նման կառույցները բավականին տարածված են նաև հայերենում, որտեղ ասույթի առաջին եզրում տեղակայված *չափազանց* բառային միավորը նպաստում է երկրորդ եզրի գործողության չիրականացմանը: Նման կառույցներում, որպես կանոն, բացակայում են վառ եղանակավորող-հուզաարտահայտչական նրբերանգները: Դրանք ևս արտահայտում են բազմաբընույթ ժխտական հարաբերություններ: Օրինակ՝

Er ist zu klein, um diese schwere Arbeit zu verrichten. → Er kann diese schwere Arbeit *nicht* verrichten.	Նա չափազանց փոքր է այս ծանր աշխատանքը կատարելու համար: → Նա չի կարող այս ծանր աշխատանքը կատարել:
Sie war vom langen Warten zu müde, um sich richtig zu freuen. → Sie freute sich, aber *nicht* vom Herzen.	Նա երկար սպասելուց չափազանց հոգնած էր իսկապես ուրախանալու համար: → Նա ուրախացավ, բայց *ոչ* ամբողջ սրտով:

Առաջին օրինակում արտահայտված է ընդհանրական ժխտում, երկրորդ օրինակում՝ մասնակի:

Կատարված վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ նշված կառույցները ևս հանդիսանում են լեզվի շարահյուսական մակարդակում ոչ բացահայտ ժխտման միջոցներ, հետևաբար նաև՝ ժխտման արտահայտման ընդհանուր համակարգի բաղադրիչ տարրեր: Այս կառույցները հիմնականում հանդիսանում են ընդհանրական ժխտման արտահայտման միջոցներ, բացառությամբ որոշ դեպքերի, երբ դրանք ընդլայնվում են շարահյուսական այլ անդամներով և արտահայտում մասնակի ժխտում:

Շարահյուսական մակարդակում ոչ բացահայտ ժխտում է արտահայտվում նաև բացականչական նախադասությունների միջոցով: Դրանք արտահայտում են զգացական երանգավորումներ՝ խոսքին հաղորդելով հուզականություն և արտահայտչականություն: Բացականչական նախադասությունների ժխտական նշանակությունը նույնպես ընկալվում է ասույթում առկա կանխենթադրույթի, հատուկ (բացականչական) հնչերանգի և համատեքստի միջոցով: Ոչ բացահայտ ժխտում արտահայտող բացականչական նախադասությունները ձևավորվում են բարդ ստորադասական նախադասության գերադաս բաղադրիչի զեղչման արդյունքում: Ձևավորված համեմատական և պայմանի պարագա երկրորդական (կախյալ) նախադասությունները, արտահայտության պլանում հանդես գալով անփոփոխ կառուցվածքային հատկանիշներով, բովանդակության պլանում ձեռք են բերում այլ իմաստային հատկանիշներ և գործածվում են որպես ինքնուրույն, առանձին կառույցներ՝ ժխտական նշանակությամբ: Բացականչական նախադասությունները ձևավորվում են ինչպես բացականչական հնչերանգով, այնպես էլ

բառաքերականական միջոցների գործածությամբ (ձայնարկություններ, հարցահարաբերական դերանուններ, շաղկապներ, անդեմ նախադասություններ և այլն): Հատկանշական է, որ տվյալ դեպքում ժխտական նշանակությունը բացահայտվում է առկա և իրական տվյալների միջև եղած անհամապատասխանության արդյունքում: Գործառույթի տեսակետից դրանք ցույց են տալիս գործողության իրականացման համար անհրաժեշտ պայմանների բացակայություն: Բացականչական նախադասությունների ստորոգյալը հիմնականում արտահայտվում է ըղձական եղանակի բայաձևերով, մասամբ նաև այլ եղանակներով արտահայտված բայաձևերով: Ոչ բացահայտ ժխտում արտահայտող բացականչական նախադասություններին բնորոշ են հուզաարտահայտչական երանգավորումներ՝ զղջում, ափսոսանք, հուզմունք, մտահոգություն և այլն: Օրինակ՝

“Wenn ich dir nur helfen könnte!” [4, էջ 171] → Leider konnte ich dir *nicht* helfen.	Եթե ես միայն քեզ օգնել կարողանայի: → Ափսոս, ես քեզ չեմ կարող օգնել:
Als ob sie das vorausgesehen hätte! [5, էջ 301]. → In der Tat konnte sie das *nicht* voraussehen.	Կարծես թե նա կարող էր դա կանխատեսել: → Իրականում նա չէր կարող դա կանխատեսել:

Բացականչական նախադասության ժխտական նշանակությունը պարզ է դառնում համատեքստային տվյալների միջոցով: Առաջին օրինակում խոսվում է մի երիտասարդի մասին, որը փորձում է ամեն կերպ օգնել իր հիվանդ ընկերուհուն, բայց միաժամանակ գիտակցում է, որ դա իր ուժերից վեր է: Երկրորդ օրինակում համատեքստային տվյալներից պարզ է դառնում, որ երիտասարդ աղջիկը, տեսնելով իր ընկերոջ անհաջողությունները, փորձում է օգնել նրան իր խորհուրդներով, բայց չէր կարող կանխատեսել նրա բացարձակ անկումը: Նշված օրինակներում արտահայտված է ոչ բացահայտ ընդհանրական ժխտում:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ շարահյուսական մակարդակում ոչ բացահայտ ժխտման արտահայտման գործընթացին մասնակցում են մի շարք գործոններ, որոշ դեպքերում՝ միաժամանակ այդ գործոններից մի քանիսը: Շարահյուսական մակարդակում ոչ բացահայտ ժխտման արտահայտման գործում մեծ է հնչերանգի (մասնավորապես հարցական և բացականչական) և խոսքաշարային միջավայրի դերը, որոնց բացակայության դեպքում այս կառույցները կարող են ընկալվել ուղղակի իմաստով: Ի տարբերություն բացահայտ ժխտական կառույցների՝ վերոհիշյալ ոչ բացահայտ ժխտական կառույցներն առանձնանում են հիմնականում վառ հուզաարտահայտչական երանգավորմամբ:

Գրականություն

1. **Jacobs J**. Syntax und Semantik der Negation im Deutschen, München: Fink, 1982.
2. **Köller W**. Formen und Funktionen der Negation, Berlin/Boston: de Gruyter, 2016.
3. **Remarque E. M**. Der schwarze Obelisk, Berlin und Weimar: Aufbau Verlag, 1965.
4. **Scholz R**. Damals in Belvedere, Roman, Halle und Leipzig: Mitteldeutscher Verlag, 1978.

5. **Вдовиченко П. С**. Фразеологизированные синтаксические конструкции современного немецкого языка //Учен. зап. I-го МГПИИЯ им. М. Тореза, Москва, 1965, т. 29, с. 99-121.

6. **Падучева Э. В**. О семантике синтаксиса, Материалы к трансформационной грамматике русского языка, Москва: КомКнига, 2007.

7. **Хайкова И. А.** Отрицание в риторическом вопросе.- В. кн.: Контрастивная лингвистика, Калинин, 1983, с. 145-153.

8. **Шаньшин Ю.А.**О грамматикализованных структырах со значением отрицания и утверждения в современном немецком языке.- В. Кн.: Взаимосвязь семантики и структуры синтаксических единиц в немецком языке. Сб. науч. трудов Ленингр. гос. пед. ин-т им А. И. Герцена, 1979, с. 76-82.

Բանալի բառեր-ոչ բացահայտ ժխտում, շարահյուսական մակարդակ, հռետորական (ճարտասանական) հարց, բացականչական նախադասություն, շարահյուսական կաղապար, արտալեզվական գործոններ, հնչերանգ, խոսքաշարային միջավայր:

Նաիրա Շաչիլվյան, Ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցները ժամանակակից գերմաներենի շարահյուսական մակարդակում- Իմաստագործառական տեսանկյունով ժխտման կարգի ուսումնասիրությունը թույլ է տալիս լեզվի շարահյուսական մակարդակում բացահայտել ոչ բացահայտ ժխտում արտահայտող կառույցներ, որոնք ժխտման բացահայտ միջոցներին զուգահեռ մեկ ընդհանուր համակարգի բաղադրիչ տարրեր են և հավասարապես կիրառվում են ժխտական տեղեկույթի հաղորդման գործառույթով: Այս կառույցները գործառական փոխակերպման արդյունք են և ուղեկցվում են իմաստի վերաիմաստավորմամբ: Սույն հոդվածի շրջանակներում վերլուծության են ենթարկվում հռետորական հարցերը, բացականչական նախադասությունները և շարահյուսական կաղապարները: Նշված կառույցներով ժխտման արտահայտման գործում մեծ է հնչերանգի (մասնավորապես՝ հարցական և բացականչական) և խոսքաշարային միջավայրի դերը, որոնց բացակայության դեպքում դրանք կարող են ընկալվել ուղղակի իմաստով և չունենալ ժխտական նշանակություն:

Наира Шачилвян, Средства имплицитного выражения отрицания на синтаксическом уровне в современном немецком языке-Функционально-семантическое изучение системы отрицания позволяет на синтаксическом уровне языка выявить структуры имплицитного выражения отрицания, которые параллельно эксплицитным средствам отрицания являются составляющими элементами единой общей системы и равнозначно применяются в функции передачи отрицательной информации. Эти структуры являются результатом функциональной трансформации и сопровождаются переосмыслением значения. В качестве средств имплицитного выражения отрицания на синтаксическом уровне языка в рамках данной статьи анализируются риторические вопросы, восклицательные предложения и синтаксические конструкции. В отмеченных структурах в деле имплицитного выражения отрицания большую роль играют интонация и разговорная среда, в случае отсутствия которых они могут восприниматься в прямом смысле и не иметь отрицательного значения.

Naira Shachilvyan, The Implicit Means of Negation at Syntactical Level of the German Language-The study of the category of negation from the functional and semantic perspectives allows us to reveal the implicit negative structures at the syntactical level of the German language. These structures are components of the system of the category of negation and they are equally used for the impartation of negative information in parallel with the explicit means. They are the result of functional transformation and appear with the reinterpretation of the meaning. As implicit means of negation at the syntactical level in German rhetorical questions, exclamative sentences and syntactical structures are analysed within the scope of this article. To impress the implicit negation by means of the above mentiond structures intonation and verbal environment play a major role. In the absence of these factors they can be perceived directly without having negative sense.

ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀՐ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՎԻՊԱԿՆԵՐՈՒՄ

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Հարադիր բառերը հայերենի լեզվամտածողությանը ազգային երանգ տվող կարևոր միջոց են և առավել ցայտուն կերպով են արտացոլում մեր ժողովրդի պատկերավոր արտահայտվելու անսպառ կարողությունները: Հարադրությունների դերը հատկապես մեծ է գեղարվեստական գրականության մեջ:

Իբրև մտածողության ինքնատիպ ձևեր՝հարադրությունները ծառայում են պատկերների ստեղծմանը, հեղինակային խոսքին կենդանություն ու հուզականություն հաղորդելուն, գրական հերոսների ու կերպարների լեզվական անհատականացմանը:

Ինչպես նկատել են ուսումնասիրողները,հարադրությունների անսպառ պաշար կա հայերենի զարգացման բոլոր փուլերում՝սկսած 5-րդ դարի գրավոր հուշարձաններից, վերջացրած ժամանակակից առաջադեմ գրողների երկերով:

Հարադրությունները մեր օրերում հայերենի քերականության ներքին օրենքներին համապատասխան է՛լ ավելի զարգացան ու ծավալվեցին՝ ի հայտ բերելով բառակազմական նորանոր, նախկինում չեղած առանձնահատկություններ ու օրինաչափություններ:

Իբրև բարդության մի տեսակ՝հարադիր բառերը մեծ քանակությամբ թափանցել են նաև գրական լեզվի մեջ և կենդանություն ու ոգի են հաղորդել թե՛ չափածո և թե՛ արձակ երկերին: Մեր մեծերի՝Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ա. Բակունցի, Ե. Չարենցի,Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Հ. Սահյանի, Պ. Սևակի, Հ. Շիրազի, Հ. Մաթևոսյանի ստեղծագործություններին առանձնահատուկ հմայք են տալիս ժողովրդական խոսքից քաղված և դրանց համաբանությամբ կազմված բազմաթիվ հարադրությունները, որոնք լեզվի ժողովրդայնության կարևորագույն աղբյուրներից են:

Անվանական հարադրություններն առաջանում են անվանական կապակցություններից: Սրանք գոյական, ածական, թվական և դերանուն խոսքի մասերով կազմված բարդություններ են: Անվանական հարադրությունները քանակապես զիջում են բայական հարադրություններին, սակայն աչքի են ընկնում բառակազմական զգալի ճկունությամբ, քանի որ հարադրվում են հայերենի բոլոր անվանական խոսքի մասերը: Անվանական հարադրական բարդությունները կազմըվում են գոյական, ածական, մակբայ, թվական, շաղկապ, եղանակավորող բառ խոսքի մասերի բառերի հարադրությամբ, ինչպես՝բառ ու բան, գունդ ու կծիկ, ահ ու դող, լավ ու վատ, դես ու դեն, վեր ու վար, սարն ի վեր, ձորն ի վար, երեք-չորս, քանի դեռ, ապա թե ոչ և այլն:

Անվանական հարադրություններն իրենց իմաստային - կառուցվածքային հատկանիշով բաժանվում են երկու խմբի՝կրկնավոր և բաղհյուսական:

Մեր քննության նյութն են կրկնավոր բարդությունները, որոնք հետաքրքիր դրսևորում ունեն Հ. Մաթևոսյանի արձակում:

Կրկնավոր բարդությունները ամենապարզ և հին բարդություններն են: Այս բարդությունների վերաբերյալ մեր քերականագիտության մեջ տարբեր տեսակետներ են եղել: Ոմանք կրկնավորները, սրանց հետ՝ նաև բաղհյուսական հա-

բաղդրությունները դիտել են իբրև անիսկական բարդության առանձին տեսակ[1], իսկ ոմանք էլ՝ հարադրական բարդու-թյան մի առանձին տեսակ[2]: Պետք է նշել, որ կրկնավոր հարադրությունները իրոք հարադրական բարդության տեսակ են, քանի որ թեև միացած են գծիկով, սակայն ունեն ձևային անկախություն, առանձին բառային շեշտ, նաև՝ արտասանական դադար:

Կրկնավոր հարադրությունները մեր լեզվում նախապես հատուկ էին բարբառներին և գեղարվեստական լեզվում գործածվում էին նրան ժողովրդախոսակցական երանգ հաղորդելու համար: Ներկայումս կրկնավոր հարադրությունները լայնորեն տարածվել են ոչ միայն ժողովրդախոսակցական,այլև գրական և գեղարվեստական լեզվում:

Կրկնավոր հարադրություններն արտահայտում են բազմազան իմաստային նրբերանգներ՝կրկնվող բառերի կամ արմատների իմաստների սաստկացում, հոգնակիություն, բաղադրիչների առանձին իմաստների ընդգծում, զանազանություն, հաջորդություն, հավաքականություն և այլն: Նշենք, որ կրկնավոր հարադրական բարդությունների մեջ առավել մեծ տեղ են զբաղեցնում անհնչյունափոխ կրկնավորները: Այսպիսի կրկնավոր բարդություններ են կազմվում որակական ածականների, գոյականների, թվականների, դերանունների, բայերի, բայարմատների, մակբայների, նաև ձայնարկությունների կրկնությամբ:

Հարադրավոր կրկնավորներ են կազմվում հայերենի գրեթե բոլոր խոսքի մասերի կրկնությամբ, գերազանցապես հատկանիշի իմաստ արտահայտող բառերով: Այսպես՝ածականով կազմությունները բավական մեծ թիվ են կազմում: Բերենք օրինակներ Հ. Մաթևոսյանի՝ քննության առարկա վիպակներից.

- Գիտե՞ս ինչի եմ **<u>մեծ-մեծ</u>** բաներից խոսում,-քիչ հետո հարցրեց ծերունական ձայնը[3]: (Ջ,130):

Պավլեն արթնացավ, ասաց, որ ինքը մի ոչխար ոչ կերել է, ոչ էլ մտադիր է ուտել, բայց եթե միս լիներ՝ մի երկու շամփուր խորոված, **<u>տաք-տաք</u>**, կրակի վրայից, կիսահում-կիսահում, արյունը վրայից կաթելով… (ՄՄՍ, 70)

Ինչպես տեսնում ենք, կրկնության շնորհիվ արտահայտվել է հատկանիշի սաստկացում:

Սակայն առավել շատ են ածականով կազմված այն կրկնավորները, որոնք մակբայական կիրառությամբ կապվել են բայերի հետ՝ սաստկացնելով գործողությունը բնութագրող հատկանիշը: Օրինակ.

Իշխանը **<u>խեղճ-խեղճ</u>** ժպտաց ու ստուգելով՝ բոլորը: (ՄՄՍ, 89)

- Քու Օհան ամու նման **<u>խելոք-խելոք</u>** քիչ խոսիր, տղա՛,-բարկացավ Սայլվորը: (Ջ, 126)

<u>Ծնկաստղ-ծնկաստղ</u>՝պառավը պտտվեց մատուռի շուրջը, հետո մատուռի դռան մեջ դարձյալ ծնկած՝ ճակատը գետին էր տալիս ու աղոթում: (ԱԱ, 157)

Բերենք մեկ այլ օրինակ, որտեղ կրկնության միջոցով արտահայտվել է իմաստի խտացում.

Փոքր տալը իր համար տնգլի էր տալիս, մեծ տալերը ժպտալով տորք էին ծեծում, հարսը տորքի տակից դուրս էր եկել, պղինձն ավազով ու ջրով շփում էր **<u>չար-չար</u>**, բերանը սեղ-մած, **<u>չար-չար</u>**: (ԱԱ, 162)

---

[1] Տե՛ս **Մնակ Գ.,** Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 160:

[2] Տե՛ս **Աբեղյան Մ.,** Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 174:

[3] Բնագրային օրինակները բերված են Հ. Մաթևոսյանի հետևյալ հրատարակություններից՝ Տերը, Եր., 1983 (Ջաղացը, Աշնան արև) և Երկեր, հատոր Ի, Եր., 1985 (Մենք ենք, մեր սարերը):

Գոյականի կրկնությամբ կազմվում են և՛ ածականներ, և՛ մակբայներ, սակայն մեր քննության առարկա վիպականերում նշված կազմությունները միայն մակբայներ են, որոնք գործողության կատարման հատկանիշի հաջորդություն կամ զանազանություն են ցույց տալիս: Բերենք օրինակներ.

Շունն աղիողորմ ոռնում էր, Օհանեսն իրեն ասաց. «Էս շանն իզուր խփեցի, դուրս ելավ դուռը, և նրա սպիտակ մազերը կոշտացան ու **հատիկ-հատիկ** տնկվեցին գլխին: (ՄՄՍ, 55)

Ուզում եմ ասել, որ եթե **կոպեկ-կոպեկ** ետ չգցեցիր, իմացիր, որ դու աշխատավոր մարդ չես, իշխան ես…(ՄՄՍ, 126)

Համեմունքի ցողունները ծերունին պոկում էր գուրգուրանքով, **հատիկ-հատիկ**՝պոկելով իրար նման երկու վարունգից ոչ թե այս, այլ մյուսը: (Ջ, 139)

Ներկայացված օրինակներում կրկնավոր կազմությունները հատկանիշի հաջորդականություն են արտահայտում: Հատկանիշի զանազանություն կամ բազմազանություն, ինչպես նաև իմաստային ծավալում և դրա շնորհիվ՝ փոխաբերական նշանակություն է արտահայտվում հետևյալ օրինակներում.

- Եկավ, **փիլիսոփա-փիլիսոփա** եկավ: (ԱԱ, 194)

- Խի,-ասաց տղամարդը,-գնացին **երեխա-երեխա** կոտորվեցին, էն խեղճ երեխեքից հետո էսքան մինչև հիմա էլ ապրում ենք, էդ քի՞չ հավերժական է: (ԱԱ, 206)

Երբեմն էլ գոյականը կարող է կրկնվել, կազմել հարադրություն, բայց խոսքիմասային նշանակությունը չփոխել: Նման դեպքում այն սաստկական կամ շեշտված նշանակություն է ստանում: Օրինակ՝

Խայտառակություն-խայտառակություն՝կարմիր պարտիզան Սարգիսն էր: (ՄՄՍ, 142)

Ջաղացները սառած էին, **գետով-գետով** գնացի մինչև Մարցա ջաղաց… (ԱԱ,213)

Վերջին օրինակում զգալի է նաև շարունակական, գործողության կատարման տևական նշանակությունը, որն ընդգծվում է կրկնավոր գոյականի միջոցով:

Կրկնավոր հարադրություններ են կազմվում նաև թվականներով, ընդ որում՝ սովորաբար քանակական կարճ թվականներով[4]: Այսպիսի կազմություններն արտահայտում են բազմակիություն կամ բաշխականություն: Նշենք, որ թվականական կրկնավորները գոյականի հետ գործածվելիս ընդհանրապես խոսքիմասային փոփոխություն չեն կրում, իսկ բայի հետ գործածվելիս բաշխական նշանակություն են ստանում: Օրինակ՝

Այնինչ՝Ավագ հորեղբայրը սարերում շոգից կուտակված ոչխարը հաշվում էր **տասը-տասը**: (ՄՄՍ, 60)

-Իսկ մորից, տատից, սկեսուրից, սկեսուրի սկեսուրից չունե՞ս՝**մի-մի** զույգ էլ նրանց…(ՄՄՍ, 114)

Երկրորդ քամը չեն քամում. մնացածը, ինչպես ցուցվում է, թողնում են մեղվին ձմեռվա ուտելիք, որ պահանջվածից էլ շատ է, բայց փեթակները **մեկ-մեկ** հանգչում են: (ՄՄՍ, 143)

Ուզում էր **երկու-երկու** իջնել՝գայթում էր, իսկ **մեկ-մեկ**՝ այդ արդեն իջնել չէր, այլ սողալ. ոտքը դնում էր ոտքի ծայրին: (ՄՄՍ, 131)

Մեկ-մեկ հարադրությունը բաշխական նշանակությունից բացի արտահայտում է նաև **երբեմն** իմաստը: Օրինակ՝

[4] Տե՛ս **Մարգարյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 57:

Մեկ-մեկ երազի մեջ երեխա ժամանակ եղել է, պատահել է՝էդ է, էլ չկամ, թռած չկամ: (ՄՄՍ, 116)

Դե մենք էլ **մեկ-մեկ** խորովածով-բանով հիշում ենք ձեզ: (ՄՄՍ, 138)

Հազար թվականի կրկնությամբ կազմվում է հարադրություն, որն արտահայտում է ածականական նշանակություն՝հազարավոր, և դրվում է գոյականների վրա՝անորոշ մեծ քանակ մատնանշելու համար: Բերենք համապատասխան օրինակ.

-Ի՞նչ էինք ասելու,-արդեն սեղանի գլխին, օղու բաժակը ձեռքին՝ասաց ծերունին.-հա, որ էս **հազար-հազար** տարի մարդը ծնվում է ու ամեն անգամ տկլոր է ծնվում՝մարմնով տկլոր ու մտքով տկլոր: (Ջ, 142)

Մակբայ խոսքի մասից ևս կազմվում են կրկնավորներ: Դրանք հիմնականում ձևավորվում են կարճ բառային միավորներից, որոնք ունեն ձևի, ժամանակի և տեղի նշանակություն՝ արտահայտելով սաստկական նշանակություն: Օինակ՝

Եկան, բունները վռազ կարկատեցին, **վռազ-վռազ** ձու դրին, ձագ հանեցին, թռչել սովորեցին: (Ջ,129)

Հարսը **վրա-վրա** սրբում էր պղինձը ավազով ու ջրով: (ԱԱ, 162)

Չշրջվելով՝Աղունը ձեռքով սպասելու նշան արեց, և նրանք **շտապ-շտապ** գնացին: (ԱԱ,206)

Երբեմն հեղինակը, առավել շեշտելու համար գործողության հատկանիշի սաստկական երանգը, բառը կրկնում է մի քանի անգամ: Օրինակ՝

Սիմոնը շուռ եկավ ու ձեռնասղոցով կտրել շարունակեց ձեռքի տախտակը. **արագ-արագ-արագ-արագ-արագ, ղրռ-ղրռ-ղրռ**: (ԱԱ, 221)

Երբեմն ժամանակի մակբայից կազմված կրկնավոր ձևում ոչ թե շեշտվում կամ սաստկանում է ժամանակային իմաստը, այլ դրսևորվում է ընդմիջվող ժամանակային գաղափար: Օրինակ՝

Միայն Իշխանը **երբեմն-երբեմն** կրկնում էր: (ՄՄՍ, 71)

Բայական կրկնավորները կազմվում են.

ա. Բայարմատի կրկնությամբ, օրինակ՝

Եվ այս մի հատիկ բառի մեջ երևում էր քույրերի **գլուր-գլուր** կարոտը եղբայրների, մոր թառանչը երեխայի համար: (ՄՄՍ, 62)

- Ապրես,-ասաց Զավենը և **ճկուռ-ճկուռ**, ասես վերևի կողմից նրան հրում էին, ու ոտքերը տակից փախցնելով՝գնաց դեպի գոմերը: (ՄՄՍ, 84)

բ. Դերբայական ձևերի (անորոշ, հարակատար, երբեմն էլ՝ենթակայական) կրկնությամբ, որոնք գործողության բազմակիություն կամ տևականություն են ցույց տալիս: Օրինակ՝

Եվ **սողալով-սողալով**, **երկրպագելով-երկրպագելով**, «Փառքդ շատ, Աստված, ձեռդ իմ զավակի վրա ես պահել»**մրմնջալով-մրմնջալով**՝պառավը եկավ դեպի իր զավակը: (ԱԱ, 158)

Ցնդած-ցնդած գրում են: (ՄՄՍ, 104)

գ. Խոնարհված բայաձևերի կրկնությամբ: Օրինակ՝

-Բանիդ կաց, թող **ճաքի-ճաքի** ու հանգստանա, ինձ շատ է ճաքեցրել,-ասաց նա: (ԱԱ, 173)

Կալի ծերին նստել՝**տխրե՛լ-տխրել էր** Սիմոնիկս: (ԱԱ, 181)

Ղևանտը հաչելու պես վրա պրծավ, **քշեց-քշեց** ու քարի գլխից թռցրեց սագերի երամը: (ԱԱ, 190)

Նշենք, որ խոնարհված բայաձևերով կազմված կրկնավորները ևս նույն իմաստային առումներն ունեն, ինչ դերբայական ձևերից ձևավորվածները:

Հ. Մաթևոսյանի վիպակներում գործածվել են նաև խոնարհված բայաձևերի դրական և ժխտական խոնարհումներով կազմված կրկնավորներ, որոնք զանազան ոճական նրբերանգներ ունեն՝ երկբայության, գործողության արագ ընթացքի և այլն: Օրինակ, հետևյալ նախադասության մեջ կրկնավոր կազմությամբ արտահայտվել է երկբայություն.

Լավ են անում, որ պարտք չեն տալիս.տասը ռուբլի չունեցող այդ տկարը ով գիտի **վերադարձնի-չվերադարձնի** պարտքը: (ՄՄՍ,127)

Հաջորդ նախադասություններում կրկնավորներն արտահայտել են գործողության արագ ընթացք, անմիջապես անցում որևէ գործողության.

Միայն թե՝ կտրվի՛ Ավագը, իրիկունը **հավաքվեցին-չհավաքվեցին**՝ հիշեց, որ իր հոր-եղբայր Թոման գրազով մի ոչխար է կերել: (ՄՄՍ, 69)

Նա էլ **խոսեց-չխոսեց**, անընդհատ կրկնում էր. «Հաշվապահ եք, հաշվապա՛հ»: (ՄՄՍ, 72)

Նշենք, որ բերված օրինակներում կրկնավորների գործածությունը կարելի էր փոխարինել երկրորդական նախադասություններով (հենց հավաքվեցին, հենց որ խոսեց) կամ դերբայական դարձվածներով (հավաքվելուն պես, խոսելուն պես), սակայն դրանից խոսքի անմիջականությունն ու ժողովրդական երանգը կտուժեին:

Հետևյալ օրինակում էլ կրկնավոր ձևով արտահայտվել է գործողության ոչ տևական լինելը.

Պառավը հասավ Արուսին, նրանք **խոսեցին-չխոսեցին**, հետո պառավն անցավ, իսկ հաստլիկը կանգնած նայում էր: (ԱԱ, 183)

Կրկնավոր հարադրություններ կարող են կազմվել նաև ձայնարկություններից ու բնաձայնական բառերից, երբեմն նաև՝ եղանակավորող բառերից: Այսպես՝ հետևյալ նախադասության մեջ գործածվել է կրկնավոր բնաձայնություն, որը մակբայի արժեքով է կիրառվել.

Երկուսով **տրմփըլը-տրմփըլը** խնոցի էին հարում: (ՄՄՍ, 51)

Հաջորդ օրինակում կրկնավոր հարադրություն է կազմվել ցուցական եղանակավորող բառից, որի միջոցով գրեթե իրականացող գործողություն է ներկայացվել.

Բայց ամենազարհուրելին այն էր, որ պառավն իրեն **ահա-ահա** սպանում էր, իսկ աղջկերքը չափ մտած տորք էին ծեծում: (ԱԱ, 162)

Այսպիսով, մենք ներկայացրինք այն կրկնավորները, որոնցում չկար հնչյունափոխություն: Սակայն մեր լեզվում կան նաև կրկնավոր կազմություններ, որոնցում կան տարբեր հնչյունափոխություններ: Այսպիսի կրկնավորները քանակով ավելի քիչ են, քան անհնչյունափոխները, և առավել տարածված են ժողովրդախոսակցական լեզվում: Հնչյունափոխված կրկնավորները անհնչյունափոխների բազմակիության նշանակությանը հավելում են նաև լրացուցիչ այլևայլ իմաստային նրբերանգներ՝ նվազական, փաղաքշական, սաստկական, արհամարհական և այլն: Այսպիսի կրկնավորների միջոցով խոսողն ընդգծված կերպով իր անհատական վերաբերմունքն է արտահայտում առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի նկատմամբ[5]:

Հնչյունափոխված կրկնավորներում հնչյունափոխությունը կարող է դրսևորվել հետևյալ կերպ.

[5] Տե՛ս նույն տեղը, էջ 182:

ա. Բարդության առաջին բաղադրիչի բառասկզբի բաղաձայն հնչյունը երկրորդում դառնում է **մ**, ինչպես՝ քիչ-միչ, փոքր-մոքր, ձեն-մեն, գործ-մործ, բանման և այլն: Բերենք օրինակներ.

- Էդ **հանել-մանելը**, նկատողությունները վնաս չեն տա,-ասաց Անտոնը: (ՄՄՍ, 108)

- Ասա՝ գյուղացի մարդ եմ, ձեր **գրել-մրելն** ինձ պետք չի, Արմենակիս ընկերներն եք, մտքովս անցավ: (ԱԱ, 212)

Բերված օրինակներում հնչյունափոխված կրկնավորներն արտահայտում են խոսողի արհամարհական վերաբերմունքը գործողության նկատմամբ:

բ. Բարդության առաջին բաղադրիչի սկզբի բաղաձայն հնչյունը երկրորդում դառնում է **պ, փ,բ** կամ **ս**, ինչպես՝ **պարապ-սարապ**, **սիլի-բիլի**, **սուսիկ-փուսիկ**: Օրինակ՝

-Ռա՛դ եղեք, շան որդու **պարապ-սարապնի**: (ՄՄՍ, 139)

-Մաս-մաս, **կիծի-պիծի**, քիչումիչ, գրոշ-գրոշ,-զզվեց ծերունին.-ո՛ւր է արևելքի շռայլ մարդկայնությունը: (Ջ, 133)

գ. Ձայնավորով սկսվող բարդության առաջին բաղադրիչը երկրորդում իրենից առաջ **մ, չ** կամ **պ** բաղաձայն է ստանում, ինչպես՝ **երես-մերես**, **ոչխար-մոչխար**, **ընկեր-մընկեր** և այլն: Օրինակ՝

Նրան թողնենք Անտառամեջի հանդերում սար ու ձորերով **ոլոր-մոլոր** դեպի Իշխանը գալիս…(ՄՄՍ, 68)

Աման-չամանն իրար գլխի տալով՝ պառավը նույն տոպրակի մեջ մի բուռ ձավար էր լցնում ու տոպրակը ոլորում, մի բուռ լոբի էր լցնում ու տոպրակը ոլորում, մի բուռ աղ էր լցնում ու ոլորում տոպրակը: (ԱԱ, 169)

դ. Բարդության առաջին բաղադրիչի որևէ ձայնավոր երկրորդում փոխվում-դառնում է **ու**, օրինակ՝ **լակոտ-լուկուտ**, **մաս-մուս**, **մանր-մունր**, **փալաս-փուլուս**, **մարդ-մուրդ** և այլն: Բերենք համապատասխան օրինակներ.

Մի երկու **ղաչաղ-ղուչուղ** ենք՝ էգուց-էլօր էստեղ-էնտեղ կսատկոտենք, մեզանից ձեզ վնաս չկա, Աբգա՛ր, ձեր մեջքը կոտրողը կաշառքն է լինելու: (ՄՄՍ, 108)

Քու տեղը համալսարանն է, աղջիկ ջան, թե չէ կգան կխնդրեն, կտանեն կկապեն ոտներդ երեխայի **փալաս-փուլուսով** ու չեն էլ հիշի, որ լավն ես եղել: (ԱԱ, 208)

Լեզվում կան նաև այլ հնչյունափոխություններով կրկնավորներ, սակայն մեր ուսումնասիրած ստեղծագործություններում դրանք չեն կիրառվել:

Կրկնավոր բարդություններ են կազմվում նաև գրաբարյան **առ**, **ի**, **ընդ** նախդիրների միջոցով, ինչպես՝ տող առ տող, քայլ առ քայլ, վայրկյան առ վայրկյան, տուն առ տուն, ժամ առ ժամ, մերթ ընդ մերթ, մեջ ընդ մեջ, շար ի շար, փոխ ի փոխ: Ընդ որում, մեր քննած ստեղծագործություններում կրկնավորներ են կազմվել միայն **առ** նախդրով: Օրինակ՝

Երիտասարդը լսում ու նայում, մի տեսակ՝ ընկալում էր այդ խնամված բանջարանոցը՝ մաս-մաս, **մաս առ մաս**՝ արևածաղիկները, դդումը, խաչքարը, դարավանդի խնամքոտ պատը: (ԱԱ, 130)

Բերված օրինակում նույն արմատով երկու կրկնավորներ են գործածված կողք կողքի, որոնցից երկրորդը՝ **առ** նախդրով կազմությունը, առավել շեշտում, մասնավորում, առանձնացնում է հասկացությունը:

Օհան ամին լավ գիտեր քարի արժեքը, քարտաշ վարպետի արժեքը և ոսկիների արժեքը, որ նա Հեծյալին տվեց, մի տեսակ՝ ծիսականորեն մատուցեց **հա-**

տիկ առ հատիկ՝երեք հատիկ՝սեղմելով-դրոշմելով դրանք Հեծյալի ափի մեջ: (Ջ,137)

Այդ ցողունների, այդ վարունգների, այդ ծաղիկների կարճ կյանքը ծերունին գիտեր **ժամ առ ժամ**: (Ջ, 139)

Նշենք, որ ի տարբերություն մյուս տեսակների կրկնավորների, որոնք առավել գործածական են խոսակցական լեզվում, նախդիրներով ձևավորված կրկնավորները գրական ձևեր են, գալիս են գրաբարից կամ կազմվել են հների համաբանությամբ:

Այսպիսով, կրկնավոր հարադրություններն իրենց երեք տեսակներով՝ անիընչյունափոխ, հնչյունափոխված և նախդրավոր, բավական տարածում ունեն ժողովրդախոսակցական լեզվում, որովհետև գունագեղ, հուզարտահայտչականությամբ ընդգծվող, կենսունակ լեզվական միավորներ են, որոնք խոսքին աշխուժություն և ռիթմ են հաղորդում:

Բանալի բառեր-Հր. Մաթևոսյանի վիպակներ, կրկնավոր բարդություններ, ժողովրդախոսակցական լեզու, խոսքի ոճավորում, ոճական հնարանք, ոճական արտահայտչամիջոց:

Կարինե Պողոսյան, Կրկնավորների ոճական արժեքը Հր. Մաթևոսյանի վիպակներում-Հոդվածում քննության են առնված կրկնավոր բարդությունները և նրանց ոճական նշանակությունը Հր. Մաթևոսյանի վիպակներում: Կրկնավորները բարդության ամենապարզ տեսակն են, որոնք բավական տարածում ունեն ժողովրդախոսակցական լեզվում: Դրանց գործածությունը խոսքին հաղորդում է անմիջականություն, բնականություն, զանազան ոճական լիցքեր: Մաթևոսյանի հերոսները գյուղական միջավայրի հասարակ մարդիկ են, որոնց խոսքի ոճավորման մեջ այլ ոճական հնարանքների և արտահայտչամիջոցների կողքին իրենց կարևոր դերն ունեն նաև կրկնավորները:

Карине Погосян, Стилистическое значение итеративных сложных слов в повестях Г. Матевосяна.-В статье рассматриваются итеративные сложные слова (сочетания, представляющие собой повторение слова) и их стилистическое значение в повестях Г. Матевосяна. Итеративные сложные слова-самый простой вид сложных слов, которые достаточно распространены в разговорном языке. Их употребление придаёт речи непосредственность, искренность, непринуждённость, различные стилистические нюансы. Герои Матевосяна-простые люди сельской среды. В стилизации их речи в числе других стилистических выразительных средств играют важную роль также итеративные сложные слова.

Karine Poghosyan , Stylistic Value of Iterative Compound Words in H. Matevosyan's Stories.-The article discusses iterative compound words and their stylistic value in H. Matevosyan's stories. Iterative compound words, the simplest form of compound words, are quite common in colloquial language. Owing to their use speech becomes spontaneous, sincere, informal, it gets various stylistic nuances. Matevosyan's heroes are ordinary people of rural environment. Iterative compound words play an important role in the stylization of speech among other stylistic means of expression.

LES ALLUSIONS LITTÉRAIRES DANS LES ŒUVRES DE LA FANTAINE

AÏDA MARDANIAN

Qu'est–ce qu'une allusion littéraire ? Une allusion est en principe indirecte- « mot, phrase qui évoque une personne, une chose, sans la nommer», la définit le Petit Larousse.[1] Et voilà la définition dans le petit Robert : «Manière d'éveiller l'idée d'une personne ou d'une chose sans en faire expressément mention».[2] Et l'on a déjà un premier critère pratique pour distinguer les citations et les allusions : les guillemets et la référence à un auteur signalant la citation ; leur absence, l'allusion. La différence fondamentale est donc dans le rapport que l'on entretient avec la phrase littéraire et dans le statut qu'on lui donne. A la différence de la citation, l'allusion est bien vivante dans la langue. Elle est utilisée sans référence et souvent de façon approximative ou détournée. L'allusion ne sert pas à illustrer un discours, elle est discours, elle s'intègre sans rupture à la phrase littéraire et épouse notre pensée sans la déformer. Vis-à-vis de l'interlocuteur, elle n'a pas l'agressivité de la citation qui est étalage de culture et sent son pédant, quand l'allusion est référence à une culture au moins supposée commune. L'une est la calque sur la joue, l'autre dans le dos. On cite pour confirmer son avis, vous voyez, d'autres ont pensé comme moi. «Je verrais volontiers l'allusion en grand– mère et la citationen grande tante : L'une à une descendance et continue à engendrer de nouveaux discours; l'autre est figée derrière le face-à-main de ses guillemets et ne renvoie qu'à elle-même».[3]

On fait une allusion pour établir une complicité, vous voyez, nous appartenons à la même culture. C'est la même porte, parfois qui nous sépare, mais l'allusion l'ouvre quand la citation la ferme.

Le danger de la citation qui est porteuse de sens peut être de déformer la pensée en la limitant à ce que d'autres ont dit ou en la modelant sur cela. L'allusion est plutôt mise en forme de la pensée, souple et épisodique; elle est aussi loin de la citation que le clin d'œil des lunettes. Celles-ci modifient le regard, celui-là lui donne son charme.

La citation a donc sa nécessité, puisqu'il nous arrive à tous d'avoir la pensée myope. Et l'allusion n'est pas sans inconvénient, puisqu'il y a des circonstances où la gravité du discours ne permet pas le clin d'œil.

Aussi, les citations où l'on rencontre aujourd'hui l'allusion, sont – elles assez limitées. Discrète, elle prête à sourire ; plus marquée, elle fait franchement rire ou elle agace. Elle est assez rare dans les romans qui se veulent sérieux, comme si elle était incomptable avec l'originalité, moderne pierre de touche de la qualité littéraire. Elle figure en bonne place dans les journaux, écrits, parlés ou télévisés, mais surtout dans les titres. C'est la main tendue, la complicité que l'on établit d'emblée et à bon compte, mais que l'on néglige souvent d'entretenir.

Dans le dictionnaire commenté des expressions littéraires on peut lire «Elle pullule dans les chansons, dans les sketches, dans les pamphlets, dans tout ce qui pour des

[1] **Le petit Larousse**, Paris, 2007.

[2] **Le petit Robert**, Paris, 1979.

[3] **J. C. Bologne,** Les allusions littéraires, Larousse, Paris, 1989.

raisons souvent opposées, nécessite une complicité permenente avec le lecteur ou l'auditeur dans tout ce qui joue sur le rire franc, condescendant ou sarcastique».

Elle réveille au fond de nous les souvenirs de potache, nous prend aux priples pour endormir l'esprit critique. Ce n'est pas par hasard si La Fontaine, Hugo, Corneille, Racine, Molière forment l'essentiel du fond de sauce. Ce sont des citations scolaires et des exemples de Grevisse, les grands livres d'images ou les vignettes des bâtons de chocolats qui nous rencontrent brusqument au visage et font rosir les joues.

En étudiant les allusions dans le dictionnare commenté des expressions littéraires,[4] nous avons découvert une abondance d'illusions dans les fables de La Fontaine.

Les voilà:

1. Cet âge est sans pitié, Les deux Pigeons ; Fables, 1679
2. Aide-toi ; le Ciel t'aidera, Le Chartier embourdé, Fables, 1668
3. Le coup de piedde l'âne, Le lion devenu vieux, Fables ,1668
4. On a souvent besoin d'un plus petit que soi, Le lion et le rat, Fables,1668
5. Montrer patte blanche, Le loup, la chèvre et le chevreau, Fables, 1668
6. Le Rat de ville et le Rat des champs, Fables, 1668
7. Souffler le chaud et le froid, Le Satyre et le Passant, Fables, 1668
8. La chauve-souris de La Fontaine, La chauve-souris et les deux Belettes, Fables, 1668
9. Rien se sert de courir; il faut partir à point, Le Lièvre et la Tortue, Fables, 1668
10. Crier haro sur le baudet, Les animaux malades de la peste, Fables, 1678
11. Eh bien, dansez maintenant, La cigale et la Fourmi, Fables, 1668
12. C'est le fonds qui manque le moins, Le Leboureur et les Enfants ; Fables, 1668
13. Attacher le grelot , Conseil tenu par les Rats¦, Fables, 1668
14. La Grenouille qui veut se faire aussi grosse que le Bœuf, Fables, 1668
15. Le héron de la fable, Le Héron-la fille, Fables, 1678
16. Le hibou de la fable,L'Aigle et le Hibou, Fables, 1668
17. Le part de Lyon, La Genisse , la Chèvre et la Brebis en société avec le lion, Fables,1668
18. Le montagne qui accouche d'une souris, La montagne qui accouche, Fables, 1668
19. Jouer la mouche du coche, Le Coche et la mouche, Fables, 1671
20. Lâcher la proie pour l'ombre, Le chien qui lâche sa proie pour l'ombre, Fables, 1668
21. Ours mal léché, Le Paysan du Danube, Fables, 1679
22. C'est le pot de fer contre le pot de terre, Fables, 1668
23. La Poule aux œufs d'or, Fables, 1679
24. Tirer les marrons du feu, Le singe et le chat, Fables, 1679
25. La raison du plus fort est toujours la meilleure, Le Loup et l'Agneau, Fables, 1668
26. Le troisième larron, Les voleurs et l'Ane, Fables, 1668
27. Adieu veau, vache, cochon, couvée, La Laitière et le Pot au lait, Fables, 1678
28. Ventre affamée n'a point d'oreille, Le Milan et le Rossignol, Fables, 1671

Maintenant nous allons présenter les commentaires sur l'histoire de l'apparition de quelques allusions littéraires mentionnées.

Cet âge est sans pitié[5]

La Fontaine, «les deux Pigeons»,
Fables, XI, 2 (1679)

[4] **J. C. Bologne,** Dictionnaire commenté des expressions d'origine littéraire, Paris, 1989.

[5] **J. C. Bologne,** Dictionnaire commenté des expressions d'origine littéraire, Paris, 1989, p. 19.

«Deux Pigeons s'aiment d'amour tendre...» Si l'on parfois le reste de la fable, le premier vers est dans toutes les mémoires. L'un de nos volatiles, pris du désir de voyager, est tour à tour exposé à un orage, au piège d'un chasseur, à un vautour, avant de se réfugier près d'une mesure.

Mais un fripon d'enfant (cet âge est sans pitié)
Prit sa fonde et du coup tua plus d'à moitié
La volatile malheureuse.

Mais quel âge est sans pitié ? Jadis, les Romains distinguaient quatre âges dans la jeunesse : l'enfant (*infans*, celui qui ne parle pas) devenait *puer* à sept ans, quand il quittait sa mère pour être éduqué comme un garçon,puis *adulescens* à dix-sept ans, jeune homme *(juvenis)* à trente... Le Moyen Âge, tout en maintenant des frontières politiques et militaires aux différents stades du mûrissement, classifie les âges en fonction des tempéraments. La vie se divisera donc en quatre âges de durée à peu près égale ; en théorie, quatre tranches de vingt ans. Selon les auteurs, l'enfance peut cependant durer jusqu'à vingt-cinq ou trente ans : un âge, donc, proche de l'espérence de vie à l'époque ! Ce n'est pas pour cela qu'il faut croire nos quinze premiers siècles sans pitié...

Aide-toi, le Ciel t'aidera[6] .

La Fontaine, «le Chartier embourbé»,
Fables, VI, 18 (1668).

Calquée sur «le Bouvier et Héraklès» d'Ésope au point de rétablir le culte d'Hercule à Quimper-Corentin, la fable de la Fontaine met en scène un chartier embourbé près de ce Trifouilly-les-Oies de l'époque. Après avoir pesté tout son saoul, il demande l'aide du dieu aux douze travaux. Une voix l'exhorte à désembourber le char et à prendre son fouet.

Je l'ai pris. Qu'est ceci ?mon char marche à souhait !
Hercule en soit loué. Lors la voix : Tu vois comme
Tes chevaux aisément se sont tirés de là.
Aide – toi, le Ciel t'aidera.

Manifestement, Hercule n'a aidé le chartier que de ses conseils, et les chevaux ont bien suffi à le tirer d'affaire. Il faudrait donc comprendre la morale comme la constatation de l'inutilité d'un appel au Ciel quand on peut arriver par soi – même à ses fins : Dieu ne peut pas plus que ce que l'homme fait pour se sauver. Telle n'est pas l'interprétation qu'en donnent ceux qui, au prix d'un petit effort, attendent un grand miracle.

Le coup de pied de l'âne[7] .

La Fontaine «le Lion devenu vieux»,
Fables, III, 14 (1668).

«Chargé d'ans», le roi des animaux n'est plus de taille à dominer ses sujets. Ceux – ci accourent aussitôt lui donner qui un coup de pied, qui un coup de dent, qui un coup de corne. Mais, quand l'âne à son tour, voyant qu'on blesse impunément le lion, se présente en affûtant son sabot, le lion geint :

---

[6] **J. C. Bologne,** Dictionnaire commenté des expressions d'origine littéraire, Paris, 1989, p. 20.
[7] **J. C. Bologne,** Dictionnaire commenté des expressions d'origine littéraire, Paris, 1989, p. 28.

Ah ! c'est trop, lui dit – il : je voulais bien mourir ;
Mais c'est mourir deux fois que souffrir tes atteintes.

The nature of the events in *The Comedy of Errors*, leading to the culmination of the happy ending, contain sufficient dramatic material which would have led the protagonists into tragedy had it not been for the happy ending. *The Comedy of Errors* begins with the tragedy of Egeon facing execution for illegal trespass in a country where he is seeking to find the members of his family divided many years previously by a shipwreck. The sense of this tragedy is almost lost as the comic events of the play resolve themselves into the happy ending of the re-united family and official pardon of Egeon.

Identification and Analysis of Stylistic Devices in Comedy of Errors-The language in Shakespeare's plays is exuberant and lively. He is said to have brought new life, discoveries, and beauty to the English language, just as the great Elizabethan explorers who discovered the New World brought new riches, knowledge and wonders to England.

Shakespeare's verbal bag of tricks includes a variety of figures of speech that vivify descriptions and observations. These figures of speech help in manifesting the thematic-ideological problems of the play. Among the passages containing such figures of speech are the following:

Alliteration-Alliteration is a phonetic stylistic device which aims at imparting a melodic effect to the utterance. The essence of this device lies in the repetition of

similar sounds, in particular consonant sounds, in close succession, particularly at the beginning of the successive words.

- «And **p**iteous **p**lainings of the **p**retty babes».(1.1.75)
- «The **s**ailors **s**ought for **s**afety by our boat».(1.1.79)
- «Lords of the **w**ide **w**orld and **w**ild **w**atery seas».(2.1.21)
- «**F**or a **f**ish without a **f**in, there's a **f**owl without a **f**eather».(3.1.90)
- «Ill **d**ee**d**s are **d**oubled **w**ith an evil **w**ord».(3.2.21)
- «**S**ing, **s**iren, for thy**s**elf, and I will dote».(3.2.49)

In these examples we see the repetition of the consonants *d,f,p,s,w* which gave to the play more melodic and rhythmic utterance. But the repetition of each sound has its particular purpose and function, for example the sound *s* in the second example implies security, but in the last one it resembles a song. As for the sound *p* it expresses some kind of pity and misfortune.

Anaphora-Anaphora is a stylistic device which draws the reader's or listener's attention directly to the message implied. The same word or phrase is used to begin successive clauses or sentences.

«The time was once when thou unurg'd wouldst vow
That never words were music to thine ear,
That never object pleasing in thine eye,
That never touch well welcome to thy hand,
That never meat sweet-savour'd in thy taste»(2.2.124-128)

This technique adds emphasis and unity to the clauses, and in this example the phrase "*that never*" is repeated, which creates rhythm and stress in a poetic fashion.

Hyperbole - Hyperbole has the function of intensifying one certain property of the object or person. It can be defines as a deliberate overstatement or exaggeration of an essential feature. Hyperbole does make a comparison but unlike simile and metaphor, it has a humorous effect created by an overstatement.

In Act III, Shakespeare blends hyperbole and metaphor in a hilarious scene in which Dromio of Syracuse laments that a rotund cook is relentlessly pursuing him. After Antipholus of Syracuse asks him to identify her, Dromio says,

«Marry, sir, she's the kitchen-wench, and al grease;
and I know not what use to put her to but to make a
lamp of her and run from her by her own light. I
warrant her rags and the tallow in them will burn a
Poland winter; if she lives till doomsday,
she'll burn a week longer than the whole world».(3.2.83-88)

When Antipholus questions him further about her look, another hyperbole results.

ANTIPHOLUS «What complexion is she of?
DROMIO Swart like my shoe, but her face nothing like so
clean kept: for why she sweats; a man may go over
shoes in the grime of it.
ANTIPHOLUS That's a fault that water will mend.
DROMIO No, sir, 'tis in grain; Noah's flood could not do it». (3.2.89-92)

Shakespeare then turns the woman into an extended metaphor in which he mocks nations and government policies.

ANTIPHOLUS In what part of her body stands Ireland?

DROMIO Marry, sir, in her buttocks: I found it out by the bogs.
ANTIPHOLUS Where Scotland?
DROMIO I fond it by the barrenness; hard in the palm of the hand.
ANTIPHOLUS Where France?
DROMIO In her forehead; armed and reverted, making war against her heir».(3.2. 96-101)

Describing her as being «spherical, like a globe» and that he «could find out countries in her», Dromio wants to say that she was so fat and wide as she was tall.

Metaphor-Metaphor is a stylistic device based on the principal of similarity between two objects, transference of meaning from one word to the other, thus creating an image, characterizing or describing objects or people and imparting great expressive or emotive force to the utterance.

- «Methinks your maw, like mine, should be your clock
  And strike you home without a messenger». (1.2.69-70)

This passage draws a comparison of the stomach (maw) to a clock, which strikes and alarms Dromio of Ephesus to go home.

- «There's nothing situate under heaven's eye
  But hath his bound, in earth, in sea, in sky».(2.1.18-19)

A very beautiful comparison of the sun to an eye is expressed by identifying sun.

- «Mine eye's clear eye, my dear heart's dearer heart,
  My food, my fortune and my sweet hope's aim,
  My sole earth's heaven and my heaven's claim».(3.2.63-65)

In this example Antipolus of Syracuse compares Luciana with hi eye, his heart, his foo, his fortune, etc. showing his love and affection towards her. It can also be considered as a climax or gradation, as his description gradually increases in significance and in emotional tension, from eye to a heaven.

- «I am an ass, indeed; you may prove it by my long ears».(4.4.41)

In his plays Shakespeare used the word "ass" lots of times and *"The Comedy of Errors"* is not an exception. And this "ass motif" is observed carefully in the Shakespeare Quarterly, (*The Ass Motives in The Comedy of Errors and A Midsummer Night's Dream*). "Both dialectical poles of the play, one of which arises from the potentially serious framing devices and the other from the knock-about central plot of mistaken identity, are contained within the ass image" (Wyrick 1982: 439).

- «The venom clamours of a jealous woman
  Poisons more deadly than a mad dog's tooth».(5.1.87-88)

Here Aemelia compares a mad dog with a jealous woman, showing that women's poison is more deadly and that they are more dangerous than dogs.

Oxymoron-Oxymoron is a combination of two words (mostly an adjective and a noun or an adverb with an adjective) in which the meanings of the two words are opposite in sense.

- «The **pleasing punishment** that women bear».(1.1.48)

Usually we consider punishment as something evil and malicious, that is why describing it with an adjective pleasing begets an oxymoron. Here that pleasing punishment refers to pregnancy.

- «A **trusty villain**, sir…»(1.2.21)

How can a villain be trusty? But this is how Antipholus of Syracuse calls, his servant, Dromio of Syracuse, showing their intimate friendship.

Parallel construction/ Parallelism-Parallel construction is a syntactical stylistic device, which main necessary condition is similarity in syntactical structure in two or more sentences or parts of a sentence in close succession. They are often backed up by repetition of words, conjugations, preposition, parts of sentences.

«She is so hot because the meat is cold;
The meat is cold because you come not home;
You come not home because you have no stomach;
You have no stomach having broke your fast;»(1.2.48-51)

This method adds balance and rhythm to the sentences giving ideas a smoother flow and thus can be persuasive because of the repetition it employs. In this example Dromio of Ephesus explains Antipholus of Ephesus in a quite interesting and energetic way why his mistress has made it on her cheek.

Personification-Personification is a figure of speech in which a thing, an idea or an animal is given human attributes. The non-human objects are portrayed in such a way that we feel they have the ability to act like human beings.

- «When the **sun** shines let foolish gnats make sport,
  But creep in crannies when **he** hides his beams».(2.2.33-34)
- Against my **soul**'s pure truth why labour you
  To make it wander in an unknown field?»(3.2.39-40)
- «My **heart** prays for him, though my tongue do curse». (4.2.32)
- **«Time** is a very bankrupt, and owes more than he's worth, to season.
  Nay, **he's a thief** too: have you not heard men say
  That Time comes stealing on by night and day?»(4.2.65-67)

In all the examples human qualities are given to such objects as sun, soul, heart, time making their actions more emphatic and convincing.

Simile-Simile is a literary device that makes an extraordinary comparison, showing similarities between two things. It draws resemblance mostly with the help of the words *like* or *as*.

- «My soul would sue **as** advocate for thee».(1.1.148)

Duke Solinus compares his soul with an advocate that can defend Egeon were it not for their law, crown, dignity and oath.

- «Apparel vice **like** virtue's harbinger;»(3.2.14)

Here a comparison of vice to the appearance of virtue is expressed with the help of a simile.

- «I to the world am **like** a drop of water
  That in the ocean seeks another drop».(2.33-34)

One of the twin brothers compares him with a drop of water which seeks in the ocean another drop, i.e. his twin brother.

- «I should have chid you for not bringing it
  But **like** a shrew, you first begin to brawl.(4.1.57-58)

In this example Antipholus of Ephesus compares Angelo with a shrew. These comparisons are drawn in terms of resemblance and mutual features that they share.

Thus one hundred eight linguo-stylistic devices and expressive means have been identified in *Comedy of Errors*. These stylistic devices belong to phonetic, lexical and

syntactical expressive means and stylistic devices, notably: alliteration, anaphora, hyperbole, metaphor, oxymoron, parallel construction, personification and simile. Lexical stylistic devices constitute the majority of devices (80), then come phonetic devices (23), and syntactical ones (5).



The diagram shows the quantity of identified linguo-stylistic devices in terms of percentage: Metaphor (35%), Alliteration (21%), Personification (19%), Simile (10%), Hyperbole (6%), Oxymoron (4), Parallelism (3%), Anaphora (2%).

Conclusion-William Shakespeare is widely regarded as the greatest writer in the history of the English language, and the world's pre-eminent dramatist. Shakespeare's writings have everlasting influence on other authors and their works; he contributed about 3000 words to the English language, around 1700 of which were used for the first time. His shortest play *Comedy of Errors* is a humorous comedy about separated family and mistaken identity. But it can be regarded seriously as it has a serious intention and contains sufficient dramatic material. Shakespeare's language is abundant in expressive-emotive overtones, puns, linguo-stylistic devices and varied vocabulary.

Within the scope of our research the following conclusions have been made:

- The main characters of the comedy are of lower rank (merchants, slaves, tradesman, goldsmith) and a kind of prominence is given to female characters (Adriana, Luciana). These female characters reveal in the play such themes as family, marriage, women as vocal forces, duty of wives and husbands.
- The analysis and revelation of the main characters of the play (Egeon, Antipholus of Syracuse, Antipholus of Ephesus, the Dromios, Adriana and Luciana), their characteristics and discussion of the plot helps to distinguish the thematic-ideological features of the play.
- The main themes of *Comedy of Errors* are; isolation, suffering, family, appearances, identity, women and femininity, marriage, duty, rules and order. The main ideology is that love and felicity will triumph over all.
- The following stylistic devices and expressive means have been identified and analyzed in the play: alliteration, anaphora, hyperbole, metaphor, oxymoron, parallel construction, personification and simile. Lexical stylistic devices constitute the majority of the devices (80), then come phonetic devices (23), and syntactical ones (5).

- The themes of appearance and mistaken identity are fully realized in similes and metaphor, the theme of women in hyperbole. The themes of marriage, family and duty are expressed with the help of personification, the theme of friendship in oxymoron.

Although our research is based on precise data as far as the number of the devices used in the comedy is concerned, there may be other approaches also to the study of the thematic-ideological issues aimed at by Shakespeare.

References:

- Butcher, S. H. (2008) *Aristotle Poetics*, < *https://www.gutenberg.org/*>
- Shakespeare, W. (1594) *The Comedy of Errors,* <*http://shakespeare.mit.edu/*>
- Wyrick, D. B. (1982) *The Ass Motive in The Comedy of Errors and A Midsummer Night's Dream*. Shakespeare Quarterly, 33 United States: George Washington University.
- Online Oxford University Press (accessed 27-12-2016) *OED Online: Comedy* available at: <*https://en.oxforddictionaries.com/definition/comedy*>
- Douglas Harper (accessed: 10-10-2008) *Comedy: Online Etymology Dictionary*, available at: <*http://www.etymonline.com/index.php?term=comedy*>
- Literary Devices Editors (accessed: 4-11-2014) *Literary Devices: Comedy,* available at: <*http://literarydevices.net/comedy/*>
- SparkNotes Editors (accessed 9-12-2016) *SparkNotes on The Comedy of Errors,* available at: <*http://www.sparknotes.com/shakespeare/errors/*>

Key words -William Shakespeare, *Comedy of Errors*, thematic-ideological features, isolation, women, suffering, mistaken identity, appearances, linguo-stylistic devices, alliteration, oxymoron, hyperbole, parallelism, anaphora, personification, simile.

Astghik Simonyan, Anna Sargsyan, Thematic-ideological Features of William Shakespeare's «Comedy of Errors»-This article has as its aim the study of the thematic-ideological features in William Shakespeare's «Comedy of Errors». First of all, there arises the need to identify the themes and ideologies of the play, like those of family, mistaken identity, appearances, women, etc. Then the statistical analysis of the use of linguo-stylistic devices follows. Our next and most important step in this research is to find a connection between the themes, the ideologies and the use of specific stylistic devices and to try to show how each ideology and theme is realized by means of a given stylistic device and what the effect of such use can be.

Աստղիկ Սիմոնյան, Աննա Սարգսյան, *Վիլյամ Շեքսպիրի «Սխալների կոմեդիա» պիեսի թեմատիկ-գաղափարական հատկանշական գծերը*-Սույն հոդվածը նպատակ ունի ուսումնասիրելու Վիլյամ Շեքսպիրի «Սխալների կոմեդիա» պիեսի թեմատիկ-գաղափարական հատկանշական գծերը: Նախ՝ անհրաժեշտ է առանձնացնել պիեսում առկա թեմաներն ու գաղափարախոսությունները, ինչպես, օրինակ, ընտանիքի, սխալ ինքնության, արտաքինի, կանանց թեմաներն են: Այնուհետև գալիս է լեզվառճական հնարների վիճակագրական վերլուծությունը: Մեր հաջորդ և ամենակարևոր քայլը այս թեմաների, գաղափարների և որոշակի ոճական հնարների գործածության միջև առկա կապի բացահայտումն է, որի շնորհիվ կփորձենք ցույց տալ, թե ինչ չափով է յուրաքանչյուր թեմա,

գաղափարախոսություն իրականացվում տրված ոճական հնարի միջոցով, և թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ նմանատիպ կիրառությունը:

Астхик Симонян, Анна Саргсян, **Тематические и идеологические черты в пьесе Уильяма Шекспира «Комедия ошибок»**-Эта статья имеет цель изучить тематические и идеологические функции в пьесе Уильяма Шекспира «Комедия Ошибок». Во-первых, возникает необходимость определить темы и идеологии пьесы, как темы семьи, ошибочной идентификации, внешнего вида, женщин и т.д. Затем следует статистический анализ использования лингво-стилистических средств. Нашым следующим и наиболее важным шагом в этом исследовании это поиск связи между темами, идеологиями и использовании конкретных стилистических средств и попытаться показать, каким образом каждая идеология и тема реализована с помощью стилистических средств и какое влияние такое использование может иметь.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԺԵԼԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ռազմական քաղաքականությունը պետական ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որն անմիջականորեն կապված է ռազմական կազմակերպությունների ստեղծման,ռազմական բնույթի հատուկ միջոցառումների մշակման և որոշակի նպատակների հասնելու համար դրան կիրառման հետ[1]: Ռազմական քաղաքականության հիմական խնդիրներն են՝ պետության ռազմական դոկտրինի մշակումը, որն արտահայտում է նրա ողջ ռազմական գործունեության էությունը, ռազմաքաղաքական որոշումների հիմնավորումը և մշակումը, պետության ռազմական համակարգի գործունեության և զարգացման կոնկրետ ծրագրերի պատրաստումը: Այլ պետությունների, դաշինքների, բլոկերի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների կարգավորումը: Այս հարցում գլխավոր դերը կատարում է ռազմական դիվանագիտությունը, որը կարող է ներառել սահմանային խնդիրների կարգավորման, սպառազինությունների կըրճատման բանակցությունները, ռազմական հարցերում դաշնակից երկրների հետ համագործակցության խնդիրները, ռազմաքաղաքական բլոկերի և առանձին պետությունների հետ նոր կապերի որոնումը, հաստատումը և երկխոսության իրականացումը: Որոշումների, ծրագրերի ընդունման և գործուղությունների տեղեկատվական ապահովման կազմակերպումը և այլն, հարավկովկասյան տարածաշրջանի երկրների ռազմական քաղաքականության ուղղությունը վերջին տարիներին բավականին փոփոխություններ կրեց: Տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական գլոբալ փոփոխությունների ներգործությամբ հաղթահարվեց այն ուղեգիծը, որը բնորոշ էր «սառը պատերազմի» ժամանակաշրջանի հակամարտությանը: Ռուսաստանի Դաշնության 20-րդ դարի և 21-րդ դարասկզբի ռազմական քաղաքականություն բնութագրվում է առավել բարդ խնդիրների և հակասությունների նկատմամբ հավասարակշռված, կառուցողական մոտեցմամբ, ամենատարբեր երկրների հետ ռազմական քաղաքականության համագործակցության ընթացքում դրական արդյունքների հասնելու ձգտմամբ, ինչն իր ամնիջական անդրադարձն է ունենում տարածաշրջանի վրա: Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը իր ռազմական քաղաքականության մեջ ռազմական անվտանգության ապահովումը դիտարկում է որպես ժողովրդավարական, իրավական պետության կառուցման, սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման, միջազգային հարաբերություններում իրավահավասարի գործընկերության, փոխադարձ համագործակցության և բարիդրացիության սկզբունքների հաստատման: Ընդ որում ղեկավարությունը գործում է միջազգային իրավունքի այն հիմնարար

[1] Տե՛ս **Տիգրան Տոնիկի Քոչարյան** «Հայաստանի հանրապետության ռազմական անվըտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան 2012, էջ 154:

սկզբունքների և նորմերի նշանակությունից, որոնք օրգանապես շաղկապված են միմյանց հետ և լրացնում են մեկը մյուսին, գործընկեր են համարվում այն բոլոր պետությունները, որոնց քաղաքականությունը չի վնասում կամ սպառնում Հայաստանի Հանրապետության ազգային շահերին և անվտանգությանը[2]:

Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականությունը ունի երկու, միմյանց հետ շաղկապված կողմ՝արտաքին և ներքին: Արտաքին կողմը դիտարկում է միջպետական հարաբերություններում ռազմական ուժի գործադրման խնդիրները, ներքին կողմը սահմանագծում է երկրի պաշտպանունակության պահպանման և զինված ուժերը՝ գործադրման համար պատրաստ վիճակում պահելու ուղղությամբ պետության ամենօրյա գործունեությունը և հեռանկարները:

Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականությունը իրականացվում է միջազգային ինտեգրման և փոխլրացման սկզբունքներով:Աշխարհում ներկայումս տեղի են ունենում ինտեգրման ինտեսիվ գործընթացներ, և առանձին պետությունները չեն կարող ապահովել իրենց ազգային անվտանգությունը՝ առաջնորդվելով միայն իրենց ներքին շահերով: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը կապված է այնպիսի միջազգային ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումների հետ, որոնք անմիջականորեն ազդում են Հայաստանի Հանրապետության միջազգային և տարածաշրջանային անվտանգության միջավայրի ձևավորման վրա: Հետևաբար, արտաքին անվըտանգության դեմ ուղղված համաչափ և անհամաչափ սպառնալիքների չեզոքացումը հնարավոր է միայն միջազգային ինտեգրման միջոցով:[3] Հայաստանի Հանրապետությունը այդ քաղաքականությունը որդեգրել է տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

Ինտեգրման միջոցով արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը նպատակաուղղված է տարբեր խնդիրների լուծմանը, տարածաշրջանային և միջազգային համաչափ և անհամաչափ սպառնալիքների նախականխմանը և չեզոքացմանը: Տարբեր ոլորտներում Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության հիմնական առաջնահերթություններն են. Պաշտպանական ոլորտ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդար լուծում: Տնտեսական ոլորտ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մեկուսացման փորձերի չեզոքացում: Քաղաքական ոլորտ՝ Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի միջազգային դերի և քաղաքական ազդեցության նվազեցման սպառնալիքների նախականխում և Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացում: Տեղեկատվական ոլորտ՝ միջազգային հանրությանը Հայաստանի Հանրապետության մասին ճշգրիտ տեղեկատվությամբ ապահովուն, ապատեղեկատվության տարածման փորձերի կանխում և հաղթահարում:

Արդյունավետ ինտեգրման ռազմավարությունը իրականացնելու համար Հայաստանի Հանրապետությունը իր արտաքին ռազմական քաղաքականության

---

[2] Տե՛ս **Տիգրան Տոնիկի Քոչարյան** «Հայաստանի հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան 2012 , էջ 156

[3] Տե՛ս «Հայաստանը կարևոր քայլեր է ձեռնարկում միջազգային ահաբեկչության դեմ պայքարում»: ՀՀ Ազգային ժողով /2005թ.մայիսի13/ (*http://www.parliament.am/news.php?do=view &I D =1181&cat_id=2&day=13&month=05&year=2005&lang=eng*)

մեջ որդեգրել է փոխլրացման սկզբունքը[4]: Այդ քաղաքականության էությունը հարևան երկրների և միջազգային հանրության տարբեր ուժային կենտրոնների հետ հավասարակշռված և բազմակողմանի հարաբերություններ ունենալն է: Փոխլրացման սկզբունքը չի նշանակում հավասարակշռության պահպանում ամեն գնով: Այն նպատակաուղղված է միջազգային հարաբերությունների ընձեռնած ինտեգրման հնարավորությունների արդյունավետ օգտագործմանը: Լինելով միջազգային հանրության մասնիկ՝ Հայաստանի Հանրապետությունը իր փոխլրացման քաղաքականությունը իրագործելիս պետք է առաջնորդվի ոչ թե հակասությունների, այլ առավելապես մոտեցումների ընդհանրությունների համադրման սկզբունքով[5]:

Հայաստանի Հանրապետությունը իր արտաքին ռազմական քաղաքականության ինտեգրման սկզբունքը իրականացնում է երկու՝ տարածաշրջանային և միջազգային մակարդակներով:

Տարածաշրջանային մակարդակում Հայաստանի Հանրապետության ինտեգրման ռազմավարությունը նպատակաուղղված է այնպիսի մեխանիզմների ստեղծմանը, որոնք հնարավորություն կընձեռնեն չեզոքացնել տարածաշրջանային սպառնալիքները: Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ձևավորել տարածաշրջանային համագործակցության միջավայր, ստեղծել անվտանգության համակարգ և կառուցողական հարաբերություններ հաստատել հարևան երկրների հետ: Անհրաժեշտ է հաղթահարել Հարավային Կովկասում առկա բաժանարար գծերը և հակազդել այն ռազմաքաղաքական դաշինքներին, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության ազգային շահերին: Հայաստանի Հանրապետությանը արտաքին ռազմական քաղաքականությունը պետք է չեզոքացնի Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված սպառնալիքները՝ դիմակայելով միջազգային անվտագության որոշ համակարգերի և առանձին պետությունների այնպիսի քաղաքականություններին, որոնք կարող են Հայաստանի Հանրապետությանը դուրս թողնել տարածաշրջանային ծրագրերից, տնտեսապես և քաղաքականապես մեկուսացնել: Միայն տարածաշրջանային համագործակցության միջոցով է հնարավոր դիմակայել միջազգային և տարածաշրջանային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին, հասնել տնտեսական, սոցիալական և մշակութային զգալի առաջընթացի և ապահովել կայուն զարգացում[6]:

Հակասական և անկայուն տարածաշրջանային միջավայրում Հայաստանի Հանրապետության համար սպառնալիքները բազմաթիվ են: Դրանց դիմակայելու համար պահանջվում են հատուկ միջոցներ: Հետևաբար, առանձին երկրների հետ հարաբերություններ կառուցելիս անհրաժեշտ է դրանք հաշվի առնել:

---

[4] Տե՛ս «Նոր արտասահմանից դեպի նոր հարևանություն. Հարավային Կովկասը Եվրոպայի ճանապարհին: Սևծովյան համատեքստի որոշ ենթատեքստ» (ՀՀ փոխարտգործնախարար, ԱՄՆ-ում ՀՀ դեպան Ռուբեն Շուգարյանի 2004թ. հոկտեմբերի 22-ին Դետրոյտում կայացած ելույթից (*http://www.armeniaforeignministry.com*)

[5] Տե՛ս Հայաստանի հանրապետության Պաշտպանության նախարարության Դ. Կանայանի անվան Ազգային Ռազմավարական Հետազոտությունների ինստիտուտ «Ռազմավարական անվտանգային հետազետություններ», Հատոր 1, Երևան 2014:

[6] Տե՛ս «Armenian՝s Foreign Relations in 2003» «A Summary» 14 January 2004 (*http: //www.armeniaforeignministry.com/pr_04/040114vo_summary.html0*)

Հայ-վրացական հարաբերությունները Հայաստանի հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության համար ունեն ռազմավարական կարևորություն, քանի որ դրանք առնչվում են անվտանգության մի շարք առաջնահերթ հիմնախնդիրների[7]:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման պայմաններում Վրաստանի հանրապետությունը այն հիմնական երկրին է, որը Հայաստանի հանրապետությանը ապահովում է տրանսպորտային կապով Ռուսաստանի Դաշնության և Եվրոպայի հետ: Վրաստանի հանրապետությունը իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև հանդես է գալիս, որպես տնտեսական և առևտրային միջնորդ: Վրաստանում հայաբնակ մարզերի առկայությունը երկու երկրների հարաբերություններին հաղորդում է ռազմավարական բնույթ: Հայաստանի հանրապետության համար մտահոգության առիթ է Վրաստանի ներքաղաքական իրավիճակի ցանկացած ապակայունացում: Հայաստանի և Վրաստանի հարաբերությունների համար սպառնալիք է Վրաստանի հայաբնակ համայնքների դերի նվազումը, դա կարող է կազմալուծել այն էթնիկական միջավայրը, որը մի ժամանակ համախմբում էր այս երկու ժողովուրդներին: Վրաստանի ներքաղաքական իրավիճակի ապակայունացումը սպառնում է արտաքին աշխարհի հետ Հայաստանի տնտեսական և տրանսպորտային կապերին[8]: Էթնիկական անհանդուրժողականությունը կարող է հարուցել հակահայկական տրամադրություններ, որոնք կխթանեն Ջավախքի հայերի արտագաղթը: Հայաստանի հանրապետությունը մեծապես շահագրգռված է Վրաստանի հանրապետությունում կայունության պահպանման և անվտանգության զարգացման մեջ: Հայաստանի հանրապետությունը Վրաստանի հանրապետության հետ ցանկացած հարաբերություններում առաջնորդվում է միայն այս սկզբունքով: Հայաստանի հանրապետությունը ամեն կերպ աջակցում է Վրաստանի հանրապետությանը Ջավախքում սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման գործում: Վրաց-թուրքական և վրաց-ադրբեջանական համատեղ տնտեսական, տրանսպորտային և ռազմական ծրագրերը միտված են տարածաշրջանում հավասարակշռության խախտմանը և Հայաստանի հանրապետության մեկուսացմանը, այս առումով հատկապես վտանգ էր ներկայացնում Կարս-Ախլքալաք երկաթգծի կառուցման նախագիծը:[9] Դրա նպատակը հարավ կովկասյան պետություններին Ռուսաստանի դաշնության և Եվրոպայի հետ կապող ուղի բացելն է՝ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև երկաթգծի կառուցմամբ: Ռազմավարական տեսանկյունից այս նախագծի իրականացումը նույնպես նպատակաուղղված էր գոյություն ունեցող Գյումրի-Կարս երկաթգծի դերի նվազեցմանը: Թուրքիայի և Ադրբեջանի գլխավորած այս ծրագրերը միաժամանակ արտացոլում են Վրաստանի ազգային անվտանգության շահերը: Հայաստանի հանրապետությունը փորձում է հավասարակշռել դրանք՝ Վրաստանին առա-

[7] Տե՛ս «Նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Վրաստան», 2004թ հոկտեմբերի 22-24 (*http://news.president.am/eng/?sub=official&id=124&from=0&year=2004*)

[8] Տե՛ս «Saakashvili Comment on the Armenian president vistit». Baku today Net 4 April 2005

[9] Տե՛ս **Artyom Yerkanyan** «The new project of the century against Armenia. it is decided to create a consortium for implementing the construction works of Kars-Akhalkalaki railway». Pan-ARMENIAN Network /analytical department/ 6 April 2005 (*http://www.panarmenian.net/details/end/?id=513&date=2005-04-06*)

ջարկելով վերանորոգված Սուխում-Թբիլիսի երկաթգիծը, որը ռազմավարական կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Իր մեկուսացման սպառնալիքը չեզոքացնելու նպատակով Հայաստանի հանրապետությունը զուգահեռաբար բանակցություններ էր վարում Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթգծի բացման շուրջ: Այս ծրագիրը տարածաշրջանային շրջափակումից դուրս գալու իրատեսական ուղիներից մեկն է, և Հայաստանի հանրապետությունը շարունակում է ջանքեր գործադրել այն իրականացնելու ուղղությամբ: Հայ-վրացական հարաբերությունները կարևոր են փոխադարձ շահերի տեսանկյունից, քանի որ երկրների աշխարհագրական դիրքը Հայաստանի հանրապետությանը հնարավորություն է տալիս առնտրատրանսպորտային համագործակցությամբ միջոցով կապ հաստատել Ռուսաստանի Դաշնության և Եվրոպայի հետ, իսկ Վրաստանին՝ Իրանի և Միջին Արևելքի հետ: Եվ Հայաստանի Հանրապետությունը և Վրաստանի Հանրապետությունը առաջնորդվելով ազգային և տարածաշրջանային անվտանգության շահերի տեսանկյունից, տարածաշրջանի հակամարտության խաղաղ լուծման կողմնակից են: Երկու երկրներն էլ ընտրել են Եվրոպական ինտեգրման միջոցով զարգացման ճանապարհը, նույնիսկ,եթե այդ նպատակի հասնելու ուղիները տարբեր լինեն: Երկու երկրների հարաբերություններում ռազմական համագործակցություն գրեթե չկա, թեև երկու երկրներն էլ գիտակցում են, որ հայ-վրացական ռազմական համագործակցությունը ռազմավարական տեսանկյունից նույնպես փոխշահավետ է: Հայաստանի Հանրապետությունը այդ կապերը ավելի ակտիվացնելու ուղղությամբ համապատասխան քայլեր է ձեռնարկում: 2004 թվականին Հայաստանի Հանրապետության նախագահի Վրաստանի հանրապետություն կատարած այցի ժամանակ պաշտոնապես հայտարարվեց, որ երկու երկրների ռազմաղիվանագիտական հարաբերությունների ամրապնդման նպատակով ձեռք է բերվել համաձայնություն երկու երկրների մայրաքաղաքներում ռազմական կցորդի գրասենյակ բացելու վերաբերյալ: Հայ-վրացական հարաբերությունննորը մեծ կարևորություն են ներկայացնում ոչ միայն երկու երկրների, այլ նաև ամբողջ հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգության արդյունավետ ճարտարապետության համար: Հայ-վրացական հարաբերությունները կարող են լինել Հարավային Կովկասում կայունության պահպանման կարևոր գործոնը:

Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Իրանի Իսլամական Հանրապետության հետ կարևորվում են այն հանգամանքով,որ երկու երկրներն էլ ցանկանում են տարածաշրջանում պահպանել ռազմաքաղաքական հավասարակշռություն և անվտանգություն[10]: Իրանի Իսլամական Հանրապետության հետ ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հիմնավոր հանգամանքներով: Իրանի Իսլամական Հանրապետութունը արմատական հակասություններ ունենալով Թուրքիայի և Ադրբեջանի հետ և Մերձավորարևելյան տարածաշրջանում լինելով Թուրքիայի՝ տարածաշրջանային գերտերություն ստեղծելու և ազդեցությունը ընդլայնելու քաղաքականության հիմնական հակառակորդներից մեկը, Հայաստանի Հարապետության արտաքին ռազմական քաղաքականության համար էական կարևորություն է ներկայացնում[11]: Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքա-

[10] Տե՛ս «Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Իրանի նախագահ Մոհամադ Խաթամիի համատեղ մամլո ասուլիսը», 2005թ մայիսի 25 (*htttp://www.news.president.am*)

[11] Տե՛ս Акопян В., «Иран на Южном Кавказе: 3+3 против 3-3» третый взгляд„ 05.06.2003г стр. 39.

կան հարաբերությունները Իրանի Իսլամական Հանրապետության՝ տարածաշրջանի ամենաազդեցիկ պետություններից մեկի հետ, պայմանավորված են տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության և կայունության պահպանման ընդհանուր ձգտմամբ: Իրանի Իսլամական Հանրապետությունը լինելով Հայաստանի Հանրապետության հարավային սահմանակիցը և ռազմավարական կարևորագույն ճանապարհ ապահովող երկիրը, վերջին տարիներին նաև Հայաստանի տնտեսական կյանքում զգալի դեր է ունեցել: Հայաստանի հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության համար և Իրանի Իսլամական հանարապետության հետ ռազմաքաղաքական կապերի հաստատման անհրաժեշտությունը պայմանավորված է երկու հանգամանքվ. Իրանի Իսլամական Հանրապետության Լեռնային Ղարաբաղի հակամարտության օջախին ամենամոտ գտնվող, փաստացիորեն սահմանակցեղ պետություն է՝ չնայած իսլամական ժողովուրդների պաշտպանի հռչակված քաղաքականությանը, անկողմնակալ և հավասարակշռված դիրքորոշում է դրսևորում Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում՝ պարբերաբար արժանանալով Ադրբեջանի հանրապետության պաշտոնական մեղադրանքներին[12]: Թեհրանի միջուկային ծրագրի հետևանքով ավելի են սրվել Իրանի Իսլամական Հանրապետության և միջազգային հանրության միջև հակասությունները: Այդ հարցում նախկինում համեմատաբար մեղմ դիրքորոշում որդեգրած Եվրոմիության կողմից քննարկվում էր իրանական նավթի արտահանման վրա նոր սահմանափակումներ կիրառելու հարցը: Եվրոմիությունը կոչ է արել Ռուսաստանին, ԱՄՆ-ին, Չինաստանին, Ճապոնիային և առաջատար տնտեսություն ունեցող այլ պետություններին միանալ այդ սահմնափակումներին: Ռուսաստանի Դաշնությունը այդ նախաձեռնության դեմ է արտահայտվել, նշելով, որ վերջինս հետապնդում է քաղաքական նպատակներ: Իրանա-ամերկյան և իրանա-իսրաելյան հարաբերությունները պահպանում են առաջվա լարվածությունը, Իրանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան վրա ցուցարարների հարձակումից հետո լարված են նաև իրանա-բրիտանական հարաբերությունները:[13] Հայ-իրանական ռազմաքաղաքական հարաբերությունների ամրապնդման կարևոր քայլ կարելի համարել այն, որ 2011 թվականին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության Զինված Ուժերի աջակցման նախարարի տեղակալ Ռեզա Մոզաֆարի Նիային՝ քննարկելու համար պաշտպանության ոլորտում հայ-իրանական համագործակցությանն առնչվող հարցեր: Հաշվի առնելով արտաքին ռազմական քաղաքականությունում Հայաստանի Հանրապետության որդեգրած ուղիները Հայաստանի Հանրապետության պաշպանության նախարարությունը բավականին ակտիվ շփումներ է իրականացնում Իրանի Իսլամական Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության հետ: Ի դեպ հարաբերությունների ամրապնդման գործում հաճախ շահագրգռված կողմ է հանդես գալիս Իրանի Իսլամական հանրապետությունը: Իրանի Իսլամական հանրապետության հետ ռազմաքաղաքական հարաբերություններում պարբերաբար զգալի տեղաշարժեր են նկատ-

[12] Տե՛ս John New House “Iraq, Iran and Turkey” Policy brief, World Security Institute, December 2002, page 7.

[13] Տե՛ս **Мурадян И.,** “Региональная политика США и Великобритании, Турция-Нран-Южный Кавказ-Черное море„ Ер., АНТАРЕС, 2008.

վում, կազմակերպվում և անցկացվում են զինվորական տարբեր մակարդակների պատվիրակությունների փոխայցելություններ, որոնց ժամանակ հստակեցվում են հայ-իրանական ռազմական և ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման հեռանկարները, տարածաշրջանային անվտանգության խնդիրների նկատմամբ երկու երկրների դիրքորոշումները: Հայ-իրանական ռազմաքաղաքական և ռազմական համագործակցության հնարավոր բոլոր շրջանակների լիարժեք բացահայտումը և գնահատումը հնարավորություն կտան Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությանը առավել արդյունավետ գործունեություն ծավալել Իրանի հետ հարաբերություններում[14]: Հայ-իրանական ռազմական և ռազմաքաղաքական հարաբերություններում անցած տարիների ընթացքում նկատվել է էական ակտիվացում, այնուհանդերձ Իրանի Իսլամական Հանրապետության հետ լիարժեք ռազմական և ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման համար առկա են որոշակի խոչընդոտներ. Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսական և քաղաքական որոշ շրջանակներում Ադրբեջանի զգալի ազդեցությունը և կրոնական որոշ շրջանակների կրոնական ծայրահեղ գաղափարախոսությունը, որոշակի վերապահումների են հանգեցնում իրանական կողմից, իսկ հայկական կողմից խոչընդոտում են գործընկեր պետությունների հետ Իրանի բարդ հարաբերությունները և ռազմավարական հակասությունները[15]: Պաշտոնական մակարդակում հայ-իրանական վերջին շփումներից կարելի է առանձնացնել 2016 թվականի հունիսի 14-17-ը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մովսես Հակոբյանի աշխատանքային այցը Իրանի Իսլամական հանրապետություն: Այցի շրջանակներում հայկական պատվիրակությունը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարարության ԷԹՔԱ կազմակերպության գործադիր տնօրեն Մուհամմեդ Մեհդի Քարբալայիի հետ, այցելել ընկերության գործարաններ, խանութների ցանց և ծանոթացել արտադրվող ապրանքի տեսականուն: Մովսես Հակոբյանի գլխավորած պատվիրակությանը ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար Հոսեյն Դեղհանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանության ոլորտում հայ-իրանական համագործակցության հեռանկարային զարգացմանն առնչվող հարցեր: Մի շարք ոլորտներում պայմանավորվածություններ են ձեռք բերվել համագործակցության զարգացման վերաբերյալ՝ ստորագրելով փոխըմբռնման հուշագիր:

Թուրքիայի կողմից Հայաստանի հանդեպ որդեգրած անթաքույց մերժողական քաղաքականությունը ապակայունացնում է տարածաշրջանի անվտանգության միջավայրը և բաժանարար գծեր է ձևավորում: Այդ մերժողական քաղաքականությունը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի հակամարտությամ և 1915 թվականի Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրով:[16] Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ նմանատիպ վերաբերմունք իր բացասական ազդեցություն է ունենում նաև բուն Թուրքիայի ներսում: Թուրքական իշխանությունների կողմից սեփական հասարակության նկատմամբ իրականաց-

[14] Տե՛ս **Տիգրան Տոնիկի Քոչարյան** «Հայաստանի հանրապետության ռազմական անվըտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան 2012, էջ 336.

[15] **Акопян В.,** «Иран на Южном Кавказе: 3+3 против 3-3» третый взгляд» 05.06.2003 г. стр. 23.

[16] Տե՛ս **Aliriza Bulent**, Turkey and the Crisis in the Caucasus, CSIS, September 9, 2008 page 23.

վող ինքնախաբեության քաղաքականությունը, սեփական պատմության կոծկումը և ավավաղումը ծնում է այնպիսի հիվանդագին երևույթներ ինչպիսին է ազգայնամոլությունը: Երկու երկրների հարաբերությունների կարգավորման համար միջազգային կառույցները՝ մասնավերապես Եվրամիությունը, բավականին ջանքեր են գործադրել[17]: Սեփական պատմության հետ հաշտվելը և Հայոց Ցեղասպանությունը ճանաչելը, Հայաստանի և հարևան մյուս երկրների հետ հարաբերությունների կարգավորելը անհրաժեշտ են Թուրքիային, քանի որ դրանք լուրջ խթան կհանդիսանան ժողորդականացման, իրական բարեփոխումներ իրականացման և Եվրամիության անդամակցման համար: Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը շարունակում է մնալ սառեցված վիճակում: Չնայած ԱՄՆ-ի կողմից հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Թուրքիայի նկատմամբ գործադրվող որոշակի ճնշումներին, Թուրքիան ներքաղաքական և արտաքին քաղաքական մակարդակներում շարունակում է շեղվել ձեռք բերված պայմանավորվածությունից՝ հարցի լուծումը կապելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ:[18] Չնայած հարաբերությունների կարգավորման գործում Թուրքիայի որդեգրած բացասական դիրքորոշմանը, Թուրքիայի իշխանությունը փորձում է միջազգային հանրությանը մոլորության մեջ գցել՝ հարաբերությունների կարգավորման ձախոխման մեջ մեղադրելով Հայաստանի Հանրապետությանը: Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից թուրքական ապակողմնորոշիչ դիվանագիտական ջանքերից հեռու մնալու քայլը նպաստում է տարածաշրջանային հարցերում առաջատարի դեր ստանձնելու Թուրքիայի նկրտումների զսպմանը:

Տարածաշրջանային անվտանգության համատեքստում թուրք-ադրբեջանական հարաբերությունները բարելավվում են կապված հայ-թուրքական հարաբերությունների սառեցման հետ[19]: Ադրբեջանի հետ Թուրքիայի ռազմավարական պարտավորությունները ակնհայտորեն գերակայել են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի նկատմամբ: Չնայած ընդհանուր առմամբ թուրք-ադրբեջանական բարեկամական հարաբերություններին՝ շարունակվում են ՎԻԿԻԼԻԿՍ ինտերնետային կայքում Ադրբեջանի նախագահի տարբեր հարցազրույցների ընթացքում Թուրքիայի ղեկավարության հասցեին արված անհաճո արտահայտությունների հրապարակումները: Թուրքիայի խորհրդարանը 2011 թվականի մարտի 11-ին վավերացրել է 2010 թվականի օգոստոսի 16-ին ստորագրված «Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմավարական գործընկերության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը: Միաժամանակ Թուրքիան Ադրբեջանի հետ համագործակցությունը որոշ չափով մղել է հետին պլան, և իր դիվանագիտական ջանքերը ուղղել է դեպի Մերձավոր Արևելք՝ ցանկանալով ռազմական օգուտներ քաղել «Արաբական գարնան» ընթացքում առաջ եկած փոփոխություններից: Նախորդ տարիների նման շարունակվում է Ադրբեջանի ռազմականացման քաղաքականությունը և ռազմատենչ

[17] Տե՛ս European Parliament Looking Forward to Normalization of Armenian-Turkish Relations (*http://www.armtown.com/news*)

[18] Տե՛ս **Corvett Jon**,Turkey Plays Big Brother to Azerbaijan in Opening Skirmishes Over Control of Caspian Resources (*http://www.wrmea.com/archives/november01/0111031.html*)

[19] Տե՛ս Armenian-Turkey: The Great Debate, August 2009, European Stability Initative (*http://www.esiweb.org/index.php?lang=en&id=322&debateID=2&slideID=1#ftnref2010*)

քարոզչությունը: Ադրբեջանի իշխանությունների կողմից 2016թ. ապրիլին սանձազերծված ակտիվ ռազմական գործողությունները վկայում են, որ տվյալ պետությունը հակամարտության կարգավորման միայն ռազմական կողմի կողմնակիցն է: Ադրբեջանի սպառազինման գործընթացը ընթանում է U-300 համակարգերի ձեռքբերմամբ, որը միտված է Ադրբեջանի հանրապետությունը ապահովագրելուն՝ Հայաստանի Հանրապետության կողմից զսպման կարողությունների ձեռքբերման դեպքում, հնարավոր վտանգներից[20]: Օգտագործելով Թուրքիայի հետ դաշնակցային հարաբերությունները, ինչպես նաև գործնական շահեր ապահովելով Իսրայելի, Հարավաֆրիկյան հանրապետության և Պակիստանի հետ՝ Ադրբեջանը զգալիորեն զարգացնում է իր պետական ռազմարդյունաբերությունը: Ադրբեջանը 2012թ.փետրվարին հայտարարեց Իսրայելից 1,6 մլրդ դոլարի նորագույն զենք և զինամթերք գնելու որոշման մասին[21]: Ադրբեջանի կողմից սանձազերծված քառօրյա պատերազմը և մինչև օրս հրադադարի պարբերաբար կրկնվող խախտումները միայն խորացնում են տարածաշրջանում առկա բաժանարար գծերը և նվազեցնում Լեռնային Ղարաբաղի հանրապետության և Ադրբեջանի հանրապետության խաղաղ երկխոսության հնարավորությունը: 2016թ ապրիլի քառօրյա պատերազմից հետո Հայաստանի Հանրապետությանն Ադրբեջանի հանրապետության հարաբերությունների կարգավորման փորձ արվել է Սանկ Պետերբուրգում՝Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպման ընթացքում: Հանդիպումից հետո նախագահները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում մասնավորապես ասված է «Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության նախագահները 2016թ. հունիսի 20-ին հանդիպեցին Սանկտ Պետերբուրգում՝ Ռուսաստանի Դաշնության նախագահի հրավերով և քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ հարցեր: Հայաստանի հանրապետության և Ադրբեջանի հանրապետության նախագահները վերահաստատեցին Վիեննայում մայիսի 16-ին կայացած հայ-ադրբեջանական գագաթնաժողովի պայմանավորվածությունները՝ ուղղված հակամարտության կարգավորմանը: Այդ նպատակով նրանք համաձայնեցին հակամարտության գոտում միջազգային դիտորդների թվաքանակի ավելացմանը: Նախագահները նշեցին իրենց կանոնավոր շփումների կարևորությունը և պայմանավորվեցին շարունակել դրանք նման ձևաչափով՝ ի լրումն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքի: Համանախագահները հրավիրված էին ներկա գտնվելու Սանկտ Պետերբուրգում կայացած հանդիպման եզրափակիչ հատվածին»:

Թուրքիայի տրանսպորտի, նավատորմի և կապի նախարար Ահմեդ Արսլանը խոստացել է, որ մինչև 2016թ.վերջը Բաքուն և Ստամբուլը միմյանց հետ կապված կլինեն երկաթգծով: «Մեր նպատակն է ավարտել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի շինարարական աշխատանքները մինչև այս տարվա վերջ: Այս նախագծով Մարմարայով կկապվեն նաև Ստամբուլի երկու կողմերը, եթե մենք այն հասցնենք ավարտին, ապա մեր երկրների միջև երկաթուղային տրանսպորտով ապրանքաշրջանառությունը կհասնի 50 մլն.տոննայի, այն դեպքում, երբ հիմա

[20] Տե՛ս Azerbaijani Defence Sector Management and Reform//Policy Briefing, Europe Briefing #50, International Crisis Group, 29 October 2008.

[21] Տե՛ս «Аргументы недели», 6 марта 2012.

կազմում է 27-28 մլն. տոննա» ասել է Ա. Արսլանը: Նա նաև հայտարարել է, որ նախարարությունը սկսում է զբաղվել հարավարևելյան նահանգների ճանապարհների շինարարությամբ, քանի որ դրանք տուժել էին քրդական բանվորական կուսակցության (PKK) դեմ ծավալված ռազմական գործողություններից:[22]

Բանալի բառեր-Զորավարժություններ, տարածաշրջանային անվտանգության ապահովում, արտաքին անվտանգություն, պաշտպանության գոտի, տարանցման գոտի, ռազմավարական խաղ, խաղաղապահական, ազգային համագործակցություն, միջազգային համագործակցություն, ռազմաքաղաքական համագործակցություն, թիկունքային ապահովման պլան:

Անժելա Մնացականյան, Տարածաշրջանային մակարդակում Հայաստանի հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության համառոտ վերլուծությունը-Տարածաշրջանային մակարդակում Հայաստանի հանրապետության արտաքին ռազմական քաղաքականությունը նպատակաուղղված է այնպիսի մեխանիզմների ստեղծմանը, որոնք հնարավորություն կտան չեզոքացնելու տարածաշրջանային սպառնալիքները: Հայաստանի հանրապետությունը պատրաստակամ է ձևավորելու տարածաշրջանային համագործակցության միջավայր, ստեղծելու անվտանգության համակարգ և կառուցողական հարաբերություններ հաստատելու հարևան երկրների հետ: Հայաստանի հանրապետության արտաքին ռազմական քաղաքականությունը նպատակաուղղված է հաղթահարել Հարավային Կովկասում առկա բաժանարար գծերը և հակազդել այն ռազմաքաղաքական դաշինքներին, որոնք հակասում են Հայաստանի ազգային շահերին:

Анжела Мнацаканян, Региональный уровень внешней военнойполитике РА-На региональном уровне военная политика РА направлена на создание таких механизмов, которые дадут возможность нейтрализовать региональные угрозы.РА готова формировать среды регионального сотрудничества,создавать безопасности и устанавливать конструктивные отношения с соседними странами. Внешняя военная политика РА направлена на преодоление существующих на Южном Кавказе, а также противостояние тем военным союзам, которые противоречат национальным интересам РА.

Anzhela Mnacakanyan, Brief analysis of regional level of foreign military policy of the rebublic of Armenia-The regional level of Armenia's foreign military policy aims at creating a mechanism that will enable the region to neutralize threats. The Republic of Armenia is ready to establish an environment of regional cooperation, to create a security system and establish constructive relations with neighboring countries. The foreign military policy of the Republic of Armenia has aimed at overcoming the dividing lines in the South Caucasus and countering political alliances that are contrary to Armenia's national interests.

[22] Տե՛ս «Հայ Զինվոր» շաբաթաթերթ #23(1143) (*http://www.hayzinvor.am*)

ՄԱՍՆԱՎՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՒ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՋԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՈՒՄ

ՆԱՐԵԿ ԱԲԳԱՐՅԱՆ

21-րդ դարի վարձկաններ տերմինը վերջերս հաճախակի է հանդիպում մասնավոր ռազմական կազմակերպություններին նվիրված իրավաբանական գրականության մեջ[1]: Սակայն նման համեմատությունը, առավել ևս զինված ընդհարումների համատեքստում բավական խնդրահարույց է: Խնդիրը վերաբերվում է այն հակասությանը, որն առաջանում է վարձկանների գործունեությանը նվիրված միջազգային իրավական 2 փաստաթղթերի և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի միջև: Եթե առաջին դեպքում վարձկան տերմինը կիրառելի է ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային բնույթի ընդհարումներում, ապա միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից վարձկանները կարող են լինել միայն միջազգային զինված ընդհարումների մասնակից: Պունիկյան պատերազմների ժամանակ վարձկանները կազմում էին Կարթագենի բանակի հիմքը[2]: Հասթինգսի ճակատամարտում վարձկանների հետ առնչվեցին նաև անգլիացիները, որտեղ պահանջվում էին խաչադեղի կիրառման հատուկ հմտություններ: Ժամանակակից զինված ընդհարումները նույնպես չեն անցնում առանց վարձու զինվորականների օգնության: Այսպես՝ Ղարաբաղյան կոնֆլիկտի ընթացքում Ադրբեջանական կողմի կազմում մարտնչում էին աֆղանացի մոջահեդներ[3] և այլ ազգերի ներկայացուցիչներ: Մասնավոր ռազմական ընկերությունները համեմատաբար նոր երևույթ են պատերազմական գործողությունների ընթացքում: Առաջին կազմակերպությունները, որոնք դասվում են մասնավոր ռազմական ընկերությունների շարքին, թատերաբեմում հայտնվեցին 1960-ական թվականներին[4], իսկ զանգվածային տարածումը սկցվեց սառը պատերազմի ավարտից հետո:

Մասնավոր ռազմական ընկերությունների տարածումը ամբողջ աշխարհում և նրանց կողմից ռազմական ընդհարումների ժամանակ իրականացվող տարատեսակ գործունեությունը առաջ բերեցին բազմաթիվ խնդիրներ, որոնցից հիմնականը այդ կազմակերպությունների անձնակազմի կարգավիճակի խնդիրն էր: Եթե մասնավոր անվտանգության ոլորտում աշխատող ընկերությունների անձնակազմը բազմիցս տարբեր հեղինակների կողմից դասվել է քաղաքացիական անձանց շարքին, ապա ռազմական ընդհարումներին մասնակցող, կամ

[1] **Thomas K. Adams** «Private Military Companies: Mercenaries for the 21-st century», Small Wars and Insurgencies, Vol. 13, 2002; p. 54.

[2] **Н. Е. Бузин** «Право силы против силы права: частные военные компании в современных вооруженных конфликтах» стр. 66.

[3] **С. Минасян** «Соотношение статусов комбатантов, наемников, беженцев и ВПЛ в карабахском конфликте», 21-й ВЕК, N 1(3), 2006, стр. 118.

[4] **Ian D. Jefferies** «Private Military Companies-A Positive Role to Play in Today's International System», p.106. *https://procon.bg/system/files/01.4.08_jefferies.pdf*

կողմերից մեկին օժանդակող կազմակերպությունների դեպքում նրանց անձնակազմի կարգավիճակի հարցը դեռևս անորոշ է մնում:

Սույն հոդվածի նպատակն է հոդվածի վերնագրում նշված երկու կատեգորիաների իրավական կարգավիճակները դիտարկել միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից, մասնավորապես միջազգային բնույթի զինված ընդհարումների շրջանակներում: Այս նշումը կարևորվում է հատկապես նրանով, որ վարձկան հասկացությունը խորթ լինելով Միջազգային Մարդասիրական Իրավունքին՝ ոչ միջազգային բնույթի ընդհարումների ժամանակ, այնուամենայնիվ դիտարկվում է նաև այդ ենթատեքստում որոշ միջազգային-իրավական փաստաթղթերում[5]:

Միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից վարձկանությունը հանցագործություն չէ: Հարկ է նշել, որ միջազգային բնույթի զինված ընդհարումներին վերաբերող չորս ժնևյան կոնվենցիաներից և I-ին լրացուցիչ արձանագրությունից ընդամենը մեկ հոդված է նվիրված վարձկաններին: I-ին լրացուցիչ արձանագրության 47-րդ հոդվածը ի թիվ այլոց ներկայացնում է նաև այն կումուլյատիվ նախապայմանները, որոնց բոլորին համապատասխանելու դեպքում անձը կարող է համարվել վարձկան: Այդ չափորոշիչները ներկայացված են հոդվածի 2-րդ մասում, որտեղ նշված է, որ վարձկան համարվում է ցանկացած անձ, որը.

- Տեղում կամ արտասահմանում հատուկ հավաքագրվել է, որպեսզի կռվի զինված ընդհարման ժամանակ
- Փաստացի մասնակցում է ռազմական գործողություններին
- Ռազմական գործողություններին մասնակցում է՝ ղեկավարվելով անձնական շահ ստանալու ցանկությամբ, որին ընդհարման մեջ գտնվող կողմից կամ այդ կողմի անունից տրվել է այնպիսի նյութական վարձատրության խոստում, որն էապես գերազանցում է այն վարձատրությանը, որը երաշխավորում կամ վճարվում է տվյալ կողմի զինված ուժերի կազմի մեջ մտնող՝ այդ նույն դասի կոմբատանտներին
- Չի հանդիսանում ոչ ընդհարման մեջ գտնվող կողմի քաղաքացին, ոչ ընդհարման մեջ գտնվող կողմից վերահսկվող տարածքում մշտապես բնակվող անձ
- Չի մտնում ընդհարման մեջ գտնվող կողմի զինված ուժերի կազմի մեջ
- Չի ուղարկվել ընդհարման մեջ գտնվող կողմ հանդիսացող պետության կողմից որպես նրա զինված ուժերի կազմի մեջ մտնող անձ՝ պաշտոնական պարտականություններ կատարելու համար:

Նման սահմանումը և հոդվածի մեկնաբանությունները ցույց են տալիս, որ վարձկան համարվելու համար անձը պետք է համապատասխանի սահմանման մեջ նշված վեց կետերից յուրաքանչյուրին: Եթե վարձկանների պարագայում դա առավել քան տրամաբանական է, ապա մասնավոր ռազմական ընկերությունների անձնակազմի պարագայում հաճախ գրեթե անիրագործելի է, ինչը վկայակոչում են մի շարք արևմտյան հեղինակներ[6]: Մեկ առ մեկ անդրադառնալով վերը նշված կետերին և փորձելով նույն տրամաբանությունը կիրառել նաև մասնավոր

[5] Международная конвенция о борьбе с вербовкой, использованием, финансированием и обучением наемников от 4 декабря 1989г., UNGA Res. A/RES/44/34, вступила в силу 20 октября 2001г.

[6] **Francoise Hampson,** "Mercenaries Diagnosis before prescription", Netherlands Yearbook of International Law, Vol. 3 (1991), pp. 14-16.

ռազմական ընկերության աշխատակցի նկատմամբ իրավական տեսանկյունից կանգնում ենք անլուծելի խնդրի առջև:

Սահմանման առաջին կետում հստակ ընդգծվում է զինված ընդհարումներին մասնակցելու նպատակը, իսկ երկրորդ կետում վերահաստատվում է մասնակցությունը: Այս դեպքում առաջանում է խնդիր՝ մասնավոր ռազմական ընկերությունների որոշ տեսակների հետ, քանի որ համաձայն իրավաբանական գրականության մեջ ամենահայտնի դասակարգման, տվյալ ընկերությունները բաժանվում են 3 կատեգորիաների[7], որոնցից միայն մեկի անձնակազմի գործառույթների մեջ է մտնում ռազմական գործողություններին ուղղակիորեն մասնակցությունը: Վերոնշյալը հիմք է տալիս վստահորեն նշել, որ ռազմական խորհրդատվություն (Military consulting firms) և ռազմական օժանդակություն (Military support firms) տրամադրող ընկերությունների ներկայացուցիչները, որոնք ելնելով իրենց պայմանագրերով սահմանված ծառայությունների բնույթից չեն մասնակցում ռազմական գործողություններին, չեն կարող համարվել վարձկան միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով գործող սահմանման համաձայն: Հաշվի առնելով կազմակերպությունների տոկոսային բաշխումը կարելի է հստակորեն ասել, որ վերոգրյալ եզրակացությունը վերաբերում է մասնավոր ռազմական ընկերությունների ճնշող մեծամասնությանը, քանզի նրանց միայն փոքր հատվածն է իր աշխատակիցների միջոցով ուղղակիորեն ներգրավվում զինված բախումներին:

Երրորդ կետը սակավ խնդրահարույց է: Գաղտնիք չէ, որ մասնավոր ռազմական ընկերությունների ներկայացուցիչները իրենց ծառայություններն են կատարում վարձատրության դիմաց: Նույնքան պարզ է թվում նաև այն հանգամանքը, որ վճարումը և պայմանագրի կնքումը կատարվում են ռազմական գործողությունների մասնակից սուբյեկտի կողմից: Սակայն զինված հակամարտությունների պրակտիկան ցույց է տալիս, որ հստակ եզրակացություն կատարել բոլոր դեպքերի համար հնարավոր չէ: Այսպես, տխրահռչակ MPRI ընկերությունը համաձայն բազմաթիվ աղբյուրների[8] ռազմական օժանդակություն էր ցույց տալիս խորվաթական զինված ուժերին Հարավսլավիայում զինված ընդհարման ժամանակ, սակայն խորվաթական կողմը մինչ օրս հրաժարվում է ընդունել այդ փաստը, իսկ ընկերության որոշ ներկայացուցիչներ պնդում են, որ հրահանգներ ստացել են ԱՄՆ իշխանություններից[9], որոնք էլ պատասխանատու էին Խորվաթիայում ընկերության գործունեության համար:

Քաղաքացիության հարցն էլ ավելի թուլացնում է հնարավոր վարձկան-մասնավոր ռազմական ընկերության ներկայացուցիչ կապը: Նման կազմակերպությունների տարատեսակ պայմանագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կազմակերպությանը կարող է անդամագրվել նաև ընդհարման մասնակից պետության քաղաքացի կամ պետության կողմից վերահսկվող տարածքում մշտական բնակություն ունեցող անձ:

---

[7] **P. W. Singer.** Corporate Warriors "The Rise of the Privatized Military Industry", Ithaca, NY: Cornell University Press, 2003, p. 93.

[8] **James O'Brien**, II, "Private Military Companies: An Assessment", Naval Postgraduate School, Monterey, California, 2008; p. 38.

[9] Interview with LTG (Ret.) Soyster in Paul de la Garza and David Adams, "Military Aid…from the Private Sector series: The War in Colombia," The Special Report, St. Petersburg Times, December 3, 2000.

Վարձկանների սահմանման մեջ նշված վերջին երկու կետերի վերաբերյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ կետերում համեմատվող կատեգորիաների ներկայացուցիչները դրսևորում են գրեթե նույն մոտեցումը: Հազվադեպ են իրավիճակները, երբ մասնավոր ռազմական ընկերության անձնակազմը ներգրավված է ընդհարման կողմերից մեկի բանակի կազմում: Հիմնականում հետազոտությունները ցույց են տալիս հակառակ պատկերը, երբ կազմակերպությունը իրականացնում է իր գործառույթները պայմանագրային հիմունքներով, սակայն որևէ խնդրահարույց իրավիճակի առաջացման պարագայում հրաժարվում է տվյալ անձանց տրամադրել կոմբատանտի կարգավիճակ, ներկայացնելով նրանց որպես քաղաքացիական անձինք[10]: Նմանօրինակ փաստերը իրավունք չեն տալիս բացառել կազմակերպության անդամների հնարավոր ինկորպորացիան ընդհարման մասնակցի զինված ուժերի կազմում, սակայն թույլ են տալիս հասկանալ ոլորտի ընդհանուր պատկերը:

Ամփոփելով վերոգրյալը անհրաժեշտ է նշել, որ վարձկանների և մասնավոր ռազմական ընկերությունների աշխատակիցների կարգավիճակը նույնացնելը մեր կարծիքով կոպիտ սխալ է: Մասնավոր ռազմական ընկերության հետ պայմանագիր կնքող յուրաքանչյուր անձ՝ կախված իր գործունեության բնույթից և ռազմական ընդհարման մեջ ներգրավվածությունից կարող է ստանալ տարբեր կարգավիճակներ, սկսած քաղաքացիական անձից մինչև կոմբատանտ: Այսպիսի ընկալումը գրեթե անհնար է դարձնում հավասարության նշան դնելու հնարավորությունը երկու կատեգորիաներում ընդգրկված անձանց միջև, միայն տեսականորեն թողնելով այդպիսի տարբերակ: Ավելին, վարձկան լինելը, ինչպես նշեցինք հոդվածի սկզբում, միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից հանցագործություն չէ և միայն զրկում է անձին կոմբատանտի կարգավիճակ ստանալու հնարավորությունից, այնինչ մասնավոր ռազմական ընկերությունների բազմաթիվ անդամներ չեն էլ կատարում այնպիսի գործողություններ, որոնք նրանց հնարավորություն կտան ստանալու կոմբատանտի կարգավիճակ:

Բանալի բառեր-Վարձկաններ, մասնավոր ռազմական ընկերություն, Միջազգային մարդասիրական իրավունք, միջազգային բնույթի զինված ընդհարում, իրավական կարգավիճակ:

Նարեկ Աբգարյան, Մասնավոր ռազմական ընկերության անձնակազմի և վարձկանների իրավական կարգավիճակի հարաբերակցությունը միջազգային բնույթի զինված ընդհարումներում-Սույն հոդվածը նվիրված է մասնավոր ռազմական ընկերությունների անձնակազմի և վարձկանների իրավական կարգավիճակների հարաբերակցության վերլուծությանը միջազգային մարդասիրական իրավունքի համատեքստում: Հոդվածում վերլուծվում է «վարձկան» տերմինի սահմանումը ուսումնասիրվում է մասնավոր ռազմական ընկերությունների անձնակազմի կողմից վարձկանի կարգավիճակ ստանալու հնարավորությունը:

[10] **Gilmore, Gerry J.** 2004. "U.S. Firm Mourns Slain Employees." American Forces Press Service. (April 2, 2004). Accessed June 15, 2010 at *http://www.defense.gov/news/newsarticle.aspx?id=26932*

Нарек Абгарян, Соотношение правового статуса персонала частных военных компаний и наемников в вооруженных конфликтах международного характера- Настоящая статья посвящена анализу соотношения правового статуса сотрудников частных военных компаний и наемников в ситуации вооруженного конфликта международного характера. В статье анализируется определение термина «наемник» и рассматривается возможность получения статуса наемника сотрудниками частных военных компаний.

Narek Abgaryan,The correlation of legal statuses of private military companies' employees and mercenaries in International armed conflicts-The current article is dedicated to the analysis of the correlation of legal statuses of private military companies' employees and mercenaries in the situation of International Armed Conflict. The definition of the term «mercenary» and the possibility of getting mercenary status by the employees of the private military companies are analyzed in the article.

СОВМЕСТНЫЙ БАНКОВСКИЙ СЧЕТ КАК НОВЫЙ ИНСТИТУТ БАНКОВСКОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РА

АРТУР КОЧАРЯН

Банковское законодательство РА–динамично развивающаяся отрасль законодательства, чем и обусловлена необходимость практически постоянного процесса внесения в него изменений и его синхронизация с современными общественными отношениями. Такого рода изменения касаются не только отдельно взятых норм, но и целых гражданско-правовых институтов, которые формируются в теории и в дальнейшем внедряются в банковскую практику. Некоторые из новоявленных гражданско-правовых институтов, хотя уже внедрены в практику зарубежных стран, тем не менее, еще ждут своего формирования и внедрения в банковское законодательство РА. Среди таковых можно выделить институт совместного банковского счета, которому и посвящено данное исследование.

Институт банковского права широко практикуется в банковской системе таких высокоразвитых стран, каковыми являются ФРГ, Великобритания и США.

В общих чертах совместный банковский счет (joint bank account) можно охарактеризовать как разновидность договора банковского счета, владельцами которого являются два или более физических и юридических лиц. Как правило, совместные счеты открываются близкими родственниками, гражданскими парами, супругами, индивидуальными предпринимателями, юридическими лицами, а также лицами, у которых есть общие расходы. При этом денежные средства, находящиеся на совместном счёте, являются общей собственностью совладельцев счета, независимо от того, кто из совладельцев счета какую денежную сумму внёс в общий счет. Счёт является общим даже в том случае, когда только один из совладельцев счета вносит денежные средства на такой счет. Такой подход свойственен банковской практике Англии и Уэльса. Своеобразием отличается банковское право Шотландии, которое регулируя институт совместного банковского счета, исходит из того, что денежные средства на совместный счет принадлежит тому совладельцу счета, который внёс большую часть денежных средств на такой счёт, если из природы такого счета не вытекает, что он должен быть совместным.[1] Представляется, что вышеуказанный подход несколько непоследователен, поскольку обусловленность принадлежности совместного счета количеством денежных средств, вносимых его совладельцами, может искозить правовую природу совместного счета.

Как и любой правовой институт, совместный банковский счет имеет как свои преимущества, так и недостатки. Среди достоинств указанного института можно указать то, что совладелец счета без согласия другого совладельца не сможет совершить каких-либо банковских операций. Следовательно, совладельцы счета могут быть спокойны в вопросе, так сказать, неинформированного распоряжения денежными средствами, находящимися на совместном счете. Причем даже согласие совладельца, выданное в надлежащей форме банку для совершения в пользу

[1] *https://www.citizensadvice.org.uk/debt-and-money/banking/joint-bank-accounts/#who_can_manage_a_joint_account*

другого совладельца соответствующих банковских операций, не может стать основанием для совершения банком этих операций. Для того, чтобы банк совершил соответствующие операции, необходимо личное присутствие в банке всех совладельцев счета и их согласие на совершение банком таких операций. Любой платеж в совместный счет или возврат депозита с общего счета возможен только в том случае, если совладельцы счета подписывают совместное письменное распоряжение банку. Однако если письменное согласие было выдано в связи с тяжёлой болезнью или иных подобных обстоятельств, в результате которого совладелец счета не может лично присутствовать в банке, то осуществление банковских операций должно получить нотариальное заверение. Нетрудно заметить, что значительным образом уменьшается риск совершения одним из совладельцев счета мошеннических действий, поскольку возможен случай, когда один из совладельцев счета без ведома другого совладельца счета предоставит банку поддельный письменный документ с согласием этого совладельца счета на совершение вложенными в совместный счет денежными средствами банковских операций и завладеет всеми денежными средствами.

Еще одним преимуществом является то, что совместный счет представляет собой удобный финансовый инструмент, предоставляющий возможность совладельцам счета открывать единый общий счет и распоряжаться им в своих общих интересах. В этом аспекте наиболее удобным финансовым инструментом является семейный совместный счет.

Совместные счета открываются близкими родственниками в основном с целью избежать риска неполучения завещания, поскольку открытие совместного счёта предоставляет возможность перехода на такой счет права собственности после смерти одного совладельца счета пережившему совладельцу счёта, за исключением случаев товарищества, счетов душеприказчиков или опекунов (доверенных лиц). [2] Соответственно, совместный счёт предоставляет еще одно преимущество совладельцам такого счета.

Как показывает зарубежная практика, нередко открываются временные совместные счета лицами, вступившимися между собой в договорные отношения. Это делается в том случае, когда одна из сторон договора нуждается в обеспечении исполнения обязательства. То есть совместный счет можно рассматривать также в качестве своеобразного способа обеспечения исполнения обязательства, и такой счет обычно закрывается после совершения операций, для которых он был открыт.

Что же касается вопроса субъектного состава совместного счета, то он также является дискуссионным в теории банковского права. Одной стороной договора является, конечно же, банк, а другой - два или несколько владельцев счета. Дискуссии вызывает именно состав совладельцев счета, а именно: какие лица и в каком сочетании могут открыть совместный счет? Следует отметить, что возможно три варианта сочетания субъектного состава при открытии совместного счета.

Первый вариантом является совместный счет физических лиц, которые в некоторых зарубежных государствах называются также "семейными". Данный вид совместного счета часто можно встретить на практике по причине своего удобства. Второй вариант–совместный счет юридических лиц, который соответственно

[2] *www.gufo.me/content_eco/joint-account-obshhijsovmestnyj-schet-10562.html*

открывается компаниями, имеющими общие цели, а третий вариант–совместный счет, владельцами которого одновременно могут быть как физические, так и юридические лица.

Говоря о двух последних вариантах, по нашему мнению, необходимо отметить, что несмотря на достоинства указанных финансковых инструментов, они имеют некоторые недостатки. Так, открытие таких счетов может потенцально создать возможность осуществления легализации денежных средств, добытых преступным путем, уклонения от уплаты налогов. Среди таких недостатков А.Турбанов указывает также возможный коррупционный риск. [3] Данные риски обуславливают, по нашему мнению, необходимость внесения прямого законодательного запрета на допустимость создания такого вида совместного банковского счета.

Следует обратить внимание и на то обстоятельство, что крупные банки европейских стран не очень заинтересованы в открытии временных совместных счетов, так как они обычно используются только для одной операции, что не выгодно банкам. Этим и объясняется причина существования в зарубежных государствах специализированных компаний, которые осуществляют контроль над такими счетами как попечители. Данный подход указывает на то, что при внесении рассматриваемого института в банковское законодательство РА может появиться необходимость формирования аналогичных специализированных компаний, которые также смогут осуществить попечительский контроль над этими счетами. На наш взгляд появление новых субъектов в банковском обороте в лице специализированных учреждений только создаст дополнительные сложности в развитии банковской деятельности. Поэтому законодатель должен формировать такую нормативную основу в этой сфере, чтобы банки РА также были заинтересованы в открытии своими клиентами совместных счетов.

Несмотря на то, что такой банковский счет называется совместным, рассматривать его в качестве общей совместной собственности не представляется верным. Такой подход имеет следующее объяснение. Часть 2 статьи 198 ГК РА указывает, что распоряжение имуществом, находящимся в совместной собственности, осуществляется по согласию всех участников, независимо от того, кем из участников заключается сделка по распоряжению имуществом. При этом совместным банковским счетом можно распоряжаться, как было уже указано, только с непосредственного согласия всех владельцев счета, а в исключительных случаях- в нотариальном порядке. Однако это еще не означает, что совместный банковский счет можно отнести к общей долевой собственности, поскольку владельцы совместного банковского счета обладают правом собственности не на долю счета, а на весь счет. При этом собственники общей долевой собственности имеют право преимущественного права покупки доли, а применение такого права в отношениях, возникающих между владельцами совместного счета, не представляется возможным, потому что покупка счета будет представлять собой покупку денежного эквивалента денежным эквивалентом, а это нонсенс с правовой точки зрения. То есть можно свободно утверждать, что совместный банковский счет представляет собой специфический вид общей собственности.

---

[3] *http://www.finmarket.ru/news/2989247*

Таким образом, исследование правовой природы совместного банковского счета позволяет прийти к выводу, что включение института совместного счета в армянское банковское законодательство может сыграть весьма положительную роль в развитии инвестиционной политики РА. Естественно, при этом должна быть учтена и специфика армянской банковской системы. Тем не менее, лишь прямая практика банков позволит представить целостную картину тех счетов, которые будут востребованы, и разработать адекватную нормативную основу для их регулирования.

Обобщая вышесказанное, можно сделать следующее предварительное заключение:

Во-первых, необходимо разработать определение договора совместного банковского счета и включить его в ГК РА. Например, дефиниция может иметь следующую редакцию:

По договору совместного банковского счета одна сторона (банк) обязуется принимать и зачислять денежные средства двух или нескольких совладельцев счета на их совместный счет, а также выполнять распоряжения совладельцев счета о выдаче соответствующих денежных средств со счета либо проведения других операций по счету.

Во-вторых, необходимо закрепить законодательный запрет на возможность создания совместных банковских счетов юридическими лицами, а равно совместно как физическими, так и юридическими лицами в силу своей нецелесообразности, поскольку, как было уже отмечено, данная правовая конструкция предоставляет возможность совершения злоупотреблений через уклонение от налоговых платежей, легализации денег, добытых преступным путем, а также повышает риск осуществления любых махинаций коррупционного характера.

В-третьих, с учётом законодательства зарубежных государств необходимо конкретно установить в гражданском и банковском законодательстве РА условия использования такого вида банковского счета.

И наконец, в-четвёртых, армянские банки должны провести большую работу в целях обеспечения необходимого технического и юридического уровня, чтобы представить своим клиентам на рынке банковских услуг опцию по открытию совместного счета. В этом контексте немаловажна роль Центрального Банка РА, который должен своими инструкциями установить порядок открытия и закрытия совместного банковского счета во избежание трудностей у банков при применении новых норм о совместных счетах.

Литература:

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 05.05.1998 թ.)

2. Консультант Плюс: Правовые новости. Специальный выпуск "Комментарий к проекту изменений Гражданского кодекса Российской Федерации", ст. 860 проекта ГК РФ.

3. *https://www.citizensadvice.org.uk/debt-and-money/banking/joint-bank-accounts/#who_can_manage_a_joint_account*

4. *http://www.center-bereg.ru/b2324.html*

5. *http://www.finmarket.ru/news/2989247*

6. *http://www.reglament.net/bank/legal/2014_1/get_article.htm?id=3116*
7. *https://www.bankofamerica.com/deposits/manage/joint-bank-account.go*
8. *http://www.gufo.me/contenteco/joint-account-obshhijsovmestnyj-schet-10562.html*

Ключевые слова-совместный банковский счёт, совладелец счета, банк, денежные средства.

Артур Кочарян, Совместный банковский счет как новый институт банковского законодательства РА-В статье рассматривается правовая природа совместного банковского счета с учётом зарубежного развитого правового опыта и практики. Наряду с этим указываются также наиболее значимые достоинства и недостатки института совместного банковского счета как специфического финансового инструмента. В результате проделанной работы автор приходит к выводу о необходимости внедрения института совместного банковского счета в банковское законодательство РА.

Արտուր Քոչարյան, Համատեղ բանկային հաշիվը որպես ՀՀ բանկային օրենսդրության նոր ինստիտուտ-Հոդվածում ուսումնասիրվում է համատեղ բանկային հաշվի իրավական բնույթը: Դրա հետ համատեղ նշվում են նաև համատեղ բանկային հաշվի ինստիտուտի որպես յուրահատուկ ֆինանսային գործիքի առավել նշանակություն ունեցող թերությունները և առավելությունները Հիմք ընդունելով արտասահմանյան զարգացած փորձն ու պրակտիկան հեղինակի կողմից առաջարկություն է արվում համատեղ բանկային հաշվի ինստիտուտը ՀՀ բանկային օրենդրություն ընդգրկելու վերաբերյալ:

Artur Kocharyan, The joint bank account as a new institute of the banking legislation of RA-This article examines the legal nature of joint bank account with regard to foreign developed legal experience and practice. At the same time the most significant advantages and disadvantages of joint bank account as a specific financial instrument are also noticed. In the paper, the author underlines the necessity of introduction of institute of joint bank account in the banking legislation of RA.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, ՆԱԻՐԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

Ընտանիքի ինստիտուտի ձևավորումն իր մոտավոր մեկնարկային կետն ունի: Հնագույն տեքստերն ու դիցաբանական ավանդազրույցները չեն ընտանիքի կայացման պատմության մասին մեր գիտելիքների սկզբնաղբյուրները: Ընդհանուր առմամբ դիցաբանական տեքստերը առավել հաճախ ուղղված են ոչ այնքան ընտանիքի, որքան զգայական սիրո թեմային: Այլ կերպ ասած, «Եթե ընտանեկան հարաբերությունները մեկնաբանենք որպես հասկացություն, որը ծնվել է մարդու և ընտանիքի պատմության մտավոր ռեֆլեքսիայի արդյունքում, ապա դրա ակունքները հասնում են ընդհուպ մինչև Պլատոնի, Արիստոտելի, Պլուտարխի, Մ. Մոնտենի, Ի. Կանտի, Հ. Հեգելի, Ա. Շոպենհաուերի, Պ. Ֆլորենսկու, Վ. Ռազանովի և այլոց փիլիսոփայական իմաստությանը»[1]: Լ. Շնայդերի կարծիքի համաձայն, ժամանակակից հոգեբանության մեջ առանձնացնում են ընտանիքի ինստիտուտի ուսումնասիրման հինգ ուղղություն. զարգացման, գործառույթային, ծագումնաբանական, փորձարարական և գիտական:

Ա) Ընտանիքի ուսումնասիրման մեջ զարգացման ուղղությունն ընդհանուր առմամբ ներկայացված է այս ուղղության երկու հիմնադիրների՝ Ի. Յ. Բախովենի և Ջ. Մակլեննանի կողմից: Մասնավորապես, 19-րդ դարի կեսերին, իսկ ավելի ստույգ, 1861 և 1865 թվականներին երկու մենագրություններ լույս տեսան. Ի. Յ. Բախովենի «Մայրական իրավունք» և Ջ. Մակլեննանի «Նախնադարյան ամուսնություն» մենագրությունները: «Զարգացման մոտեցումը բխում է նախասկզբնական հանրամուսնությունից, որը մեղմանում էր մայրական տարամուսնական տեհմով»[2]: Զարգացման ուղղության գաղափարը կայանում է նրանում, որ աննկատ սեռական հարաբերություններին աստիճանաբար փոխարինելու է գալիս մոնոգամ ամուսնությունը: Պոլիգամիան իհարկե միջանկյալ փուլ է հանդիսանում հանրամուսնության և մոնոգամ ամուսնության միջև: Այսպիսով, մենք կարող ենք առանձնացնել զարգացման մոտեցման հետևյալ սխեման. Հետերիզմ (որևէ կերպ չսահմանափակված սեռական հարաբերություններ, հանրամուսնություն)-պոլիգամիա-մոնոգամիա: «Մարդկության կայացման սկզբնական փուլերում գոյություն ունեին ոչինչով չսահմանափակվող սեռական հարաբերություններ կամ հետերիզմ: Այդպիսի հարաբերությունները բացառում են հորը հավաստիորեն բացահայտելու ցանկացած հնարավորություն, ինչի արդյունքում ծագումը կարելի էր որոշել միայն մոր կողմից: Հին ժողովուրդների շրջանում, մայրական իրավունքի համաձայն, կանայք, որպես երիտասարդ սերնդի միակ, հավաստիորեն հայտնի ծնողներ, մեծ, ընդհուպ մինչև ամբողջական իշխանության հասնող (գինեկոկրատիա) հարգանք էին վայելում: Տվյալ հայեցակարգը զարգացնելիս հետազոտողները հետևել են նախասկզբնական հանրամուսնու-

[1] **Шнейдер Л. Б.** Семейная психология М.Академический прект, 2006. с.13.

[2] Նույնը, էջ 15:

թյան տեսությանը, որն արդյունքում փոխարինվեց էկզոգամ մայրական ցեղով»[3]: Ռուս հետազոտող Պ.Ա.Սորոկինը թվարկում է զարգացման ուղղության գլխավոր դրույթները.

1) Ժողովուրդների մեծամասնության մոտ մայրական գծով ազգակցության հաշվարկը նախորդել է հայրական գծով ազգակցությանը:

2) Մոնոգամ հարաբերությունների հետ միասին հաճախ կարելի էր հանդիպել նաև հետերիզմ:

3) Ամուսնության ինստիտուտի զարգացումը կապված է սեռական ազատությունը սահմանափակելու, այսինք տաբուի հետ:

4) Ամուսնության ինստիտուտի զարգացումը կարող է հանգեցվել անցմանը՝ խմբային ամուսնությունից դեպի մոնոգամ ամուսնության[4]:

Բ) Ընտանիքի ուսումնասիրման ֆունկցիոնալ (գործառույթային) ուղղությունը ներկայացված է Է. Դյուրկգեյմի կողմից, սակայն այս ուղղությունն ունի իր հետևորդները: Այս ուղղությունը հակիրճ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ «ֆունկցիոնալ մոտեցման համաձայն ընտանեկան հարաբերությունները ընտանիքի կենսակերպի և ընտանեկան դրվածքի ածանցյալներն են, պայմանավորված են ընտանիքի սոցիալ-մշակութային գործառույթներով և կառուցվում են ամուսնության, ազգակցության, ծնող լինելու հետ կապված դերերի սոցիալ-մշակութային համակարգի հիման վրա»[5]: Ֆունկցիոնալ մոտեցումը մենք կանվանեինք ավանդական մոտեցում, ելնելով դրա հիմնական դրույթների վերլուծությունից: Այդպես, այս մոտեցման համաձայն, ընտանիքը լիարժեք է համարվում, եթե առկա է հղիության կամ երեխայի ծննդյան փաստ: Բացի այդ, ֆունկցիոնալ մոտեցման դեպքում դիտվում է կնոջ ծնողների որոշմամբ, այլ ոչ ինքնակամ կատարված ընտրության բացասական ազդեցությունը ընտանեկան հարաբերությունների կայունության վրա: Այսինքն, այն դեպքերում, երբ սոցիալ-մշակութային պատվերները մերժվում են ի օգուտ միջանձնային նախապատվությունների, ամուսնությունը չի կարող կայուն լինել: Ըստ Ու. Օգբորգի, անցումը «Ընտանիք-ինստիտուտից» դեպի «ընտանիք-ընկերություն», հղի է ամուսնալուծությունների մեծ ռիսկով:

Գ) Ծագումնաբանական ուղղություն. «Ծագումնաբանական ուղղության համաձայն պատմական փուլը ամուսնական հարաբերությունների չորս հիմնական համակարգեր է տվել մարդկությանը.խմբային ամուսնություն, պոլիգինիա (մի տղամարդ և մի քանի կին), պոլիանդրիա (մի կին և մի քանի տղամարդ) և մոնոգամիա (մի տղամարդ և մի կին), ընդ որում, վերջինս երկու ձև ունի. ցմահ և ամուսնալուծություն թույլատրող»[6]: Խմբային և մոնոգամ ամուսնությունները երկար ժամանակ համերաշխ գոյատևել են: Ավելին, որոշակի մասնագիտությունների տեր մարդկանց համար առավել հարմար էր ամուսնության կոնկրետ ձևը: Այսպես, օրինակ, հողագործներին ավելի հարմար էր մոնոգամ ամուսնությունը, իսկ քոչվոր-անասնապահներին՝ պոլիգինիան:

Դ) Փորձարարական (Էմպիրիկ) ուղղություն. «Էմպիրիզմի համաձայն, ընտանիքը դիտարկվում է որպես իր պատմությունն ունեցող փոքր սոցիալական խումբ, որն ունի իր ծագման, ֆունկցիոնալության և քայքայման պատմությունը:

---

[3] **Коваль Н.А**. Психология семьи и семейной дезадаптивности Тамбов, Изд. ТГУ, 2007г. с. 13.

[4] **Шнейдер Л.Б.** Семейная психология М.Академический прект, 2006, с.16.

[5] Նույնը, էջ 16:

[6] **Шнейдер Л.Б.** Семейная психология М.Академический прект, 2006, с.17.

Ընտանեկան հարաբերությունները կառուցվում են ընտանիքի անդամների հուզական մտերմության, նրանց պահանջմունքների և մղումների հիման վրա»[7]:

Ե) Գիտական ուղղությունը ներկայացված է այնպիսի հեղինակներով, ինչպիսիք են Ու. Ջեյմսը, Չ. Կուլին, Ժ. Պիաժեն, Զ. Ֆրեյդը, Ու. Թոմասը և այլք: «Միջանձնային հարաբերությունները, Ես և Ուրիշը, մտերիմ հարաբերությունների նշանակալի բնույթը, ընտանիքը՝ որպես «համագործակցող անձանց միասնություն», ընտանեկան գործունեության խանգարումը, ամուսնական համաձայնությունները, ընտանեկան արժեքների համաձայնեցումը, ընտանիքի կառուցվածքային կազմակերպությունը, ընտանեկան արժեքների գործունեությունը. ահա սոցիալ-հոգեբանական ուղղության բանալի պահերը»[8]:

Ընտանիքի ինստիտուտի ուսումնասիրման բոլոր թվարկված ուղղությունները ընտանիքի ձևավորման երկարատև պատմության արդյունքն են: Այդ իսկ պատճառով խնդրի դիտարկման պատմական համատեքստի պահպանման նպատակով համառոտ կանդրադառնանք այդ պատմությանը: Որքանով հնարավորություն են տալիս դատողություններ անելու պատմական և սոցիոլոգիական աղբյուրները, կարելի է ենթադրել, որ ընտանիքի, դրա, որպես սոցիալական ինստիտուտի կայացման սկիզբը, կարելի է տեսնել էկզոգամիայի հաստատման մեջ: «Էկզոգամիան, այսինքն սեռական զուգընկերներին ցեղից դուրս փնտրելու պահանջը ագամիայի՝ ցեղի ներսում սեռական հարաբերություններ ունենալու արգելքի ածանցյալն է: Իրականում ագամիան իրենից ներկայացնում է ցեղի անդամների միջև ինչպես ամուսնական, այնպես էլ արտամուսնական սեռական հարաբերությունների արգելք և հանդիսանում սեռերի միջև հարաբերությունները կարգավորող նախադասակարգային հասարակության հիմնական ձևը»[9]:

Բացի այդ, նախնադարյան կամ ցեղային հասարակությունում խորը կապ է գոյություն ունեցել էկզոգամիայի և տոտեմիզմի (տոտեմականության) միջև: «Գրեթե ամենուր, ուր տոտեմ կա, օրենք գոյություն ունի. միևնույն տոտեմի անդամները չպետք է սեռական հարաբերությունների մեջ մտնեն միմյանց հետ, հետևաբար, չեն կարող միմյանց հետ ամուսնանալ: Հենց դա էլ տոտեմի հետ կապված էկզոգամիան է»[10]:

Նախնադարյան հասարակության կողմից հաստատվող օրենքներն իրենցից ներկայացնում են ցեղի բարգավաճմանը նպաստող վարքի որոշակի կանոնների համակարգ: Զ. Լ. Ստարովիչը համոզիչ կերպով պնդում է, որ սեռական հարաբերությունների ոլորտում մշակույթը արժեքների և արգելքների համակարգ է ձևավորում: Հենց մշակույթն է կարգավորում սեռական վարքը, սեռային հավասարության մոդելները: «Մշակույթը կարգավորում է սեռական վարքը, զուգընկերների համագործակցության ոճը, այն որոշակի կարգավորման է ենթարկում մարդու սեռական բնույթն ի օգուտ հասարակության, ընտանիքի և ամուսնության»[11]: Նույն գաղափարն է արտահայտում նաև Ն. Ա. Կովալը, ըստ նրա նախնադարյան մարդկանց խմբերը ստիպված են եղել հարմարվել կյանքի ֆիզիկական և սոցիալական պայմաններին, նորմերին և արժեքներին: Հասարակությունը վավերացնում է սոցիալական հարաբերությունների այն ձևերը, որոնք

[7] Նույնը, էջ 17:

[8] **Шнейдер Л. Б.** Семейная психология М.Академический прект, 2006, с.19.

[9] **Коваль Н.А.** Психология семьи и семейной дезадаптивности Тамбов, Изд ТГУ, 2007г. с.14.

[10] **З. Фрейд.** Толкование сновидений. «Эксмо», М., Санкт-Петерпург, 2007. с.902.

[11] **З. Л. Старович.** Секс в культурах мира. М.»Мысль» 1991 г. с.10.

նպաստում են իր անդամների գոյատևմանն ու զարգացմանը: Ամուսնության առաջին ձևերից մեկը, որը կրում է «խմբային ամուսնություն» անունը, ենթադրում էր խմբային պատասխանատվություն սննդի և երեխաների դաստիարակության հարցում: Մենք գործ ունենք «խմբային ծնող» հասկացության հետ, այսինքն, երբ ծնողի գործառույթները տարածվում են կոնկրետ ցեղի կամ կոնկրետ տոտեմի բոլոր տղամարդկանց և կանանց վրա: «Դա նշանակում է, որ յուրաքանչյուրը հայր է անվանում ոչ միայն իր ծնողին, այլև ցանկացած այլ տղամարդու, ով ցեղի օրենքներին համաձայն կարող էր ամուսնանալ իր մոր հետ և այդպիսով դառնալ իր հայրը: Իր ծնողից բացի նա մայր է անվանում ցանկացած կնոջ, ով ցեղի օրենքների համաձայն կարող էր դառնալ իր մայրը: Նա քույր, եղբայր է անվանում ոչ միայն իր իրական ծնողների երեխաներին, այլև բոլոր նրանց երեխաներին, ովքեր կարող էին ծնողի դեր ստանձնել իր նկատմամբ և այլն: Այս դասակարգող համակարգի հետ կապն արտացոլվում է մանկական խոսքում, երբ երեխային ստիպում են հայրիկի կամ մայրիկի յուրաքանչյուր ընկերոջը անվանել «քեռի», «մորաքույր», կամ փոխաբերական իմաստով, երբ մենք խոսում ենք եղբայրների մասին՝ Ապպոլոնում և քույրերի մասին՝ քրիսոնեության մեջ»[12]:

Ըստ Էության այդ արխաիկ երևույթի հետքը հստակորեն կարելի է տեսնել մեր հայկական սոցիալական միջավայրում, երբ պատանիները ընդհանրապես իրենց անծանոթ աղջիկներին քույր են անվանում: Խոսքի այս դարձվածքներն իրենցից այլ բան չեն ներկայացնում, քան խմբային ամուսնության արխաիկ հետքեր:

«Այս խմբային ամուսնության երեխաները հիմքեր ունեն միմյանց դիտելու որպես քույրեր ու եղբայրներ, թեև նրանք միևնույն մորից չեն ծնվել և խմբի բոլոր տղամարդկանց իրենց հայրերն են համարում»[13]:

Ազգակցությունն ինչպես հայտնի է, հաստատվում էր մոր կողմով, քանզի անհնար էր հավաստիորեն սահմանել հայրությունը: Սոցիալական էվոլյուցիան հանգեցրել է խմբային ամուսնության արտամղմանը, իր տեղը զիջելով զույգային ամուսնությանը: «Այսպիսով ընտանիքի առաջին ձևը դիտարկվող զույգային կապերում կոլեկտիվ տնտեսության և էկզոգամ-էնդոգամ ամուսնական հարաբերությունների վրա հիմնված մայրական տոհմն է: Առանձնացնում են նախնադարյան շրջանի ամուսնա-ընտանեկան հարաբերությունների հետևյալ տեսակները.

1. Անտրոհելի ընտանիք, որը բաղկացած է ազգակիցների խմբից: Այստեղ կանայք և երեխաները որոշակի ամուսին կամ հայր չունեին, նրանք պատկանում էին խմբի բոլոր տղամարդկանց:

2. Սեգմենտային ընտանիք, որտեղ ընտանիքի ղեկավարն առանձին կանայք ունի (եղբայրներն ընդհանուր կանայք ունեն, իսկ կանայք՝ ընդհանուր ամուսիններ):

3. Անհատական ընտանիք, որում դադարեցված է կանանց ընդհանրությունը: Յուրաքանչյուր տղամարդ մեկ կամ մի քանի կին ունի (մոնոգամիա, պոլիգինիա) կամ կինը մի քանի ամուսին ունի (պոլիանդրիա)»[14]: 19-20-րդ դարերի հետազոտողների մեծամասնությունը, այդ թվում նաև Զ. Ֆրեյդը, Է. Վեստերմարկը, Լ. Մորգանը, խմբային ամուսնության առաջնային գոյության և անհատական

[12] **З.Фрейд.** Толкование сновидений. «Эксмо», М., Санкт-Петерпург, 2007. с. 904.

[13] **З.Фрейд.** Толкование сновидений. «Эксмо», М., Санкт-Петерпург, 2007. с. 905.

[14] **Коваль Н.А.** Психология семьи и семейной дезадаптивности Тамбов, Изд ТГУ, 2007 г. с.16.

ամուսնությամբ դրա փոխարինման վերաբերյալ մեկ ընդհանուր մտքի են հանգում: Զարգացման ընթացքում մենք դիտարկում ենք հայրիշխանության ձևավորումը ընտանիքի ինստիտուտում (հաշվարկը տղամարդկային ազգակցական կապերից և տղամարդկային ժառանգական իրավունք): Հայրիշխանությունը, օրինաչափորեն դուրս է մղել մինչ այդ գերիշխող կնոջ դերը: Հայրիշխանությունը, այսինքն հոր իշխանությունն ու նրա ժառանգական իրավունքը փոխեցին ընտանիքի սոցիալ-հոգեբանական կարգավիճակը: Ընտանիքի հայրն առաջին հերթին կերակրողն է, և դրա հետևանքով իշխանությամբ օժտված կերպար: Ընտանիքում երեխաները ուղղակի կախվածության մեջ են գտնվում հորից, առաջին հերթին տնտեսական առումով, իսկ դա նշանակում է, որ նրանք կախված են ցանկացած հարցում: Այս հանգամանքը հորը հնարավորություն էր տալիս ինքնուրույն որոշել երեխաների ճակատագրերը, իսկ մասնավորապես, ամուսնության հետ կապված հարցերը: «Որդիները, անկախ տարիքից և աշխատանքում իրենց մասնակցության աստիճանից, խնամարկյալի կարգավիճակում էին գտնվում և տնտեսական կախվածության մեջ էին հորից: Աղջիկները, մինչ ամուսնությունը կախված էին հորից, իսկ ամուսնությունից հետո՝ ամուսիններից: Նրանց ամուսնության հարցը հաճախ որոշվում էր առանց իրենց մասնակցության: Ամուսնությունը երկու ընտանիքների ղեկավարների միջև կնքվող գործարք էր: Ամուսնանալուց հետո, կինը, որքան էլ որ վատ դասավորվեին նրա հարաբերություններն ամուսնու հետ, որպես կանոն զրկված էր ամուսնալուծվելու հնարավորությունից»:[14]: Իրականում, ֆեոդալական ժամանակաշրջանում կնոջ՝ ամուսնալուծման իրավունքն առհասարակ գոյություն չուներ: Ձևականորեն կինն ուներ այդ իրավունքը, սակայն այդ հարցը միայն ամուսինն էր որոշում: Հայրիշխանական ընտանիքում ազգակցության մակարդակը սահմանվում էր ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալական չափանիշով: Տղամարդը կարող էր ունենալ մինչամուսնական և արտամուսնական երեխաներ, նրա պարտականության մեջ չէր մտնում վերջիններիս խնամքն ու դաստիարակությունը: Եթե երեխան ընտանիքի կազմի մեջ չէր, ապա տղամարդն իր վրա պատասխանատվություն չէր վերցնում: Այսպիսով, որոշիչ կարող էր լինել ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալական չափանիշը: Ինչպես ընդգծում է Ն.Ա.Կովալը, սոցիալական և կենսաբանական հայրությունը նույնական չեն: Ժամանակակից աշխարհում այս խնդիրն ըստ էության նույն հնչեղությունն ունի: Այսօր ևս, արտամուսնական երեխաները հայտնվում են հայրական խնամքի և պատասխանատվության մյուս կողմում: Արդեն Նապոլեոն Բոնապարտի ժամանակներում, հայրության ճանաչման հարցը սկսեց կարգավորվել կայսեր հրամանի համապատասխան: Այդ հրամանում կոնկրետ ասվում էր այն մասին, որ երեխայի հայրը հանդիսանում է ամուսինը, եթե երեխան ծնվել է ընտանիքում, և ոչ մի դեպքում այլ կերպ: Արտամուսնական երեխաները չէին կարող հավակնել կենսաբանական հոր կողմից ճանաչմանն ու ընդունմանը: Դրա հետ կապված, լիովին հասկանալի է դառնում այն փաստը, որ տղամարդը մանրազնին հետևում էր իր կնոջ սեռական վարքին, թույլ չէր տալիս այլ կապեր, քանզի այլ կերպ հայրության հարցը կասկածի տակ էր դրվում: Թեև, ինչպես տղամարդկանցից, այնպես էլ կանանցից ամուսնական հավատարմություն էր պահանջվում: Այնուհանդերձ, հասարակության կրկնակի բարոյականությունը գրեթե միշտ այդ հավատարմությունը պահանջում էր

[14] **Коваль Н.А.** Психология семьи и семейной дезадаптивности Тамбов, Изд. ТГУ, 2007 г. с.18

բացառապես կանանցից: Տղամարդն ազատ էր իր արտամուսնական հարաբերություններում: Սեռական կյանքի սահմանափակումները վերաբերում էին ինչպես տղամարդուն, այնպես էլ կնոջը, սակայն իրականում, տղամարդը կանանց հետ հարաբերություններում ոչ ֆորմալ հենվում էր պոլիգամ դիրքորոշման վրա: Նույնիսկ մոնոգամ ամուսնություն ունենալով հանդերձ, տղամարդը գաղտնի պահպանում էր հայրիշխանական պոլիգամ հարաբերությունները: «Հայրիշխանական ամուսնության մոնոգամ ձևի դեպքում տղամարդու և կնոջ միջև այդ առումով հավասարություն կա: Ոչ միայն կինը կարող է մեկ ամուսին ունենալ, այլև տղամարդը՝ միայն մեկ կին: Սակայն այդ հավասարությունը հաճախ ձևական բնույթ էր կրում: Այն հասարակություններում, որտեղ իշխում է միամուսնությունը, ամուսնիների իրական վիճակն անհավասար էր, քանզի հավատարմության պահպանումը պարտադիր էր համարվում միայն կնոջ համար:

Այդպես, սեռերի հարաբերությունները կարգավորող բարոյական նորմերը փաստացիորեն վարքի կանոններ էին, որոնք պարտադիր էին միայն կանանց համար: Տղամարդը սեռական բավական մեծ ազատություն ուներ, նրան միշտ թույլատրվում էին մինչամուսնական և արտամուսնական կապեր»[15]:

Արդեն սկսած 18-րդ հարյուրամյակից Եվրոպայում սահմանվեց բանտային ազատազրկումը՝ որպես ամուսնական հավատարմությունը խախտած կանանց պատժամիջոց: Ինչ վերաբերում է տղամարդկանց, ապա ձևականորեն, նրանք ևս պետք է դավաճանության համար պատիժ կրեին, սակայն այն դեպքում, երբ սիրուհին ապրում էր իր ընտանիքի հետ միևնույն տանը: Եվ նույնիսկ այդ դեպքում բանտային ազատազրկումը չէր սպառնում տղամարդուն, նա ազատվում էր տուգանքով: Դժվար չէ կռահել, որ հազվադեպ տղամարդը սիրուհուն իր տանը կպահեր: Ըստ էության, դա նշանակում է, որ տղամարդը պետության կողմից սահմանված սեռական ազատություն ուներ: «Հայրիշխանությունը, որպես հայրական կողմով ազգակցական հարաբերությունների կազմակերպման ձև, փոխարինելու եկավ մայրիշխանական հարաբերություններին, որը նշանավորեց ըստ գերիշխանության տեսակի՝ ամուսինների հարաբերությունների անհավասարությունը սահմանող շրջադարձը՝ մոր (կնոջ) ենթարկումը և հոր (տղամարդու) գերիշխող դիրքը ընտանիքում: Մասնավոր սեփականության հարաբերությունների զարգացումը հանգեցրել է հայրիշխանական մոնոգամ ընտանիքի ամրապնդմանը՝ որպես հասարակության սոցիալական կազմակերպմանը առավելագույնս համապատասխանող ամուսնա-ընտանեկան հարաբերությունների կարգավորման ձև»[16]: Թեև ժամանակակից աշխարհում որոշակի մշակույթներում դեռևս պահպանվել է հայրիշխանական ընտանիքը, այնուհանդերձ, ընտանիքի այս ձևն աստիճանաբար իր տեղը զիջում է սոցիալ-մշակութային այլ ձևերին: Կապիտալիզմն իր արմատական փոփոխությունները մտցրեց ընտանիքի ինստիտուտ, կնոջը պարգևելով տնտեսական անկախության հնարավորություններ, և դրանով իսկ թուլացրեց նրա համընդհանուր կախվածությունը ամուսնուց: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունները փոփոխությունների ենթարկվեցին ոչ միայն տնտեսական տեսանկյունից: Կանանց իրավունքները սկսեցին նշանակալիորեն ընդարձակվել՝ հավասարվելով տղամարդկանց իրա-

[15] **Коваль Н.А.** Психология семьи и семейной дезадаптивности Тамбов, Изд ТГУ, 2007 г. с. 19-20.

[16] **Карабанова О. А.** Психология семейных отношений и основы семейного консультирования: Учебное пособие.-М.: Гардарики, 2005. с.16.

վունքներին: Քաղաքակրթության պատմության մեջ աշխատուժը վաճառելու հնարավորության հայտնվելուն զուգընթաց ընտանիքում ղեկավարման հարցը մեխանիկորեն անկում ապրեց: Ընդ որում, դա վերաբերում էր ոչ միայն կնոջ և ամուսնու, այլև հոր և երեխաների հարաբերություններին: Երեխաները ձեռք էին բերում տնտեսական, հետևաբար նաև սոցիալական անկախություն հորից, քանզի կարող էին վաճառել իրենց աշխատանքը: Եթե նախկինում հոր իշխանությունն առաջին հերթին որոշվում էր նրանով, որ վերջինս պահում էր երեխաներին, ապա այժմ երեխաներն իրենք կարող էին պահել իրենց և դրանով, սոցիալական ազատություն էին ստանում:

Ընտանիքում կնոջ դիրքը փոխվում էր, բայց միաժամանակ, նրա դիրքը փոխվում էր նաև հասարակությունում: Տնտեսական ազատությունն իրենից ներկայացնում է սոցիալական ինքնավարություն զգալու հնարավորություն: Կնոջ սոցիալական նոր՝ տղամարդուց տնտեսապես անկախ կարգավիճակը փոփոխություններ էր մտցնում նաև նրա վարքում: Կինը, տնտեսական ազատություն ստանալով չէր կարող ստրկացած մնալ կյանքի այլ ոլորտներում: Սոցիալական կարգավիճակի փոփոխությունն ըստ էության, կյանքի հայրիշխանական դրվածքի ճնշման, սահմանափակման փաստ էր: Տղամարդը կորցնում էր իր հեղինակավոր իշխանությունը: Բացի այդ, ամուսնական ընտրության հարցերում կինը նույնպես ազատություն էր ստանում, այսինքն ձեռք էր բերում ամուսնական ընտրության սուբյեկտի կարգավիճակ: «Ավանդական տեսակետի համաձայն, ընտանիքի տեսակի և կառուցվածքի ձևափոխումը տեղի է ունենում ֆեոդալական հասարակությունից բուրժուականի անցման ժամանակ և կապված է արդյունաբերական հեղափոխության, գյուղական տեղանքներից դեպի քաղաք բնակչության արտագաղթի գործընթացների և «անհատական ծնողի» հասկացության առաջացման հետ՝ որպես աճող սերնդի սոցիալականացման կարևորագույն ուղի: Այս գործընթացների արդյունքն անցումն է «բազմակորիզ» հայրիշխանական ընտանեկան խմբերից դեպի փոքր նուկլեար ընտանիքներ: Հետագա արդյունաբերացմանն ուրբանիզացիայի ընթացքում տեղի է ունենում նոր սերնդի սոցիալականացման ժամանակաշրջանի ընդարձակում, և ընտանիքի՝ որպես առաջնային սոցիալականացման ինստիտուտի կարգավիճակի հաստատում: XIX-XX-րդ դարերի սահմանաեզրին ձևավորված «Ժամանակակից» ընտանիքը մի շարք առանձնահատկություններ ունի, որոնք արտացոլում են հասարակության պրոգրեսիվ զարգացման նվաճումներն ու օրինաչափությունները»[17]: Ընտանեկան ինստիտուտի զարգացման վերլուծությունը թերի կլիներ առանց ծագումով լեհ, հայտնի անգլիացի հնէաբան Բ. Մալինովսկիի տեսության: Հարցը նրանում է, որ ընտանեկան ինստիտուտի հիմքերն ու նրա զարգացումը հասկանալու համար անչափ կարևոր է կանգ առնել նաև հնէաբանական գիտելիքների վրա: «Որպես հնէաբան՝ ես միանգամայն համոզված եմ, որ վայրի ցեղերին վերաբերվող ամբիցիոզ տեսությունները, մարդկության ինստիտուտների ծագումնաբանական վարկածները և մշակույթի պատմությունը պետք է հիմնըված լինեն նախադարյան կյանքի հավաստի

[17] **Карабанова О.А.** Психология семейных отношений и основы семейного консультирования: Учебное пособие.-М.: Гардарики, 2005, с.16.

գիտելիքների, ինչպես նաև մարդկային գիտակցության գիտակցական և անգիտակցական ասպեկտների վրա»[18]:

Ընտանեկան ինստիտուտի ուսումնասիրման հետ կապված Բ. Մալինովսկին առաջադրում է 2 խնդիր.

- ընտանեկան կյանքը մարդու համար ունի ճակատագրական նշանակություն
- ընտանիքի կազմությունը փոփոխվում է քաղաքակրթության բնույթից ելնելով:

Բացի այդ, տարբեր սոցիալական դասակարգերում այդ կազմությունը տարբեր է: Մարդկության զարգացման գործընթացի ընթացքում ընտանիքը խորքային փոփոխությունների է ենթարկվում: Եթե կարելի է առանձնացնել ընտանիքի առաջնային ձևը, ապա դա, համաձայն Բ.Մալինովսկիի՝ սեքսուալ և տնտեսական կոմունիզմի վրա հիմնված անկանոն սեռական հարաբերությունների ձևն է: Այնուհետև, նա առանձնացրեց. խմբային ընտանիքը՝ հիմնված խմբային ամուսնությունների վրա, արյունակից ընտանիքը, ժամանակակից անհատական ընտանիքը՝ հիմնված մոնոգամ ամուսնության վրա և **patria potestas** (հայրիշխանականը):

«Տարբերությունը կախված է իշխանության բաշխման ձևերից: Այս կամ այն չափով հոր վրա ամրակցվածությունը ի հայտ է բերում հայրիշխանության տարբեր ձևեր, լինելով ամրակցված մոր վրա՝ մայրական իրավունքի տարբեր ենթատեսակներ: Ակնհայտորեն տարբերվումեն ծագման և ժառանգման տեսակավորման միջոցները. Մայր-ուղղվածություն՝ հորը չիմանալու արդյունքում և հայր-ուղղվածություն՝ հաշվի չառնելով նրա անհայտ լինելը: Հայր-ուղղվածություն՝ իշխանության ձեռքբերման հետևանքով և հայր-ուղղվածություն՝ տնտեսական պատճառների հետևանքով: Բացի այդ, տարբեր ռասսաների և ազգերի մոտ ընտանիքի առանձնահատկությունները կախված են բնակչության առանձնահատկություններից, կենցաղային պայմաններից, սննդի աղբյուրներից, աշխատանքի բաշխվածությունից և այլն»[19]: Այդուհանդերձ, Մալինովսկին առաջ է քաշում ընտանեկան հոգեբանության համար կարևոր մի խնդիր. ընտանեկան կոնֆլիկտների բնույթն ու յուրահատկությունը կախվա՞ծ է արդյոք ընտանիքի առանձնահատկություններից և այդ կոնֆլիկտներն ունե՞ն արդյոք ինչ-որ ընդհանրություն կամ, այնուամենայնիվ, դրանց բնույթն ու անկրկնելիությունը կախված է ընտանիքում իշխանության բաշխվածությունից, ընտանիքի սոցիալական տեսակից: Եթե այս կոնֆլիկտներն ունեն տարբեր ընթացք և յուրահատկություն, ապա դա նշանակում է, որ նուկլեար ընտանիքը նույնպես չի կարող բոլոր ազգերի մոտ հաստատուն չափանիշ հանդիսանալ: Եվ երկրորդ խնդիրը, որն առաջ է քաշում Բ. Մալինովսկին հետևյալն է՝ «Ինչպիսի՞ բնույթ ունի ընտանեկան համակարգի ազդեցությունը առասպելի, հեքիաթի ձևավորման վրա, որոշակի վայրի և բարբարոսական սովորույթների վրա, սոցիալական կազմակերպվածության ձևերին և մշակույթի նյութական ձեռքբերումներին»[20]:

---

[18] **Малиновский Б.** М19 Секс и вытеснение в обществе дикарей М.: Изд. дом Гос. ун-та-Высшей школы экономики, 2011. С.10

[19] **Малиновский Б.** М Секс и вытеснение в обществе дикарей М.: Изд. дом Гос. ун-та с.17.

[20] Նույնը, էջ 18:

Ամփոփելով ընտանեկան ինստիտուտի էվոլյուցիայի հակիրճ պատմական ակնարկը՝ մենք կարող ենք պնդել հետևյալը. ընտանիքը, որպես մոնոգամ սոցիալական ինստիտուտ, ձևավորվել է շուրջ երեք հազար տարի առաջ: Երկարատև պատմական ժամանակահատված ընտանիքը կառուցվում էր հայրիշխանական սկզբունքների վրա, որոնց հիմքում ընկած էր տղամարդու ավտորիտար կարգավիճակը: Կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, երբ հնարավորություն ստեղծվեց վաճառել սեփական աշխատուժը, աստիճանաբար ձևավորվեց նուկլեար ընտանիքը և թուլացավ նրա ավտորիտար ձևը:

Բանալի բառեր-ընտանիք, մոնոգամ հարաբերություններ, ամուսնության ինստիտուտ, ընտանեկան հարաբերություններ, ընտանեկան արժեքներ, ցեղային հասարակություն:

Վլադիմիր Միքայելյան, Նաիրա Սարհատյան, Ընտանեկան հարաբերությունների պատմական զարգացումը-Հասարակության սոցիալական կյանքում վերջին 20-25 տարիների ընթացքում նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել մարդկանց աշխարհայացքում, արժեքային կողմնորոշիչներում և, իհարկե, իրենց վարքում: Չի կարելի ասել, որ սոցիալական կյանքի փոփոխությունները ունեն միանշանակ դրական, կամ միանշանակ բացասական բնույթ: Կենսական գործառույթների նոր սոցիալական պայմանները չեն կարող անփոփոխ թողնել անձի աշխարհայացքը, դիրքորոշումները, կարծրատիպերը, վարքաձևերը: Սոցիալական նոր իրականությունը ներմուծում է իր ճշգրտումները մեր կյանքի բոլոր ոլորտներում: Եվ շատ հաճախ այդ փոփոխությունները ստանում են եթե ոչ կործանարար, ապա ամեն դեպքում, դժվար կանխատեսելի բացասական երանգներ: Ակնհայտ է, որ հնարավորինս պարզ պատկերի կարող ենք հետևել այնպիսի առանցքային սոցիալական ինստիտուտում, ինչպիսին ընտանիքն է:

Владимир Микаелян, Наира Саргатян, Историческое развитие семейных отношений-Подытоживая краткий исторический очерк эволюции института семьи, мы можем постулировать следующее: семья как моногамный социальный институт сформировалась около трех тысяч лет назад. Длительное историческое время моногамная семья строилась на патриархальных принципах, во основе которых лежал авторитарный статус мужчины. С развитием капиталистических отношений, с появлением возможности продажи собственного труда, постепенно формируется нуклеарная семья и ослабевает ее авторитарный тип.

Vladimir Mikaelyan, Naira Sarhatyan, Historical development of family relations-Summing up a brief historical outline of the evolution of the family institution, we can postulate the following: the family as a monogamous social institution was formed about three thousand years ago. For a long historical time, a monogamous family was built on patriarchal principles, based on the authoritarian status of a man. With the development of capitalist relations, with the advent of the possibility of selling one's own labor, the nuclear family is gradually being formed and its authoritarian type is weakening.

«ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԸՆՏԱՆԻՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

ՆԱՒՐԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

Մարդկության բազմադարյա պատմական զարգացումը ձևավորում է բազմատեսակ ուղղվածության ինստիտուտներ, որոնցից կարևորագույն է համարվում ընտանիքը: Խոսելով ամուսնության և ընտանիքի մասին, ամենից առաջ անհրաժեշտ է տարբերակել «ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունները: «Ներկայումս ամուսնությունը սահմանվում է որպես կնոջ և տղամարդու միջև առկա թույլատրվող և կարգավորվող հասարակական-պատմական հարաբերությունների ձև: Այն սահմանում է իրենց իրավունքներն ու պարտականությունները միմյանց, ինչպես նաև երեխաների նկատմամբ»[1]: Ն.Կովալի սահմանման համաձայն՝ ընտանիքն իրենից ներկայացնում է սոցիալական ինստիտուտ, որտեղ ամուսինների, ծնողների և երեխաների միջև գործում է փոխհարաբերությունների որոշակի համակարգ: Այն փոքր սոցիալական խումբ է, որի անդամները կապված են ամուսնական կամ հարազատական հարաբերություններով, ընդհանուր կենցաղով և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ: Սոցիալ-հոգեբանական դաշտում դիտարկվող ընտանիքն իրենից, առաջին հերթին, ներկայացնում է սոցիալական ինստիտուտ, որտեղ առկա են միջանձնային հաղորդակցություն, ինտիմ, գործընկերային կամ կոնֆլիկտային հարաբերություններ: Ընդհանուր առմամբ, այսպիսին է մոտեցումը «ընտանիք» հասկացությունը հոգեբանական հիմնական տեսություններում և հասկացություններում: Ընտանեկան ինստիտուտի վերլուծությունը ներառում է նաև սոցիալ-տնտեսական, մշակութային և էթնիկական գործընթացներ: Ն. Սոլովյովն առաջարկում էր ընտանիքի սահմանումը. «Ընտանիքը հասարակության բջիջն է (փոքր սոցիալական խումբ), անձի կենցաղի ստեղծման կարևորագույն ձևը, որը հիմնված է ամուսնական միասնության և հարազատական կապերի վրա: Ինչպես նաև ամուսնու և կնոջ ծնողների և երեխաների, քույրերի և եղբայրների և միասին ապրող և միասնական կենցաղ վարող մյուս հարազատների միջև առկա փոխհարաբերությունների վրա»[2]: Է. Էյդեմիլլերը և Վ. Յուստիցկին առանձնացնում են այն գործառույթները, որոնք թույլ են տալիս կազմել այդ սոցիալական ինստիտուտի ամբողջական պատկերը: Տվյալ գործառույթների թվում հեղինակներն առանձնացնում են՝ դաստիարակչական գործառույթը, տնտեսա-կենցաղային գործառույթը, ընտանիքի հուզական գործառույթը, հոգևոր (մշակութային) շփման գործառույթը, առաջնային սոցիալական վերահսկողության գործառույթը, սոցիալ-էրոտիկ գործառույթը[3]: Իհարկե, դժվար չէ նկատել, վերը թվարկված ընտանեկան գործառույթներն ավելի գաղափարախոսական են, քան գիտական: Հետազոտությունը հրատարակվել է ԽՍՀՄ ժամանակաշրջանում, և պարզ է, որ որոշ գործառույթներ ներդրվել են գաղափարախոսական կարգերից ելնելով: Ինչպես նաև այդ նույն գաղափարախոսական շերտը սեռական-էրոտիկ գործառույթին ցանկում հատկացրել էր վերջին տեղը:

[1] **Коваль Н.А.** Психология семьи и семейной дезадаптивности Тамбов, Изд. ТГУ, 2007г. с 21
[2] **Соловьев Н. Я.** Брак и семья сегодня.— Вильнюс: Минтис, 1977.— с.36
[3] **Э. Эйдемиллер, В. Юстицкий.** Семейная психотерапия.Л.- «МЕДИЦИНА» 1990, с. .9

Ընտանեկան հոգեբանության մեջ առանձնացվում են պատմական ընտանիքի երեք տիպեր՝

- հայրիշխանական (ավանդական)
- երեխակենտրոն (ժամանակակից)
- ամուսնական (հետժամանակակից)[4]:

Հայրիշխանական ընտանիքի տարբերությունը կայանում է հարաբերություններում գերակայելու մեջ. ենթարկումը, այսինքն ամուսնու և հոր իշխանությունն անձեռնամխելի են, իսկ կնոջ դերն ամուսնուն ամբողջովին ենթարկվելն է: Ընտանիքի հայրիշխանական տիպը որոշ մշակույթներում այժմ էլ գոյություն ունի, մասնավորապես մուսուլմանական մշակույթում: Սակայն հետժամանակակից ընտանիքը հաճախ իր վրա կրում է հայրիշխանության կնիք: Ն.Ա.Կովալի կարծիքով հայրիշխանությունն է ծնում կնոջը ամուսնու ազգանունը տալու ավանդույթը: Բացի այդ, ժամանակակից ընտանիքում հայրիշխանությունը պահպանվում է երկակի բարոյականության պահպանման մեջ: Բարոյականությունը կնոջ և տղամարդու համար ունի տարբեր բովանդակություն: Երեխակենտրոն ընտանիքներում ուշադրության կենտրոնում դրվում է ամուսինների դաստիարակչական դերը, ովքեր հարաբերականորեն հավասար դիրքերում են գտնվում: Իհարկե, դժվար է այս տիպի ընտանիքը տարբերակել հետժամանակակից տիպի ընտանիքից, քանի որ և մեկում և մյուսում գերակայում է երեխաների դաստիարակության գործառույթը և ամուսինների իրավահավասարությունը: Բայց հետազոտողների կողմից առանձնացվում է տարբերակման մեկ չափանիշ. Երեխակենտրոն ընտանիքներում երեխաների դաստիարակությունը համարվում է գերակայող գործոն և շատ ավելի նշանակելի է քան ամուսնական իրավահավասարությունը և ինտիմ կյանքը: Ընտանիքի ամուսնական, կամ ժամանակակից տիպը, որն ավելի հատուկ է եվրոպական մշակույթին, բնորոշվում է ամուսինների և երեխաների զարգացման գերակայող ռճով և այդ զարգացումը պետք է կրի ավտոնոմ և անկախ բնույթ: Այսպիսի ընտանիքում առաջնայնությունը տրվում է տղամարդու և կնոջ ազատ զարգացման արժեքներին, այն ամենին, ինչը թույլ է տալիս ապահովել ընտանիքի անդամների անձնային աճը:

Ըստ էության, ամուսնական ընտանիքի հիմնական տարբերակիչ գիծը նրա անդամների ինքնավարությունն է: Նորից վերադառնալով «ամուսնություն» և «ընտանիք» հասկացություններին, մենք ցանկանում ենք ընդգծել, որ այդ հասկացությունները կարելի է հակիրճ սահմանել. ամուսնությունը սոցիալական հաստատություն է, ընտանիքը՝ սոցիալական, միջանձնային հարաբերությունների համակարգ: Ըստ էության, ամուսնությունը սոցիալական ինստիտուտ է, որտեղ օրինական են համարվում կնոջ և տղամարդու միջև առկա միջանձնային և սեռական հարաբերությունները: Այս սոցիալական ինստիտուտը կարգավորվում է անհրաժեշտ իրավական կոնկրետ նորմերով և համապատասխանում է սոցիալական և պատմական պահանջներին: Ամունության ընթացքում մշակութային հարաբերությունների նորմերը նույնպես իրավաբանորեն սահմանված չեն ընտանեկան օրենսգրքում: Այդ նորմերը յուրաքանչյուր էթնիկական միջավայրում ունեն իրենց յուրահատկությունները և ենթարկվում են ավանդույթներին: Ամուս-

[4] **Голод СМ.** Моногамная семья: кризис или эволюция? //Социально-политический журнал. 1995. №6.

նական հարաբերությունների էթնիկական և կրոնական գործոնները ներմուծում են կնոջ և տղամարդու միջև առկա հարաբերությունների անկրկնելիություն: Հենց այս չգրված օրենքներն ու ավանդույթներն են ձևավորում ամուսնություն որակը: Իրավաբանական օրենսդրությունը տարածվում է բոլոր ընտանիքների վրա, սակայն, ամեն ընտանիք ինքն է կառուցում իր փոխհարաբերությունները՝ հիմնվելով մշակույթի, «չգրված կամ ավանդական օրենսդրություն» վրա: Բացի դրանից, գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ իրավաբանական օրենսդրությունը, որը կկարգավորվի մինչ ամուսնական վարքագծի նորմերն ու ինտիմ հարաբերությունները: Հարաբերությունների այս խիստ հոգեբանական կողմը հենվում է հասարակության սոցիալ-մշակութային և էթնիկական նորմերի վրա: Ամուսնական հարաբերությունները հասարակությունում առկա նորմերի և ավանդույթների հայելին են հանդիսանում: Նորմերն ու ավանդույթներն իրենց հերթին կարևոր գործառույթ են իրականացում. նրանք են ձևավորում միջանձնային հարաբերությունների կանխատեսելիությունը: Ամուսնական հարաբերությունների բարոյական սկզբունքը նույնպես հիմնվում են էթնիկական հասարակության մշակութային նորմերի և ավանդույթների վրա:

Էթնիկական մշակույթից կախված բարոյական արժեքները կրում են որոշակի փոփոխություններ: Նրանցից մի քանիսը կորցնում են իրենց կենսունակությունը, որոշներն էլ կյանքի սոցիալական նոր պայմաններին համապատասխան նորովի են իմաստավորվում: Ավանդական մշակույթներում ծնողներից իրենց երեխաներին են փոխանցվում սեփական բարոյական և անձնային փորձը: Փոխանցվում են նաև մշակույթն ու ավանդույթները, այդ թվում նաև արժեքային կողմնորոշիչները և կրոնը: Գրտսեր սերնդին է փոխանցվում մասնագիտական փորձը, իսկ կրտսեր սերունդը, որպես կանոն, դրական է վերաբերվում ծնողական փորձին և ավանդույթներին: Իհարկե, այժմ եվրոպական աշխարհի արժեքները ներխուժել են ավանդական մշակույթ: Անխոս, գոյություն ունեն որոշակի բարոյական և մշակութային համընդհանուր արժեքներ, որոնք վերաբերվում են բոլոր մարդկանց, անկախ էթնիկական պատկանելիությունից: Սակայն, այս էթնիկական արժեքները կարող են գոյություն ունենալ միայն այն դեպքում, եթե հնարավոր լինի այն անցկացնել էթնիկական աշխարհայացքի պրիզմայով:

Այնուամենայնիվ, այդ ազդեցության տեսակարար կշիռը չափազանց փոքր է, ավանդական մշակույթը փոփոխելու համար: Լիբերալ մշակույթներում, որոնց թվում, արևելյանից բացի, մենք կներառենք նաև ռուսական մշակույթը, ավանդույթները ակնհայտ կերպով նահանջում են: Այսպիսի մշակույթներում թուլանում է ծնողական ազդեցությունը, հատկապես ծնողների կողմից երեխաների սոցիալական վարքի վերահսկումը: Միջսերնդային հարաբերություններում հետզհետե ավելի է մեծանում էմոցիոնալ և սոցիալական բևեռացումը: Ըստ Էության, հենց միջսերնդային հասկացման բևեռացման սոցիալական չափանիշն է որոշում մշակույթի տեսակը: «Ժամանակակից ընտանիքը, զգալով նուկլեարիզացիայի և անհատականացման ազդեցությունը, բնութագրվում է նոր ամուսնությունների ձևավորման դեպքում ծնողների դերերի թուլացմամբ, որոնց հիմքում առաջնայնությունը տրվում է սեփական նախապատվությանը»[5]:

Ընտանեկան ինստիտուտի զարգացման վերլուծությունը, այնուամենայնիվ, բավականին լայնաշերտ պատկեր է ցուցադրում: Հարկ է նշել, որ ժամանակակից

[5] **Коваль Н.А.** Психология семьи и семейной дезадаптивности Тамбов, Изд. ТГУ, 2007г. с.32-33

ընտանիքներում կարող են տարբեր տիպի ամուսնական հարաբերություններ համատեղվել: Եվ, ընդհանուր առմամբ, նույնիսկ մեկ էթնոսի սահմաններում ընտանեկան ինստիտուտի ուսումնասիրության նյութերում, դժվար է դուրս բերել որևէ գերակայող ընտանեկան տիպ: Այսպիսի պատկերը պարադոքսալ չի համարվում, քանի որ ընտանեկան ինստիտուտը դինամիկ գոյացություն է, որն անընդհատ փոփոխվում է: Հիմնականում ժամանակակից ընտանիքում փոփոխության են ենթարկվում գենդերային սահմանները: Մասնավորապես, ժամանակակից ընտանիքը այլ կերպ է դասակարգում գենդերային սահմանների վերաբերյալ առաջնայնությունը, քանի որ հասարակությունում ընթանում է կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարեցման գործընթացը: Ընտանեկան հոգեբանության շրջանակներում կարելի է հանդիպել «ընտանիք» հասկացության մի շարք սահմանումների: Ինչպես ճիշտ նշում է Լ. Գ. Ժեդունովան և Ի. Ա. Մոժառովսկայան, «ընտանիք» հասկացության բազմաթիվ սահմանումները թույլ չեն տալիս հաճախ կողմնորոշվել այդ սահմանումների հեղինակության հարցում: Այդ սահմանումներից շատերն այնքան սովորական են դարձել, որ հաճախ նրանց հեղինակներին փնտրելն անիմաստ է դառնում: «Գիտական գրականության մեջ ընտանիքի սահմանումները բավականին շատ են, այդ թվում շատ սահմանումներ այնքան են ներթափանցել հասարակական գիտակցություն, որ բարդ է դարձել վերջիններիս հեղինակներին որոշելը»[6]: Ընտանիքը որպես սոցիալական և սոցիալականացման ինստիտուտ սահմանող տարբեր մոտեցումներից, մենք ցանկանում ենք կանգ առնել սոցիալ-հոգեբանական մոտեցման վրա: Այսպիսով, կանգ առնենք «ընտանիք» հասկացության հայտնի սահմանումների վրա: Մի քանի ռուս հետազոտողների մոտ կարելի է հանդիպել «ընտանիք» հասկացության սոցիալ-հոգեբանական մոտեցմանը: Մասնավորապես, Լ.Գ. Ժեդունովան և Ի.Ա. Մոժառովսկայան գրում են. «Այս մոտեցման շրջանակներում ընտանիքը դիտարկվում է որպես ընդհանուր կենսագործունեության տարածություն, որի ներսում բավարարում են՝ արյունակցական և հարազատական կապերով կապված մարդկանց, անհատական կարիքները: Այս տարածությունն իրենից ներկայացնում է բավականին բարդ կազմություն ունեցող համակարգ, որը կազմվված է տարաբնույթ տարրերից (դերեր, դիրքեր, միասնություն և այլն) և նրա անդամների միջև առկա փոխահարաբերությունների համակարգերից»[7]:

Հայտնի ընտանեկան հեգաբան Գ. Նավայտիսի հետազոտություններում ընտանիք հասկացությունը բացահայտվում էր իր գործունեության համատեքստում: Գ.Նավայտիսը ընտանիքն, առաջին հերթին, սահմանում է որպես իր անդամների կարիքները բավարարող խումբ: Այդ կարիքները բավարարվում են նրա շնորհիվ, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամ իրականացնում է իր սոցիալական դերը[8]:

Վ. Դրուժինինը ընտանիք հասկացության մոտեցումը դիտարկում էր 2 պայմանական սանդղակների համատեքստում.

նորմալ – անոմալ ընտանիք

[6] **Жедунова Л. Г., Можаровская И. А., Посысоев Н. Н., Юрасова Е. Н.** Основы психологии семьи и семейного консультирования. М.-Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2004. с.9.

[7] Նույնը, էջ 9:

[8] **Навайтис Г.** Семья в психологической консультации. -М., 1999.

իդեալական – իրական ընտանիք[9]:

«Առաջին սանդղակը դիտարկելիս, Դրուժինինը սահմանում է «նորմալ ընտանիք» հասկացությունը, որպես ընտանիք, որն ապահովում է բավարար բարեկեցություն, սոցիալական պաշտպանություն, ինչպես նաև ընտանիքի անդամների առաջխաղացում: Ինչպես նաև երեխաների սոցիալականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը մինչ նրանց հոգեբանական և ֆիզիկական հասունության ձեռքբերումը: Այդ է իրենից ներկայացնում ընտանիքը, որտեղ ընտանիքի համար պատասխանատվությունը որպես այդպիսին իր վրա է կրում հայրը: Բոլոր այն ընտանիքները, որտեղ այս կանոնը չի գործում, Դրուժինինն անվանում է անոմալ»[10]:

«Ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունները, իհարկե, միասին են դիտարկվում, միասնական սոցիալական համատեքստում: Այդ պատճառով ընտանիքը հետազոտող յուրաքանչյուր ոք չի կարող շրջանցել «ամուսնություն» հասկացությունը: Դեռևս ընտանեկան հոգեբանության զարգացման խորհրդային շրջանում, մենք կարող ենք առանձնացնել այդ հասկացություններն ուսումնասիրող հետազոտությունները:

Ինչպես գիտենք, խորհրդային ժամանակաշրջանը ընթանում էր կոմունիստական գաղափարախոսության ներքո: Այդ պատճառով գիտությունը հանդիսանում էր այդ գաղափարախոսության ծառան և հաճախ գիտնականները չէին կարողանում գիտության սահմաններում արտահայտել իրենց իրական դիրքորոշումները: Այդ իսկ պատճառով, սովետական ժամանակաշրջանի գիտությունն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել այդ գաղափարախոսական բռնությունը: Խորհրդային ժամանակաշրջանի հետազոտող Ա. Գ. Խարչևն ամուսնությունը սահմանում էր որպես տղամարդու և կնոջ միջև առկա հարաբերությունների ձև, որը պատմականորեն փոփոխում է իր սոցիալական ձևը: Այդ սոցիալական ձևը կարգավորում է նրանց սեռական կյանքը և սահմանում է նրանց ամուսնական, ծնողական իրավունքները և պարտականությունները[11]: Ամուսնության սահմանմանը համապատասխան Ա.Գ. Խարչևը սահմանում էր նաև «ընտանիք» հասկացությունը: Այս հասկացության էությունը հետևյալն է. ընտանիքն ամուսինների, ծնողների, երեխաների միջև առկա փոխհարաբերությունների համակարգ է: Եվ ընտանիքն առաջին հերթին փոքր սոցիալական խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են բարոյական պատասխանատվությամբ:

Ս. Ի. Գոլդն ակցենտավորում էր ամուսնության մեկ այլ կողմ: Այն դիտարկում որպես տղամարդու և կնոջ միջև սեռական հարաբերությունները կարգավորող սոցիալական ինստիտուտ: Եվ որպես դրանք կարգավորող մեխանիզմներ նա առանձնացնում էր արգելքները, սովորություններն ու ավանդույթները, կրոնը, բարոյականությունը: Ինչպես երևում է, այս հետազոտողն առաջնային է համարում մշակութային ավանդույթները, այլ ոչ թե իրավական նորմերը: Է.Գ. Ժեդունովան և Ի. Ա. Մոժառովսկայան առաջարկում են ընտանիք հասկացության ավելի ընդարձակ սահմանում. «Ընտանիքն անձնական կյանքի կազմակերպման կարևորագույն ձևն է: Այն սոցիալական ընդհանրության տեսակ և ամուսնական

[9] Дружинин В.Н. Психология семьи. — Екатеринбург, 2000.

[10] **Жедунова Л. Г., Можаровская И. А., Посысоев Н. Н., Юрасова Е. Н.** Основы психологии семьи и семейного консультирования. М.-Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2004 с. .10.

[11] **А.Г. Харчев.** Брак и семья в СССР. -М., 1979.

միասնության, հարազատական կապերի կամ որդեգրման վրա հիմնված փոքր խումբ է: Այսինքն, այն հիմնված է տղամարդու և կնոջ, ծնողների և երեխաների, քույրերի և եղբայրների և միասին ապրող ու միասնական կենցաղ վարող այլ ազգականների միջև առկա բազմակողմանի հարաբերությունների վրա: Այս սահմանման մեջ հիմնականում շեշտը դրվում է միջանձնային հարաբերությունների վրա, որպես ընտանիքի հիմնական արժեք»[12]:

Այսպիսով, գումարելով «ամուսնություն» հասկացության գոյություն ունեցող սահմանումները մենք կարող ենք ասել, որ նրա հիմնական բնութագրիչներն են. տղամարդու և կնոջ միջև առկա հարաբերությունների հաստատում, նորմերի և օրենքների, իրավունքների և պարտականությունների սահմանում, ինչպես միմյանց, այնպես էլ երեխաների նկատմամբ: Ամուսնությամբ տղամարդու և կնոջ միջև հաստատվում են օրինական սեռական հարաբերություններ: Այնինչ, «ընտանիք» հասկացության դեպքում շեշտը դրվում է որոշակի սոցիալական հարաբերությունների որոշակի տեսակի վրա:

Ն. Ի. Օլիֆովիչն ընտանիքը դիտարկում էր որպես կազմություն և որոշակի հատկություններ ունեցող համակարգ: Այնուհետև, նա նկարագրում էր այդ համակարգին բնորոշ էական գծերը, ինչպիսիք են.

1. փոխկախվածություն
2. ինքնակազմակերպում
3. դինամիկություն (շարժունակություն) և այլն:

Վերը թվարկվածների հետ միասին Ն. Ի. Օլիֆովիչն առանձնացնում է ընտանիքի գործունեության 4 մակարդակներ.

անհատական
միկրոհամակարգային
մակրոհամակարգային
մեգահամակարգային:

Ըստ էության, այդ մակարդակների՝ որպես սոցիալական համակարգի հատկություն, ընդգծումը թույլ է տալիս մեզ ներկայացնել այդ սոցիալական ինստիտուտը ոչ թե ավտոնոմ, այլ ամբողջական ասպեկտում: Ինչպես նշում է Ա.Վ. Չերնիկովը, ընտանիքի գիտական վերլուծության մեջ պետք է ներառել այնպիսի գործոններ, ինչպիսիք են. ընտանիքի համակարգը, համախմբվածությունը, հիերարխիան, ճկունությունը, ներքին և արտաքին սահմանները, ընտանիքի դերային կազմությունը[13]: «Ընտանիքի կառուցվածքն իրենից ներկայացնում է տարրերի համադրությունն ու նրանց միջև առկա կապերը: Որպես ընտանեկան համակարգի կառուցվածքային տարր՝ նա ընդգծում էր ամուսնական, ծնողական, ազգակցական և անհատական ենթահամակարգերը, որոնք իրենցից ներկայացնում են տեղային, ընտանեկան դերերի տարբերակման ամբողջություն: Ինչը թույլ է տալիս ընտանիքին իրականացնել որոշակի գործառույթներ և ապահովել վերջինիս կենսագործունեությունը»[14]:

---

[12] **Жедунова Л. Г.,** Можаровская И. А., Посысоев Н. Н., Юрасова Е. Н. Основы психологии семьи и семейного консультирования. М.- Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2004.с.21.

[13] **Жедунова Л. Г.,** Можаровская И. А., Посысоев Н. Н., Юрасова Е. Н. Основы психологии семьи и семейного консультирования. М.- Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2004с.21).

[14] **Олифирович Н.И.,** Зинкевич-Куземкина Т.А. Велента Т.Ф. Психология семейных кризисов «Речь», М.- 2006,

Ընտանիքի հոգեբանական գործունեության բազմաբովանդակ մոդելում ռուս գիտնականները առանձնացնում են 3 չափանիշներ՝

- կոգնիտիվ
-հուզական
-վարքային:

Սակայն, ինչպես նկատում ենք , այս 3 կողմերը առանձնանում են ցանկացած սոցիալ- հոգեբանական համակարգի վերլուծության դեպքում: Կոգնիտիվ կողմը կարելի է ներկայացնել հետևյալ կետերով. որպես ընտանիքի անդամ նույնականացումը, անհատական սահմանները և ընտանիքով պայմանավորված անհատական դիցաբանություն: Բացի այդ, կոգնիտիվ կողմը կազմում են ընտանեկան միֆերը, ընտանեկան պատմությունները, ընտանեկան սցենարներն ու արժեքները, նորմերն ու օրենքները, ընտանեկան հիերարխիան: Կոգնիտիվ բլոկը ներառում է նաև սեփական սոցիալական ստատուսի ներկայացումը ընտանիքի մյուս անդամներին: Հուզական բլոկը բնութագրվում է ամուսնությունից բավարարվածությամբ, և նրանցից բխող հուզական համախմբվածությամբ և հասարակությունում ընտանիքի զբաղեցրած դիրքից բավարարվածությամբ: Վարքային ասպեկտը իր մեջ ներառում է փոխազդեցության մոդելները, դերային վարքը, սոցիալական կարծրատիպերին հետևելու մակարդակը[15]:

Ինչպես, նշեցինք ընտանեկան հոգեբանությունը, առաջին հերթին, ուսումնասիրում է ընտանիքի անդամների միջև առկա փոխհարաբերությունները, որոնց յուրահատկությունները հնարավոր է հստակեցնել մի քանի գործոններով: Վերջիններից մենք առանձնացրեցինք համախմբվածությունը, հարաբերությունների ճկունությունը, դերային կազմը: Համախմբվածությունը կամ հուզական մտերմությունը կարող է սահմանվել որպես սոցիալ-հոգեբանական փոփոխական, որն արտացոլում է ընտանիքի անդամների միջև առկա հարաբերությունների հոգեբանական տարածությունը: Այս համատեքստում մենք խոսում ենք հուզական տարածության մասին:

Դ. Օլսոնը ընդգծում էր ընտանիքի 4 տիպեր՝ համապատասխանաբար համախըմբվածության 4 մակարդակներով: Այս դասակարգմանը համապատասխան գոյություն ունեն ընտանիքի 4 տիպեր. տարրանջատված, առանձնացած, կապված, խառնված: Տարրանջատված տիպին բնորոշ է համախմբվածության ցածր աստիճան, բարձր աստիճանի օտարացում: Առանձնացած տիպը բնութագրվում է ընտանիքի անդամների միջև առկա հուզական մեծ հեռացվածությամբ: Կապված տիպին համապատասխանում է ընտանիքի անդամների միջև առկա հուզական մտերմությունը, իսկ խառնված տիպին՝ ընտանիքի անդամների միջև առկա տարբերակվածության ցածր մակարդակ, այսինքն, համախմբվածության բարձր աստիճան[16]: Այնպիսի հատկություն, ինչպիսին ճկունությունն է ընտանեկան համակարգում շատ կարևոր տեղ է գրավում: Ընտանեկան համակարգում ոչ ճկուն հարաբերությունները ընտանիքի անդամներին թույլ չեն տալիս իրացնել սեփական պոտենցյալը: Ստեղծվում է իրավիճակ, որի դեպքում ընտանիքի անդամներին ի սկզբանե տրվում են որոշակի սահմաններ, որոնք անցնել չի թույլատրվում: Ինչպես նշում է Ա. Վ. Չերնիկովը, որպես կանոն, ճկունությունը բնորոշ է ավանդական ընտանիքների մեծամասնությանը, որտեղ դերերը սահմանվում են մեկընդմիշտ: Ընտանեկան դերերը նույնպես ընտանիքի գործառույթներն են: Ս. Ի. Մինուխինը

[15] **Олифирович Н.И.,** Зинкевич-Куземкина Т.А. Велента Т.Ф. Психология семейных кризисов «Речь», М. 2006, с.6)

[16] **Черников А.В.,** Системная семейная терапия. Интегративная модель диагностики. М. 2001.

և Չ. Ֆիշմանը նշում էին, որ ընտանիքի դերային կառուցվածքը նրա անդամներին հրահանգում է, թե ինչպես և ինչպիսի հաջորդականությամբ պետք է գործեն, փոխազդեն միմյանց հետ: Տ. Ա. Զինկևիչ-Կուզեմկինան և Տ. Ֆ. Վելենտան հետևյալ ընտանեկան դերերն էին առանձնացնում.

1. «Դերեր, որոնք նկարագրում են ընատանքի անդամների միջև առկա փոխհարաբերությունները միկրոհամակարգային մակարդակում: Ամուսնական դերեր՝ ամուսին, կին. դերեր, որոնք համապատասխանում են երեխա-ծնողական ենթահամակարգին: Հայր, մայր, դուստր, որդի. դերեր, որոնք համապատասխանում են ազգակցական ենթահամակարգին՝ քույր, եղբայր:

2. Դերեր, որոնք նկարագրում են ընտանիքի անդամների փոխներգործությունը միկրոհամակարգային մակարդակում: Դերեր, որոնք ծագում են ամուսնական կապի միջոցով՝ սկեսուր, սկեսրայր, հարս, փեսա, զոքանչ: Դերեր պայմանավորված արյունակցական կապերով՝ տատիկ, պապիկ, թոռնիկ, զարմիկ և այլն»[17]:

Բանալի բառեր-պատմական զարգացումը, ամուսնություն և ընտանիք, կենցաղային գործառույթ, հայրիշխանական, երեխակենտրոն ընտանիք:

Նաիրա Սարհատյան, «Ամուսնություն» և «ընտանիք» հասկացություններ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ-Ընտանիք և ամուսնություն հասկացությունները չեն դիտարկվում որպես նույնական: Տեսական վերլուծության համատեքստում այդ հասկացություններն ունեն տարբերակիչ չափանիշներ, որոնցից գլխավորը դերային կողմն է: Բացի դրանից, «ամուսնություն» հասկացությունը ունի ավելի շատ հուզական բնութագրեր, իսկ «ընտանիք» հասկացությունը մատնանշում է սոցիալական հարաբերությունները: Անկախ այն հանգամանքից, որ այդ երկու հասկացությունները չեն կարող դիտարկվել առանձնացված կարգավիճակով, տեսական համատեքստում նրանք դառնում են երկկողմանի վերլուծության առարկա: Պրակտիկ տեսանկյունից ոչ մի հետազոտող չի տարբերակում այդ երկու հասկացությունները: Ավելին, նրանք չեն կարող դիտարկվել առանձնացված տեսքով, քանի որ ընտանիքը չի կարող դիտարկվել առանց ամուսնության փաստի:

Наира Саргатян, Понятия «брак» и «семья» как социально-психологические феномены – Семья, расмотренная в в контексте социально-психологического поля, представлеят собой, прежде всего, социальный институт, в котором протекает межличностное общение, интимные, партнерские или конфликтные отношения. Таков, в общих чертах подход к пониманию семьи в основных психологических теориях и концепциях. Анализ института семьи учитывает также социально-экономические, культурные и этнические процессы. Брак-это социальная организация, семья же-это социальные, межличностные отношения. По сути, брак является социальным институтом, в котором признаются легитимными межличностные и половые отношения между женщиной и мужчиной.

Naira Sarhatyan, The concepts of "marriage" and "family" as socio-psychological phenomena-The family, examined in the context of the socio-psychological field, is, first of all, a social institution in which interpersonal communication, intimate,

[17] **Олифирович Н. И., Зинкевич-Куземкина Т. А. Велента Т. Ф.** Психология семейных кризисов «Речь», М. 2006, с.8.

partnership or conflict relations take place. This, in general terms, is the approach to understanding the family in basic psychological theories and concepts. Analysis of the institution of the family takes into account also socio-economic, cultural and ethnic processes. Marriage is a social organization; the family is a social, interpersonal relationship. In fact, marriage is a social institution in which the interpersonal and sexual relations between a woman and a man are recognized as legitimate.

СОЦИАЛЬНАЯ ТРЕВОЖНОСТЬ КАК ПРЕДМЕТ АНАЛИЗА В ПСИХОЛОГИИ

АМИР МИРБЛУКИ

За последние годы, эта проблема активно изучается в социальной психологии. Конечно же, изначально, тревожность как личностная черта, была освещена в психодинамической ориентации науки. Тем не менее, анализ феномена тревожности закономерно расширил границы исследования. И сегодня, чаще всего, феномен тревожности рассматривается в социальной психологии. Основная причина расширения наших представлений о тревожности состоит в том, что уже в психодинамическом направлении науки становится очевидным, что тревожность вне социального контекста жизнедеятельности личности представляет собой всего лишь теоретическую ценность, обладающую несколько абстрактным характером. Суждения о тревожности личности вне ее межличностного взаимодействия , как правило имеют описательный характер. Однако, объективный подход к научной проблеме требует ее рассмотрение в динамическом аспекте. Как только мы переходим к освещению этого аспекта проблемы, то мы закономерно уходим в сферу социальной психологии. Именно в межличностных отношениях мы можем фиксировать проявление той или иной черты личности. Проблема тревожности изначально связывалась с бессознательными переживаниями личности. Столь односторонняя позиция в известной мере сузило границы изучения тревожности, но с другой стороны объективное исследование проблемы вывело ее за пределы психоанализа. Тревожность как проблема вернулась в социальную психологию. Строго говоря, тревожность является социальным переживанием личности, социальной чертой ее характера. Социальная тревожность как психологический феномен является состоянием, активизируемым в разнообразных жизненных ситуациях личности. В основном это ситуации оценочного характера, то есть такие ситуации, по отношению к которым у личности не сформировались необходимые социально-эффективные модели поведения. Однако проблема не только в том, что существуют ситуации, по отношению к которым у личности формируется высокий уровень тревожности. Проблема состоит в том, что даже если личность часто сталкивается с ситуациями, вызывающими у нее высокую тревожность, у нее не формируется необходимый опыт адаптации к этим ситуациям. **Это означает, что повторяемость жизненных ситуаций не является полноценным условием для формирования необходимого уровня адаптации к ним. Речь о том, что при повторяемости жизненных ситуаций, главным становится модель эффективного поведения личности.** Социальная тревожность становится актуальной в жизни каждого человека, так она вторгается в его жизненные планы, программирует его психосоматическое здоровье. Тревожность становится преградой для решения жизненно важных целей личности. По сути, мы имеем дело с известным процессом «интериоризации-экстериоризации» Тревожность, изначально с детских лет является результатом интериоризации, после чего, личность, пытаясь реализоваться в жизнедеятельности, привносит в свое поведение интериоризированую тревожность, которая формирует препятствия для реализации планов. Это

двусторонний процесс. Так как нереализованные планы личности, вновь усиливают тревожность. Жизненные ситуации, являясь объективными, вызывают различное восприятие и различные социально-психологические оценки. Качество этих оценок во многом определяется социально-психологическими оценками жизненных ситуаций и интернализованными моделями поведения. Социально-психологические модели мировосприятия как бы «приклеиваются» к жизненным ситуациям личности формируют личностное качество их восприятия и программируют ее поведение. Тревожность личности практически всегда носит социальный характер, так как она связана с ожиданиями личности в эффективной самореализации, которая немыслима вне социального окружения, вне воздействия этого социального окружения. А это значит, что состояние социальной тревожности является составной частью процесса социально-психологической адаптации личности. Говоря о тревожности и страхе, нельзя не упомянуть об их сигнальном и инструментальном значении. Это значит, что социальная тревожность выполняет для нас также позитивную функцию, так как активизирует процесс социально-психологической адаптации и формирует, естественно, эффективные навыки межличностного общения. Кроме того, социальная тревожность личности становится фактором, генерирующим формирование у нее эффективных коппинг стратегий для преодоления препятствий. Переживание социальной тревожности становится фактором, формирующим социальность в поведении и мышлении человека, то есть она выполняет, так называемую, «человекообразующую функцию». Таким образом, исходя из сказанного, мы получаем возможность проведения корреляционного анализа между социальной тревожностью личности и ее социальными способностями, или уровнем ее социально-психологической адаптации. Как известно, в психологии выделяется несколько основных видов тревожности, при этом мы акцентируем исследовательский интерес на межличностной или социальной тревожности. Мы предполагаем также, что должна существовать корреляция между уровнем тревожности личности и ее интеллектуальными способностями, а также особенностями этносоциального мировосприятия Собственно говоря, определяя тревожность, большинство исследователей имеют в виду ее социальную сторону, непосредственно или опосредовано. Так, согласно определению Бурлачука А.Ф., тревожность-индивидуальная психологическая особенность, состоящая в повышенной склонности испытывать беспокойство в различных жизненных ситуациях, в том числе и тех, объективные характеристики которых к этому не предрасполагают. Как видно из определения, тревожность не воспринимается как сугубо внутриличностная категория, она соотносится с жизненными ситуациями личности, то природа тревожности однозначно социальна. Несмотря на то, что феномен тревожности, очевидно, имеет социальную природу, мы сочли важным представить также обзор становления и развития этого понятия в психологии. Как известно, проблема тревожности получила свое научное развитие в границах психоанализа. В дальнейшем она продолжала развиваться также в других психологических школах. Первоначально такие ученые как, Зигмунд Фрейд, Карэн Хорни, Анна Фрейд, Дж. Тейлор, Ролло Мэй и другие обратили внимание на этот феномен и вывели его в качестве отдельной единицы психологического анализа. В границах психодинамического направления тревожность рассматривается как показатель «преневротического состоя-

ния», её роль чрезвычайно высока и в нарушениях поведения, таких, например, как деликвентность и аддиктивное поведение. Как видим, даже в этом сугубо глубинном контексте рассмотрения проблемы, тревожность выводится на социальный уровень понимания. Тревожность-личностная черта, отражающая уменьшение порога чувствительности к различным стрессорным агентам. Тревожность выражается в постоянном ощущении угрозы собственному «я» в любых ситуациях; тревожность-это склонность индивида к переживанию тревоги, характеризующаяся низким порогом возникновения реакции тревоги: один из основных параметров индивидуальных различий[1].

Традиционно отсчет исследований тревожности начинается с работ З. Фрейда. В ранних работах З. Фрейда обнаруживается два варианта объяснения тревожности: 1) как результат разрядки подавленного сексуального влечения; 2) как сигнал о наличии опасной ситуации, что требует от индивида адекватного приспособления. Тем самым, по З. Фрейду, неприятное состояние тревоги является полезным адаптивным механизмом, побуждающим индивида к защитному поведению по преодолению опасности. З. Фрейд считал, что тревожность возникает вследствие задержки подавленной энергии, однако в дальнейшем он пересмотрел свою точку зрения и пришел к выводу, что, напротив тревожность вызывает подавление, а не является его результатом.

Интересна позиция З. Фрейда по проблеме видов и форм тревожности. Он выделял три основных вида тревожности:

1. объективную (реальный страх)-на опасность во внешнем мире;
2. невротическую-на опасность, не определяемую и неизвестную
3. моральную тревожность – «тревожность совести».

При этом важно отметить указания З. Фрейда на два источника угрозы-внешний мир и внутренние импульсы. При первом источнике возникает объективная реакция тревоги, которую он считал синонимом страха. В этом случае речь идет о достаточно адекватном восприятии внешней угрозы и, при этом, эмоциональная реакция пропорциональна величине внешней угрозы. Это выражается в виде простой схемы из трех основных взаимосвязанных компонентов. Как видно, психоанализ ставит во главу угла именно социальный аспект переживания тревоги. Внешняя среда становится генератором тревожного состояния

Объективная опасность-воспринимаемая угроза-Тревога

Это означает, что тревожность вне социального контекста не может быть определена. Человек является социальном существом уже на уровне внутриутробного развития, так как он переживает симбиоз с матерью, то он, тем самым, ощущает воздействие социального мира.

Базальная тревожность-основное понятие теории личности К. Хорни, обусловленное противостоянием индивида природным и социальным силам. Общество, с одной стороны, способствует формированию у индивида определенной структуры потребностей, а, с другой, выступает преградой для их реализации. Это приводит к возникновению чувства тревоги и поведения, ориентированного на достижение безопасности, а в конечном счете и к формированию определенного типа личности (агрессивного, уступчивого и отчужденного от общества). К. Хорни говорит о

[1] **Бреслав Г.М.** Психология эмоций: учеб. Пособие для вузов. М.: Академия: Смысл, 2004 с. 473.

иррациональной природе тревожности, основной негативный элемент которой проявляется в ощущении беспомощности. При этом, К.Хорни считает, что страх является адекватной реакцией на опасность, то есть реакция страха очевидна, так как источник страха объективно существует. Между тем, причины тревоги не известны, они не очевидны и не объективны. Г. Салливан описывает это состояние как напряженность, но при этом он разграничивает этот вид напряженности от другого вида, при котором напряжение потребностей вызывает активность личности. Известно, что А. Эллис различает два вида страха: страх внешних объектов и страх собственной неадекватности. Второй вид страха он определяет как тревожность. Правда, Г. Салливан несколько расширил свое понимание тревожности, связав ее с характером самооценки личности. Согласно этому, тревожность является следствием негативной самооценки, что ведет к формированию неадекватного поведения. Таким образом, Г. Салливан выводит два вида тревожности: а) тревожность дискомфорта и б) Я-тревожность. Тревожность является сигналом об опасности, а это означает, что она мобилизует ресурсы личности, позволяющие преодолеть возникшие препятствия. Поэтому социальная тревожность не может рассматриваться в психологии как однозначно негативное состояние личности. В психологии, а в частности в социальной психологии принято выделять оптимальный уровень тревоги, который раасматривается как необходимый фактор для формирования эффективных коппинг-стратегий. Оптимальный уровень тревоги определяется как уровень адаптивной тревоги. Этот уровень позволяет формировать эффективные социально-психологические модели адаптации личности. Это означает, что социальная тревожность может быть рассмотрена как фактор, влияющий на развитие личности, в частности, влияющий на формирование эффективных моделей поведения. Тревожность не может быть рассмотрена вне социального контекста. Хотя и в классическом психоаналитическом понимании тревожность рассматривается как бессознательная категория, тем не менее, уже М. Кляйн, говоря о тревожности, отмечает, что она формируется в младенчестве и связана с необходимостью установления отношений с объектами внешнего мира. А к объектам внешнего мира относится все, что находится за пределами тела матери. Практически тревожность является социальным феноменом, так как формируется именно при формировании отношений с социальным миром. Действия ребенка, направленные на преодоление тревожности являются, по сути, социальными коппинг-стратегиями, так как они направлены на социальный мир. Это означает, что тревожность становится фактором межличностных отношений. В сфере межличностных отношений социальная тревожность приводит к определенным искажениям в социальном развитии личности. Каждый индивид в своих межличностных отношениях руководствуется собственной системой ценностей. В этой шкале ценностных ориентаций актуальное место занимают представления личности о самой себе. Повышение уровня интенсивности социальной тревожности личности обусловлено конфликтом между ее шкалой социальных ценностей и аналогичной системой макросоциального мира. В любом случае, межличностные отношения активизируют тревожность личности, однако, как мы это уже отмечали, нормальный уровень тревожности выполняет позитивную функцию. Нормальная тревожность, как и любая тревожность, есть реакция индивида на угрозу социальным ценностям, которые он считает доми-

нантными для его существования как личности. Но нормальной тревожностью может быть признана реакция, которая:

- адекватна реальной угрозе;
- не включает механизмы подавления или другие механизмы разрешения внутреннего психического конфликта, а в результате этого-и внешнего;
- не требует невротических защитных механизмов для управления собою, но может быть изменена конструктивно на уровне произвольного осознания или ослаблена при объективном изменении ситуации.

Хотя и перечисленные критерии адаптивной тревожности и представляются теоретически обоснованными, тем не менее, мы считаем, что в реальной социально-психологической ситуации, требующей активизации эффективных стратегий поведения, как правило, имеет место активация невротических механизмов защиты. Эмоциональные реакции личности на внешние нетипичные проявления социальной среды не могут считаться дифференцированными. Тревожность, как черта личности, проявляется в поведении личности, однако часто это проявление явно не фиксируется. Уровень социальной тревоги не может быть определен исходя из того, насколько часто эта тревога проявляется. С другой стороны, мы можем говорить об адаптивном уровне тревоги в тех ситуациях, когда она приводит к эффективному разрешению проблемы личности. ***Мы считаем, что тестовые показатели высокой тревожности у личности, не являются одновременно показателями низкого уровня эффективности ее коппинг стратегий. Необходимо учитывать то, что часто высокий тестовый показатель тревожности является для конкретной личности наиболее приемлемым для формирования эффективных моделей поведения. Это означает, что мы должны искать иные критерии адаптивной (нормальной) тревожности личности.*** В социальной психологии принято считать, что высокий уровень тревожности личности часто говорит о ее невротичности, поэтому одним из критериев адаптивной тревожности становится отсутствие в поведении личности невротических механизмов защиты. Однако, мы считаем, что говорить о невротичности механизмов защиты является некорректным. **Проблема в ином: каждый защитный механизм может приобретать характеристики невротичности, однако при этом, ни один из механизмов защиты не может считаться невротичным, как таковым, по определению.** Практически каждый человек склонен воспринимать окружающий мир, как заключающий в себе тревогу, иначе мы не стали бы говорить об адаптивной тревоге. Принято считать, что невротичная личность в значительно большей степени приписывает окружающему миру тревогу, чем нормальная личность. Если речь идет лишь о количественном критерии, то, конечно же, здесь мы попадаем в ситуацию, вызывающую закономерное сомнение. Общепринятость тех или иных взглядов еще не говорит об их истинности. Социальная тревожность личности, безусловно, становится препятствием на пути достижения жизненно важных целей. Однако, с другой стороны адаптивный уровень тревоги мобилизует способности личности, позволяющие преодолеть преграды на пути к этой цели. Поэтому личность, лишенная определенного оптимального уровня тревожности, не может считаться психологически полноценной. При этом мы должны дифференцировать два понятия: **тревогу как состояние и тревожность как личностную черту.** Эта дифференциация введена в психологию, как известно, Кеттэллом и в дальнейшем

была доработана Ч. Спилбергером. Эта дифференциация и легла в основу известного теста тревожности, разработанного Спилбергером Ч. Тревога как состояние A-state (тревога-состояние) является вполне закономерной эмоцией, она закономерно возникает при наличии объективной или воображаемой опасности. Тревожность как личностная черта (A-trait(тревога-черта), является относительно целесообразной чертой, все зависит от уровня ее проявления в соответствующих ситуациях. Если уровень тревожности не соответствует опасности объективной ситуации, то в таком случае мы говорим о ее невротичном характере, если же уровень тревожности соответствует возникшей ситуации, если мы наблюдаем адекватность уровня эмоции объективной ситуации, то в этом случае мы можем говорить о ее адаптивной функции. Тем не менее, несмотря на логичность данного теоретического предположения, остается открытым вопрос о том, как мы можем измерять адекватность тревожности создавшейся ситуации? Хотя и на уровне повседневного опыта это и возможно фиксировать в поведенческой активности личности, тем не менее, в научном смысле необходимо введение некой шкалы соответствия. В вопросе дифференциации феномена тревожности и тревоги значительный вклад принадлежит, уже упомянутому нами, Ч. Спилбергеру. Он выделяет несколько основных понятий в связи с проблемой тревоги. Прежде всего-это понятие «стрессор». Спилбергер Ч. Обозначает этим термином ситуацию, объективно содержащую в себе физическую или психическую опасность. Кроме того, необходимо отметить, что несмотря на объектвность ситуации, ситуация является стрессором, вследствие опыта, воспоминаний и мыслей личности. То есть, если определенная ситуация в жизни человека повторяется, то по отношению к ней уже существует сформированный эмоциональный опыт. И если этот опыт вызывает негативные эмоции, то повторяющаяся ситуация уже становится стрессором, то есть вызывающим определенный уровень тревоги. Оценка ситуации с точки зрения ее опасности во многом обусловлена, таким образом, опытом личности. Это означает, что в оценке ситуации часто объективная картина искажается в той или иной степени. Из этого следует, что часто реальные стрессогенные ситуации не оцениваются личностью адекватно, между тем, ситуации, не включающие в себя объективно фактор стрессогенности, могут восприниматься как чрезвычайно опасными. Данное явление повторяется настолько часто, что в известном смысле может считаться закономерностью. Оно лишний раз доказывает насколько важно учитывать то, насколько адекватно поведение личности сложившейся объективной ситуации. В тех случаях, когда безопасным ситуациям приписывается повышенная опасность, мы можем говорить, согласно Спилбергеру Ч., об угрозе. То есть стрессор начинает восприниматься личностью в качестве угрозы. Понятие «угроза», таким образом, используется Спилбергером Ч.для описания субъективной оценки личностью ситуации. В таких случаях личность испытывает ситуативную тревожность. Ситуативная тревожность определяется Ч. Спилбергером как эмоциональная реакция, которая характеризуется мрачными предчувствиями, субъективным ощущением напряженности, нервозности, беспокойства и сопровождается активизацией вегетативной нервной системой. Личностная тревожность является относительно постоянной характеристикой человека, которая выражается в том, что широкий спектр ситуаций ощущается как опасный или угрожающий. Под

личностной тревожностью понимается относительно устойчивая склонность человека воспринимать угрозу своему «Я» в различных ситуациях и реагировать на эти ситуации повышением ситуативной тревожности. Величина личностной тревожности позволяет прогнозировать вероятность возникновения состояния тревоги в будущем. Высоко тревожные субъекты будут воспринимать ситуации с наличием стрессоров как более угрожающие и будут испытывать более выраженный уровень ситуативной тревожности[2]. Особое место в рассмотрении тревожности отводится межличностным отношениям, по той простой причине, что именно в этой сфере мы наблюдаем социальную тревожность. Социальная тревожность сопряжена с потребностями личности в социальном самоутверждении. Именно в сфере социальных отношений мы однозначно можем говорить об активизации социальной тревожности. В процессе социогенеза личность ставит перед собой цели, которые, так или иначе, санкционированы обществом. Это означает, что социальная активность личности подчиняется ценностной шкале его окружения.

Ключевые слова-социальная тревожность, бессознательные переживания, социальные переживания, модель эффективного поведения.

Амир Мирблуки, Социальная тревожность как предмет анализа в психологии- Проблема изучения социальной тревожности в психологической литературе на протяжении, как минимум, 100 лет находится в центре исследования. Во всяком случае уже в конце 18 века мы можем фиксировать употребление термина «тревожность» в словарях. Бытует точка зрения, согласно которой термин «тревога» перекочевал в психологию из военной терминологии. Этот термин означал, трижды повторенный сигнал об опасности со стороны противника.

Ամիր Միրբլուքի, Սոցիալական տագնապայնությունը որպես՝ հոգեբանության մեջ վերլուծության առարկա-Սոցիալական տագնապայնությունը կապակցված է սոցիալական ինքնահաստատման անձի պահաջմունքի հետ: Հենց սոցիալական հարաբերությունների դաշտում մենք, միանշանակ, կարող ենք խոսել սոցիալական տագնապայնության ակտիվացման մասին: Սոցիոգենեզի ընթացքում անձն իր առջև նպատակներ է դնում, որոնք, այսպես թե այնպես, վավերացված են հասարակության կողմից: Սա նշանակում է, որ անձի սոցիալական ակտիվությունը ենթարկվում է նրա շրջապատի արժեքային սանդղակին:

Amir Mirbluki, Social alert as a subject of analysis in psychology-A special place in treating anxiety is given to interpersonal relationships, for the simple reason that it is in this area that we observe social anxiety. Social anxiety is associated with the needs of the individual in social self-affirmation. It is in the sphere of social relations that we can unambiguously talk about the activation of social anxiety. In the process of sociogenesis, the individual sets goals that, in one way or another, are sanctioned by society. This means that the social activity of the individual is subject to the value scale of his environment.

[2] **Карандашев В. Н., Лебедева М. С., Спилбергер Ч.** Изучение оценочной тревожности. Руководство по использованию методики Ч. Спилбергера. СПб.: Речь, 2004, с. 80

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ПОНИМАНИЮ НЕВРОЗА НАВЯЗЧИВЫХ СОСТОЯНИЙ

ЭРИК МИКАЕЛЯН

Проблема невроза навязчивых состояний и/или обсессивно-компульсивных расстройств (ОКР) актуализируется фактом ее омоложения. Невроз навязчивостей становится все чаще проблемой для подрастающего поколения. Хотя и этим неврозом страдают практически в любом возрасте, однако огромный процент все-таки приходится на молодое поколение. Согласно **Rasmussen S.A**. значительное число неврозов навязчивостей приходится на возрастной интервал от 10 до 24 лет[1]. Несколько дистанцируясь от статистических данных, мы хотим отметить, что риск приобретения обсессивно-компульсивного расстройства или невроза навязчивостей часто определяется адаптационной, защитной системой личности. Поэтому, нам представляется существенным именно психологический аспект формирования невроза навязчивостей, что также является еще одним признаком актуальности исследуемой проблемы. Ведущим признаком навязчивостей является пугающий характер неконтролируемых мыслей и действий, страхом, часто приобретающим панические характеристики. Страх вызывается тем, что мысли и действия выпадают из-под контроля Я-сознания. Все, что не контролируется человеком, и имеет непосредственное отношение к его жизни, всегда вызывает страх и панику. Согласно Ю. В. Каннабих, впервые навязчивости описал Ф. Платер (1537-1614)[2]. Понятие «навязчивость», прежде всего, означает чуждость сознанию, сознательной жизни личности, представлениям и принципам и убеждениям. Состояние, причиняющее тяжкие страдания. Обсессии носят самый разнообразный характер: это могут быть навязчивые мысли о заражении, агрессивные мысли, нозофобии, кощунственные мысли, как мы уже отмечали, религиозного и сексуального содержания. Особенно мучительными бывают мысли, касающиеся инцестуозных тем или страха совершить убийство или суицид. Мысли о суициде, в контексте навязчивостей вполне закономерны: страдания вызывают чувство вины, а вина требует наказания. В психодинамике такая ситуация имеет свое объяснение: так как человек испытывает запредельное чувство вины за кощунственные мысли религиозного или инцестного характера, то он начинает испытывать страх наказания, страх смерти. Выходом из этого контекста становится бессознательное тяготение к смерти, как самонаказание, во избежание более тяжелого наказания, которое не конкретно и имеет магический оттенок. Чаще всего, тяготение к суициду обусловлено страхом сумасшествия, угрозой наказания сумасшествием. Учитывая эти нюансы, необходимо помнить, что психотерапия навязчивостей является полем повышенного риска и непредсказуемости. При неврозе навязчивостей мы имеем гамму эмоций, которые угрожают нашей психике. Существуют более безобидные навязчивости, однако,

[1] **Rasmussen S.A.** The Epidemiology and Differential Diagnosis of Obsessive Compulsive Disorder/S.A. Rasmussen, J.L Eisen//J Clin Psychiatry. 1994. Vol. 55. P. 10.

[2] **Ю.В.Каннабих.** История психиатрии Л.- Государственное медицинское издательство, 1928

также доставляющие страдания человеку,- мысленная жвачка. Это также вид обсессий. Он характеризуется навязчивыми мыслями экзистенциального характера. Это широко распространенные мысли о конце света, о различных космических катаклизмах,- все эти бесплодные мысли не покидают человека, его сознания. Следует сказать, что мысли подобной направленности, присущи всем людям, но мы склонные в норме считать их размышлениями, а не навязчивыми мыслями. **В норме размышления по поводу экзистенциальных тем имеют некий умственный продукт, между тем при навязчивостях мы имеем дело лишь с навязчивым повторением.** Повторяющиеся мысли, как и сновидения, являются навязчивыми, если не принимают характер рефлексивной деятельности. Следующим видом навязчивостей являются обсессивные сомнения.

Обсессивные **сомнения** характеризуются неуверенностью относительно предыдущих действий, к примеру, больной не может вспомнить выключил ли он утюг или газ, выходя из дому. Часто человек по нескольку раз возвращается домой, проверяет электроприборы, воду. Как правило, больные придерживаются достаточно примитивного ритуала,- они обязывают себя, к примеру, 7 раз проверять, закрыта ли дверь, 3 раза возвращаться домой и проверять приборы заново. Безусловно, больной не может внятно объяснить, почему он придерживается этого порядка, однако, это навязчивое повторение и проверка успокаивают его. Эти действия имеют защитный характер, но при этом смысл этих действий лежит за порогом осознавания. Несложно предположить, что основной защитный потенциал генерируется бессознательным уровнем психики, для которой эти ритуальные действия имеют определенный смысл. Невроз навязчивых состояний -безусловно, психиатрическая проблема. Однако этот невроз всегда притягивает к себе некой загадочностью магического или скажем иначе филогенетического характера. Мы предлагаем посмотреть на эту проблему несколько с иной точки зрения, с точки зрения бессознательного психического процесса. Поэтому мы считаем важным рассмотреть в психологическом русле ритуальность и ее возможный терапевтический смысл. Прежде всего, приведем несколько определений невроза навязчивостей. Р. Телле пишет: «Навязчивости (ананкастность, обсессивно-компульсивный синдром) появляются тогда, когда содержание мыслей или импульсы к действиям постоянно навязываются и не могут подавляться или вытесняться, хотя и понятно, что они бессмысленны или, по крайней мере, безосновательно господствуют в мыслях и действиях. Поскольку эти импульсы стойкие, они вызывают непреодолимый страх. Патологическим являются не содержания навязчивостей, а их доминирующий характер и невозможность избавиться от них» (Телле, с.118) В психиатрии часто мы можем наблюдать использование в одном семантическом контексте невроза навязчивых состояний и ананкастное (обсессивно-компульсивное) расстройство личности. «Невроз навязчивых состояний или иначе обсессивно-компульсивное расстройство проявляется в виде навязчивых страхов, опасений и мыслей, воспоминаний, представлений и действий»[3]. Определение, приводимое В.Д. Менделевичем, по сути, также отождествляет эти два понятия: *«Ананкастное (обсессивно-компульсивное) расстройство личности* проявляется: 1) чрезмерной склонностью к сомнениям и осторожности; 2) озабоченностью деталями,

[3] **А.В. Батаршев.** Диагностика пограничных психических расстройств личности. М.2004, с. 25.

правилами, перечнями, порядком, организацией или графиками; 3) перфекционизмом (стремлением к совершенству), препятствующему завершению задач; 4) чрезмерной добросовестностью, скрупулезностью и неадекватной озабоченностью продуктивностью в ущерб удовольствию и межличностным связям; 5) повышенной педантичностью и приверженностью социальным условностям; 6) ригидностью и упрямством; 7) необоснованными настойчивыми требованиями того, чтобы другие все делали в точности как сам человек, или неблагоразумным нежеланием позволять выполнять что-либо другим людям; 8) возникновением настойчивых и нежелательных мыслей и влечений»[4] Рассмотрение проблемы невроза навязчивостей в контексте архаической плоскости, впрочем, как и всякое исследование навязчивости или иной формы патологии, требует разграничения основных понятий: симптоматического невроза и невроза характера, то есть личностного расстройства. Как показывает наш анализ проблемы, очень часто эти два понятия отождествляются. Однако, эти понятия имеют четкую разделительную линию. Необходимость различения локальных неврозов (симптоматических) от личностных расстройств продиктована как теоретической необходимостью, так и психотерапевтическими потребностями. Критерии различения симптоматического невроза и невроза характера были выдвинуты уже в границах психодинамической парадигмы. Практически, и в наше время этих критериев придерживается большинство клинически ориентированных ученых. Вкратце приведем эти критерии, представленные в блестящем труде Н.Мак-Вильямс: 1) временной аспект, то есть имеет ли место психическое новообразование или мы имеем дело с проблемой, постоянно присутствующей в жизненном сценарии пациента, 2) характер протекания нарушения, резкое возрастание тревоги или же постепенное ухудшение общего состояния, 3) характер симптомов, то есть Эго-дистонны или Эго-синтонны, являются ли симптомы чуждыми для Эго, или же они воспринимаются как единственно возможные реакции на текущие условия жизни[5]. Навязчивости могут проявляться в относительно легких феноменах, по сути, содержание навязчивостей, действительно, не столь драматично, как это может казаться. Это может быть мытье рук, навязчивое звучание мелодий, подсчет различных предметов, номеров, ударов часов. «Сюда же причисляются навязчивые ритуалы при еде, курении, укладывании в постель и засыпании - фиксированные привычки, которые не воспринимаются мучительно и которые путем их отклонения или внешних влияний могут прекращаться, без того, чтобы вызвать страх»[6]. Навязчивости (мысли и действия), как правило, сопровождаются страхом, страх, хотя и часто носит конкретный предметный характер, тем не менее, не может быть вытеснен или рационализирован. По сути, предметность подобных страхов достаточно сомнительна. При предметности мы говорим о фобическом синдроме, который имеет свои отличия от невроза навязчивостей. Страхи при навязчивостях, как правило, имеют бессознательный характер, они маскируются под некую предметность, однако, эти страхи далеко не предметны.

[4] **Менделевич В. Д.** М50 Психология девиантного поведения. Учебное пособие. СПб.: Речь, 2005., с. 132.

[5] **Мак-Вильямс Н.** Психоаналитическая диагностика: Понимание структуры личности в клиническом процессе/Пер. с англ. М.: Независимая фирма «Класс», 2001. 480 с.

[6] **Телле Р.** Психиатрия с элементами психотерапии.Мн.-1999. с.118.

Таким образом, страдания больного обусловлены такими страхами, которые не могут быть рационализированы и тем самым несколько удалены от сознания. Этим и объясняется разница между фобическим пациентом и больным, страдающим обсессивно-компульсивным неврозом. При фобическом неврозе, так или иначе, психика человека обладает резервами борьбы с предметом фобии, какими-либо методами совладания с ними. При неврозе навязчивых состояний, хотя и мысли предметны (к примеру, страх совершить конкретное действие), отсутствует потенциал преодоления этих навязчивостей. Или несколько иначе: при фобическом неврозе защитные действия обладают необходимой эффективностью, при неврозе навязчивости защитные ритуальные действия не обладают этим минимумом защитной функции. Если при фобическом неврозе больной способен дистанцироваться от страха, то при навязчивости страх полностью контролирует больного, полностью подчиняет его себе. Такие патологические навязчивости как страх кого-то ударить, убить, изнасиловать-это страх неконтролируемого поведения. Отсутствие контроля над поведением действительно формирует запредельные тревожные переживания. Поэтому, часто такие больные не выходят из дому, изолируют себя от общества, от общения с близкими и родными. В иных случаях такие больные просят родных находиться всегда рядом, так как они бояться собственной непредсказуемости. **Как мы видим в отличие от фобии, при навязчивости выделяется не персональный фактор, а другие люди.** «При навязчивых представлениях речь идет не столько о собственной персоне (как при фобиях), сколько о других людях: что-то может случиться с родными или уже случилось, и больной при этом виноват (патологическое чувство вины)» [7]. Позитивность психических феноменов определятся степенью их подконтрольности сознанию. Однако подконтрольность психических явлений не всегда может осуществляться с помощью сознания. Существуют такие феномены психического, которые контролируются бессознательным уровнем психики. К таким феноменам относятся как раз психические расстройства, и в частности, навязчивости. Однако подконтрольность, осуществляемая бессознательным уровнем психики означает одновременно слабый контроль или вовсе отсутствие контроля со стороны сознания. При навязчивости мы имеем как раз подобную картину. В неврозе навязчивых состояний выделяется несколько подвидов: навязчивые мысли, навязчивые действия (импульсы), навязчивое поведение. Навязчивые действия как раз и представляют собой попытку контроля над негативными, часто тревожными и устрашающими мыслями и переживаниями. Эти действия нацелены на подавление тревожных мыслей и в этом смысле содержат в себе иллюзию контроля над ними. Но в данном случае больной обходится тем, что имеет, за неимением и не умением лучшего. Как известно, термин ««навязчивое представление» был введен в 1867 году Краффт-Эбингом, между тем как понятие «невроз навязчивости» восходит к самому Фрейду»[8]. Или более детально: «Люди, совершающие навязчивые действия или церемониал, наряду с теми, кто страдает от навязчивых мыслей, навязчивых представлений, навязчивых импульсов и т. п., относятся к особой клинической единице, нарушения которой принято обозначать неврозом навязчи-

[7] Там же, с. 119

[8] **Зигмунд Фрейд** Навязчивость, паранойя и перверсия. © ООО «Фирма СТД». издание на русском языке, 2006 ©А. Боковиков, переводе немецкого, 2006, с.12.

вости»[9]. Невроз навязчивых состояний впервые описал научно З. Фрейд и этот факт невозможно оспорить. Вопрос не в том, что до З. Фрейда никто не подозревал о навязчивости, вопрос в том, что именно З. Фрейд придал необходимую доказательную структуру навязчивостям. Рассмотрим психоаналитический подход невроза навязчивых состояний. Прежде всего, все действия человека в психоанализе могут интерпретироваться как ритуальные или церемониальные. Это относится и нашему режиму, и к привычкам, и предпочтениям, и способам отхода ко сну, вообще все, что мы делаем, мы делаем в какой-то конкретной схеме, или все это имеет конкретную структуру. Но, по большому счету, все эти повседневные заученные и усвоенные действия не являются навязчивостями. Тем не менее, если в нашей ритуальной или церемониальной повседневности вдруг произойдет нарушение, срыв в цепи последовательных, заученных действий, то тогда каждый из нас ощутит себя несколько необычно, может тревожно. Это значит, что для нас наша церемониальность, которую мы называем режимом, привычками и т.п. имеет для нас функцию защиты. «Исполнение церемониала можно описать, если его, так сказать, заменить рядом неписаных правил, например, в церемониале при отходе ко сну кресло должно стоять в определенном положении перед кроватью; одежда на нем должна лежать сложенной в определенном порядке; покрываю должно быть заправлено в изножье кровати, простыня должна гладко выглажена; подушки должны лежать так-то и так-то, само тело должно находиться в строго определенном положении; и только тогда можно заснуть. В легких случаях церемониал выглядит как преувеличение привычного и оправданного порядка. Однако особая добросовестность, с которой совершаются эти действия, и тревога, возникающая при их неисполнении, характеризуют церемониал как «священнодействие»[10]. **Любые виды деятельности, любой вид человеческой активности может иметь характер навязчивости. Или любая активность, содержащая некую ритмичность, однозначно может считаться «нормальной» навязчивостью.** Наши повседневные привычки, повторяющиеся паттерны поведения иначе, чем навязчивостью не назовешь. Однако, это не мешает нам жить и не доставляет нам страданий. Но если в наши усвоенные паттерны вклинивается нечто новое, то в этом случае, если уж не страдание, то, тревога появляется обязательно. Нечто нарушается в нашей ритуальной повседневности и это нарушение не протекает бесследно. Насколько нам удается отличить наш ритуальный способ жизни от навязчивости,-это вопрос подхода и семантики. З. Фрейд считал, что навязчивые действия произошли из ритуальной жизни, из церемониала. «В большинстве случаев навязчивые действия произошли из церемониала. Наряду с тем и другим содержание недуга образуют запреты и недопущения (абулии), которые, собственно говоря, лишь продолжают дело навязчивых действий, поскольку что-то больному вообще не позволено, а что-то другое разрешается только при соблюдении предписанного церемониала»[11]. Наблюдаемые в неврозе навязчивых состояний ритуальные действия, на первый взгляд, лишены всякого рационального смысла. Однако весь вопрос как раз состоит в том, что в расстройствах невротического круга не надо искать рацио-

[9] Там же, с.12.
[10] Там же, с.13.
[11] Там же, с.13.

нальный здравый смысл. Смысл ритуальных действий, которые сам больной определяет как навязчивости, существует, однако он существует для бессознательного уровня психики,-сознанию эти действия крайне непонятны и неприятны. При наличии церемониала или ритуала многое можно принять как естественное. В психоанализе смысл навязчивостей признается в качестве действий, нацеленных на погашение переживаемой неосознанной тревоги. **Если мы можем признавать смысл за религиозными ритуальными действиями, которые так же не особенно отличаются своим рациональным началом, то почему бы нам не признать существование смыла в навязчивостях.** Если мы станем исходить из предположения о существовании смысла в навязчивых действиях, то вслед за З. Фрейдом, мы обнаружим в них рациональный элемент. З.Фрейд видел смысл навязчивостей исключительно в репрессированных сексуальных желаниях личности. «Одно из условий болезни составляет то, что человек, следующий навязчивому желанию, совершает действие, не зная его значения-во всяком случае, его основного значения. Только благодаря усилиям психоаналитической терапии смысл навязчивого действия и тем самым побуждающие к нему мотивы становятся осознанными. Мы высказываем это важное положение вещей словами, что навязчивое действие служит выражению *бессознательных* мотивов и представлений. В этом, по-видимому, заключается еще одно его отличие от религиозного отправления; однако следует подумать о том, что и набожный человек, как правило, совершает религиозный церемониал, не задаваясь вопросом о его значении, тогда как священники и исследователь могут знать символический в большинстве случаев смысл ритуала. Однако мотивы, побуждающие к религиозному отправлению, всем верующим либо неизвестны, либо замещаются в их сознании выдвигаемым мотивом»[12]. В психоанализе навязчивости, как правило, сопровождаются чувством вины, а это значит, что в ритуальных действиях мы можем видеть попытки избавления от неосознанной вины, или «бессознательного сознания вины». А если мы имеем бессознательную вину, то у нас формируется желание понести наказание за это. Именно так и понимают в психоанализе навязчивости,- как наказание, как бессознательное наказание за переживаемое и неосознаваемое чувство вины за сексуальные переживания и желания. С другой стороны, навязчивый церемониал имеет также другой смысл,- смысл защиты от неконтролируемых действий. Человек опасается, что совершит какие-то аморальные поступки, он страшится того, что у него может отсутствовать контроль по отношению к собственному поведению. А так как определенный церемониал, так или иначе, подконтролен, то он замещает действия, которых человек страшится. Выгода навязчивостей в том, что они, в отличие от неосознаваемых аморальных побуждений, все же подконтрольны индивиду, он выполняет их в строгой последовательности и с определенной периодичностью. Вспоминается больная, которая каждый день заносила в тетрадь семь столбиков состоящих их цифры семь. Только после этого, она спокойно приступала к своим делам. На вопрос о том, почему она это делает, она утверждала, что в это же время, когда она записывала свои цифры, дьявол заносит столбики с цифрой шесть. Поэтому она должна сбалансировать соотношение сил добра и зла. Конечно же, силы зла, о

[12] Там же, с.15-16.

которых она говорила, это были ее же бессознательные желания, которые имели для нее явный греховный характер. Она боролась с самой собой, она пыталась искупить свою вину перед карающей инстанцией Сверх-Я. По сути, религиозные ритуалы также не лишены характера защиты, и также не свободны от переживаемого чувства вины. Понятие греха, внедренное в наше сознание, как правило, погашается именно религиозным церемониалом. «Сознанию вины больного неврозом навязчивости соответствует уверение набожных людей, что в глубине души они закоренелые грешники; по всей видимости, религиозные отправления (молитвы, обращения к Богу и т. д.), с которых они начинают любую повседневную деятельность и особенно каждое чрезвычайное дело, имеют значение защитных и оборонительных мер»[13]. Схема формирования невроза навязчивостей в психоанализе может быть представлена следующим образом: сексуальные желания, не совместимые с требованиями инстанции Сверх-Я подвергаются вытеснению. Однако, вытеснение не удается завершить и поэтому индивиду постоянно требуется энергия для подавления сексуальных импульсов. Тревога формируется уже в процессе вытеснения, так как будущее индивида оказывается перед опасностью утраты контроля со стороны сознания. З. Фрейд более чем обоснованно описывает схему формирования навязчивостей. А схема достаточно проста и тем самым вполне доступна для понимания. Каждый индивид в течение жизни вырабатывает для себя определенную систему защит, нацеленных на подавление импульсов, исходящих из бессознательного, импульсов сексуального и агрессивного характера. В целом, для каждого индивида его система психологических защит остается действенной на протяжении длительного времени. Однако, с увеличением внешних фрустрирующих факторов, система защит начинает прогибаться под воздействием последних. Старой системы становится уже явно недостаточно в контексте эффективности действия. В такой ситуации формируется новая система защиты, которая уже не может быть отнесена полностью к норме. Эта защита проявляется в форме навязчивостей. Сама по себе навязчивость начинает играть двойную роль,-как психическая защита и как удовлетворение импульсов бессознательного уровня психики. «Как видно, запреты заменяют навязчивые действия, подобно тому, как фобия предназначена для того, чтобы уберечь от истерического припадка. С другой стороны, церемониал представляет собой совокупность условий, при которых становится позволительным другое, пока еще не абсолютно запретное действие, подобно тому, как церковный брачный церемониал означает для благочестивого человека позволение получать сексуальное наслаждение, которое иначе греховно»[14]. Что касается навязчивых побуждений, то в этом случае, мы выделяем особенную психологическую тяжесть этих состояний. **Человек, практически, находится в плену собственных аморальных желаний и интересов, и тяжесть этого состояния, прежде всего в том, что такие желания человек воспринимает как собственные.** В частности, в качестве навязчивых побуждений могут выступать желания убийства родных и близких, инцестуальные переживания, страх сквернословия в церкви. В психической жизни личности, страдающей навязчивыми побуждениями, одно-

[13] Там же, с.17.

[14] Там же, с.18.

временно срабатывает система защиты, при этом эффективность функционирования этой системы не всегда адекватна складывающимся обстоятельствам жизни. Психические страдания личности определяются интенсивностью эмоциональных атак и возможностями функционирования ее защитной системы. Человек крайне редко совершает навязанные действия, однако их подавление дается с каждым разом возрастающими психическими страданиями.

Источник формирования этих побуждений, по сути, не понятен, во всяком случае, в клинической психологии, как впрочем, и в психиатрии, не существует единой точки зрения в отношении провоцирующего источника.

Психические страдания личности определяются интенсивностью эмоциональных атак и возможностями функционирования ее защитной системы. Человек крайне редко совершает навязанные действия, однако их подавление дается с каждым разом возрастающими психическими страданиями.

Источник формирования этих побуждений, по сути, не понятен, во всяком случае, в клинической психологии, как впрочем, и в психиатрии, не существует единой точки зрения в отношении провоцирующего источника.

Ключевые слова-обсессии, компульсии, невроз навязчивых состояний, бред изобретения, эго-синтонность, эго-дистонность, фобический синдром.

Эрик Микаелян, Психологичские подходы к пониманию невроза навязчивых сстояний-Невроз навязчивых состояний как в клинической психологии, так и в психиатрии определяется в качестве синдрома, с клинической наполненностью нежелательными, прилипчивыми мыслями (обсессиями) и действиями (компульсиями). Это состояние часто описывается как осада сознания бессознательной прилипчивостью, захват поведения, утрата контроля над мыслями и действиями. Мысли и действия, приходящие неизвестно откуда и требующие реализации, приобретают угрожающий и пугающий тон. В целом, мысли и действия вращаются вокруг двух сфер-сексуальной и религиозной, то есть сферы табу, хотя и навязчивость легко захватывает все сферы жизнедеятельности личности.

Էրիկ Միքայելյան, Կպչուն վիճակների նևրոզի հոգեբանական մոտեցումները-Անձի հոգեկան տառապանքները որոշվում են հուզական գրոհների ուժգնությամբ և նրա պաշտպանական համակարգի աշխատանքի հնարավորություններով: Մարդը շատ հազվադեպ է իրականացնում կպչուն գործողություններ, սակայն դրանց արտամղումը ամեն անգամ տրվում է էլ ավելի աճող հոգեկան տառապանքներով: Այդ մղումների ձևավորման աղբյուրն, ըստ էության, հասկանալի չէ: Համենայն դեպս կլինիկական հոգեբանության մեջ, ինչպես նաև հոգեբուժության, դրդող սկզբնաղբյուրի վերաբերյալ միասնական մոտեցում չկա:

Erik Mikayelyan - Psychological approaches to understanding the neurosis of obsessive states. In the mental life of a person suffering from obsessive motivations, the defense system works simultaneously, while the effectiveness of the functioning of this system is not always adequate to the emerging circumstances of life. The mental suffering of an individual is determined by the intensity of emotional attacks and the possibilities of functioning of its protective system. Man extremely rarely commits the

imposed actions; however their suppression is given each time with increasing mental suffering.

The source of the formation of these motives, in fact, is not clear, at least in clinical psychology, as well as in psychiatry, there is no single point of view regarding the provoking source.

ՏՎՅԱԼԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԱՌԱՋԱՐԿԸ ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ. ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՋՊԱՆՅԱՆ, ՀՐԱՆՏ ԴԱՎԹՅԱՆ

Ժամանակակից պայմաններում Մեծ տվյալների ոլորտի բուռն զարգացման արդյունքում համաշխարհային տնտեսության մեջ ձևավորվում է այդ ոլորտի մասնագետների մեծ պահանջարկ[1]: Համաձայն Համաշխարհային տնտեսագիտական ֆորումի 2015թ. և 2016թ. հաշվետվությունների՝ տվյալագետի աշխատանքը (նույն ինքը՝ Մեծ տվյալների վերլուծաբանը) արդեն 2 անգամ անընդմեջ համարվել է համապատասխան տարվա առավել բարձր վարձատրությամբ ամենահեղինակավոր մասնագիտական գործունեությունը[2]:

ՀՀ աշխատաշուկայում տվյալագետների աշխատուժի առաջարկն ուսումնասիրելու և գնահատելու նպատակով մեր կողմից իրականացվել է առցանց հարցում: Հարցումն ուղղվել է Մեծ տվյալների վերլուծությամբ զբաղվողների թիրախային խմբին, ովքեր հայտնաբերվել են սոցիալական ցանցերում համապատասխան խմբերին անդամագրման, տվյալագիտական միջոցառումներին և մրցույթներին մասնակցության փաստերով: Ելնելով այն հանգամանքից, որ տվյալագիտական տերմինաբանությունը հայերենում հիմնականում դեռևս չի ձևավորվել, հարցումն անց է կացվել անգլերեն լեզվով: Հարցումը եղել է անանուն, և մասնակիցները տեղեկացված են եղել, որ տվյալները հրապարակվելու են միայն ընդհանրացած տարբերակով՝ ապահովելով առանձին մասնակիցներին բնութագրող անհատական տեղեկատվության գաղտնիությունը:

Հարցաշարը կազմված է եղել 12 հարցից, որոնց մի մասը նպատակաուղղված է եղել պարզել տվյալագետի անձը բնակչության ժողովրդագրական կազմի առումով, իսկ մյուս մասը՝ ստանալ համապատասխան տեղեկատվություն տվյալագետների գիտելիքների ծավալի և դրանց գործնական կիրառության վերաբերյալ[3]: Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ-ում տվյալագիտական խմբերում, միջոցառումներում և մրցույթներում կա մոտ 300 անդամագրված անձ: Սույն թվում հաշվի է առնվել այն հանգամանքը, որ միևնույն անձը կարող էր մասնակցել 2 կամ ավելի մրցույթների: Աշխատաշուկայի ճիշտ պատկերը ստանալու նպատակով նման անձինք հարցվողների ցուցակում ընդգրկվել են միայն մեկ անգամ: Անհրաժեշտ է նշել, որ այս 300-ի մեծ մասը հանդիսանում են ուսումնառության նպատակով անդամագրված անհատներ, որոնք համապատասխան գործունեությամբ դեռևս չեն զբաղվում: Արդյունքում՝ զուտ տվյալագետների թիվը գնահատվել է ընդամենը մոտ 120 հոգի: Հետևաբար, ռեսպոնդենտների նման թվի պարագայում նշանակալի արդյունքների ստացման

[1] Տե՛ս "«Big Data predictions for 2017»:

[2] Տե՛ս world Economic Forum, «25 Best jobs», 2015:

[3] Որոշ հարցեր բաղկացած են եղել նաև ենթահարցերից:

համար անհրաժեշտ էր ձևավորել առնվազն 54 հոգուց բաղկացած ընտրանք, որը կապահովեր 10% սխալանք՝ 95% վստահելիության միջակայքում:

Իրականում հարցմանը մասնակցել են 76 հոգի՝ գերազանցելով վերոնշյալ ընտրանքի ստորին սահմանը և ապահովելով ավելի բարձր նշանակալիություն, միաժամանակ լինելով նաև ներկայացուցչական ռեսպոնդենտների ավելի մեծ թվի պարագայում[4]: Հաշվարկի հիմքում դրվել է ընտրանքի մեծության հաշվարկի համար կիրառվող Wald մեթոդը:

Տվյալագիտության ոլորտում իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունների և դասագրքերի հրատարակմամբ զբաղվող O'Reilly հրատարակչությունն արդեն 3 տարի անընդմեջ իրականացնում է տվյալագետների համաշխարհային հարցում՝ ներկայացնելով ոլորտում տիրող իրավիճակը, օգտագործվող հիմնական ծրագրային փաթեթները և տվյալագետների ժողովրդագրական կազմը[5]: Մեր կողմից իրականացվելիք հարցման արդյունքները տվյալագետների համաշխարհային հարցման չափորոշիչներին համահունչ դարձնելու նպատակով O'Reilly կազմակերպությունից ստացել ենք իրենց կազմած հարցաթերթը և այն համապատասխանեցրել ՀՀ իրավիճակին՝ կրճատելով նաև որոշ նեղ մասնագիտական հարցեր, որոնք սույն հետազոտության խնդրո առարկան չէին հանդիսանում:

Հարցման մասնակիցները հարցաթերթում լրացրել են ժողովրդագրական բնույթի 3 դասական հարց, այն է՝ տարիքը, սեռը և աշխատանքային փորձը: Գծապատկեր 1-ում ցուցադրված է հարցման մասնակիցների սեռային բաշխվածությունը: Ինչպես ներկայացված է գծապատկերում, տվյալագետների ճնշող մեծամասնությունը (68,4%-ը) հանդիսանում է արական սեռի ներկայացուցիչ, ինչն ավելի քան երկու անգամ գերազանցում է իգական սեռի ներկայացուցիչների թիվը: Տվյալագիտության ոլորտում իգական սեռի նման ցածր ներգրավածությունը կարող է բացատրվել երկու պատճառով.

- Մեծ տվյալները, ինչպես հայտնի է, հնարավոր չէ վերլուծել դասական /ավանդական/ եղանակով. այս աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ են որոշակի, անհամեմատ ավելի խորը համակարգչային գիտելիքներ: Գծապատկերում ներկայացվածը լիովին համահունչ է SS ոլորտի մասնագետների սեռային բաշխվածության վիճակագրությանը, ինչը փաստում է /համաձայն «Զեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի 2015 թվականի հաշվետվության/, որ ոլորտում ներգրավված մասնագետների 68%-ը արական սեռի ներկայացուցիչներ են[6]:
- ՀՀ տնտեսության ճյուղերի մեծ մասում, անկախ գենդերային հորիզոնական խտրականության հանգամանքից, իգական սեռի զբաղվածության աստիճանը զգալիորեն ցածր է արական սեռի զբաղվածության աստիճանից[7]:

Այնուամենայնիվ, այս ցուցանիշը ՀՀ-ում բնութագրում է մասնագետների սեռային բաշխվածության ավելի մեծ համասեռություն, քան համաշխարհային միջին ցուցանիշը: Համաձայն O'Reilly-ի հարցման արդյունքների՝ արական և իգա-

[4] 76 հոգին նաև 95% վստահության միջակայք և 10% սխալանք ապահովելու համար անհրաժեշտ ընտրանքի մեծությունն է մինչև 360 ռեսպոնդենտի պարագայում:

[5] Տե՛ս O'REILLY, «2015 Data Science Salary Survey».

[6] Զեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, «ՀՀ SS ոլորտի հաշվետվություն», 2015թ.:

[7] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում», 2016թ, էջ 55

կան սեռերի հարաբերակցության համաշխարհային միջին ցուցանիշը հավասար է 4:1-ի:



Գծապատկեր 1. Տվյալագետների սեռային բաշխվածությունը ՀՀ-ում

Մասնագետների թիվը միակ փոփոխականը չէ, որն արական սեռի շրջանում իգականի համեմատ ավելի բարձր ցուցանիշ է: Ընտրանքային հարցման մասնակիցները պատասխանել են նաև այն հարցին, թե ներկայիս աշխատանքը լքելու պարագայում որքանով հեշտ կլինի նոր աշխատանք գտնելը: Արական սեռի տվյալագետների շրջանում 1-5 միջակայքում այդ ցուցանիշը միջինում կազմում է 4,23, ինչը նշանակում է, որ տղամարդկանց կարծիքով իրենց աշխատատեղը փոխելը բավականին հեշտ կլինի: Պատկերն այլ է իգական սեռի շրջանում, որտեղ հեշտորեն աշխատանք գտնելու միջին ցուցանիշը 2,83 է: Թերևս դա պայմանավորված է տարիքով և աշխատանքային փորձով, քանզի արական սեռի հարցվածների միջին տարիքը (31) 5 տարով գերազանցել է իգական սեռի հարցվածների միջին տարիքը (26): Ինչ վերաբերում է տարիքային ընդհանուր բաշխվածությանը, ապա հարցվողների ավելի քան կեսը (52%-ը) 24-28 տարեկան մասնագետներ են, ինչը դարձյալ վկայում է ոլորտի կադրերի երիտասարդության մասին: Աշխատանք գտնելու հեշտության մասին տվյալները O'Reilly-ի հաշվետվությունում չեն ներկայացվում ըստ սեռատարիքային բաշխման: Նշվում է միայն ընդհանուր միջին ցուցանիշը՝ 3,63, որը փոքր ինչ զիջում է ՀՀ աշխատաշուկայում հաշվարկված միջինին՝ 3,78:

Մասնագիտական փորձառության մասին տրված հարցին մասնակցիների 15,8%-ը պատասխանել է, որ այդ ոլորտում ունի 8 տարուց ավելի աշխատանքային փորձ: Ելնելով այն հանգամանքից, որ տվյալագիտությունը նոր մասնագիտություն է, և 8 տարի առաջ դեռևս ձևավորված չէր որպես առանձին ոլորտ, ենթադրվում է, որ հարցվողներն այդ թվում ներառել են նաև տվյալների ավանդական վերլուծության իրենց մասնագիտական փորձը: Հատկանշական է, որ արական սեռի ներկայացուցիչների ավելի քան կեսն (52%) ունի 5 և ավելի տարիների փորձ, մինչդեռ իգական սեռի բոլոր ներկայացուցիչներն ունեն դրանից ավելի քիչ փորձառություն:



Գծապատկեր 2. Տվյալագետների բաշխվածությունը՝ ըստ մասնագիտական փորձի

Զարմանալիորեն այս ցուցանիշը չի ընդգրկվել վերոնշյալ միջազգային հարցման հարցաթերթում: Այդ իսկ պատճառով, համեմատության համար հիմք է վերցվել Մասաչուսեթսի Տեղեկատվական տեխնոլոգիաների համալսարանի «Կառավարման գիտություններ» բաժանմունքի 2015թ. տարեկան հաշվետվությունը[8]: Համաձայն այդ հաշվետվության՝ տվյալագետների աշխատանքային միջին փորձառությունը 5 տարին է:

Տվյալագետների աշխատավարձի մեծությունը զգալիորեն տարբեր է ՀՀ-ում միջին աշխատավարձի ցուցանիշից: ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմում է 187850 ՀՀ դրամ, որը ենթադրում է մոտ 130000 ՀՀ դրամ զուտ աշխատավարձ[9]: Ամենաբարձր միջին աշխատավարձերը գրանցվել են ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում՝ մոտ 280,70 հազար դրամ և տեղեկատվության ու կապի ոլորտում՝ մոտ 264,25 հազար դրամ: Հարցման մասնակիցները հնարավորություն են ունեցել ընտրել եկամտային տարբեր միջակայքեր, և արդյունքում պարզվել է, որ հարցված բոլոր տվյալագետներն ավելի շատ են վաստակում, քան միջին աշխատավարձն է: Ոլորտի բարձր արտադրողականության մասին վկայում է այն հանգամանքը, որ մասնագետների 78%-ն ավելի բարձր աշխատավարձ են ստանում, քան ֆինանսական և ապահովագրական գործունեության, տեղեկատվության ու կապի ոլորտներում զբաղվածների միջին աշխատավարձն է: Հատկանշական է, որ հարցման մասնակիցների 47%-ը զբաղված է բարձր տեխնոլոգիաների բնագավառում գործող կազմակերպություններում, որոնք ներառված են տեղեկատվության և կապի ոլորտում:

Այնուամենայնիվ, չնայած նման բարձր ցուցանիշներին, ՀՀ աշխատաշուկայում տվյալագետների միջին աշխատավարձն անհամեմատ ցածր է ԱՄՆ-ում ձևավորված համապատասխան աշխատավարձի մակարդակից. վերջինս, համաձայն O'Reilly-ի հաշվետվության, կազմում է ամսական 8,660 հազար ԱՄՆ

[8] Տե՛ս «Minding the Analytics Gap», MIT Sloan Management Review, volume 56, no.3 (Spring 2015), pp. 63-68.

[9] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվարի դրությամբ», 2016թ. էջ 53:

դոլար: Այս երկու ցուցանիշները միմյանց հետ համադրելի դարձնելու նպատակով հաշվի են առնվել երկու երկրների սպառողական գների ինդեքսները և արդյունքում ստացվել է, որ ԱՄՆ-ում ամսական 8,660 հազար դոլար աշխատավարձը համապատասխանում է ՀՀ-ում ամսական 3,870 հազար դոլար աշխատավարձին: Այս գումարն ակնհայտորեն գերազանցում է տեղական շուկայի համար հաշվարկված միջին ցուցանիշը, ինչը նշանակում է, որ ՀՀ-ը միջազգային շուկայում կարող է գնային շոշափելի մրցակցային առավելություն ունենալ տվյալագիտական ծառայությունների մատուցման ասպարեզում:

Ելնելով այն հանգամանքից, որ Մեծ տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը պահանջում է աշխատանքային, նյութական ու ֆինանսական ռեսուրսների զգալի ներդրումներ, ինչպես նաև հաշվի առնելով տվյալագետների բարձր միջին աշխատավարձը, կարելի է ենթադրել, որ ՀՀ-ում տվյալագետների պահանջարկ կներկայացնեն հիմնականում խոշոր կազմակերպությունները:

Հարցման արդյունքում պարզվել է, որ տվյալագետների 57,9%-ը զբաղված են 100 և ավելի, իսկ 84,2%-ը՝ 21 և ավելի աշխատակից ունեցող ընկերություններում: 15,7%-ը ուսանող են կամ նորավարտ և դեռևս պրակտիկա կամ փորձաշրջան են անցնում:



Գծապատկեր 3. Աշխատակիցների քանակը՝ հարցմանը մասնակցած մասնագետների ընկերություններում

Հետաքրքրական է, որ հարցվողների միայն 15,8%-ի հաստիքի անվանումն է «Տվյալագետ», և բոլորն էլ աշխատում են 100-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպություններում: Մնացած մասնակիցների հաստիքները կրում են ավելի նեղ մասնագիտական անվանումներ, ինչպես, օրինակ՝ ֆինանսական տվյալների վերլուծաբան, միկրոբիոլոգիական տեխնոլոգիական ինժեներ և այլն:

Հարցմանը մասնակցած բոլոր տվյալագետներն ունեն բարձրագույն կրթություն, իսկ նրանց 89,4%-ը՝ մագիստրոսի կամ գիտությունների թեկնածուի աստիճան: Բուհական մասնագիտացման տեսանկյունից առաջին տեղում են գտնվում տնտեսագետ-վիճակագիրները, ովքեր հարցվածների 36,8%-ն են: Երկրորդ տեղում ծրագրավորողներն ու մաթեմատիկոսներն են, որոնք կազմում են հարցման մասնակիցների 21,1%-ը: Այս փաստը ևս մեկ անգամ ընգծում է տվյա-

լագիտությամբ զբաղվելու համար անհրաժեշտ երեք կարևոր՝ վիճակագրության, համակարգչագիտության և տնտեսագիտության ոլորտներում, ձեռք բերվող գիտելիքների զուգակշռված համակցման կարևորությունը:

O'Reilly-ի կողմից իրականացվող հարցման հարցաթերթին ավելացվել է ևս մեկ հարց: Տվյալագետները 1-5 սանդղակով գնահատել են իրենց իսկ հմտությունները: Հարցմանը մասնակցած տվյալագետների միջինացված ցուցանիշը 2,68 է: Այս թիվը հավասարապես հանդիսանում է միջին ցուցանիշ և՛ արական, և՛ իգական սեռի ներկայացուցիչների շրջանում:

Ինչպես երևում է գծապատկեր 4-ից՝ տվյալագետների 10,5%-ն իրենց գիտելիքները գնահատել են ցածրագույն՝ 1 նիշով: Այս անձինք պրակտիկանտներ են, ովքեր թերևս նոր են ընտելանում ոլորտին, քանզի ներկայումս բուհական մասնագիտական կրթությունը դեռևս չի պատրաստում այդ ոլորտի մասնագետներ:



Գծապատկեր 4. Տվյալագետների հմտության սեփական գնահատականը

Վերջինիս ապացույցն է նաև հանդիսանում այն փաստը, որ հարցման մասնակիցների 78,9%-ն իրենց ներկայիս հմտությունները ձեռք են բերել ինքնուսուցման եղանակով (մասնագիտական գրականություն, տարատեսակ «online» ուսումնական ծրագրեր և այլն):

Հարցաթերթի մեջ ընդգրկվել է նաև հարց առօրյայում Մեծ տվյալների վերլուծության նպատակով հարցվողի կողմից կիրառվող գործիքակազմի մասին: Գրանցվել են 27 տարբեր ծրագրային փաթեթների անվանումներ: Հարցվողների մեծամասնությունը՝ 52,4%-ը, տիրապետում է Python և R անվանումներով վիճակագրական ծրագրավորման լեզուներին, կամ՝ երկուսին միաժամանակ: Այս ցուցանիշը նույնպես համահունչ է O'Reilly-ի հաշվետվությանը: Վերջինս հավաստում է, որ վերոնշյալ ծրագրավորման լեզուները ոչ միայն ամենաօգտագործվողն են տվյալագիտության ոլորտում, այլև՝ ամենապահանջվածն են աշխատաշուկայում: Ըստ էության սույն փաստը վկայում է տեղական աշխատաշուկայում Մեծ տվյալների վերլուծությամբ զբաղվող մասնագետների՝ համաշ-

խարհային զարգացման միտումներին տեղեկացվածության և դրանց հետևելու մասին:

Բանալի բառեր-Մեծ տվյալներ, տվյալագիտություն, առաջարկ, հարցում, վերլուծություն

Հարություն Մարզպանյան, Հրանտ Դավթյան, Տվյալագետների աշխատուժի առաջարկը ՀՀ աշխատաշուկայում. Ընտրանքային հարցման արդյունքների վերլուծություն-Սույն հոդվածն ուսումնասիրում է ներկայումս աշխարհում ամենապահանջված մասնագետիտություններից մեկի՝ տվյալագիտության աշխատուժի առաջարկը ՀՀ-ում: Իրականացված ընտրանքային քանակական հետազոտությունը տեղեկատվություն է տրամադրում տվյալագետների ժողովրդագրական կազմի, եկամտային խմբի, հմտությունների և աշխատակիցների մասին: Հարցման արդյունքները զուգահեռաբար համեմատվել են միջազգային վիճակագրական զուցանիշների հետ:

Арутюн Марзпанян, Грант Давтян, Предложение специалистов по науке о данных на рынке труда РА: Анализ результатов опроса-В данной статье рассматривается предложение одной из самых востребованных специалистов в мире-специалистов по науке о данных на местном рынке. Количественное исследование проведенное в статье показывает демографию участников опроса и предоставляет информацию об оценки их квалификации, о группе их доходов, и о количестве сотрудников компании, в которой они работают. Также в работе предоставляется сравнение местного рынка с международной статистикой .

Harutyun Marzpanyan, Hrant Davtyan, Supply of data scientists in the labor market of RA: Analysis of survey results-his paper examines the supply of one of the most demanded specialists in the world, data scientists in the local market. The quantitative survey shows the demographics of the survey participant data scientists and provides information on their income group, skill estimation and number of employees in the company they are working. Comparison with international statistics is provided.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՎԱՀԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Առևտրային կազմակերպություններում կառավարչական հաշվառման զարգացումը հաշվի է առնում գործարարության կազմակերպման առանձնահատկությունները, և հատկապես մրցակցային ռազմավարությունը արդիական պահանջներ է դրվում հաշվառման տեղեկատվության ձևավորման նկատմամբ, այն ռետրոսպեկտիվ ոլորտից տեղափոխելով տեսանելի ապագային ուղղված ռազմավարական որոշումների ոլորտ[1]: Այս դեպքում հիմնախնդիր է դառնում ֆինանսական ռիսկերի չափման մեթոդաբանության կիրառման գիծը, որը տարբեր կերպ է մեկնաբանվում մասնագիտական գրականությունում: Նշելով գործարարության ֆինանսական ռիսկերի արդյունքային ցուցանիշների ընդգրկման անհրաժեշտությունը կառավարչական հաշվառման համակարգ, հեղինակները այնուամենայնիվ տարակարծություն են հայտնում դրամական չափիչների օգտագործման առումով, նշելով, որ առավել նպատակահարմար է ռիսկերը չափել և արժևորել բալային համակարգով[2]:

Մասնագիտական գրականությունում ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքների տնտեսական չափում և փաստաթղթային արձանագրման այլընտրանքային մոտեցում է ցուցաբերվում, երբ ռիսկային ցուցանիշների գծով սահմանված հաշվեկշռից բացահայտված շեղումները արձանագրվում, ամփոփվում և այնուհետև ենթարկվում են հաշվառման, արդյունքում հաշվետվական տեսքով տեղեկատվություն ներկայացնելով կառավարչական որոշումների համար: Այդ նպատակով, առաջարկվում է կազմակերպել առանցքային ցուցանիշների շեղումների համակարգված կառավարչական հաշվառում, որը ինտեգրված չէ ֆինանսական հաշվառման հետ և գործում է վերջինից առանձնացված[3]: Հարկ է ընդգծել, որ ֆինանսական գործակիցներից շեղումները նման դեպքում գնահատվում են ոչ դրամային չափիչներով, ուստի դրանց հաշվառումը չի ներդաշնակվում ավանդական ֆինանսական կամ կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերի հետ:

Մեր կարծիքով, ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքների չափման առավել նպատակայաին մոտեցում կդրսևորվի այն դեպքում, երբ բալային կամ գործակցային գնահատականների փոխարեն օգտագործվեն դրամային չափիչներ: Քանի որ ֆինանսական ռիսկերի դրսևորումները առևտրային կազմակերպություններում դրսևորվում են ակտիվների ձեռքբերման աղբյուրների կառուցվածքային փոփոխությունների և տնտեսավարման կայուն զարգացման ընթացքի

---

[1] **Юрасова, И. О.** Стратегический управленческий учет / И. О. Юрасова // Бухгалтерский учет, 2006. №24, стр. 20-26.

[2] **Անդրեասյան Ն.,** Ռիսկային որոշումների կայացման մեթոդաբանության հիմնախընդիրները բանկերում, //Ակունք, 2016 2 (14) 115-121:

[3] **Գևորգյան Ջ.,** Կառավարչական ցուցանիշների գնահատման մոտեցումները, //ՀՀ բուհական և տնտեսական համակարգերի փոխազդեցության և կառավարման բարելավման հիմնախնդիրները, հանրապետական գիտամեթոդական կոնֆերանսի հոդվածների ժողովածու, ԵՊՀ, էջ 146:

ներդաշնակության խախտման հետևանքով, ապա հնարավորություն է ստեղծվում կիրառելու դրամային չափիչներով ռիսկերի ձևավորման արդյունքների արձանագրման և դրանք կառավարչական հաշվառման համակարգում ներառելու համար:

Այս առումով, ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքների արժևորման պարագայում նպատակահարմար ենք համարում կիրառելու սեփական կապիտալի և փոխառու միջոցների կառուցվածքային տեղաշարժերի ու փոփոխությունների չափումները, որոնք բխում են մի շարք հանգամանքներից: Նախ, այս դեպքում ֆինանսական ռիսկերի դրսևորման արդյունքների գծով հնարավոր է կիրառել դրամային չափիչներ, քանի որ առևտրային կազմակերպությունների կապիտալն ու պարտավորությունները արդեն իսկ ներկայացվում են դրամային չափիչներով, ուստի դրանց կառուցվածքին տեղաշարժերի արձնագրումը դրամային չափիչներով իրենից առանձնապես դժվարություն չի ներկայացնում:

Բացի այդ, կազմակերպությունների ակտիվներն ու դրանց ձևավորող աղբյուրները կապիտալի և պարտավորությունների մասով արդեն իսկ հաշվեկշռված են, ուստի դրամային չափիչներով արձանագրված կառուցվածքային տեղաշարժերը որպես ֆինանսական ռիսկերի բնորոշիչներ՝ հնարավոր է կրկնակի հաշվառմամբ ընդգրկել կառավարչական հաշվառման համակարգ[4]:

Եվ ի վերջո, առևտրային կազմակերպություններում կիրառելով ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքների դրամային չափում և կրկնակի գրանցմամբ հաշվառում, հնարավորություն է ստեղծվում ոչ միայն ինտեգրելու ֆինանսական և կառավարչական հաշվառման համակարգերը, այլև հաշվային տեղեկատվություն ներկայացնելու ֆինանսական միկրո հավասարակշռության խաղտման գծով:

Առևտրային կազմակերպություններում ֆինանսական միկրոհավասարակշռությունը ոչ միայն բնութագրում է ֆինանսական կայունության ընդունելի սահմանը, այլև ռիսկերին դիմելու հիմնավորվածությունը՝ գործարարության կայուն զարգացման տեսանկյունից: Այսպես, եթե մակրոտնտեսական միջավայրում մակրոհավասարակշռությունը ենթադրում է համընդհանուր առաջարկի և համընդհանուր պահանջարկի համարժեքության իրավիճակ, ապա միկրտնտեսական միջավայրում ֆինանսական միկրոհավասարակշռությունը ենթադրում է գործարարության ռիսկերից բխող հավանական վնասների դիմաց դիմակայման կազմակերպության ֆինանսական պաշարների բավարար համարժեքություն:

Հետևաբար, եթե կազմակերպությունների սեփական կապիտալի և փոխառու միջոցների կառուցվածքային տեղաշարժերը չեն կարողանում փոխհատուցել տեսանելի ապագայում ֆինանսական ռիսկերից բխող բացասական հետևանքները, ապա ռիսկը չի կարող համարվել արդարացված: Բնականաբար, որքան որ համահունչ լինեն սեփական և փոխառու միջոցների կառուցվածքային փոփոխությունները առևտրային կազմակերպությունների կայուն զարգացման ընթացքին, այնքան փոքր կլինեն գործարարության ֆինանսական ռիսկերը և կդիտարկվի ցանկալի ֆինանսական միկրոհավասարակշռվածություն:

Զգտելով առավելագույն շահույթի ստացմանը, առևտրային կազմակերպությունները դիմում են գործարարության ռիսկերի: Այսինքն, որքան որ մեծանում է

[4] **Чая В.Т., Адушкин А.Е.,** Сбалансированная система показателей как инструментарий управления стоимостью торгового предприятия, //Авудит и финансовый анализ, #4, 2009, стр. 42-46.

տեսանելի ապագայում մրցակցային շուկայում շահույթի ավելացումների ձգտումը, այնքան մեծանում է ֆինանսական ռիսկերի ձևավորման աստիճանը (տես գծապատկեր 1, կոր G): Սակայն, մյուս կողմից, կազմակերպությունները չեն կարող անվերջ դիմել ռիսկային գործարքների՝ ի հեճուկս շահույթի ավելացման, քանի որ ռիսկային ֆինանսական միջավայրի ձևավորումը ծնում է սնանկացման վըտանգներ և ֆինանսական կայունության պաշարի անկում (տես գծապատկեր 1, կոր S):



Գծապատկեր 1. Ֆինանսական միկրոհավասարակշռությունը շահույթի փոփոխման և անփոփոխ ֆինանսական պաշարի փոխկապվածության պարագայում[5]

Ուստի, առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության պաշարի և շահույթի ձևավորման կորերի հատման B_0 կետում կձևավորվի ֆինանսական միկորահավասարակշիռ իրավիճակ, որը կհամապատասխանի R_0 ռիսկայնության պարագայում շահույթի ձևավորման V_0 արժեքին: Եթե ֆինանսական կայունության պաշարի կայունացման գործընթացում առաջընթաց չնկատվի և այն մնա S_0 կորի անփոփոխ պայմաններում, իսկ փոխարենը դիտարկվի կազմակերպության շահույթի անկման միտում (G1 կոր), ապա կարձանագրվի գործարարության ֆինանսական ռիսկերի ավելացում՝ R_0 կետից R_1 կետ, որից հետո կձևավորվի ֆինանսական միկրոհավասարակշռության B_1 կետում (գծապատկեր 2): Սակայն, կազմակերպությունում առկա նման իրավիճակը ֆինանսական տեսանկյունից կհամարվի խիստ ռիսկային, քանի որ ձևավորված մակրոհավասարակշռությունը կձևավորվի ինքավարության և լուծարե-

[5] Կազմված է հեղինակի կողմից:

լիության աստիճանների կորստի գծով և հարց կառաջանա դրանք հիմնավորելու տնտեսավարման կայուն զարգացման առումով:



Գծապատկեր 2 Ֆինանսական միկրոհավասարակշռությունը հավասարակշռության շահույթի և ռիսկայնության աճի փոխկապվածության պարագայում[6]

Եվ հակառակը, եթե ֆինանսական կայունության պաշարի անփոփոխ պայմաններում (S_0 կոր) նկատվի կազմակերպության շահույթի աճի միտում (G1 կոր), ապա կնկատվի գործարարության ֆինանսական ռիսկերի կրճատում՝ R_0 կետից R_2 կետ, որից հետո կձևավորվի ֆինանսական միկրոհավասարակշռության B_2 կետում, որը չի դրսևորվի ֆինանսական ավելորդ լարվածությամբ (տես գծապատկեր 2):

Այս առումով, ֆինանսական ռիսկայնության փոփոխությունների գնահատումները (ΔR_1, ΔR_2) և դրանց դրամական չափիչներով ընդգրկումը հաշվապահական հաշվառման համակարգ, էականորեն կբարելավվի ռիսկերի գծով առևտրային կազմակերպություններում կառավարչական որոշումների կայացման տեղեկատվության ապահովումը:

Մեր կարծիքով, ֆինանսական ռիսկայնության փոփոխությունները հնարավոր է չափելի դարձնել, օգտվելով կազմակերպություններում օգտագործվող ֆինանսական գործակիցների նորմատիվային մեծություններից, որոնք կառուցվում են կազմակերպությունում ներդրված սեփական կապիտալի, ինչպես նաև դրան զուգահեռ ձևավորված փոխառու միջոցների դրամային արժնորմամբ: Քանի որ, կազմակերպությունների ակտիվների ձեռքբերման ֆինանսական աղբյուրները

[6] Կազմված է հեղինակի կողմից:

սեփական կապիտալն ու պարտավորություններն են, որոնք նորմատիվային դրսևորումներն են ստանում ֆինանսական գործակիցներում, ուստի դրանով հնարավորություն է ստեղծվում որոշելու սահմանված նորմատիվային դաշտում այդ ցուցանիշների շեղումները, որոնք համարժեք են ֆինանսական ռիսկայնության դրական կամ բացասական փոփոխություններին (ΔR_1, ΔR_2):

Այսպես, աղյուսակ 2-ը ցույց է տալիս առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի ձևավորման նախադրյալները, որոնք բխում են սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության կառուցվածքի փոփոխություններից: Ընդ որում, այդ կառուցվածքային փոփոխությունները դիտարկվում են ֆինանսական գործակիցների այն նորմատիվային դաշտի կտրվածքով, որով կազմակերպություններում ապահովվում է կայուն ֆինանսական պաշար: Նորմատիվային սահմաններից շեղումները դրամական չափիչներով ներկայացնում են ձևավորված ֆինանսական ռիսկերը, որոնց առաջարկում են ընդգրկել կառավարչական հաշվառման համակարգ:

Եթե առևտրային կազմակերպությունը սահմանել է, որ ընթացիկ իրացվելիության ֆինանսական գործակիցը պետք է գերազանցի 2,0 մակարդակը, ապա այդ պարագայում ընթացիկ պարտավորությունները պետք է առնվազն երկու անգամ քիչ լինեն ընթացիկ ակտիվներից, և բնականաբար, դրամային չափիչներով ընթացիկ պարտավորությունների փաստացի մնացորդի շեղումը (ΔR) սահմանված նորմայից կգնահատի ձևավորված ֆինանսական ռիսկի աստիճանը: Նույնը վերաբերում է կազմակերպության ակտիվների ձևավորման ֆինանսական մյուս երկու աղբյուրներին՝ սեփական կապիտալին ու ոչ ընթացիկ պարտավորություններին, որոնք դիտարկվում են սահմանված այլ նորմաների շրջանակում:

Այսպիսով, ֆինանսական ռիսկերի ճանաչման և չափման հիմնախնդիրները կառավարչական հաշվառման համակարգում մեր կողմից առաջարկվում է լուծել առևտրային կազմակերպությունների ակտիվների ֆինանսավորման աղբյուրների նորմատիվային մեծություններից շեղումների գնահատման և արձանագրման ճանապարհով:

Բանալի բառեր-ֆինանսական միկրոհավասարակշռություն, ֆինանսական ռիսկերի կառավարում, ֆինանսնսական ռիսկերի գնահատում, ռիսկերի հաշվառում:

Վահան Պողոսյան, Ֆինանսական ռիսկերի չափման հիմնախնդիրները կառավարչական հաշվառման համակարգում-Առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերը գնահատվում են տարբեր, և երբեմն էլ բարդ եղանակներով: Հոդվածում առաջարկվում է ռիսկերը ներկայացնել դրամային չափիչներով և ընդգրկել կառավարչական հաշվառման համակարգ: Այս դեպքում, մենեջմենթը հնարավորություն կունենա ստանալու ընդլայնված տեղեկատվական հոսքեր, որոնք կիրառելի կլինեն ռիսկերի գծով արդյունավետ կառավարչական որոշումների կայացման համար:

Ваган Погосян, Проблемы измерения финансовых рисках в системе управленческого учета-В коммерческих организациях финансовые риски оцениваются по разным, и временами, по сложными способами. В статье предлагается финансовые риски представить по денежным измерениям и их включить в систему

управленческого учета. При этом менеджмент будет иметь возможность для получения расширенных бухгалтерских информационных потоков, которые будут полезным при принятий эффективных управленческих решений по финансовым рискам.

Vahan Poghosyan, Challenges in measuring financial risks in the system of management accounting-In commercial organizations financial risks are assessed by different, and at sometimes, in complex ways. The article proposes to present financial risks to monetary dimensions and include them in the management accounting system. At the same time, the management will be able to receive extended accounting information flows, which will be helpful in peocess of making effective managarial decisionsabout financial risks.

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ձեռնարկատիրական գործունեության բնութագրումը իր բազում մեկնաբանություններ են ստացել թե՛ տեսաբանների, և թե՛ գործարարաների կողմից, և այնուամենայնիվ, դեռևս չի ձևավորվել բոլորի կողմից ընդունելի տնտեսագիտական համընդհանուր բնորոշում: Որպես կանոն, ձեռնարկատիրական գործունեությունը դիտարկվում է որպես գործարարաի առանձնահատուկ ունակությունների իրացում, երբ նորամուծական ռիսկային մոտեցումներով տեղի է ունենում արտադրական գործոնների ռացիոնալ համախմբում՝ շահույթ ստանալու նպատակով[1]:

Զարգացած շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկատիրական գործունեությունում ընդգրկված են հետևյալ հիմնական գործառույթները. ընդհանուր տնտեսական, նորարական, ռեսուրսային, սոցիալական, կազմակերպչական, բնապահպանական: Շուկայական տնտեսությունը բնորոշող հիմնական բնութագրիչը ընդհանուր տնտեսական գործառույթն է, որը պայմանավորված է շուկայի սուբյեկտների դերակատարումով: Ձեռնարկատիրական գործունեությունը՝ իրականացվելով շուկայական տնտեսության օրենքների ողջ համակարգի ազդեցությամբ, ուղղված է ապրանքների արտադրությանը, ծառայությունների մատուցմանը և դրանք վերջնական սպառողներին հասցնելուն՝ տնային տնտեսություններին, պետությանը, այլ ֆիրմաներին, որն էլ կանխորոշում է ընդհանուր տնտեսական գործառույթը:

Ձեռնարկատիրությանը բնորոշ է ստեղծագործական, նորարարական գործառույթները, որոնք վերաբերում են ոչ միայն ձեռնարկատիրական գործունեության ընթացքում նոր գաղափարների ներդրմանը, այլև ձեռնարկության առջև դրված նպատակների իրագործմանն ուղղված նոր միջոցների, գործիքների ու լուծումների մշակմանն ու կիրառմանը: Ստեղծարար սկզբունքը անմիջականորեն կապված է մնացած բոլոր գործառույթների հետ և պայմանավորված է ձեռնարկատիրական սուբյեկտների տնտեսական ազատության աստիճանով, որն իր հերթին նպաստում է արդյունավետ կառավարչական որոշումների ընդունմանը:

Ձեռնարկատիրության որոշիչ գործառույթներից է ռեսուրսային կամ վերաբաշխման գործառույթը: Ձեռներեցության զարգացումը ենթադրում է սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործում: Ընդ որում ռեսուրս ասելով հասկանում ենք արտադրության մեջ օգտագործվող ինչպես նյութական այնպես էլ ոչ նյութական միջոցները: Դրանք աշխատանքային ռեսուրսներներն են, արտադրական բոլոր միջոցները, գիտական նվաճումները, ինչպես նաև ձեռնարկատիրական ունակությունը:

Ձեռնարկատերը կարող է հասնել առավելագույն արդյունքի, եթե կարողանա գեներացնել և ներդնել նորարարական գաղափարներ իր ծավալած գործունեության ոլորտում՝ ներգրավելով որակավորված և համապատասխան կարողու-

[1] Տե՛ս **Խաչատրյան Ն, Մակիչյան Մ.,** Ինչպես կազմել բիզնես պլան, //Էդիթ Պրինթ հրատ., 2012, էջ 15:

թյուններով աշխատուժ, միաժամանակ արդյունավետ օգտագործելով իր տրամադրության տակ եղած ռեսուրսները: Սակայն ձեռնարկատերերի շահույթի մաքսիմալացման ձգտումը հանգեցնում է նրանց կողմից ռեսուրսների անխնա օգտագործմանը, իսկ դրանք սահմանափակ են: Այդպիսի ձեռնարկատերերը իրենց գործունեությամբ մեծ վնաս են հասցնում ինչպես հանրությանը, այնպես էլ շրջակա միջավայրին: Ձեռնարկատերը հանդիսանալով ռեսուրսի սեփականատեր շահագրգռված է դրա ռացիոնալ օգտագործմամբ, սակայն միևնույն ժամանակ կարող է նաև անխնա վերաբերել հասարակական ռեսուրսներին: Այս առումով էլ կարևորվում է պետության կարգավորող և վերահսկող դերը տնտեսվարման համակարգում՝ընդունելով իրավական ակտեր, գործարարության ընթացքում ռեսուրսային գործառույթը ճիշտ կիրառելու համար:

Շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման ընթացքում ձեռնարկատիրությունը ձեռք է բերում նաև սոցիալական գործառույթ: Յուրաքանչյուր աշխատունակ անհատ հնարավորություն ունի լինել բիզնեսի սեփականատեր, որը պայմանավորված է իհարկե անհատի ֆինանսական, մտավոր հնարավորություններով և ունակություններով: Եվ իզուր չէ, որ սոցիալական գործառույթը ակնհայտ արտահայտվում է հենց այն ձեռներեցների շրջանում, ովքեր ձգտում են ինքնուրույն տնտեսական գործունեությանը, ստեղծում սեփական բիզնես, և իրենց հնարավորությունների և ունակությունների շնորհիվ հաղթահարում բիզնես միջավայրով պայմանավորված դժվարությունները՝ հասնելով նախանշված նպատակներին:

Ձեռնարկատիրական գործունեությունը ավելացնում է նաև վարձու աշխատողների թվաքանակը, ովքեր ևս տնտեսապես ու սոցիալապես կախված են ֆիրմայի գործունեության կայունությունից: Որքան արդյունավետ է ֆիրման իրականացնում իր գործառույթները, այնքան ավելի էական է բյուջե մուտք գործող եկամուտներն ու միջոցները, որն էլ իր հերթին մեծացնում է արտաբյուջետային սոցիալական վճարները:

Ձեռնարկատիրության հաջորդ գործառույթը կազմակերպչականն է, որը նախ և առաջ դրսևորվում է սեփական գործ սկսելու ձեռնարկատիրոջ ինքնուրույն որոշում ընդունելիս, գործունեության ընթացքում անհրաժեշտ կառավարչական որոշումներ կայացնելիս, ռազմավարության ձևավորման և փոփոխման ժամանակ և այլն: Կազմակերպչական գործառույթը առավել կարևորվում է ՓՄՁ-ների ձևավորման և զարգացման ընթացքում:

Ձեռնարկատիրական գործունեության գործառույթների շարքին է դասվում նաև բնապահպանականը: Գործարարության շարժառիթը ավանդաբար հանդիսացել է շահույթի հետապնդումը: Սակայն ներկայումս տնտեսավարման ոլորտը հարկադրված ընդարձակում է իր առջև դրված նպատակների շրջանակը՝առաջնահերթությունը հետզհետե տնտեսական դաշտից փոխանցելով նաև բնապահպանության և սոցիալական ոլորտ: Ներկայումս գործող կազմակերպություններում հիմնախնդիր է հանդիսանում տնտեսվարման ոլորտում «կայուն զարգացման» սկզբունքի կիրառումը, համաձայն որի արդյունաբերական արտադրության աճը, մարդկանց բարեկեցության աճը պետք է ուղեկցվեն ոչ թե բնապահպանության անկմամբ, այլ հակառակը՝շրջակա միջավայրի որակական բարելավմամբ[2]:

[2] Տե՛ս **Чуйкова Л.Ю.,** Экологический аудит, //М. «Финансы», 2014, стр 16.

Հետևաբար, արդիական է համարվում բնապահպանության ոլորտում տնտեսական լծակների ներգործության ուժեղացումը, երբ վարչական և իրավական գործոններից բացի, բնօգտագործման ոլորտի զսպաշապիկ են հանդիսանում նաև շրջակա միջավայրին վնաս պատճառելու հետևանքով կազմակերպության բաժնետոմսերի արժեքի անկումը, ֆինանսական դրության վատթարացումը, գործարարության վարկանիշի անկումը և այլն[3]:

Բնապահպանության տնտեսական կառավարման հիմնախնդիրը կազմակերպություններում սերտորեն առնչվում է լիարժեք և իրատեսական տեղեկատվական համակարգի առկայության հետ: Կազմակերպությունների մակարդակով բնական ռեսուրսների ինտենսիվ շահագործումը չպետք է դիտարկվի սոսկ բնօգտագործման վերահսկողության տեսչական ոլորտի շրջանակներում, այլ՝ պետք է վերահսկվի նաև հենց կազմակերպությունների կողմից՝ բնապահպանության տնտեսական կառավարման մեխանիզմի գործադրմամբ: Միայն բնապահպանական և բնօգտագործման վճարների միջոցով հնարավոր չէ լիարժեք տնտեսական վերահսկողություն իրականացնել: Ներկայումս հիմնախնդիր է հանդիսանում բնապահպանության համալիր տնտեսական կառավարման իրագործումը, որն իր հերթին պահանջում է էկոմիջոցառումների արդյունքների գնահատում, հաշվետվության ներկայացում և ի վերջո, ներկայացված հաշվետվությունների հավաստիության աուդիտորական փաստում[4]:

Բնապահպանության գործունեության տնտեսական տեղեկատվության շրջանցումը հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների կողմից չի ծառայում թե ներքին մենեջմենթի, և թե հաշվետվությունների արտաքին օգտագործողների շահերին: Չտիրապետելով բնապահպանությանն առնչվող տնտեսական տեղեկատվությանը, կազմակերպության մենեջմենթը կարող է թույլ տալ ռազմավարական կոպիտ սխալներ ֆինանսական կառավարման համակարգում, արդյունքում տնտեսվարման ոլորտում ստեղծելով ճգնաժամային իրավիճակ: Վերջապես, բնապահպանական գործունեության արդյունքներին չտիրապետելով, կազմակերպության հրապարակվող հաշվետվությունների արտաքին օգտագործողները (բաժնետերեր, ներդրողներ, մատակարարներ, գնորդներ և այլն) կարող են սխալ որոշումներ կայացնել համագործակցության ոլորտում և կրել տնտեսական վնասներ:

Բանալի բառեր-գործարարություն, բնապահպանական հաշվետվություններ, ձեռնարկատիրության գործառույթներ, կայուն զարգացում:

Նոննա Խաչատրյան, Ձեռնարկատիրության բնապահպանական գործառույթների շուրջ-Ավանդական ձեռնարկատիրությունը, որի գլխավոր նպատակը շահույթի ստացումն, ներկայումս կորցնում է իր մրցակցային դիրքերը, եթե ուշադրություն չի դարձնում բնապահպանական հիմնախնդիրներին: Այս առումով, արդիական է համարվում բնապահպանական ձեռնարկատիրության կազմակերպումը, որը տնտեսական շահերից բացի հետապնդում է նաև տնտեսավար-

[3] Տե՛ս **Ճուղուրյան Ա., Ծերունյան Վ,** Բնապահպանական աուդիտ, ուս. ձեռն.//«Տնտեսագետ», 2006, էջ 37:

[4] Տե՛ս **Խալաթյան Հ.,** Բնապահպանական աուդիտի մեթոդաբանական հիմնախնդիրները, // Ակունք, թիվ 2 (14), 2016, էջ 111:

ման կայուն զարգացման նպատակներ: Հոդվածում ներկայացվում են ձեռնարկատիրության բընպահպանական գործառույթները:

Нонна Хачатрян, Об экологической функции предпринимательства-Традиционная предпринимательство, имея цель получение прибили, в настоявшее время теряет конкурентоспособность, если не уделяет должное внимание проблемам экологии. В этой связи становится актуальным организации предпринимательства с точки зрения экологии, что кроме экономических выгод, преследует также цели устойчивого развития бизнеса. В статье представляются экологические функции предпринимательской деятельности.

Nona Khachatryan, About ecological functions of enterprenersheep-The traditional business, with the purpose of making a profit, in the present time is losing competitiveness, if not paying due attention to environmental issues. In this context, it becomes nessesary for business organizations keepng terms of ecology, that in addition to economic benefits, also pursues the goal of sustainable business development. The paper presented the ecological functions of entrepreneurial activity.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Տնտեսապես և բարգավաճ երկրներում առողջապահության մշտական վերանայման ռազմավարությունը պայմանավորվում է այնպիսի օբյեկտիվ գործոններով, ինչպիսիք են բնակչության պահանջմունքների բավարման աճը, երկարակեցության աճն ու ծերացումը, բժշկության տեխնոլոգիական զարգացումները, կազմակերպական ծախսերի ավելացումը և այլն: Աղքատ և ցածր կենսամակարդակ ունեցող երկրներում առողջապահության վերակազմավորումները հիմնականում պայմանավորվում են մահացության բարձր մակարդակով, վարակիչ և զանգվածային բնույթ կրող հիվանդությունների սպառնալիքների կանխարգելումներով:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվում է առողջապահական ծառայությունների մատուցման գծով անհրաժեշտ ցուցանիշների կայունություն (տես գծապատկեր 1), սակայն դրան զուգահեռ, դեռևս վաղ է արձանագրել առողջապահական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետության մասին: Ներկայումս առողջապահության ոլորտի ծառայությունների ֆինանսավորման կառավարման համակարգերի իրականացվող բարեփոխումները փոխեցին աշխարհում առողջապահության կառավարման զարգացման վեկտորը. Այն ազատական շուկայական մեխանիզմների գերակայություններից աստիճանաբար անցում է կատարում դեպի «կարգավորվող շուկայի» մոդել՝ պետական կարգավորման կառուցակարգերի գերակայություններով: Այդ մոդելի ներդրման նպաստող գործոններից է առողջապահության գործունեության և ապահովագրման շուկայական ծառայությունների համակցված միջավայրի ձևավորումը:



Գծապատկեր 1 ՀՀ-ում առողջապահության հիմնական ցուցանիշները 10 000 բնակչության հաշվով[1]

[1] ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք, // *www.armstat.am*

«Կարգավորվող շուկայի» ձևաչափը կառուցվում է առողջապահության կառավարման մարմինների միջոցով առողջապահական ծառայությունների իրականացման ընթացքում նորմատիվ կարգավորող գործիքների՝ չափորոշիչների, որակի կառավարման համակարգերի և նմանատիպ այլ գործիքների հիման վրա:

Առաջնահերթ լուծումների է սպասում առողջապահական ծառայությունների արդար և արդյունավետ տրամադրման հիմնախնդիրը: Ոլորտում համընդհանուր ճանաչվեց այն իրողությունը, որ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը կարող է ապահովել բուժօգնության հավասարաչափ մատչելիությունը: Տնտեսական արդյունավետությունն ու արդարությունը հակադիր հասկացությունների դաշտից տեղափոխվեցին այլ հարթություն, և հակառակը՝ տնտեսական արդյունավետությունը դիտվեց առողջության ծառայությունների հավասար ապահովման նախապայման:

Վերջին մի քանի տասնամյակի ընթացքում եվրոպական երկրների մեծ մասում, անկախ ծառայությունների համար վճարելու մարդկանց կարողություններից, ազգային մակարդակով իրականացվում է առողջապահության հավասար հասանելիության սկզբունքը: Կայուն միտումներով աճում է այն մարդկանց թվաքանակը, որոնց առողջապահության ծախսերը վճարվում է կառավարության ֆինանսավորման հաշվին: Բազմաթիվ երկրներում առողջության սոցիալական ապահովագրությունը պարտադիր բնույթ ունի: Ընդ որում՝ապահովագրավճարների մեծությունը կապված չէ ռիսկերի մակարդակի հետ, իսկ վճարները, որպես կանոն, առանձնացված են պարտադիր հարկերից: Առողջության պարտադիր ապահովագրության մեջ ընդգրկված է ողջ բնակչությունը կամ նրա զգալի մասը: Այն անձանց համար, ովքեր ընգրկված չեն առողջության սոցիալական ապահովագրության համակարգում, նախատեսված են առողջապահության ծախսերը ծածկելու այլ կառուցակարգեր՝ բյուջեից զուգահեռ ֆինանսավորման համակարգը կամ առողջության ապահովագրության պայմանագրերի կնքումը:

Արևմտյան Եվրոպայում լայնորեն կիրառվում է բժշկական ծառայությունների համար սպառողների համավճարով մասնակցության մոտեցումը: Այն կիրառվում է՝նպատակ ունենալով բարձրացնել ֆինանսավորման մակարդակը, երբ առողջապահության ֆինանսավորման համակարգը չի կարողանում ծածկել բոլոր ծախսերը՝ հարկերին սոցիալական ապահովագրության միջոցով, ինչպես նաև բժշկական ծառայությունների չափից շատ օգտագործումը սահմանափակելու համար: Միաժամանակ պետք է նշել, որ սպառողների հաշվին ծախսերի մասնակի հատուցում կիրառվում է ոչ բոլոր դեպքերում, քանի որ կարող է խախտվել բնակչության տարբեր խավերին առողջապահական ծառայությունների հավասարաչափ հասանելիության սկզբունքը[2]:

Առողջապահության մատչելիության տարածքային անհավասարության հիմնախնդիրը կես դարից ավելի է փորձում են լուծել բազմաթիվ երկրներ, սակայն քաղաքային և գյուղական բնակչության առողջապահական ծառայությունների մակարդակի համահարթեցման դրական արդյունքների են հասել շատ քիչ թվով երկրներ: Ընդգծում է, որ յուրաքանչյուր երկիր պետք է գնահատի սոցիալական տարբեր խմբերի առողջապահական օգնության մատչելիության

[2] Проблемы справедливости в медицине и здравоохранении, //*http://otherreferats.allbest.ru/medicine/00033211_0.html*

աստիճանի տարբերությունները՝ հաշվի առնելով աշխարհագրական բաղադրիչի և տնտեսականու մշակութային ասպեկտները[3]:

Առողջապահության ոլորտի ծառայությունների ֆինանսավորման կառավարման ներկա ռազմավարությունները հանգում են.

- ✓ առողջապահության շուկայի ձևավորման ու դրա միջոցով կարգավորման հիմնական գործառույթների իրականացմանը,
- ✓ շուկայական կառուցակարգերի զարգացման պարագայում պետության կարգավորող գործառույթների ամրապնդմանը, որը հատկապես կարևոր է բուժօգնության մատչելիության վրա շուկայի բացասական ազդեցությունների սահմանափակման համար,
- ✓ ինտեգրացված կառույցների ձևավորմանը, որոնք նպաստում են տնտեսական արդյունքի բարելավմանը:

Առողջապահության ծառայությունների ֆինանսավորման կառավարման ոլորտում «կարգավորվող շուկայի» կամ «կարգավորվող մրցակցության» սկզբունքի կիրառությունը կարևոր է ինչպես բուժհիմնարկների ներսում, այնպես էլ նրանց և ապահովագրողների միջև, որտեղ առկա է ծառայությունների ինտեգրման գործընթացը:

Ապահովագրողների և բժշկական հաստատություններիմիջև կնքվող պայմանագրերի հիման վրա իրականացվում են բուժհաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների վճարումը, դեղամիջոցների գնումները և, ընդհանուր առմամբ, կատարվում է առողջապահության մեջ միջոցների բաշխումը: Բժշկական ծառայությունների գնումների այդ ռազմավարության շրջանակներում ոչ միայն բաշխվում են ռեսուրսները, այլ նաև իրականացվում է դրանց օգտագործման և հաստատությունների գործունեության նկատմամբ արդյունավետության վերահսկողությունը:

Այսպիսով՝ պայմանագրային հարաբերություններին անցումը դիտվում է որպես համակարգող կառուցակարգ, որը նպաստում է միջոցների բաշխման դյուրացմանը՝այն ուղորդելով շուկայի կարիքներին: Պայմանագրային հիմունքներով բժշկական օգնության ցուցաբերումը ապահովագրողներին ու բուժծառայություններ մատուցողներին հարկադրում է հստակ պարտավորություններ ստեղծում այդ պարտավորությունները կատարելու տնտեսական խթաններ[4]:

Առողջապահության ոլորտում սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրության ներմուծումը (որն ի դեպ ստեղծում է պարտադիր առողջապահական ապահովագրության ներդրման հիմքեր) պետք է դառնա այն գործիքը, որի օգնությամբ առողջապահության ոլորտում ծառայությունների ֆինանսավորման կառավարման անհրաժեշտ է իրականացնել շրջադարձային լուծումներ, մասնավորապես՝ հավասարեցնել Երևանում և մարզերում բուժծառայությունների համար գանձվող գները:

ՀՀ առողջապահության ծառայությունների ֆինանսավորման կառավարման համակարգում ներկայում իրագործվող բարեփոխումների, ինչպես նաև համակարգի ներդաշնակ զարգացման հիմքում ընկած են Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) «Առողջությունը բոլորի համար XXI դա-

[3] Антикризисные стратегии в национальных системах здравоохранения, Варавикова Е.А., ФГУ ЦНИИОИЗ Москва [Электронный научный журнал “Социальные аспекты здоровья населения”], 10.09.2010, *http://vestnik.mednet.ru/content/view/278/30/lang,ru/*

[4] ՀՀ առողջապահական նախարարության պաշտոնական կայք *http://www.minfin.am/*

րում» քաղաքականության հիմնարար արժեքները՝ առողջությունը որպես մարդու կարևոր իրավունքներից մեկը, յուրաքանչյուր անհատի, խմբի և հաստատության կազմակերպության) պատասխանատվությունն ու մասնակցությունը առողջության պահպանման գործում[5]:

Առողջապահական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետության ապահովման գերխնդիրն է տեխնիկական, կազմակերպական և կառավարման ենթահամակարգերի փոխկապված և արդյունավետ գործունեությունն ապահովող միջոցառումների նախագծումն ու իրականացումը: Անհրաժեշտ է առողջապահական միջոցառումները իրականացնել ծրագրային, հետևողական և անընդհատ գնահատման ենթակա մոդելով, ինչը հաշվի կառնի բժշկական ծառայությունների պետական և մասնավոր հատվածների արդյունավետ կառավարումն ու ներդաշնակ զուգակցումը, ծախսերի զսպումը, իրական մրցակցության պայմանների ստեղծումը, մատուցվող ծառայությունների որակի խթանումը շուկայական մեխանիզմների կիրառման պայմաններում:

Բանալի բառեր-հանրային ֆինանսավորում, ֆինանսավորման արդյունավետություն, ֆինանսական կառավարում, առողջապահական ծառայություններ:

Հայաստան Հակոբյան, Առողջապահական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետության հիմնախնդիրները-Առողջապահական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետությունը ներկայումս հանրային հիմնախնդիր է հանդիսանում: Պետության և մասնավոր հատվածի կողմից առողջապահությանը ուղղվող ֆինանսական միջոցները միշտ չէ, որ ցանկալի արդյունքներ են ապահովում, և այս առումով փորձեր են արվում մշակելու առողջապահական համակարգի ֆինանսավորման ադյունավետ մոդելներ: Հոդվածում քննարկվում են առողջապահական ծառայությունների ֆինանսավորման հիմնահարցեր:

Акопян Айастан, Проблемы эффективности финансирования услуг health care- В настоящее время в публичном секторе становится актуальным обеспечение эффективности услуг финансирования здравоохранения. Государственные и частные финансовые ресурсы, расходуемые на здравоохранение, не всегда дают желаемые результаты и с этой точки зрения в теории и на практике предлагаются пути для функционирования разных моделей по эффективному финансированию услуг здравоохранения. В статье обсуждаются проблемы эффективности финансирования в системе здравоохранения и медицины.

Hakobyan Hayastan, Problems of the health care services financing-Currently, in the public sector is becoming urgent to ensure the effectiveness of financing to health care services. Public and private financial resources spent on health care, do not always produce the desired results, and from this point of view, both in theory and in practice are suggusted ways of the functioning different models for the effective financing to health services. The article discusses the problems of the financial system in the health care and medicine.

[5] ՀՀ առողջապահության նախարարություն, Առողջություն բոլորի համար, Ազգային մոտեցում, Երեւան 1999:

ԴԻԶԱՅՆՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴՈՆԱՐԱ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

Դիզայնի բոլոր օբյեկտները պայմանականորեն բաժանվում են երկու տիպի: Առաջին տիպին են պատկանում նրանք, որոնք դարեր շարունակ հանդես են եկել որպես արհեստագործական արտադրության առարկաներ: Հիմնականում դրանք մարդու կարիքներին ծառայող ապրանքներ են, որոնց նշանակությունները գրեթե չեն փոխվել (օրինակ՝ սպասքը, կահույքը և այլն):

Ցանկացած կենցաղային իր ծնվում է դիզայներական նախագծով կամ կիրառական արվեստի կիրառմամբ, եթե, իհարկե, խոսքը գնում է հատուկ արտադրված ֆորմաների մասին: Սակայն որոշ դեպքերում դժվար է ասել ինչ է դա՝ դիզայն թե՞ կիրառական արվեստ:

Ժամանակակից դիզայնի առարկաներն, որոնք ունեն խորը պատմական արմատներ՝ ոճային տարրեր, նույնիսկ օրինաչափ են: Եվ խորանալով ոճաբանության մեջ՝ կարելի է որոշել դրանց ծագման ժամանակաշրջանը: Հատկապես այդ տիպը հիմնավորում է դիզայնի պատմության ուսումնասիրությունը, քանի որ այդ դեպքում նյութական կուլտուրայի զարգացման ցանկացած էտապ կարող է համարվել նրա նախապատմություն: Առաջին տիպին կարելի է վերագրել նաև դիզայնի այն օբյեկտներն, որոնք սերտորեն կապված են ճարտարապետության հետ:

Երկրորդ տիպի դիզայնի օբյեկտները ծագեցին տեխնիկայի նորագույն նվաճումների՝ ավտոմեքենաների, կենցաղային էլեկտրական սարքավորումների և այլնի առաջացման հետ: Անհնար է այս ապրանքները պատկերացնել որպես միայն կիրառական արվեստի արդյունք: Նրանց պատմական արմատները շատ կարճ են: Այս տիպի օբյեկտների բնորոշ գիծը նրանց բոլորովին նոր ձևով կիրառումն է, որը հիմնված է մեխանիզմների և տեխնիկայի աշխատանքի վրա: Առաջին հերթին դրանք տեխնիկական սարքավորումներն են և մեխանիզմները, որոնք տարբերվում են սովորական իրերից: Կարճ պատմական արմատները և որոշ դեպքերում նրանց բացակայությունը հնարավորություն չի տալիս նույնիսկ մտածել պատմական ոճային ձևերի մասին, երբ խոսք է գնում լավ ճաշակի կամ լավ դիզայների աշխատանքի մասին:

Մեզ շրջապատող միջավայրի, առարկաների, օբյեկտների ստեղծումը՝ լինի դա ոսկերչական արտադրանք, հասարակ լուցկու պիտակ, կոստյում, ավտոմեքենա, ինտերիեր, թե քաղաքային միջավայր, իր դիզայներական տարրերով՝ աշխատանք է ձևաչափերի հետ: Հիմնականում այն ներդաշնակ է խիստ ֆունկցիոնալ պահանջներին: Նրա վերջնական նպատակն է ձևաչափի գեղարվեստական արտահայտությունը: Այդպիսի աշխատանքի ընթացքը իրենից ներկայացնում է ֆորմաների ստեղծման բարդ գործընթաց, որից մասնավորապես կարելի է առանձնացնել գեղարվեստական ֆորմաների կամ կոմպոզիցիայի ստեղծման փուլերը: Փուլի արդյունավետությունը առանձնանում է կոմպոզիցիայի կառուցողական զսպվածությամբ կամ կոմպոզիցիոն միջոցների տրամաբանա-

կան և հիմնավորված ընտրությամբ: Այդ միջոցները բազմազան են: Նրանցից յուրաքանչյուրը օժտված է յուրահատուկ կոմպոզիցիոն հատկություններով կամ գեղարվեստական հնարավորություններով:

Վերոհիշյալ միջոցները բաժանվում են երկու հիմնական տիպի՝ գրաֆիկական միջոցներ կամ ամբողջական գրաֆիկա և պլաստիկ միջոցներ կամ պլաստիկա:

Ներկայացնենք այդ միջոցներից առավել նշանակալիցները.

Գրաֆիկա-օգտագործվում է որպես հարթության վրա որևէ իմաստավորված պատկերային տեղեկատվական գրանցման միջոց: Գրաֆիկական արտահայտչամիջոցներն են կետը, գիծը,ուրվագիծը, նրբագիծը, բիծը: Կարող են օգտագործվել դրանցից մեկը կամ մի քանիսը:

Կետ-առանձանում է որպես հարթության վրա գրաֆիկական ակցենտ: Չնայած իր համեմատաբար փոքր չափերին՝ կոմպոզիցիաների կառուցման գործում այն օժտված է մեծ հնարավորություններով:

Գիծ-գծային գրաֆիկական ձևերը բնորոշվում են նրա կատարման ելևէջով և եղանակով՝ տեխնիկայով: Տարբեր գործիքներն ունեն իրենց հատուկ բնորոշ գծային բնութագիրը: Համակարգչով աշխատելու ժամանակ գծերի կատարման ելևէջի և տեխնիկայի հիմնախնդիրը վերանում է: Մոդելավորողը ուղղակի օգտագործում է արդեն պատրաստի գծային գրաֆիկական ձևերը, որոնք անհրաժեշտ են տվյալ կոմպոզիցիայի բովանդակության հարստացման համար: Անհրաժեշտ է զգալ և գիտակցել այս կամ այն ծավալային օգտագործումը, փոխանցելով նրանց հարթության վրա և նրանց հիմքի վրա կառուցել զանազան կոմպոզիցիաներ՝ ընթացքում լուծելով տարբեր կոմպոզիցիոն գեղարվեստական խնդիրներ: Միայն դրանից հետո համակարգչի վրա աշխատելը կարող է տալ դրական արդյունքներ: Խնդիրը կայանում նրանում, որ պետք է հնարավորինս արդյունավետ բացահայտել գծի բնույթը, նրանցով կազմված գրաֆիկական կոմպոզիցիային տալ գեղարվեստական արտահայտություն:

Բիծ-ի տարբերություն գծի և կետի, բիծը, որպես կանոն, զբաղեցնում է գրաֆիկական հարթության ավելի մեծ տարածք: Բծի օգտագործման հետևանքով մեծանում է նաև գրաֆիկական կոմպոզիցիզների կառուցման համար անհրաժեշտ միջոցների ներկապնակը, որն իր մեջ ներառում է նաև տոնային գրաֆիկայի բազմազան և տարատեսակ ձևերը: Տարբեր ձևերը օժտված են յուրահատուկ կոմպոզիցիոն գեղարվեստական հատկություններով: Ցանկացած կոմպոզիցիոն խնդրի լուծում պահանջում է յուրահատուկ տոնային գրաֆիկայի կիրառում: Օրինակ՝ ուրվապատկերային գրաֆիկան ձևերի զուգորդումը հիմնվում է ապլիկացիաների կիրառման վրա՝ օգտագործելով սև և սպիտակ ստվարաթուղթ: Տոնային և գծային ձևերի համադրության ընթացքում անհրաժեշտ է հասնել նրանց միջև ներդաշնակ կապի, որպեսզի բացահայտվեն նրանց գեղարվեստական հատկությունները և պահպանվի գրաֆիկական կոմպոզիցիայի ամբողջականությունը:

Նմանատիպ կոմպոզիցիոն խնդրի լուծումը ենթադրում է նվազագույն քանակությամբ հասարակ երկրաչափական մարմինների օգտագործում, որի հետևանքով ավելի պարզ է արտահայտվում ձևի գրաֆիկական կոմպոզիցիայի բնույթը:

Գույն-կոմպոզիցիոն տեսակետից գույնը անհրաժեշտ և յուրահատուկ միջոց է գրաֆիկական ձևին ավելի ցայտուն տեսք տալու համար: Գույնը կերպարվես-

տում խաղում է միջանկյալ դեր բնության հետ շփման գործում և զարգանում է ելնելով մարդու գեղագիտական պահանջներից:

Տոնայնություն-գեղանկարչական ստեղծագործության բոլոր գույների փոխներգործությունն է, երբ գույներից ոչ մեկի ուժգնությունը չի կարելի փոխել: Երբ գույները երանգներով միավորված են միմյանց հետ գունային երանգի հատուկ հնչեղության ի հայտ գալով է նկատվում նրանց որակական փոփոխությունը:

Գունային զգացողությունը ճիշտ ընկալելու համար պետք է գույնը դիտել բնության մեջ, դա նշանակում է, որ պետք է ուսումնասիրել այն երևույթները, որոնց միջոցով գունային օբյեկտները ազդում են մեր տեսողության վրա: Յուրաքանչյուր նկարիչ, ելնելով իր ուղղվածությունից՝ պետք է հստակ ընտրի իր համար բնությունը ուսումնասիրելու ճիշտ միջոցները: Եղանակի տարբեր դրսեվորումների ժամանակ բնությունն իր ողջ գեղեցկությունն արտահայտում է գույների միջոցով և կարող է ծառայել յուրաքանչյուր արվեստագետի համար իդեալական օրինակ:

Լույս-շնորհիվ լույսի մենք առարկաները տեսնում ենք ոչ միայն գունային, այլև ծավալային: Գլոր և ծավալային առարկաները, երբ լուսավորվում են մեկ լուսային աղբյուրով, դրանից հատկապես առանձնանում է ամենալուսավոր կետը՝ բլիկը: Կախված ձևից, առարկայի նյութից, լույսի ուժգնությունից և գուներանգից՝ բլիկները լինում են տարբեր: Այն կարող է լինել շատ ակտիվ, փայլուն կամ միայն մի քիչ լուսավոր: Բլիկը նկատելի է լինում հատկապես փայլեցված մակերեսների վրա, օրինակ՝ մետաղական, կերամիկական, ապակե սպասքի և այլնի: Լույսը մեզ կարող է թվալ պայծառ կամ աղոտ, բայց ոչ փայլուն կամ գորշ: Այն կարող է լինել տարբեր գույների՝ կապույտ, կանաչ կամ կարմիր:

Դիզայնի, գեղանկարչության և դեկորատիվ կիրառական արվեստի ճյուղերում պատկերի արտահայտչականության հիմնական տարրը եղել է և մնում է գույնը: Գունային լուծումը որոշակի գունային ընկալում է, գունամտածողության արդյունք՝ ինքնատիպ զուգակցումներով և հակադրություններով հանդերձ:

Գունային կառուցվածքային լուծման համար նշանակություն ունի գիծը, զանգվածը, նյութը և այլն: Գույները մարդկանց վրա ունեն հոգեբանական մեծ ազդեցություն՝ առաջացնելով տարբեր տրամադրություններ: Ուշագրավ է գունազգացողության և բնավորության փոխկապակցվածության հարցը: Գույնը կարևոր է մարդու զգայական աշխարհի, տեսողական երևակայության, ճաշակի զարգացման առումներով: Դրանց ընտրության հարցում նախընտրելի են պարզ զուգորդումները:

Մարդու կողմից ընկալվող գույները բաժանվում են 2 հիմնական խմբի՝ ախրոմատիկ և մոնոխրոմատիկ: Ախրոմատիկ գույներ են սպիտակը, մոխրագույնի տարբեր երանգները և սևը, որոնք իրարից տարբերվում են միայն փայլով: Իսկ մոնոխրոմատիկ գույները՝ ոչ միայն փայլով ,այլ նաև գունային երանգներով:

Սպիտակ և սև գույնի միջև ընկած են գորշ գույնի երանգները: Քանի որ լուսավորվածությունը կարող է փոփոխվել շատ լայն սահմաններում, ապա նույնպիսի սահմաններում կարող է փոփոխվել նաև փայլ ունեցող մակերևույթից անդրադարձող լույսի ակտիվությունը:

Մոնոխրոմատիկ գույների ընկալումը կապված է մարդու պահանջմունքների, զգացմունքների, հուզական վիճակների և անձնային գծերի հետ: Տարբեր գույներ տարբեր կերպ են ազդում մարդկանց հոգեվիճակների վրա:

Ռեֆլեքս-այն հատկապես նկատելի է առարկաների ստվերային հատվածներում: Ի շնորհիվ ռեֆլեքսի մենք կարողանում ենք տարբերել առարկաները, որոնք գտնվում են տարբեր հարթությունների վրա, իսկ հենց ստվերները մենք տեսնում ենք ոչ թե խուլ կամ սև, այլ համեմատաբար գունավոր, թափանցիկ, օդային և այլն: Ռեֆլեքսների փոխհարաբերությունները նկատելի են ոչ միայն ստվերային հատվածներում, այլև կիսաստվերներում:

Կոլորիտ-դիզայնում կոլորիտ հասկացությունը որոշակի գույների համադրությունն է, որոնք գտնվում են ներդաշնակության մեջ և մեկ միասնական ուժ են հանդիսանում: Մասնագիտական իմաստով՝ կոլորիտը գունային ներդաշնակության և գեղեցկության համադրումն է, ինչպես նաև գունային հարուստ երանգների համադրումը: Կախված այն բանից, թե գունային կոլորիտը ինչ երանգների մեջ է, այն կարող է լինել տաք, սառը, լուսավոր, արծաթավուն և այլն: Կոլորիտը ազդում է դիտորդի զգայարանների վրա, նկարում ստեղծում է տրամադրություն և շատ կարևոր գործոն է նկարի հոգեբանությունը վերլուծելու համար:

Այս միջոցներից յուրաքանչյուրը կարևոր նշանակություն ունի առարկաների ձևավորման գործում: Ուստի դրանց գրագետ կիրառումը ճակատագրական կարող է լինել առարկայի կամ օբյեկտի դիզայնի վերջնարդյունքի համար:

Գրականություն

1. Եղիազարյան Ա. Կ., Անձի գեղարվեստա-ստեղծագործական զարգացման հոգեբանամանկավարժական օրինաչափությունները դեկորատիվ-կիրառական արվեստի ուսուցման ընթացքում, Երևան, 2006, «Հոգեբանություն և կյանք», «Զանգակ-97», №3:
2. Кузин В. С., Вопросы изобразительного искусства, Москва, 1977.
3. Папанек В., Дизайн для реального мира, Изд. Аропов. Д., Москва, 2008.
4. Шукурова А.Н., Архитектура запада и мир искусства XX века, Стройиздат, 1989.

Բանալի բառեր-դիզայն, կոմպոզիցիա, գիծ, բիծ, գունային լուծումներ, կոլորիտ, ռեֆլեքս, լույս, տոնայնություն:

Դոնարա Չիբուխչյան, Դիզայնում արտահայտչամիջոցներն ու դրանց նշանակությունը-Հոդվածում հեղինակը ներկայացնում է ժամանակակից դիզայնի օբյեկտների տիպերը, դիզայներական աշխատանքի ընթացքի՝ ֆորմաների ստեղծման բարդ գործընթացը, որից մասնավորապես կարելի է առանձնացնել գեղարվեստական ֆորմաների կամ կոմպոզիցիայի ստեղծման փուլերը: Ինչպես նաև քննարկում է այն կարևոր միջոցները, որոնց գրագետ կիրառումը ճակատագրական կարող է լինել առարկայի կամ օբյեկտի դիզայնի վերջնարդյունքի համար: Ներկայացնում է դրանցից յուրաքանչյուրի յուրահատուկ կոմպոզիցիոն հատկությունները և գեղարվեստական հնարավորությունները:

Донара Чибухчян,Способы выражения в дизайне и их значения-В статье автор представляет типы обьектов современного дизайна, движеня дизайнерского труда: сложный процесс создания форм, из чего в частности можно отделить этапы творения композиции,или художественных форм. А так же обсуждает те важные средства, граммотное использование которых может быть сутьбаносным

для итога предмета,или обьекта дизайна. Представляет композиционные особенности каждого из них.

Donara Chibukhchyan, Methods of expression in design and their meanings-In the article the author represents the types of objects of modern desing,the dificult process of design work of creating forms,especially the stage of creatingartistic forms and compositions may be distinguished.As well as those important means are discussed the correct application of which may be fatal for the ultimate result of the object or the design of the object.Specific compositional properties and artistic possibilities of each of them are represented.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ԶԱՐԴԱՆԱԽՇՄԱՆ ԾԻՍԱԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆՈՒՇ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

Տարազի զարդանախշման սովորույթը, որը բնորոշ էր աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդներին, ծագումնաբանական առումով մասնագիտական վեճերի առարկա է եղել: Ուսումնասիրողներից շատերը՝ Է. Բերտուն, Գ. Ստրատանովիչը, Ն. Գրինկովան նաև Ա. Մնացականյանը զուգահեռներ են անցկացնում մարմնի կտածման (տատուիրովկա) և հագուստի զարդանախշման սովորույթի միջև՝ փաստելով, որ մարդն սկզբնապես նկարազարդել է սեփական մարմինը, ապա նոր փոխանցել հագուստին:

Կտածման երևույթն առկա է աշխարհի շատ ժողովուրդների սովորույթներում և ունի որոշակի նպատակ ու նշանակություն՝ մեծ դեր խաղալով հասարակության կյանքում: Կտածման զարդանախշերն ունեն ցեղային պատկանելության, սոցիալական, տարիքային, պահպանիչ և բազմաթիվ այլ նշանակություններ:

Կտածման վերաբերյալ հետաքրքիր նյութ է գրանցել Գ. Սրվանձտյանցը Տիգրանակերտ քաղաքում, «Այս քաղաքը,-գրում է նա,-դաս-դաս կանայք, մեծավ մասամբ, և արք ունեին նկարներ իրենց ճակատոց, երեսաց, բազկաց վրա»: Նա նշում է նաև, որ այդ նկարները «քրիստոնեական մարդկանց կամ Երուսաղեմ ուխտի գնացողին հատուկ չեն, այլ շատ հին են մարդոց մեջ», որոնք, հեղինակի կարծիքով, խորհրդանշաններ են՝ կապված որևէ կրոնական գաղափարի հետ: Տածման որոշ նախշաձևեր կարելի է տեսնել դեռևս քարե դարի (էնեոլիթի) ժամանակաշրջանի տարբեր հնավայրերից հայտնաբերված մերկ աստվածուհիների արձանիկների վրա՝ խիստ որոշակի տեղադրությամբ, ինչն ինքնին խոսուն վկայություն է այդ նշանների բեղմնավորման գաղափարի հետ ունեցած աղերսի մասին: Կտածման նախշաձևերց շատերը (կետանախշ, անկյունանախշ, խաչանախշ և այլն), որոնք առկա են և հայկական նշանագրերում, դիտվում են նաև տարազի ասեղնագործ զարդանախշերում, ինչը խոսում է վերջիններիս մարմնի կտածումից հագուստին անցնելու վարկածի օգտին:

Տարազի զարդանախշման սովորույթը մեզանում շատ հին է, այն արմատներով ձգվում է մինչև դարերի խորքը: Մեզ հետաքրքրող թեմայի առնչությամբ կարևորում են դեռևս բրոնզեդարյան ժամանակաշրջանի նյութական մշակույթի առարկաների վրա պատկերված մարդկային կերպարանքները՝հագուստի պարզորոշ ընդգծված զարդանախշ հատվածներով: Օրինակ՝ Մեծամորից հայտնաբերված կնոջ կերպարանքով արձանիկի կրծքամասն ունի ուղղանկյունաձև կտրվածքով գծանախշ հատված, որն ակամա հիշեցնում է ժողովրդական տարազի զարդանախշ սրտանոցները:

Խոջալուից հայտնաբերված ուշ բրոնզեդարյան գոտու զարդանախշերում, մարդկային հագուստի վրա ընդգծված են կետանախշ սոնապանները, զարդանախշ կրծքամասն ու կարճ պատմուճանի կամարաձև քղանցքը: Այս առումով իր տեսակի մեջ եզակի է Արթիկի դամբարանադաշտից հայտնաբերված կարպետագործ հագուստի զարդանախշ պատառիկը: Այն սև ու կարմիր կոպիտ բրդյա գործվածք է, որի վերին հատվածը զարդանախշված է բեկյալներով, իսկ ստորին մասը՝կեռ խաչերով (սվաստիկա):

Ժամանակային, տարածքային և մշակութային առումով արժեքավոր նյութ են տալիս նաև բիայնական հուշարձանները: Առանձնապես ուշագրավ է Թեյշեբա աստծո պատկերը՝ ամբողջովին զարդանախշ պարեգոտով ու պատմուճանով:

Մեզ հետաքրքրող նյութի առումով կարևոր են միջնադարյան Հայաստանի քարակոթող քանդակները, որոնցից առավել ուշագրավ են Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու պատկերաքանդակները: Այստեղ պատկերված է Վասպուրականի Արծրունյաց թագավորության հիմնադիր Գագիկ Արծրունին՝ ամբողջովին զարդանկար պարեգոտով ու թիկնոցով: Թիկնոցի վրա պատկերված են շրջանի մեջ ամփոփված արծիվներ, որոնք Արծրունյաց նախարարական տան խորհրդանիշ են, իսկ պատմուճանի կետամիջուկ շրջանակները նմանօրինակներ ունեն Վասպուրականի տղամարդկանց անդրավարտիքների կողային ուղղահայաց զարդանախշերում, ինչը խոսում է ժողովրդական արվեստի ավադույթների խորը արմատների և սերնդեսերունդ փոխանցման մասին: Կիլիկյան ժամանակաշրջանից մեզ հասած դրամներն ու Թորոս Ռոսլինի մանրանկարները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այդ շրջանի թագավորական տան և ժողովրդական տարազի զարդանախշման մասին:

Միջնադարյան հուշարձաններից ամենահետաքրքիրն ու իր տեսակի մեջ եզակին Անիի պեղումների ժամանակ հայտնաբերված հագուստի նմուշն է: Դա Անիի ազդեցիկ իշխաններից մեկի՝Տիգրան Հոնենցի փոքրիկ բարեկամուհու դամբարանից հայտնաբերված ամբողջական մետաքսե զարդանախշ հագուստն է, դեմքը ծածկող շղարշն ու այլ իրեր: Բուսանախշի նեղ շերտով զարդարված են հագուստի թևքերի եզրերը, կուրծքն ու օձիքը, իսկ քղանցքը՝երկրաչափական նախշի լայն զարդագոտինորով: Ուշադրության արժանի է հատկապես աղջկա հագուստի թևքի վերնամասի զարդանկար ժապավենը, որը Հ. Օրբելու բնորոշմամբ իշխանական ծագման խորհրդանիշ է: Այդպիսի ասեղնագործ ժապավեններ կարելի է տեսնել նաև մանրանկարչության նյութերում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ վերոհիշյալ զարդանկար ժապավենը բացակաըում է ժաղովրդական տարազի նմուշներում: Ըստ երևույթին, բնորոշ լինելով ազատանի դասին, այն արգելված է եղել հասարակ ժողովրդին:

Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն աշխարհիկ և հոգևոր բարձր դասի հագուստի, որը գրեթե հոծ էր զարդանախշվում (թիկնոց, պատմուճան, պարեգոտ, խյուր և այլն), ժողովրդական տարազի զարդանախշը հիմնականում տեղայնանում էր մարդու իրավական, սոցիալական կարգավիճակը բնորոշ հատվածներում (գլխի հարդարանք, գոտի, գոգնոց և այլն)՝ դրանով իսկ հատկապես ընդգծելով վերջիններիս ծիսական բնույթը: Այս դեպքում առաջնային է դառնում տարազի առանձին մասերի ծիսական դերի և բուն զարդանախշերի իմաստի փախադարձ կապի բացահայտման խնդիրը, քանի որ ի սկզբանե զարդանախշումն ինքնանպատակ չի եղել, և զարդանախշ առարկան արդեն իսկ ունեցել է առանձնահատուկ նշանակություն:

Գրականություն

1. Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան, Հայ արվեստի պատմություն, «Զանգակ-97», 2009 թ., 575 էջ:
2. Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, 660 էջ:
3. Ֆ. Գրիգորյան, Հայկական ազգային տարազ, Եր.: Անտարես, 2011թ., 256 էջ:

Բանալի բառեր-Զարդանախշ, տարազի զարդանախշում, դեկորատիվ նշանակություն, կտածում:

Անուշ Չիբուխչյան, Ժողովրդական տարազի զարդանախշման ծիսագործառնական նշանակությունը-Հեղինակի հոդվածում ներկայացվում է տարազի զարդանախշման սովորույթի ծագման վարկած: Տարվում են զուգահեռներ տարազի զարդանախշման և կտածման սովորույթի, դրանց զարդանախշերի բովանդակային և դեկորատիվ նշանակության միջև: Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն աշխարհիկ և հոգևոր բարձր դասի հագուստի, որը գրեթե հոծ էր զարդանախշվում, ժողովրդական տարազի զարդանախշը հիմնականում տեղայնանում էր մարդու իրավական, սոցիալական կարգավիճակը բնորոշող հատվածներում՝ դրանով իսկ հատկապես ընդգծելով վերջիններիս ծիսական բնույթը:

Ануш Чибухчян, Ритуально-процессуальное значение орнаментального украшения национального костюма-В статье автора представляется версия происхождения традиции орнаментального украшения национального костюма. Ведутся параллели между обычаями орнаментального украшения национального костюма и татуировки,смысловой содержательности их орнаментов и декоративного значения.Внимательное изуяение показывает,что в отличия от одежды светской высокочинного духовенства, украшенных почти полностью, в национальном костюме орнаментика в основном локализовалась на участках характеризующих правовой, социальный статус человека, тем самым особо подчеркивая ритуальный характер последних.

Anush Chibukhchyan, The ritual acting importance of national traditional dress decoration-In the articll the origin of traditional dress decoration habit version is represented.Parallels are drawn between traditional dress decorationand tattooing,their contental and decorative meaning.Careful examination shows that in contrast to the clothes of secular and the high rank clergy,which was densely decorated,the ornaments of national traditional dress was mainly locolized according to person's legal,social status, especially to underline their ritual nature.

ԳԱՌՆՈՒ ՏԱՃԱՐԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԲԱՂՆԻՔԻ ԽՃԱՆԿԱՐԻ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ, ԳՐՔԵՐԻ ԵՎ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ

ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի պատմամշակույթային ժառանգության բազմաթիվ օրինակների կողքին միշտ յուրովի է դիտվում Գառնու հեթանոսական տաճարն ու դրա հարակից տարածքը: Այն գրավել և գրավում է ոչ միայն հայ, այլև բազմաթիվ աշխարհահռչակ պատմաբանների, արվեստաբանների, ճարտարապետների ու դիզայներների ուշադրությունը: Գառնու տաճարի վերաբերյալ կան բազմաթիվ ու տարատեսակ ճարտարապետական ու պատմական հետազոտությունների վերաբերյալ նյութեր, հոդվածներ, գրքեր և ուսումնասիրություններ:

Այն կարելի է համարել Հայստանի գլխավոր այցեքարտերից մեկը՝ զբոսաշրջիկներին զարմացնելու գլխավոր մշակույթային ժառանգության մասնակիցը:

Ճարտարապետական ու մշակութային արժեք ներկայացնող այս տաճարի կողքին է գտնվում Գառնու արքունական բաղնիքը, որից շատ քիչ բան է պահպանվել մինչ այժմ: Այն նույնպես իրենից ներկայացնում է գիտական ու գեղարվեստական մեծ արժեք. հատկապես առաջին սենյակի հատակին պատկերված խճանկարը (նկ. 1), որը դարձել է բամաթիվ գիտական և տեղային ուսումնասիրությունների թեմա:

նկ. 1. Գառնու արքունական բաղնիքի առաջին սենյակի հատակին պատկերված խճանկարը

Դրա պատմական անցյալի, ինչպես նաև խճանկարի կառուցվածքի, գունային ու կոմպոզիցիոն լուծումների վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտություններ

և նյութեր: Այն նախաքրիստոնեական Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության առայժմ մեզ հայտնի եզակի հուշարձան է (խճանկարով էր պատված նաև երկրորդ սենյակի կիսաշրջանաձև խորշի հատակը, որն ամբողջությամբ ավերված էր): Նկարի պահպանված մասից ակնառու է նրա միֆական-դիցաբանական սյուժեն: Վարդագույն շրջանակի մեջ պատկերված նուրբ մշակված գունային փոխանցումները ստեղծում են ջրի ալիքների շարժման պատրանք, նկարի տարբեր հատվածներում ծովի ջրերի տարբեր վիճակ: Ջրերի մեջ պատկերված են զանազան դիրքերով միֆական աստվածություններ ու էակներ, մեծ ու փոքր բազմաթիվ ձկներ:

Խճանկարի կենտրոնում՝ հյուսվածապատ շրջանակի մեջ, ստեղծված են տղամարդու և կնոջ կիսանդրիներ: Խճանկարի առանձին պատկերներ, մասնավորապես ձկների, կատարված են մեծ վարպետությամբ: Սահուն գծանկարը, անատոմիական համոզիչ կառուցվածքը, գույների նուրբ երանգները վկայում են խճանկարային արվեստի բարձր մակարդակը: Խճանկարը պատկերված է բնական գունավոր քարերից կտրված 5-10 մմ քառ. մակերես ունեցող խորանարդիկներից: Գոյություն ունի 15 երանգ: Նկարի նուրբ փոխանցումների իրականացումը դյուրացնելու պատճառով օգտագործված են երկրաչափական տարբեր ձևերի խորանարդներ[1]:

Քանի որ խճանկարի թե՛ գունային, և թե՛ կոմպոզիցիոն լուծումները իրենցից ներկայացնում են գեղարվեստական բարձր արժեք, ուստի ուսումնասիրության նյութ ենք դարձնում խճանկարի պատկերները, գույները և կոմպոզիցիոն լուծումները. դրանք ադապտեցնելու, գրաֆիկական այլ ձևավորումներում օգտագործելու համար:

Այժմ փորձենք դիտարկել խճանկարի որոշակի հատվածների կամ պատկերների կիրառելիությունը գրենական պիտույքների, գրքերի, պայուսակների, թղթթապանակների ձևավորման մեջ, որոնք կարող են մաս կազմել որևէ մշակութային միջոցառման ընդհանուր գրաֆիկական ոճին կամ բրենդինգին:

Կոմպոզիցիոն ավելի հետաքրքիր լուծումներով հատվածներից ցանկալի է վերցնել խճանկարի վերին ձախ հատվածը, որտեղ ընդգրկված է մարդապատկերը երկու ձկների և գրության հետ: Քանի որ խճանկարի հիմնական մասնիկներն են մարդակերպը, ձկները, որոշ օրնամենտներ և գրություններ, ուստի այս հատվածը պարունակում է թվարկված բոլոր տարրերը:

Դեկորատիվ կամ գրաֆիկական ուղղվածություն ունեցող այս հետազոտության վերջնական արդյունքն էլ ավելի գրավիչ, ինչպես նաև ժամանակակից մարքեթինգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով խճանկարի գունային գամման ցանկալի է փոխել ավելի վառ արտահայտված գույներով. օրինակ՝ վառ կարմիր, լիմոն-դեղին, մուգ կապույտ կամ երկնագույն, սպիտակ, ինչպես նաև հնարավոր է օգտագործել սևի չափավոր քանակ կամ ուրվագծում:

Խճանկարի բոլորիս հայտնի, ինչպես նաև ուսումնասիրության առարկա դարձած այս օրինակի քառակուսի փոքրիկ մասնիկները կամ դետալները վերաձևափոխում ենք նույն մեծության, սակայն կլոր էլեմենտների, որոնք էլ խճանկարին կհաղորդեն նորովի տեսք ու կիրառելի կարող են դարձնել գրենական պիտույքների ձևավորմանը:

[1] **Սահինյան Ա. Ա.,** *Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ. 60-61, 1983թ.:

Օրինակները մշակվել են բազմաթիվ էսքիզային տարբերակների հիման վրա: Ընտրվել են դրանցից լավագույնները և մշակվել են ջրաներկով, գուաշով, իսկ պայուսակի դեպքում թելերով և կտորով (նկ. 2-7):

նկ. 2 Գրքի կամ թղթապանակի կազմ. նկ. 3 Նոթատետրի միջուկ.
նկ. 4 Գրիչ/մատիտ և ռետին.

նկ. 5 Պայուսակ[2]. նկ. 6 Աֆիշա, գովազդային վահանակ.
նկ. 7 Աֆիշա, գովազդային վահանակ[3].

Ներկայացված բոլոր էլեմենտները կիրառական արվեստի գրաֆիկական ձևավորմամբ կարելի է օգտագործել թե՛ Հայաստանյան, և թե՛ միջազգային գիտաժողովների, սեմինարների ու կոնֆերանսների ժամանակ: Հայտնի է, որ ցանկացած մեծ միջոցառման ժամանակ թողարկվում են գրենական պիտույքներ, թղթապանակներ, պայուսակներ և նմանատիպ այլ աքսեսուարներ գիտաժողովի սիմվոլներով կամ գունային լուծումներով: Ընդունված է այս տեսակ գրենական պիտույքները նվիրել տվյալ միջոցառման մասնակիցներին. ահա և այսպիսի գեղեցիկ և միատեսակ ձևավորված, ինչպես նաև Հայաստանի մշակութային ժա-

[2] Նկար 2-5, հեղինակ՝ **Սյուզի Այվազյան**, ԵՊՀ ԻՄ Կիրառական արվեստի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի:

[3] Նկար 6-7, հեղինակ՝ **Մարտին Հարությունյան:**

ռանգության կարևորագույն մասնիկի գրաֆիկական տարրերով ձևավորված գրենական պիտույքները կգեղեցկացնեն և կընդգծեն ցանկացած միջոցառում:

Աշխատանքը դրական և արդիական է այնքանով, որ ցանկացած մշակութային մեծ միջոցառմանը մասնակցում են տարբեր մասնագետներ բազմաթիվ երկրներից. այսպիսով օգտագործելով Գառնու արքունական բաղնիքի այս պատմական խճակարը հնարավորություն ենք տալիս նրան տարածվելու ամբողջ աշխարհով մեկ գրավելով նաև բազմաթիվ մասնագետների ուշադրությունը:

Նման տեսակի աշխատանքներ կարելի է իրականացնել բազմաթիվ միջոցառումների ժամանակ օգտագործելով տարատեսակ պատմամշակութային կառույցների որևէ մասնիկների կիրառումը գրաֆիկական ձևավորման մեջ: Այս օրինակի հիման վրա կարելի է իրականացնել նմանօրինակ գրաֆիկական ոճերի ձևավորումներ Սարյանի կամ Քոչարի ցանկացած աշխատանքի հիման վրա կամ հայաստանյան որևէ ճարտարապետական կառույցի որևէ դետալի հիման վրա: Օրինակը կխթանի նաև Հայաստանի իմիջի բարձրացմանն ու տարածմանը, որը մերօրյա իրականության մեջ մեծ խնդիր է թե՛ տուրիզմի խթանմանը, և թե՛ հայ մշակույթի զարգացմանն ու տարածմանը:

Բանալի բառեր-Գառնի, խճանկար, գրաֆիկական դիզայն, մշակութային միջոցառում:

Մարտին Հարությունյան, Գառնու տաճարի արքունական բաղնիքի խճանկարի մասնիկների գրաֆիկական կիրառումը որպես գրենական պիտույքների, գրքերի և պայուսակների ձևավորման հիմք-Հետազոտության հիմքում ներկայացվում է թե ինչպես կարելի է մշակութային ժառանգության մաս կազմող որևէ կառույց, շինություն կամ դրանց որևէ հատված օգտագործել որպես մշակութային միջոցառումների համար նախատեսված տպագրական նյութերի, գրենական պիտույքների, գրքի կազմերի և պայուսակների գրաֆիկական ձևավորման հիմք:

Мартин Арутюнян, Графическое применение частиц мозаики царской бани храма Гарни в качестве основы для украшения канцелярских принадлежностей, книг и сумок-В основе исследования представляется метод использования какого-нибудь строения, здания или какой-то их части, входящего в состав культурного наследия, в качестве графической основы, для украшения печатных материалов, предназначенных для культурных мероприятий, канцелярских принадлежностей, обложек книг и сумок.

Martin Harutyunyan, The use of the Garni royal bath mosaic elements as a core decoration in stationery, book covers and bags-The paper presents the scientific analysis, illustrated by appropriate examples, of how a tiny piece of Armenia's cultural heritage (e.g. the mosaic in the Garni Royal Bath) proved possible to be converted to a core element of graphic design, used in a variety of printing and other materials for cultural events such as stationery, book cover and bags design.

ԱՐՎԵՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՖԼՋՅԱՆ ԼԻԼԻԹ

Ստեղծագործական կարողությունների ձևավորման գործընթացում պետք է պահպանել նրա երկու կողմերի միասնությունը՝ արարման (գործնական գեղարվեստական գործունեություն) և զննման (շրջապատող իրականության և կերպարվեստային ստեղծագործությունների ընկալում), որոնք կապի մեջ են՝ փոխադարձաբար ներազդելով և փոխհարստացնելով միմյանց:

Շրջապատող իրականության ընկալումը սովորողների կողմից պատկերագրման ընթացքում դառնում է առավել կենսունակ և նպատակաուղղված: Եթե խոսքը վերաբերում է կատարելակերպին, որին միտված է արվեստի ուսուցումը, ապա այն նկարիչներին բնորոշ գիտակցական ընկալումն է: Որպեսզի նկարն առավել արտահայտիչ և ավելի համոզիչ լինի, նկարիչը պետք է կարողանա իրերը ընդհանրության մեջ տեսնել և տարորոշել ամենաբնութագրականը: Հասկանալի է, որ դպրոցականի մոտ նման ընկալման դաստիարակման հնարավորությունները սահմանափակ են, սակայն համալիր աշխատանքն այս ոլորտում, այնուամենայնիվ, տալիս է նշանակալի արդյունքներ: Գեղարվեստաստեղծագործական գործունեության ընթացքում ձևավորվում են դպրոցականների կողմից իրականության գիտակցական ընկալման, պատկերվող առարկաների տարբերակող հատկանիշների ու յուրահատկությունների ընտրության, նպատակամետ դիտարկման ընդունակություն: Զուգահեռաբար տեղի է ունենում կերպարվեստի ստեղծագործությունների նպատակաուղղված, գիտակցական ընկալման ընդունակության ձևավորում: Գեղանկարչության, գրաֆիկայի, քանդակի, ճարտարապետության և դեկորատիվ կիրառական արվեստի ստեղծագործություններն առնչվում են «հոգեկան ոլորտի հույժ անձնական այն մեխանիզմներին, որոնց օգնությամբ կերպարները յուրովի թարգմանվում, մեկնաբանվում և ստեղծագործաբար հարստացվում են յուրաքանչյուր դիտողի երևակայությամբ, այսինքն՝ հարաբերակցվում նրա անձնական փորձին, երանգավորվում նրա անձնային զուգորդումներով, դառնում նրա ինքնագիտակցության մի մասը»[1]:

Արվեստի ընկալումը հաղորդակցումն է ոչ միայն արվեստի ստեղծագործությունների հետ, այլև նրա հեղինակի, շրջապատող իրականության վերաբերյալ նրա գեղագիտական գնահատականների, ճանաչողության, նորի բացահայտման հետ: Մենք պետք է ոչ միայն գեղեցիկը հասկանալու և զգալու կարողություն ձևավորենք, այլև դաստիարակենք ցանկություններ, ունակություններ և կարողություններ այն արարելու:

«Արվեստի ընկալումը, ինչպես կյանքի ցանկացած ոլորտում, որոշվում է նպատակով, հարմարեցվում իր առարկային, և կախված է որոշակիորեն հստակ պայմաններից՝ ներքին և արտաքին»,-գրել է Ն. Ն. Վոլկովը: Դիտարկելով սովո-

[1] **Ярошевский М. Г.** На путях к общей теории творчества //Художественное и научное творчество.-Л.: Наука, 1972. с. 30.

րողների գեղարվեստական ընկալման ձևավորման խնդիրը՝ մենք բախվում ենք հարցերի հետևյալ շրջանակի ուսումնասիրման անհրաժեշտությանը.

• Ո՞րն է արվեստի ստեղծագործության ընկալման նպատակը:

• Ընկալման ընդհանուր հատկանիշներն ինչպե՞ս են հարմարվում այնպիսի երևույթին, ինչպիսին է կերպարվեստի ստեղծագործությունը:

• Ներքին և արտաքին ի՞նչ պայմաններ են ազդում դիտողի կողմից գեղարվեստական ստեղծագործության ընկալման վրա:

«Նկարի և քանդակի գեղագիտական ընկալման նպատակը,- գրում է նույն Վոլկովը,-որն ընդհանուր է արվեստի բոլոր տեսակների համար, մարդու կողմից գեղարվեստական նոր արժեքների յուրացումն է, գեղագիտական և հոգևոր առումով ընդգրկուն հարստացումը»[2]:

Դպրոցականը պետք է սովորի ընկալել արվեստը, որպեսզի հաղորդակցվի հոգևոր այն արժեքներին, որոնք ներառում են նկարիչների բազմաթիվ սերունդների ստեղծագործությունները: Արվեստի մեջ գեղեցիկի բազմակերպ դրսևորումներին հաղորդակցվելու վայելքը, հրճվանքը, ինքնաճանաչողությունը, ինքնակատարելագործման ձգտումը՝ արվեստի հետ հաղորդակցման տարբեր կողմերն են: Կերպարվեստի ստեղծագործությունը (գեղանկար, գրաֆիկա, քանդակ, ԴԿԱ) իր բարդ կառուցվածքով, արվեստի տվյալ ձևի կանխորոշված բնույթով պահանջում է ընկալման առանձնահատուկ մոտեցում և ուղղվածություն: Արվեստի յուրաքանչյուր որոշակի տեսակի սահմաններում լուծվում է տվյալ տեսակին յուրահատուկ հարցերի խումբ՝ կերպարվեստային, գունային, հորինվածքային, հարթության վրա տարածական պատկերի ստեղծման (գեղանկարի և գրաֆիկայի մեջ) հետ կապված խնդիրների, տարածության մեջ պատկերի ազատ տեղակայման (քանդակի մեջ): Նշված առանձնահատկությունները մեծապես որոշակիանում են դիտողի կողմից ստեղծագործության ընկալման գործընթացը. ինչքան խորն ենք ներթափանցում նրանց էության մեջ, այնքան բացահայտ է դառնում ստեղծագործության ընկալման գործընթացի ողջ բարդությունը, նրա առկախումը բազմաթիվ գործոններից: Նկարի խորը, ամբողջական ընկալման պայմանների մեջ Ն. Ն. Վոլկովն առանձնացնում է գործոնների երեք խումբ.

1. Արտաքին գործոններ:

2. Դիտողի տրամադրվածություն, դրվածք:

3.Դիտողի ընդհանուր պատրաստվածություն, գեղագիտական զգայունակություն[3]:

Նկարի լիարժեք ընկալմանը նպաստող արտաքին պայմանները կարող են լինել բացառապես տարբեր: Դա և թանգարանի իրավիճակն է, և այն, թե ինչպես են ցուցադրվում նկարները, ինչ աշխատանքների հարևանությամբ են կախված, լուսավորվածությունը և նույնիսկ աղմուկը: Բոլոր այդ պայմաններն ազդում են այն հանգամանքի վրա, թե արվեստի ստեղծագործությունն ինչպես է ընկալվում դիտողի կողմից:

Դասի ժամանակ արվեստի ընկալման մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ գործ ունենք վերատպությունների հետ և, իհարկե, այս դեպքում մեծ նշանակություն ունի դասարանի իրավիճակը, աղմուկը, վերարտադրության կամ սլայդների որակը, ցուցադրվող աշխատանքների կարգն ու քանակը: Կարևոր է

[2] **Волков Н.Н.** Цвет в живописи.-М.: Искусство, 1984. с. 281.

[3] Նույն տեղում, с. 288-289.

նաև ցուցադրման ժամանակը, չնայած լիարժեք ընկալման համար պարտադիր չէ արվեստի ստեղծագործությունը ցուցադրվի ժամանակային տևական միջակայքում:

Սովորողների կողմից արվեստի ընկալման կազմակերպման ընթացքում մանկավարժն անպայմանորեն պետք է հաշվի առնի բոլոր այն պայմաններն ու հանգամանքները, որոնք կարող են անէական թվալ, բայց միևնույն ժամանակ նրա աշխատանքի արդյունքը մեծապես կախված է դրանցից: Ընկալման բնույթը որոշարկվում է այն դիրքորոշմամբ, որը «կարող է ձևավորված լինել նաև ենթագիտակցաբար առաջադրված խնդրով և նույնիսկ հակադրվել առաջադրված խնդրին»[4]: Այն ընկալվում է որպես ընկալողական համակարգի յուրակերպ ընդհանուր կարգավորում, որը նախապատրաստում է արվեստի ստեղծագործության հետ հաղորդակցումը: Դրանից է կախված այն, թե արդյոք դիտողի և հեղինակի մեջ կկայանա երկխոսությունը, թե այնուամենայնիվ նրա հոգևոր բովանդակությունը կմնա բացարձակապես չընկալված, դիտողը կսահմանափակվի միայն բովանդակության «ընթերցմամբ» կամ պատկերված առարկաների պարզունակ ճանաչմամբ: Գեղարվեստական դաստիարակման գործնական փորձում արվեստի սովորողների կողմից խորը, լիարժեք ընկալման դիրքորոշման ձևավորման խնդիրը ավելի հաճախ լուծվում է բնազդորեն, չհամակարգված, այն դեպքում, երբ ըստ էության այն պահանջում է շատ զգուշավոր մոտեցում: Հայտնի է, որ դիրքորոշումը կարող է հեշտությամբ ներշնչված կամ փոխառված լինել: Ընդ որում, այն կարող է բոլորովին էլ չհամապատասխանել նկարի կամ քանդակի ընկալման նպատակին, իսկ երբեմն էլ նույնիսկ ոչնչացնել այդ ընկալումը:

Ն. Ն. Վոլկովն ընդգծում է, որ այս դեպքում բառը բացառիկ դեր է խաղում. «Հազիվ թե ընկալման գործում դիրքորոշման ստեղծման ամենահուսալի գործիքը բառով արտահայտված հասարակական գնահատականը չլինի»[5]:

Ժամանակին ասված խոսքը կարող է հասնել երեխայի հոգուն, օգնել նրան ընկալել ստեղծագործության բովանդակությունը, բայց կարող է նաև անտարբեր թողնել կամ նույնիսկ արվեստի հետ հաղորդակցվելու անցանկալիություն առաջացնել:

Գեղարվեստական ստեղծագործությունների ընկալումը, դրանց գնահատումը, ինչպես նաև վերլուծության որոշակի տարրերը նպաստում են գործունեության ընթացքում կարողությունների դրսևորմանը: Հարցն այն է, թե որն է գեղարվեստական ստեղծագործությունների կիրառման Էությունը դասերի ժամանակ: Ուսուցիչը հաճախ է ցուցադրում նկարների վերատպություններ, զրուցում սովորողների հետ, հանձնարարում որևէ նկարի վերաբերյալ պատմվածք կամ շարադրություն գրել: Բայց հաճախ է պատահում նաև, երբ ստեղծագործությունը կիրառվում է որպես իրազննական նյութ, կենսական այս կամ այն բովանդակության ուղղակի նկարազարդում, ուսուցչի շուրթերին չափազանց պարզունակ մեկնաբանություն ստանում: Նա կարող է սահմանափակվել բովանդակության պարզ վերարտադրմամբ՝ չառնչվելով նրա բովանդակությանը, իսկ գլխավորը՝ չբացահայտելով կերպարային մարմնավորման նրա միջոցները: Նկարին նման մոտեցումը հազիվ թե նպաստի արվեստի ընկալմանը, իսկ դա նշանակում է որ վերջինիս դաստիարակչական ներուժային հսկայական հնարավորությունները չեն կարող իրացվել:

[4] **Волков Н.Н.** , նշվ. աշխ., . с. 289.
[5] Նույն տեղում, с. 290-291.

Գեղարվեստական ստեղծագործությունը դիտողի վրա ներազդում է շատ ավելի բարդ ձևով, քան որևէ առարկայի ցուցադրությունը, նույնիսկ առանձնահատուկ գեղեցկություն ունեցող, ուշագրավ կամ նշանակալի: Այն ապրում է հեղինակի զգացմունքներով և ապրումներով, որոնք արտահայտված են արվեստի վառ, հուզական լեզվով: Խոսքը վերաբերում է ոչ այնքան նրան, թե ինչ է պատկերված, այլ նրան, թե ինչպես է պատկերված: Բնականաբար կերպարվեստի ստեղծագործության հետ հաղորդակցության նպատակը չի սահմանափակվում նրա միայն ձևական կառուցվածքի ընկալմամբ, այլ դաշտ է ստեղծում՝ վերապրելու այն զգացմունքները, ապրումները, որոնք հուզել են նկարչին: Անհրաժեշտ է արվեստի այն տեսակի լեզվի իմացություն, որի մեջ նա ինքնադրսևորվում է: Պետք է կարողանալ զգալ նկարի «ներուժը», նրա գեղարվեստապատկերային բովանդակությունը: Միայն այդ դեպքում է ստեղծագործությունը լիարժեքորեն ներգործում դիտողի վրա, և նա սկսում է ոչ միայն պարզապես դիտել պատկերված առարկաներն ու երևույթները, այլ գեղագիտորեն վերապրել դրանք:

Մանկական ստեղծագործական գործունեության հետազոտողների և գեղարվեստական դաստիարակության տեսաբանների մեծ մասի կարծիքները համընկնում են այն հարցում, որ արվեստի հետ երեխայի հաղորդակցման կազմակերպման գլխավոր խնդիրը դիրքորոշման ձևավորման հիմնահարցն է, գեղարվեստական պատկերի կամ կերպարի ընկալման հոգեբանական պատրաստվածությունը: Նման կարողության ձևավորումը շատ բարդ խնդիր է, և դրան հասնելու համար մանկավարժը ստիպված է ամեն անգամ նորովի կազմակերպել դասի արագընթացը՝ սովորողների մեջ հուզական անհրաժեշտ տրամադրությունը ապահովելու համար: Արվեստի ընկալման կարողության դրույթի ձևավորման մեթոդներն ու հնարքները կարող են շատ տարբեր լինել:

Փորձը ցույց է տալիս, որ լավագույն արդյունք է ապահովում ոչ թե որևէ առանձին մեթոդի այլ դրանց համալիրի ճկուն, համակցված կիրառությունը: Արվեստի ստեղծագործության հետ երկխոսության պատրաստի իրավիճակի, անհրաժեշտ տրամադրության ստեղծման հասնել կարելի է տարբեր ուղիներով, այնպիսիք, ինչպիսիք են զուգորդման, տեղեկատվական, խաղային միջոցները, արվեստի մյուս տեսակների կիրառությունը գեղարվեստական կերպարի բացահայտման համար:

Բանալի բառեր-Արվեստի ընկալում, գեղարվեստական պատկերի կամ կերպարի ընկալում, գեղարվեստական պատկերի կամ կերպարի բացահայտում, դպրոցականների ստեղծագործական կարողություններ:

Լիլիթ Ֆլջյան, Արվեստի ընկալումը գեղարվեստական գործունեության համատեքստում-Սույն հոդվածում քննարկվում է գեղարվեստական ստեղծագործությունների կիրառման էությունը դասերի ժամանակ: Դպրոցականը պետք է սովորի ընկալել արվեստը, որպեսզի հաղորդակցվի հոգևոր այն արժեքներին, որոնք ներառում են նկարիչների բազմաթիվ սերունդների ստեղծագործությունները: Գեղարվեստական ստեղծագործությունների ընկալումը, դրանց գնահատումը, ինչպես նաև վերլուծության որոշակի տարրերը նպաստում են գործունեության ընթացքում կարողությունների դրսևորմանը:

Սովորողների կողմից արվեստի ընկալման կազմակերպման ընթացքում մանկավարժն անպայմանորեն պետք է հաշվի առնի բոլոր այն պայմաններն ու

հանգամանքները, որոնք կարող են անէական թվալ, բայց միևնույն ժամանակ նրա աշխատանքի արդյունքը մեծապես կախված է դրանցից:

Փորձը ցույց է տալիս, որ լավագույն արդյունք է ապահովում ոչ թե որևէ առանձին մեթոդի այլ դրանց համալիրի ճկուն, համակցված կիրառությունը:

Лилит Флджян, Восприятие искусства в контексте художественной деятельности-В данной статье рассматривается суть использования художественных произведений во время занятий в школе. Учащиеся должны научиться воспринимать искусство, что бы общаться с теми духовными ценностями, которые включают в себя произведения художников разных поколений. Восприятие художественных произведений, оценка и анализ отдельных элементов способствуют проявлению определенных способностей.

Во время процесса учитель должен учитывать все условия, которые могут показаться незначительными, но в то же время результат его работы в значительной степени зависит от них.

Опыт показывает, что наилучший результат заключается не в применении какого-либо конкретного метода, а в гибком и комбинированном их применении.

Lilit Fljyan, Perception of art in the context of artistic activity-In this article, the essence of the use of art works during classes at school is considered. Students must learn to perceive art in order to communicate with those spiritual values that include works of artists of different generations. Perception of works of art, evaluation and analysis of individual elements contribute to the manifestation of certain abilities.

During the process, the teacher must take into account all the conditions that may seem insignificant, but at the same time the result of his work largely depends on them.

Experience shows that the best result is not in the application of any particular method, but in flexible and combined application.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍԿՄՆԱԿ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԻՆ

ԿԱՐՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մարդը քանդակում և ծեփում է նախապատմական ժամանակներից: Եթե գծանկարն իրենից ներկայացնում է արվեստի երկչափ դրսևորում, ապա քանդակը եռաչափ պատկեր է և այն կարելի է դիտել տարբեր կողմերից: Քանդակի պարապմունքները զարգացնում են ծավալատարածական մտածողությունը, ինչպես նաև առնչվում մարդու մտավոր և հուզազգայական ոլորտներին:

Քանդակումը և ծեփումը քանդակագործության երկու գլխավոր միջոցներն են, սովորաբար քանդակագործները զբաղվում են փայտի և քարի փորագրությամբ: Նախապատմական ժամանակներից սկսած քարե քանդակները հայտնաբերվում են աշխարհի բոլոր ծայրամասերում: Պահպանվել են նաև ոսկորի փորագրության նմուշներ, սակայն, սրանով հանդերձ, շատ քիչ են հանդիպում փայտե փորագրությամբ քանդակներ:

Կավի ծեփակերտումն ավելի մեծ տարածում գտավ բրուտագործության զարգացման հետ: Կավե քանդակը կարելի էր թրծել թրծակավե քանդակներ, ինչպես նաև մետաղյա քանդակների կաղապար ստանալու համար: Մետաղական իրերի մեծ մասը սկզբում պատրաստում էին կավից կամ մոմից, ապա կաղապարի միջոցով լցնում մետաղյա համաձուլվածքը:

20-րդ դարում հասանելի դարձան այնպիսի նյութեր, ինչպիսիք են կաուչուկը, կանիֆոլը, պլաստմասան և ապակեպլաստը: Ժամանակակից քանդակը կարող է ստեղծվել տարաբնույթ տեխնիկաներով և նյութերով սկսած մետաղի զոդումից մինչև ձեռքի տակ եղած նյութերով և տարբեր տեխնիկաների միախառնումով ստացվող կոմպոզիցիաներ:

Կավից ծեփակերտումը քանդակագործության հնագույն և գլխավոր տեխնիկաներից է: Կավը կարելի է օգտագործել և՛ որպես քանդակագործական նյութ թրծված քանդակների ձևով, և՛ որպես մոդել, որը հետագայում կարելի է վերարտադրել գիպսով, քարով, մետաղով և այլն: Կան կավի բազմաթիվ տեսակներ և դրանցից յուրաքանչյուրը կարող է օգտագործվել որոշակի գործնական նպատակներով: Կավը բաղադրությամբ կարող է լինել հատիկավոր, միատարր, կոպիտ կամ կոշտ, կարող է լինել նաև սպիտակ, մոխրագույն, մուգ դեղին կամ կարմրաշագանակագույն՝ կախված նրանում առկա երկաթի քանակությունից: Սպիտակ կավի բաղադրության մեջ կամ բացակայում է երկաթը, կամ պարունակում է շատ քիչ քանակությամբ, իսկ կարմիր կավի բաղադրության մեջ երկաթը շատ է: Միատարր կավը կիրառվում է մանրամասների ծեփակերտման համար, սակայն դրանք ստացվում են չափազանց փխրուն և հեշտ կոտրվող, իսկ կավի կոշտ տեսակները լավ են պահում ձևը և ավելի կիրառելի են խոշոր չափերի քանդակների ծեփման համար[1]:

Կավի նախապատրաստումը ծեփակերտման համար սկսվում է խառնումից և հարթեցումից, որպեսզի կավը հասցվի համապատասխան կայուն միատարրության քանդակի կամ խեցեգործական իրերի պատրաստման համար: Կավը պետք

[1] **Виппер Б.Р-**Введение в историческое изучение искусства. М., Изобразительное искусство, 2005.

է լինի փափուկ և «ենթարկվող», բայց ոչ կպչուն կամ թաց: Այն պետք է լինի նաև ոչ շատ կոշտ, որպեսզի հնարավոր լինի ձևը հաղորդել ձեռքերով:

Քանդակագործական նախագծերի մեծ մասի համար հենց նոր գնած, փաթեթավորած կավը կարելի է օգտագործել առանց նախապատրաստական աշխատանքի, իսկ նախկինում օգտագործված կավը կարող է լինել անհամասեռ խտությամբ, լավ չխառնված: Խառնումը և հարթեցումը (տրորումը) կավին կհաղորդեն աշխատանքային համապատասխան վիճակ: Հարթեցումն առանձնակի հմտություններ չի պահանջում, իսկ ահա խառնման համար անհրաժեշտ է որոշակի փորձ, որովհետև անփորձ սովորողի մոտ կավի խառնուրդը կարող է լինել օդի պղպջակներով, ինչ անհարմարավետություններ ստեղծում ծեփելիս[2]:

Ծեփելուց առաջ հարմար է կավը նախապատրաստել որոշակի ծավալով՝ գլան, խորանարդ, գունդ և այլն, որոնք կօգնեն ծեփագործման նախնական փուլում այս կամ այն ծավալն առավել ընդհարական կառուցել: Դրա համար քանդակագործներն օգտվում են քանդակագործական հիմնական սարքավորումներից և գործիքներից: Դրանցից շատերը կարելի է պատրաստել նաև ինքնուրույն, մանավանդ, որ շատ գործիքներ երբեմն նպատակահարմար է պատրաստել ինքնուրույն, քան գնել, քանի որ նախ պատրաստի գործիքը հնարավոր է, որ չունենա անհրաժեշտ որակները, այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար և ապա հնարավոր է, որ վաճառքի համար նախատեսված գործիքների հավաքածուից անհրաժեշտ լինի մեկ կամ երկու գործիք[3]:

Քանդակագործական հաստոցը թույլ է տալիս կատարել աշխատանքը անհրաժեշտ բարձրության վրա և բոլոր կողմերից, պտտվող առանցքի շնորհիվ: Լինում է տարբեր ձևերի, կատարման տարբեր եղանակներով: Այն ենթադրում է բարձրության կարգավորման և առանցքի շուրջը պտտվելու հնարավորություն: Վերին հարթությունը պետք է ամրացված լինի հաստոցի պտտման առանցքին ուղղահայաց: Գոյություն ունեն տարբեր հաստոցներ՝ մետաղյա, որոնք իրենց ծանրության հաշվին ավելի հեշտ է օգտագործել, և փայտյա, որի հորիզոնական հարթությունն անհրաժեշտ է ջրամեկուսացնել:

Որպես կանոն, քանդակագործական հաստոցներն ունենում են երեք ոտք՝ թեք հատակին ավելի հարմար տեղադրելու համար: Ուղղահայաց դիրքով քանդակների համար անհրաժեշտ է հաստոցի բարձրությունը կարգավորել, որպեսզի ապահովվի նրա հարթության հորիզոնականությունը (նկար 1):

Նկար 1

[2] **Шмидт И. М.** - Беседы о скульптуре. М., Искусство, 2003
[3] **Мазовецкая В. В.** Скульптура для начинающих. Шаг за шагом. Издательство: Питер. 2014

Կավով աշխատելու հիմնական գործիքներն են ստեկերը, հատուկ դանակները և հանգույցները: Ստեկերը լինում են ամենատարբեր ձևերի և նյութերից: Ստեկը կազմված է բռնակին ամրացված ձևավոր մետաղական հանգույցից, որը կարող է պատրաստված լինել տարբեր հաստության և ձևի պողպատյա մետաղալարից կամ ժապավենից: Այս գործիքի՝ բռնակին ամրացված հատվածը թույլ է և կարող է շուտ կոտրվել կամ տեղից դուրս գալ: Նպատակահարմար է ունենալ տարբեր չափերի և ձևերի ստեկեր՝ կախված քանդակի չափերից և աշխատանքի կատարման փուլից (նկար 2):



Նկար 2

Դանակը հնարավորություն է տալիս կավը կտրել ցանկացած հարաբերակցությամբ և դանակի ծայրով կարելի է նկարել նյութի մակերևույթին՝ նշելով հարթությունների սահմանները, առանցքները և այլն: Բացի այդ, աշխատանքում կիրառվում են նաև չափակարկին և քանոն:

Մանր դետալների մշակման համար նպատակահարմար է օգտագործել գործարանային արտադրության ստեկեր: Կարելի է օգտագործել նաև ատամնաբուժական գործիքներ[4]:

Կավով գեղարվեստական ստեղծագործության ստեղծումն ունի իր սկիզբը, զարգացումը և ավարտը, որը սկսվում է կերպարով և նրանով էլ ավարտվում:

Թերևս նույնը կարելի է ասել նաև ուսուցման գործընթացի մասին: Ստեղծագործողն ապրում է կերպարներով և դրանք մարմնավորում իր ստեղծագործություններում: Սկսելով սովորել ծեփագործման արվեստ՝ նա ստիպված է լուծել առավել «տեխնիկական» խնդիրներ: Քանդակագործ դառնալու համար պետք է լուրջ դպրոց անցնել:

Բանալի բառեր-քանդակագործություն, կավից ծեփակերտում, թրծակավ, կավի նախապատրաստում, քանդակագործական հաստոցներ և գործիքներ, ծավալատարածական մտածողություն, ծեփագործության ուսուցման նախնական փուլ:

[4] **Елатомцева И. М.**-Станковая скульптура. М., «Высшая школа», 2005

Կարո Վարդանյան, Խորհուրդներ սկսնակ քանդակագործներին-Սույն հոդվածն անդրադառնում է քանդակագործության սկզբնական տարրական իմացությունների և հմտությունների ձևավորմանը կավի հետ աշխատանքում, ինչպես նաև հաղորդվում են որոշակի տեղեկություններ քանդակագործական հիմնական գործիքների վերաբերյալ, որոնք սկսնակ քանդակագործի համար օգտակար տեղեկատվական նյութ են հանդիսանում:

Каро Варданян, Советы начинающим скульпторам-Статья посвящена формировании начальных базовых знаний и навыков скульптуры в работе с глиной, а также передается определенная информация об основных скульптурных инструментов которые являются полезным информационным материалом для начинающих скульпторов.

Karo Vardanyan, Advices to the Beginner Sculptors-This article reflects to the formation of primary elementary knowledge and skills of sculpture during working with clay, as well some information about sculpture basic tools are announced, which consider as a useful informative mater for beginner sculptors.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲՅԱՆ, ԱՐՇԱԼՈՒՅՍ ՏԵՏԵՅԱՆ

Եվրոպական ամենահին կառույցը՝ Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) իր բազմաբնույթ և բազմաշերտ գործունեության համատեքստում մեծ կարևորություն է տալիս պատմությանն ու պատմության դասավանդման խնդիրներին: Նախընթաց յոթանասուն տարիների ընթացքում ԵԽ շրջանակներում ընդունվել են բազմաթիվ փաստաթղթեր, անցկացվել են մասնագիտական հանդիպումներ, խորհրդակցություններ, մշակվել և իրականացվել են մի շարք նախաձեռնություններ, որոնց նպատակը ԵԽ անդամ-պետություններում պատմագիտության, պատմության դասավանդման ոլորտում համանման չափանիշների ներդրումը, դրանց պահպանումը և այս ճանապարհով փոխվստահության, համագործակցության ձևավորումն է:

Հետաքրքիր է, երբ եվրոպական միավորման գաղափարը ժամանակի ընթացքում արծարծվում էր տարբեր մտածողների կողմից, առաջ էին քաշվում մի քանի սկզբունքներ, որոնք պետք է ընկնեին Եվրոպայի միասնության հիմքում: Չեխ աստվածաբան, մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին իր «Պանգլոտիյա» աշխատության մեջ ընդգծում էր մշակութային (հաղորդակցության) գործոնը համաեվրոպական միասնության համար[1]: Հետևաբար, համաեվրոպական միասնության տեսանկյունից շատ մեծ կարևորություն ունի կրթությունը, այդ համատեքստում նաև պատմագիտության ու պատմության դասավանդման դերը:

Հովհաննես Պողոս II պապը նշում էր. «Եվրոպան երկու թոքեր ունի՝ ի դեմս իր արևելյան և արմտյան մասերի: Առանց երկուսն էլ գործածելու՝ այն երբեք չի կարող ազատ շնչել»[2]: 1980-ական թթ. վերջում Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում տապալվեցին կոմունիստական վարչակարգերը և Եվրոպան բռնեց միավորման ուղին: Սակայն այս երկրների կոմունիստական անցյալը, սահմանային, տարածքային խնդիրները Եվրոպայում ստեղծեցին հակասությունների մի քանի օջախներ, Բալկանյան թերակղզին վերածվեց զինված արյունալի հակամարտությունների թատերաբեմի: Սա իրական սպառնալիք էր, ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ Խորհրդային Միության համար: Պատահական չէր, որ Մ. Գորբաչովը 1988 թ. դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի գագաթնաժողովի իր ելույթում վերափոխելով Է. Հեմինգուեյի ստեղծագործության վերնագիրը՝ նշում էր, որ յուրաքանչյուր տարածաշրջանային հակամարտության զանգը գուժում է մեր բոլորի մահը[3]:

Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների, այնուհետև ԽՍՀՄ նախկին պետությունների անդամակցումը ԵԽ-ին բազմաթիվ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային հիմնահարցերի կողքին բարձրացրեց նաև պատմության վերանայման, վերաիմաստավորման, վերաշարադրման, հարևան պե-

[1] Տե՛ս Европейская интеграция, под ред. О.Буториной, М., 2011, с. 67:

[2] Տե՛ս Եվրոպական միություն և Հայաստան, Եր., 2010, էջ 10:

[3] Տե՛ս **Гиленсон Б., Эрнест Хемингуей:** Я дрался за то, во что верил, Новая и новейшая история, N 4, 1990, с. 125:

տությունների միջև այս ոլորտում առկա սուր հարցերի շուրջ հակասությունների հարթման հիմնահարցերը: Այս առումով կարևոր նշանակություն ուներ նաև պատմագիտության, ինչպես նաև պատմության դասավանդման համատեքստում եվրոպական արժեքների, Եվրոպայի հետ պատմամշակութային դարավոր փոխշփումների ընթացքում ձևավորված ընդհանրությունների վերհանումը և շեշտադրումը: Այս նկատառումներով ԵԽ-ի կողմից մշակվեցին «Եվրոպական ուղղությունը պատմության դասավանդման շրջանակներում 2002-2006թթ.» (European Dimension in History Teaching), «Համընդհանուր պատմություններ՝ Եվրոպայի համար՝ առանց բաժանարար գծերի 2010-2014թթ.» (Shared histories for a Europe without dividing lines) նախաձեռնությունները:

«Եվրոպական ուղղությունը պատմության դասավանդման շրջանակներում 2002-2006թթ.» (European Dimension in History Teaching) նախաձեռնությունը մեկնարկեց 2002թ.: Նախաձեռնության շրջանակներում առանձնացվեցին Եվրոպայի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող հինգ տարեթվեր. 1848թ., 1912-1913 թթ., 1919 թ., 1945 թ., 1989-1990 թթ.[4]:

Սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը Հայոց պատմությունը շաղկապված է եղել Եվրոպայի պատմությանը: Հայ ժողովրդի եվրոպական կողմնորոշման դրսևորում էր Իսրայել Օրու գործունեությունը և նրա մշակած «Պֆալցյան ծրագիրը»: Հայտնի է, թե որքան մեծ հույսեր էին կապում հայերը հակաթուրքական «Սրբազան լիգայի» հետ: Մինչդեռ եվրոպական տերությունների. քաղաքականությունը 19-20-րդ դդ՝ Բեռլինի վեհաժողովը և պայմանագիրը, Հայկական հարցի շուրջ եվրոպական տերությունների դիրքորոշումները, Սևրի պայմանագիրն ու դրա մոռացության մատնումը, Լոզանի վեհաժողովը և մի շարք այլ հարցեր հակասություններ են առաջացնում: Իրենց եվրոպական կողմնորոշման համար հայերը երբեմն շատ թանկ գին են վճարել, երբ եվրոպական դիվանագիտությունը հուսադրելուց բացի ոչինչ չէր առաջարկում հայ ազատագրական շարժման գործիչներին: Ինչը շատ դիպուկ է նկարագրվում Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպում. «Մոսե Իմոն աշխարհի հզորներից հզոր, որ թագավորի դուռն էլ գնար, այդ օրորոցը կստանար՝ օրորիր հույսդ»[5]:

Վերադառնալով «Եվրոպական ուղղությունը պատմության դասավանդման շրջանակներում 2002-2006թթ.» նախաձեռնության շրջանակներում առաջ քաշված տարեթվերին, պետք է նշել, որ դրանք իրենց խորը ազդեցությունն են ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ: 1848-1849թթ. եվրոպական հեղափոխությունները մեծ ազդեցություն ունեցան հայ իրականության մեջ՝ ազդելով հայ հասարակական-քաղաքական մտքի վրա: Ավելին, Եվրոպայում ապրող մեծ թվով հայեր մասնակցեցին այս իրադարձություններին: Հունգարական հեղափոխությանը մասնակցեցին հայ երեք գեներալներ՝ Էրնեստ Քիշը (Պզտիկյան), Կյուլելմոս Լազարը (Ղազարյան) և Հովհաննես Յեցը (Յեցյան): Հունգար ժողովուրդը երախտագիտորեն գնահատեց հունգարահայերի մասնակցությունը հեղափոխությանը: Հայտնի է, որ հեղափոխության համար մահվան դատապարտված 13 հունգար առաջնորդների հիշատակին Արադ քաղաքում կանգնեցված հուշարձանի վրա նշվել է նաև հայ գեներալների սխրագործություննե-

[4] Տե՛ս Crossroads of European histories. Multiple outlooks on five key moments in the history of Europe, Council of Europe Publishing, 2006.

[5] Տե՛ս **Դաշտենց Խ.,** Ռանչպարների կանչը, Եր., էջ 525:

րը[6]: Թեև պետք է նշել, որ հայ հերոսներին հունգարական իշխանությունները չհիշեցին, երբ Ադրբեջանին հանձնեցին Բուդապեշտում հայ սպա Գուրգեն Մարգարյանին կացնահարած ոճրագործ Ռ. Սաֆարովին:

Հայ իրականության մեջ 1850-60-ական թթ. ձևավորվեցին հասարակական-քաղաքական հոսանքներ՝ պահպանողական, ազգային պահպանողական, լիբերալ ազատական, ազատական: Այս հոսանքների առաջնորդներն ու ներկայացուցիչները հանդես էին գալիս ազգային խնդիրների լուծման վերաբերյալ իրենց տեսակետներով: Հետաքրքիր է, որ զուգահեռներ էին անցկացվում եվրոպական ժողովուրդների հեղափոխական պայքարի և հայ ժողովրդի դրության միջև: Օրինակ, Միքայել Նալբանդյանը Նեապոլից Մ. Սվաճյանին ուղղված իր նամակում զուգահեռ էր անցկացնում Իտալիայում արծարծված գարիբալդիական շարժման և հայ ժողովրդի ընթացիկ վիճակի մեջ՝ նշելով, որ Գարիբալդիի ետևում կանգնած է «հասարակ ժողովուրդը», Վիկտոր Էմանուելի ետևում՝ «քաղաքացիք»: Դիմադրելով ընդհանուր թշնամուն՝ երկուսն էլ պայքարում են իրենց հայրենիքի ազատագրման համար, բայց նրանց մեջ առկա է նաև «խոշոր տարբերություն»[7]:

Եվրոպական ազատամտական գաղափարախոսության ազդեցությամբ նույն Եվրոպայում կրթություն ստացած արևմտահայ երիտասարդության համառ պայքարի շնորհիվ սեփական սահմանադրություն չունեցող Օսմանյան կայսրությունում ընդունվեց Ազգային Սահմանադրություն, որը 1891թ. ըստ բելգիացի իրավաբան Մ.Ռոլեն-Ժեկմենի կառուցված էր ժամանակակից եվրոպական սահմանադրությունների ոճով և ուներ նախաբան, կենտրոնական և գավառական վարչություններ, ժողովրդական ներկայացուցիչների տեղական՝ թաղերի և թեմական ժողովներ, ընտրական իրավունք, կրթություն և այլն[8]:

Եվրոպական մյուս կարևոր իրադարձությունը՝ 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներն էին: Հայ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում այդ պատերազմի, ինչպես նաև Լոնդոնի վեհաժողովի հետ: Հայտնի է, որ Գևորգ 5-րդ կաթողիկոսի ջանքերով վերաբացվեց Հայկական հարցը: 1914թ. հունվարին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագիրը և Արևմտյան Հայաստանում եվրոպացի երկու նահանգապետների նշանակումը խանդավառությամբ ընդունվեց հայերի կողմից: Երբ եվրոպացի երկու կառավարիչները՝ Հոֆը և Վեսթենենկը ներկայանալով թուրք կառավարությանը և ստանալով պաշտոնական լիազորագրերը պետք է մեկնեին իրենց պաշտոնատեղին՝ Կարին և Վան, Կ.Պոլսից նրանց ճանապարհելու չեկավ ոչ մի թուրք պետական գործիչ: Դրան հակառակ, ներկա էր Կ.Պոլսի հայ մտավորականությունը՝ Օսմանյան պառլամենտի հայ երեսփոխանները՝ Գրիգոր Զոհրապի գլխավորությամբ, պոլսահայ լրագրողները, «Աստեղատուն» հայ մշակութային միության գլխավոր դեմքերը՝ Կոմիտասը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Զարդարյանը, Վահան Թեքեյանը, Կոստան Զարյանը, Հակոբ Օշականը, Փանոս Թերլեմեզյանը, Սարգիս Քուրքճյանը, Հրանտ Ասատուրը, Զապել Եսայանը, Շահան Պերպերյանը, Սիրունին և շատ ու շատ ուրիշներ[9]:

---

[6] Տե՛ս **Աբրահամյան Ա.,** Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Գիրք Բ, Եր., 1967, էջ 148:

[7] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** XIX դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, Պատմաբանասիրական հանդես, Թիվ 1, 1966, էջ 54:

[8] Տե՛ս Հայոց պատմություն, Հ.3, Գ.1, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրրոդ կես-1918թ.), Եր., 2010, էջ 365-366:

[9] Տե՛ս **Պատրիկ Ա.,** Կոմիտասյան դրամա, Եր., 1985, էջ 118:

Սակայն, եվրոպացի դիվանագետներից սպասելիքներն այնքան էլ արդարացված չէին, քանի որ ինչպես վկայում էր բժիշկ Հ.Զավրիևը Վեսթենենկին ուղղված իր մի հարցին վերջինս պատասխանել էր, որ ըստ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի, իրեն հրավիրել է սուլթանը և որ ինքը ենթակա է նրան: Հայերը շատ քիչ էին հետաքրքրում նրան, նա Հայկական հարցից անտեղյակ էր[10]: Անդրանիկ Ծառուկյանը «Թուղթ առ Երևան» պոեմում այսպես է նկարագրում այդ օրերը.

«Յոյսեր են ծաղկել... կտոր մի կապոյտ...
Հոֆ եվ Վէստէնէնկ ... Բարենորոգում...
Կտոր մի կապոյտ. -
Ուղեղների վրայ, սրտերի վրայ՝
Դաշնագիրների փոշեթաթավ կոյտ ...
Կտոր մի կապոյտ... Եվ կապոյտի վրայ՝
Ինչպէս... ինչքան շուտ...
Ա՛հ, ինչպէ՛ս,
ինչպէ՛ս,
Յեղակարծ փայլա՛կը մեծ Եղեռնի...»[11]:

Սակայն, թուրքական կառավարությունն այլ ծրագրեր ուներ, որը Բեռլինի վեհաժողովից շատ չանցած բարձրաձայնել էր օսմանյան հայտնի գործիչ և կառավարության բազմամյա նախագահ Քյամիլ փաշան՝ ասելով, որ հայ ազգին անհրաժեշտ է վերացնել և խուսափել Արևմտյան Հայաստանում մեծ տերությունների կողմից պարտադրված բարենորոգումների անցկացումից[12]:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքական կառավարությունը իրականացրեց մեկ ու կես միլիոն արևմտահայության ցեղասպանությունը: «Հայկական խնդիրը լուծելու տեսակէտով՝ երեք ամսուան մէջ ես աւելի գործ կատարեցի, քան Ապտիւլ-Համիտ երեսուն տարուան մէջ»,- հայտարարում էր Թալեաթ փաշան[13]:

1919թ. հայության մեծ հույսերի ժամանակաշրջանն էր: Հայ ժողովուրդը հույս ուներ Դաշնակիցներին ցուցաբերած իր աջակցության և կրած սարսափելի տանջանքների համար վերջապես ստանալ այնքան սպասված հատուցումը: Ե. Օտյանն իր «Անիծյալ տարիներ» գրքում ներկայացնում է պատերազմի վերջին ամիսներին հայության ոգևորությունը դոքթոր Նագգաշյանի խոսքերով, որը գրում էր. «Մեր հիվանդ հորեղբոր վիճակը ծանրացած է, բժիշկները վիրաբուժական գործողություն մը պիտի կատարեն. Մորեղբայրս քիչ ատենէն կը հասնի: Կը հուսամ, որ մորաքրոջս անհանգստությունը մինչև երեք ամիս բոլորովին կանցնի»[14]: Պարզ է, որ հիվանդ հորեղբայրը Թուրքիան էր, վիրաբուժական գործողությունը՝ Թուրքիայի բաժանումը: Ահա, այսպիսի ակնկալիքներ ունեին հայերը 1919 թ. հունվարին Փարիզում գումարված վեհաժողովից, ինչին նպաստել էին նաև եվրոպական դիվանագետների հայանպաստ ելույթները:

---

[10] Տե՛ս **Ջ.Կիրակոսյան**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր. 1965, էջ 199:

[11] Տե՛ս **Ծառուկյան Ա.,** Թուղթ առ Երևան, Եր., 2001, էջ 17:

[12] Տե՛ս Հայոց պատմություն, Հ.3, Գիրք I, էջ 507:

[13] Տե՛ս Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Եր., 1990, էջ 284:

[14] **Օտյան Ե.,** Անիծյալ տարիներ, Թեհրան, 2010, էջ 171:

Ինչպես օրինակ, դերկոմս Հերբերտ Ջոն Գլադստոնի. «Սերունդներ են խոսել Հայաստանի մասին: Բայց գրեթե ոչինչ չի արվել մինչև պատերազմը: Այժմ հասել է հանուն նրա գործելու ժամանակը»[15]: Խորհրդարանի անդամներ դերկոմս Ջեյմս Բրայսը, լորդ Հենրի Քավենդիշ-Բենթինկը, Թոմաս Փաուըր Օ՛Քոնոորը և Անյուրին Ուլիյամսը, գիտնականներ Նոել Բըքստոնը և Ջ.Փ.Գուչը պահանջեցին Հայաստանի Հանրապետության ճանաչումը և Հայաստանի վերականգնումը նոր պատմական սահմաններում[16]:

Պատերազմի վերջին ամիսներին մի խումբ իտալացի բարձրաստիճան պաշտոնյաներ, ներառյալ նախկին վարչապետ Լուիջի Լուզատին, հիմնեցին Հայաստանի անկախության իտալական կոմիտե: 1918 թ. հոկտեմբերին արտաքին գործերի նախարար բարոն Գ.Սիդնի Սոնինոն գրում էր Նուբար փաշային. «Ես հավատացնում եմ Ձերդ գերազանցությանը, որ Թագավորական կառավարությունը կգործի ծայրաստիճան հոգատարությամբ՝ պաշտպանելու Հայաստանի շահերը, որի տառապանքները խորապես ցնցել են մեզ»: 1918թ. նոյեմբերի 18-ին վարչապետ Վիտորիո Էմանուել Օռլանդոն բացականչեց. «Ասացեք հայերին, որ ես նրանց դատը կդարձնեմ իմ դատը»[17]:

ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլսոնը թուրքերին հանձնելով նրանց մեկնելու փաստաթղթերը՝ նշում էր. «Նրանք ցուցադրեցին առողջ բանականության լրիվ բացակայություն և Արևմուտքի մասին լրիվ անտեղյակություն: Նրանք կարծում էին, թե վեհաժողովը պատմություն չգիտի և պատրաստ է կուլ տալու հրեշավոր ստեր»: Լլոյդ Ջորջը թունոտ հեգնանքով ասաց, որ այդպիսին են ավանդական թուրքական դիվանագիտության գծերը[18]:

Սակայն Փարիզի վեհաժողովի մասնակից և Սևրի պայմանագիրը ստորագրած երկրների ղեկավարները հրաժարվեցին իրենց ստորագրություններից, հռչակված սկզբունքներից ու արժեքներից: Սիրաշահելով Մ.Քեմալի իշխանությանը՝ եվրոպական դիվանագիտությունը մեկ անգամ ևս զոհաբերեց հայոց հայրենիքի մի մասը և հայ ժողովրդին տրված երաշխիքները:

Ավելին, 1920 թ. Ազգերի լիգայի հանձնաժողովներում և ենթահանձնաժողովներում նորաստեղծ Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցը քննարկվեց երկու ամիս, որի ընթացքում թուրքական բանակը ներխուժել էր Արևելյան Հայաստան: Դառնալով Ազգերի լիգայի անդամ Հայաստանը կարող էր ակնկալել վերջինիս օժանդակությունը: Սակայն այդ օրերին, Իտալիայի արտաքին գործերի նախարար Սֆորցան, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Լեյգն ու Անգլիայի արտաքին գործերի նախարար Լլոյդ Ջորջը գտան, որ Հայաստանի անդամակցությունը Ազգերի լիգային վաղաժամ է[19]:

Հետագայում, Ազգերի լիգային փոխանցված հայ գաղթականության խնդիրը մի քանի տարի շարունակ քննարկվեց՝ առանց գործնական քայլերի: Ֆրիտյոֆ Նանսենը, չհանդուրժելով, որ Ազգերի լիգան շարունակի հուսադրել, բայց գործնականում խաբել հայ ժողովրդին՝ 1929թ. առաջարկեց հանել դեռևս 1920թ. ի վեր Լիգայում ապարդյուն արծարծված այդ հարցը օրակարգից[20]:

---

[15] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, Հ.1, Եր., էջ 339-340:

[16] Նույնը՝ էջ 340:

[17] Նույնը՝ էջ 297:

[18] Նույնը՝ էջ 368:

[19] **Եսայան Ա.,** Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Եր., 1965, էջ 136, 139:

[20] Տե՛ս **Մելիքսեթյան Հ.,** Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Եր., 1985, էջ 150:

«Եվրոպական ժողովուրդներն ու պետական գործիչները հոգնել են մշտնջենական Հայկական հարցից: Չէ որ այդ հարցը նրանք ձախողեցին: Հայաստան անունը նրանց նիրհած խղճերում արթնացնում է սոսկ ուրացած կամ չկատարված խոստումների տհաճ հիշողություններ: Նրանք մատը մատին չխփեցին իրենց խոստումները կատարելու համար, քանի որ դրանք տրվել էին թեև փոքր, արնաքամ, սակայն շնորհալի մի ժողովրդի, որ չուներ նավթի ու ոսկու հանքավայրեր»,- գրում էր Ֆ.Նանսենն իր «Խաբված ժողովուրդ» գրքում[21]:

Այս օրերին Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ու Վրաստանի տարածքային հավակնությունները քննարկվեցին նաև Երկրորդ Ինտերնացիոնալի մնայուն հանձնաժողովում: Միքայել Վարանդյանը խնդրեց հանձնաժողովին ուշադրություն դարձնել Արևելքի իրադարձությունների և փոքր ժողովուրդների հուսահատական այն պայքարի վրա, որ մղում էին նրանք՝ ինքնորոշման իրավունքի համար: Մ. Վարանդյանը կոչ էր անում դիմել վճռական գործողությունների՝«ծիսական բանաձևերի» փոխարեն: Սոցիալիստ ղեկավարները դարձյալ պատասխանեցին «ծիսական բանաձևով»՝ պաշտպանելով հանրաքվեի և համաժողովրդական հարցման սրբազան սկզբունքը[22]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1945թ. մայիսին նոր ակնկալիքներ տվեց հայ ժողովրդին: Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցել են 600 հազար հայեր: Նրանցից 300 հազարն ընկան Եվրոպային սպառնացող ֆաշիզմի դեմ պայքարում: Հազարավոր սփյուռքահայեր ընդգրկված էին ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված երկրների դիմադրական-պարտիզանական շարժման շարքերում: Իր անմար սխրանքով հռչակվեց Միսաք Մանուշյանը, որը հետմահու արժանացավ Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոսի կոչման; Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի պարտիզանական կռիվներում և դիմադրական պայքարում[23]: Բուլղարիայի, Հարավսլավիայի պարտիզանների շարքերում կային մեծ թվով հայեր:

Պատերազմի ավարտից հետո խորհրդային դիվանագիտությունը բարձրացրեց Հայկական հարցը՝ Թուրքիայի կողմից 1921 թ. բռնազավթած հայկական տարածքների խնդիրը: Այս հարցը բարձրացվեց Պոտսդամում 1945 թ. հուլիսի 16-ին Իդեն-Մոլոտով հանդիպման ժամանակ, ինչպես նաև Ի.Ստալինի, Հ. Տրումենի, Ու. Չերչիլի 1945 թ. հուլիսի 22-ի հանդիպման ընթացքում[24]: Սակայն, խորհրդային դիվանագիտությունն այս հարցում հանդիպեց ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դիմադրությանը, որոնք կասեցրեցին խորհրդային կողմի պահանջների քննարկումը, քանի որ Դաշնակիցների միջև արդեն ի հայտ եկած հակասությունների համատեքստում հետագայում կարևոր ռազմավարական, քաղաքական ու ռազմական դերակատարություն էր ունենալու Թուրքիան: Այս հակասությունները հետագայում խորացան և սկսվեց մի քանի տասնամյակ շարունակվող Սառը պատերազմը: Պետք է նշել, որ հակասությունները հանդես էին եկել արդեն 1945 թ. Յալթայի կոնֆերանսի ընթացքում՝ հակառակ այն բանին,

[21] Տե՛ս **Նանսեն Ֆ.,** Խաբված ժողովուրդ, Եր., 2000, էջ 273:

[22] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 387:

[23] Տե՛ս **Հարությունյան Կ.,** Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Եր., 2002, Էջ 119:

[24] Տե՛ս Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը, 1945 թ. հուլիսի 17-օգոստոս 2, Փաստաթղթերի ժողովածու, Եր., 1989, էջ 44:

որ հանդիպման ավարտից հետո ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարները փոխանակվում էին սիրալիր նամակագրությամբ՝ շնորհակալություն հայտնելով Ի. Ստալինին ընդունելության և հյուրընկալության համար, աղոթում նրա երկարակեցության համար[25]:

Իսկ 1989-1990 թթ. ԽՍՀՄ-ում լայնորեն ծավալվեցին ազգային շարժումները: Հայաստանում վերստին բարձրացվեցին դեռևս 1960-ական թթ. «ազգային զարթոնքի» տարիներին առաջ քաշված հարցերը՝ Հայոց ցեղասպանության ճանաչում, Արցախի Հայաստանի հետ վերամիավորում: 1988 թ. սկսվեց Արցախյան շարժումը: 1989-90 թթ. խորհրդային իշխանությունները հայ ժողովրդի արդարացի պահանջը մերժելու նպատակով գործի դրեցին ողջ պետական համակարգը՝ չխորշելով նույնիսկ սադրել և հրահրել այնպիսի գործողություններ, ինչպիսիք էին Սումգայիթի ու Բաքվի ոճրագործությունները: Այս տարիներին հայ ժողովուրդը Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությամբ պայքար սկսեց իր օրինական պահանջը իրագործելու համար:

Իհարկե, եվրոպական դիվանագիտությունից հուսախաբությունները և ակնկալիքների տապալումը շատ են: Ինչպե՞ս դասավանդել այս հիմնահարցերը՝ շեշտադրելով եվրոպական ուղղությունը՝ առանց բացասական դիրքորոշում առաջացնելու սովորողների շրջանում: Այս առումով կարելի է ուշադրություն հատկացնել եվրոպական հասարակական կարծիքին, որը մշտապես աջակցել է հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և եվրոպական այլ երկրներում հասարակական, քաղաքական, մշակութային գործիչներ պարբերաբար բարձրաձայնել են Հայկական հարցը: Հատկանշական է, Հայկական հարցը մի քանի անգամ բարձրաձայնվել է Խաղաղության համաժողովներում: 1900թ. սեպտեմբերի 10-13-ը Անգլիայի Գլազգո քաղաքում տեղի ունեցած Խաղաղության միջազգային 10-րդ համաժողովը որոշեց Բեռլինի դաշնագիրը ստորագրած եվրոպական պետություններին մի խնդրագիր ուղարկել, որպեսզի նրանք պաշտոնական կոնֆերանս գումարեն՝ Հայկական հարցը վճռելու համար[26]:

Իսկ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունն էլ դիմում էր ֆրանսիական կառավարությանը՝ կոչ անելով անտարբերության դիմակը դեն նետել և անել այն քայլը, որով կարող է փրկել հարյուր-հազարավոր մարդկային կյանքեր և գուցե բնաջնջումից փրկի մի ամբողջ ժողովուրդ[27]:

Անուրանալի է, ցեղասպանության օրերին դերկոմս Ջեյմս Բրայսի ծավալուն 684-էջանոց ամփոփ ժողովածուն, որը հեղինակը պատրաստել և ներկայացրել էր անգլիական կառավարությանը՝ Հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ ծավալուն նյութեր, որը հրատարակվել է «Կապույտ գիրքը՝ Հայոց Մեծ եղեռնի մասին» վերտառությամբ: Գիրքը Ջորջ Ե թագավորի հրովարտակով ներկայացվել էր պառլամենտին և Լորդերի պալատին՝ 1916 թ. հոկտեմբերին[28]:

Պետք է առանձնահատուկ ընդգծել Ժան Ժորեսի գործունեությունը, որն իր ելույթներում բազմիցս անդրադառնում էր Հայկական հարցին և արևմտահայերի կոտորածներին: Նա նշում էր. «Ամենածանրն այն է, որ տարերայնորեն չի

[25] Переписка председателя Совета Министров СССР с президентми США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941-1945 гг., Т.1, М., 1976, с. 360.

[26] Տե՛ս **Պողոսյան Ս.Կ.,** Պողոսյան Կ.Ս., Ինձ բահ տվեք, Եր., 1990, էջ 217:

[27] Նույնը՝ էջ 218:

[28] Տե՛ս **Բրայս Ջ.,** Անգլիական կառավարության կապույտ գիրքը Հայոց Մեծ եղեռնի մասին (1915-1916), , Թեհրան, 2012., էջ 5:

պոռթկացել, հրահրվել, խրախուսվել՝ անհագ ախորժակը գրգռվել է օրինավոր կառավարության կողմից, ում հետ Եվրոպան բազմիցս ամենայն լրջությամբ ստորագրություններ է փոխանակել: Նա զգացել է, որ Եվրոպան տատանվում է, անկայուն է, ներքին պառակտումներով բաժանված է և իրոք, մինչ՝ այդ տարանջատված, անզոր դեսպանները նախճիրների ամենաօրհասական պահին բարենորոգումների՝ կեղծ մարդասիրական, ծիծաղելի պահանջներն էին ներկայացնում, սուլթանը սանձարձակ անկաշկանդությամբ ավարտին էր հասցնում կոտորածները, որպեսզի մեկընդմիշտ ձերբազատվի հայկական հարցից, ինչպես նաև ձերբազատվի Եվրոպայի երեսպաշտ պնդերեսությունից՝ այն Եվրոպայի, որը, ինչպես դուք՝ ինքներդ, թե՝ ցավակցում է և թե մեղսակից է»[29]:

Պետք է նշել բազմաթիվ եվրոպացի գործիչների հայանպաստ գործունեությունը, որոնցից էր իռլանդացի լրագրող, իրավաբան, թարգմանիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Էմիլ Դիլոնը, որը 1895 թ. որպես «Դեյլի թելեգրաֆ» թերթի թղթակից եղել էր Արևմտյան Հայաստանում՝ լուսաբանելու տեղի ունեցող իրադարձությունները: Նա նշում էր. «Բոլոր ազգերի մեջ ամենից առավել Թուրքիայի հայերը կարող են հույս դնել Եվրոպայի օգնության վրա այնքան, որքան խեղդվող մարդը՝ դեռ ծովը չմտած նավի վրա»[30]:

Ֆրանսիացի հրապարակախոս, պատմաբան, ռուսագետ Անատոլ Լերուա-Բոլիեն գրում էր. «Պատմությունը չի տեսել, ավելին՝ Արևը չի տեսել, արևը, որին Վերգիլիոսի խոսքերով ասած՝ երբեք ոչ ոք չի մեղադրի կեղծիքի մեջ, բազում չարագործություններից արյունաքամ եղած մեր տխուր մոլորակը հազիվ տեսած լինի այնպիսի սարսափելի տեսարաններ, որ տեղի ունեցան 1895-1896թթ. Հայաստան աշխարհում»[31]: Մեկ այլ ֆրանսիացի գրող Անատոլ Ֆրանսը դեռևս 1890-ական թթ. պաշտպանում էր արևմտահայության հարցը, իսկ 1916թ. ելույթ ունենալով Փարիզի Սորբոնի համալսարանում նա նշում էր. «… Արևելքում մեռնում է Մեր Քույրը, որ նա մեռնում է միայն այն բանի համար, որ նա մեր քույրն է: Նրա հանցանքն այն է, որ նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ սիրել ենք մենք, մտածել է այնպես, ինչպես մենք, հավատացել է այն ամենին, ինչին հավատացել ենք մենք, և մեզ նման ընկալել է իմաստություն, բանաստեղծություն և արվեստ: Դրա մեջ է նրա հանցանքը…»[32]:

